«ԱՐԱՐԱՏԻ»-Ի ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ա

ՀՐԱՄԱՆԱՒ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

THE HERITAGE OF THE MONTHLY “A R A R A T”

I

ARCHBISHOP ABEL MXITARYANC

THE COLLECTED WORKS

НАСЛЕДСТВО ЖУРНАЛА “А Р А Р А Т”

I

АРХИЕПИСКОП АБЕL МХИТАРЯНЦ

СБОРНИК СОЧИНЕНИЙ

ST. ETCHMIADZIN - 2009 - СВ. ЭЧМИАДЗИН

«ԱՐԱՐԱՏԻ»-Ի ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ա

ԱԲԵԼ Արքեպիսկոպոս ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2009

ԱԲԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԽԻԹԱՐՅԱՆՑ
(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՓՈՐՁ)

Աբել արք. Մխիթարյանցի անունը լսել էի դեռ Ս. էջմիածնի Հոգևոր ճեմարանում իմ ուսանողության տարիներին, իբրև «Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց Եկեղեցւոյ» գրքի հեղինակ և իբրև «Արարատ» ամսագրի առաջին խմբագիր:

Եվ հավանաբար նրա մասին իմ տեղեկությունները կսահմանափակվեին միայն այսքանով, եթե պատահաբար Մատենադարանի 8822 ձեռագրում չհանդիպեի նրա՝ Հայ Եկեղեցու պատմության Դ հատորին, որ ընդգրկում է 1802-1865 թթ. պատմությունը: Այս չափազանց արժեքավոր աշխատության առաջին հատորները գտնելու փնտրտուքի ընթացքում իմ առջև հառնեց Աբել արքեպիսկոպոսի փառահեղ դեմքը, իբրև գիտնական, որ անկասկած կարող է համարվել ԺԹ դարի կեսերի Ս. էջմիածնի միաբանության ամենանշանավոր գիտնական վարդապետը:

Աբել արք. Մխիթարյանցի՝ մեզ հայտնի հրատարակված առաջին և միակ կենսագրությունը տպագրվել է Հայկական Սովետական Հանրագիտարանում Արմեն Տեր-Ստեփանյանի ստորագրությամբ: Այդ կենսագրությունը, ելնելով Հանրագիտարանի պահանջներից, չափազանց համառոտ է և ընդհանուր:

Աբել արք. Մխիթարյանցի կենսագրության ուսումնասիրությանը 1895 թ. ձեռնամուխ է եղել Սահակ վրդ. Ամատունին: Վերջինիս՝ Սատենադարանում պահպանվող արխիվում գտանք միայն 3 սևագիր էջ՝ Աբելի մասին տեղեկություններ վերնագրով, ուր Աբել արք.-ի Հայ Եկեղեցու պատմությունից դուրս են բերված 7 կարևոր կենսագրական տեղեկություններ[1]:

Երկարատև ուսումնասիրությունից հետո մեզ հաջողվեց կազմել Աբել արք.- ի կենսագրության բավական ճշգրիտ և ամբողջական պատկերը, թեև պետք է խոստովանել, որ դեռ կան որոշ մութ կետեր:

Ծնվել է 1816-ին: Գրիգոր Տեր-Մկրտչյան Մալենցովի 1851 թ. փետրվարի 1-ի էջմիածնից Մեսրոպ Թաղիադյանին՝ Կալկաթա, գրած նամակից տեղեկանում ենք, որ

ա. Աբելը Վաղարշապատցի է, Ղուշչոնց Մարկոսի տղան:

---

1 **Սահակ վրդ. Ամատունի**, Աբելի մասին տեղեկություններ: Տե՛ս Մատ. արխիվ, Ֆ. 84, վավ.:

բ. Աշակերտել է Մեսրոպ Թաղիադյանին, երբ վերջինս դասավանդում էր Ս էջմիածնում[1]:

Աբելը իր Հայ Եկեղեցու պատմության մեջ հիշելով Մեսրոպ Թաղիադյանի ուսուցչությունը Ս. էջմիածնում՝ ասում է. «Յորում առաջին աշակերտ եղէ ես յամաց հնգետասանից»[2]: Արդ, եթե 1831 թ. Աբելը 15 տարեկան էր, ուրեմն նա ծնված պետք է լինի 1816 թ.:

1832 թ. դեկտ. 13-ին Աբելը մտել է «ի վանականութիւն Ս. էջմիածնի»[3]:

Աբելը աշակերտել է նաև Զաքարիա եպս. Գուլասպյանցին: Աբելի աշակերտակիցներից մեկը 1847 թ.-ին մի բանաստեղծություն է նվիրում Աբելին, որից տեղեկանում ենք, որ Զաքարիա եպս. եղել է Աբելի հոգևոր հայրը և ուսուցիչը[4]: Այս բանաստեղծության հրատարակության առթիվ Ազգասերի խմբագրությունը տալիս է հետևյալ ծանոթագրությունը. «Ի ձեռնադրել Զաքարիա Եպիսկոպոսի զաշակերտ իւր ի սուրբ Նշանի վանս Հաղբատու՝ յայս անուն կոչեաց զնա ի պատիւ Արժանայարգ եղբօր իւրոյ Աղայ Աբէլի Գուլասպեանց՝ որ ի Թրեստ»[5]:

Հետևաբար Աբելը իր քահանայական ձեռնադրությունը ստացել է Հաղպատում, Զաքարիա եպս. Գուլասպյանից: Ե՞րբ:

Ատեղծագործել է երիտասարդ հասակում: Մեզ հայտնի առաջին ստեղծագործությունները 1837 թ.ից են՝ 3 բանաստեղծություններ. Ի սուրբ կոյսն Մարիամ, Ի Ծնունդն Քրիստոսի, Ի սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր[6]:

Նույն՝ 1837 թ. Աբելին գտնում ենք Բեսարաբիայում, ուր նա աշակերտում է Մսեր Գրիգորյան Ճմյուռնացուն (Մսեր Մսերյանցին - Ե. ծ. վրդ. Պ.)[7]:

1839 թ. Ղրիմում գրում է «Դիցաբանութիւն համառօտեալ ի հարց և ի պատասխանիս» աշխատությունը՝ հունական դիցաբանության վերաբերյալ, Աբէլ Մխիթար Արարատեան ստորագրությամբ[8]:

1839-1840 թթ. Աբելը եղել է Նոր Նախիջևանում: 1853 թ. հունվար 17 թիվ 45 Նոյեան Աղաւնի շաբաթաթերթի 2-3 էջերում լույս է տեսնում

1 «Ազգասէր Արարատեան», հատ. Դ, թիւ 75, Կալկաթա, 1852, յունուար 15, էջ 596:
2 **Սահակ վրդ. Ամատունի**, Աբելի մասին տեղեկություններ, տեղեկ, բ, (Գիրք Դ. գլուխ Ե թղ. 44ա):
3 Անդ., տեղեկ. ա. (սևագիր օրինակ, Գիրք Դ. գլուխ Դ. թղ. 36):
4 Ազգասէր, հատ. Դ. թիլ 90, Կալկաթա 1847, Մեյ 1, էջ 144:
5 Անդ:
6 Մատ. ձեռ. 3142, թ. Յա, Յբ-4ա, 4ա-բ:
7 Տե՛ս Նոյեան Աղաւնի, Ա տարի, 14 փետր. 1853, թիվ 49, էջ 3. Աբել վրդ. Մխիթարյանցի Յառաջաբանութիւն Քրիստոսականին-:
8 Հեղինակի ինքնագիրը տես Մատ. հմր, 4468, թ. 1ա4բ, «Դիցաբանութիւն համառօտեալ ի հարց և ի պատասխանի, Աբէլ Մխիթար Արարատեան յամի 1839 ի Ղրիմե:

Անիի մասին մի բանաստեղծություն, որ խմբագրությանն էր ուղարկել Աբել վրդ. Մխիթարյանցը հետևյալ ծանոթագրությամբ. «Ձիատուածս զայս Անւոյ արարեալ է Թէոդորոսի Խատամեան Ղրիմեցւոյ ի Նախիջևան, ի գալն իւր անդ ի վարժապետութիւն, զոր և ես անդր ի քաղաքն լեալ յամին 1839 և 1840 արտագրեցի առ նոյն իսկ յօրինողն...»[1]:

1842 թ. արդեն Աբելը Ս. էջմիածնում է, ուր Կարապետ վրդ. Շահնազարյանի հետ ցուցակագրում է Ս. էջմիածնի «գրքատունը»[2]:

1843 թ. ապրիլի 17 թիվ 14 Կովկաս շաբաթաթերթում արդեն իբրև Աբել վարդապետ Մխիթարեանց, Միաբան Սրբոյ էջմիածնի վանաց ստորագրությամբ լույս է տեսնում «Երգ նուիրեայ յընտրութիւն Նորին Վեհափառութեան Տեառն Ներսիսի Սրբազնագոյն Կաթուղիկոսի և Ասպետի՝ ի հայրապետութիւն Ամենայն Հայոց»:

1844 թ. եղել է Աշտարակում[3], Նիգ գավառում[4]:

1846 թ. Ներսես Ե կաթողիկոսի առաջին ամիսներին Աբելը աշխատում էր Վեհարանում իբրև կաթողիկոսի գրագիր և կոնդակագիր[5]:

1849 թ. Աբելը Ս. էջմիածնում գրում է Արծանագիր «ի տապանի Յովհաննէս եպս.ի Շահխաթունեան ի Շահրիար գիւղ յամին 1849»[6]:

1851 թ. Ներսես Ե կաթողիկոսը Աբելին հանձնարարում է շրջել և ստորագրել Շիրակի վանքերը և Անի մայրաքաղաքը: Այս առաքելությունը մեծ նշանակություն է ունեցել այն ժամանակ և բարձր գնահատանքի արժանացել ոչ միայն Արևելյան Հայաստանում, այլ նաև Կ. Պոլսում: Ահա թե ինչ է գրում Նոյեան Աղաւնի շաբաթաթերթը, «էջմիածնայ սուրբ Աթոռէն կը գրեն, թէ սրբազնագոյն Կաթուղիկոսը Մխիթարեան շնորհափայլ Աբէլ գիտնական վարդապետը Անի ուղարկել է որ յիշեալ քաղաքին աւերակաց ճիշտ ստորագրութիւնը ընէ... Արժանապատիւ Աբէլ վարդապետին ազգասիրական ոգին և ընտիր գրչին վառվռուն ոճը (որն որ ազգային լրագրաց միջոցաւ հրատարակուած քանի մը արձակ և տաղաչափեալ բանասիրականներուն և ուրիշ տպուած գրքերուն մէջ տեսած ենք) առաջուց մեզ ծանոթ ըլլալով՝ կը յուսամք որ հազուագիւտ և ազգասիրաց համար շատ թանկագին մէկ գիրք մը պիտի վաստըկի Հայոց գրականութիւն և պատ-

1 Նոյեան Աղաւնի, Ա տարի, 17 հունվ. թիվ 45, էջ 4:

2 Այս մասին տեղեկանում ենք Կարապետ վրդ. Շահնազարյանի 1853 թ. 6-18 դեկտ. Փարիզից Աբել վրդ.ն գրած նամակից, ուր կարդում ենք. «...եթէ կարօղ լինիս արժանաւոր ձեռագիրք մը տեսնելու անոր համառօտագրութիւնն ըրէք ինչպէս 1842 թուին մենք Սբ. էջմիածնի գրքատունն ըրինք ի միասին» ֆ. 84 մավ. 238:

3 Մատ. Ձեռ. 3142, թ. 5ա:

4 Մատ. ձեռ. 3142, թ-16ա-բ:

5 **Սահակ վրդ. Ամատունի**, Աբելի մասին..., տեղեկություն Դ (Գիրք Դ, յաւելուած, թղ. 61 բ):

6 Մատ. ձեռ. հմր. 3142, թ. 35ա:

մութիւնը»[1]: Եվ իրապես, Նոյեան Աղաւնիի խմբագիրը չէր սխալվում. Աբելը պատվով և պատասխանատվության բարձր զգացումով է կատարում իր վրա դրված այդ պարտականությունը և լույս ընծայում «Ճանապարհորդութիւն յԱնի 1851», «Պատմութիւն մենաստանին Հառիճոյ ի Շիրակ» և «Պատմութիւն Հոռոմոսին և տեղագրութիւն Մարմաշէն և այլոց ոմանց վանօրէիցն ի Շիրակ» աշխատությունները, որոնք իրենց գիտական արժեքը պահպանում են մինչև այսօր:

1852 թ. Աբել վրդ. Մխիթարյանցը ձեռնարկում է իր երկհատոր «Հմտութիւն Քրիստոնէական Հաւատոյ» դասագրքի հրատարակությանը: Տպագրության ծախսերի մեկենաս գտնելու ակնկալությամբ նա մի Առաջաբան[2] է հրատարակում Կ. Պոլսում հրատարակվող Նոյեան Աղաւնի շաբաթաթերթում, ուր շեշտելով հայ մանուկների դաստիարակության կարևորությունը, նշում է. «Պայծառանալ պահանջեմք ազգիս ըստ լուսաւոր ազգացն կրթութեան, այլ ընդ նախակրթութեան դուռն ելանել ոչ կամիմք. ընդ որ գայլն մտանէ, յափշտակէ զոչխարսն և ցրուէ (Յովհ. ժ 11, 12)»[3]: Այդ առաջաբանից տեղեկանում ենք, որ Աբելը այս աշխատությունը ծրագրել է պատրաստել դեռ 1837 թ. Բեսարաբիայում, Մսեր Մսերյանին աշակերտելու ընթացքում: Աբելը, կարդալով իր ուսուցչի «Կրթութիւն Աւետարանական» աշխատության ձեռագիրը, ցանկանում է արտագրել այն: Մսեր Մսերյանը, սակայն, արգելում է՝ ասելով, «կին յորժամ ծնանի, կամի զծնունդ կատարեալ ծնանել և ոչ զվիժած տարաժամ: «Ի ժամանակէն յայնմանէ, - գրում է Աբելը, - ջան էր իմ կազմել զայս մատեան, թէև երկհատոր ըստ նորին ձևոյ, այլ ամենևին աննման նմին. որ և Տեառն գործակցութեամբ յաջողեալ ինձ վաղուրեմն, վաղվաղէի մատուցանել ի տիպ, չեւ եւս նորին երկասիրութեանն երևեալ ի լոյս»[4]:

1850 թ. Մոսկվայում լույս է տեսնում Մսեր Մսերյանցի վերոհիշյալ աշխատության Ա հատորը «Հրահանգ քրիստոնէական հաւատոյ» վերնագրով, ուր և խոստացվում էր Բ՝ ընդարձակ հատորի հրատարակությունը:

Ուսուցչի նկատմամբ այսպիսի օրինակելի հարգանք տածող Աբել վրդ.ը բարոյապես իրեն ազատ է զգում այլևս հրատարակելու իր աշխատությունը, որի լույս աշխարհ գալը մեծ նպաստ էր լինելու հայ կրթության գործին, քանի որ մինչ այդ 1852 թ.ը, ռուսահայոց դպրոցներում Քրիստոնեական վարդապետությունը դասավանդվում

1 Նոյեան Աղաւնի, Ա տարի, Կ. Պոլիս, 6 մարտ 1852, թիվ 2, էջ 3:
2 Նոյեան Աղաւնի, Ա Տարի, 14 փետր. 1853, թիվ 19, էջ 2-3:
3 Անդ, էջ 3:
4 Անդ:

էր Հարություն վրդ. Ալամդարյանի ձեռամբ ռուսերենից թարգմանված մի դասագրքով, որը ոչ միայն ուներ մի շարք մեթոդական թերություններ, այլ նաև զուրկ էր Հայ Եկեղեցու Ավանդության շնչից:

Աբել վրդ. Մխիթարյանցի դասագիրքը, Մսեր Մսերյանցի դասագրքի նման, բաղկացած է երկու հատորից.

Ա հատորում, աշխարհաբար, համառոտ կերպով, հարց ու պատասխանի ձևով ներկայացված է Քրիստոնեական վարդապետությունը, բաժանված դասերի:

Բ հատորում, գրաբար, ընդարձակորեն պարզաբանված է յուրաքանչյուր դասի նյութը, ազատ շարադրանքով, հիմնված Հայ Եկեղեցու հայրերի երկերի վրա: Դասագրքի նման կառուցվածքի անհրաժեշտությունը հեղինակը բացատրում է հետևյալ կերպ, «որովհետև Հաւատոյ ուսանելիքը իբրև վերացական գիտութիւն՝ առած դասերի միտքը դժուարաւ միտք կառնուն աշակերտք, այս պատճառաւ երկրորդ գիրքը ևս գրեցինք արձակ գրաբար առաջին գրոց գլխակարգութեամբ՝ ընդարձակ և կարևոր բացատրութիւններով Հաւատոյ խնդրոց բովանդակութեամբ. որ իւրաքանչիւր դասախօսութեանց հարկաւոր տեղեկութիւնները աչքի յառաջ ունենան թէ՛ վարժապետք, և թէ՛ աշակերտք»[1]:

Նոյեան Աղաւնիում հրատարակված Առաջաբանը, ինչպես նաև այս առիթով շաբաթաթերթի խմբագրության ծանուցումը, որոնց նպատակն էր վերոհիշյալ դասագրքի տպագրության ծախսերի մեկենաս գտնել, ինչպես երևում է, արդյունք չի տալիս: Դասագրքի Ա հատորը հրատարակվում է ավելի քան 20 տարի անց, 1874/5 թթ. Գևորգ Դ կաթողիկոսի հրամանով, իբրև դասագիրք նորաբաց Գևորգյան ճեմարանի, ինչպես նաև Ազգային մյուս դպրոցների, «Դասագիրք Քրիստոնէական հաւատոյ...» վերնագրով: Իսկ Բ հատորը առ այսօր լույս չի տեսել[2]:

1853 թ. գարնանը Աբելը ուղեկցում է ծերունազարդ Հովսեփ վրդ. Բժշկյանին դեպի Կարին: 26 մայիս 1853 թ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանից Նոյեան Աղաւնիի խմբագրությանը ուղարկած Աբել վրդ. Մխիթարյանցի նամակից տեղեկանում ենք, որ նա 18 տարի է, ինչ «ի սպասու» է Հովսեփ վրդ.ին, որից և «ստացել է բազմաժամանակեայ ամաց դաստիարակութիւն[3]:

1 **Աբէլ Արքեպիսկոպոս**, Դասագիրք Քրիստոնէական Հաւատոյ, հտ. Ա, Վաղարշապատ, Ի տպարանի սրբոյ Կաթուղիկէ էջմիածնի, էջ ԺԴ:

2 Մատ. Ձեռ. հմր. 4428, թ. 2ա-53ա:

3 Տե՛ս Նոյեան Աղաւնի, Բ տարի, 6 յունիսի 1853, թիվ 65, էջ 3:

Կարինում եղած օրերին նա նկարագրում է տեղի հայկական Մայր եկեղեցին առաջնորդարանը և դպրատուն մանկանցը, որը և հրատարակում է Նոյեան Աղաւնի շաբաթաթերթում[1]:

Կարինում Աբելը ստանալով իր հոգևոր տիրոջ հաճությունը՝ ճանապարհորդում է Կ. Պոլիս, հիմնականում իր աշխատությունների հրատարակման ակնկալությամբ: Աբելը Կ. Պոլիս է հասնում նույն թվի մայիսի 24-ին:

Որոշ ժամանակ վայելելով Կ. Պոլսի Հայոց պատրիարք Հակոբոս եպս. Մարսուանու հյուրասիրությունը, Եգիպտոսի Հայոց առաջնորդ Գաբրիել եպս.ի հրավերով[2] Աբելը 1853 թ. նոյեմբերի 2-ին Կ. Պոլսից մեկնում է Իզմիր, այնտեղից էլ Գաբրիել եպս.-ի հետ ճանապարհորդում դեպի Ալեքսանդրիա, ուր և 14 օր մնալուց հետո Նեղոսով գնում Կահիրե:

Ինչպես միշտ, այս անգամ էլ Աբելը, օգտվելով իր ճանապարհորդությունից, ականատեսի առավելությամբ, ուսումնասիրում է Եգիպտոսի Հայոց թեմի պատմությունը և ներկան՝ ԺԱ դարից սկսած մինչև իր օրը[3]:

Կարապետ վրդ. Շահնազարյանի՝ Աբել վրդին գրած նամակներից տեղեկանում ենք, որ նրանք ծրագրել են Փարիզում հիմնել մի միաբանություն, որի հիմնական զբաղումը լինելու է գիտությունը, հայ մշակույթը եվրոպացիներին ներկայացնելը: Միաբանությունը ունենալու է մատուռ, դպրոց և տպարան: Ահա թե ինչ է գրում Կարապետ վրդ. Շահնազարյանը Աբելին. «Գաբրիէլ սրբազան արքեպիսկոպոսի ձեռամբն վերոյգրեալ երեք անձանց յորդորական նամակներ գրեր եմ՝ խնդրելով, որ Փարիզ հաստատուելիք մեր մատուռին, դպրոցին և տպարանին օգնութիւն ընեն: Աշխատեցէք անոնց հետ տեսնուելու և յորդորելու ասելով, որ ասկէ մեծամեծ օգուտներ կրնան յառաջ գալ մեր ազգի համար, երբոր ազգերնիս եւրոպացւոց ծանոթանայ, երբոր գիտնական, լեզուագէտ կարգաւորներ ունենանք...»[4]: Մի այլ նամակում Կարապետ վրդ.-ը պատվիրում է Աբելին. «Խնդրեցէք այսր անդր զձեռագիր մատեանս մանաւանդ զպատմականս որչափ կարօղ էք, օրինակեցէք, որ ի գալստեան Ձեր յոյժ հարկաւոր լինիցին մեզ»[5]:

---

1 Նոյեան Աղաւնի, Բ տարի 13 յունիս 1853, թիվ 66, էջ 2-3, 20 յունիս 1853, թիվ 67, էջ 2, «Ստորագրութիւն եկեղեցւոյն Հայոց Կարնոյ քաղաքի»:

2 Նամակ 236, Իզմիր 26 հոկտ. 1853 թ.:

3 Տես ճանապարհորդութիւն յԵգիպտոս, Արարատ 1876 թ. էջ 128-131, 164-171, 247-251, 326-327 377- 380:

4 Նամակ 238, 6-18 դեկտ., Փարիզ:

5 Նամակ 237, 18-30 օգոստոս 1853, Փարիզ:

1854 թ. գարնանը արդեն Աբելը Փարիզում է: Թեև երկու գիտնական վարդապետների ծրագիրը չի իրականանում, սակայն նրանց ջանքերը ապարդյուն չեն անցնում: Նույն տարվա առաջին կեսին բացվում է Փարիզի ազգային մատուռը: Հաջորդում են Կարապետ վրդ. Շահնազարյանի կողմից հայ պատմիչների հրատարակությունները հայերեն բնագրով և ֆրանսերեն թարգմանություններով:

1854 թ. Զմյուռնիայում լույս է տեսնում Աբել վրդ. Մխիթարյանցի ամենակարևոր աշխատասիրություններից մեկը՝ «Պաշտպանութիւն Հայաստանեայց Կաթուղիկէ և Առաքելական Ս. Եկեղեցւոյ, ի պատասխանի ,Աթոռ Ս. Պետրոսի Առաքելապետիե անուանեալ գրոցն:

1855 թ. սկզբներին Աբելին գտնում ենք Տրապիզոնում, ուր նա 3 տարի չափազանց օգտակար հովվական գործ է կատարում իբրև Պոնտոսի ճանիկի և Նիկոպոլսի վիճակների առաջնորդ Մեսրոպ ծ. վրդ.-ի փոխանորդ: Աբելի ներկայությունը Տրապիզոնում մեծ ոգևորություն է առաջացնում տեղի հայ գաղութում: Ահա թե ինչ են գրում Տրապիզոնի Հայկազյան Ընկերության անդամները Կ. Պոլսում լույս տեսնող Մասիս շաբաթաթերթին. «Գոհութիւն կը մատուցանենք երախտապարտ սրտիւ վիճակիս գերապատիւ Առաջնորդ Հօր, որ այս ձմեռ հոգևոր մխիթարիչ յուղարկեց մեզի արժանապատիւ Տ. Աբէլ Մխիթարեան ուսումնապերճ վարդապետը, որ իրեն հոգեշնորհ խրատներովը քաղաքիս ուղղափառ հասարակութեան նոր կենսական ոյժ և զօրութիւն մը տուաւ: Քանի ազգօգուտ ընկերութեանց անկումը վերականգնեց՝ զանոնք ի թմրութենէ արթնցնելով, ինչպէս նաև մեր Հայկազեան ընկերութիւնը, որուն լոյսը խաւարելու վրայ էր, երբոր հանկարծ այս ազգասեր վարդապետը հասնելով՝ իր ազդու յորդորանքներովը քաջալերեց մեզ ընթացքնիս շարունակելու իւր նախագահութեանը տակ, և ընկերութեանս հաստատ և բարեկարգ մնալուն և արդիւնաւոր ըլլալուն համար գեղեցիկ և իմաստուն կանոններ հաստատեց...»[1]:

Աբել վրդ.ի աշխատանքով Տրապիզոնում նախ բարեկարգվում է արական վարժարանը, ապա բացվում աղջկանց դպրոց, ինչպես նաև Ուսումնասիրաց ընկերություն, որի նպատակն է. «ուսման սէրը տարածելու համար բաժանորդութեամբ դրամագլուխ մը պատրաստել և ազգերնուս մէջ գտնված կրօնական, բարոյական և հմտագոյն գրքերը, տետրակներն ու լրագիրները գնելով վերծանութեան սենեակ մը բանալ»[2]: Այդ սենյակ-գրադարանը բացվում է 1856 թ. նոյեմբերին, շուրջ 90 անդամներով:

1 Մասիս, Ե տարի, թիվ 206, 5 յունվար 1856, էջ 4:
2 Անդ, թիվ 253, 28 նոյեմբեր 1856, էջ 2:

Տրապիզոնում եղած տարիներին Աբելը առիթ է ունենում վիճաբանությունների մեջ մտնելու հայ ավետարանական քարոզիչների և օտար բողոքական միսիոներների հետ, որոնց ընթացքում նա միշտ հաղթող էր դուրս գալիս և վերստին Հայ Եկեղեցու գիրկը առաջնորդում շեղված հայերին[1]:

Տրապիզոնում եղած տարիներին Աբելը, ըստ իր սովորության, ուսումնասիրում է Տրապիզոնի հայ գաղութի և Եկեղեցու պատմությունը և հրատարակում այն-մի արժեքավոր ուսումնասիրություն-Վէպ գաղթականութեան Հայոց Տրապիզոնում[2] վերնագրով:

Աբելը 1857 թ. ծրագրում է նաև Տրապիզոնում հիմնել Հայկական տպարան[3]: Մեզ հայտնի չէ, թե նա կարողացա՞վ իրականացնել այդ ծրագիրը: Հստակ է միայն, որ 1857 թ. վերջին արդեն Աբելը հրաժեշտ է տալիս Տրապիզոնին և Կ. Պոլսի վրայով անցնում Թեոդոսիա, Ղրիմ:

Կ. Պոլսում եղած օրերին Հայոց պատրիարքարանը ստանում է նոր կաթողիկոսի ընտրության կապակցությամբ Սինոդի գաղտնի գրությունը, որով առաջարկվում էր Հակոբոս պատրիարքին Ռուսաստանի եպիսկոպոսներից կաթողիկոս չընտրել[4]: Պատրիարքը ցանկանում է Աբելին պոլսեցիների կողմից պատգամավոր ուղարկել Ս. էջմիածին: Աբելը սակայն մերժում է այդ առաջարկը: Նա 1858 թ. հունվարի 18-ին ճամփա է ելնում դեպի Ղրիմ: Ահա թե ինչ է գրում այդ առթիվ Պոլսահայ ամիրաներից Պետրոս Խորասանճյանը Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի առաջնորդ տեղակալ Գաբրիել Ծ. վրդ. Այվազովսկուն. «Մխիթարեան արժանապատիւ Աբէլ վարդապետը՝ իւր գրաւորական աշխատութիւնները և նոր սկսած ազգային և պատմական շահաւէտ գրուածքները կատարելագործելու և ի լոյս հանելու իրաւացի բաղձանօք Ձեր Սրբութեան թևին տակը պատըսպարիլ և ձեր բազմահմուտ և լուսաւորեալ խորհրդակցութիւնը վայելել ուզելով, իւր այս փափաքը ծառայիդ ալ բարի և օգտակար երևեցաւ: Ինքը ձեր գերապատիւ Սրբութեան ալ գրած և արդէն Ձեր բարեսէր հաճութիւնն ալ ստացած ըլլալով, այսօր ճամբայ պիտի ելլէ Օդեսա երթալու համար»[5]:

---

1 Մատ. Ձեռ. 4461, թ. 27ա-50ա, Աբէլ վարդապետի Մխիթարեանց Միաբանի Ս. էջմիածնի, Կրօնական խնդիրք ընդ Աւետարանական Հայս ի Տրապիզոն, Մասիս, Ձ տարի, թիվ 301, 31 հոկտեմբերի 1857 թ., էջ 3:

2 **Աբէլ վարդապետ Մխիթարեանց**, Վէպ գաղթականութեան Հայոց Տրապիզոնու, Կ. Պոլիս, ի տպարանի Մասիս լրագրոյ, 1857:

3 Նամակ Յակոբ Տէտեանի, Զմիւռնիա, 10 փետր. 1857:

4 **Սահակ վրդ. Ամատունի**, Աբելի մասին..., տեղ. է, գիրք Դ, գլ ԺԳ 66բ:

5 Նամակ 279, Կ. Պոլիս, 18 յունվ. 1858: Տե՛ս նաև Մկրտիչ Մոմճեանի նամակը 29 յունվ. 1858, Կ. Պոլիս

Գաբրիել Ծ. վրդ.-ը սիրով է ընդունում Աբելին և կայսերական հրաման առնելով՝ նրան նշանակում Նախիջևանի և Բեսարաբիայի Հայոց թեմի կոնսիստորիայի առաջին անդամ, 1958 թ. ապրիլի 10-ին[1]:

30 ապրիլ 1858 թվակիր Ստ. Նազարյանցին ուղղած նամակով Աբել վրդ.-ը ողջունել է Հյուսիսափայլի հրատարակությունը: Այս առթիվ Ստ. Նազարյանցը Աբելին գրում է. «Ձեր գեղեցկախոս նամակը ... մեծ ուրախութիւն պատճառեց ինձ, որպէս մի քաղցր բարեկամական ողջոյնի ձայն դէպի մեր ազգային ձեռնարկութիւնը, որ է «Հիւսիսափայլի» հրատարակումը»[2]: Ստ. Նազարյանցի այս նամակը Աբելը ստանում է 1858 թ. վերջին, երբ ինքն արդեն վերադարձել էր Սբ. էջմիածին: Նազարյանցը Աբելին գրում է նաև հետևյալը. «Շատ բաներ կան այս ռոպէիս գրելու Ձեզ, մանաւանդ, որ դուք այժմ այնքան մօտ էք էջմիածնու Սինհոդոսին ... տեսանենք խաւա՞րը կհաղթէ լուսին, թէ՞ լոյսը խաւարին... [3]:

Աբել վրդ.-ը, միակ պաշտպանը Հյուսիսափայլի Ս. էջմիածնի միաբանությունից, իր շուրջն է հավաքում մի քանի երիտասարդ վարդապետների, որոնք և բաժանորդագրվում են Հյուսիսափայլին:

Ինչպես երևում է Ստ. Նազարյանցի՝ Աբելին ուղարկած փետրվար 11-1859 թ նամակից, տեղեկանում ենք, որ Աբելը ցանկացել է մեկնել Աստրախան, այնտեղ սեմինարիա բացելու համար[4]: Մատթեոս Ա կաթողիկոսը, սակայն, Աբելին չի հաճել արձակել, այլ պահել է իր մոտ որպես քարտուղար[5]:

1859 թ. վերջին Աբելը ստանում է եպիսկոպոսական ձեռնադրություն[6]: Նա շուտով ստանում է նաև Արքության տիտղոս և Մայր Աթոռում զբաղվում գիտական աշխատանքներով:

1868 թ. Գևորգ Դ կաթողիկոսի կարգադրությամբ նշանակվում է Արարատ ամսագրի առաջին խմբագիր:

1870 թ. նշանակվում է Մուղնու Ս. Գևորգ վանքի վանահայր[7], միաժամանակ հրահանգ ստանում այնտեղ բացելու հոգևոր դպրոց[8]:

---

1 Նամակ 287:

2 **Ստեփանոս Նազարյան**, Նամականի, կզմ. Ռուզան Նամումյանը, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան 1969, էջ 202, նամակ 113, 27 նոյեմբ. 1858:

3 Անդ, էջ 202-203:

4 Անդ, էջ 206, նամակ 116, փետր. 11, 1859:

5 Անդ, էջ 217, նամակ 125, նոյեմբ. 19, 1859:

6 Ձեռ. 4428. թ. Օա:

7 Արարատ 1870 հոկտ., էջ 220-սյունակ բ.:

8 Մեզ հայտնի չէ, թե Աբելը կարողացե՞լ է դպրոց բացել: Հ. Եղիազարյանը գրում է. «Աբել եպս. Մխիթարյանը, դառնալով Մուղնու վանքի առաջնորդ, 1870 թ. այնտեղ հիմնում է հատուկ դպրոց, որի համար կառուցում է առանձին շենքեր, Մուղնու վանքը և նրա վիմագիր արձանագրությունները, էջմիածին 1960, է, էջ 34:

Աբել արք. Մխիթարյանը 1874 թ. փետրվարի 1-ին արդեն Ս. էջմիածնում էր:

Հրատարակելով «Դասագիրք Քրիստոնէական Հաւատոյ» աշխատությունը, Աբել արք.-ը ձեռնարկում է պատրաստել նաև «դասագիրս Ազգային պատմութեան[1] ... և այլ դասական գրքեր ...յօգուտ նորակառոյց ճեմարանի»[2]: Դժբախտաբար, սակայն, նրա ծրագրերը չեն իրականանում: Հիվանդանում է և ընկնում անկողին: Նույնիսկ «Արարատում» երկար ամիսներ տպագրված «Պատմութիւն հալածչաց» արժեքավոր աշխատության հրատարակությունը կիսատ է մնում:

Նրա մահվան առթիվ «Արարատ» ամսագրում տրվում է հետևյալ համեստ ծանուցումը. «Ս. էջմիածնի միաբաններէն Աբէլ եպիսկոպոս Մխիթարեանց ի 12ն ամսոյս իւր մահկանացու կենաց ընթացքը կնքեց և ի յաջորդ աւուրն եկեղեցական հանդիսիւ մարմինը միաբանութեան գերեզմանատանում ի հող ամփոփեցաւ»[3]:

«Մեղու Հայաստանի» թերթում Խ-ի ստորագրությամբ մի գրություն է հրատարակվում Աբել արք.ի մահվան և թաղման մասին, որտեղից քաղում ենք հետևյալը.

«Կարծէս թէ բնական ճակատագիր է, որ ազգի բանագէտ անձինք ունենան թշուառ մահ և ողորմելի վախճան: Մի ամիս աւելի տառապելով ջերմախտութեամբ՝ խպառ հալումաշ լինելով գրեթէ կմախք էր դարձել, տկար, բազմավաստակ միաբանի համար չկային օգնութիւն, խնամք, հոգատարութիւն, իսկ հանգուցեալն, լինելով վերջին աղքատութեան մէջ, չէր կարող առողջապահութեան անձնական պաշտպանութեան միջոցների դիմել, բոլորովին արգելուած էր Սրբազան Մանկունոյ կողմանէ մինչ անգամ այն պիտոյքն, որ առողջ միաբանից համար սովորաբար անհրաժեշտ էին համարուած, թող թէ տկարի համար, մինչև անգամ ամենակարևոր մի գաւաթ կաթ տալն վանքի գոմանոցէն արգելուել էր: Իրաւունք չէին տուել ծախսարարաց վանքային ծախիւք դեղոբայք գնել, ինչ որ պահանջել է բժիշկն, մինչդեռ այլոց երևակայական տկարութեանց համար հանքային շաքար և այլ պիտոյք Պոլսից և այլ տեղերից բերել են, մեկին տասն աւելորդօք ստանալով ծախքերն: Մինչ այն աստիճան բժշկի գայրոյթն շարժուել էր այս անգթութեանց համար, որ բարւոք էր համարել անձնականէն տալ ինչպես և տուել էր 50 ռ. հոգալ տկարութեան անհրաժեշտ պիտոյքն ...ամենապատիւ Եպիսկոպոսի մէկը, որ այժմ գտնուում

1 Տե՛ս «Դասագիրք Քրիստոնէական Հաւատոյ, էջ Ը:
2 Անդ, էջ ԺԵ:
3 «Արարատ» 1876, դեկտեմբեր, էջ 466:

է էջմիածնի պարիսպը ... սկսել է խնամք տանել, ինչպես և աղքատ վարդապետի մեկը երեք ռուբլի տալիս է ջուր բերողի վարձն, երբ վանքէն տալն արգելել են, ինչպէս և արգելուել էր Երևանայ դեղատանէն դեղ բերելն և բժշկի տուած դեղօրէից տոմսակներն աննշան մնացել են ծախսարարաց մօտ: Ուստի և հիւանդն օր քան զօր ծանրանալով՝ նորա աղքատ ծառայն, որ քան զՄանկունին առաւել մարդասէր զգացման տէր էր, կխնդրէ թոյլտուութիւն և կտանի Եպիսկոպոսն իւր տունը Վաղարշապատ գիւղն պաշտպանել որքան կարելի է, նորա անձն տկարութեան վտանգէն, բայց ափսո՜ս բանն ուշ էր, չորս օրից վախճանեցաւ Աբէլ Եպիսկոպոսը ծառայի տան մէջ:

Միաբանական Ուխտն, երբ... պատրաստուեցաւ եկեղեցական պատշաճաւոր հանդիսիւ բերել եկեղեցի հանգուցելոյ մարմինը, անպատկառաբար դուրս պրծել է Մանկունին, լուսարար Եպիսկոպոսին հրամայելով, որ ոչ Եկեղեցւոյ դուռն բանայ և ո՛չ զգեստ, խաչ և այլ բան տայ, միաբանից պատուիրելով, թէ միաբաններից ոչ ոք իրաւունք չունի գիւղն երթալ, հազիւ տեղն է եկել, ես մեռելն պէտք է տան մէջը հոտացնեմ, գիտե՞ս, անիկ ի՞նչեր չգրեց մեր վերայ, ի՞նչեր չխօսեց:...

Մանկունին կկոչէ իւր մօտ գիշերն Վաղարշապատու բարեկարգ քահանայն և կպատուիրէ, որ առանց որևէ եկեղեցական պաշտամունք և կարգ կատարելոյ հանգուցելոյ վերայ, առանց լօղացնելոյ դնել դագաղի մէջ իւր վերայի հագուստովն և մշակների ձեռօք լուռ ու մունջ ծածկաբար տանել Գայիանէի վանքն և միւս օրն թաղել: Քահանայն այս անարգ հրամաններն անթերի կկատարէ: Գիշերային ժամը 10-ն էր, որ ձայն տարածուեցաւ միաբանից և ժողովրդոց մէջ այս անպատիւ գործողութեանց մասին, ուստի հոգևորականք, ժողովուրդք այլ ընդ այլոյ եղած վազեցին դէպի Գայիանէի վանքն և ահա կէս ճանապարհին յանկարծ կհանդիպին դագաղին...

Ի վեր անդր յիշատակած նախապատիւ Եպիսկոպոսն կկոչէ իւր մօտ սինոդական անդամոց մէկն, որ Մանկունու բարեկամն է, հարցնել թէ «Ո՞վ է այս հրամաններ արձակողն, իրաւի Մանկունի՞ն է՝ թէ՞ կաթուղիկոսն»: Անդամն կպատասխանէ.

«Զարմանալի հարցմունք, Սրբազան Հայր, մի՞թէ Դուք չգիտէք, որ Մանկունուոյ հրամաններին հնազանդ պէտք է»: ... Նախապատիւ Սրբազանը կժողովէ միաբանութիւնն և կգնայ Գայիանէի վանքն, որ և հանդիսադիր լինելով պատշաճաւոր կերպիւ

կկատարեն օծումն ու թաղման կարգն ... (Ինքը վեհափառը հիւանդ էր), իսկ վեհարանականներէն մին... «Ի՞նչ պարտական են հանգուցեալն ըստ պատշաճի թաղել, նորա սենեկից քանի՞ մանէթ դուրս եկաւ»[1]:

Նման մի բողոք է նաև Մոսկվայի Հայ Հասարակության կողմից Ստ. Նազարյանցի 5-ը մայիս 1877 թ. նամակը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Դ-ին[2]:

Աբել արք.-ի մահվանից հետո նրա ձեռագրերը ցրվում կամ ոչնչացվում են:

1917 թ. Արարատ ամսագրում հրատարակվում է հետևյալ ազդը. «Շնորհիւ բարձր. Տ. Սահակ վ. Ամատունու ջանքերի գտնուած է Աբէլ արք. Մխիթարեանի Հայոց պատմութիւնը, որ ժամանակին կորած էր համարուում, գրաբար լեզուով, որը շարունակում է Չամչեանի պատմութիւնը մինչև 1870 թ.: Բաղկացած է 4 հատորից, 351 երես»[3]:

Երևանի Մ. Մաշտոցի անվան մատենադարանում այժմ պահպանվում է[4] վերոհիշյալ գործի Գ. Դ. հատորներն և Բ. հատորի կեսը, որ ընդգրկում է Դանիել Դավիթյան վեճերից մինչև Գևորգ Դ. կաթողիկոս՝ Հայ Եկեղեցու պատմությունը:

1 «Մեղու Հայաստանիե, 26 մարտի, Ի տարի, 1877 թ., էջ 1-3:
2 Տպ. Հանդէս գրական և պատմական 1888, էջ 271-272:
3 «Արարատ», 1917, 2-3, էջ 257-ց հետո, շապիկի վրա:
4 Ձեռ. 8822:

ՀԱՒԱՏՔ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ[1]

1 ԱՐԱՐԱՏ, 1870, Մայիս, էջ 5-6

2 - Ա. արք. Մխիթարեանց

ՅԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆՆ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՅ

Անեղ, անսահման, Աստուած էական, անկէտ, անվախճան,
Ի սկզբանէ Բան, առ Աստուած էր Բան, և Աստուած էր Բան,
Նոցին Սուրբ Հոգի համագոյակից ՝ի մի էութեան,
Երից մի բնութիւն, ՝ի դէմս երիս՝ մի յԵրրորդութեան:
Բայց ո՛չ յետնութիւն, ո՛չ յառաջնութիւն, ո՛չ ՝ւ երեք Աստուած,
Այլ միշտ՝ մի Աստուած, և զերթ արեգական՝ լոյս համատարած.
Միոյն՝ Հայր անուն, երկրորդին՝ Որդի, Հոգին՝ երրորդ անձ,
Հայր Որդւոյն պատճառ, և Հոգւոյն բղխման՝ անքննին մտաց:
Էրիցս ստեղծող Սուրբ Երրորդութիւն, երեք թիւ անձին,
Զոր ինչ Հայր գործէ յերկրի և յերկին, նոյն՝ Որդին, Հոգին,
Ոչ ինչ է Աշխարհ, յոչընչէ եղեալ, գործք են հրամանին,
Ասաց՝ և եղեն երկինք և երկիր՝ համայն յիւր կարգին:
Լուսոյ զ՝ի սկզբան հետ առին զսկիզբն հրեշտակք գոյութեան,
Ի նոյն և աւուր հրեշտակք խաւարին, որպէս վկայք կան,
Ելին և անէք, էացան ի գոյ ի նիւթ տարրական,
Յորոց Տէր ի հիմն եդ տիեզերիս յանքակ միութեան:
Վայելք բիւր ՝ի ջուրս ծովու, ցամաքի, էակք անհամար,
Մարդկան առ ՝ի պէտս, Արարչին խնամոց ցոյցք անժխտարար,
Յորս յամենեսին զմարդ միայնակ գերագոյն պատուեալ,
Իւր նմանութեան նմա տիպ գծեաց, պատկեր անվթար:
Այսպէս՝ «ամենայն ինչ նովաւ եղև», բովանդակ էակ,
«Զէ՛ր առանց նորա ո՛չ ինչ որ եղև, և ո՛չ մեք էաք».
Ամէնն ՝ի նմանէ՝ վայրկեանք և բոպէք, ժամք և ժամանակ,
Աւուրք և ամիսք, յամաց ՝ի գումար, նոյն և համայն դարք:
Բաբունեացն Յովհան՝ որդին որոտման, զայս որոտաց բան.
Երկինք և երկիր և որ արարածք՝ նովաւ հաստեցան,
Հայր երբ կամեցաւ՝ Որդին ներգործեաց, Հոգւով շնչացան,
Կանգնեցան, կացին յոգի կենդանի՝ ի կենաց սահման:
Դարուն վեցերորդ Հայր ետ ժամանակ յաշխարհի յսկզբան.
Մարդացաւ Որդի ՝ի կուսէն ընտրեալ յանախտ ծննդեան,
Հօրն իւր յԱթոռոյ յաջմէ ՝ի բարձունս մնաց անբաժան,
Յորմէ անսկիզբն ծնունդ ծոցածին նախ քան զյաւիտեան:
Անեղն էական խառնէ զմեր բնութիւն յիւրն Աստուածային,

Աստուած կատարեալ, և մարդ կատարեալ, կորոյս ո՛չ մին զմին.
Եւ ո՛չ են շփոթ, ո՛չ երկու բնութիւն, որպէս կարծեցին,
Այլ յերկուց բնութեանց անշփոթ միութիւն, Աստուած կուսածին:
Պահեաց ծնողին անախտ զորովայն, անսերմն յղութիւն,
Անարատ ծնունդ, ոյր և անապակ մնաց կուսութիւն,
Քանզի որ ծնաւն, նոյն և յղացաւ ՝ի Սրբոյ Հոգւոյն,
Օծեալն ՝ի Հոգւոյն՝ ընդ Աստուածայնոյն օծ զմեր բնութիւն:

Եկն մեր Փրկիչ, փրկեաց յանիծից մեղացն Ադամեան,
Զիւր տիպ պատկերի եգիտ, զոր երբեմն ՝ի հաղբ կորստեան,
Ջուրն ՝ի Յորդանան, յոր մկրտեցաւն, զնոյն կողիցն հոսման,
Կացոյց ՝ի լուացումն մեզ ՝ի սկզբնական մեղացն եղծման:
Տալով զիւր մարմին մեզ ՝ի կերակուր՝ կեցոյց յաւիտեան,
Եւ զարիւն եհեղ Հօրն յորդեգրութիւն, մեզ դին փրկութեան,
Զխաչն ՝ի պսակ ետ նորոյ ուխտիս յաղթութեան նշան,
Ի թև քառաթև դրանց դժոխոց յաւերժ յաղթական:

ԱՐԿԱԾՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Նախերգանք

Ո՛չ Աթենաս անդիեցիկ
Ո՛չ Մեղպոմէն յերգ ներդաշնակ,
Ո՛չ Երատովն պետ քերթուութեանց
Իմ քերթուածոցն Եղերերգակ:
Ոյք Հագներգուին յերգ դիւցազան,
Զշատանային ձրիցաբաշխ,
Եւ զօրավիգն անցիցն ի շար
Նշոյլ ծագեալ անշամանդաղ:
Զէ ինձ նեկտար ի Պարնասոս
Շնորհավտակ հեղիկոնին,
Յումպն յոյր ի մի յառնէր քերթող
Եզերս քննել ըստ առասպելին:
Այլ քեզ յաւէտ անմահ Հոգի,
Քեզ իմ քերթուած հանցի ի ձօն,
Դու օն մտացս ասպարիզի
Շնորհածագեա ձիր անցրօն:
Դու որ զերկիրս չորեքծագեան
Լնուս քառյառաջ ծով զցամաք,
Զնոյն հոգի բանիւ քոյին
Լից անսպառ յոգիս համակ:
Դու որ ընդ խոր թեւածէիր
Յանդնդաջուր ընդ լայնածիր,
Սերմն երկնեալ հանուրց գոյից
Տիեզերացս ի տարր անծիր:
Իբր աղաւնի ձագուց ի գութ
Թեւապարփակ շրջապարեալ,
Ի հողանիւթ ջրազանգուածն
Գոյիցս ի ծնունդ գգուասիրեալ:
Նոյն յիս ի միտս Աստուած հզօր
Էղ սաւառնեա յստակ ի մուտ,
ԶԱնցս Արկածիցն ի Հայաստան
Կենդանածնեա բանիւդ աննիւթ:

Յանմահ անուն նահատակաց
Նուիրեցիր զԵրգս յիշատակ,
Զդիւցազանց մերոց քաջաց
Տալ աշխարհի գործս ի հռչակ:
Եւ յետ նոցին զանցս աղետից
Անտերունջ Տանս Հայաստանեայց,
Ապագայից թողուլ անջինջ
Մանրանկար զայս սուղ Արկած:

Երգ Առաջին

Յաւիտենից Աստուածն հանուրց
Յոչնչէից հաստիչ ընութեան,
Զիւրոց հրաշիցն ընտրեաց տեղի
Զեղեմավայրն զՀայաստան:
Ուր զառաջին ստեղծ զմարդ
Փչեաց ի նա շունչ կենդանի.
Եւ կենագործ ի կեանս անմահ
Գործել պատուէր ետ հրամանի:
Անդ ուր Որէն զարարչութեան
Հրաշագործեաց գործ հրաշալի,
Անդ և մարդոյն շնորհեաց ընկեր
Իշխել էիցս ամենայնի:
Աստուածազոյգ ամոլքն երկու
Փառս յանպատումս լծակցէին,
«Քանզի զԱստուած տեսանէին
Միշտ խոնարհեալ ի մէջ դրախտին»:
Աներեկոյ անդ այգորէր
Միշտ արեգակն և միշտ լուսին,
Զի տիւն որ անդ՝ չունէր գիշեր,
Միշտ համասփիւռ ծագէր Արփին,
Էրէվայրիքն, առիւծն, արծուի
Նմա ի գուճս իջանէին,
Ողջ եղականք գային հլու
Անեղական ըստ հրամանին:
Բայց նախահարցն ի ստունգանել
Աստուածադիր պատուիրանին,
Անիծապարտ անկան յերկիր

Մահուամբ կենաց փոխարինին:
Այլ Հայաստան վայր փրկութեան
Տապանագերծ Նահապետին,
Եւ խանձարուր մարդկան սեռի
Կենդանացաւ աշխարհ կրկին:
Դադար լաստին մեղսահանգոյց
Ի մարդահեղձ ջրաջինջ դարու,
Յայն պատուհասն աշխարհաւեր
Նոյի որդւոցն վայր կենսատու:
Յորոց հսկայք սերեցան յազգ,
Յազգ Տիտանեանց ի տարաշխարհ,
Որք զառաջինն ազգի մարդկան
Զչուն կազմեցին ի Սենաար:
Այլ ի խառնիլ լեզուաց մարդկանն
Յաշտարակին անդ կործանման,
Եւ անհեղեղ ազգազգ հսկայքն
Յաշխարհ ամեն ողջ ցրուեցան:
Անդէն Նեբրովդ որ դիցաբար
Խորհէր խժիցն տիրել մարդկան,
Անդ Հայկ դիւցազն Յապետոսթեան
Բռնակալին կաց ախոյեան:
Ի մէջ խօլիցն սպայակոյտ
Սա խրոխտապանծ ընդդէմ Բէլայ,
Եւ հաստաղեղն իւր կորովեօք
Զուեաց յաշխարհս Արարատայ:
Մինչ խստութեամբ նա պատգամին
Դարձոյց անդրէն զպատասխանի,
Ի կուռ զորեարն աղեղնավարժ
Հան ի ճակատ պատերազմի:
Ամբոխ անթիւ հետևակաց
Յորձանս ահեղ զերթ գետ վարար,
Յարոյց անդէն Բէլ վիթխարի
Զմարդակոյտս հեղեղաբար:
Այլ նահանջեաց յանդուգն այս թափ
Հայկ քաջաղեղն յիւր գունդն արի,
Յառաջ խաղաց բռնաւորին
Թռոյց զնետն իւր շեշտակի:
Անկաւ անդ Բէլ մարտին ի խռան

Ի տէգն Հայկայ դիատապաստ,
Զերծաւ այսպէս աշխարհ համայն
Եւ հայրենիք մեր բարեբաստ:

Երգ Երկրորդ

Այսպէս ազգիս միապետեաց
Հայկ ի տանէն Թորգոմական,
Եւ գահանիստս ի չէն պանծառ
Կարգեաց ցեղիցն իւր Հայաստան:
Ոյր պայազատք իշխանութեան
Յաջորդեցին քաջին սերունդք,
Եւ տոհմաձիգ կալան զերկիր
Արեաց ազգիս ազատագունդք:
Անդ հոյակապ արկան հիմունք
Պերճ քաղաքաց չինից համայն,
Ցեղ ըստ ցեղից իւրաքանչիւր
Տանս Հայոց կացին իշխան:
Յարեաւ Արամն հսկայազօր
Միահեծան կալաւ զաշխարհս,
Աշխարհակալ վառեալ ըղձիւ,
Հայաստանեայց յաւել սահմանս:
Հայրենասէր այս նահապետ
Լա՛ւ համարէր զմահ ինքեան,
Քան զհարազատս իւր տեսանել
Օտարածնաց ոտից կոխան:
Վասն այն և խումբ կազմեաց մարտիկ
Զաղեղնաւորս իւր պատանիս,
Զքաջս արանց զերեսաւորս
Ի պատերազմ զկորովիս:
Առ թշնամիսն անդ դրացիս,
Յորոց նեղեալ էր Հայաստան,
Յաղեղն ի սուր յաջողաձեռն
Կանգնեաց նշան զյաղթութեան:
Անդ որ Նիւքար զՄեդացին
Շորթէր սահմանս քուշանաբար,
Յահեղ մարտին արկ ձերբակալ՝
Սատակելով զամբոխն հազար:

Եւ զ Նիւքար կալանաւոր
Ած յԱրմաւիր զհէնն ամեհի,
Անդ ի տեսիլ անցաւորաց
Ի ծայրս վարսեաց աշտարակի:
Հայրենավրէժ քաջին այս գործ
ՅԱսորեստան արկ արհաւիր,
Սարսեաց Նինոս դարանակալ
Տանն Հայկայ քինախնդիր:
Բայց ի սրտին թագուցեալ զոխ
Շուք Արամայ ետ առերես,
Զվարսակալ կրել մարգարտեայ
Մեծարանաց ցոյց առ ի տես:
Բայց քաջայաղթ մարտից հանդէս
Յետ այնորիկ կարգեաց Արամ,
Զորից բիւրուցն ի ճակատու
Մինչ զԱսորին վանեաց Բարշամ:
Եւ յարևմուտս զՊայապիս
Ի տիտանեանց ազգէ զհսկայն,
Փախստական վարեաց ի տար
Մինչ ի կղզիս Ասիական:
Ուր աշխարհիս տայ բնակչաց
Խօսել լեզու զՀայկական,
Ուր յաղթութեանցն ի յիշատակ
Հայք Առաջին անուանեցան:
Այսպէս Արամ հզօր իշխան
Ընդարձակեաց զտուն հայկազանց
Որում Արայ անդ գեղեցիկն
Որդի ընդ հօր պայազատեաց:
Սա ողջախոհ վարուքն ընդդէմ
Շամիրամայ ախտասիրին,
Բազմադիմի մերժեաց հրապոյր,
Անկաւ ի խռան պատերազմին:
Յայն վայր կրօնից ի պաշտամունս
Աստուածապաշտ էր Հայաստան,
Այլ Հայք մինչ դից տարան պաշտօն,
Անդ հարազատ բարձաւ իշխան:
Յետոյ ուրեմն Արք անուանիք
Այլք ի ցեղէ զարմիցն Հայկայ,

Քաջք ի քաջաց յաջորդեցին
Մինչ ցԶարմայր նախնին հսկայ:
Որ Հայ զօրօքն իւր բազմամբոխ
Հաս զօրավիգն ի Տրոյիա,
Բայց յարշաւանս անդ յունական
Անկաւ ձեռամբ քաջն Աքիլլեայ:
Իսկ որ Պարոյր զՍարդանաբալլ
Արկ գահընկէց ընդ Վարբակեայ,
Ի պերճ պսակ անդ զառաջինն
Թագաւորեաց տանն Հայկայ:
Բայց Տիգրանայ ոչ ոք նման
Յարեաւ յազգէն քաջ նախարար,
Որ զՀայս թափեալ ի լծոյ ազգաց,
Զազգս ընդ լծով արկ առնաբար:
Որ ի կենցաղս առաքինի
Արդարադատ էր կառավար,
Ռամիկն և զճոխ ի հայրական
Տածէր ի խնամսն հաւասար:
Սա առաջին անդ բազմացոյց
Մթերս ոսկւոյ ի հայրենիս,
Եւ հասակաց իւրաքանչիւր
Զգեստ պէսպէս գոյն գեղանիս:
Ոյր հետևակ մարտիկ զօրաց
Համակ զինեալ ի զէն զարդու,
Հեծելամարտն յարծաթափայլ
Շողայր սուսեր շող փայլածու:
Յոր Աժդահակ ակնկառոյց
Ի կասկածանս կայր ի խեթի,
Ընդ Հայկազունն Տիգրանայ
Յաջակցութիւն ընդ Կիւրոսի:
Յանրջականս ի խօլ տեսիլ
Զցայգ անքուն խռովէր յոգի,
Հուսկ ընդ Տիգրան եդ դաշն կեղծ
Զոյր քոյրն առ կին զՏիգրանուհի:
Բայց չիք ծածուկ ինչ աշխարհի.
Այս դաւ յայտնի լեալ Տիգրանայ
Վասն յըսկիզբն ահեղ մարտին
Բաշխեաց մահ դքառն Աժդահակայ:

Զվիշապազունս յազգէն Մարաց
Գաղթեաց ի Հայս արս բիւր մի,
Քաղաքացոյց նոքօք զաշխարհս
Յարձակ գաւառն Նախջուանի:
Սմա ապա տեղակալեաց
Ի քաջէն քաջ Վահագն արի,
Հարազատ հօրն նման որդի,
Զոր Տիգրանայ ծնաւ Զարուհի:
Եւ զի՞ կցել աստ զառասպելն,
Երկն ի ծովէն ծնաւ ծիրանի,
Վահագն էր նա յեղբարս կրտսեր
Հրաշագեղն այն պատանի:
Աչկունքն էին արեգակունք
Հերքն հրոյ նմանահանգոյն.
Ընդ վիշապաց կռուել քաջին
Զերթ Հերակլեայ եթող զանուն:
Այլ զինչ ստուեր փառք վաղանցիկ
Եւ կեանք մարդոյ յամաց ի շար,
Գահ պետութիւն չունին կայան
Եւ անկայուն է միշտ աշխարհ:
Մինչ Աղէքսանդր կալաւ ի բռին
Զտիեզերս աշխարհակալ,
Եւ Հայկազանցն անդ պետութիւն
Զհետ նորա առնու դադար:

Երգ Երրորդ

Զի՞նչ ոչ արար ձեռն հզօր
Անդ Հայկազանցն յոսկեդարու,
Երբ պետութեան Ազգին ի գահ
Վերամբարձման արք ահարկու:
Նախնի ազգաց պէս զհայրենիս
Եղին ի կարգ քաղաքական,
Եւ աշխարհի ճոխ շինութեամբք
Լցին անթիւ զՀայաստան:
Յերկհազարեան ամաց շրջանս
Նախանձելի գահ գերամբարձ,
Մինչ Հայկազունք որդի ընդ հօր

Պայազատէր ի թիւս ազգաց:
Հանրածաւալ փողփողեցաւ
Ի քառածագս դրօշ յաղթութեան,
Սարսէր երկիր համայն դրացի
Ուր արշաւէր Հայ զօրական:
Դու Հայաստա՛ն, ի դաշն համբոյր
Խաղաղութեան բուրէիր շունչ,
Յայնժամ էիր դրախտ փառաց
Երանութեան վայր անշշունչ:
Աթոռ էր քո արքայութեան
Եւ արքայից խումբ համազօր,
Որոց պատգամքն անզուգական
Ում խոնարհէր աշխարհ բոլոր:
Զի երբ կամաց և հրամանին
Հայն հպատակ էր արքայի,
Եւ անդամոց ընդ իւր գլխոյն
Միօրինակ գործէր ոգի:
Թագաւորէր միահեծան
Յայնժամ ազգիս ողջ թագակալ,
Ակօսն ուր նախ արկաւ յերկիր
Մեր հայրենիքն էր ոսկեդար:
Երբ մի էր ազգ և մի սերունդ,
Անդ միաբան Հայն համագունդ,
Այլ միութեան փոյթ փեռեկտումն
Մինչ խռնեցաւ ազգ եկամուտ:
Արշակունին յահեղն իւր թափ
Ահեղասաստ ի ծագս ազգաց,
Ոգին Հայոց շնչէր ի մարտ
Եւ Հայ արիւն էր ոյժ բազկաց:
Մինչ համարիւնք ի ցեղս օտար
Ազգակցեցան աշխարհամոք,
Մուտ խորդութիւն ի համազգիս,
Ատելութիւն հարաւ բորբոք:
Յարեաւ ի կռիւ տոհմ ընդ տոհմի
Եւ տուն ընդ տուն մղէր նախանձ,
Անդ Հայաստան զբիւր չարեաց
Քամեաց մրուր իւր դառն Արկած:
Անգու՛թ, դու հի՞մ չածես զգութ

Ընդ մահ որդւոցդ անմահաշունչ,
Սուր սլաք ընդ մուխ անցեալ ոգւոյդ,
Ցաւոտ սրտիդ չսրբես մրմունջ:
Զուրկ յԱրքայից, խմբից զօրաց
Այժմ անիշխան կաս ամայի,
Լա՛ց դու Այրիդ, լա՛ց անձկայրեաց
Իբրև զբու յաւերակի:
Ա՞յս քո քաղաք գահ արքունի,
Յոյր աւերակս հաւուց ճչիւն,
Կոյր բուն քեզ անդ ընկերչակի
Դերբուկք հեծեն լեռնահանգոյն:
Ցո՞ր վայր խաղայ աստ լռութիւն
Նախնի քաղաք քո յԱրմաւիր,
Ուր հողակոյտ տեսիլ տխուր
Եւ արքունիք հիմանցն ի խիլ:
Ու՞ր են քո փառք նախանձ ազգաց,
Յոր Հայաստա՛ն, դու պճնէիր,
Զի՞ քող ի թուխպ կաս դու լքած
Մերկ ծիրանեացդ յարքայակիր:
Ու՞ր ռամիկ խումբ հազարաց
Եւ արիւնոտ անհուն փքինք,
Յոյր յորդութիւն անշամանդաղ
Գիշերանայր այգուց երկինք:
Ու՞ր քո Մծբին, Երուանդաշատ
Եւ Արտաշատն, Արշակաւան,
Եւ մարդաշատն հուսկ քո Անին,
Դիցն Ազգիս վայր Բագնեաց աւան:
Եւ ի նոսին գահ գահակալ
Պալատականքն Աւագորեար,
Որք փայլեցան ի խնամս ազգին
Ի տան Հայոց իբրու գոհար:

Երգ Զորրորդ

Այլ վատարանցն վերջոտնելոց
Յազգին սիրոյ դառն յիշատակ,
Եւ վատ գործոց նոցին համար
Եղերերգեն Քերթողք ի նուագ:

Զիա՞րդ անկաւ աշխարհափող
Մեր Հայրենիքն խսպառ անլուր,
Գահ տէրութիւն իշխան զօրու
Հինից սրոյ բերանակուլ:
Զի՞ անխնայ Աւագանին
Պետք նախարարք համայն որեար,
Անխղճասիրտ գժտեալ գահին,
Այս ամենայն չարեաց պատճառ:
Զի երբ իշխան անզէն զօրուն
Իշխանացաւ կալաւ զգահ,
Անդ բելիար էր պետ դասուն
Ծնող չարեացս ի մարդամահ:
Դժոխածին ծնունդք չարին
Իւր չար կամացն են արբանեակ,
Որք դիականցն յարիւն բոսոր
ԶՀայաստան լուացին համակ:
Զօրագլխաց զօրք անհլու
Ինքնագլուխ սուր ի ձեռին,
Ծառայք փեղկեալ զքող յերեսաց
Տեարց խստասիրտ կեանս բարձին:
Այսպէս յերկծուէն փառակտեցին
ԶԱյրարատեան զպետութիւն,
Հագարացին գայլ ծարաւի
Իբրու ի գէշ սրացաւ ի նոյն:
Ի մարդախուռն արեան մարտի
Արբոյզ զնիզակ սուր երկսայրին,
Որ ի ջնջել զՀայաստան
Հերի՛ք չարար գերել զմարմին:
Գաղթեաց այր այր յիւր ակաստան
Զգուշացեալ գոհար անձին,
Գահակալեաց հրէշ վիթխար
Տանն անտերունջ Արամազնին:
Թաւալգլոր անկան մարդիկ
Յարեան առուս բոսորաներկ,
Իբրու ոչխար ի սպանդանոց
Հեղան արիւնքըն հրաշեկ:
Հրաշունչ փչեաց ժանտ հողմ,
Երաշտահար եկն խորշակ,

Բուք մրրիկ օդոց խառնուածք
Գերեաց երկրե զարդն երփնորակ:
Ցմեռն մահու թագաւորեաց,
Սառնամանիք բացան յերկնից,
Երկիր չետես զգարուն ծիծաղ
Ի սուգ որդւոցըն լացակից:
Իբրև այրի կականաբարձ
Սրտափղձուկ յարեան ճապաղ,
Անմխիթար լայր դիակունս
Զանկեալս տապաստ անփոշեթաղ:
Աւազափուլ նշխարեցան
Ամուր ամրոցք աշտարակեալ,
Իբրու վրացն սարդիոստայնք
Ապարանից ի զարդ ձգեալ:
Տաճարք կանգուն՝ անկան կործան
Հողախշտի եղեալ հիմունք,
ԶԱստուածաբնակ զգմբեթաւ
Պատեալ բաղեղն անդ հաստաբունք:
Բուն ի դերբուկս եղերաձայն
Անդ փոխ առնու զուարթնոց քնար,
Զորեքծագեան սուլեն հողմունք
Եւ գիշակեր սեռքն օդապար:
Բեմբ ամբիոն վայրք սրբութեան
Սեղան խորան քարատակեալ,
Փոշոտեցաւ քերուբ քանդուած
Ի քոս բորբոս կանաչացեալ:
Ամբոխ մտաց զիս կենդանւոյն
Դնեն ի կեանս մահուան տիպար,
ԶՏան Աստուծոյ տխուր տեսիլ
Երբ յուշ ածեմ մանրանկար:
Զետես Սիովն յիւր աւերածն
Յանգութ ի ձեռս Բաբելոնի,
Դարականգուն ի սուրբ քաղաքն
Հրաշից կերտուած Սողոմոնի:
Որքան ետես զիւր կործանումն
Հայաստանեայց Տաճարամայր,
Յաւերս ազգաց արշաւասոյր
Իբր ի պատիժ Աստուածահար:

Ուխտ ու՞ր նորա և դասակարգ
Տարաշխարհեալ ի սիրտ ցաւած,
Զարդք և սպասք և սուրբ անօթք
Ձեռն կապտեալ անօրինաց:
Անդ ար գետովք Բաբելացւոց,
Հայաստանեայց սուրբ ուխտն ի տար
Զգերութիւն նոր Սիովնի
Նստեալ դեր լան յողբս հազար:
Եւ քահանայք նորոյ ուխտի
Տան Աստուծոյ կղերք պաշտօնեայք,
ԶԱստուածավայր շքեղ Տաճարս
Քրիստոսական սիրոյն վկայք:
Յայսչափ աղէտ կայ Հայաստան,
Ո~Հ քան զնա է՞ ոք թշուառ,
Նա քրտնաթոր յարտօսր անթիւ
Թաշկինակէ լաց գերաշխար:
Աստ յիշատակ առնել կրից
Վտանգաւոր ազգիս գրոհին,
Որ Զաքարեայ մերթ զառածեալն
Ձերկնաթռուցիկ զգերանդին:
Գողոց ստոց և ստերդմանց
Յամպոց իջեալ վրէժխնդիր,
ՅԱստուածաշանթ ի թափն ահեղ
Գո՛գ յապստամբ դասուն յերիր:
Ի հարաւոյ չարիք մեզ բիւր
Բորբոքեցան բարեացն ի չի՛ք,
Սուր սրով և սաստիկ սրածութիւն
Թափանց յոսկերս աշխարհալիք:
Որպէս յուղւոջ ընձու ի դէպ
Գալ ախոյեան դիմագրաւ,
Համակ զինեալ ամբարտաւան
Մահ նիւթեցին յանձանց զրաւ:
Այն օր էր մեզ, յոր հատուցումն
Տուաւ ազգիս վրիժուցն ի գործ,
Աջ տեառն զերթ սուր յարիւն արբեալ
Վիրաւորաց գերեաց գլխոց:
Ոյց նախաթոռ հոգւո յարքունի
Աստիճանեալ դատս յատենից,

Ճոխանային ի բարձ պատուոյ
Ազատն ազնիւ վեհք ի վեհից:
Համայն ապա յորսայս բերան
Յոստիկանէն բանտիցն ի հաղբ,
Եւ կենսապարտ մահուն ի տոյժ
Ողջ դիւթեցան դիւթ դիւրախաբ:
Եւ զոյց դահիճն յաւագանւոյն
Յիւր սիրելեացն ունէր համար,
Զանխուլ ի մեղս Աստուածընդդէմ
Գրէր նոցին մահահամար:
Յառաջ խաղալ չարեացն յոճիր
Յոր Հայրենիք իմ գլխովին,
Ճիշտ նկարել չբաւէ հէգ գրիչ...
Աշխարհ հիմամբք զմեզ լացին:
Սիրտս և հոգիս անդնդական
Առ տագնապին շնչեն զծուխ,
Յոր կայր երբեմն սուրբ Պատմաբան
Թողեալ մեզ անցըս հոգեբուղխ:
Հրկիզութիւն, ասէ բազում
Բոց հրաբորբոք շնչէր յաշխարհ,
Ի մութ գիշեր զմիջօրէ
Տայր Ոստիկանն ի խոր խաւար:
Անհնարին երկանց տագնապ
Յաւէտ գտաւ յազգիս վերայ,
Ի մէտ կշռոցըն դառնութեան
Քան զքարինըս Նաքովրայ:
Քանզի, ասէ տէգ Տեառն ի մեզ
Տեղան հինիցն ի տեղտարափ,
Ծանրատաղտուկ Հագարացւոյն
Մատն եղաք անձեռնթափ:
Եւ զոր երբեմն տէր ի տանէս
Ոստաքանցեաց զհին դառնարմատ,
Բիւր շառաւիղն յազգիս համայն
Փշահեղձոյց յիղձ յանապատ:
Ի ժանտն իւր հոտ մահապատճառ
Եղ դալկահար ողջոյն դալար,
Տունկս աղածրիս մանկանց տիպար
Զծաղիկս ի մահ շնչասպառ:

Սուգ զմեզ առցեն յայսմհետէ
Ընդ սրածութիւնն սուգ սեաշխար,
Աչք ի լալիս սիրտ դառնութեան
Հեղցեն զառուս աղբերաբար:
Զի յանօրէն գործոց ձերին
Զեռք Տեառն զմեզ թողին անյայց,
Ընդ Մադիամս ի նոր ռազմին
Թափեաց հրեշտակն մեզ բիւր հարուած:
Կամ առ Հեղեաւրն յԱզովտոս
Ուր գերեցաւ Տուն սուրբ ուխտի,
Որն ի փրկանս մարդկան սեռից
Շինեաց տապան զեկեղեցի:
Եւ մեր Ածուին ի գործ խաւար
Ոչ ծագեցաւ արփին ճաճանչ,
Այլ ցողս աչացն իւր հրաբորբոք
Մեզ տիգացոյց խեթիւ ի լանջ:
Արշակունեաց զհետ անկման
Հայաստանեայցս այս էր չարիք,
Ուր ոստիկան և ուր մարզպան
Կալան զՀայս յամս ոչ ձիգ:

Երգ Հինգերորդ

Այլ տես դու, Տէ՛ր ամենակալ,
Զեռն քո ելիք զմեզ անյայց,
Մատն եղաք մեք այլազգւոյն
Ի նախատինքս դրացեաց:
Յայպն և ի ծաղր որոց զմէօք
Խառնակրօն հեթանոսաց,
Շուրջ ամբարիշտ շամբուշ Պարսկին
Եւ խստասիրտ Հագարացեաց:
Անձամբ յանցեաք քեզ ապստամբ
Պատուիրանիդ գտեալ անսաստ.
Քո դատաստան արդար առ մեզ
Կամք առաջի անբարեբաստ:
Մեք ուխտազանց քան զամեն ազգ
Տառապակիր վասն մեղաց,
Քո՛ է առ մեզ քո՛ դատաստան,

Քո իրաւունք չեղեալ ի բաց,
Վի՛շտք, պատուհա՛սք հասին անթիւ,
Մեր են չարիքս այս պատահար,
Լամք հառաչեմք կողկողագին
Մեր զարտասուս բարձ մինչ իսպառ:
Արդ զամենայն արդարադատ,
Զոր արարեր առ մեզս մեր,
Արդա՛ր է քո սուրբ դատաստան,
Դու՛ ստեղծեր, դու՛ մի տանջեր:
Մատնեալ ի ձեռս անօրինին
Իբրև ի բանտ յանուր անել,
Երիցն ի ձայն գոչեմք մանկանց
Ժամ է քո արդ մեզ այցելել:
Ժամ մեզ ոչ գոյ ժամ փրկութեան
Ըմբոստացեալք պատուիրանիդ,
Առ բանալոյ չուժեմք բերան
Յերկիւղն հարեալ սուրբ Ատենիդ:
Վասն Յակոբայ քո ծառայի
Իսահակայ ՝ւ Աբրահամու,
Որոց սրտի սուրբ մաղթանօք
Ողորմութեանդ արժանացո:
Քո բարկութիւն յարեաւ առ մեզ
Մինչ անաստուած պոռնկէաք,
Տրտունջ զքէն յազգ մեր համայն
Իբր Իսրայէլ չաստուածահակ:
ԶԱստուածահրաշ քոց երախտեաց
Ժխտեալ իսպառ սքանչելիս,
Թողաք զօրէնս քո հոգեշունչ
Վէմք ապառումք ի լսելիս:
Մեղացն զծով դու զմեր հերձեալ
Անցաք հրաշիւք գոգ Մովսիսի,
Յորոգայթից զանձինս փրկեալ
Աներևոյթ Փարաւոնի:
Ամպով շնորհացդ մեզ առաջնորդ
Ի կենցաղոյս այս ճանապարհ
Եւ Սուրբ Հոգիդ ռահահորդ
Յերկնից կայան լուսապայծառ:
Ի ջուր հրաջիցըն վիմաբուղխ

Յոր արբուցեր զքո Իսրայէլ,
Նոյն մեզ ետուր ջուր կենդանի
Շնորհավտակ հոգիս բուժել:
Սակայն ընդ այս ո՛ Հայր գթած,
Զարին խնամօք անզեղջ մեղաք,
Յարդար պատիժ մեր յանցանաց
ԶԲարձրեալդ Աստուած բարկացուցաք:
Վասն այն և քո հուր բարկութեան
Բորբոքեցաւ յազգ մեր համբուն,
Քո մեր հոգւոց պաշտպանութեան
Զընծայեցաք հաւատ ողջոյն:
Զընտիր ընտիրս մերոյ ուխտին
Յուխտիդ ի սուր սատակեցեր,
Յաշխարհօրէն պատերազմին
Զարին զմեզ յոտն հարեր:
Զբարկութեանդ արբաք բաժաք
Ծանեաք զայլ ազգ անտոհմական,
Մեղաք ընդ հարս մեր անօրէն
Որ գունդագունդ ի սուր անկան:
Իբր Եգիպտոս մեր Հայաստան
ԶԱստուածասասաստ կրեաց պատիժ,
Զհարուած ազգաց չորեքծագեան
Ելոյծ ի վրէժ Ազգս ամբարիշտ:
Գետոցն չորք եղեմաբուղխ
Յարիւն բոսոր դարձան վտակք,
Թագաւորացն ի պատուհաս,
Տեառնդ էր պատիժն յորդակայլակ:
Սահմանալից եկն մժեխ
Խառնիճ մարախ զեռունքն անթիւ
Կարկտացան յանձրև հեղեղ
Յազգին ի մեղըս բազմաթիւ:
Դաշտք և այգիք ծառք անտառոց
Ի հուր մեղաց համածաւալ,
Սպառեցան անդոց պտուղք
Մարգագետինքն երաշտահար:
Խստասրտին Փարաւոնի
Յանձանց ի խրատ չառաք տիպար,
Ոչ Մովսիսի ՝ւ Ահարովնի

Լուաք բանիցն Աստուածատառ:
Այր իւր կամաց սանձակոտոր
Յանցեաւ ի մեղս Աստուածընդդէմ,
Առաքելոցդ առ մեզ հրաշից
Լեալ ունկնախից ի սիրտ դժխեմ:

ԵՐԳ ՎԵՑԵՐՈՐԴ

Իսկ երանեալ նոցին կանայք,
Որ կենազրաւ յահեղ մարտին,
Նոյն օրիորդք պարկեշտ աղջկունք
Զփափկութիւն թօթափեցին:
Յանխոնջ վաստակ տուեալ անձինս
Զազատութիւն թողին ի բաց,
Անձին հանգիստ եղեալ ի գրաւ
Գրաւեցին վիշտս վշտաց:
Բիւր ողբս ի սուգ զհետ մեռելոց,
Յոր հաս կենացն ի մեծ մարտին,
Ոմն զորդիս, ոմն զեղբայր,
Այլք զծնողս աւաղէին:
Իսկ որ փեսայք նորապսակք
Ի կուսական առագաստին,
Յորսայս անկան անդ շեշտակի
Յաշխարհամարտ պատերազմին:
Ո՛չ մեծ ազգին, ո՛չ սոսկական
Ո՛չ տէրն և ո՛չ երբէք ծառայն,
Եւ ո՛չ իշխան և կամ աղքատն
Վարուց բերէր զտարբեր կեան:
Այլ կեանք խոշոր գետնախշտի
Էր հասարակ ամենեցուն,
Եւ սիգաւէտ վայր անկողին
Ի բացօթեայս ողջ լեռնասուն:
Զունէր ազատն և պայազատ
Ճաշ և ընթրիս պատրաստական,
Ոչ հանդերձանքն առատաբաշխ
Եւ ոչ սեղան զիւր կոչնական:
Ոչ հրաւիրակք ի հարսանիս
Հարսնաւիրեաց լեալ ընդառաջ,

Ոչ ի հանդերձ ի նուրբ շղարշ
Անդ կանանին բազմահառաչ:
Երամախումբ լացող տղայք
Մատաղատիք մարցն ի գրկին,
Բարձեալ յաչաց զբերկրութիւն
Ընդ մարցն յողբս լացակցէին:
Տիկնայք Հայոց ի գիրկ փափուկ
Մնեալ ի պերճ գահաւորակ,
Բոկոտն ի տուն Աստուածային,
Զայս Եղիշէ... եղերերգակ:
Որ փափկասուն յարև կենաց
Պերճ ի գահոյս կենցաղէին,
Խոտաճարակ յայրս ի լերին,
Իբրև էրէոց սովորէին:
Արևակէզ սուրբ ճգնաւորքն
Ցիրանս գոյն սեաւ խորշոմէին,
Գիշերն ի գլուխ յաղօթս յԱստուած
Մունջ ի բերան սաղմոսէին:
Ամոլակիցք լծակցեցան
Ի խաչաբարձ ասպարիզին,
Զնաւու կենացն յաստեաց ծովուս
Ցանդեաց հանգիստն վերուղղեցին:
Տկարութիւն զկանացի
Քաջագօտի ի բաց եղին,
Զզէն բարձեալ արիութեան
Ի հոգևոր պատերազմին:
Զագահութեան հատեալ արմատ
Ներկ նախանձուն ի սէր լուացին,
Դէմ մոլութեանց փորձանս ի բիւր
Ժուժկալութիւն խարսխեցին:
Զողորմութեան երկնից զդուռն
Բացին յաղօթս ի սուրբ հայցուած,
Համայնախումբ լուան աւետիս
Զերանութեան ձայնին փառաց:
Այրիք՝ հարսունք եղեն Փրկչին
Ճգնեալ զվարս առաքինեաց,
Ցելս յաշխարհէ չարիս յանթիւ
Կամաւ կցորդ չարչարանաց:

Արիւնաքիրտն նահատակաց
Հայրենական երկրիս փրկանք,
Հետս յանաղօտս նոցին վարուց
Նորոգեցին սուրբ զյիշատակ:
Խաչակցեցան չարչարանաց
Յուսով կենացըն անմահի,
Ընդ զօրութիւնս կռուեալ չարին
Յանձուկ կենացս ասպարիզի:
Ի կուսական առագաստէն
Մինչ կենցաղոյս ցելս աստի,
Նուիրեցին զհարսնութիւն
Եկեղեցւոյ սուրբ Փեսայի:
Պսակ հարսնութեան զհոգեկան
Զարդ երկնաւոր առագաստին,
Պսակեցան անդ զանթառամ
Դշխոյք անմահ թագաւորին:
Լցին զդաս անկեալ զօրաց
Զերից դասուց ապստամբին,
Փառաբանիչք ովսաննաձայն
Լուսապսակ յերկնից գահին:

Երգ Եօթնէրորդ

Այս ամենայն յոճ ընդհանուր,
Որ յոճ ի սուղ վիպագրեցան,
Դարձեալ յանհատ բանս երկրորդել
Եկից Անցիցն ի Հայաստան:
Որ Յազկերտէ ցԴենչապուհ
Քան զոր յաւէտ զօրացն իւր պետ
Մահուն հրաման ի Ղևոնդեանս
Վերնակրօնից վճիռ դառն ետ:
Որ Գաղիշոյ Խոռխոռունի
Պարսից սահեալ դէն յատրուշան,
Սուր երկսայրի զլեզուն քսու
Սրեալ զՀայոց զերթ ամբաստան:
Եւ որ Գարջոյլ և Գդիհոն
Յուրացելոց խմբեալ պառակ,
Յանհաւատից թուեալ ի դաս

Հայոց յ գունդս յոյզ երկպառակ:
Որ և Վաղթանգ երդմնազանց,
Ոյր գործք են գործք պագչոտ պետին,
Յիւր մանգն ի խաբ յանապատի
Զզօրս Հայոց յածէր հեշտին:
Որ հուսկ ի ռազմըն պարսկական
Առ թշնամիսն անց դաշնաւոր,
Զմարզպան Սահակ և զՎասակ
Էած մատոյց սուրն յահաւոր:
Որ ընդ Վահան գայր ի վսեր
Հազարաւ ուխտն էր այն Զարմիհր,
Բիւր մեքենայս հաղբեալ նմին
Պայքար ի վէգ լեալ մարտադիր:
Որ յետ սոցուն Շապուհ Միհրան
Առ աշխարհիս մարզպանութիւն,
Զհետ Վահանայ մտեալ քաջին
Վարագուրել զխաղաղութիւն:
-Իսկ որ Բուրղան Պարսիկ մարզպան
Զդառնավիշտս թափեալ յազգին,
Յիշխանութեան սորին և Հոնք
Ի հայրենիս մեր վազեցին:
Այլ որ յունաց Հայք են բաժնին
Յաւուրս ի սոյն կրեցին զաղէտ,
Այր ընկերի անխղճասիրտ
Դաւաճանող կենացն ի խէթ:
Յետոյ իշխողք ի Հայաստան
Մի քան զմի ի գործ չարեաց:
Վշնաս, Վահրամ, Սուրէն, Վղոն
Զինեալ համակ ի մահ բազմաց:
Սահառնունին երբ ի յունաց
Աղգին զգօն լեալ կառավար,
Աշխարհաւեր անդ տոհմականք
Հեղուն միմեանց զարիւն արդար:
Ապա անդէն Հագարացին
Ի Հայաստան լեալ միջամուխ,
Եհար զզօրսն և զՎահան
Զանմիաբան ազգին գլուխ:
Զաշխարհն յաթուր ոտից կոխան

Լուացին արեամբ և զԱյրարատ,
Յայնժամ որ մերքն՝ բանս եդին
Ստրկանալ անբռնադատ:
Հազարք Հայոց հնարիցն ի գիւտ
Որք պատանդեալ ի դաշն ուխտին,
Անդ յիջանել յունացն ի գուճս
Կեանս ետուն՝ զմահ առին:
Այսպէս յունաց մերթ անճնատուր
Մերթ մահասփիւռ Հագարացւոյն,
Լքաւ անզօր ողջն Հայաստան
Ի մարտս ազգացն զօրօք անհուն:
Հուսկ զօրացաւ անզգաստիցն
Ձեռն յաղթութեան անօրինին,
Կալաւ զերկիրս յիւրն ոստիկան
Անդ Աբդլլահ եկն առաջին:
Սա նենգումանդ վարեալ խորհուրդ
Շղթայակապ կալաւ զորեար,
Յիւր պետութեան ի գահանիստ
Հասոյց կապեալսն ծառայաբար:
Յետոյ Մահմատ զփոխադարձ
Թափեաց վնաս զբիւրազգի,
Այլ որ Կաշմայն ի սիրտ դժխեմ
Անց զբազմօք գործ աղտեղի:
Զի երբ ի գլուխ խաղաց ազգին
Զանյիշելին նիւթեաց չարիս,
Զաւագորեար զազատն և պետ
Մատնեաց ի հուր յեկեղեցիս:
Նմա յաջորդ ոստիկանեաց
Վիլթ վատշուեր և հուսկ Մրուան,
Որ առ Աշոտ եթող յազգին:
Կառավարել բարեացն յօճան:
Այլ չև ի խնամսն յարատևեալ
Շնորհացն ի ձիր անօրինին,
Տեղակալեաց անդէն Եզիտ,
Հարկապահանջ Հագարացին:
Անդ նախաթոռ Դաւիթ Գրիգոր
Վատախորհուրդ Հայոց իշխան,
ՅԱշոտ պատրիկ գործ անողորմ,

Գործ նիւթեցին դժոխական :
Նեղեալք ի վիշտս բարբարոսաց
Ջեռաց ի ձեռս էր Հայաստան,
Հէնք աւազակք աւարառուք
Հասին անթիւ մինչ ցՀասան:
Որ քան զամեն մոլեալ յարիւն
Իբրու գազան ի գէշ տապաստ,
Ի քառածագս սփռեալ հրոսակ,
Ողջոյն ապատս եդ յանապատ:
Աստ Հայաստան զփոխադարձ
Ի թշնամիս տեղայր զսուր,
Յեց յոյժ բազկաց քաջացն յորդիս
Յակաստանիս լերանցն ամուր:
Այլ երբ արփին շրջանս ի վեց
Ծիր բոլորէր յիւր կեդրոնի,
Եզիտն երկրորդ գայր ոստիկան
Քառապատկեալ զսակն հարկի:
Ծանրատաղտուկ ձեռն յանօրէն
Նեղէր զազգն յիւր բան հրամանի,
Զիւր երկարել իշխանութիւն
Ողջ պատանդեաց զքաջս ազգի:
Այլ մինչ երկրիս յաջորդաբար
Խուզիմն և Հոլ կալան զՀոգ,
Յամեն կուսէ կալաւ և զմեզ
Ատելութիւն հրաբորբոք:
Այլ յետ նոցին աշխարհաւեր
Եկն Բուղայ դժոխածին,
Այս առաջին է յիւր չարիս
Փսխող զմահ յամենեսին:
Որ իւր չարիք են մշտայուշ
Ի հայրենիս գրեալ անջինջ,
Անարժան մինչ յողբոց նուագ
Եղերերգել՝ լռէ հէգ գրիչ:

ՀԱՅ ԱԶԳՆ Ի ՀԱՒԱՏՍ ԵՒ Ի ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ[1]

Աշխարհքիս երեսին ինչպէս ամէն ազգ, նոյնպէս և մեր ազգը ունեցել է ազգային յատկութիւններ, ունէր և ազգային պակասութիւն, ազգային յատկութիւնով իւր քրիստոնէական հաւատքին մէջ ամէն ազգերէն յառաջ և ազգային գրականութեամբ եկեղեցական դպրութեան մէջ յառաջադիմութիւն գործեց, ու իր քրիստոնէական եկեղեցիքը անխախտելի պահելով ի դրանց դժոխոց՝ իր ազգութիւնն էլ հաստատուն պահեց, մէկի մէջ՝ իրեն յատկացեալ աստուածպաշտութեամբ, միւսի մէջ՝ իր ուսումնասիրութեամբը, մէկովը իր առ Աստուած պարտքը կատարեց, միւսովը՝ առ իւր ազգութիւնը ունեցած պարտքը:

Ո՜հ, այն ինչ ժամանակ էր երջանկութիւն հայ ազգին, մինչդեռ աշխարհք ամենայն կռապաշտութեան ալեաց մէջը կը ծփար, մինչդեռ աշխարհքին ազգերը կռապաշտութեան մէջ կխորգային, հայոց ազգը միայն իւր ազգային յատկութեամբը՝ աստուածպաշտութեամբ, քրիստոնէութեան լոյսը աշխարհք ծագած ժամանակին ամենէն յառաջ գրկեց Քրիստոսի Սուրբ Աւետարանը իւր նախավկայ Աբգար անդրանիկ թագաւորի ձեռքով:

Այն ի՞նչ ժամանակ էր դարձեալ հայ ազգին, երբ երկրորդ անգամ կռապաշտութիւնը, իւր բռնաւոր բազուկը Հայաստանի մթնոլորտի վրայ բարձրացնելով, նորատունկ քրիստոնէութիւնը գիւղերէն, քաղաքներէն խլելով, լեռները և ձորերը սփռեց: Երկրորդ անգամ ևս հայ ազգը իւր հայկական յատկութեամբ փութացաւ, դարձաւ իւր նախընկալ քրիստոնէութեան գիրկը, իւր հաւատոյ երկրորդ լուսաւորչի առաջնորդութեամբ բռնութիւնը բռնութեամբ վարեց, որով և Հայաստանի քառածագ ոլորտքը իմանալի արեգական լուսովը փայլեցաւ, կռապաշտութեան խաւարը անդարձ փարատեցաւ մարդկային սրտի խորշերէն անգամ, ուր որ քրիստոնէական հաւատքը տարրանալով իր փրկարար լոյսն էր ճառագայթել:

Թէ որ հայոց ազգի ուսումնասիրութեան ոգւոյն վրայ էլ աչք դարձնենք, որ նոյնպէս սեպհական յատկութիւն է նորան, գերազանց քան զառաջինն կտեսնենք, նոյն մատաղ մանկունքը, Սրբոցն Սահակայ և Մեսրովբայ հայկական դպրոցէն ուսման ճա-

1 ԱՐԱՐԱՏ, 1873, էջ 179-182

չակը առած, մեր եկեղեցական դպրութեան, մեր ազգային գրականութեան կարօտութիւնը զգացին, երբ որ դեռ յունաց և ասորւոց լեզուով հայկական աստուածպաշտութիւնը կը կատարուէր, Հայաստանեայց Եկեղեցւոյ պաշտամունքը յոյն և ասորի լեզուաց կապաստանէր, այն ժամանակ Հայոց արևելեան եկեղեցւոյ զաւակները արևմուտք վազեցին, էլ սար ու ձոր չկար, որ նոցա ճանապարհը փակէր, ծով ու ցամաք չափեցին, Մեսրովբեան նշանագրով Աստուածաշունչը և եկեղեցական գրեանք թարգմանած բերին, եկեղեցական դպրութիւնը ծաղկեցրին, մուրացածոյ լեզուները եկեղեցւոյ դռներէն դուրս հանեցին, ազգային գրականութեան, ազգի կրօնական զարգացմանը նոր լուսաւորիչք հանդիսացան, դպրոցք և դիւանք ազգային լեզուով գրաւոր ճոխութիւնն արդիւնաւորեցին:

Բայց տեսնենք՝ ո՞յք և ո՞յք էին Հայոց ազգի այս կրօնական լուսաւորութեան և գրաւոր զարգացման, ազգի դարաւոր յառաջադիմութեան շարժառիթք: Սրբոյն Թադէոսի քարոզութեամբը Հայաստան դարձաւ ի քրիստոնէութիւն, բայց անդրանիկ թագաւորի ոյժը և կարողութիւնն էր, որ, միանալով առաքելոյ եռանդեան հետ, ազգային կրօնական դարձը կատարուեց, մեծին Տրդատայ ձեռնտուութիւնն էր, որ Սուրբ Լուսաւորչու քարոզութեան հետ միատեղ բոլոր Հայաստանի դարձին գործակից եղաւ, հոգևորականը ազգի լուսաւորութեան և զարգացման գործիքն է եղել միշտ, գործավարը՝ ազգի յառաջաւորք, որոնք, նոցա ջանից միշտ զուգընթաց լինելով, ազգը կերպարանափոխ արին ի կռապաշտութենէ ի քրիստոնէութիւն, ի տգիտութենէ ի գիտութիւն և ի խաւարէ ի լոյս, թարգմանիչք գործեցին, թագաւորը ուժով և կարողութեամբ գործակից եղաւ եկեղեցական դպրութեանը՝ ազգային գրականութիւնը միատեղ մշակելու ... Սուրբգրոց լեզուով Պօղոսը սերմանեց, Ապօղոսը ջուր տուաւ, Աստուած էլ, այս մտաւորական անդաստանի բեղմնաւորութիւնը տեսնելով, աճեցոյց:

Այսպէս ահա քրիստոնէական հաւատոյ աստուածպաշտութեամբ զարգացած ազգը, ազգային գրականութեամբ ծաղկած ու յառաջացած ազգը, միանգամայն և ազգային յատկութիւններով աշխարհքին նախանձելի եղած հայ ազգը իւր հայրենեաց մէջ, իւր ազգութեան կեդրոնին մէջ թագաւորական Աթոռով, հոգևորական իշխանութեան գաւազանաւ մէկ տեղ զօրացած, տեսնենք դարձեալ, թէ ինչպէս ազգային պակասութեամբ (դու ասա անմիաբանութեամբ) իր թագաւորութիւնը ձգեց, հոգևոր իշխանութիւ-

նը բաժին-բաժին արաւ: Հայրենեաց մէջ ամբողջացած հայ ազգը, իր ազգութեան օրէն ճղակոտոր եղած աշխարհքէ աշխարհք, երկրէ երկիր ձգեց, տգիտութիւնն էլ՝ հալածական հին թշնամին, մէկ կողմէն զէնքը ձեռին վրայ հասաւ, անմիաբանութիւնը, որ ազգի և հայրենեաց վրայ էր տիրել, տգիտութիւնն էլ ամէն անհատի սրտի և հոգւոյ մէջ թագաւորեց, և Հայաստանը այս երկու ազգային պակասութեամբ ամայի դարձաւ:

Բայց հայկական բնաւորութեան մէջ ազգային յատկութիւնները անչիջանելի էր մինչ իսպառ, Նէեմեան հրոյ պէս ազգային սիրոյ ջրհորին մէջ վառ կմնար, հաւատոյ թշնամեաց հալածանքներէն քրիստոնէական աստուածպաշտութեամբ աւելի զօրացան հայ ազգի հատուածները, օտար ազգերի հաղորդակցութեամբ իրանց ուսումնասիրութեան եռանդովը բորբոքուեցան և օտար աշխարհք հայրենիք դարձրին, ազգաց լուսաւորութիւնը իրանց օրինակ առան և օրինակովը իրենց ազգային յատկութեան մէջ վերստին փայլեցան աստուածպաշտութեամբ, որ ճշմարիտ քրիստոնեայ ճանաչուել էին, ուսումնասիրութեամբ էլ ճշմարիտ հայ ազգ երևեցան, գիտութեան սիրոյ լոյսը, որ իրենց ազգութեան հետ արևելքէն տարել էին, հիմա արևմուտքէն կծագեն հայրենեաց երկրագնդին վրայ, և Հայաստանի մնացորդ ազգայնոց սիրտը և հոգին դէպ իրենց կքաշեն: Հայ ազգը ամէն աշխարհքէ բարոյական միութեամբ կմիանայ հիմա իրարու հետ, աշխարհքի հեռաւորութիւնը ուսման սիրով և ազգային յառաջադիմութեան եռանդով միացած ազգը չի կարող իրարից բաժանել, գիտութեամբ և յառաջադիմութեամբ ծաղկելու օրինակը ուրիշից առին, հիմա իրարու օրինակ կտան:

Մինչև ցայսօր հայոց գաղթականները, ամէն տեղ ազգային պակասութեանց վնասները լաւ ճանաչելով, հիմա ազգային յատկութեամբ կմիանան և ազգային դպրոցներ ամէն տեղ կծաղկացնեն ի պարծանս հայ ազգին, ազգի կարողութիւնը հոգևոր իշխանութեան ջանից և վաստակոց հետ միանալով՝ ընդհանրապէս ի տգիտութենէ ի գիտութիւն ազգի դարձը կը կազմեն:

Գիտութեան ճանապարհը մտնելու, յառաջադիմութեան ասպարէզը ազգի ընդհանրութեան հետ միատեղ չափելու՝ ազգի ընդհանուրէն օրինակ պէտք է առնուլ: Ամէն ազգ իր լուսաւորութեան հնարքը իր մէջ պիտի որոնի:

ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ[1]

Ի յառաջաբանութիւն Պատմութեան ժողովոց Հայաստանեայց Եկեղեցւոյս մերոյ և Եկեղեցական կանոնաց՝ կարգեմք ընդարձակ տեղեկութիւնս յաղագս Ժամակարգութեանց եկեղեցականն պաշտամանց, թէ յորո՞ց և յորու՞մ ժամանակի և ինչպիսի՞ կարգաւորութիւնք աւանդեցան, որովք արդ լրացեալ, անթերի կատարի ժամերգութիւն աստուածպաշտութեանս մերոյ:

Ո՛չ ուրեք ի գիրս մերոցն գտանեմք եկեղեցական կարգաւորութեանց պատմութիւնս, ո՛չ պատմագրաց ազգիս և ի Հարց Եկեղեցւոյ մերոյ, յայտնի նմանակեալս ի նոցունց, և յորու՞մ ժամանակի աւանդեալս, եթէ յորո՞ց ի սրբոց Հարց, ո՞ր կարգ պաշտամանց և ժամանակագրութեանց կանոնաւորեցան յԵկեղեցւոջ Հայաստանեայց, և թէ որպիսի՞ կարգաւորութեամբ պաշտէր ժամերգութիւն յառաջնոց դարուց քրիստոնէութեանս մերոյ յառաքելոց անտի նախալուսաւորչացն մերոց՝ սրբոցն Թադդէոսի և Բարդուղիմէոսի, յորոց ընկալաւ Հայաստանեայցս Եկեղեցի զքրիստոնէական հաւատս մինչև ցՍուրբն Գրիգորիոս Լուսաւորիչն մեր և անտի սուրբ թարգմանիչս մեր՝ կարգաւորիչս եկեղեցական կարգաց և պաշտամանց ժամերգութեան ցհինգերորդ դար քրիստոնէութեան:

Եկեղեցական պաշտամունք այսոցիկ ժամանակաց անյայտ են պատմաբանից և եկեղեցական Հարց մերոց, այն զի և չունիմք իսկ ազգային մատենագիրս ժամանակակիցս այսոցիկ նախնի դարուց քրիստոնէութեանս մերոյ, այլ միայն յիշատակ շինութեան տաճարաց ինչ յառաքելոց անտի ի Հայաստան[2], ձեռնադրութիւն յաջորդաց նոցին յեպիսկոպոսութիւն, և կանոնաց ինչ ի Թադդէոսէ՝ որպէս յեկեղեցական կանոնագիրս մեր, առանց յայտնի նշանակութեանց եկեղեցական կարգաց ժամերգութեանց, որովք յայտ է, թէ քրիստոնէական Աստուածպաշտութիւնք ազգիս կատարէին առ Աստուած:

---

1 «ԱՐԱՐԱՏ», 1872, էջ 381-387

2 Խորենացին յերկրորդ Գիրս իւր, գլ. 30, վկայէ շինել Թադդէոսի առաքելոյ յեդեսիա զեկեղեցի, որ ապա նուիրեցաւ յանուն սուրբ Աստուածածնի: Յաղագս Բարդուղիմեայ նոյնպէս Խորենացին ի թուղթն իւր առ Սահակ Արծրունի շինել նորա յաշխարհին Անձևացեաց, ի տեղին Դարբանաց Քար զեկեղեցի յանուն սուրբ Աստուածածնի, ուր և եդ զպատկեր նորա ի վերայ կիպարիս փայտի, ձևացուցեալն յԱւետարանչէն Յովհաննէ: Որպէս և յաղագս ձեռնադրութեան Ադդէի և Զաքարիայ ի Թադդէոսէ:

Բայց այս յայտնի ցուցանի ի գործոց թարգմանչացն, զի Սուրբն Մեսրովբ, որ քարոզէր ի Գողթն (Սիւնիս), ընթեռնոյր հաւատացելոց զԱստուածաշունչ գիրս (և մեկնէր) յոյն և ասորի լեզուաւ, և ոչ սակաւ աշխատութիւն կրէր ի մեկնել նոցա յաղագս չլինելոյ տակաւին հայկական գրոց, որով հաւաստել մարթ է, եթէ այս կարգ էր յառաքելոց ժամանակսն և ցՍուրբն Գրիգոր և մինչ ի թարգմանիչսն մեր եկեղեցական պաշտամանց ի Հայաստան:

Եթէ որպիսի՞ կարգաւորութիւն գոյր եկեղեցական պաշտամանց և յաւուրս Սրբոյն Գրիգորի, ոչ գրեն նոյնպէս ժամանակակից մատենագիրք մեր, բայց ի կառավարութիւն վիճակի հովուապետութեան իւրոյ երևի գրեալ նմին Գրիգորի կանոն վասն զգուշութեան վիճակի իւրոյ, զի ըստ Խորենացւոյն բանի, որ յետ Ագաթանգեղեայ պատմաբանէ ազգիս, գրէ ի գիրս Բ. գլ. Ղ. Արիստակեայ ընդ դառնալն ի ժողովոյն Նիկիոյ, յոր գնացեալն էր հրամանաւ Տրդատայ և Սրբոյն Գրիգորի, և ընդ բերել նմա կանոնս քսան ի ժողովոյն Նիկիոյ, «Սուղ ինչ գլուխս յինքենէ ի կանոնս ժողովոյն յաւելու, ասէ նա, վասն առաւել զգուշութեան իւրոյ վիճակի»:

Վրթանէս՝ որդի Սրբոյն Գրիգորի, երկրորդ Եպիսկոպոսապետ Հայոց զկնի հօրն, յամի 339-340, կարգաւորեաց յԵկեղեցիս Հայաստանեայց զպաշտամունս սրբոյ Պատարագին և զաւազանին խորհրդոյ մկրտութեան ըստ եկեղեցւոյն Երուսաղէմի, զորոյ զկարգս խնդրեաց ի Մակարիոս եպիսկոպոսէ քաղաքին սրբոյ՝ ութն գլխովք կանոնաց, կոչեցեալ Օրհնութիւնաբեր Ցուցակ՝ հանդերձ կանոնական թղթովք՝ հաւանութեամբ ժողովոյ եպիսկոպոսաց նորին[1] *:*

Յաւուրց Սրբոյ Լուսաւորչին եղեալքն պաշտամունք Հայաստանեայց Եկեղեցւոյ լինէին յոյն ասորի լեզուաւ, այն է՝ ընթերցուածք Աստուածաշունչ գրոց, որպէս ի վեր անդր ասացաք, որ ոչ միայն ի Մակարեան կանոնագրոցն է յայտնի, որ ի յունէ թարգմանեցաւ ընդ ձեռն Սրբոյն Սահակայ, այլ և յառաջ, քան զայս ևս Սուրբն Մեսրովբ յուսուցանելն իւր զԱստուածաշունչ գիրս ի Գողթան գաւառի՝ ընթեռնոյր ժողովրդոց նովին լեզուօք, և Ղազար իսկ պատմաբանն Փարպեցի վկայէ, թէ «նաև պաշտօնք եկեղեցւոյ և կարդացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանօրայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոցս, յորմէ ոչ ինչ էին կարող

1 Օրհնութիւնաբեր ցուցակն, ասացեալ Մակարիոս եպիսկոպոսի, դնի ի կանոնագիրս Յովհաննու Իմաստասիրին՝ մերոյ Հայրապետի, իսկ համառօտութիւն նորա, ի Պատմութեան Հայոց Մ. Չամչեան, Ա. հտր., եր. 422-423:

լսել և օգտիլ ժողովուրդքն այսպիսի մեծի աշխարհի յանլրութենէ լեզուին Ասորւոց, և յարքունիսն ևս չէր փոքր աշխատութիւն, զի նաև անդր օտար գրով վարէին, մանաւանդ Պարսկականաւ»:

Ժամերգութիւնք եկեղեցական պաշտամանց հիմնաւորապէս ի կարգի եդաւ ի Սրբոյն Սահակայ Պարթևէ, յորժամ նա, ըստ Կորեանն վկայելոյ (յամի 426), զեկեղեցական գիրս թարգմանեաց ի յունաց ընդ Սրբոյն Մեսրովբայ, յորում ժամանակի վասն ժամերգութեան որոշելով ասել զՍաղմոսն Դաւթի, յամենայն աւուր բաժանեաց ութն կանոնս, յորս յաւել և զտասն օրհնութիւնս ի մարգարէից, և զչորեսին քարոզս հանդերձ աղօթիւք՝ ի գիշերային ժամու (ըստ Իմաստասիրին Յովհաննու), զփոխս Հարցին յառաւօտեան ժամու և զՄեծացուսցէն ասել յաւուրս կիւրակէից, յարմարեաց և տօնս Տէրունական աւուրց և տօնս սրբոց ինչ հանդերձ նոցին ընթերցուածովք և պաշտամամբք:

Սոցա երկոցունց, կարգեալ և զութն եղանակաւոր ձայնս և զերկուց ստեղիս, արարին և զհոգելից շարական[1], Սուրբն Սահակ զՀարցսն Աւագ Շաբաթուն և Ղազարու, Սուրբն Մեսրովբ զԱղուհացիցն:

Առաջին պաշտամունք ժամերգութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ, ըստ այսմ կարգի, մուծաւ յեկեղեցիս մեր հայկական գրով ընդ ձեռն նախաթարգմանչացն մերոց, ուստի նախ քան զնոսա, զի չէին պաշտօնք եկեղեցւոյս մերոյ և կարդացմունք գրոց ի Լուսաւորչէն հետէ զամս իբր ութսուն և ութն՝ ըստ վկայութեան Ղազարու, երևի Սաղմոսն լինել Դաւթի և պաշտամունք Պատարագի յաւուրց սրբոյ Հայրապետին Վրթանիսի՝ յոյն և ասորի լեզուաւ:

Ապա և Սուրբն Սահակ և Մեսրովբ յետ ըստ այսմ ի կարգի դնելոյ զժամակարգութիւն Եկեղեցւոյ Հայաստանեայց, եղեն նոքա առաջին հեղինակք և հնգեցունց եկեղեցական գրեանց մերոց՝ Ժամագրքին, Տօնացուցին, Պատարագամատուցին, Մաշտոցին և Շարակնոցին, յորս եթէ ոյք ոմանք յաշակերտաց նոցին և ի յետագայ Հայրապետաց ազգիս զի՞նչ ինչ յաւելին և զո՞րս յայլոց թարգմանեցին, կարգագրեսցուք ի հետագայդ:

Ի լրումն Մաշտոց գրոցն, որով եկեղեցական խորհուրդքն կատարին, երանաշնորհ թարգմանիչքն մեր բերին՝ ըստ ձեռագիր պատմութեանց, որպէս դնի և ի Մայր Մաշտոցին, զԿանոն Սերմ-

1 Հեղինակք Շարականաց եկեղեցական երգոց, ըստ իւրաքանչիւր դարուց նոցին ժամանակաց, գոլով ի սկիզբն տպագրեալ Շարականաց մի առ մի նշանակեալ, մեք զանց առնեմք կրկնել զանուանս նոցին աստէն: Բայց եթէ ի պատմութիւնս ժողովոցն դէպ լինիցին, ունիմք յիշատակել զհեղինակսն և եթ:

նօրհնէքի, Կալի և Հնձանի, զարարեալն Գրիգորի Աստուածաբանին՝ եբեր ի Հայս ի Նազիանզոյ Մովսէս թարգմանիչ՝ գրիչ Սրբոյն Սահակայ, ի ԻԱ. ամի կաթուղիկոսութեան նորա և յերրորդ ամի թարգմանութեան Սրբոյն Մեսրովբայ: Զ Կանոն Զուր Օրհնելոյն, զասացեալն Բարզի, եբեր յԵրուսաղեմայ Խոսրով թարգմանիչ: Զ Կանոն ապաշխարող, կարգելոյ և արձակելոյ յԱւագ Հինգշաբթի աւուր, Կիւրղի Երուսաղեմացւոյ արարեալ ի դուռն Սրբոյն Սիովնի, բերին Կորիւն և Ընձակ թարգմանիչք: Զ Կանոն կուսան օրհնելոյ՝ Սրբոյն Կիպրիանոսի Կարգեդոնացւոյ: Զ Ագապից Հոգեհանգստի և զ Քահանայաթաղին՝ զարարեալ Եփրեմի Ասորւոյն ի Նիկոմիդէս քաղաքի, եբեր Ղազրիկ թարգմանիչ յերեքտասաներորդ ամի թարգմանութեան Սրբոյն Սահակայ: Զ Տեառնական (զմատաղ օրհնել) և զ Աղ օրհնելն արարեալ է Յուստոս եպիսկոպոսի, որ չորրորդ է առաքելոցն: Զ Սքեմարարէքն (կրօնաւորական հանդերձ) արար Թէոդորոս եպիսկոպոս Պամփիլեայ քաղաքի՝ հրամանաւ Սրբոյն Անտոնի՝ հօրն Թէբայեցւոց:

Սուրբ Լուսաւորիչն մեր Գրիգոր, որպէս դնի և ի Մայր Մաշտոցին ըստ ձեռագրաց, արարեալ է զ Կանոնս գրակարդացաց, կիսասարկաւագաց և նկարեալ եկեղեցւոյ, դուռն դնել եկեղեցւոյ և գնչխարս սրբոց ի հանգիստ փոխել: Ընդ այսոցիկ և Սուրբն Սահակ արար զ Քահանայօրհնէսն ի քսան և մի ամի արքեպիսկոպոսութեան իւրոյ, և ի Քահանայաթաղն ևս յաւել զեօթն Աւետարանս, արար և զաշխարհաթաղն ի Քաղաքուդաշտի (ի Վաղարշապատ) ի վկայարանս Սրբոյն Հռիփսիմեայ, զի ի Սրբոյն Գրիգորէ մինչև ցսա ինքն՝ Սահակ, հնովն վարէին, ասի, այս ինքն արարելովն Եփրեմի Ասորւոյ՝ ցհարիւր տասն և մէկ ամ:

Ըստ այսմ և այսչափ ի կարգի եղեալ Սրբոցն Սահակայ և Մեսրովբայ զգիրս Եկեղեցական օրհնութեանց՝ յանուն սրբոյն կոչեցին զայն Մաշտոց, յոր կոչէր Սուրբն Մեսրովբ:

Յետ թարգմանչացն այսպէս ի կարգի դնելոյ զեկեղեցական պաշտամունս մեր, Գիւտ կաթուղիկոս՝ յետ Մովսէսի առաջնոյ կալեալ զԱթոռն Հայրապետութեան, յաշակերտութենէ Սրբոցն Սահակայ և Մեսրովբայ ի հասակի եօթանասուն ամաց, ըստ վկայելոյ նորին ժամանակակցի՝ Ղազարու Փարպեցւոյ, եմոյծ բազում կարգաւորութիւնս ի ժամերգութիւնս և յեկեղեցական պաշտամունս մեր, ըստ որոյ և ի գլուխ Ատենի Ժամագրոց մերոց դնի յետ Սրբոցն Սահակայ և Մեսրովբայ, կարգաւորեալ զայն և Գիւտայ և Մանդակունւոյն Յովհաննու, այլ թէ, որ աղօթք իցեն նորա կամ մաղթանք և կամ քարոզք, չիք յանուանէ յիշատակեալ:

Իսկ Սուրբն Յովհան Մանդակունի, որ ի կաթուղիկոսութեան իւրում յաւել յինքենէ ի ժամագիրս կարգաւորեալս ի Սրբոյն Սահակայ, զորմէ ունիմք գրել ի ներքոյ, յաւել ի Մաշտոց գիրսն, ըստ վկայութեան Յովհաննու Իմաստասիրի, զՀիմնարկէք եկեղեցւոյ, զԵկեղեցի օրհնէք, զսրբել տաճարի, Սկհոյ և մաղզմայի և հանդերձի, սպասու, աւազան և մկրտութիւն առնել, Խաչ օրհնել և պսակ դնել, զորոց ամենեցուն քարոզս և աղօթանին արար Մանդակունի Սուրբն Յովհան:

Սա, ըստ վկայելոյ Իմաստասիրի, ի գիշերային պաշտամունս ժամերգութեան յառաջագոյն, կարգաւորեալս ի Սրբոյն Սահակայ, որոյ սկիզբն լինէր Տէր ողորմեա՝, *ասացեալ չորիւք գլխովք Սաղմոսաց՝ երրորդաւն, ութսներորդ երրորդաւն, հարիւրերորդ երկրորդաւն և հարիւր քառասներորդ երկրորդաւն, զհետ սոցա կարգեաց սա զսոցին քարոզն Զարթուցեալքս ամենեքեան, և զաղօթս Զքէն գոհանամք և զնորին հանգիստն, Նայեաց Տէր բարերարն:*

Առաւօտեան ժամերգութիւնն, որպէս տեսանի ի վերն, ի սրբոց թարգմանչացն էր կարգաւորեալ, ուր զկնի Հարցին, Ողորմեային և Տէր երկնիցին՝ երգէին «զՓառք ի բարձունս[1]» և ապա զկցորդ Սաղմոսն՝ ըստ իւրաքանչիւր աւուր, որպէս որոշեալն է, սակս որոց և եդ կանոն Սուրբն Սահակ, զի կարգեալ Սաղմոսերգութիւնքն անխափան կատարեսցին յեկեղեցւոջ, Կանոն Դ. Ս. Սահակայ:

Մեծացուսցէ յաւուրս կիւրակէից միայն կանոնեալ էր ասել Սրբոյն Սահակայ զկնի Հարցին, բայց նախ քան զԻմաստասէրն երևի հասարակեալ այս կանոն:

Իսկ զՍուրբ Աստուածն ասել յառաւօտու և յերեկոյեան պաշտամունս ժամերգութեանց՝ գտանեմք առ սովաւ յիշատակեալ, զոր զկնի ամենայն պաշտամանց երգէին ի դէմս Որդւոյ հանդերձ խաչեցարիւ, զի յիննևատասներորդ գլուխ կանոնաց իւրոց ասէ Իմաստասէր հայրապետս. «Յերեկոյինս և յառաւօտինս զկնի ամենայն պաշտամանց արժան է նուագել զՍուրբ Աստուածն», յորմէ զերկու ինչ իմանամք, մի՝ զի առ սորին ժամանակօք գոյր հակառակութիւն յամենայն օր երգել «զՍուրբ Աստուածն», և երկրորդ՝ մինչև ցաւուրս սորա առաւօտեան և յերեկոյեան ժամերգութիւնք մինչև «ցՍուրբն Աստուածն» միայն էին, զի զկնի ամենայն պաշտամանց, ասէ, արժան է նուագել «զՍուրբ Աստուածն»:

Յետ «Սուրբ Աստուածին» յառաւօտեան ժամերգութեանն, ապա զԱրևագալին Սաղմոսն «Եղիցի անուն Տեառն» ասէին ըստ

1 «Փառք ի բարձունս» ասացեալ երգ ընկալեալ եղև ի Ժող. Եփեսոսի, Ը. Գլ. Պատմ. Ժողովոցս:

դասուց վերաձայնութեան, զոր կարգեալ է, ասէ Իմաստասէրն՝ Տեառն Եզրի Հայոց Կաթուղիկոսի, և ի ժամանակաց նորա սկսեալ են ըստ նորին վկայութեան ի կանոնն ԻԴ:

Իսկ ի պաշտաման երեկոյեան ժամերգութեանն՝ Խոնարհեցո՛ ասել նախ քան զԱպրեցոն, յաւելեալ է ըստ նորին գրելոյ ի կանոնն ԻԳ Ներսիսի՝ Հայոց Կաթուղիկոսի, չէ յայտ, եթէ որ Ներսէս իցէ, երկրորդն կոչեցեալ Աշտարակցի, եթէ Շինողն, ուր ըստ դասուց վերաձայնութեամբն ասել՝ իմանի, եթէ այնոքիկ Սաղմոսք, որպէս և Գիշերապաշտաման և առաւօտինն դաս առ դաս նուագէին ձայնիւ, որպէս արդ զՍաղմոսն յաւագ շաբաթու և յաւուրս Յինանց, բայց և ի ԻԱ-րդ կանոնէ նորին Յովհաննու յայտ է, թէ «Տէր զի բազում» կոչեցեալ չորեքին Սաղմոսք ասէին՝ միաբանութեամբ ի թիւ խոնարհ ձայնիւ:

Այսոքիկ ժամակարգութիւնք պաշտամանց Եկեղեցւոյս մերոյ՝ մինչև ցՅովհան Իմաստասէր, և այսքան՝ մինչ ցութերորդ դար քրիստոնէութեան, իսկ անտի մինչև ցՇնորհալին մեր Ներսէս ցդարն երկոտասաներորդ՝ ոչ ինչ աղօթք կամ մաղթանք և քարոզք յանուանէ գտանին հեղինակեալք ի ժամերգութիւնս մեր, բաց յերգոց շարականաց, զորմէ ստորև, իսկ Թագաւորքն կամ Ալէլուք՝ կարգաւորեալք ի ժամերգութեան առանց անուան հեղինակի, այնոքիկ, որպէս հաւաստի երևի, ի նախնի դարուց անտի հեղինակեալք են, և Սաղմոսքն ալէլուք, սահմանեալք յեկեղեցւոջ ի թարգմանչացն կամ ի նոցին յետագայից, որպէս և Փառք ի բարձունս, և Աւետարանք ի գիշերային ժամուս յաւուրս պատարագի և որք այլք ևս:

Իսկ զշարականս, երգել ի ժամերգութեան ի տօնս սրբոց և ի Տէրունականս, արարեալ ի սրբոց թարգմանչաց և ի հոգելոյս Վարդապետաց Եկեղեցւոյ, հետզհետէ գտանեմք յիւրաքանչիւր դարս գրեթէ մուծեալ յեկեղեցի մինչև ցՇնորհալին Ներսէս և յետոյ ևս քան զնա, զորոց հեղինակացն ասացաք արդ ի վեր անդր ի ծանօթութեան, բայց և զսրբոյ Հայրապետիս մերոյ այսորիկ զերգս շարականաց և զայլ ասացուածսն նորս կարգեալս ի պաշտամունս Եկեղեցւոյ մերոյ գոլով յանուանէ նշանակեալ յիւրաքանչիւրոց խորագիրս և մերթ ևս սկզբնատառք երգոց ինչ յառաւօտու և յերեկոյեան ժամերգութիւնս յօդեն զանուն նորա, զանց առնեմք ասել մի առ մի գրել:

Մնայ արդ բացորոշել և յաղագս կարգաւորութեան Պատարագամատուցին, որով պաշտի առ մեզ խորհուրդ սրբոյ Պատարագին,

զի առ մատենագիրս մեր ոչ գտանեմք զոճով ասացեալս, եթէ յորո՞ց որպիսի աղօթք կարգեցան ի նմին, կամ ո՞յք կարգաւորեցին զայժմու պաշտամունս Պատարագի:

Սուրբն Վրթանէս, զորմէ գրեցաք ի վերոյ, գտանեմք յիշատակեալ, եթէ կարգաւորեաց զպաշտամունս սրբոյ Պատարագին ըստ եկեղեցւոյն Երուսաղէմի, զորոյ զկարգս խնդրեալ էր ի Մակարիոսէ ուրն գլխովք կանոնաց: Յայսոսիկ կանոնս յիշատակին նիւթք խորհրդոյ Պատարագին՝ հաց ջերմ և բաժակ անապակ, որպէս և արդ իսկ առ մեզ և պաշտօնեայ խորհրդոյն, իսկ զաղօթսն Պատարագամատուցին, զի ոչ յիշատակին յումմէ՞ սահմանեալ, պարտիմք վերագրել նմին իսկ Սրբոյն Վրթանիսի, որ յընդունել զկանոնսն ի Մակարիոսէ, ասի, թէ յաւել և ինքն ի նոյն ինչ ինչ կարգս ուղղութեան ի կատարումն խորհրդոց եկեղեցւոյ և յղեաց պատուէր առ եպիսկոպոսունս իւրոյ թեմին՝ յամենայն տեղիս միօրինակ կատարել զխորհուրդսն երկիւղածութեամբ. ի կանոն ԺԱ:

Առ Իմաստասիրին Յովհաննու Օձնեցւոյ ի գիրս Յաղագս Կարգաց Եկեղեցւոյ, ի գլուխն վասն մեծի աւուր Միաշաբաթին գտանեմք, զի առ նորին ժամանակօք պաշտամունք Պատարագին սկսանիւր յերրորդում ժամու առաւօտուն ի Մեսեղի ասացեալ Սաղմոսէն՝ «Տէր թագաւորեաց, վայելչութիւն զգեցաւ», յետ որոյ երգելով զերեսին սրբասացութիւնսն՝ համբառնայր սուրբ Աւետարանն և, զմարգարէական և զառաքելական գիրսն ընթեռնելով, ընթերցեալ լինէր ապա Աւետարան, և ապա բարձր ձայնիւ խոստովանէին զՀանգանակն հաւատոյ՝ տուեալն Եկեղեցւոյ ի Նիկիական ժողովոյն:

Աստի, ուրեմն, իմանամք, եթէ Ժամամուտն ասացեալ պաշտամունք յետոյ, ուրեմն, քան զԻմաստասէրն, կարգեալք են յԵկեղեցւոջ մերում ի սկիզբն պաշտաման Պատարագի նախ քան զՄեսեղին Սաղմոս:

Իսկ եթէ Պատարագն անձայն պաշտիւր առ մեզ ի հնումն, յայտ ի յետագայիցն է ապաքէն յեկեղեցական անցից յերեքտասաներորդ դարու, յորոց վերայ վէճ և տարաձայնութիւնք ծագեցան ոչ սակաւ:

Այսչափ ինչ ներածութիւնս բաւական համարեսցուք իբր ի յառաջաբան Պատմութեան Ժողովոց Հայաստանեայց Եկեղեցւոյ, կարևորացն վասն ազգիս ընդհանուր եկեղեցականաց և ժողովրդոց, որոց ի հոգևոր պէտս կատարման ընդառաջ լինին հարկաւորութիւնք եկեղեցական կանոնաց և հարկ տեղեկութեան վասն որպիսի՞ պատճառաց նոցին գրութեանցն կանոնաց:

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ, ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ԵՐԵՒԵԼԻ ՎԱՆՕՐԷԻՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ ՆԱՀԱՆԳԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ի ՇՐՋԱՊԱՏՍ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ[1]

Ամբ Տեառն

Արարատեան կաթուղիկէ Մայր եկեղեցի Ս. Էջմիածին յԱրագածոտն գաւառի ի Վաղարշապատ, շինեալ ի Տրդատայ արքայէ 305

Նորոգեալ ի Վահանայ Մամիկոնեան 483

Եւ ի Կոմիտաս կաթուղիկոսէ 618

Ամաղուայ նորավանք Ս. Նախավկայի ի Վայոց ձոր, ի Ստեփաննոս եպիսկոպոսէ Սիւնեաց 936

Ամենափրկիչ Հին Ջուղայու յերնջակ գաւառի ի Պ. Վահրամայ 1272

Այրի վանք Ս. Գեղարդայ ի Գառնի ի Ս. Սահակ Պարթևէ, իսկ փորուածոյ եկեղեցիքն՝ ի Պռոշ իշխանէ 1288

Ամբերդոյ Սուրբ Աստուածածին յԱրագած լերին ի Վաչէ իշխանէ Հայոց 1210

Անւոյ կաթուղիկէ եկեղեցի ի Սմբատ արքայէ և ի Կոդրամիտէ թագուհւոյն Գագկայ 1001

Աշտարակայ Ս. Մարիանէ կուսի վանք յԱրագածոտն ի Յակովբայ Երիցուէ 1310

Աստապատայ Ս. Վարդանայ վանք ի Նախիջևանայ գաւառին, նորոգեալ ի խոճայ Սաֆարէ 1655

Աստապատայ Կարմիր վանք Սրբոյն Ստեփաննոսի 977

Աստուածընկալ Սուրբ Նշան ի Նիգ գաւառի ի Քուրդ իշխանէ 1244

Արամոնսայ Ս. Յակոբ ի Կոտայց գաւառի յԱ. Դաւիթ կաթուղիկոսէ 731

Արգինայի վանք ի Շիրակ գաւառի յԱ. Խաչիկ կաթուղիկոսէ 972

Արզաքանայ Ս. Աստուածածնի վանք Յեղոսի ի Հայրապետ կրօնաւորէ 1271

Արկեազու Սուրբ Խաչ վանք, ուխտատեղի հռչակաւոր ի Վայոց ձոր, ի Բիւրեղ տիկնոջէ Սիւնեաց 629

---

1 ԱՐԱՐԱՏ, 1873, էջ 364-367

Վերաշինեցաւ յաւուրս Վեհ. Գէորգ Դ. կաթուղիկոսի1871

Արփայու Ս. Ստեփաննոսի վանք ի Վայոց ձոր, ի Յովհ. եպիսկոպոսէ Օրբելեանց Սիւնեցւոյ 1321

Աւանայ Ս. Աստուածածին, Ծիրանաւոր անուանեալ, ի Դաւթայ՝ որդւոյ Դեմետր արքայի Վրաց 1285

Բճնոյ վանք Ս. Աստուածածին ի Նիգ գաւառի, ի Գրիգոր Մագիստրոսէ 1031

Գայիանեայ կուսի վանք ի Վաղարշապատ յԱրագածոտն գաւառի ի Ս. Գրիգոր Լուսաւորչէն, կոփածոյ քարամբք շինեալ յեզր կաթուղիկոսէ 630

Գետարգելայ Ս. Նշանի վանք ի Կոտայս ի Գրիգոր Է. կաթուղիկոսէ 1293

Գետկայ Ս. Աստուածածնի վանք ի Գուգարաց նահանգի ի Մխիթարայ Գօշէ և ի Վաղթանգ իշխանէ՝ տեառն Հաթերքայ 1191

Գնդեվանք ի Վայոց ձոր ի Սոփիայ՝ տիկնոջէ Սմբատայ իշխանի Սիւնեաց 936

Դսեղու բարձրաքաշ Ս. Աստուածածնի վանք ի Տաշիրս ի Մարզպանայ՝ որդւոյ Սարգսի Մամիկոնեանց 1221

Եղուարդայ Ս. Գէորգ Զօրավարի վանք յԱրագածոտն գաւառի, ի Գրիգոր իշխանէ Մամիկոնեան 450

Երնջակայ Ս. Կարապետի վանք յԵրնջակ յԵսայի և ի Ղազար վարդապետաց 1551

Երևանայ Անանիայ առաքելոյ վանք ի Կոտայս (այժմ զօրավար), նորոգեալ ի Մովսէս կաթուղիկոսէ 1620

Էջառիս կամ Կեչառուաց վանք Ս. Աստուածածին ի Վարժնունիս, ի Գրիգոր Մագիստրոսէ 1031

Եւ յԱպիրատ իշխանէ 1044

Թալիշոյ կաթուղիկէ վանք ի յԱրագածոտն գաւառի, ի Գրիգոր իշխանէ Մամիկոնեան 671

Թալինու կաթուղիկէ վանք, անդ, ի Սմբատայ Շահնշահէ 1040

Թանահատից Ս. Նախավկայի վանք ի Վայոց ձոր, ի Մխիթար կրօնաւորէ 151

Թեղենեաց վանք ի Նիգ գաւառի, ի Տուրքիկ վանահօրէ 950

Թովմայի առաքելոյ վանք ի Գողթան գաւառի ի Բարդուղիմեայ առաքելոյ, նորոգեալ ի Սրբոյ Գրիգ. Լուսաւորչէն 305

Լմբատայ Ս. Ստեփաննոսի վանք ի Շիրակ, ի Զաքարիայ ամիրսպասալարէ 1191

Խոռակերտի վանք ի Տաշիրս ի Խոռ Նահապետէ, նորոգեալ ի Ստեփաննոս իշխանէ 1272

Խոտակերաց Ս. Աստուածածնի վանք ի Վայոց ձոր, ի Սմբատ իշխանէ և յամուսնոյ նորա 936

Խորվիրապայ Ս. Գրիգոր ի դաշտին Դւնայ ի Տրդատայ արքայէ, նորոգեալ ի Վահանայ Մամիկոնեան 500

Կամրջաձորոյ վանք Ս. Գրիգոր յԱրշարունիս, ի տասներորդ դարուն 550

Կարինիսի Ս. Անդրէ առաքելոյ վանք ի Վարաժնունիս, նորոգեալ ի Մեսրովբ եպիսկոպոսէ 1611

Կարմիր վանք Ս. Լուսաւորչի ի Շիրակ, ի ձոն Սարգսէ 985

Կոթայ Ս. Աստուածածնի վանք ի Գեղարքունիս, ի Սուփան Գրիգոր իշխանէ 851

Կուաշաւանի (Կոշայ) Ս. Ստեփաննոս, այժմ՝ Սուրբ Գէորգ յԱրագածոտն, յԱշոտ իշխանէ 980

Հաղարծնոյ Ս. Աստուածածնի վանք ի Գուգարս, յիվան Աթաբեկէ 1071

Հաղբատայ Ս. Նշանի վանք ի Տաշիրս յԱնուշ թագուհւոյ՝ ամուսնոյն Աշոտ արքայի 967

Հաւուց Թառայ Ս. Ամենափրկիչ ի Գառնի ի Գրիգոր Մագիստրոսէ 1013

Հառիճոյ Ս. Գրիգոր ի ձոնէն Սարգսէ եւ Ս. Աստուածածնի վանք ի Զաքարիայ սպասալարէ 1200

Հերհերու Ս. Սիովն ի Վայոց ձոր ի Պ. Վահրամայ՝ որդւոյ Վասակայ 1321

Հոռոմայրի Ս. Նշանի վանք ի Տաշիրս, ի Զաքարիայ սպասալարէ 1187

Հոռոմոսին Ս. Հովհաննէս վանք ի Շիրակ, յութերորդ դարու, իսկ Ս. Գէորգ՝ ի Գագկայ Շահնշահէ 934

Հռիփսիմեանց Ս. Կուսանաց վանք ի Վաղարշապատ ի Ս. Գրիգոր Պարթևէն, նորոգեալ ի Կոմիտաս կաթուղիկոսէ 618

Մակարայ վանք ի Գուգարաց նահանգի, ի Հ. Յովհաննիսէ 1208

Մաղարթայ վանք Ս. Ստեփաննոսի ի գաւառին Նախիջևանայ ի Բարդուղիմեայ առաքելոյն, նորոգեալ ի Բաբկէն եպիսկոպոսէ 976

Մայրավանք ի Վարաժնունիս, ի Յովհաննէս փիլիսոփայէ 635
Մարմաշինու վանք ի Շիրակ, ի Վահրամայ Պահլաւունւոյ 988
Մարտիրոսաց վանք ի Վայոց ձոր, ի Մատթէոս վարդապետէ 1286
Մաքինեաց Ս. Աստուածածնի վանք ի Գեղարքունիս, ի Գրիգոր Սուփան իշխանէ 851
Մուղնւոյ Սուրբ Գէորգայ վանք յԱրագածոտն գաւառի, ի Յովհաննէս վարդապետէ 1664
Յովհաննավանք յԱրագածոտն, ի Ս. Գրիգոր Պարթևէն 310
Նորոգեալ ի Վաչէ և ի Քուրդ իշխանաց 1250
Նորատուաց վանք ի Գեղարքունիս, ի Սահակ իշխանէ Սիւնեաց 833
Շաղատայ Ս. Ստեփաննոսի վանք ի Վայոց ձոր ի Բաբկենէ՝ Սիւնեաց տեառնէ 800
Շատինաց վանք, անդ, ի Յակոբայ Ջուղայեցւոյ 1656
Շողագայ Ս. Առաքելոց վանք ի Գեղարքունիս, ի Մարիամ՝ դստերէ Աշոտ արքայի 880
Շողակաթ վանք տկար կուսին ի Վաղարշապատ ի Ս. Գրիգոր Պարթևէն, նորոգեալ յԱզամալ իշխանէ Շոռոթեցւոյ 1694
Որոտնայ վանք ի Սիւնիս ի թոռանց Տարսայիճ իշխանին 1311
Ուշւոյ Սուրբ Սարգիս յԱրագածոտն ի Շինող կոչեցեալ Գ. Ներսէս կաթուղիկոսէ, նորոգեալ յԱւագ Սարգսէ 1262
Սաղմոսավանք-Սուրբ Սիովն յԱրագածոտն ի Վաչէ իշխանէ 1215
Սանահին-Սուրբ Աստուածածին ի Տաշիրս, յԱնուշ թագուհւոյ Աշոտ Ողորմածն թագաւորի 962
Սոթայ Ս. Բեղղեհէմի վանք ի Գեղարքունիս ի Պարոն Առաքելէ 1276
Սևանայ Ս. Աստուածածին ի Գեղարքունիս ի Ս. Գրիգոր Լուսաւորչէն, նորոգեալ ի Մարիամայ՝ դստերէ Աշոտ թագաւորի, ամուսնոյ Գաբուռն Վասակայ 874
Վանավանի վանք ի Վայոց ձոր ի Շապհոյ Բագրատունւոյ՝ որդւոյ Աշոտոյ արքայի 903

Վանանդայ վանք ի Գողթան՝ յաւուրս Թարգմանչաց ի վերայ աշակերտի Բարդուղիմեայ առաք., նորոգեալ ի Մատթէոսէ Վանանդեցւոյ 1700

Տաթեւու Ս. Ստաթէի առաքելոյ վանք ի Սիւնիս, յԱշոտոյ՝ որդւոյ Փիլիպպէ գահերէց իշխանին Սիւնեաց 895

Տեղերու Ս. Աստուածածին յԱրագածոտն ի Մամայ խաթունէ՝ յամուսնոյ Վաչէ իշխանի 1232

Յախաքարայ վանք, Ղօշավանք ասացեալ ի Վայոց ձոր, զառաջինն շինեալ ի հայր Վարդիկէ յանուն Ս. Կարապետի 1041

Ապա ի Տասրայիճ իշխանէ՝ յեղբօրէ Սմբատայ արքայի, և յամուսնոյ նորա՝ ի Մինայ խաթունէ 1251

Փարպուայ Սուրբ Գրիգոր յԱրագածոտն ի Սուրբ Գրիգոր Պարթևէն, նորոգեալ յԱղբուղայ իշխանէ 1264

Փառակայ վանք Ս. Յակոբ ի Գողթան, ի Փառկեցի ժողովրդաց 1701

Սուրբ Մամասայ վանք ի Վայոց ձոր, նորոգեալ ի Սէթ կրօնաւորէ 1251

Քարաշամ Ս. Աստուածածնի վանք (Ասլքիլիսէ) ի Նիգ գաւառի, ի Մամայ խաթունէ՝ յամուսնոյ Վաչէ իշխանի 1211

Օձնայ Ս. Աստուածածնի վանք ի Տաշիրս, շինեալ ի Յովհան Իմաստասիրէ 735

Օշականայ Սուրբ Մեսրովբ Թարգմանչի եկեղեցի յԱրագածոտն, ի Վահանայ Ամատունւոյ 441

Նորոգեալ ի Պարոն Սահմատինէ 1277

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԻՒԹԻՒՆՔ ՁՀԱՍՏԱՏՈՒԹԵՆԷ ՀՈՌՈՄՈՍԻՆ ՎԱՆԱՑ Ի ՇԻՐԱԿ[1]

Ա

Որչափ ինչ ի նախնի պատմագրաց ազգիս ժամանակակցաց չինուլթեան այսր վանաց ունիմք բանս վկայուլթեան յաղագս հաստատուլթեան վանաց Հոռոմոսին, բովանդակեալ ի հին Հայաստանն անուանեալ մատենի, ի գաւառն Շիրակ Այրարատեան նահանգի, զայն ամենայն և որ արտաքոյ այնր առ պատմագիրս մեր իցեն գրուածք առ այս նիւթ, բովանդակ ի մէջ առնումք իբրև նախագիտելիք պատմուլթեան վանաց Հոռոմոսի:

Իսկ որ ինչ ներկայ գրից նորա տեղագրուլթիւնք ցայս վայր մնացելոցն ի հազարամեան հնոց ժամանակաց առ ի նախնեաց մերոց վայրք սրբուլթեան փառացն Աստուծոյ և խորան երկնանման ի յերկրի հաստատեալ, անմահ վկայք բարեպաշտուլթեան և առ Աստուած սիրոյն հոգեկան եռանդից նոցա ի մերում տեսուլթեան հանդերձ թուականօք չինուլթեանցն և այլ արձանագրուլթեամբք ի յետնոց յաղագս, որ առ նմա չինուլթեան հոյակապ տաճարին և ժամատանն ի մետասաներորդ դարու, ի Յովհաննու Շահնշահէ՝ որդւոյ Գագկայ Շահնշահի, ի թուին Հայոց ՆՁԷ. (յամի 1938), զայն ամենայն ընդարձակ ունիմք կարգել ըստ ձեռնհասուլթեան մերում, ի ստորագրել զայնս հանդերձ հետզհետէ փոփոխուլթեամբք յառաջնորդացն ձեռս:

Յիշատակեալ է մեր յառանձին պատմուլթեան մենաստանին Հառիճոյ՝ միումն ի հռչակաւոր վանաց Շիրակայ, (երես 11) զհաստատուլթիւն Հոռոմոսին վանաց, ի բնակարան հալածելոցն կրօնաւորաց ի Ռոմանոս կայսերէ Յունաց, յաւուրս Աբասայ արքայի, ի տասներորդ դարու, որ և զանուն ընկալաւ ի նոցունց կրօնաւորաց, վասն կոչելոյ նորա Հոռոմոց երէց: Ըստ որում նոքա, զի «ի Հոռոմոց եկին կողմանց», ըստ Վարդանայ, կոչեցին և զվանքն Հոռոմոսին վանք:

Եւ թէև Ասողիկ տայ զչինուլթիւն վանացն ուրումն Յովհաննու, զորմէ և գրէ յասելն. «Իսկ ի գաւառին Շիրակայ Հոռոմոսին կոչեցեալ վանք՝ չինեցաւ ի ձեռն Յովհաննիսի, որ էր զարդարեալ

1 ԱՐԱՐԱՏ, 1870 հունվար, էջ 220-222; փետրվար, էջ 244-248; մարտ, 269-272; ապրիլ, էջ 297-302

յամենայն առաքինութիւնս ևս առաւել յողորմածութեան զարդս... և անցաւորաց և ճանապարհորդաց հանգստարան պատրաստէր զտեղին, մինչ հանգչել իբր յիւրեանց տան ամենայն օտարաց, որ մինչև ցայսօր երևի նոյն նշան ողորմածութեան ի տան յայնմ»: Այլ պարտ է համարել զայս հաստատութիւն մենաստանին ի Հռոմոսին վանս, ի ձեռն կրօնաւորացն, զոր բաց ի պատմագրացն վկայելոյ, որպիսի Կիրակոսն է պատմիչ, և Վարդան՝ մերս աշխարհագիր, գտանեմք և զթուական յարձանագիրս և յորմունս տաճարին բազմօք յառաջ, քան զդարն մետասաներորդ, զոր և յառաջ բերել ունիմք ըստ կարգի, թող զի և ժամանակք թագաւորութեանցն Ռոմանոսի և մերս Աբասայ հաստատեն զայս աներկբայ կարծիս:

Արդ եթէ Հռոմոսին վանք լեալ է ի շինութեան ի գալստեան անդր հռոմ կրօնաւորացն, յաւուրս թագաւորութեան Աբասայ, յերեսաց հալածանաց Ռոմանոսի կայսեր, վկայէ Կիրակոս պատմիչ՝ յասելն. «Հաստատեցին վասն հալածեալ կրօնաւորացն ի Ռոմանոս կայսերէ զՀռոմոսին կոչեցեալ և զդպրեվանք ի Շիրակ գաւառի», ուր հաստատեցին ասելովն զբնակութիւն կրօնաւորացն ցուցանէ և հաստատութիւն միաբանական ուխտի անդր, յորոց և անուն վանացն մակագրութեամբ երևի կոչեցեալ Հռոմոսին վանք:

Զի ոչ միայն զայս հաւաստիս քաղեմք ի բանից աստի Գանձակեցւոյն, յորմէ և իմանամք զշինութիւն վանացն յառաջագոյն եղեալ, քան զկրօնաւորացն գալուստ, այլ և Ասողիկն, իսկ Ստեփաննոս ցուցանէ ի վերոյգրեալ բանս իւր զշինութիւն վանաց Հռոմոսին ի Յովհաննիսէ, զոր և ի վեր, քան զայս, յօգուած ի նմին, Է-րդ գլուխ գրոց պատմութեան իւրոյ ցուցանէ լինել նոյն հայր Յովհաննէս, որ առաջնորդն եկաց մեծահռչակ ուխտին Կամրջաձորոյ, և որ հալածեալն էր յարևմտեայ աշխարհէն, յեգերացւոց գաւառէն, որպէս ասէ. «Նախ առաջին մեծահռչակ ուխտն Կամրջաձորոյ ի գաւառին Արշարունեաց[1], որոց առաջնորդ՝ հայր Յովհաննէս, որ հալածեալ յարևմտեայ աշխարհէն, յեգերացւոց գաւառէն ի քաղկեդոնական մարդադաւան աղանդից...: Արդ եկեալ,

1 Կամրջաձոր մեծահռչակ ուխտ միայնակեցաց պայծառանայր յաւուրս Անանիա Կաթուղիկոսի, զոր Ասողիկն դնէ ըստ բանիս, ըստ այսմիկ յԱրշարունիս. Վարդան ասէ լինել ի Շիրակ, յԱշխարհագրութեան իւրում, «Շիրակ գաւառն, ասէ, ուր կան սուրբ ուխտքն Հռոմոս, եւ Մարմարաշէն, եւ Կամրջաձոր, Դպրեվանք եւ Հառիճոյ»:

Զայս անհամաձայնութիւն մերոց պատմագրաց, թէ եւ հին Հայաստան երես 4, վրիպակ համարի գրչաց եւ հետեւաբար զԿամրջաձոր դնէ յԱրշարունեաց գաւառի, բայց ցայս վայր չգիտեմք տակաւին, եթէ գուցէ յԱրշարունիս վանք մնացեալ ի վաղ ժամանակաց, քան զբազմաթիւ վանորայսն ի Շիրակ, այլ միայն զԿամրջաձոր գիտեմք զտեղին մերձ յԵրուանդակերտ, ուր ի Խորաձորին Երասխայ նշմարին յեզերսն հիմունք կամրջին ի հնոց ժամանակէն:

բնակեցաւ յառաջասացեալ տեղին Կամրջաձոր՝ կանոն կարգի ունելով զսահմանադրութիւն սրբոյն Բարսղի . . ., թէ էր նոցա ամենայն ինչ հասարակաց, յոր ժողովեալ արք ճգնազգեացք թուով 300: Յետ որոյ, ասէ. «Իսկ ի գաւառին Շիրակայ Հոռոմոսին վանք չինեցաւ ի Յովհաննիսէ, որ էր զարդարեալ յամենայն առաքինութիւնս...: (Երես 159-160) :

Զունելով քան զայս ի գիրս պատմագրաց ազգիս վկայութիւն հաւաստի, ի ցոյց հաստատութեան խնդրոյս, հաւանական համարիմք մեք մի և նոյն լինել Յովհաննէս հայրն, որ առաջնորդն եկաց Կամրջաձորոյ վանաց յԱրշարունիս, և որ յետոյ զՀոռոմոսին չինեաց վանս ի Շիրակ, զի և ամք ժամանակաց թագաւորութեան Ռոմանոս կայսեր Յունաց և մերոյս Աբասայ՝ որդւոյ Սմբատայ, ի մի և նոյն միջոցս հային հալածանաց կրօնաւորացն յարևմտից ի Հայս:

Իբր զի ի թուականին Հայոց ՅԿԵ. (916) թագաւորեալ Յունաց Ռոմանոս կայսր, յերկոտասաներորդում նորա յաջորդէ զթագաւորութիւնն Աշոտոյ՝ Աբաս եղբայր նորա՝ որդի Սմբատայ, այն է ի թուին Հայոց ՅՀԸ. (930), և զի վարեաց սա զթագաւորութիւնն զամս քսան և չորս, յայսմ իսկ ժամանակի երևի լեալ հալածումն կրօնաւորաց յարևմուտս, որպէս ասէ Ասողիկ՝ հաւաստի վկայն յերեսաց քաղկեդոնական մարդադաւան աղանդիցն:

Այլ, թէ որքա՞ն միջոցք ժամանակաց իցեն անցեալ ընդ մէջ հայր Յովհաննու և գալստեան կրօնաւորացն ի Հայս, յորոց աւուրս յիշատակի լեալ հաստատութեան մենաստանին Հոռոմոսի, ոչ յիշատակէ Ասողիկ զամս չինութեան վանացն ի Յովհաննիսէ և զկրօնաւորացն գալստեան, ուստի այսպիսի յայտնութիւն ժամանակաց պարտիմք իմանալ ի միջոցի քսանևչորս ամաց իշխանութեան Աբասայ, յետ երկոտասան ամաց թագաւորելոյն Ռոմանոսի ի վերայ Յունաց:

Ի տեղեկութեանց աստի կարեմք հաւաստի յառաջ բերել , եթէ ի կրօնաւորացն հալածելոց ի Ռոմանոսէ, որք հաստատեցին բնակութիւն ի վանորայս Հայոց ի Շիրակ, էր և հայր Յովհաննէս, որ թէ և չինողն կոչի յԱսողկայ Հոռոմոսին վանաց ի թուին Հայոց ՅՂ., բայց Կիրակոս ընդհանրապէս խօսի զհաստատութենէ վանացն ի ձեռն կրօնաւորացն, զի կոչումն իսկ վանացն, յանուն նոցին կրօնաւորաց հասելոց անդր, ցուցանէ, եթէ յառաջագոյն իսկ կայր վանքն և յատուկ զիմն կրէր անուն, յորոց ապացուցութիւն ահա ունիմք յարձանագրութեանց, նոյն իսկ Հոռոմոսին վանաց թիւ ժամանակի յութերորդ դարու:

Զի Հռոմոսին վանքն ասացեալ՝ է տաճար քառակուսի, իբրև ժամատուն ըստ վաղնջական ձևոյ ժամատանց եկեղեցեացն Հայոց, որ այլ է յեկեղեցւոյ Հռոմոսին, Սուրբ Յովհաննէս անուամբ կառուցելոյ ի Յովհաննու Շահնշահէ՝ որդւոյ Գագկայ շահնշահի, ի թուին Հայոց ՆԶԷ. (1038), առանց գմբէթի, միով լուսամտիւ ի տանիս, բոլորշի ամբարձեալ իբրև զժամատունն վանաց Հառիճոյ, և կարի հնագոյն, քան զայլ տաճարս Հռոմոսին, ի վերայ հարաւային սեան առաջին դասու, ի վերնախարսխի այնորիկ ունի զթիւ հայկական Մխ., որ երևի թիւ շինութեանն, որով և մարթէ զշինութիւն Հռոմոսին վանաց հանել յութերորդ դար քրիստոնէութեանս մերոյ, և հաւաստել ըստ բանի պատմագրաց, թէ կրօնաւորքն, հալածեալք ի հռոմոց յաւուրս Ռոմանոսի կայսեր ի Հայս, նորոգեցին զսոյն, և ոչ նորոգ կանգնեցին զմենաստանն, ըստ որոյ և կոչեցաւ յանուն նոցա՝ Հռոմոսին վանք:

Այլ թէ այս տաճար քառակուսի, Հռոմոսին կոչեցեալ, յի՛նչ անուն կոչէր նախքան զհաստատութիւն ի բնակարան փախուցելոցն կրօնաւորաց, ոչ ինչ յիշատակեն պատմագիրք, և ոչ իսկ յարձանագրաց նշմարին հետք յիշատակաց ի վերոյգրեալ Մխ. թուականէ Հայոց մինչև ցՆԺԴ. թիւ Հայոց, յորում Սարգիս Ճոն հայր, լեալ Հռոմոսին վանաց վանականն ասացեալ, յիշատակի ի ժողովին դատապարտութեան Վահան կաթուղիկոսի, զորմէ Ասողիկ յԸրդ գլուխ Գ. Գրոց, ոչ գտանեմք առ նոսա զրոյց ինչ զշինութենէ կամ զհաստատութենէ մենաստանին ի յարատևութեան, կամ, եթէ ի միջոցի հարիւր և չորից ամաց ո՞յք ոմանք եղեն առաջնորդք տեղւոյն, կամ ո՞վ եղև շինող վանաց ի նմին թուականի, և պահեցաւ հաստատութիւն մենաստանին շարունակութեամբ վանահարց մինչև ցՍարգիս Ճոն:

Այս հայր Սարգիս, զոր Ասողիկ կոչէ Հռոմոսին վանաց վանական, սմա մականուն գտանեմք և անունս Ճոն, զի սա, որ Հռոմոսին վանաց էր վանական և գտաւ ի վերոյնշանակեալ ժողովին, շինեաց և զՍուրբ Գրիգոր Հառիճոյ, և զԿարմիր վանք, յեզր Ախուրեան գետոյ յայժմեան Ղզլքիլիսայ, յորոյ արձանագրութեան դնի և թիւ վախճանի նորա: Եւ է սա երկրորդ ի կարգս առաջնորդաց Հռոմոսին, յետ Յովհաննու շինողն կոչեցելոյ՝ ըստ Ասողկայ:

Հեղինակն հին Հայաստանի ոչ երբէք յիշատակէ զշինութիւն կամ հաստատութիւն վանացն ի ժամանակէ թուականին, յորմէ համարիմք մեք շինութիւնն լեալ վանացն, այլ միայն հաստատելով զայն ի բանից անտի Ասողկայ, ի ձեռն Յովհաննու ի տասներորդ

դարու, անյիշատակ թողու զտևողութիւն մենաստանին ի շինութեան յետ այնորիկ մինչև ի ՆՁԷ., առանց գմբէթի, միով լուսամտիւ ի տանիս, բոլորշի ամբարձեալ իբրև զժամատունն Հառիճոյ և կարի հնագոյն, քան զայլ տաճարս Հոռոմոսին:

Յետ վախճանին հայր Սարգսի, վանականի Հոռոմոսին վանաց, ի թուին Հայոց ՆԼԳ.(884), որպէս հաւաստեմք յարձանագրէ շինութեան Կարմիր Վանաց, մինչև ցթուական շինութեան Սուրբ Յովհաննէս եկեղեցւոյն ի Յովհաննէս Շահնշահէ, այն է՝ ՆՁԷ., յընթացս յիսուն և չորս ամաց ոչ գտանեմք զոք, յաջորդեալ ի վանահայրութիւն Հոռոմոսին վանաց, ուստի և հաւանական թուի ասել, եթէ անմիջապէս յաջորդեաց զվանահայրութիւն հայր Յովհաննէս յետ Պետրոսի, յորոյ ի յիսուն և չորս ամի վանահայրութեանն կառուցաւ Սուրբ Յովհաննէս եկեղեցին ի Շահնշահէն Յովհաննու:

Յայսմ ժամանակէ մինչև ցանկումն տէրութեան Բագրատունեաց, թէ և ոչ տան մեզ վէպս արձանագիրք վանացն, այլ հաւաստի է, եթէ Հոռոմոսին վանք էր ի շինութեան և տևէր վանահայրութիւն և ուխտ միաբանական ի նմա, զի ո՛չ միայն խնամէին թագաւորք մեր զայն իբրև հանգստարան նախնեաց իւրեանց, այլ և բովանդակ քաղաքին էր Անւոյ ուխտից և երկրպագութեան տեղի վանք քաղաքամօրն Հայաստանեայց:

Իսկ յետ բարձման թագաւորութեան և յետ գաղթելոյ ժողովրդեան յայլ և այլ պետութիւնս, մարթ է, ուրեմն, ասել, եթէ և Հոռոմոսին վանք, յընթացս փոխադարձ տիրապետութեան Անւոյ մերթ ի յունաց և մերթ ի պարսից, մնաց ամայի յուխտէ մինչև ցտիրապետութիւն այնորիկ վերստին ի վրաց յամի տեառն 1174., յորում ժամանակի արքայն վրաց՝ Գորգի, առեալ զԱնի, վերակացու կարգեաց երկրին զԻւանէ Աթաբէկ Ուռպէլեան, որ ընդ Զաքարիայ՝ եղբօր իւրոյ, պահեցին զաշխարհն յերեսաց ասպատակութեանց պարսից և այլոց թշնամեաց մինչև ցամն Տեառն 1239:

Եւ արդարև, յընթացս այսոցիկ ժամանակաց իշխանութեան Զաքարիայ գտանեմք զհաստատութիւն վանահայրութեանն Հոռոմոսին և ուխտի միաբանութեան այնորիկ յարձանագրաց վանացն, յորս որպէս այս ամենայն, երևին նոյնպէս և ամենայն կալուածք այնորիկ և ինչինչ յիշատակք բարեպաշտութեան, ընծայեալք ի ժողովրդոց քաղաքին Անւոյ ի զանազան ժամանակս:

Երևի յարձանագրութեանց, զի ի տիրապետութեան երկրին Շիրակայ, ի Զաքարիայ սպասալարէ իշխանութեամբ վրաց, սեպհա-

կան կալուած էր Հոռոմոսին վանք իշխանացն հայոց, գնեալ յառման երկրին կամ ի պարսից և կամ յարքունուստ վրաց, զի ի թուին հայոց ՈԾ. (1201) տիրէին վանացն Գրիգոր՝ որդի Համանայ՝ որդւոյ Իշխանի, որպէս դնի յարձանագրութեանն, որ ի սոյն թիւ ասի. «Ես Գրիգոր որդի Համանայ որդւոյ Իշխանի ետու զիմ գանձագին գիւղը զերդս 'ի մեր սեպհական ուխտս և գերահռչակ վանքս»:

Բայց և այնպէս, տեսանի ևս ի նոյն յարձանագիրս, զի վիճակ կառավարութեան վանացս խանգարեալ էր յետ ժամանակի ի ձեռս վանահարց, և որ կալուած և արդիւնք էին վանացն յիշատակք բարեպաշտութեան յառաքինի արանց, ընդ ժամանակս ժամանակս նուիրեալք ի սնունդ միաբանից, ի սմին ժամանակի ընդ ձեռն անհաւատարմութեան վանահարց, յանձնական օգուտս դարձուցեալ, զի յաղագս այսօրինակ ընչաքաղցութեան և յափշտակութեան հարստութեանց վանացն, որպէս վկայի, կաշառանօք առնուին զվանահայրութիւնն Հոռոմոսին ի տերանց այնորիկ, և զարդիւնս վանացն ծախէին յանձանց պէտս ի քակտումն ուխտի միաբանութեանն, սակս որոյ իշխանք, որք տեարքն էին Հոռոմոսին, գիր յիշատակի հաստատեն արձանագրութեամբ և արգելուն նզովիւք զայս ամենայն ըստ այսմ. «Ի թուիս ՈՀԷ., Կամաւ ամենակալին Աստուծոյ այս մեր գիր յիշատակի է Հիճուկ Գրիգորոյ Հասանայ և եղբայրորդեանց իմոց տերանց Սուրբ ՈԻխտիս վանացս Հոռոմոսի, որ հաստատեցաք արձանագրով...'ի յարանց կամ 'ի կանանց, ո՛վ կաշառով հայր դնէ, այնպիսին նզովս սոցէ զյուդայի Աստուածավաճառին... եւ հայր եւ այլ գործաւոր որք կաշառս տան յայանի կամ ծածուկ... եւ հայր որ 'ի վանիցս հաց ծախէ կամ ի վանիցս 'ի բաց խորէ, նզովեալ եղիցի մահով եւ կենով...:*

Բայց որպէս երևի և յայլ արձանագրութեանց, ոչ հայեցեալ վանահարց յայս նզով, յայն վիճակ աղքատութեան հասուցեալ էին զՀոռոմոսին վանս ի թուին հայոց ՈՂԵ. (գուցէ և յաւերանաց երկրին) մինչ զի տեսեալ Աշոտոյ՝ որդւոյ Գէորգայ՝ թոռին Աշոտոյ, զխրթին կեցութիւն ուխտին, ընծայէ վանացն չորս եզն, երեք կովս, չորս էշ և երկու ձի:

Այլ թէ յետ վախճանին Զաքարիայ և յետ անկանելոյ Շիրակայ վերստին ի ձեռս պարսից և այլ թշնամեացն Հայաստանի, դարձեալ ամայի եղև Հոռոմոսին վանք, և ցրուեցան ուխտ միաբանութեան այնորիկ և դարձաւ իսպառ աւերակ մինչև ցեօթն և տասներորդ դարն, յորում հազիւ թէ խաղաղացաւ Հայաստան մասն Արարատեան, և սկսաւ անդրէն վանահայրութիւն ի բազում վանորայս

երկրին, վկայի յարձանագիրս վանացն ի վերջին նորոգութեան այնորիկ:

Այսպէս, ապա և առանց երկբայութեան կարեմք մակաբերել, թէ և յութերորդ դարու անդր, զի գտանի յարձանագիրսն, որպէս ասացեալ եմք Մխ. թուական Հայոց, զոր և համարիմք ամք շինութեան, Հոռոմոսին վանք, լեալ ի շինութեան, յետ յառնելոյ պատերազմաց և ասպատակութեանց երկրիս յաւուրս մարզպանաց, նեղեալք ուխտի միաբանութեան այնորիկ յերեսաց հալածանաց՝ լքին զայն ամայի և ամրացան ի լերինս և ի խորաձորս, զորոց վէպս տան մեզ ազգային պատմիչք:

Յամին 1685 և հայոց ՌՃԼԴ. Դանիէլ վարդապետ Տիգրանակերտցի յետ բազմաժամանակեայ աւերանաց Հոռոմոսին վանաց վանահայր լեալ այնմ, բազում աշխատութեամբ և նեղութեամբ ի ժամանակս տաճկաց մաքրեաց զՍուրբ Յովհաննէս եկեղեցին, կառուցեալն ի Յովհաննէ Շահնշահէ, յաւերանաց և յաղբոյ և ի հողոյ, որովք լցեալն էր, և զազիր և տղմուտ մթազգածութեամբ անշքացեալ, և նորոգեալ զմենաստանն ողջոյն, հաստատեաց վերստին զուխտ միաբանութեան ի նմա, յորմէ և ցայժմ:

Յետ նորա, ի թուին 1786 (ՌՄԼԵ) նորոգէ և զզանգակատունն Հոռոմոսին Յովհաննէս վարդապետ Շամբեցի, ոյր արձանագիր եդեալ է յորմն արևմտեան դրան մենաստանին:

Ի ժամանակս գերեվարութեան բնակչացն Արարատեան դաշտի, յորում և Աթոռն Սուրբ Էջմիածին, ի յետին աւուրս իշխանութեան պարսից ի վերայ երկրին, այն է յամաց տեառն 1800-1804-1807 ստէպ լինէր Հոռոմոսին վանք տեղի ապաստանի ցրուեալ միաբանութեան Էջմիածնի, զորս ժողովէին առաջնորդք տեղւոյն և խնամէին մինչև ի խաղաղանալ երկրին: Զայս պատմէին առ մեօք ծերունիք ի միաբանից մերոց, որոց ի սարկաւագութեան և ի դպրութեան ժամանակի գտեալ են փախստեամբ ի Հոռոմոսին վանս:

Գոլով այժմ Հոռոմոսին վանք ի սահմանին տաճկաց ընդ իշխանութեամբ պատրիարգին Կոստանդնուպօլսոյ, որ թէ և յառաջին ժամանակաց անտի ցառ մեզ կառաւարէր ի ձեռս առանձին վանահարց և լինէր առ նոքօք ուխտ միաբանութեան, ըստ իմիք, այլ առ մեօք կառավարութիւն այնորիկ է ի ձեռս առաջնորդին Կարուց, յորոյ ի թէմս է վանքն:

Ձհաստատութիւն մենաստանացն ի Շիրակ գաւառի, յորում և Հոռոմոսին վանք, ի ժամանակաց անտի խաղաղանալոյ աշխարհիս

մինչև յաւուրս մեր, որպէս գրեցաք ցայս վայր, կարգելով աստէն ըստ մերում ոճոյ հանդերձ ժամանակագրութեամբք, դիցուք յետ այսորիկ զկարգ առաջնորդացն և զայլսն կարգաւ:

Բ. Առաջնորդք Հոռոմոսին վանաց Հանդերձ ժամանակագրութեամբ

Հայր Յովհաննէս Ա., շինող Հոռոմոսին, կոչեցեալ յԱսողկայ յաւուրս հալածեալ կրօնաւորացն ի Ռոմոնոսէ, որոյ վանահայրութիւն Հոռոմոսին ի բանից Ասողկայ համարիմք լեալ յերկոտասաներորդում ամի թագաւորութեան Աբասայ, այն է՝ ի թուին հայոց ՅՂ., որում թուի ժամանակից լինել հայր Սարգիս՝ Հոռոմոսին վանաց վանականն՝ ասացեալ յԱսողկայ, զորմէ ստորև:

Հայր Սարգիս՝ Հոռոմոսին վանաց վանականն, կոչեցեալ յԱսողկայ, գտանի ի ժողովին Անւոյ, ի դատապարտութեան Վահան Կաթուղիկոսի, ի թուին հայոց ՅԺԹ. շինէ զՍուրբ Գրիգոր Հառիճոյ յամս տեառն 970-979, յոյր և արձանագրութեանն կոչի Ճոն: Նոյնպէս և զեկեղեցին Սուրբ Գրիգոր, Կարմիր վանքն ասացեալ, հիմնեալ ի թուականի 979., վախճանի, զորոյ զշինութիւնն հասուցանէ ի կատար հայր Սողոմոն՝ յետ հինգ ամաց:

Հայր Յովհաննէս Բ.՝ առաջնորդ Հոռոմոսին ի թուին հայոց ՆՁԷ., յորում կառուցանէ Յովհաննէս շահնշահ՝ որդի Գագկայ Շահնշահի, զՍուրբ Յովհաննէս եկեղեցին՝ հանդերձ ժամատամբն ի հայրապետութեան տեառն Պետրոսի:

Հայր Յովհաննէս Գ.՝ վանահայր Հոռոմոսին ի թուին հայոց ՈԽԴ., յառաջին ամի կաթուղիկոսութեան Տեառն Բարսղի, որ յարձանագիրս զանձն հայրապետ Սուրբ ուխտի անուանէ, կարգէ ի վանս պատարագել ամենայն միանձանց ուխտին, եթէ ոք ի միաբանիցն փոխեսցի առ Աստուած:

Խաչատուր՝ առաջնորդ Հոռոմոսին, յիշատակի յարձանագիրս ի թուին հայոց ՈԻԳ. ի հայրապետութեան Տեառն Բարսղի:

Մխիթար՝ առաջնորդ Հոռոմոսին, ի թուին հայոց ՈԾ. յիշխանութեան Զաքարիայ սպասալարի:

Բարսեղ՝ առաջնորդ Հոռոմոսին, Ամիրերկաթն կոչեցեալ, ի թուին հայոց ՈԾԳ., որպէս երևի յարձանագիրս:

Հայր Գրիգորիս՝ առաջնորդն Հոռոմոսին յետ Բարսղի Ամիրերկաթոյ, ի թուին հայոց ՈԿԷ:

Տէր Բարսեղ արքեպիսկոպոս՝ որդի Ամիրերկաթոյ ասացեալ Բարսղի, առաջնորդ Հոռոմոսին ի թագաւորութեան Հայոց և Վրաց Դաւթի ի թուին հայոց ՈՂԲ:

Հայր Վահան՝ վանահայր Հոռոմոսին ի թուին հայոց ՁՀԵ., որ չինողն է աշտարակի ներքին պարսպի վանացն և զանգակատանն:

Դանիէլ վարդապետ՝ վանահայր ի թուին հայոց ՌՃԼԴ., որ նորոգէ զՀոռոմոսին վանս յաւերանաց, յորմէ և ցարդ շարունակի վանահայրութիւնն:

Յովհաննէս վարդապետ Շամբեցի՝ նորոգող զանգակատանն, յիշատակեալ յարձանագիրն ի թուին ՌՄԼԷ. (1788):

Գ. Կալուածք Հոռոմոսին վանաց յիշատակեալք ի Բարեպաշտից

Ի թուին Հայոց

ՈԻԳ. Այգի մի ի Փարպի՝ նուիրեալ ի Պետրոսէ երիցու և յեղբորորդւոյ նորա՝ ի Ղազարայ, ի Յուսկանէ և ի Սիմիոնէ:

ՈԾ. Ջրաղաց մի ի կողմ ի գլի ձորին, յիշատակ Տիգրանաց՝ ուրումն ծառայի Զաքարիայ սպասալարի:

Գիւղ մի՝ Մսրանց կոչեցեալ, նուիրէ ոմն Խաչեղբայր անուն և որդի նորա Աւետիք

ՈԾԳ. Ակն մի ջրաղաց ի կամրջի ձորին՝ Աբէեան կոչեցեալ, նուէր ի Զմրուխտ խաթունէ՝ յամուսնոյ Սմբատայ, առն աստուածասիրի:

Երդ անուն գիւղ գանձագին Գրիգորոյ՝ որդւոյ Հասանայ, տուեալ ի նմանէ, որպէս ասի յարձանագիրն, ի սեպհական ուխտ իւրեանց ի Հոռոմոսին վանս:

ՈԿԷ. Կղպակ մի յԱնի, ի փողոցին և ի ներքևն Պաքսոնի, յիշատակ Վարդոյ Ճիծվարդեանց:

ՈՀԸ. Ջիթահանք մի, գնեալ ի վանաց Հոռոմոսին և յիշատակ տուեալ այնմ Վասակայ՝ որդւոյ Դաւթի՝ թոռին Կիւրիկէ արքայի՝ տեառն Նոր բերդին, յիշատակ հոգւոյ Վահրամայ և Թամարին:

ՈՂԵ. Աւետարան մի ամենագով յԱշոտոյ՝ որդւոյ Գէորգայ, ի յիշատակ ծնողաց իւրոց:

ՁԺԵ. Այգի մի Սարգիս երիցու Փարպեցւոյ՝ յիշատակ ծնողաց իւրոց:

ՁԷ. Հնձանատեղի մի յԱրուճ և ի Փարպի, չինեալ ի Մկրտիչ աբեղայէ, յիշատակ Հոռոմոսին վանաց:

ՁԻԹ. Տուն ի գիւղն Ճողքագոմ, յիշատակ Մասքասայ դստեր Արասլուին:

ՁԾԵ. Տապանատուն մի (գերեզմանոց), յիշատակ Մամուկ՝ դստեր Վահրամայ:

Անթուականք

Այգի մի ի Ծմակին, յիշատակ Շերանիկ առն, և ծակնաց կէս դանկն, նուէր ի Սուրբ Յովհաննէս Հոռոմոսին ի Մարիամայ՝ ամուսնոյ Շերանկանն:

Կղպակ մի ի յԱնոբոյին փողոցի և

Կղպակ երկու ի Կտերն, յանուն Սուրբ Յովհաննու նուիրեալ, յԱռիւծ անուն որդւոյ Աստուածատրոյ՝ ի յիշատակ կնոջ իւրոյ Համաւորին:

Այգիք փոքր յԱրուճաւանի, յիշատակ Հոռոմոսին վանաց ի բարեպաշտից եկեղեցպանին, Փոշուտին, Լապստակացն, Հանկանն, Առիւծկանն, Ապպետեանցն, Թուվուրեանցն և Խաչեղբարցն:

Հայրենի տներ Գեորգ ծեր երիցու՝ մօտ ի կարուց դուռն յԱնի:

Հայրենի տուն Գիւտիկ կրօնաւորի ի Քարափանն:

Կղպակ Վահրամայ ի Զարփնայ փողոցին՝ մօտ ի Սուրբ Գրիգոր:

Պարտէզ Աբրահամու ի բերդին, և հայրենի տներ Սարգսի ի Ռահ ձորին դրան վանաց:

Ուռուտ՝ Արշաւրի Աղցեցւոյ:

Ծաղկոցի կէսն Խոսրովեանց՝ յիշատակ Փոշուտին:

Ծաղկոց մի՝ Խաչիկ երիցու:

Տներ Շուշիկ տիկնոջ՝ զուգակցին Խոսրովու, նուիրեալ ի Սուրբ Յովհաննէս:

Այգի մի ի Փարպի, յիշատակ Բարդուղիմէոս աբեղայի:

Զուդանկ գիւղ՝ իւր հողովն և ջրով, յիշատակ Քոթիթ Ճոնի և կենակցի նորին Շահմամայի, ի Սուրբ Յովհաննէս:

Կէս դանկ (գիւղ) ի Մարաց Մարգին, յիշատակ Իգնատիոսի ի Սուրբ Յովհաննէս:

Տուն երկու Գրիգորի՝ որդւոյն Բախտիարին, ընծայեալ Սրբոյն Յովհաննու:

Կղպակ երեք ի նմանէ, ի յիշատակ որդւոյ նորա Աւագխաթունին:

Դ. Տէղապրոն-ին Հոռոմոսին վանաց

Մենաստան Հոռոմոսին կոչեցեալ վանաց՝ է յարևմտեան մասին Շիրակայ[1], յափն Ախուրեան գետոյ, ի հարաւոյ այնորիկ ի վե-

1 Արեւմտեան Շիրակ կոչի մասն գաւառին, եղելոյ յայնկոյս Ախուրեան գետոյ ի սահմանին տաճկաց, իսկ Արեւելեանն՝ յայսկոյս գետոյն ընդ իշխանութեամբ Ռուսաց:

բայ բարձր բլրոյ, զորով շրջապատ անցանէ գետն: Այս բլուր, յոյր վերայ մենաստանն, ի հիւսիսոյ հաւասար է դաշտին, ընդ որ և մուտք է վանացն, իսկ ի միւսոյ կողմանցն երից ևս բարձրաբերձ է բլուրս: Ստորոտք այնորիկ իջանեն ի ձորն անմատչելի, զորովք անցանէ գետն, և է Հոռոմոսին վանք հեռի յԱնւոյ քաղաքէն իբրև քառորդ միոյժամու յարևելից հիւսիսոյ այնորիկ:

Ի պարսպապատ մենաստանի Հոռոմոսին վանաց են երեք եկեղեցիք՝ հանդերձ ժամատամբք, այլ վասն զի այժմ մեծ և հրաշակերտ է Սուրբ Յովհաննէս եկեղեցին, կառուցեալ ի Յովհաննու՝ որդւոյ Գագկայ, յետոյ քան զՀոռոմոսին, յորում առնեն զժամերգութիւն, վասն այն և մեք նախ զայն ստորագրեմք:

Եկեղեցին՝ Սուրբ Յովհաննէս անուամբ, կառուցեալ ի թուին հայոց ՆՁԷ., ի Շահնշահ Յովհաննու՝ որդւոյ Գագկայ Շահնշահէ, է հոյակապ՝ գմբեթարդ և անսիւն: Միջին երկայնութիւն նորա քսան և վեց կանգուն (քայլ) ի սեղանոյն ցդուռն արևմտեան, որ մի միայն է բացեալ ընդ մէջ ժամատանն, չորեքին որմասիւնքն են եռակարգ յառաջոյ, և վերնախարիսխքն, ուղղաձիգ շրջանակաւ որոշեալք, յորոց վերայ է կարի հաստատուն կամարք երկարաձև, քան բոլորշիք: Ի գլուխ նոցին ձգեալ կամար գմբէթին, ամբարձեալ է ի վերայ այնորիկ գմբէթն սրածայր, որ է համակ ի կարմիր քարանց և ունի ուղղաձիգ շրջանակաւն նմանութիւն Կաթուղիկէին Էջմիածնի:

Երկու խորանք են յաջմէ և յահեկէ սեղանոյն, իսկ ի սեղանին գոյ խաչ քանդակագործ փայտիւ՝ շինեալ ի Սուքիաս վարդապետէ, որ եղև յետո եպիսկոպոս յէջմիածին:

Զորս լուսամուտք են գմբէթին և հինգ՝ եկեղեցւոյն, երկու-երկու՝ ի հիւսիսոյ և ի հարաւոյ, և մի՝ յարևելից: Միջին տեսք տաճարին է իսպառ անդրուագաւոր և առանց քանդակագործութեան:

Մի դուռն միայն ունի, որ բացեալ լինի ընդ մէջ ընդարձակ ժամատանն:

Ի ներքոյ վերնախարսխի հիւսիսային յետին որմասեանն՝ է ընդարձակ գիր յիշատակաց, որ իսպառ անվերծանելի է ի սակս կրելոյ զմէջ եկեղեցւոյն: Զիք այլ, քան զայս արձանագրութիւն յորմունս Սուրբ Յովհաննու, որ ինչ արձանագիրք են Հոռոմոսին, այն ամենայն են յորմունս ժամատան սորին սուրբ Յովհաննէս եկեղեցւոյս:

Ե– Ժամատո–ն Սո–րբ Յովհաննէս եկեղեց–ոյն

Ժամատուն Սրբոյն Յովհաննու՝ կառուցեալ նոյնպէս ի Շահնշահ Յովհաննու ի ՆՁԷ. թուականին հայոց, գրեթէ համակ սիւնազարդ, վեց բոլորշի սիւնք են ի միջի, չորք չորք ևս նմանատիպ նոցին կից ի հիւսիսային և ի հարաւային որմունս, և երկու երկու՝ յարևելեան և յարևմտեան որմունս, որք ամենեքեան ևս ունին զքառանկիւնաւոր վերնախարիսխս և զբոլորշի ներքնախարիսխս ի սեաւ քարանց համակ կոփածոյս:

Կամարք տանեաց ժամատանս, արկեալք ի վերայ վեցից միջնասեանցն, և յալ և յահեակ իջեալք ի գլուխս որմասեանցն, ամբարձեալ ունին զկիսագմբէթ լուսամուտն ի կեդրոնի, որ, սկսեալ քառակուսի, աւարտի ի ձև բոլորշի, որպէս և Հառիճոյ վանացն, և յընդարձակութեանն անդ բարձրութեան քանդակագործեալ է ի շրջապատսն պատկերք սրբոց և դրուագք պէս պէս մինչ ի լուսամուտն ի վեր:

Ի ճակատս արևելեան կամարին և ի վերնախարսխի առաջնոց երկուց սեանցն են ընդարձակ գիր յիշատակաց, որպէս ի վերայ բովանդակ որմոցն, զորս ըստ կարգի ունիմք յառաջ բերել:

Իսկ ի ճակատ արևմտեան դրան ժամատանս է արտաքուստ արձանագիր շինութեան եկեղեցւոյն և այսորիկ իսկ ժամատանս ի Յովհաննու՝ որդւոյ Գագկայ, հանդերձ թուականաւ:

Յարկ ժամատանս է համակ դրուագեալ վարդաձև և մանրանկար փորուածովք քարանց, որի և բոլոր շինուածք են ի սեաւ քարանց, լուսամուտք նորա են երեք՝ բոլորշիք ի հիւսիսոյ, և մի ևս երկարաձև ի ճակատ դրանն մեծի:

Ի միջավայրի տանեաց ժամատանն, ի վերայ կիսագմբէթեայ լուսամտին, կառուցեալ է զանգակատուն փոքրիկ՝ սիւնազարդ և անկիւնաւոր, մարդաչափ բարձրութեամբ, բայց միջոց սեանցն, ի յետնոց քարաշարեալ, ունի զխաչ ի գլուխ իւր, և զանգակք փոքրիկ երկուք ի միջի, զոր ոչ էր սովորութիւն յեկեղեցիս Հպատակաց Օսմանեան պետութեանն նախ քան զայս ունել յահէ նոցա, յորս բռնացեալ մահմետականութեանն ի վերայ քրիստոսական հաւատոց, բայց եթէ ի հինաւուրց մենաստանս:

Ընչանագիրք Ժամապան Սո-րբ Յովհաննէս Եկեղեց-ոյն Հոռոմոսին վանաց

Ի ճակատ արեւմտեան դրանն

Ի ՆՁԷ. թուականիս հայոց ետու ես յովհաննէս Շահնշահ որդի գագկայ Շահնշահի. զիմ այգին, որ ի կողբ, յիմ Եկեղեցիս սուրբ յովհաննէս, զոր շինեցի ի վանս Ս. Հոռոմոսի հանդերձ ժամատամբս. Եւ հարիւր բեռն աղ յամենայն ամի ազատ յամենայն չարէ. ի Հայրապետութեան տեառն պետրոսի և յառաջնորդութեան ուխտիս հաւր յովհաննիսի արդեամբ. զկնի մեր հակառակ գրոյս և իմ պարգևացս. պարտական մեղաց իմոց առաջի Աստուծոյ եւ ՅԺԸ. հայրապետացն որ ի նիկիա, նզովեալ եղիցի ի կեանս և ի մահ. իսկ որ հաստատուն պահեն զգիր արձանի ընծայիցս, աւրհնեսցին ի Քրիստոսէ:

Յորմն արեւմտեան ի ձախակողմն դրանն ի ներքուստ

Ի թուին ՁԷ. եւ մկրտիչ Աբեղայ որդի Ռադին և իմ հոգևոր եղբայրս գրիգոր քահանայն, շինեցաք վերստին զընծայինն յԱրուճի և ի փարպի. և արկաք նորոգ. սպասաւորքս հատուցին մեզ ի տարին Դ. պատարագ. Բ. Ռադին, Բ. Խոցատին. և յետ ելից մերոց մեզ առնեն. կատարիչք աւրհնին յԱստուծոյ:

Մերձ ի սոյն ի վերայ կամարին

Ի ՈԾ. թուիս ի տէրութեան երկրիս Զաքարիայ, ես տիգրան ծառայ Աստուծոյ և հաւատարիմ իմ պարոնին Զաքարիայ, միաբանեցայ սուրբ Ուխտիս. եւ Ետու զիմ զՁաղացն որ ի կողս շինեալ էի ի գլի ձորին. հմնուկիցէն ներքի դիհն գունիճանց. յիշատակ ինձ և ծնողաց իմոց. և յանուն իմ պատարագի Քրիստոս ԺԲ. ի տաւնի սուրբ մարգարէին Երեմիայի անխափան մինչև ի ծագումն որդւոյն Աստուծոյ. կատարիչք գրոյս աւրհնին յԱստուծոյ:

Ի նոյն որմն ձախակողման, կից ընդ կամարն

ՈԿԷ

Կամաւ մարդասիրին Աստուծոյ ես վարդս Ճիծվարդեանց ապաւինեցայ ի սուրբ Ուխտս. ետու զիմ դանձագին Կուղպակս և ի

ներքեւն պասքոնի յԱնի ՝ի վերի փողոցին, տանեկից է տիգրանայ ի յառաջնորդութեան հաւր գրիգորիսի սրբասիրի, պատարագեսցի Քրիստոս ՝ի տարին՝ Դ. աւր, զԲ. ինձ և Բ. զուգակցին իմոյ Տիկնոջն. կատարիչքն աւրհնեալ եղիցին ի Քրիստոսէ. ի ՈԿԷ. թիւն. զեղբարս յիշեցէք ՝ի Քրիստոս:

Ի գլուխ ձախակողման երկրորդ սեանն ՝ի վերայ կամարին, անթուական

Զաւրութեամբն Աստուծոյ ես շերանիկս զաւրացայ ՝ի զինուորութեան. Եւ արդ անկեալ կամ ի վանքս առաջի սուրբ խաչիս Քրիստոսի. զի ողորմեաց ինձ Քրիստոս Աստուած. ետու զիմ գանձագին այգին ՝ի ծմակին. յանուն իմ պատարագի Քրիստոս Զ. ՝ի տարին ՝ի խաչ գիւտի. Ես՝ մարիամ զուգակից շերանկանն ետու ՝ի սուրբ Յովհաննէս ծակնաց կէս դանկն իմ գանձովս գնած. յանուն իմ պատարագի Քրիստոս Զ աւր:

Ի միւս ծայր կամարին, նոյնպէս անթուական

Ես Առիւծս որդի Աստուածատրոյ միաբանեցա սուրբ ուխտիս և ետու ՝ի յանոբոյին փողոցի զիմ գանձագին Կուղպակն, որ շինեցի. ներքի դիհն քանակից է աւետեացն. Բ. Կուղպակ ՝ի կտերն. Ա. ՝ի վերայ կուղպակին է. Ա. իւրեան դիմաց. որ... է ներքեւ. վասն յիշատակի զուգակցին իմոյ Համաւորին. յանունս մեր պատարագի Քրիստոս. Բ. աստուածատրիս. Եւ Բ. վահրամի, Բ. կողակցոյն իմոյ Համաւորի. կատարիչք աւրհնեալ եղիցին յԱստուծոյ:

Յորմն հարաւոյ

ՈՂԵ. կամաւ բարերարին Աստուծոյ ՝ի Թագաւորութեան Հայոց և Վրաց Դաւթի. և ՝ի սպասալարութեան Շահնշահի որդւոյ մեծին զաքարիայի և յառաջնորդութեան տեառն բարսղի արք Եպիսկոպոսի՝ որդւոյ Ամիր երկաթոյ. Ես Աշոտ դսեղեցի որդի գէորգի թոռն Աշոտոյ միաբանեցայ սուրբ Յովհաննիսի ՝ի նեղ և ՝ի չար ժամանակիս յետ կործանման Տաթինարին, մինչ էր վանքս ՝ի նեղութեան ետու զամենագով աւետարան Դ. եղն, Գ. կով, Դ. էշ, Բ. ձի, Եւ այլ ինչ Աստուած պատրաստեր է: Ես տէր բարսեղ և Սարգիս Վարդապետս և այլ եղբարքս ընկալաք զնա իբրև զմի ՝ի պատրոնաց մերոց.

և փոխարէն հատուցաք յամէն ամի զկնի նոր կիւրակէին՝ Ի, աւր պատարագել զՔրիստոս յանուն Աշոտոյ որչափ կենդանի է՝ իւր ծնողացն. յետ յելից յաշխարհէս՝ Աշոտոյ կատարենք, որ հաստատուն պահեն, աւրհնին յԱստուծոյ, և որք խափանեն, նզովք զյուդային առցէ և զկայենին...:

Յորմն հիւսիսոյ 'ի ներքոյ լուսամտին

ՁԻԹ. կամաւն Աստուծոյ ես մասքաս դուստր Արասլուին և Թոռն Տիգրանայ՝ ետու զիմ հայրենի բաժինք 'ի Գեղն Ճոխքագոմ ի սուրբ Յովհաննիսի յիշատակ ինձ և որդւոյ իմոյ Սարգսի. Եւ սպասաւորքն հատուցին տարին՝ Ե. աւր պատարագ. Բ. ինձ. Սարգսին. Եթէ ոք զնուէրքս մեր հանէ 'ի վանացս. ՅԺԸ. Հայրապետացն նզոված է:

Ի վերայ կամարին միոյ ի յետին սեանց ժամատանն, անթուական

Ի յԱրուճ փոքր այգիք են Վանացս, Եկեղեցպանին, փաւշուտին, լապտակացն, Հանկանն. Առիւծկանն, Աղպետեանցն, թաւխարեանցն, խաչեղբարցն. և պատարագի Քրիստոս յանուն սոցա 'ի խաչին ուԹօրէքն՝ Ի. 'ի ձորին ծմակենոյ գնեցին վանենցիքս. և մարեմտուր Կողպացի ԻԵ. դահեկան ետ 'ի գինանց. Յանուն նորա պատարագի Քրիստոս Գ., մեք Հոռոմոսին վանականքս:

Ի ներքոյ սորին ըստ այսմ, անթուական

Ես Արշաւիր Աղցացի ետու զիմ հայրենի գանձագին զՈւռուտն, զի յիշեսցեն զիս առաջի զենման Քրիստոսի. Ես Փաւշուտս ետու զիմ ծաղկոցի կէսն զԽոսրովեանցն. Ես՝ խաչիկ երէցս՝ միաբանեցայ վանացս և ետու զիմ ծաղկանոցս:

Ի միւս ծայր այսր կամարի

ՁԾԷ. Շնորհիւն Աստուծոյ ես մամուկս դուստր վահրամայ ետու սուրբ Յովհաննէսի մեր Տապանատունս վեղամն ցմարգի բովաձորոյ 'ի կամրջէն 'ի վաղաւերուճ ամբահն յանուհաղեանի վաղաւերան Բ. աւերակովն, որ 'ի տարին Զ. աւր պատարագել զՔրիստոս, Ա. ինձ Ա. կուրապաղատին, Ա. Ամիրային, Ա. արտամչին, Ա. վահ-

ըամշին, Ա. գոհար Խաթունին. կատարիչք գրոյս աւրհնին յԱստուծոյ. Սիմէոն գրիչ:

Ի վերայ կամարի ճախակողմեան յետին սեանն

Հոռոմոսին վանացս Հայրենիք որ 'ի քաղաքին՝ այս են գէորգ ծերենց վանացս ետ զիւր Հայրենի տներն մաւտ 'ի կարուց դուռն. Սուրբ Ստեփաննոսի ընդդէմ և այլ արդիւնք ետ. և առ զիւր տաւնին պատարագն՝ Դ. գիւտիկ կրօնաւոր ետ զիւր Հայրենի տունն 'ի քարափանն, և առ զխաչգիւտին պատարագն՝ Գ: Վահրամ ետ Կուղպակ 'ի դարբնափողոցին մաւտ 'ի Սուրբն գրիգոր. և պատարագ մատչի յանուն նորա Բ. Աբրահամ ետ զպարտէզ բերդին առաջի Հայրենիքն. վասն իւր պատարագի Գ: Ես Սարգիս ետու զիմ Հայրենի տներն 'ի քաղաքին 'ի Ռանձորին դրան վանացս. Ասպնջականացս յանուն պատարագեն զՔրիստոս...:

Ի վերայ միջին կամարին, որ 'ի հանդիպոյ դրանն

ՈՀԸ. Շնորհիւն Քրիստոսի ես վասակ որդի դաւթի, թոռն Կիւրիկէի արքայի՝ Տէր նոր բերդի՝ խոստովանողքս միաբանեցաք սուրբ ուխտիս, և ետու սուրբ Յովհաննէսի ընծայ՝ զիմ գանձագին ձիթահանքն որ 'ի վանացս գնեցի վճռամբ և ամենայն ամրութեամբ. յԱռաջնորդութեան տեառն բարսղի որդւոյ Ամիրերկաթոյ. և փոխարէն ինձ հատուցին զտաւն վարդանանց յամէն ամի բոլոր եկեղեցիքս զպատարագն, որչափ ես կենդանի եմ՝ վահրամայ և թամարի առնեն, և յետ վախճանի իմոյ՝ ինձ:

Արդ կատարիչք գրիս աւրհնին 'ի Քրիստոսէ. եւ հակառակքն որոշին. զանէծս կայենի. զյուդայի և զնեւինն ժառանգէ մարդ ո՛ ոք իցէ և մի՛ լիցի թողութիւն յաւիտեանս ամէն:

Ընչանագրո-ՐԻ-նվ, ԷՂԷԱԼՎ ԸՆԴ ՄԷՋ ՀՈՐԻՑ ԿԱՄԱՐԱՑՆ, ՈՐ Ի ՆԷՐՎՈՅ ԼՈ-ԱԱՄՊԻ ՊԱՆԷԱՑՆ, ՅՈՐՈՅ ՎԷՐԱՅ Է ՓՈՎԵՐԻԿ ԳԱՄԲԷՐՆ ՊԱՆԳԱԿԱՅ.

Ի ճակատ արեւելեան կամարին

«Ի թուիս ՈՀԷ., կամաւ Ամենակալին Աստուծոյ այս մեր գիր յիշատակի է Հիճուկ Գրիգորոյ որդւոյ Հասանայ և եղբօրորդեաց իմոց տէրանց սուրբ ուխտիս վանացս Հոռոմոսի, որ Հաստատեցաք արձանագրով լի 'ի յայս տեղւոյս. 'ի յարանց կամ 'ի կանանց ո՛վ

կաշառով հայր դնէ, այնպիսին նզով առցէ զյուդայի զԱստուա-ծավաճառին, և զկայենին զեղբայրասպանին: Եւ հայր և այլ դոր-ծաւոր որք կաշառս տան յայտնի կամ ծածուկ, յերկնաւոր հաւրէն, ՅԺԸ. հայրապետացն և յամենայն սրբոց անիծեալ եղիցի 'ի հոգի և 'ի մարմին: Եւ հայր, որ 'ի վանիցս հաց ծախէ, կամ 'ի վանիցս ի բաց խորէ, նզովեալ եղիցի մահով և կենով: Ո՛վ հակառակ կայ այս բանիս 'ի պատրոնաց կամ 'ի միաբանիցս, կամի և ջնջել ջանայ զայս գիրս, և ինքն ջնջեսցի 'ի դպրութենէն կենաց. կատարիչքն աւրհ-նեալ եղիցին յԱստուծոյ: Խոցադեղ գրիչ 'ի տէր»:

Ի ներքոյ սորին յաջակողմեան ծայրին

«ՈԾ. Կամաւն Աստուծոյ ես խաչեղբայր և իմ որդին Աւետիս, միաբանեցաք սուրբ ուխտիս և տուաք զմեր հայրենիքն զմարանց մարգիկանգս 'ի վանքս, սպասաւորք սորա կատարեն 'ի տարին Զ. աւր ժամ: Բ. ինձ. Բ. Աւետիսին. Ա. Սէատին. Ա. եղբարցն 'ի տաւնի Աւետեացն»:

Ի վերայ նոյն կամարին ի ձախակողմանն

«Ես Սարգիս Երեց որդի Պետրոսի փարպեցի՝ ետու զիմ դանձա-գին այգին 'ի վանս Հոռոմոսին յիշատակ ինձ և ծնողաց իմոց. Սպասաւորք սրբոցս կատարեն յամենայն ամի զտաւն սուրբ Սարգ-սին պատարագել զքրիստոս. Բ. ժամ, Ա. ինձ և Ա. կենակցին իմոյ Քեամէին: Ի թուիս ՉԺԵ., կամաւն Աստուծոյ ես Ալէքսանս որդի ղազարի միաբանեցայ»:

Ի ճակատ հիւսիսային կամարին

«Թուին ՈԾԳ., Շնորհիւն Քրիստոսի ես՝ Զամրուխտ խաթունս, աղախին Քրիստոսի, յուսալով յողորմութիւնն Աստուծոյ ետու սուրբ Ուխտիս 'ի վանքս Հոռոմոսի 'ի սուրբ Յովհաննէս ակն մի ջաղաց բոլոր 'ի կամրջի ձորին որ Աբէլեանց կոչի. զոր այրն իմ աստուածասէրն Սմբատ յետ կենդանութեան ինձ հայրենիք էր տուեալ. ես իմ կենդանութեանս սուրբ Ուխտիս հայրենիք հաստա-տեցի յառաջնորդութեան Տեառն Բարսղի Ամիրերկաթոյ: Եւ սպա-սաւորք սուրբ ուխտիս փոխարէն հատուցին մեզ յամենայն ամի պատարագել զքրիստոս Խե. աւր: Ժե. ինձ՝ խաթունիս, Ժե. առն

իմոյ Սմբատայ, Ժ. մաւրն իմոյ Խորիշանի. և Ե. իւր հաւրն՝ Քրդին: Արդ եթէ ոք ՝ի մեծամեծաց կամ ՝ի փոքունց զմեր նուէրս հանէ ՝ի սուրբ ուխտէս, կամ ծախելով կամ գրաւական դնելով, կամ յամն պակասեցուցանէ, ՅԺԸ. հայրապետացն նզովեալ եղիցի մահով և կենաւք. իսկ հաստատուն պահողքն աւրհնին յԱստուծոյ»:

յԱրեւելեան կամարին

«Ի թուին ՈԽԴ., յառաջին ամի կաթուղիկոսութեան տեառն Բարսղի, և ՝ի տէրութեան վանացս Գրիգորոյ և Սմբատայ և եղբարց իւրեանց որոց օգնական լիցի Քրիստոս Աստուած, շնորհիւն Աստուծոյ ես նուաստ հայրապետս սուրբ Ուխտիս հաստատեցաք, թէ ոք ՝ի սուրբ վանացս փոխի ՝ի քրիստոս, պատարագ մատուսցուք յաւրն Դ. քառասուն, Երիցուն՝ Բ. քառասուն, Աբեղայի՝ Գ. քառասուն: Եւ ամենայն եղբայր միաբան պատարագ մատուսցէ. և որ չկարէ. Ժ. կանոն աղաւթ արասցէ: Եթէ ո՛ք յայս կարգելոցս պակասեցուսցէ, խղճի և մեղաց պարտական է առաջի Աստուծոյ. զաշխարհական Աբեղայի Ե. քառասուն. տէր. ողորմեա՛ յովհաննէսիս»:

Կից սմին ի ներքուստ

«Ես Շուշիկ զուգակից Խոսրովու ետու զիմ տներն ՝ի սուրբ Յովհաննէս. և առի ինձ պատարագ ՝ի տարին աւր մի, կատարաւղքն աւրհնին ՝ի Քրիստոսէ»:

Ի ներքոյ սորին դարձեալ

«Ես Բարդուղիմէոս Աբեղայ Փարպեցի ետու զիմ դանձագին այգին որ ՝ի փարպի, և վանացս ՝ի Հիւրատուն. և նոքա հատուցին ինձ պատարագ ՝ի տարին աւր մի»:

Կից այսմ դարձեալ

«Կամաւն Աստուծոյ ես Քոթիթ ճոնս և կենակիցն իմ Շահմամայ՝ տուաք զուտանկն իւր հողովն ու ջրով, ոնց բնական լեալ է. ՝ի սուրբ Յովհաննէս, և ՝ի չինած տներս ՝ի սուրբ Յովհաննէս. և սպասաւորք սորա հատուցին մեզ քոթթիս երկու պատարագ. Ա. ինձ և Ա. Շահմամին: Եթէ ոք ՝ի մերոց կամ յաւտարացն...՝ի կենացն աստուծոյ, կատարիչք աւրհնին ՝ի Քրիստոսէ»:

Դարձեալ կից սմին

«Ես Իգնատիոս որդի...տուաք զմեր հայրենիք կէս դանկն ի մաբաց մարգին ի սուրբ Յովհաննէս... պատարագ ի տարին՝ Բ. աւրն ինձ. և Ա. մամերուն. եթէ ոք ի մերոց կամ յաւտարաց խափանէ...»:

Ի վերայ կամարի լուսամտին արեւմտեան դրան ժամատանն արտաքուստ

«Ի ՈԾ. թվիս շնորհիւն Աստուծոյ ես Գրիգոր որդի Հասանայ որդւոյ Իշխանի՝ ետու զիմ գանձագին գիւղն Ղերդս 'ի մեր սեպհական ուխտս և գերահռչակ վանքս. Եւ վասն յիշատակի հոգւոյ իմոյ և ամուսնոյ իմոյ Խաթունին. յառաջնորդութեան Մխիթարայ. պարտական են սպասաւորք Հոռոմոսին վանացս մինչ 'ի գալուստն Քրիստոսի յամենայն ամի մէկ Խ. պատարագ առնել. Ի. ինձ Գրիգորոյ. և Ի. ամուսնոյ իմոյ Խաթունիս: Մարդ մահկանացու որ զմեր յիշատակիս խափանէ, մեղաց մերոց պարտական է առաջի սոսկալի բեմին Քրիստոսի. կատարիչքն աւրհնեսցին 'ի Քրիստոսէ»:

Յորմն հարաւային՝ առընթեր վերի լուսամտին

«Շնորհիւն Քրիստոսի ես Գրիգոր որդի Բախտիարին ետու ընծայ 'ի սուրբ Յովհաննէս Բ. տուն և 'ի վերին Գ. կուղպակ, զոր իմ հալալ արդեամբք շինել եմ. յիշատակ ինձ և զաւակի իմոյ Աւագ խաթունին. և սպասաւորքս փոխարէն հատուցին յամենայն ամի Գ. աւր պատարագ Ա. ինձ և Բ. Աւագ խաթունին»:

Ի ներքոյ սորին

«ՈԻԳ. թվիս հայոց, 'ի հայրապետութեան նահանգին մերում Տեառն Բարսղի, Ես՝ նուաստ Պետրոս երէց և իմ եղբաւր որդիքս Ղազար, Յուսիկ և Սիմէօն՝ տուաք զմեր հայրենի այգին որ 'ի փարպի, որ կոչի խանի կշտին, 'ի սուրբ եկեղեցիքս Հոռոմոսի վանացս՝ 'ի յաջորդութեան Խաչատրոյ. Եւ խնդրեմք 'ի սպասաւորացս սրբոց Դ. աւր պատարագել զքրիստոս յամենայն ամի զհոգւոյն գալստեան շաբաթն...»:

Ի ճակատ դրան ժամատան Հոռոմոսին վանաց գրեալ ի յետին ժամանակս յետ առաջնոյ աւերանացն

«Ի ՌՃԼԴ. թուաբերութեան Հայոց նորոգեալ պայծառացաւ թագաւորաշէն մեծասքանչ Հոռոմոսին վանքս ձեռամբ Դանիէլ վարդապետի Տիգրանակերտցւոյ և յիշխանութեան Խաթունօղլի իշխանաց իշխան Մուստաֆայ աղային. և զի ունէր ժամանակս ո՛չ սակաւ աւերեալ, աղբով և հողով լցեալ, զոր տեսեալ վերոյգրեալ Դանիէլ Վարդապետին, եռաց ՝ի հոգի իւր, և էարկ զանձն ՝ի չարչարանս ՝ի դառն ժամանակիս, յորում ազգս Հայոց յոյժ էին չքաւորեալք. և իշխանութեամբ և ջանիւ լուսաւորեալ մաքրեաց զվանքս սուրբ Յովհաննիսի ՝ի տղմուտ և ՝ի զազիր մթազգածութենէն վասն յուսոյն որ առ Աստուած: Արդ որք կարդայք, յիշեցէք ՝ի Քրիստոս»:

Զ. Հոռոմոսին վանք

Հոռոմոսին կոչեցեալ վանք, որոյ անուանադրութիւն ըստ բանից պատմագրաց մերոց, որ ի տեղեկութեան պատմութեան այսր վանաց յԱ. յօդուածի անդ սկսեալ է յերիցանց Հոռոմոցն ի տասներորդ դարու եկեղոցն ի Շիրակ, է կարի հոյակապ կառուցեալ քառակուսի՝ ի վերայ երկոտասան սեանց, ութից եղելոց յորմունս, որք եռակարգ և անկիւնաւոր միապաղաղ քարինք դրուագաւոր խարսխօք. երկու երկու ի չորեսին որմունսն, իսկ չորք են ի միջակիտին ապառաժ և կապտագոյն քարինք են հանդերձ վերնախարսխօք և միապաղաղ նոյնպէս ներքնախարսխօք, այլ որոշք ի բոլորշի սեանցն:

Առաջին երկու սիւնք միջակիտին՝ են ութանկիւն, և երկու վերջինքն՝ բոլորշի, յորոց վերայ, գոլով չորեքին սրանկիւն և նուրբ կամարք, հաստատեալ է ի գլուխս այնոցիկ քառանկիւնաւոր լուսամուտն կամ կիսագմբէթն, որ յար և նման ժամատանն Հաղիճոյ. հրաշալի քանդակագործութեամբ ի խորշս խորշս ամբարձեալ ի վեր, քաղելով փոքրկացուցեալ է և աւարտեալ ի ձև քառակուսի և թողեալ լուսամուտ փոխանակ գմբէթի:

Իսկ կամարայարկ չորից կողմանց սեանցս՝ է՛ որ հարթ հաւասար է, և է՛ որ անկիւնաւոր հաստատեալ, բայց անդրուագ քարամբք կերտեալ, յարևելեան որմն է փոքրիկ ծոցաւոր սեղան պատարագի, իսկ շինուած այսր վանաց գոլով քառակուսի, լայնութիւն և երկայնութիւնն են միաչափ քայլ քսաներկու:

Ի չորից սեանցն իջանեն կամարքն, ի չորից ևս կուսէ՝ ի վերնախարիսխ որմասեանցն, որք բառնան զտանիս եկեղեցւոյս, դուռն մի միայն ունելով յարևմտից, ընդ որ ելանեն ի փոքրիկ ժամատուն նորա, զորմէ ի ներքոյ և անտի ի հիւսիսային դրանէն արտաքս:

Այս վանք Հոռոմոսին հին քան զամենայն եկեղեցիս մենաստանիս չունի արձան յիշատակի, բայց գոյ Հայկական թուականս ի վերայ վերնախարսխի հարաւային սեանն առաջնոյ Մխ., որ երևի թիւ շինութեան նորին, որով մարթ է զշինութիւն Հոռոմոսին վանաց հաւաստել ճիշդ լեալ յութերորդ դարու ըստ բանի պատմագրաց, յորում հալածեալ հոռոմ կրօնաւորաց ի հոռոմոց անտի յաւուրս Ռոմանոս կայսեր ի Հայս, նորոգեցին զսոյն և ո՛չ նորոգ կանգնեցին, որով և յանուն նոցա կոչեցաւ Հոռոմոսին վանք:

Զայս վանք Հոռոմոսին առաջին քան զայլ տաճարս անդ, Կարապետ վարդապետ՝ առաջնորդ Կարուց, որ ետ տպել զարձանագիրս այսր Հոռոմոսին վանաց, չկարելով որոշել, սխալմամբ կոչէ փոփոխակի դիւանխանէ և խորհրդարան:

Ի յետին ժամանակս դրոշմեալ են արձանագիր մի յիշատակի ի վերայ կամարի միջին սեան այսորիկ, և է անթուական, որ ունի օրինակ զայս.

«Կամաւն Աստուծոյ ես վարդս և ամուսին իմ Աղբրացս միաբանեցաք 'ի սուրբ ուխտիս և տուաք Բ. կով և Բ. եզն. և ետուն մեզ գերեզմանի տեղի. և 'ի տարին Դ. աւր պատարագ. Բ. ինձ և Բ. Աղբրացին. որչափ կենդանի եմք, մեր ծնողացն առնեն, յետ մահուն մեզ առնեն»:

Այս եկեղեցի Հոռոմոսին է ի հարաւոյ Սրբոյն Յովհաննու՝ կառուցեալ ի վերայ ապառաժին, ամբարձելոյ ի հիւսիսային եզր գետոյն, եղելոյ ի տեղի պարսպի այսր կողման, որ ամբողջ մենաստանն ունի ի վերայ իւր:

Է. Ժամապուն Հոռոմոսին վանաց

Յառաջոյ տաճարի Հոռոմոսին կից արևմտեան որմոյն նովին լայնութեամբ, ուր բացեալ լինի դուռն նորա, որպէս ասացաք, կառուցեալ է քառակուսի փոքրիկ ժամատունն անսիւն, ի վերայ չորից կամարաց խաչաձև, արկեալ մինչև յորմասիւնսն, որք են երկու երկու ի չորեսին որմունս եկեղեցւոյն փորուածոյք և դրուագաւոր վերնախարսխօք, որոց սիւնք յառաջացեալք են յորմոցն երկու ոտք լայնութեամբ: Հիւսիսային և հարաւային որմասիւնքն

են քանդակագործ և կարի նուրբ փորուածովք, ի շրջանակս նորա փորագրեալ է թիւս ՁԻԶ:

Դուռն տաճարիս լեալ է յարևմտից, որ այժմ փակեալ, ընդ հիւսիսային որմն բացեալ դուռն, ընդ որ ելանեն ի դատաստանատունն ասացեալ նշխարատունն:

Այս նշխարատուն է շինուած քառակուսի, առանց սեան, երկայնութեամբ և լայնութեամբ հաւասար չորս և կէս կանգնոյ, ձեղուն նորա քաղելով գործեալ և դրուագեալ գեղեցիկ մանուածովք ծաղկանց, յորոյ ի միջակիտին թողեալ լուսամուտ իբրև ժամատանցն:

Զայս նշխարատուն, ըստ արձանագրութեան եղելոյ ի ճակատ դրանն, շինեալ է Վաչէ իշխան և Մամախաթուն՝ կին նորա, հիմնարկիչք Աստուածածնի վանաց Տեղերու յԱրագածոտն:

Յարևելեան որմն այսորիկ գոյ խաչ վէմ մի, երդման խաչ ասացեալ ի ռամկաց տեղւոյն:

Արձանագիր շինութեանն է ի վերայ ճակատու դրանն, որ ի հիւսիսոյ, ի վերայ կիսաբոլորակ վիմին, որ ի վերայ սեմոցն՝ ըստ այսմ:

«ՈՀԸ. Շնորհիւն Քրիստոսի ես Վաչէ որդի Սարգսի և ամուսին իմ Խաթուն դուստր Ապրապուսեհրի շինեցաք զնշխարատունս 'ի վանս Հոռոմոսի յԱռաջնորդութեան տեառն Բարսղի որդւոյ Ամիրերկաթոյ. Եւ տուաք ընծայ դրատանս զմեր դանձագին այգին 'ի յԱւշական... ժամու համար և նշխարի. և այլ տուաք եկեղեցւոյս սպասք և երկու քշոցք արծաթի. և փոխարէն հատուցին մեզ միաբանքս յամէն տարի յամենայն եկեղեցիքս 'ի նոր կիւրակէին պատարագել զՔրիստոս. զայգին փակակալն հոգայ և գինւոյ իշխանութիւն ունի, որ 'ի մեր պատարագի աւուրն հասարակաց սէր առնէ. արդ կատարիչք գրոյս աւրհնին յԱստուծոյ. իսկ եթէ 'ի մերոց կամ յաւտարաց զյիշատակս մեր խափանէ, մեղաց մերոց պարտական լիցի առաջի Աստուծոյ»:

յԱջակողմն այսորիկ եւ այս արձանագիր

«ՁՀԵ. Շնորհիւն Քրիստոսի ես Հայր Վահան... ետու ի սուրբ Յովհաննէս յիշատակ իմ եղբաւրն Գրիգորոյ, որ միջաւրեայ 'ի Քրիստոս փոխեցաւ. իւր հալալ... խաչվառ և նասիճ շուրջառ... ետուն կարկի զիմպո հողն և զծմակի հողն. որ ինձ... զինչ խարճ լինի՝ ես առնեմ, հետ այնոր սուրբ Յովհաննիսի է. սպասաւորք փոխարէն հատուցին յամէն ամի Գ. պատարագ. 'ի տաւնի սուրբ*

Գրիգորին՝ յանուն Գրիգորոյ առնել, կատարիչք գրոյս աւրհնին ՝ի Քրիստոսէ ամէն: Շինեցի ղուլէն[1] և զանգակատունս»:

Մենաստան Հոռոմոսին

Պարիսպ մենաստանին, սկսեալ ի հարաւոյ կողմանէ վանացն, ի ձորաբաշխի անդ Ախուրեան գետոյն, շրջապատի ընդ արևմտեայ և ընդ հիւսիսի կողմանս դրից նորին, աւարտեալ ընդ արևելս, ուր միաւորեալ է ընդ արևելեայ կողման անկեան եկեղեցւոյն, իսկ արևելեան կողմն վանացս է առանց պարսպի՝ ունելով անդ գերեզմանատուն հասարակաց:

Այս պարիսպ ունի դուռն մի կամարակապ ի հնուց և խաչ մի ի միջոցի կամարին, յերկուց կուսէ դրանն արտաքուստ՝ են վեց խաչքարինք՝ գեղեցիկ փորուածովք երես ընդ հիւսիս:

Մերձ յայս դուռն է գիւղ վանացն, յորում են երեք և չորս աղքատին տունք, ի ներքս պարսպին են աւերակք տանց, յորս է կամարակապ հին գոմն անասնոց, մնացեալ ի նախնեաց՝ և է աւերակ նոյնպէս, բաց ի քանի մի կամարացն:

Երկրորդ դուռն, որ ի ներքին պարսպի վանացս, ի յետին աւուրս փայտածածկ արարեալ է Յակոբ վարդապետ պօլսեցի, որ հայի ընդ արևմուտս, և այս դուռն հայի ուղղակի ընդ մեծ սրահն վանացս, ընդ որ մտանեն ի ժամատունն Սրբոյն Յովհաննու:

Յորմն դրանս այսորիկ, ընդ յաջակողմն գոյ այս արձանագիր ի վերայ կարմիր վիմի. «Շնորհիւ տեառն նորոգեցաւ սուրբ վանացս զանգակատունս, շրջակայ պարիսպս, և մեծ եկեղեցւոյս սարգերը[2] պարագայիւքն ՝ի թուոջս ՌՄԼԷ., սկսեալ իշխողութեամբ Ալի Բէկին և Ահմատ Բէկին յաւուրս շամբեցի Յովհաննէս վարդապետին. որք հանդիպիք, տուք ողորմի. աստուած և ձեզ ողորմեսցի»:

Ի ներքին սրահի աստ են կամարակապ հին խոհարան վանացս և քանի մի կոփածոյ սենեակք, ի ձախմէ սրահին գոն ի միում կարգի չորեքին քարակոփ սենեակք վասն ուխտաւորաց և միաբանից, որք ունին սակաւ ինչ աւերանս հնութեան, ի կարգի սոցա յարևելեան ծայրի է նշխարատունն ի Վաչէ իշխանէ:

Իսկ մատրունք և գերեզմանք, ևս և խաչվէմք, բազումք են ի պարսպի վանացս յերկուս սրահսն ևս, յաջակողմն Սուրբ Յովհաննէս եկեղեցւոյն, որ աւագագոյն է, քան զամենեսին, կից ընդ

1 Այս ղուլէ (աշտարակ), որ է ի ներքս պարսպին, կից երկրորդ դրան նորա, է այժմ աւերակ:

2 Եկեղեցւոյ աստիճանները կհասկացուին:

որմոցն է փոքրիկ եկեղեցի կիսաւեր, ոյր խորանն կիսով չափ մնայ տակաւին կանգուն: Ի վերայ խորանիս լեալ է յառաջագոյն երեք փոքրիկ մատրունք գմբէթարդ, որոյ աւերակք հոսեալ են ընդ մէջ եկեղեցւոյն, իբրև բլուր կուտեալ ի տեղւոջն:

Ի շրջապատս խորհրդանոցի այսր եկեղեցւոյ գտաւ արձան յիշատակի այսպիսի. «Տէ՛ր Աստուած ողորմեա՛ Ռուզուքանայ 'ի միւսանգամ քո գալստեանդ ամէն»:

Ի ձախակողմն Սրբոյն Յովհաննու են երեքին կամարամապ շինութիւնք, որք երևին լինել մատրունք գերեզմանաց, կից միմեանց առանձին դրամբք ի միում կարգի, ի միջի սոցա են գերեզմանք նախնի թագաւորաց , կաթողիկոսաց, եպիսկոպոսաց և նախարարաց, ևս և յիշատակատուաց, զի ոչ կարացաք ստուգել զանուանս նոցին ի գերեզմանաքարանց, եղծելոց ի հնութենէ:

Մին յերից մատրանցս է օրոցաձև, ունելով խորան և սեղան պատարագի, ուր և մեծամեծ խաչվէմք ընդ արևելեան որմով:

Ի վերնայարկի մատրանցս այսոցիկ են դարձեալ երեք գեղեցիկ մատրունք փոքրիկ գմբէթազարդք, երեքին ևս միաչափ երկայնութեամբ ի չորս կանգուն և երկու լայնութիւն, յորս են սեղանք և խորհրդանոցք, որք և փոքրիկ դրամբք կցեալք ընդ արևելեան անկիւն ժամատան Սրբոյն Յովհաննու: Ճարտարապետութիւն այսոցիկ մատրանցս է կարի արհեստաւոր, շինութիւնքն՝ ամբողջ և անարատք, առանց իրիք հնութեան:

Յետուստ երից ներքնայարկ մատրանցն կան երկու քարաշէն սառնատունք, իբրև մեծագոյն գուբք, երկմարդաչափ խորութեամբ, յորս լնուն ձիւն ի ձմերան ի պէտս ամառան, զի մենաստանն անդր սառուցանէ զջուր յամարայնի՝ գրաստուք կրելով զայն ի ձորոյն ի վեր:

Կառավարութիւն վանացն է ի ձեռս առաջնորդին Կարսայ, որ դնելով անդր զոմն վանահայր, զտարեկան սնունդն ժողովէ ի շրջակայ գիւղօրէից Կարսայ, Կաղզվանայ և այլ մերձակայից, որք ի հնուց եղեալ Հոռոմոսին վանաց սեպհական ժողովուրդք:

Յաճախ ի Հոռոմոսին վանս գնան յուխտ ժողովուրդք արևելեան մասին Շիրակայ ի սահմանին Ռուսաց, առաւելապէս յայն գիւղօրէից, որոց յափունս Ախուրեան գետոյ են բնակութիւնք, և էին սեպհական ժողովուրդ այնորիկ նախ քան զտիրապետութիւն երկրին Ռուսաց:

Զառաջեաւ վանացն, ի մէջ ձորոյն ի հիւսիսոյ, ուր գերեզմանքն են հնոյ ժամանակի, կառուցեալք են երկոքին գեղեցկաշէն

տաճարք, անուամբ զօրավարաց Ս. Մինասայ և Ս. Գէորգայ իբրև յանապատի, զորոց զտեղագրութիւնս չեղև միջոց մեզ առնել:

Ընդ կողմն հարաւային դրան Ս. Մինասայ եկեղեցւոյ է գերեզման Աշոտ Թագաւորի, ունելով այսչափ արձանագիր. «Աշոտ Թագաւոր Հայոց»:

Իսկ Տաճար Ս. Գէորգայ, կառուցեալ ի թուին Հայոց ՆԿԱ. ի Գագկայ Շահնշահէ, ունի արձանագիր շինութեան արտաքուստ, յարևելից ի վերայ որմոյ սեղանոյն ըստ այսմ:

«Թիւ ՆԿԱ. ո՛վ հռչակաւոր, դու մեծ, անուանիդ 'ի վկայս սուրբ Գէորգէոս, օգնեա բարեխօսութեամբ Գագկայ Շահնշահի շինողի զվկայարանս զայս քոյով անուանակոչութեամբ, 'ի քոյդ բարեխոսութիւն յուսագնեալ. զի ընկալցի զողորմութիւն 'ի Քրիստոսէ յԱստուծոյ յանվախճան արքայութեան ընդ ամենայն արդարացեալսն ապաշաւանաւք, հասանել լուսոյ փառաց որդւոյն Աստուծոյ 'ի վերջնում գիշերին 'ի ծագել մեծի և աներեկ առաւաւտին, այցելութիւն գտանել առաջի ահաւոր բեմի անաչառ դատաւորին աղաչեմք»:

Զայս տեղագրութիւն արարաք ի վանս անդ Հոռոմոսին յամի 1851, յորժամ յայցելութիւն գնացաք քաղաքամօրն Անւոյ, և էր վանահայր վանացն Պետրոս վարդապետ:

Ա. ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՐՍԱՐԱՇԻՆՈՅ [ԵՒ ԱՅԼ] ՎԱՆԱՑՆ Ի ՇԻՐԱԿ[1]

Մարմաշէն[2] անուանեալ հոյակապ եկեղեցին, շինեալ յափն Ախուրեան գետոյ ի Շիրակ, ի Վահրամայ Պահլաւունւոյ, յընդարձակ ձորամիջին, ի տափարակ վայրի՝ ի հիւսիսոյ արևմտից մերձ ի շրջապատ լերինսն Տայոց գաւառի, յայժմեան տիրապետութեան Ռուսաց յարևելայ մասին Շիրակայ:

Երեք հոյակապ եկեղեցիք են՝ կոփածոյ կարմիր քարամբք, գմբեթաւորք և կամարազարդք արտաքուստ:

Միջին մեծն, որ և Մարմաշէն՝ է անսիւն, երկայնութիւն նորա յառաջոյ բեմին ցդուռն արեւմտեան՝ է տասնևինն քայլ և տասնևվեց ի լայնութիւն, ունի զմի սեղան պատարագի, կիսաբոլորակ առանձին կամարաւ ի ներքոյ արևելեան կամարի, որ ի վերայ երկուց առաջնոցն որմասեանց՝ լայնութիւն ունելով տասն քայլ ըստ դրից սեղանոյ Անւոյ կաթուղիկէին սրբոյ:

Ի կիսաբոլորակ դիրս անդ սեղանոյն յետուստ խաչկալին են կիսամարդաչափ բարձրութեամբ եօթն պատուհանք յորմն՝ կամարաձիգ և սիւնազարդք ի փոքրիկ դրութիւնս իւրեանց, յորոց ի գլուխս է ուղղաձիգ շրջանակ ծաղկանց միւսիովն քարամբք և ի ներքուստ նոցա՝ կամարք ըստ գլխոցն, այլ ոչ ծաղկենկարք:

Ունի զերկուս խորանս յաջմէ և յահեկէ սեղանոյն, որոց դրունք բացեալ են ստորև, քան զայն, յորս իջանեն ի սեղանոյն առանձին սանդղովք, որոշ եղելովք ի սանդղոց սեղանոյն, զի արևելեայ երկոքին որմասիւնքն փակեալ են յետուստ զառաջս դրանցն խորանաց, և միջոցք ընդ դրունսն և ընդ որմասիւնս, բաժանեալ գոլով ի միմեանց, ի բարձրութեան անդ արկեալ են այլ կամարք նեղսագոյնք, որովք միացեալ է սիւնն ընդ որմոյն, և ի գլուխս նեղսագոյն կամարացն, ի միութեան անդ բացեալ են փոքրիկ դրունք քառակուսի, ընդ որս վերնայարկք խորանացն և ելք ի տանիս եկեղեցւոյն:

Զորեքին որմասիւնք եկեղեցւոյն զձև ունին յար և նման սեանց կաթուղիկէ եկեղեցւոյն՝ ի խորշս հնգեակ անկեամբք և կրկնակամարօք, յորոց վերայ հաստատեալ գմբէթն՝ կարի շքեղ բարձրութեամբ, չորիւք լուսամտօք:

1 ԱՐԱՐԱՏ, 1870, մայիս, էջ 9-13

2 Մարմաշէն կոչեցեալ վանք է ի գիւղն Ղանլիճայ ասացեալ, յեզր Ախուրեան գետոյ ի Շիրակ ի հիւսիսոյ Ալէքսանդրապօլու:

Յորմն արևմտեան են այլ երկու փոքրիկ որմասիւնք՝ կրելով ի գլուխս իւրեանց զնեղսագոյն կամարս ստոր, քան զչորեսին հանդիպահայեացսն ի ներքոյ կաթուղիկէին, որով սակաւ ինչ ընդարձակեալ յետին դաս ժողովրդեան:

Այս հոյակապ եկեղեցի Մարմաշէն ունի ի գեղեցիկ դիրս իւր զմի դուռն միայն յարևմտից և զերիս լուսամուտս՝ մի ի սեղանն և զերկուս՝ ի հիւսիսոյ և ի հարաւոյ:

Կաթուղիկէն արտաքուստ է կարի հրաշակերտ և սիւնազարդ ի շրջապատսն իւր, անկիւնաւոր կամարաձգութեամբք ի գլուխս լուսամտացն, զորոց զնմանն չունին այլ եկեղեցիք Շիրակայ:

Ըստ սմին օրինակի է և շրջապատ եկեղեցւոյն նոյնպէս խորանարդ սիւնազարդութեամբ և շրջանակք լուսամտացն ըստ ամենայնի դրուագագործք և քերուբաքանդակ:

Սա ևս, ըստ Հառիճոյ Աստուածածնին, ունի արտաքուստ յարևելից, ի հարաւային և ի հիւսիսային որմունս՝ զբարձրադիր խորշս ծոցացեալս հաւասար բարձրութեանց որմասեանց, որ ի ներքուստ ի մէջ եկեղեցւոյն՝ գեղեցիկ կամարազարդութեամբք, իսկ շրջանակք եզերաց տանեաց տաճարին համակ են մանրածաղիկ նկարք:

Ժամատուն փոքրիկ, կառուցեալ ի վերայ չորից ութանկիւնաւոր և միապաղաղ սեանց, յառաջոյ արևմտեան դրան տաճարին, որոց այժմ միայն ներքնախարիսխք և կիսակործան սիւնք տեսանին անկեալ առ տեղեաւն, որպէս և որմասիւնքն չորեքին ի նորոգ շարուածս շրջապատ որմոցն զառաջեաւ եկեղեցւոյն ի ներկայ բնակչացն:

Առ դրան եկեղեցւոյն երկուստեք գոն տապանք ննջեցելոց, յորս արձանագիրն հիւսիսակողման վկայէ լինել և գերեզման Վահրամայ իշխանին Պահլաւունւոյ՝ նախկին հիմնադրի եկեղեցւոյս, և առ նմա յետոյ ուրեմն ամփոփեալ մարմին Խարիփ Մագիստրոսին՝ եղբօր տէր Գրիգոր արհի եպիսկոպոսին, որ ի զարմէ Իշխանին Պահլաւունւոյ ծագեալ, յետ իբր հարիւր ինն սուն և վեց ամաց իշխանութեանն, վերստին նորոգեաց զսուրբ ուխտն Մարմաշէն, ա՛յն է՝ յամի Տեառն 1225 (ՈՀԴ), բայց զի չունին տապանագիրս և ոչ մի ի նոցունց, վասն այն և անյայտ մնայ գերեզման Պահլաւունի Իշխանին:

Իսկ մարմին Սոփիա անուն կնոջ Վահրամայ՝ դստեր Տիգրանայ Հայոց մարզպանի՝ տեառն Անձևացեաց Վասպուրականի, գտանէր ամփոփեալ մերձ ի վերի վանքն ասացեալ յարձանագրին՝ յայժ-

մեան վերի փոքրն Ղանլիճայ, կոչեցեալ սուրբ Ստեփաննոս, ըստ նոյն արձանագրին վկայելոյ, ոյր և տապանագրի գերեզմանին ունէր օրինակ զայս. «Այս հանգիստ է Սոփիա աղախնոյ Քրիստոսի կնոջ Վահրամայ Պահլաւունի Իշխանաց Իշխանին դստեր Տիգրանայ Հայոց Մարզպանի տեառն Անձևացեաց մեծին Վասպուրականի. կիսօրեայ առ Աստուած փոխեալ թաղեցայ. և թողի զաւակս իմ տրտում. աղաչեմ յիշեսջիք զիս, և Աստուած ձեզ ողորմեսցի. 'ի ՆԿԴ թուին»:

Այլ զայս տապանավէմ յամին 1824՝ փոխադրեալ անտի յայժմեան ներքին Ղանլիճայ գիւղ, եղեալ են ի վերայ Պօղոս անուն ուրումն քահանայի՝ վախճանելոյ անդէն:

Ոմանք ի գերեզմանացն, որ առ դրան Մարմաշինոյ, ունին զյայտնի տապանագրութիւնս ըստ այսմ.

«Այս հանգիստ է Ապուղամրի որդւոյ Մագիստրոսի...», *որ երևի Հայր Գրիգոր արհի եպիսկոպոսի՝ նորոգողի տաճարիս ի թուին, որպէս ասացաք՝ ՈՀԴ:*

«Այս է հանգիստ Ղա... իս որդւոյ Ապուղամրի»... *Եւ այս երևի՝ եղբայր նորա:*

Ի վերոյ քան զայսոսիկ դամբարանս ի հիւսիսակողմն դրան տաճարին գոյ խաչ մի փոքրիկ՝ փորեալ ի վիմի յորմն, յորոյ ի ներքոյ՝ «Թիւ ՆՀ. Ես Մատաթէս կանգնեցի»:

Ի հիւսիսոյ և ի հարաւոյ մեծի տաճարին, որպէս ասացաք ի վերն, են երկու փոքրիկ եկեղեցիք՝ կոփածոյ քարամբք և սրածայր կաթուղիկէիւք, որոց քարինք որմոցն, արտաքուստ վերուստ ի վայր քակեալ յայլազգեաց, բարձեալ են այլուր, յաղագս որոյ և չգտաւ արձան յիշատակի յերկոսին ևս:

Ի շրջապատս եկեղեցւոյս չեղև նշմարել մեզ զհետք ինչ մենաստանի, որ եղեալ է ըստ արձանագրին վկայելոյ. «Վանք քահանայից կրօնաւորաց հաճոյացելոց Աստուծոյ, առ 'ի լնուլ զպէտս կարևորս զիւրեանց և զեկաց», *ուր և վանահայր լեալ յաւուրս մեծի առն Վահրամայ՝ սուրբ հօր Երեմիայի և Սոսթենեսի՝ նորին յաջորդի:*

Արձանագիրք չինութեան և նորոգութեան Մարմաշինոյ ուխտին, որք առ մեօք ևս անեղծանելի կան յորմունս նորա՝ վկայք նախնի փառաց և հարստութեանն, և ինչ ինչ յիշատակատուաց, ևս և աւերանացն և ամայութեան ըստ ժամանակին բերման, են ամենայնն այսոքիք ըստ այսմ կարգի:

Երշանագիր շինո-ՐԵԱՆ արդաւէս-ով 'ի վերայ Հարա-ային որմոյն

«Շնորհիւն Աստուծոյ ես Վահրամ իշխանաց իշխան և Անթիպատ Պատրիկ որդի Գրիգորի Իշխանի Հայոց մեծաց, 'ի ցեղէ Պահլաւունի և 'ի զարմից սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի, որ յաղագս 'ի Քրիստոս յուսոյն հիմնադրեցի զսուրբ և զտիեզերական ուխտս Մարմաշէն, սկսեալ 'ի ՆԼԷ. թուականին Հայոց յաւուրս Սմբատայ որդոյ Աշոտոյ Հայոց թագաւորի, մինչև 'ի ժամանակս Յովանիսի որդոյ Գագկայ Հայոց Շահնշահի առն իմաստնոյ շինողի և խաղաղարարի: Եւ 'ի թուականիս Հայոց ՆՀԸ. և կատարեցաք մեծաւ ջանիւ և բազում ծախիւք ես և մայր իմ Շուշիկ Հայոց Տիկնաց Տիկին, և եղբարք իմ Վասակ իշխանաց իշխան, որ նահատակեցաւ 'ի Թուրքաց պատերազմի, և Ապլխարիպ Հայոց Մարզպան և մանուկն Համզէ. որք էաք ամենայն տամբ և տոհմիւ հաւատարիմք տերանց մերոց. և նահատակեալ 'ի վերայ տանս Հայոց աշխատութեամբ և արեամբ մեր և որդոց մերոց և գանձուց առատութեամբ. և ամենայն հնարիւք խնդրէաք զխաղաղութիւն աշխարհի և զհաստատութիւն եկեղեցեաց. շինեցաք և այլ բազում եկեղեցիս և վանորայս, բայց զտեղի հանգստեանս մերոյ առաւել պատուով մեծացուցաք և լիացուցաք ամենայն գոյիւք, լերամբք և դաշտաւք, աւանդեցաք 'ի սա գեղս և ագարակս Գանձագինս զԲագարանի գեղ, և զիւր ագարակն. զԳողիսն, զՊորտանգն, զՍրագէճ[1] և զԱպատաղասմանէս և զԵզնկայն, 'ի յԱւշականի այգիք և երեք ջաղաց և երկու ջաղաց 'ի Դողս, 'ի յԱշտարակի այգի, 'ի Կարբոյ դաշտի այգի, 'ի Սերկեւլի այգի, 'ի Վժան այգի[2] 'ի Մրենի այգի, 'ի յԱնի տներ և կղզականք. և զարդարեցաք զսա ամենայն կազմութեամբ 'ի յիշատակ յաւիտենից մեզ և որդոց մերոց: Եւ կարգեցաք 'ի ձեռն սուրբ հաւր Երեմիայի և որ զկնի յաջորդեցաւ Սոսթենէս նորին որդիացեալ: Եւ փոխարէն հատուցման ընկալեալ մեր 'ի ժառանգաւորաց սուրբ Ուխտիս տարին Զ. քառասունք անխափան, մինչև 'ի գալուստն Քրիստոսի: Արդ եթէ ո՛ք 'ի մերոց կամ յաւտարաց ով ոք[3], որ զմեր տուրս 'ի սուրբ ուխտէս պակասեցուցանէ, կամ հայր որ զմեր ժամս խափանէ, ինքն որոշեալ լիցի 'ի Քրիստոսէ. և դատողն նորա սատանայ լիցի. և մի՛ տեսցէ զփառս Աստուծոյ. իսկ որք հաստատուն պահեն զաւանդս մեր, աւրհնեալ եղիցին»:

1 Ի տպագրեալն Ս. Հօր Շահխաթունեան «զԱրագէճ»:
2 Գիւղորայքն ի յՕշականայ եւ մինչ ցթիւն 2.են յԱրագածոտն գաւառի, եւ անտի ի Մրենայ եւ ցվերջ ի Շիրակ:
3 Ի տպա. Շահխաթունեանի դնի. աւագ:

Մ՝ԷՐՅ ԱՐՅԱՆԱԳՐԵՆ ՇԻՆՈ-ՐԷԱՆ 'Ի ՆՈՅՆ ՀԱ-ԱԱՐՈ-ՐԷԱՆ, Ի ՎԷՐԱՅ ՅԻՇԷԼ ՀԱՐԱ-ՅԻՆ ՈՐՄՈՅՆ՝ ՅԱՐԼ-ՄՈ-ՊՆ ԿՈՅ

«Շնորհիւն Աստուծոյ ես Մարիամ Ափխազաց եւ Հայոց թագուհի դուստր մեծին Սենեքարիմայ եւ թոռն Գագկայ Հայոց արքայի որ ետու զՏարուս 'ի սուրբ և 'ի տիեզերական ուխտս Մարմաշէն առաջնորդութեամբ հաւր Սոսթենէսի վասն Գագկայ իմ պապուն մեղաց թողութեան եւ Կատային իմ հանկանն. եւ հատուցումն բարի ընկալայ 'ի սրբոցս զսեանն Եկեղեցին[1], զսուրբ Պետրոս 'ի Քրիստոս պատարագաւ զտարին ողջոյն Կատային իմ հանկանն մինչև 'ի գալուստն Քրիստոսի: Արդ եթէ ոք 'ի մեծամեծաց կամ 'ի փոքունց 'ի Հայոց կամ 'ի Վրաց՝ որ այս գրոյս հակառակ կայ եւ զիմ գիւղն զՏարուս 'ի յայս ուխտէս հանէ, ինքն ելցէ 'ի կենացն Աստուծոյ եւ պարտական լիցի արեանն Քրիստոսի եւ մի՛ տեսցէ զփառս Աստուծոյ. իսկ որ հաստատուն պահեն զաւանդս մեր, աւրհնեալ եղիցին»:

ԸՐՅԱՆԱԳԻՐ ՎԵՐԱՆՈՐՈԳՈ-ՐԷԱՆ Մ՝ԱՐՄԱՇԻՆՈՅ ՅՈՐՄ ՀԻ-ՍԻՈՍՅԻՆ ԱՐՔԱ-ՊԷՈ-ՍՊ

«Ի ժամանակս բարեպաշտից եւ Աստուածասիրաց պատրոնաց Աթաբակ Իւանէի եւ Մանդատոր Թախուցէ Շահանշահի, հրամանաւ

1 «Սևան եկեղեցի սուրբ Պետրոս կոչեցեալ, երեւի լինիլ միումն ի կողմնական տաճարացն փոքունց, յաղագս սիւնաձեւ երեւելոյն երկուստեք մեծի եկեղեցւոյն, յորոց Հ. Շահխաթունեան հաւանական համարի Մարմարաշէն անուանակոչել մեծի եկեղեցւոյն, բայց, որպէս ոչ ցուցանեն արձանագիրք զսոյն, նոյնպէս եւ երկոքին կողմնական տաճարքն փոքրիկք ոչ տան զհաւանական կարծիս յինքեանց այնպէս անուանակոչելոյն, զի հետաքրքրական մտաց, այս է հաւանական, եթէ յանուն ճարտարապետին իցէ կոչեցեալ Մարմաշէն, ըստ որում եւ այսմ կարծեաց համաձայն գայ բանք արձանագրին վերանորոգութեան,որ ստորեւ, ուր, որպէս երեւի, վերանորոգողք եկեղեցւոյն գոլով յազգէ եւ սերունդք Վահրամայ հիմնադրին, յետ վերանորոգութեան իւրեանց անուանեն զեկեղեցին Մարմաշէն, Տիրաշէն, իբրու ի տեարց վերանորոգեալ: Այլ ի վերայ այսր ամենայնի, լաւ եւս էր նմին իսկ Վահրամայ կամ զիւրաշէն եկեղեցին կոչել Վահրամաշէն, եւ յանուն սրբոյ ուրումն կառուցանել զայն, որպիսիք գոն եւ այլուր՝ Վասակաշէն, Համամաշեն: Եւ կամն զբացատրութիւն Մարմաշէն ուխտին յաւելուլ յարձանագիրն եւ չծանրաբեռնել ի վերայ հետաքրքիր յետագայից, զընդունայն վէճս այսպէս կամ այնպէս անուանակոչութեան եկեղեցւոյն:

Իսկ որք ակնարկեն Մարմարաշէն կոչել զՄարմաշէնն, հեռի են ամենեւին ի մտաց հիմնադրին եւ նորին արձանագրութեանն, զի ոչ միայն չիք ամենեւին ի նմին եկեղեցւոջ մարմարոնեայ շինուածք, որպէս նոքին կարծեցին, այլ եւ չիք եւ ոչ մի քար մարմարոնեայ ի շինուածս եւ յորմունս նորա, եւ ոչ իսկ հանք մարմարոնեայց լուեալ ցարդ եւ նշմարեալ ի շրջապատս եւ ի մերձակայս նորա: Եթէ լինէր, ապաքէն տէրութիւնն Ռուսաց արդէն վաղուրեմն էր բացեալ յօգուտ արքունի, թող զԱղեքսանդրապօլսոյ քաղաքացիս զեռանդունս ի սէր շինութեանց:

սոցին վերստին նորոգումն եղև հրաշափառ տաճարին Աստուծոյ, Մաւրս լուսոյ Կաթուղիկէիս Մարմաշինոյ, 'ի ձեռն որդոյ Ապուղամրի Մագիստրոսի տէր Գրիգորոյ արհի Եպիսկոպոսի և հարազատի իմոյ Խարփին թոռանց Վահրամայ Իշխանաց իշխանին, զարմից և շառաւիղին սրբոյն Գրիգորի շինողի 'ի հիմանց մեծաւ տենչմամբ եւ յուսով զսա վասն բազմագումար քահանայից, եւ պարգևեալ արդիւնս յոլովս գիւղաւրայս, այգեստանս կուղպականի եւ ջաղացանի, որ եւ ցուցանէ իւր արձանագիրն մի ըստ միոջէ. եւ փարթամացուցեալ ամենայն գոյիւք առ 'ի լնուլ եւ առաւելուլ զպէտս կարևորս զիւրեանց եւ զեկաց. եւ ժամանակս ո՛չ սակաւս, զի աւերեալ էր յանաւրինաց եւ զվանքս գեղ արարեալ եւ զկաթուղիկէս բերդանման ամրացուցեալ, եւ կայր 'ի խաւարի եւ ի սգաւորութեան զրկեալ յամենայն գոյից մինչև յաւուրս յայսոսիկ: Իսկ 'ի ՈՀԴ. թուականիս Հայոց քաջ եւ արի զաւրականն Քրիստոսի սիրելի եղբայրն իմ Խարիփն իմով կամակցութեամբ խորհուրդ բարի 'ի միտ արկեալ ազատել զսա 'ի տղմուտ եւ 'ի զազիր մթնազգածութենէն, հասուցանել նախկի փառաւորութեանն, հանեալ արտաքս զշինականսն, և եղև բնակարան սրբոց քահանայից եւ կրաւնաւորաց հաճոյացելոց Աստուծոյ, զարդարեցաք զսա սպասիւք պայծառազգեստիւք սրբութեամբք ոսկեղէն և արծաթեղէն հին և նոր կտակարանաւք եկեղեցականաւք և ընձայեցաք 'ի սմա նուէր զմեր հայրենի գեղն. զԱզատա, եւ որ 'ի վանիցս, հողիս վերայ շինեցաք, եւ անուանի Տիրաշէն. եւ յայսկոյս գետոյն ջաղացանի 5, որ կան 'ի կամրջէն 'ի վայր եւ վեր զխոտ, զհող եւ զոր ինչ իսկզբանէ ունէին, եւ 'ի քաղաքիս զմեր պապենի հայրենիք եկեղեցին զսուրբ Ստեփաննոս բոլոր ամենայն ժողովրդեամբն, եւ երկու այգի 'ի Մարմէտի որ 'ի նախնեաց մերոց 'ի մեզ էր հասեալ. եւ միաւորեցաք զվերի վանքն մեծ վանիցս իւր ամենայն ստացուածաւք եւ լիցի հրամանաւ միոյ Առաջնորդի. մինչ այս առ այսչափ, կատարեցաւ առ ժամայն գեղեցկագեղ եղբայրն իմ Խարիփ Մագիստրոսն գովեալն յամենայն լեզուաց, մարտիրոսացաւ 'ի պատերազմի անաւրինաց, եւ միայն մնացի ես Գրիգոր եղկելի եւ զրկեալ 'ի նմանէ, զմարմին նորա բերեալ թաղեցաք առ դրան սրբոյ կաթուղիկէիս մերձ առ նշխարս հաւուն մերոյ Վահրամայ իշխանի, եւ փոխարէն հատուսցեն սպասաւորք սորա ընդ մերոյ արդեանցս զոր արարաք, զԿաթուղիկէիս զաւագ խորանին պատարագ յանուն նահատակին Քրիստոսի, Խարփին կատարել յամենայն օր իսկզբանէ տարոյն մինչև ցկատարումն տարոյն յայսմ հետէ մինչ 'ի ծագումն որդոյն Աստուծոյ. որ ոք խափանէ կամ շորթել ջանայ յընչից եկեղեցւոյս, որոշեսցի 'ի փառացն Աստուծոյ եւ զրկեսցի 'ի մշտնջե-

նական կենացն. կատարիչք գրելոցս աւրհնեսցին յԱստուծոյ եւ 'ի սրբոց նորա յոգի եւ 'ի մարմին»:

Երշանագիր 'ի ճակատ գրան Հի–սիսակողման խորանին

«Ես տէր Գրիգորս տեառն Սարգսի ետու զիմ սուրբ նշանս 'ի սուրբ ուխտս Մարմաշինի. և փոխարէն հատուցման զՎարդեւորին քառասունքն և զԽաչին ութաւրէքն, մինչ ես կենդանի եմ, տեառն Սարգսի, եւ յետ իմ վախճանին՝ ինձ. եւ եթէ ոք առաջնորդ որ լինի խափանէ, նզովեալ եղիցի. 'ի սմա կատարիչ գրոյդ աւրհնեալ եղիցին»:

Բ. Տէղագրոն–Ռի–ն Հոգեվանէ կոչեցեալ վանայ, որ 'ի Հարա–ային Եղբ գա–ատ–ին Շիրակայ

Հոգեվանք անուանեալ հոյակապ եկեղեցի՝ է մերձ ի Սէօկիւթլու գեղջ յարևմտեան հովիտս ստորոտին Արագածու լերին, ի ձորամէջ վայրի, ի գաւառին Շիրակայ՝ կառուցեալ փառահեղ կաթուղիկէիւ կոփածոյ ցարդ ամբողջ ի վերայ առուին, որ գայ ի գեղջէն, և խոտորեալ ի հիւսիս՝ գնայ, ելանէ ի Բողազքեասան կոչեցեալ գիւղ ի նոյն գաւառի և է հեռի ի Սէօկիւթլուայ՝ գրեթէ մի ժամ հեռաւորութեամբ, ի լանջս արևմտեան գօտեաց մեծի լերինն՝ զերես յարևելս ունելով:

Եկեղեցին, Հոգեվանք կոչեցեալ յարձանագիրս իւր՝ է անսիւն՝ հաստատեալ կաթուղիկէն ի վերայ կամարաց չորից որմասեանց, որք են երեք բոլորակք միակցուրդք ձևացեալ յորմն, ի վեր մինչև ի չորեսին անկիւնաւոր վերնախարիսխն ի ներքոյ կամարացն, յորոյ վերայ և կամար մի բոլորակ կողմնակի անկեալ, ունի ի վերայ զգմբէթն՝ չորիւք լուսամտօք:

Արտաքին երևոյթ գմբեթին՝ է միանման անզարդ բոլորակ՝ կարմիր քարամբք, բայց յեզերս գմբեթայարկին՝ քանդակագործ սևերանգ գործեալ, իսկ յարկ նորա՝ խորշ խորշ քարամբք բարձրացուցեալ մինչև ցգլուխն, ուր փոքր մի առ հնութեանն՝ երևին հետք աւերանաց և առանց խաչի, այլ ի ներքուստ կարի ամբողջ:

Ունի տաճարն զմի սեղան՝ հանդերձ խորհրդանոցիւ, և զերկուս յաջմէ և յահեկէ նորա: Զորս այլ ևս ի չորից կուսէ եկեղեցւոյն են լուսամուտք, ի ներքուստ լայն ձևացեալք, և արտաքուստ նեղսագոյն՝ բարակ և երկայն: Ի չորեսին որմունս նորա արտաքուստ են

երկու երկու խորշք, կիսաբոլորակ կամարօք փոսացեալք յորմն, որոց նմանք տեսանին յոմանս յեկեղեցիս, ստորագրեալս ի մէջն, հարաւային որմն նորա խոնարհեալ է արտաքուստ, այլ ըստ ներքին մասանց ամբողջ, ըստ ամենայնի:

Զերկուս դրունս ունի յարևմտից և ի հիւսիսոյ՝ կիսով չափ թաղեալ ի փլուածն, որպէս և միջին յատակ եկեղեցւոյն, յորում ճակատք դրանց խորանացն միայն երևին, ընդ որս մարդիկ, ի ծունկս անկեալ, հազիւ մտանեն: Ի ճակատս երկուցն ևս դրանց գոն փառաւոր և ընդարձակ յիշատակաց արձանագիրք ի վերայ միակտուր և կիսաբոլորակ քարանց, ի ներքոյ կամարացն դրանցն, յորոց և հիւսիսայնոյն յիշատակարան ունի զթուական ի գլուխ գրոցն ըստ այսմ. Թ. ԾԳ.: Այլ արձանագրութիւնքն բովանդակ, գրեթէ եղծեալ յանօրէն ձեռաց, փորելով զտառսն մեծ մասամբք ի տողավերջս, որպէս ի ներքոյ:

«Ի տէրութեան .....
Ոտ Վարդան .....
Տէր և ծ.....
.....
.....
.....»

Իսկ ի վերայ արևմտեան դրանն արձանագրի՝ գտաւ և անուն վանացս և նորին Առաջնորդի՝ գուցէ ի չինութեանն, և ընթերցաւ ինչ ինչ յեղծեցելոցն ի միջավայրին, օրինակ զայս:

«... ի հոգեվանքս...
յառաջնորդութեան հաւր Գէորգայ
տարին դ. պատարագ... »

Յորմն արևելեան հարաւոյ գրի արձանագիր անվերծանելի:

Գ. Տէղագրութիւն Սէօկիւթլու անուանեալ գեղջ ի որ առ նովա-Բարայրին Հաշակեր-ն ՝ի Շիրակ

Սէօկիւթլու (հին անունն անյայտ) գիւղ ի գաւառին Շիրակայ՝ անկանի յարևմտեան ստորոտս լերին Արագածու, ընդ կողմն Շիրակայ հարաւային մասին լեռնամիջի, յորում արևմտեան և արևելեան բլուրք տարածին աղխաղխեալք մինչ ցհարաւային եզերս դաշտավայրաց գաւառին, որոց ծայրք սկզբնաւորին ի հարաւային արևմտեան ստորոտէ լերինն, յոր մերձ են Ատիեաման և Մաստարայ ի հարաւոյ այսր գեղջ:

Գիւղն՝ կարի ընդարձակ անկեալ ի լանջս արևելեան բլրակին, կցորդ եղելումն աղխաղխք բլրոց, որք ձևացուցանեն զերկայնանիստ լեռնադաշտս արտատեղեաց նոցա. աստանօր ի վեր, ընդ փոքրիկ ձորակ բլրակին, ի բարձուէ գեղջն, է քարայրն մեծ, զոր շրջապատեն մեծամարմին, կարմիր քարինք, յորում և բղխէ աղբիւրն ականակիտ՝ ընթանալով խոխոջմամբ ընդ գիւղն, ի վայելս գիւղականացն և յարբումն անդաստանաց նոցա:

Այսմ Քարայրի զանուն տան բնակիչքն՝ Լուսաւորիչ, առ գոլոյ ի քարինս ոմանս ի նմին՝ ձևակերպութեանց խաչաց անտաշ և բիրտ փորուածովք: Ի միջակիտի քարայրին կանգնեալ են վեց թզաչափ բարձրութեամբ բոլորշի քար սիւնաձև, յոր մածուցանեն զմոմ՝ վառեն, և խունկ առ նովաւ ծխեն, իբր թէ Լուսաւորիչն Գրիգոր անդ իցէ աղօթեալ կամ ճգնեալ, յորում դևք առաւել ընակին, քան Լուսաւորիչն, յոյր սակս և ի ներքոյ խաչին, որ փորագրեալ ի վերայ սեպացեալ ապառաժին կախելոյ զգլխոյ սիւնակին, յետինք առ խարբալելոյ (զբնակիչսն) զռամիկն, փորագրեալ են Սուրբ Գրիգոր անունս անարհեստ գրչաւ:

Մինչև ցե՞րբ Հայաստանեայք կուրօրէն այսպէս զհաստատուն հաւատս քրիստոնէութեան նսեմացուցանեն ի քարինս և ի ծերպս քարանձաւաց, ըստ թոյլտուութեան առաջնորդաց, և ի հնարաւոր անձնական շահուցն պէտս, զորոց զգործս ահա՛ ես լռեմ:

Դ. Տեղագրութիւն Մակարայ կոչեցեալ վանացն, առ երկի Մահմուտ-ճուղ ասացեալ գեղջն, ի Հարա-այնն մասին Շիրակայ

Մակարայ վանք կոչեցեալ մենաստան գոլով ի վերոյ քան զՄահմուտճուղ գիւղ ի ստորոտս Արագածու, յոտն ձորակին, որ ի հովտացն իջանէ ընդ զառիվայր գեղջն, է կառուցեալ կոփածոյ քարամբք, գմբեթայարկ վայելուչ կերտուածովք: Եկեղեցին ունի զմիջին լայնութիւն տասներեք քայլ և զերկարութիւն՝ տասնևինն, և զերկուս խորանս կից սեղանոյն՝ յաջմէ և յահեկէ նորա:

Կից արևմտեան դրան տաճարին՝ է փոքրիկ ժամատուն, ոյր որմն հիւսիսային կողման միայն երևի կիսով չափ, իսկ ամբողջ շինուածն՝ հիմն ի վեր տապալեալ:

Յորմունս տաճարին գտան ինչ ինչ արձանագիրք, որ եղծեալք, և որ անվերծանելի, յորոց զայսչափ և եթ եղև հնար առնուլ ի գիր:

Ի ճակատ արՒմպէան դրանն

«Կամաւն Աստուծոյ ես Եղբայր անուն ետու զիմ հայրենի այ-գին, զԴանիէլեանց հողն որ յԱղին տան 'ի սուրբ սիօն Մակա-բավանից յառաջնորդութեան Վարդանայ և տէրութեան տեղւոյս Յովհաննէս միակեցի. և սպասաւորք սուրբ ուխտիս սահմանեցին յամեն տարի պատարագել Զ. օր. նոր կիւրակէին շաբաթ աւրն Գ. ինձ. և ահաղուանն աւր Գ., եթէ ոք 'ի մերոց կամ 'ի յաւտարաց խա-փանէ, պատժին յԱստուծոյ. կատարիչքն աւրհնին 'ի Քրիստոսէ»:

Ի ճակատ աջակողմեան խորանին

«ՆԾ. թուականութեանն Հայոց ի Հայրապետութեան տեառն Սարգսի Հայոց Կաթուղիկոսի. և ի թագաւորութեանն Գագկայ Շա-հանշահի, ես Սահակ Հայրապետ...»:

ՅԷպոռ-ոպ խորանին, ի վերայ արՒԷլեան որմոյն արտաքնոյ

«Կամաւն Աստուծոյ ես հայր Վարդան եղէ ...հին շինութեան սուրբ ուխտիս, և բազում աշխատութեամբ շինեցի զվանքս. աղա-չեմ զբնակիչդ զիս և զծնողս յիշեցէք 'ի տէր»:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԵԱՑ ԻՆՉ ՅՈՏՆ ԱՐԱԳԱԾՈՒ

Ա. Տեղագրութիւն Կաթուղիկէ Եկեղեցւոյն Թալնայ[1]

Մեծ եկեղեցին Թալնայ, Կաթուղիկէ անուանեալ յարձանագրութիւնս իւր, այսպէս ունի զներկայ դրութիւն իւր:

Կառուցեալ է ի հիւսիսոյ գեղջն, ի տափարակ վայրի, ի կարկառս քարանց՝ կարի մեծադիր և խաչաձև, համակ սրբատաշ քարամբք և քանդակագործութեամբ ի գլուխս լուսամտաց և ի շրջապատս տանեաց, յարևելից ի վերայ սեղանոյն ունի զերիս լուսամուտս, ի կիսաբոլորակի անդ, որ է արևելեան թև խաչաձև տաճարին, և երկոտասան քայլ լայնութեամբ, որ արտաքուստ երևի բրգաձև: Այսու նմանութեամբ են կողմնական թևք եկեղեցւոյն բաց, ի բոլորակ երկուց լուսամտաց, զորս արևելեանն միայն ունի ի վերոյ, քան զկամար սեղանոյն և նոքին՝ զմի մի և եթ:

Կաթուղիկէ սեանց կառուցեալ է՝ ի վերայ չորիցն ունելով զերկոտասան լուսամուտս, այժմ անկեալ, բաց ի կողմանէ արևելեան հիւսիսոյ, յորում են երեք լուսամուտք խախուտ և քայքայեալք, ունի զերկուս խորանս երկուստեք սեղանոյն և զհինգ դրունս՝ զերկուս յառաջին դասու և զերկուս ի յետնումն, ի հիւսիսոյ և ի հարաւոյ, և զմի յարևմտից խոնարհ, քան զնոսա. ի վերայ այսր դրան են չորք մեծ լուսամուտք, յորոց ի գլուխս հինգ բոլորշիք ընդ կամարաւն, ի ներքուստ այսու ձևով՝ 00, իսկ ի դասու կանանց կամ յերրորդ բաժնի եկեղեցւոյն՝ չորք չորք լուսամուտք յերկոսին կողմանսն, և յարևմտեան որմն՝ մի մի մեծադիր յաջ և յահեակ դրանն՝ ունելով ի գլուխսն զմի մի ևս բոլորշիս. ընդ այսոցիկ ունի և զերկու լուսամուտս յարևելից:

Հարաւայինն, հանդերձ արևմտեան որմով, անկեալ է ի հիմանց մինչև ցգլուխ արևմտեան դրանն, ի 1840 ամի, ի մեծի շարժին:

Զորեքին կամարքն սեանց, յորոց վերայ բոլորակ ընդարձակութիւն գմբէթին, են հաւասար բարձրութեամբ, իսկ կամարքն կողմնականք, որք իջանեն ի սեանց անտի դէպ յորմունս, ի թևս եկեղեցւոյն՝ են խոնարհ, քան զայնս իբրու զԳայիանեայ վանացն ի Վաղարշապատ:

1 ԱՐԱՐԱՏ, 1870, օգոստոս, էջ 121-124

Գտան ինչ ինչ արձանագրութիւնք ի վերայ սեանցն, յորոց սիւնն առաջնոյ դասուն ի հարաւոյ՝ գիր ունելով յիշատակի, ունէր և թուական ըստ այսմ. «ՄԼԲ թուականութեան», և մնացեալքն անվերծանելիք (տես՝ յԲ. հատորի Հ. Շահխաթունեան, եր. 51):

Բ. Մաստարայ

Մաստարայ[1] *գիւղ է ի սպառուածս արևմտեան բազկաց Արագած լերին, ի ծոցամիջի բլրոցն բարձանց աղխաղխելոց յարևմտից, և ի հիւսիսոյ գեղջն, որոց ստորոտք աւարտին ի տափարակ դաշտավայրն երկայնեալ, մինչ ցափն Ախուրեան գետոյ, ի հարաւային ծայր Շիրակայ գաւառին, ըստ որոյ այս գիւղ Մաստարայ յաւէտ անկանի ի հարաւային մասին Շիրակայ քան յԱրագածոտն, քանզի գրեթէ վերջացեալ իսկ է յարևելից նորա ոտն Արագածու, ուստի սկսեալ են աղխաղխ բլրոցն իբրև գօտիք, որպէս ասացաւ, մեծի լերինն, որով և առաւել է մերձ յԱխուրեան, քան յԵրասխ: Իսկ դաշտավայրն տարածեալ յարևմտից գեղջն յԱխուրեան՝ է արտատեղի Մաստարայ գեղջ:*

Եկեղեցի սորա կառուցեալ է ի միջավայրի գեղջն, անուամբ Սրբոյն Յովհաննու Կարապետի, բոլորակ, խաչաձև: Ունի գմբէթ՝ ընդարձակ, հաստատեալ ի վերայ կամարացն թևոց, զի չունի զսիւն, և ի նմա ութն լուսամուտք, չորեքին թև եկեղեցւոյս արտաքուստ են բրգաձև և ունին զմի մի լուսամուտս, իսկ շրջապատ տանեացն՝ հաւասարաչափ բարձրութեամբ, և շրջանակաւոր դրուագագործ քարամբք՝ ի մանրագոյն բոլորակ խորշս փորեալք:

Կաթուղիկէն, լայնանիստ և բարձրաբերձ ի բոլորշութեան իւրում, է անկիւնաւոր, և ընդ մէջ անկեանցն՝ ութն խորշ ծոցացեալք, մինչ ի վերջին շրջանակն, յորմէ և ի վեր աւարտեալ է գմբէթն անխաչ:

Արևմտեան դուռն եկեղեցւոյն, որ շարեալ է յաւուրց պարսկային իշխանութեան, և առ նոքօք պատնէշ ամբարձեալ յարևելից ընդ հիւսիս, ամբարտակ բարձր որմոյն համակ ի կոփածոյ քարանց՝ կայ կիսակործան կանգուն, և ի հիւսիսոյ ցարևմտեան թևս եկեղեցւոյն հիմունք պատնիշացն ցվերին կամարս արևմտեայ դրանն կրաշաղախ կան մնան, նոյնպէս և մարդաչափ բարձրու-

1 Մաստարայ անունս նշանակէ մասն տարայ, զի որպէս աւանդութեամբ հասեալ է առ մեզ, սուրբն Գրիգոր Լուսաւորիչ ի բերելն ընդ իւր ի Կեսարիոյ զմասունս Ս. Յովհաննու, մասն մի անփոփեալ է անդէն, յորոյ վերայ կառուցեալ է եկեղեցին յանուն սրբոյն Յովհաննու եւ գիւղն կոչեցեալ Մաստարայ:

թեամբ պատնէշն ի վերայ տանեաց՝ շրջապատ զկաթուղիկէիւն մնան կանգուն ցարդ և վնասեալ են շինուածոց եկեղեցւոյն ուրեք յանկիւնսն:

Զորս յարձանագրութեանց անյիշատակ թողու Հ. Շահխաթունեան, մեք առնումք աստէն ի նիւթ ստորագրութեան եկեղեցւոյս:

Ի ճակատ արևմտեան դրանն, ի գլուխ լուսամտին առանձին կամարաւ, ուր երևի անուն կառուցանողի տաճարիս, ի մէջ եղծելոցն տառից, յորոց ի միջավայրին փորեալ են խաչ ծաղկենկար, ըստ այսմ.

«Աստուծոյ Աջովն .....
Գրի գոր թոռն Վասակայ շինեցաւ .....
ապաւէնս .....
փրկել զԳրիգոր .....»:

Ի ճակատ հարաւային դրանն՝ ըստ այսմ. «Յամս տեառն Թէոդորոսի Գնունեաց Եպիսկոպոսի շինեցաւ Աստուածածին տունս քաւել զԳրիգոր անարժանս»:

Ի բարձրութեան արևմտեան թև եկեղեցւոյն, ուր գրեալ է արձանագիրն. «Գոհանամ զԱստուծոյ», *ի ներքոյ սորին դնի արձանագիր ինչ՝ հանդերձ թուականաւ օրինակ զայս.* «Ամաց ամ տեառն ՅԺԴ. նաւակատիք սրբոյ Եկեղեցւոյս 'ի յիշատակ Եպիսկոպոսիս»:

Ի ներքոյ սորին՝ արտաքոյ յառաջ բերելոցն ի Հ. Շահխաթունեանցէ, դնի և այս արձանագիր մեծ՝ թողեալ ի նմանէ.

«Ի ՆԾԹ. թուականութեան եւ 'ի Հայրապետութեան տեառն Սարգսի Հայոց Կաթուղիկոսի շնորհիւն Աստուծոյ կամ եղև ինձ Գագկա Շահինշահի որդոյ Աշոտոյ՝ թողուլ զՄաստարաի հակին զաւելորդն ԶՌ. և ածի ԵՌ. վասն կենաց անձին իմոյ, եւ որդոց իմոց, որ չկարէ ոք աւելի քան զայս առնուլ յորդեաց իմոց կամ 'ի թոռանց, եւ եթէ առնու ոք արծաթն այն, եղիցի նմա որպէս զարծաթն յուդայի մատնչի խեղդեալ 'ի կորուստ, եւ յամենայն արժանաւոր սրբոց եւ ի սրբոյն Գրիգորէ նզովեալ եղիցի. եւ մեղաց պարտական առաջի Աստուծոյ»:

Ի ներքոյ սորին գիր յունական:

ΠΘΡLL
ΟΝΤΑΚ

Գ. Տեղագրութիւն եկեղեցիոյն Ատիեամանի գեղջն

Եկեղեցին Ատիեամանու, անուանակոչութեամբ սրբոյն Գէորգայ, է ընդ գեղջն կառուցեալ ի ծործորս արևմտեան բազկաց լերին Արագածու՝ բոլորակ, խաչաձև, քսան և հինգ քայլ երկայնութեամբ, ի ներքուստ սկսեալ ի սեղանոյն ցդուռն արևմտեան, իսկ լայնութիւնն քսան քայլ ի հիւսիսային թևէ ցհարաւայինն, գեղեցիկ շինուած, յար և նման շինութեան Հռիփսիմեայ վանաց ի Վաղարշապատ և իւիք ևս գերազանց քան զայն, զի ընդ մէջ բոլորակ թևոց խաչաձև եկեղեցւոյս, ի չորեսին կուսէ ևս են նեղսագոյն բրգաձև թևք իբրև ճաճանչ ի թևս խաչի: Ի չորեսին յայսոսիկ բոլորական են դրունք չորից խորանաց, որպէս և Հռիփսիմեայն, յարևելից և յարևմտից: Ի գլուխս այսոցիկ բրգաձև անկեանց, եկեղեցւոյն սեղանոյն և չորից խորանացն, ի շրջապատս գմբէթին, ի վերայ տանեացն են մի մի բաւականաչափ պահարանք ընդարձակ ընդ ամենն տասն, յորս են գաղտնի ճանապարհք ընդ մէջ իրերաց և յորմունսն ի վայր, յորս և մտաք և շրջեցաք:

Տաճարն ունի զչորեսին լուսամուտս և առ յաւէտ բոլորակութեանն՝ է անսիւն, այլ ի վերայ չորից կամարացն հաստատուն կառուցեալ գմբէթն երկոտասան լուսամտօք, իսկ ծայր գմբեթին, ուստի սկսանի գլուխն սրածայր, անկեալ է այժմ, զոր ներկայ բնակիչք գեղջն փայտածածկ արարին:

Յամենեսին ի սոսա չգտաւ արձանագիր և ո՛չ մի, բաց յանուանէս Գրիգոր, ի ճակատ արևմտեան դրանն, ի դրուագս անդ կիսաբոլորակ կամարի լուսամտին՝ գրեալ յիւրաքանչիւր հատուածի մի մի տառ ի բարձրութեան անդ որմոյն:

Զունի տեղի աւագանի, որպէս և եկեղեցին Մաստարայ և այլ այսր կողմանց եկեղեցիք:

Դ. Զարընճի գիւղ եւ առ նովաւ եկեղեցին Հոյակապ

Զարընճի անուանեալ գիւղատեղի (նախնի անունն անյայտ) է ի ծայրի սպառուածի արևմտեան բազկաց Արագածու, ուր հովիտք դալարաւէտք տարածին ցափն Ախուրեան գետոյ՝ մերձ ի սահմանագլուխս Ռուսաց և դաշտին Մաստարայ, մօտ յԱնի քաղաք, որոյ է իբրև ամարանոց, զի յԱնւոյ և այսր յարևելս իւր յայսկոյս գետոյն բարձրանայ դաշտավայրն յոտս մեծի այսր լերին, ուր է աւե-

բակ գեղջ ամայի, անջրդի, բայց սիգաւէտ և դալարավայր, որոյ ջուր ի հնումն եկեալ է ի Մաստարայ գեղջէ յառուակէն և այժմ անուանեալ Նախավկայի, որ երևի յայտնապէս ի լանջս աղխաղ-խեալ բլրոցն, որք մի ի մի կցելով՝ երկարեն և միանան յոտն Արա-գածու, որք որպէս այլուր ասացեալ եմք, բազուկք համարին լե-ռինն:

Այս ճանապարհ ջրոյ յայն սակս անուանի Նախավկայի, զի ի բլուրն ի վեր, յորոյ ի լանջսն է առուն և ի ներքոյ այնր գիւղն Մաստարայ, գոյ մատուռն անուամբ Նախավկային Ստեփաննոսի՝ հեռաւորութեամբ ի Զարընճուոյ իբրև երկուց ժամուց ճանապարհի:

Եկեղեցի գեղջս սրբատաշ քարամբք կառուցեալ է ի հիւսիս նորա և է անսիւն. բոլորակ, խաչաձև, փոքրիկ և գմբէթարդ՝ կան-գեալ ի վերայ չորից կամարակապ բրգաձև թևոց, որոց կամարք ամբողջ ընդ կաթուղիկէիւ, այլ յարկք նոցա խոնարհեալ բաց ի հիւսիսայնոյն, արտաքուստ միւսիովն քանդակագործութեամբ և վեց լուսամտօք միայն՝ մի մի յարևելեան և յարևմտեան թևսն, և զոյգ զոյգ՝ ի հարաւային և ի հիւսիսայինսն: Ցաջակողմն սեղա-նոյն՝ է մի խորան և մի այլ վերնայարկ ի վերայ նորա, որոյ մուտք է ի միջոյ ներքնոյ խորանոյն:

Եկեղեցին ունի զերկուս դրունս՝ զհարաւային փոքր և զարևմ-տեանն մեծ, ի չորեսին բրգաձև թևս նորա են չորք այլևս լու-սամուտք, որք որպէս ասացաւ, զեկեղեցին խաչաձև կացուցանեն արտաքուստ, այլ խորանն աջակողման կորուսանէ ի հիւսիսոյ արտաքուստ զխաչաձևութիւնն, զի երևի իբրև կցուրդ յորմն եկե-ղեցւոյն: Գմբէթն արտաքուստ է ութանկիւնի ամբողջ տակաւին և ութն փոքրիկ սեամբք ի շրջապատսն,որք են օձաձև ոլորածոյք և մանր փորուածովք միւսիովն քարամբք: Համակ շինութիւն տա-ճարին է ի կարմիր յղկեալ քարանց, յորս գրեթէ յամենեսին գրեալ են առանձին առանձին տառքս՝ մ. ս. գ. ու, չգտաւ այլուր արձա-նագիր յիշատակի, բայց թէ ի հիւսիսային թևս եկեղեցւոյն այս ինչ մեծ մասամբք եղծեալ.

«Ես Թամար ծառայ Աստուծոյ, որ ադա.....
յաղաւթս յիշեցէք....»:

Ե. Մաշտոցուդ գիւղ

Մազարջուղ գիւղ՝ ի բարձրաւանդակ հովտի արևմտեան լան-ջաց Արագած լերին, ի բարձրութեան անդ, ի վերոյ քան զՄաս-

տարայ: Բնակիչք նորա են տունք տասնևհինգ ի Բագրևանդայ, ի գեղջէից Վաղարշակաւանայ, գաղթեալք անդ քսաներկու ամօք յառաջ, յորում նախ քան զայն չէին բնակութիւնք, այլ ամայի էր գիւղն:

Գոյ գեղջս ի հնուց երկու եկեղեցի՝ Ամենափրկիչ և Սուրբ Յովհաննէս անուամբ, զորս երևի թէ նորոգ անուանակոչեալ են. առաջին որ և մեծն՝ է այժմ աւերակ արտաքոյ գեղջն յարևելից նորա, յայժմեան գերեզմանոցին, որ և գոյրն, ասեն ի հնուց. և է սագաշէն, կոպիտ քարամբք. կարի յետոյ կառուցեալ, քան զփոքրիկ գմբէթաւոր եկեղեցին: Կիսաբոլորակ կամար խորանին կանգուն կայ հանդերձ հիւսիսային որմով, իսկ մնացեալ շինութիւնն՝ խոնարհեալ այժմ, յորմն հիւսիսային երևին երկոքին որմասիւնք, յորոց ձգեալ են կամարք ի հարաւկոյս, ուր և մերձ յորմն արևմտեան ի վերայ մնացորդ որմոյն երևի որմասիւնն:

Մի դուռն ունի տաճարն յարևմտից, ի շրջապատս նորա, յաւերակսն անդ, երևին տեղիք սենեկաց, այլ ո՛չ գոյ արձան յիշատակի:

Եկեղեցին երկրորդ ընդ մէջ գեղջն գոլով ի հիւսիսոյ՝ է փոքրիկ խաչաձև և գմբէթարդ, անխորան և անաւազան, ունի մի սեղան և մի դուռն յարևմտից:

Զ. Տեղագրութիւն Կաթուղիկէ եկեղեցւոյ Արուճ աւանի

Հոյակապ եկեղեցի Արուճ աւանի յԱրագածոտն, շինեալ ի Գրիգորէ իշխանէ Մամիկոնեան, է կարի մեծ, երկայնութեամբ յառաջոյ սեղանոյն ցդուռն արևմտեան՝ քառասուն քայլ և լայնութեամբ՝ քսան և վեց, չունի զսիւն յայսմիկ երկարութեան իւրում, այլ կաթուղիկէն, կառուցեալ ի վերայ չորից որմասեանց, որք վերուստ ի վայր յառաջացեալք են յորմոյն ընդ մեջ եկեղեցւոյն իբրև երկոտասան ոտք՝ բաց ի չորից կամարացն, յորոց վերայ կաթուղիկէն, են և այլ երկու կամարք ի հիւսիսային որմունս եկեղեցւոյն՝ ստոր, քան զմիջինսն յառաջացեալ նովին լայնութեամբ ընդ մեջ եկեղեցւոյն: Կամարք են առ հասարակ երկկարդ և ի ներքին խարսխաց ցխարիսխն վերին՝ եզերք են անկիւնաւորք և միջին վայրն է բոլորշի:

Ի յետին դասու յերկուց կողմանց են երեք կարդ և կամարաւոր լուսամուտք մեծք, իսկ ի ճակատս երից դրանցն՝ չորք, երկու մեծ ի խոնարհ յաջ և յահեակ կոյս դրանն, և երկու միակարդ և փոքունք՝ ի գլուխս դրանցն: Երկու երկու յառաջին դասու նոյնպէս յերկուց

կողմանց և երեք մեծ յաւագ խորանն, որոյ վէմքարն ցարդ անկեալ առ տեղեաւն, վերնախարիսխք կամարացն են ո՛չ իբրև այլ եկեղեցացն դրուագաւորք, այլ հաւասար յորմն բարակ շրջանակօք որոշեալ: Կաթուղիկէն խոնարհեալ է իսպառ, վասն այսորիկ և ցկէս բարձրութեան դրանցն լցեալ է եկեղեցին քարամբք և կրովք աւերանաց. երկու ևս խորանք՝ ի կողմանց սեղանոյն, առ հնութեանն չունի տաճարն ի ներքոյ զդրուագաւոր քանդակագործութիւնս:

Հինգ դրունք են տաճարիս մեծի, որոց զառաջեաւ ամբարձեալ են բրգունս ներկայ մահմէտական բնակիչք, և զմին ի հարաւոյ միայն թողեալ, ընդ որ լցեալ ի ներքս մակաղեն զխաչինս ի ձմերան, յապահովութիւն ի գազանաց:

Արձանագրութիւնք եկեղեցւոյս յառաջ բերեալ են ի Շահխաթունեանցէ քաղուածովք յիւրումն ստորագրութեան, զանց արարեալ զբազմօք անվերծանելի եղելովք ի մերում տեսութեան:

Այս կաթուղիկէ եկեղեցի Արուճ (Թալիշ) աւանի կառուցեալ է ի Գրիգոր իշխանէ Մամիկոնեան, յամի Տեառն 671. և է հնագոյն գրեթէ, քան զայլ եկեղեցիս եղեալս յԱրագածոտն գաւառի:

ԵԿԵՂԵՑԻՔ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՔԱՂԱՔԻ

Ա. Կաթուղիկէ Եկեղեցի Սուրբ Էջմիածին[1]

Կաթուղիկէ Եկեղեցի կոչեցաւ առաջին եկեղեցին Վաղարշապատայ՝ ի հրեշտակէն Սրբոյն Գրիգորի տեսիլը բացատրելու ժամանակին. «Ոսկի խարիսխն վէմն հաստատութեան անշարժութիւնն է, և սիւնն հրեղէն Կաթուղիկէ Եկեղեցի է, որ ժողովէ զամենայն ժողովուրդս ի միաբանութիւն հաւատոյ ի ներքոյ թևոց իւրոց»: (Ագաթանգեղոս, թուղթ ՅԼԲ):

Այս անուանակոչութիւնը Վաղարշապատայ Մայր Եկեղեցւոյն կտան և առհասարակ մեր ազգի մատենագիրք՝ հրեշտակի այս բացատրութենէն առնլով, որպէս Խորենացին (յԳ. գիրս, գլ. Թ. 60). «Թողեալ խարսխեաց, ասէ, (մեծն Սահակ զՄեսրովբ) յԵկեղեցւոջն Կաթուղիկէի, որ ի Վաղարշապատ քաղաքի»:

Եւ վասն զի «Աթոռ Քահանայապետութեան Հայոց» այս Կաթուղիկէ Եկեղեցին եղաւ, ուր զառաջինն կաթուղիկոս նստաւ Սուրբն Գրիգոր, նորա համար և մեր պատմաբանք «Մայր Եկեղեցեաց» կանուանեն զսա իբրև Գլուխ ընդհանուր Եկեղեցեաց Հայաստանի, ինչպէս դարձեալ Խորենացին՝ Աշխարհագրութեան մէջ. «Մայր Եկեղեցեաց, ասէ, ի թագաւորաբնակ և յարքայանիստ Վաղարշապատ քաղաքի»: Եւ Յովհաննէս կաթուղիկոս. «Մեծ Հայրապետն Հայոց Բաբգէն առնէ ժողով Եպիսկոպոսաց ի Նոր քաղաքի, ի սուրբ Կաթուղիկէ, ի Մայր Եկեղեցեաց Հայոց»:

Բայց յետոյ այս Կաթուղիկէ Եկեղեցին ի յետագայից կոչեցաւ Սուրբ Էջմիածին՝ աւելի յարմարութեամբ ի խորհուրդ տեսլեան Սրբոյն Գրիգորի. «Տեսիլ ահաւոր մարդոյ բարձր և ահեղ, որ զառաջսն ունէր և զէգսն ի վերուստ մինչ ի խոնարհ: Զայս կերպարան մարդոյ, կը վկայէ Ագաթանգեղոս, հրեշտակն մեկնեաց ի խորհուրդ տեսչութեանն Աստուծոյ, իսկ այս ահաւոր և շքեղաւոր, որ զառաջն ունի զլուսոյն և զոսկի ուռն ի ձեռին, և բախեաց զսանդարամետս, այս տեսչութիւնն Աստուծոյ է» (ի թուղթ ՅԼԲ): Իսկ այս տեսչութիւն Աստուծոյ վերագրեցին նոյնպէս յետագայի՝ իջման Միածին Բանին Հօր, այս մտքով յօրինուած է շարականն. «Էջ միածինն ի Հօրէ» ևլն: Սորանից ապա Կաթուղիկէ Եկեղեցին Վաղարշապատայ կոչուեց Էջմիածին իբրև անուն սեպհական:

---

1 ԱՐԱՐԱՏ, 1874, էջ 361-365; 410-419; 441-445, 1875, էջ 15-19; 54-60; 91-93

Կոչեցին և Շողակաթ դարձեալ նոյն տեսիլքէն առնլով. «Սիւն գործեաց լոյսն շողացեալ, ասէ Ագաթանգեղոս ի թուղթն ՅԼ, և ծագեաց ի մէջ ներքին սեանցն խարսխաց», ինչպէս հին Տօնացոյցն, ուր դնի. «Տօն է շողակաթին ըստ տեսլեան սրբոյն Գրիգորի», և Ասողիկ. «Զփրկական նշանն, որ ի վերայ սրբոյ Շողակաթի գմբէթին կանգնեալ էր, ճոպանօք ի վայր բերէր (Աբլհաճ Ամիրայն) ի ՆԼԱ թուին»:

Մայր Եկեղեցւոյ այսքան անուանակոչութենէն՝ մեք մեր այս Ստորագրութեան մէջ առաջին անունն ի գործ դնելով կնքեալ ի հրեշտակէն, այն է՝ Կաթուղիկէ Եկեղեցի, նորա տեղը կը գտնեմք Վաղարշապատայ քաղաքամիջին «մօտ յապարանս արքունի»՝ ըստ Լուսաւորչին տեսլեան. «Եւ տեսանեմ ի մէջ քաղաքիս, մօտ յապարանս արքունի, խարսխաձև, ճախարակաձև խարիսխ ոսկի... և տեղին այն, ասէ, լիցի տաճար Աստուծոյ և տուն աղօթից խնդրուածոց ամենայն հաւատացելոց, և Աթոռ Քահանայապետութեան»: (Ագաթ. Թղթ. ՅԼԳ):

Այս տեղ, ուր բախեաց մարդն ահաւոր ոսկի ուռամբ զթանձրութիւն լայնատարած գետնոյն, և ուր հրեշտակն ասաց Սրբոյն Գրիգորի. «Շինեսջիր զտաճար անուանն Աստուծոյ ի տեղւոջն, ուր քեզ ցուցաւ» (ի Թղթն. ՅԼէ), Սուրբն Գրիգոր, թագաւորի և ժողովրդոց հետ բարձր քաղաքորմով փակեալ զտեղին ի պատիւ, և դռնով և դռնափակով ամրացնելով, կանգնեց անդ նշան Տէրունական Խաչին, որ ամենայն ոք գալով այն տեղ՝ ամենազօր Արարչին Աստուծոյ երկրպագելով ծունր կրկնեն, ուր և յետոյ Սուրբն Գրիգոր Կեսարիա եպիսկոպոս ձեռնադրուելէն ետքը չինեաց «զնկատեալ տեղի տանն Աստուծոյ, զցուցեալն նմա ի տեսլեան, զյառաջագոյն դրոշմեալն իւր, և կանգնեաց անդ զԵկեղեցին Աստուծոյ[1] սրբոյն Տրդատայ թագաւորութեան հնգետասաներորդ տարին, յամս Տեառն 301-303 և նորա մկրտութենէն ու սուրբ Աւետարանը ընդունելէն ետքը բոլոր բանակի և ժողովրդոց հետ:

Եւ ինչպէս յայտնի է, Սուրբ Լուսաւորիչն Գրիգոր այս եկեղեցւոյ մէջ յարևելս կանգնեց մի սեղան սրբազան խորհրդոյ և օծեց զայն Սուրբ Աստուածածնի անուամբ՝ տօն կարգելով նմա օգոստոս ամսոյ մէջ վերափոխման շաբաթ օրը, այս է, որ մեր Եկեղեցւոյ հին Տօնացուցի մէջ, ինչպէս որ վերը դրինք, նախնիք դրել են. «Շաբաթ տօն է Շողակաթին տեսլեան սրբոյն Գրիգորի», ուստի և յետագայ պատմագիրք մեր կը կոչեն «Շողակաթ Աստուածածին»:

1 Ըստ ազգային աւանդութեան՝ աստ կանգնեց Նոյ սեղան և մատոյց Աստուծոյ իւր գոհութեան պատարագը, ուր յետոյ կռապաշտութեան ժամանակ կայր Արտեմիս կուռք, յորմէ և կոչէր Արտիմէտ քաղաք ըստ Խորենացւոյն:

Ըստ այսմ այս Կաթուղիկէ Եկեղեցի եղաւ տեղի և Աթոռ մեծ Քահանայապետութեան Հայոց և հոգևոր իշխանութեան Գրիգոր Լուսաւորչին և անմիջապէս յաջորդաց մինչև Հայրապետական Աթոռոյ Դուին փոխադրուիլը, ըստ քաղաքական հանգամանաց ազգիս, ուր Սուրբ Լուսաւորչէն մինչև Մէլիտէ՝ նստան տասներկու կաթուղիկոսունք՝ Քրիստական 303 թուականէն մինչև..., ըստ որոյ և հաւաստի է, թէ և մենաստանն սուրբ Լուսաւորչէն սկսաւ, զոր ազգային պատմիչք Տուն Կաթուղիկոսարանի կանուանեն:

Ուրացեալն Մեհրուժան, երբ որ Վաղարշապատը կաւերէր իւր յարձակման ժամանակը յամին 380, աւերեց և Կաթուղիկէ Եկեղեցի քաղաքին՝ Աթոռն Հայրապետական, որոյ համար Սեբէոս եպիսկոպոս պատմիչ սոյն Կաթուղիկէ Եկեղեցին Վահանայ Նորոգութեան ժամանակին որոշակի կգրէ և այս, թէ Պարսից զորքը Մեհրուժանայ առաջնորդութեամբ աւերեցին և Կաթուղիկէ Եկեղեցին ըստ այսմ. «Այս Վահան, ասէ, (Մամիկոնեան) ժողովեաց և զհարկս աշխարհիս Հայոց (զոր տային յարքունիս) և շինեաց զԵկեղեցիս մեծամեծս, զոր աւերեալ էր Պարսից ի Վաղարշապատ քաղաքի, և ի Դունի և ի Մզրայս...»:

Բայց ինչպէս կերևի Ղազար Փարպեցւոյ թղթէն առ Վահան տէրն Մամիկոնէից, զոր յառաջ պիտի բերեմք յետոյ, Վահանայ նախնիքը նորոգած պիտի լինին Կաթուղիկէ Եկեղեցին Վաղարշապատայ Պարսից Հայաստան յարձակուած ժամանակին, Պապայ թագաւորելէն ետքը, Մեհրուժանայ աւերմունքէն գրեթէ հարիւր երեք տարի յետոյ և Վահանայ նորոգութենէն յառաջ:

Քրիստական 452 թուին, երբ որ Հայրապետական Աթոռն Վաղարշապատէն փոխադրուեց ի Դուին Մելիտէ կաթուղիկոսի Հայրապետութեան առաջին տարին, աստ ի Կաթուղիկէ Եկեղեցին կարգուեց միաբանութիւն հոգևոր Ուխտի ի փառաբանութիւն Անուանն Աստուծոյ, որոց հոգ և խնամք կը տանէին Հայրապետք ի Դունայ, ինչպէս կը յայտնէ Ստեփաննոս Օրբէլեան ի դիմաց Կաթուղիկէի գրած ողբի մէջ: Ըստ այսմ. «Բայց անտի (ի Դունայ) աստ (ի Վաղարշապատ) զիս խնամէին (Կաթողիկոսունք):

Բաց ուրիշ պատմագիրներէ, Ղազար Փարպեցին իսկ կվկայէ առ Վահան գրած թղթի մէջ, որ ամենիցն յառաջ է, թէ Աթոռը Դուին փոխադրուելէն ետքը Վաղարշապատայ Կաթուղիկէ Եկեղեցւոյ մէջ կարգեցաւ «միաբանութիւն աղօթաւոր անձանց պարեգօտևորաց», որոց գլխաւոր կարգեց Վահան զնա ինքն Ղազար, ուստի ոչ միայն Կաթուղիկէ Եկեղեցւոյ վերայ հայրապետք խնամք ունէին,

այլ և իշխանք նախարարազունք և սպարապետք, յորոց Վահան Մամիկոնեան, որ Հայոց զօրավարն էր այս ժամանակին, Պարսից զօրացը յաղթելէն ետքը նախարարաց բազմութեամբ եկաւ ի Վաղարշապատ յամի 483, ուր Կաթուղիկէ Եկեղեցւոյ մէջ գոհութիւն մատուցանելով արած յաղթութեան համար, նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ «զհնացեալ գործ նախնեացն իւրոց», զԿաթուղիկէ Եկեղեցին յերեսաց աւերանացն Մեհրուժանայ և հնութեան ժամանակին յամին 506, որպէս ասէ Ղազար ի պատմութեան, 273, և շինեց մենաստան կրօնաւորաց համար, որոց և վերակացու կարգեց զՂազար, որոյ համար գրէ և Ասողիկ. «Իսկ Վահան (Մամիկոնեան) զԵկեղեցիս Աստուծոյ լուսազարդեալ նորոգէր, զպաշտօնեայս ուխտին մեծարելով, բարեշէն զաշխարհս առնելով, նոյն և ի ժամանակս իշխանութեան իւրոյ՝ զմեծն Կաթուղիկէ Եկեղեցին, որ ի Հայս, վերստին մեծապէս նորոգեաց՝ զդասս կրօնաւորաց բազմացուցանելով»:

Այլ թէ և Ղազարայ վերակացութենէն յառաջ ի Կաթուղիկէ Եկեղեցին կը խնամէին զայն իշխանք և նախարարք մեր և վերակացու ևս կարգած էին անդ Վահանայ նորոգութենէն ևս յառաջ, յայտնապէս կը տեսնուի Ղազարայ թղթի մէջը առ Վահան, որ երբ վերակացութենէն հանուեց, այսպէս բողոք կը գրէ նրան. «Եւ կամաւ ևս խորհիցիս զյիշելդ տուեալ պատգամն երանելւոյն Յովհաննու՝ Գիւտայ Կաթուղիկոսի եղբօր որդւոյն քեզ Տեառն ի Սիւկոյ դրախտին, յոմանց արանց իրք խոստանալով քեզ տեառն կարասի՝ խնդրէին զտեղիդ (Կաթուղիկէ Եկեղեցին)... և ընդ Տեառն Յովհաննայ զայրացար, թէ բնաւ իբրև քեզ առն ոչ լսել..., և ես վասն զի տկարամիտ և անզգուշացող այր եմ յերկրաւոր միտս, ոչ զգացի առ ժամայն դաւոյն, այլ պարտ էր փութով և երագ երագ անկանիլ ի յոտսդ արտասուօք և աղաչելով ի բաց փախչել ի հոգաբարձութենէ տեղւոյն»: (Ի թուղթն առ Վահան՝ Տէրն Մամիկոնէից, տիպ Մոսկուայի):

Սորանից յայտնի է, թէ յառաջ ևս Կաթուղիկէ Եկեղեցում կային կրօնաւորք, որոց վերակացու էր Ղազարէն յառաջ Երանելի ասացեալն Յովհան, և այնքան նախանձելի էր միաբանից բարգաւաճեալ վիճակը, մինչև շատերը կզչարէին Ղազարայ վերակացութեանը և կջանային նորա ձեռքիցը յափշտակել զայն իրք՝ խոստանալով Վահանայ Ղազարը արտաքսելու համար: Սորանով կարող եմք ապացուցանել, թէ Հայրապետական Աթոռը ի Դուին փոխադրուելէն ետքը Վաղարշապատայ Եկեղեցում կայր Ուխտ

միաբանութեան՝ վերատեսչութեամբ գլխաւորաց, մանաւանդ թէ հայրապետաց, որոնք կյիշուին Ղազարու թղթի մէջը՝ մինչև նա ինքն Ղազար, որ Վահանայ հրամանաւ կարգուեցաւ վերակացու:

Ղազարու այս թղթի յառաջաբանէն գիտեմք, որ Վաղարշապատայ Կաթուղիկէ Եկեղեցին փայտաշէն էր Ղազարու վերակացութեան օրով, որոյ ժամանակ փայտակերտ եկեղեցին հրով վնասուելով «ի վայրաբար մարդկանէ», ինչպէս կը վկայէ թուղթը, այս պատճառաւ գնաց Ղազար ի կողմանս յունաց յԱմիթ քաղաք (Դիարբէքիր), ուր տեսնելով, որ չարանախանձ մարդիկ սուտ բաներ կը շատացնեն Կաթուղիկէ Եկեղեցւոյ և իւր ուսման համար, գրեց այն տեղից յիշեալ թուղթը առ Վահան:

Այս մասին յառաջաբանի գրուածը[1] . «Կամեցեալ մեծի իմաստութեանն Վահանայ Մարզպանի՝ Զօրավարին Հայոց, տեառն Մամիկոնէից զնա (զ Ղազարայ) իւր առաւել մերձաւոր և սիրելի առնել, շնորհէր նմա զհոյակապ և զականաւոր տեղին ի Նոր քաղաքի, որում անուն էր սուրբ Կաթուղիկէ Եկեղեցի վանօքն, և նորա ընկալեալ զբանն մարզպանին, խնամածէր զտեղին. պատահեաց նմա կրել տրտմութիւն ի վայրաբար մարդկանէ, զի ի հրոյ վնասեալ փայտակերտ Եկեղեցւոյն... (աստ պակասի մի թուղթ, որպէս դնի յօրինակին) յայսմանէ կամ եղև նմա գնալ ի կողմանս Յունաց, հասանէր յԱմիթ քաղաք և անդ առ ժամանակ մի զտեղի առնոյր» (եր. 37):

Յամին 618, Կոմիտաս կաթուղիկոս, որ Սուրբ Հռիփսիմէի վանքը շինեց, Յովհաննիկ անուն երիցու վանահայրութեան ժամանակին Վաղարշապատայ Կաթուղիկէ Եկեղեցւոյ փայտաշէն ծածկը վերցրուց, որ Մամիկոնեան Վահանայ ժամանակէն շինուած էր, շինեց զայն հոյակապ կաթուղիկէիւ և կոփածոյ քարով, նորոգեց նոյնպէս և բոլոր խախտուած որմերը, որոյ համար կը գրէ Սեբէոս պատմիչ. «վերացոյց (Կոմիտաս) և զփայտայարկս սրբոյ Կաթուղիկէին, նորոգեաց և զխախուտս որմոցն, շինեաց զքարայարկսն, այս եղև յամս Յովհանկան վանաց երիցու սրբոյ Կաթուղիկէին»:

Կոմիտասայ շինութենէն իբր 20 տարի ետքը նորոգութիւն արար ի Կաթուղիկէին Վաղարշապատայ և Ներսէս Գ. Շինող կոչեցեալ կաթուղիկոսն, և այս, ինչպէս կերևի, որ ժամանակ շինեց նա Սուրբ Գրիգոր անուամբ եկեղեցին՝ զարմացուցիչն տեսողաց ասացեալ յԱռապարին Վաղարշապատայ, ինչպէս որ Ժողովոց

1 Ղազարայ թղթի յառաջաբանութիւնը իւր հեղինակութիւնը չէ, այլ ուրիշ իրեն ժամանակակից մարդու, ինչպէս կերևի:

պատմութիւնը կվկայէ. «Յարդարեալ չինէ սա զսուրբ Շողակաթն ի Նոր քաղաքի», այն է՝ Վաղարշապատ, որոյ Կաթուղիկէն կանուանէր և Շողակաթ Աստուածածին, ինչպէս վերը գրեցինք:

Դուին քաղաքի բռնաւոր Ապլհաճ ամիրայն, ըստ վկայութեան Ասողկայ, զոր վերը դրինք, որ Հոռոմոսին վանքը (Ղոշավանք) այրեց, Վաղարշապատայ Կաթուղիկէ Եկեղեցւոյն Խաչն ևս խորտակեց՝ վայր բերելով յամին 982:

Քանի որ Կաթուղիկոսական Աթոռը Դուին էր, և կաթուղիկոսք մերձ էին Վաղարշապատայ, խնամք ունէին այսպէս Կաթուղիկէ Եկեղեցւոյ վրայ, իսկ երբ որ Կաթուղիկոսական Աթոռը Շիրակ փոխադրուեցաւ Բագրատունեաց ժամանակը, գրեթէ անխնամ մնաց կաթուղիկոսաց ձեռնտուութենէն և կմնար ի խնամս վանահարց և արևելեան եպիսկոպոսաց ազգիս՝ Ռուբինեանց օրովը:

Ապա 1441 Փրկչական թուին, երբոր Կաթուղիկոսական Աթոռը վերստին հաստատուեց ի Վաղարշապատ, և կաթուղիկոս նստաւ Կիրակոս Վիրապեցին, սկսաւ սա նորոգել զԿաթուղիկէ Եկեղեցին և Հայրապետանոցը: Սորան յաջորդելով Կարապետ կաթուղիկոս 1443 թուին, թէ և արաւ և սա նորոգութիւն, բայց մահը վրայ հասնելով երկու տարիէն ետքը՝ նստաւ կաթուղիկոս Գրիգոր Մակուեցի 1445-ին, որ աւարտեց Կիրակոսի սկսած շինութիւնները ի Կաթուղիկէն Վաղարշապատայ: Սա առաջինն եղաւ, որ Հայրապետական Աթոռը Վաղարշապատ փոխադրուելէն ետքը գիւղ և կալուածներ առաւ Աթոռոյ համար, զորոնք մի առ մի կնշանակեմք ծանօթութեան մէջ, ինչպէս որ գրուած են Ջամբռ անուանեալ Աթոռոյ յիշատակարան գրոց մէջ[1] :

Այս ժամանակէն սկսաւ այլազգեաց բռնակալութիւնը կաթուղիկոսաց վրայ, որոնք շարունակ չկարողանալով նստել յէջմիածին, իւրեանց տեղը փոխանորդ դնելով Աթոռոյն, իրենք աստանդական կշրջէին մինչև Սալմաստեցի Ստեփաննոս Կաթուղիկոսը 1541 թիւն: Սա, թէ և մեծ փոյթ ունէր Աթոռը ծաղկեցնել, բայց երկրի խռովութեանց երեսէն ոչինչ չկարաց առնել, ուստի և իրեն տեղապահ դնելով յէջմիածին սեբաստացի Միքայէլ վարդապետը,

1 Աղաւնատուն վեց դանկ մուլք.
Աշտարակ գիւղ վեց դանկ մուլք.
Բաթռինչ (Բագայառիճ) վեց դանկ մուլք: (Այս գիւղ ամարանոց էր Կաթուղիկոսաց):
Մողնի գիւղ վեց դանկ մուլք.
Վաղարշապատ գիւղ վեց դանկ մուլք.
Քիրաշլու գիւղ (ի Նիգ) վեց դանկ մուլք.
Այս վեց գիւղը կգնէ Մակուեցի Գրիգոր Կաթուղիկոսը:

երբեմն թափառական կշրջէին, երբեմն յէջմիածին կնստէին մինչև Մելքիսէթ կաթուղիկոսը ցամ Տեառն 1593:

Այս ժամանակէն սկսեալ կաթուղիկոսները ընկան պարտատէրների ու հարկապահանջների բռնութեան տակ, և երկիրը ոտնակոխ եղաւ Պարսից և Տաճկաց պատերազմներէն, վասն որոյ և մինչև Սիւնեցի Մովսէս կաթուղիկոսը Հայրապետական Աթոռը ի Վաղարշապատ գրեթէ աւերակ էր և ամայի՝ մինչև 1620 թիւն:

Առաջին Շահապպազ յԵրևանայ երկիրը արշաւելու ժամանակ, որ օսմանցւոց ձեռքն էր 1604 թուին, Վաղարշապատայ Կաթուղիկէն բոլորովին ամայի էր, և ինչպէս թափուր էր տաճարն ի Միաբանութենէ, նոյնպէս և Վաղարշապատ՝ ի բնակչաց, որովհետև Արարատեան աշխարհի ժողովուրդը տարագիր եղած էր, երկիրը ևս ասպատակութեան մէջ պարսից՝ օսմանցւոց հետ պատերազմելու ժամանակին գրեթէ մինչև քսան և հինգ տարի՝ 1604-1629, և Հայրապետական Աթոռն էջմիածին, ինչպէս ասացինք, խպառ ամայի էր և անբնակ:

Առաքել՝ ժամանակակից պատմիչ, իւր պատմագրութեան ԻԴ. գլ. եր. 299. Վաղարշապատայ Կաթուղիկէի համար կգրէ այսպէս. «Եւ ասացեալ բանք, որ ի մէնջ, ցուցանեն զտեղին (զԿաթուղիկէ Եկեղեցին) անբնակ գոլ ի մարդկանէ, և ասեմ զիսկն, ո՛չ էր անբնակ ամենևին, այլ դու համարեա իբր անբնակ, վասն զի Կաթուղիկոսունքն անդ՝ յէջմիածին, ոչ բնակէին, այլ յԵրևան քաղաքի ի Կաթուղիկէ Եկեղեցւոջն[1] և կամ թէ ի շրջակայս նորա, բայց սևագլուխք ոմանք սինլքորք և գռեհիկք, որպէս զգիւղական հողագործս, որք վարնորդիւք մշակօք բնակէին յէջմիածին և զաւուրս տարւոյն զբազումս ի գիւղօրայսն անցուցանէին, քան թէ յէջմիածին...:

Ապա Մովսէս վարդապետն, ասէ, եկեալ ի Ցահրատայ, առեալ ի Շահապպազայ Առաջնոյ զԼուսարարութիւն սրբոյ Էջմիածնի, մեծապատիւ փառօք և անպատում ցնծութեամբ... եկեալ եհաս յԵրևան քաղաք, որ և ի սուրբ Էջմիածին, և առանց յապաղելոյ ձեռն ի գործ եարկ նորոգութեան սրբոյ Աթոռոյն ի թուականիս մերում ՌՀԶ (յամի 1627), ի Վարդավառի պահոց երկուշաբթի աւուրն, որպէս ասէ մարգարէն, արարին զԵրուսաղէմ որպէս հիւղս մրգապահաց... ըստ այսմ էր և Աթոռն էջմիածին, զի ամենևիմբ ունայնացեալ էր ի ստացուածոց և կողոպտեալ ի զարդուց. ո՛չ գիրք, զի ո՛չ էր անդ ժամասացութիւն և կամ ընթերցումն, ո՛չ զգեստ և

1 Անուն միոյ յեկեղեցեաց քաղաքին և այժմ ևս կոչի Կաթուղիկէ, մերձ ի Պօղոս-Պետրոս Եկեղեցի:

ո՛չ շուրջառ, զի ո՛չ էր ժամակարգութիւն և պատարագ, մինչ զի Քրիստոսի իջման տեղին և սուրբ սեղանն ո՛չ ունէին ծածկոցս, ո՛չ կանթեղք, զի ո՛չ գոյր լոյս, այլ հանապազ ի խաւարի, բայց այլազգի մահմէտական ոմն վառէր զճրագ ձիթոյ և դնէր ի վերայ բեմին վասն անցաւորաց ճանապարհորդաց, զի տեսանելով զայն՝ ողորմութիւն արասցեն նմա, ո՛չ խնկարկութիւն, զի ո՛չ գոյր բուրվառ և խունկ, և սալայատակ եկեղեցւոյն քանդքաղեալ, եղեալ որջ զեռնոց և սողնոց, և մեծամեծ լուսամուտքն, զորս ունի, ամենն ի բաց կայր առանց վանդակի, ուստի մտեալ ի ներքս թռչունքն՝ լնուին զեկեղեցին ծրտովք և ծղովք և այլ գռեխօք, զոր ամենայն օր հարկիւ սրբէաք, և ընդ այդն ի լուսանալն ձայնք թռչնոցն խափանէր զձայն ժամ ասելոյն:

Իսկ արտաքուստ կուսէ գլուխ Կաթուղիկէին և տանիքն ամենայն և երեսք որմոցն քանդքանդեալք, և շրջապատ աստիճանաքարքն փշրեալ և ծակոտեալ, և ի վաղեմեայ ժամանակաց, որ շուրջ զեկեղեցեաւն շինութիւն էր եղեալ և դարձեալ աւերեալ և ի վերայ միմեանց փլուզեալ էր, այնքան բարձրացեալ էր հողն և մոխիրն, որ յամէն կողմանց շուրջ զեկեղեցեաւն եօթն կանգուն բարձրացեալ էր աղբիւսն, և հողն ծածկեալ էր զհիմունս և զաստիճանս եկեղեցւոյն, որք կան արտաքուստ կողմանէ:

Իսկ զարդք և սպասք և անօթք եկեղեցւոյն ընաւ ո՛չ գոյր, զի որ ինչ և լեալ էր ի հնոց ժամանակաց, Կաթուղիկոսունքն զամենայն վաճառելով և գրաւ դնելով՝ վատնեալ էին, և արդ ևս գրաւ եղեալ անօթքն կային առ մահմէտականս, զոր ազատեաց Մովսէս վարդապետն...:

Եւ յորժամ Մովսէս վարդապետն սկիզբն արար նորոգութեան, տարակուսէին վասն հողոյն և մոխրոյն, որ բլրացեալ կայր շուրջանակի, թէ զիա՞րդ լինի պեղել, բայց որովհետև կամքն Աստուածային քաղցրացեալ էր և ձեռնարկութիւնն նորին հաճութեամբն էր, դիւրահնար եղև բարձումն հողոյն, վասն զի ածէին զջուր ի գետոյն յորդ և վարար և կապեցին ի կողմն ինչ հողոյն, և մշակքն փորէին զհողն և տային ջրոյն, որով ջուրն զհողն տանէր, և քարն մնայր, և ի սակաւ աւուրս բարձաւ հողն և բացաւ վայրն ամենայն, և մնացեալ քարինքն շարեցան ի յորմն տանցն և ապա լայն և ընդարձակ պարիսպ պատեցին շուրջանակի՝ յօրինեալ զբրգունս ութն ի նմա»:

Մովսէս Սիւնեցի առաջնոյն Շահապպազայ սիրելի լինելով, նրանից հրովարտակ առնելով՝ լիակատար իշխանութեամբ եկաւ ի Սուրբ Էջմիածին, և որովհետև սա առաջին նորոգողն եղաւ Կա-

թուղիկէին և Հայրապետական Աթոռոյ գրեթէ երկու հարիւր տարի ամայութենէն յետքը 1445-1627, և յետ նորա ընդհանուր կաթուղիկոսք ազգիս շարունակ յաջորդութեամբ և անմիջապէս նստան ի Սուրբ Էջմիածին ու պէսպէս շինութեամբք բարեզարդեցին զԱթոռն Սուրբ Էջմիածին, մեք բոլոր նոցա նորոգութիւնքը և շինութիւնքը մի առ մի կգրենք մինչև ներկայ մեր Վեհափառ Գէորգ Դ. ընդհանրական Կաթուղիկոս ամենայն Հայոց, որոց արարքը ի Սուրբ Կաթուղիկէն Վաղարշապատայ և ի Հայրապետական Աթոռն Սուրբ Էջմիածին կտեսնեն ընթերցողք ըստ կարգի:

Ինչպէս կերևի վերը յիշուած Առաքեալ պատմագրի վկայութենէն, յորմէ կառնու և Սիմէօն կաթուղիկոս իւր Ջամբռ մատենին մէջ, Մովսէս կաթուղիկոս առաջինն եղաւ, որ Կաթուղիկէ Եկեղեցին աւերանքէ ազատելու փութով, Շահապպազէն Փակակալութեան հրովարտակն առնելէն ետքը յամին 1627, Կաթուղիկէ Եկեղեցւոյ չորս կողմը եղած աւերանաց հողակոյտը ջրին տալով, ընդարձակ քառակուսի պարսպով պատեց զայն, արևմտեան կողմը կամարայարկ մեծամեծ դարպասներ կանգնեց, դէպ ի հիւսիս և դէպ ի հարաւ շինեց Կաթուղիկոսարան, երկուքի միջոցը՝ պարսպի արևմտեան կամարայարկ մեծ դուռն՝ կոփածոյ քարով, յանուն Տրդատայ, որ ուղղակի կանկանի տաճարի արևմտեան դրան հանդէպ:

Պարսպի հիւսիսային բաժնում շինել տուաւ ծայրէ ի ծայր միաբանից սենեակները՝ իւրեանց կամարայարկ տալաններով, մեծ մասամբ քարով և թրծած աղիւսով, իսկ արևելեան կողմը՝ կէս մասը խցեր, և հարաւային անկիւնը՝ հացի փուռն և նորա պատկանեալ սենեակներ:

Հարաւային կողմը կանգնեց տնտեսատունը, ամառուայ և ձմեռուայ սեղանատները, ամբարանոց ցորենոյ, գարու և այլ նիւթոց համար: Այս ամեն շինուածքը, բաց ամառուայ սեղանատանէն, կոփածոյ քարով և թրծած աղիւսով էին:

Կաթուղիկէ Եկեղեցին գրեթէ ի հիմանէ նոր ի նորոյ նորոգեց՝ գմբէթը, տանիքը, առաստաղը, որմունքը ներքուստ և արտաքուստ նորոգեց, որոնք քանդուել, ու քարերը թափել էին, և տաճարի միջի սալայատակը բոլորը ևս կոփածոյ քարով շինեց, որովհետև այս ամենքը իսպառ աւերուած էին, ինչպէս պատմիչն կվկայէ: Եւ այսպէս, Սուրբ Աթոռն Էջմիածին պայծառացնելով՝ վերստին միաբանութիւնը ժողովեց, որոնք Եկեղեցւոյ և մենաստանի աւերանաց պատճառաւ ցրուած էին ի գիւղս և յաւանս[1] :

1 Վաղարշապատ գիւղը, զոր Գրիգ. Կթ. Մակուեցին գնեալ է, և տիրապետել էին պարսիկք, սա քաղաքական դատարանով յետ առու և Աթոռոյս սեպհականեց:

Հաստատեց և դպրատուն, յորմէ յառաջացան բազում շնորհալի վարդապետք ըստ վկայութեան Սիմէօն կաթուղիկոսի, և այս, ինչպէս կերևի, ի Յովհաննավանք, ուստից Փիլիպպոս կաթուղիկոսը իւր օրով փոխադրեց աստ ի Սուրբ Էջմիածին:

Մովսէս կաթուղիկոսի այս ամեն շինութեանց ծախուցը ձեռնտու էին մեր ազգի երևելի և կարող անձինք իրենց յօժարակամ տրօքն և միջնորդութեամբ հոգևորականաց, որոց շատը նորա իսկ աշակերտներից էին, որոց առաջինը Փիլիպպոսն էր, որ իւր վախճանին՝ իրեն յաջորդ կարգեց Մովսէս:

Եւ այս եղաւ երկրորդ նորոգութիւն Կաթուղիկէ Եկեղեցւոյն և մենաստանին ու միաբանից հաստատութեան, յորմէ մինչև ցայսօր անընդհատ կշարունակի[1] :

Փիլիպպոս կաթուղիկոս, երբ նստաւ յԱթոռ յամին 1633, Մովսիսի վախճանէն ետքը, Աթոռոյ մէջ որքան փայտէ շինուածք կային և աւերուած պարսից և օսմանցւոց պատերազմաց երեսէն, ևս և յերկրաշարժութենէ, բոլորը վերստին նորոգեց: Եկեղեցւոյ տանիքը, բաց ի գմբեթէն, բովանդակ նորոգեց սրբատաշ քարով: Արևելեան կողմի սենեակները շինեց կամարակապ քարով և աղիւսով, որոց վերայ կանգնեց իւր Կաթուղիկոսարանը վայելուչ շէնքով, ամառուայ սեղանատունը, զոր Մովսէս փայտով էր ծածկել, սա սրբատաշ քարով շինեց, Եկեղեցւոյ շրջապատը սալայատակ արաւ, նոյնպէս և միաբանից սենեկաց յառաջը ծայրէ ծայր չորս կանգուն լայնութեամբ, Աթոռոյ դպրատունը, որ Յովհաննավանքն էր, այս միջոցիս Փիլիպպոս փոխադրեց զայն ի Սուրբ Էջմիածին և յԱթոռումս հաստատեց: Պարսպի հարաւային կողմը շինեց ձիթահանքը մեծ ծախսով Աթոռոյ և գիւղացւոց համար, ուր մերձակայ գիւղերէն կտաւադ կբերէին՝ ձէթ հանելու յօգուտ Աթոռոյս:

Եկեղեցին ևս խոնաւութենէ ազատ պահելու համար, ուստի կվնասուէր միշտ, պարսպի հարաւային դռան յառաջէն սկսած ի ներքուստ մինչև Գայիանէի վանքի հարաւային կողմը դէպ ի հանդամէջս, քանքան փորել տուաւ ընդ երկրաւ և ի տեղիս տեղիս հորեր բանալ տուաւ, ընդ որ եկեղեցւոյ տակէն ժողովուած ջուրը կելանէ դէպ ի հանդ, և կկոչուի ***սառ-ը ֆանֆան****, որ, ինչպէս կգրէ Սիմէօն կաթուղիկոս, երկու օգուտ տուաւ՝ մէկ, որ բաւական ջուր կելանէ յանդաստանս, մէկ ևս՝ տաճարի միջին գիճութիւնը բաւականին պակսեց[2] :*

1 Մովսէս Կաթուղիկոսէն սկսած մինչև Սիմէօն Կաթուղիկոսի վախճանը Կաթուղիկոսաց արած շինութիւնքը ի սուրբ Կաթուղիկէ Ջամբռ մատենէն կքաղենք:

2 Աթոռոյս գիւղերի անդաստանաց համար ևս հոգ կալաւ մեծ աշխատութեամբ,

Այս միջոցիս, որ ազգային գործով գնացել էր Փիլիպպոս կաթուղիկոս ի Կոստանդնուպոլիս, 1653, վերադառնալով յԱթոռս, Եկեղեցւոյ մեծ զանգակատունը սկսաւ շինել արևմտեան դռան վրայ, կից Եկեղեցւոյն՝ գեղեցիկ քանդակագործ ծաղկանց և զանազան կենդանեաց փորուածով, որոյ շինուածքը հազիւ թէ հասցրել էր մինչև յառաջին յարկի ներքին կամարը, վախճանեցաւ 1655 թուին[1] :

Յակոբ կաթուղիկոս Ջուղայեցի՝ յաջորդ Փիլիպպոսի՝ արժանայիշատակ վարդապետին արժանի աշակերտ, նորանից ետքը նորա սկսած զանգակատունը շինեց եռայարկ և աւարտեց ծաղկենկար փորուածներով, կարմրագոյն տաշածու քարով՝ մեծ աշխատանք կրելով ծախուց կողմէն և հակառակութիւն և արգելք՝ երկրի բռնաւոր իշխողէն այն դառն ժամանակին, բայց վերջապէս ամեն նեղութեանց համբերութեամբ յաղթելով՝ վայելուչ կաթուղիկէիւ կաւարտէ շինութիւնը յամի 1658, որոյ արձանագրութիւնը դրուած է Կաթուղիկէի ներքին կողմը շուրջանակի:

Կաթուղիկոսական տունը վայելչացնող կաթուղիկոսներից մէկն էլ Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսն եղաւ և ամենից գրեթէ գերազանցեց՝ Աթոռը հարստացնելով գիւղերով ու կալուածներով, զորոնք դրամով գնեց և սեպհական մուլք հաստատեց Աթոռոյս այնքան շինութեանց ծախուց հետ, ինչպէս կտեսնուի ծանօթութեան մէջ[2] :

Աթոռոյ միաբանք և Վաղարշապատայ բնակիչք, որոնք ցայն վայր մեծ նեղութիւն կը կրէին մաքուր ջրոց պակասութենէն ամառ ժամանակ և ձմեռը՝ ցրտի սաստկութենէն, երբոր առուները բոլոր կսառին, Յակոբ կաթուղիկոս Աթոռոյս այժմեան եղած քանքանը

ուստի և միւս բարերարութեանց հետ մեծ ծախսով Արագած լեռան գլխէն մինչև ութ ջրաղացի ջուր, որ դէպ ի հիւսիս, Շիրակ գաւառը կթափէր, շրջեց դէպ ի Քասաղ գետն Օշականայ և արքունի դատարանով գետի կէս ջուրը սեպհականեց Աթոռոյս:

1 Վաղարշապատ գիւղը, որ վերստին յափշտակել էին Ամիրկիւնէ նախարարի ժառանգները, Բ. Շահապազի հրովարտակով յետ կառնու Փիլիպպոս ի սեպհականութիւն Աթոռոյս: Օշական գիւղի հինգ դանկ մուլքն կգնէ Փիլիպպոս Կաթուղիկոս:

2 Գիւղօրայք, զորոնք գնել է Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոս ի սեպհականութիւն Աթոռոյս ըստ գրելոյ Սիմէօն Կաթուղիկոսին, սոքա են:

Ամիրի գիւղ, որոյ չորս և կէս դանկ մուլքն գնէ Յակոբ Կաթուղիկոս: Ի Գեղարքունիս:

Եայճի գիւղ ի Ծաղկունիս. վեց դանկ մուլքն գնէ Յակոբ Կաթուղիկոս:

Բոխենիս՝ հանդէպ Ամբերդու, գիւղացիք ընծայեն Աթոռոյս յորդորանօք Յակոբ Կաթուղիկոսի:

Ղարաղօյունլու գիւղ ի լանջս Արագածու, որոյ վեց դանկ մուլքն գնէ Յակոբ Կաթ. իւր վարդապետութեան ժամանակին:

Մելիքի գիւղ յԱպարան. վեց դանկ մուլքն գնէ Յակոբ Կաթուղիկոս:

Օշական գիւղ յոտն Արագածու. մի դանկ մուլքն գնէ Յակոբ Կաթուղիկոս, որոյ հինգ դանկն գնել էր Փիլիպպոս:

չինել տուաւ գիւղի արևմտեան հիւսիսի կողմէն մինչև Քասաղ գետը գրեթէ կէս ժամ հեռաւորութեամբ և իրարու մերձ հորեր բանալով ականահատութեամբ՝ ջրերը աստի և անտի ժողովեց մի տեղ և ընդերկրեայ ճանապարհով բերաւ յԱթոռս, որոյ մի մասն ջուր արևմտեան կողմէն կմտնի ներսի պարիսպը յարբումն միաբանից, և կէս մասն մտնելով ի Վեհարան և ի Ղազարապատն՝ կանցանէ դէպի մեծ լճակն, որով թէ՛ ամառ, և թէ՛ ձմեռ ժամանակ մաքուր և սառն ջուր կըմպէին միաբանք և գիւղացիք մինչև այս տարիներս, բայց բաւական տարիներէ հետէ գիւղօրայք և բնակիչք շատանալով, և գետը զանազան առուներ բաժանուելով արքունական գիւղերու բնակչաց համար, ամառ ժամանակ քանքանը բոլորովին կցամաքի, թո՛ղ որ Աթոռոյս կառավարչաց շահասիրութենէն և թուլութենէն, նախ քան զայն Վաղարշապատու բնակիչք բնակութիւններ չինելով քանքանի վրայ՝ բոլորովին գրեթէ խանգարել են ճանապարհը, և ապաստան կմնամք ամառը պղտոր ջրերին:

Յակոբէն ետքը, երբ որ նստաւ Եղիազար կաթուղիկոս յամին 1682, Աթոռոյ պարտքերը տալէն ետքը, տաճարի մէջ Իշման տեղւոյ վրայ կանգնեց Կաթուղիկէ՝ հասարակ քարից, չորս սիւնով, և հաստատեց սեղան պատարագի, որ յառաջագոյն քարորմով պատած էր, ուր և «Այրն ահաւոր» երևցած, իսկ տաճարի հիւսիսային և հարաւային թևերը, որոնք կիսաբոլորակ խորաններ էին, հիւսիսայինը բարձրացրեց տաճարի յատակէն եօթն աստիճան և կանգնեց սեղան դէպ արևելք, անուամբ Սրբոյն Ստեփաննոսի, և հարաւայինը՝ երեք աստիճանով, Սրբոյն Յովհաննու Մկրտչի անուամբ, որոց մէջ կկատարուին եպիսկոպոսի ձեռնադրութեան հանդէսը: Այս պատճառաւ ևս Իշման տեղի յառաջէն հաստատուն քարով հիւսիսից հարաւ կտրեց, որ խաժամուժ ժողովուրդը յառաջ չի գայ, ուր և հասարակ օրերը միշտ ժամերգութիւնը կը կատարի:

Շինեց և երեք զանգակատուն փոքրիկ կաթուղիկէիւ ի տանիս տաճարին՝ մին յարևելս՝ Աստուածածնի սեղանոյ վրայ, երկուքը ևս՝ հիւսիս և հարաւ՝ Ս. Ստեփաննոսի և Ս. Յովհաննու նորահաստատ սեղանների գլուխը:

Աղէքսանդր կաթուղիկոս Ջուղայեցին ձմեռուայ սեղանատունը վերստին շինեց կամարայարկ, կոփածոյ քարով և ծածկեց թրծած աղիւսով, որ հնացել էր. որ և մինչև ցայժմ հաստատուն կայ իւր յիշատակարանով:

Եղիազարու հասարակ քարով շինածը ի վերայ Իշման տեղւոյն Համատանցի աստուածատուր կաթուղիկոսը փոխեց և նոր ի նո-

բոյ կառոյց վայելչաձև մարմարոնեայ գեղեցիկ կաթուղիկէիւ չորս սեան վրայ, նոյնպէս աւագ սեղանոյ բեմի ճակատը ծայրէ ի ծայր մարմարոնեայ քարով շինելով, խորանաձև զարդարեց, ոսկով ու գոյնզգոյն նկարներով Իշման տեղւոյ Կաթուղիկէին և աւագ սեղանոյ բեմը ի միասին ծաղկազարդեց:

Սա նորոգեց և տաճարի սալայատակը, մեծ Կաթուղիկէի չորս մեծ սիւները, սպիտակացրուց բոլոր տաճարի մէջը և առ հասարակ ոսկեզօծ գոյնզգոյն դեղերով ծաղկել տուաւ, որոյ արձանագրութիւնը Կաթուղիկէի ներսի շրջանակումը գրուած է յամին 1720, շրջապատ լուսամտաց ներքև:

Աւագ սեղանոյ մարմարոնեայ բեմի ճակատը, որ խորանաձև հատուած հատուած բաժանուած է, Կարապետ կաթուղիկոսը երկոտասան առաքելոց պատկերները նկարել տուաւ. մէջ տեղը Աստուածամայր՝ Յիսուս ի գրկին, երկու ծայրը՝ Ստեփաննոս և Փիլիպպոս սարկաւագունք, և շրջանակները ոսկեզօծ ծաղկազարդեց առաջուայ նման:

Աբրահամ կաթուղիկոս Մշեցի պղնձեայ թափուածոյ վանդակով շրջապատեց Իշման տեղւոյ սեղանը՝ մէջ առնլով չորս մարմարոնեայ սիւները ի թուին 1732:

Սա ինքն Աբրահամ կանգնեց աւագ խորանի կողմնական սեղանները, հիւսիսային անուամբ Ս. Յակոբայ առաքելոյն, և հարաւայինը՝ Ս. Լուսաւորչի, կամարակապ, դրուագեալ փայտով, որոց փոքրիկ բեմերի ճակատը զարդարեց ծաղկենկարով և մարգարէական պատկերներով: Նկարել տուաւ նոյնպէս տաճարի որմոց և սիւների վերայ եղած պատկերները ևս մեծագումար ծախսով:

Փռնատունը ևս շինեց սրբատաշ քարով՝ նորա այլ ամեն հարկաւոր շինութեանց հետ:

Ղազար կաթուղիկոսը, որ նստաւ յամին 1738, տեսնելով, որ Փիլիպպոս կաթուղիկոսի շինած Կաթուղիկոսարանը հնացել է բոլորովին, մանաւանդ որ Եկեղեցւոյ արևելեան կողմը լինելով, անյարմար է բնակութեան, արևմտեան կողմը շինեց նոր Կաթուղիկոսարան երկյարկեան, պարսպի դրան ներքին կողմը դեպ ի հարաւ, որոյ մեծ դուռը կանգնեց ամառուայ սեղանատան արևմտեան դրան հանդէպ, ընդ որ հանդիսաւոր օրերը կաթուղիկոսք կիջնէին ի սեղանատուն: Այս դրան ճանապարհը, Կաթուղիկոսարանի ներքնայարկ սենեակների մէջէն լինելով, յետագայ կաթուղիկոսք փակեցին զայն և նոյն սենեակները կէս մի արարին գանձատուն և կէս մի՝ մառան Կաթուղիկոսարանի: Կաթուղիկոսարանի շինութեան արձանագիրը դրուած է այս դրան վերայ յամին 1741:

Այս իւր շինած Կաթուղիկոսարանի հիւսիսային կողմում զարդարեց Ղազար կաթուղիկոս և գետնանիստ շինուածք կաթուղիկոսաց ձմերնային բնակութեան համար, որոնք յետոյ Սիմէօն կաթուղիկոս արար բնակարան և տպագրատուն, ինչպէս կերևի նորա գործոց մէջ:

Հարաւային կողմը, Մովսէս կաթուղիկոսի շինած պարսպէն դուրս, շինեց Ղազար կրկնայարկ և քառակուսի հիւրանոց, որ իւր անուամբ Ղազարապատ կոչուեցաւ, սորա հարաւային կողմը պարսպեց կոփածոյ քարով և թրծած աղիւսով և մէջ տեղը կանգնեց կամարակապ մեծ դուռն՝ կոփածոյ քարով, հանդերձ շինութեան արձանագրով 1750 թուին:

Այս ամեն շինուածքներէն ետքը թէ՛ Կաթուղիկէ Եկեղեցւոյ պայծառութեան, և թէ՛ մենաստանի հարկաւորութեան և վայելչութեան համար, ինչ էլ որ պակաս էր մնացել, ցայն վայր ու կհարկաւորէր, այն ամենն էլ արժանայիշատակ Սիմէօն և Ղուկաս կաթուղիկոսները շինեցին, պատրաստեցին և գրեթէ լրացրին, որոց գործքերն էլ կարգաւ պիտի նշանակենք:

Արդարև, կարծես թէ լրացրին սոքա Եկեղեցւոյ և Կաթուղիկոսական տան թերութիւնները, և այնքան շինութեանց մեծագումար ծախսերը հոգալէն ետքը այս երկու կաթուղիկոսք աշխարհի այն անիշխան և վրդոված ժամանակին՝ բաւականին ևս մեծ գումար դրամոց թողին հետագայ կաթուղիկոսաց ուտելու պաշար, որոնք դրամը վատնելէն ու տունը քարուքանդ անելէն ետքն անգամ՝ քար քարի վերայ էլ չի կարողացան կամ չի կամեցան դնել, որ գոնէ իրենց հոգւոյն յիշատակ լինէր, և իրենց տնաքանդութեան արարքը աշխարհիս երեսին ծածկէր. ասածիս ճշմարտութիւնը կգտնեն ընթերցողք Դաւթի և Դանիէլի գործոց մէջ: Մենք Սիմէօնի և Ղուկասու արարքը գրենք ի Սուրբ Կաթուղիկէն:

Մովսէս կաթուղիկոսի շինած այս է Եկեղեցւոյ շրջապատ պարիսպը շատ անձուկ էր, և միայն միաբանից բնակարանը և տանը վերաբերեալ հարկաւոր շինուածքը կպարունակէր իւր մէջ, որք անհրաժեշտ հարկաւոր էին, իսկ այլ ամենայն կարևոր շինութիւնք արտաքոյ էին պարսպին, ամբարը, անասնոց գոմը, մարագը, խոտատեղը և այլ այսպիսիք. ըստ որոյ և միշտ երկիւղի մէջ էին միաբանք, շատ անգամ Աթոռոյ և ուխտաւորաց ձիերը կտանէին գողք, որոց համար իսկ Սիմէօն կաթուղիկոս իւր Ջամբռ անուանեալ մատենի մէջ գրէ[1]*, յորմէ կստիպուի մեծ պարիսպը շինել:*

1 Ջամբռ մատեանն, որ յիշատակարան է անցից Աթոռոյս և բոլոր կալուածոց, տպագրուեցաւ յանցեալ 1873 ամին:

«Սուրբ Աթոռն նախապէս, կգրէ, ի յարտաքուստ կուսէ էր անպարիսպ, և գոմք և ամենայն անասնատունք և այլ համբարք հարկաւոր արտաքին իրաց՝ էին հնացեալ, անվայելք և անհարմարք, մանունք և գծուծք, և մանաւանդ ցան և ցիր, երկիւղալիք և կասկածաւորք ի գողոց և յասպատակչաց. բազում անգամ զձիս և զայլ անասունս հիւրոց և սրբոյ Աթոռոյս իսկ տանէին գողք»:

Երկրորդ՝ Վաղարշապատ գիւղը մենաստանի արևմտեան կողմէն պարսպին կից լինելով՝ անմիջոց և խառն ի խուռն շէնքերով շրջափակել էր Աթոռը. ուստի և մեծ անվայելչութիւն կբերէր նորան: Այս երկու պատճառէն ստիպեալ Սիմէօն կաթուղիկոս, մենաստանը շուրջանակի պարսպեց քառակուսի ընդարձակ հաստատուն պարսպով, ի ներքուստ հիմանց երեսէն երեք կարգ սրբատաշ կոփածու քարով. մնացած շէնքը ամբողջ կանգնեց աղիւսով, մեծամեծ բուրգերով և դիտանոցով. անասնոց գոմը, և այլ ներսի պարսպէն դուրս՝ շէնքերը մէջ առնլով, նոր ի նորոյ շինեց արևելեան կողմը միատեղ հիւսիսային բաժնումը. և գիւղը քակելով՝ բոլոր բնակութիւնը փոխադրեց հիւսիսային կողմը բաւական հէռի պարսպէն, և տներն ու եկեղեցին Աթոռոյ արդեամբքը շինեց, ինչպէս յիշած եմք Վաղարշապատայ պատմութեան մէջ: Պարսպի շինութեանց և գիւղի եկեղեցւոյ արձանագիրք դրուած են իւրաքանչիւրոց դռների վերայ, հանդերձ թուականով:

Երեք մեծ դուռն ունի պարիսպը՝ կամարայարկ կոփածոյ քարով, որոց մեծ և փառաւորն է հիւսիսի կողմից, որ կհայի դէպ ուղիղ գիւղի վերայ. մին արևելեան հարաւ, որոյ վերայ շինութեան արձանագիրը 1766 թուին, երրորդն՝ յարևմտից Ղազարապատի կցուրդը, չորրորդն՝ փոքր նոյնպէս արևմտից՝ դուռն բաղանեաց, զոր և ինքն Սիմէօն շինած է պարսպի արևմտեան հարաւային անկիւնում:

Եկեղեցւոյ տանիքը ամբողջ սրբատաշ քարով նորոգեց, և երկու խորանաց առաստաղները բանալով՝ վերնատուն շինեց իբրեւ պահարան՝ յամին 1770:

Ամառուայ սեղանատունը սա վերստին շինեց կամարայարկ և բոլորովին սրբատաշ քարով, որ Փիլիպպոս կաթուղիկոսի շինութենէն մինչև սորա ժամանակ հնացել էր և մերձ էր փլչելու: Դպրատունը ևս, զոր Փիլիպպոս շինել էր պարսպի ներսը նեղ և անձուկ և անյարմար ըստ տեղւոյն, որպէս և Աթոռոյ մոմատունը, իսկ երկուքը ևս նոր ի նորոյ շինեց առանձին՝ միաբանից խցերի ետևը՝ հին և նոր պարսպի միջոցը, հիւսիսային արևելեան անկիւնում:

Կաթուղիկոսարանի կողմը չինեց երկյարկեան դարպաս գեղեցիկ, իբրև ամարանոց կաթուղիկոսի, և իբրև միջնորմն՝ Ղազարապատէն դէպ ի Վեհարանը տաճկաց և այլ հիւրոց տեսութիւնը արգելելու, որոնք յաճախ կպատահէին յԱթոռս:

Իսկ հիւսիսային կողմէն, ուր արդէն Ղազար կաթուղիկոս կանգնած էր ճմեռուայ բնակարան, վեց գազաչափ մէջ առնլով, քարվանսարայ ասացեալ շուկայի բաժնէն, յիշեալ շինութեանց կից շինեց տասն սենեակ նոցա լայնութեան և այլ պիտոյից համար, որոց արևմտեան կողմի սենեակներում հաստատեց Աթոռոյս տպարանը, ինչպէս յիշեցինք Ղազարու գործոց մէջ, իւր ամեն պարագայիւք, արձանագրելով դրան ճակատի վերայ 1771. ուստի և հեռաւոր երկրներէ մեծամեծ ծախուք թուղթ չի բերելու համար, շինել տուաւ և թղթի գործարան Ղազարապատի դրան հանդէպը՝ պարսպէն դուրս ի հարաւ, յորում յառաջին շինած թղթովը տպեց իւր Պարտավճար գիրքը յամին 1776:

Այս սենեկաց ետևէն հաստատուն որմով պարսպեց Տրդատայ ասացեալ դռնէն մինչև նոր պարիսպը, որու արևմտեան բրգի վրայ շինեց ամարանոց և դիտարան դէպ ի դաշտը, շուկայի բոլոր խանութները նորոգելով, որոց մէջ վարձով կնստին բնակիչք:

Եկեղեցւոյ շրջապատը խցերի յառաջ հորեր բանալ տուաւ՝ ընդերկրեայ ճանապարհաւ մէկ մէկի հաղորդելով Փիլիպպոս կաթուղիկոսի բաց արած հորերի հետ, գիճութիւնը ցամաքեցնելու համար, որով Սառը-քանքանի ջուրը բաւական յաւելացաւ ընդերկրեայ ջրերի միատեղ ժողովուելով, և Եկեղեցւոյ յատակը ու միաբանից սենեակները բաւականին ցամաքեցան խոնաւութենէ:

Սիմէօն կաթուղիկոսի այլ ամէն արարքը աթոռապատկան գիւղերում և հոգածութիւնքը նորա բոլոր կալուածքը սեպհականելու գրած են աւանիկ առանձին առանձին գլխով իւր Ջամբռ մատենին մէջ, մենք Կաթուղիկէ Եկեղեցւոյ այս ստորագրութեան մէջ այն ամենը միայն գրեցինք, ինչ որ թողուց գործք և արարք Եկեղեցւոյ և մենաստանի մէջ, որոց թէ թերութիւնք էլ մնացել էին, այն ևս լրացուց Ղուկաս կաթուղիկոս: Ափսոս, որ Սիմէօն կաթուղիկոսից ետքն եկող կաթուղիկոսք, ինչպէս և Ղուկաս, իւրեանց արարքը գրել չեն Ջամբռի մէջն ի յիշատակ, թէ և յիշատակի արժանի գործք չունեցան Ղուկասի յաջորդները:

Ղուկաս, յաջորդելով Սիմէօնին, իւր նախորդի բարի գործքէն ի բարի նախանձ շարժելով, Եկեղեցւոյ և մենաստանի միւս հնացած տեղերն էլ ինքը նորոգեց. Տաճարի որմոց շրջապատ չորս կարգ

քարինքը ի ներքուստ աստիճանների վերէն փոխել տուաւ, որոնք ժամանակի հնութենէն մաշուած և ի տեղիս տեղիս աւերուած էին, որու շինութեան արձանագիրը դրուած է արտաքուստ Աւագ խորանի կիսաբոլորակ որմոց մէջ յարևելից, 1784 թուին:

Եկեղեցւոյ արտաքին շրջապատ սալայատակը շինել տուաւ երկրորդ տարին, որու յիշատակագիրը գրուած է տաճարի արևմտեան դրան հիւսիսակողմը, 1785 թուին:

Տաճարի մէջը, որու նկարները անշքացել էին արդէն, սպիտակացնել տուաւ և նոր ի նորոյ գեղեցիկ ոսկեզօծ նկարներով ծաղկեց ու խորհրդաւոր պատկերներով զարդարեց, որոյ արձանագիրը՝ կաթուղիկէի մէջ շրջապատ գրուած Աստուածատուր կաթուղիկոսի յիշատակարանի ներքև 1786 թուին, նոյնպէս ևս կաթուղիկէի կամարի տակը եղած հիւսիսային կողմի առաջին և յետին դասու սիւները, որոնք խախտուած էին, նորոգել տուաւ և ոսկեզօծ ծաղկեց նկարիչ Յովնաթանի ձեռքով:

Այս ամէն շինութեանց և նորոգութեանց հետ մեծամեծ յիշատակներ ևս թողուց Ղուկաս կաթուղիկոս մենաստանի մէջ, որոնք են՝

Ներքին պարսպի արևելեան հարաւային կողմը, ուր յառաջագոյն Մովսէս Կաթուղիկոս փռնատան հարկաւորութեան համար համբարանոց էր շինել, նոր ամբար շինեց Ղուկաս՝ կրկնայարկ և կամարակապ, կոփածոյ քարով, փռնատան անկիւնէն մինչև հարաւային մեծ դուռը Ջուղայեցի Խաչիկ իշխանի արդեամբք, 1785 թուականին:

Իսկ այս հարաւային դռնէն մինչև Կաթուղիկոսարանի շինուածոց հարաւային ծայրը, ուր Ղազարապատի ներքին դուռն է, գրեթէ բովանդակ նորոգելով՝ շինեց ընդարձակ խոհանոց կամարայարկ, ուր որ յառաջ Աստուածատուր կաթուղիկոս շինել էր տնտեսատունը, որու արձանագիրը նոյն որմին մէջ 1718 թուին, ամառուայ սեղանատունը նոր ի նորոյ յարդարեց երկու կարգ քարէ նստարանով և ընդմէջ հին տնտեսատան և սեղանոյն շինեց կամարայարկ դուռն հանդէպ Տաճարի հարաւային դրան, ընդ որ կմտնեն տնտեսատունը, խոհանոցը ևլն, և բոլոր այս շինութեանց վրայ կոփածոյ քարով է, բարձր շէնքով, նոյն հարաւային երկայնութեան վրայ կցելով արևելեան հարաւային մասնում շինած ամբարի հետ, շինեց երեք մեծ ամբար ևս: Այս դրան ճակատն է շինութեան արձանագիրը 1788 թուին Ջուղայեցի Մարգար աղայի արդեամբք:

Զմեռուայ սեղանատունը ևս ընդարձակելով՝ արևելեան կողմէն հինգ կամար յաւելցրուց առաջուայ շինուածքի վրայ 1790 թուին կեսարացի Յովհաննէս Ամիրայի ծախսով:

Այս վերնայարկ ամբարանոցի արևմտեան ծայրը, ուր երեք բաժին գմբէթատեղի էր մնացել թերի, Ղուկաս կաթուղիկոսի օրէն, յետ նորա հազիւ թէ Դաւիթ կաթուղիկոս ի յիշատակ իւր հոգւոյն շինեց այս երեք վերնայարկ սենեակները իւր խռովայարոյց իշխանութեան միջոցին, երկուքը՝ քարով կամարայարկ և երրորդը ծածկեց փայտով, որով և Կաթուղիկոսարանի հարաւային ծայրը և ամբարի ծայրերը կցեց իրարու հետ, որոնք յետոյ Եփրեմ կաթուղիկոսը յարդարեց գրատուն, որպէս ի ներքոյ:

Սիմէօն կաթուղիկոսի շինած Աթոռոյս դպրատունը՝ երկու պարսպաց մէջն ի հիւսիսոյ, որ տեղւոյ գիճութեան պատճառաւ խախտուած էր և լքեալ, և աշակերտք փոխադրուած էին Տրդատայ դրան վերնայարկ սենեակները, Եփրեմ կաթուղիկոս, դպրատան այս նեղութիւնը տեսնելով, իւր իշխանութեան երրորդ տարին՝ 1813, Ներսէս կաթուղիկոսի վերահասութեամբ շինել տուաւ Աթոռոյս այժմեան բազմասենեակ վարժարանը՝ Եկեղեցւոյ արևելեան կողմի շինութեանց վերայ, Փիլիպպոսի շինած Կաթուղիկոսարանի տեղը, որոյ շինութեան համար Ներսէս կաթուղիկոսի պատրաստած արձանագրերը իւր համառօտ գործոց հետ տպել տուած եմք ի Զմիւռնիա յամին 1844:

Եփրեմ Կաթուղիկոսը ևս Եկեղեցւոյ տանիքը բոլոր նորոգել տուաւ, ուր Պարսից պահապան զօրքը Ռուսաց հետ պատերազմի ժամանակ՝ 1804 թուին, ի տեղիս-տեղիս կրակ վառելով, այրուել ու փշրուել էին քարերը, ուստի և անձրևը կվնասէր կամարները և առաստաղը:

Սա այնպէս ժամանակ նստաւ կաթուղիկոս, երբ Աթոռն Էջմիածին Դաւթի և Դանիէլի խռովութեանց երեսէն պարտքի տակ ընկած՝ միաբանք և երկրի բնակիչք՝ թէ՛ քաղաքական և թէ՛ այս ներքին խռովութենէն ցիր ու ցան եղած, ժողովուրդն՝ ի Վրաստան գաղթած, միաբանքը՝ ի Տփխիս տարագիր եղած, կնստէին, երբ այս երկու գործոց յիշատակը թողուց առաքինի հայրապետը և 1821 թուին Երևանայ խանից երկիւղէն փախաւ ի Վրաստան:

Յովհաննէս Կարբեցի կաթուղիկոսը նստաւ Եփրեմի տեղ՝ Հայաստանի ազատութեան ժամանակ ի Պարսից լծոյն, և միայն Սինոդի սենեակները շինել տուաւ իւր իշխանութեան նոր ժամանակին՝ մեծամեծ լուսամուտներով և սիւնազարդ գաւթով, ներսի ասացեալ

Ղազարապատի և Սիմէօն կաթուղիկոսի շինած ամառուայ վեհարանի տեղն ի հարաւոյ, որոց շինութիւնքն արդէն քայքայուած էին, որոց հիւսիսային սենեակների մէջ գետեղեց տպարանը մինչև 1837 թիւ, երբ այն տեղից ևս փոխադրուեց տպարանը հարաւային մեծ խոհանոցը Նիկողայոս կայսեր գալստեան ժամանակ: Այս արարքը միայն թողուց Յովհաննէս կաթուղիկոս և յետ այսորիկ՝ ոչինչ, վասն զի ժամանակն այնպէս էր փոխուել, որ էլ չէր նկատում դէպ ի իւր նախորդաց շինարարութիւնք:

Կայսերական կարգադրութեան համեմատ էջմիածնայ Սինօդը բացուելէն ետքը, երբ որ առաջին կաթուղիկոսը նստաւ Ներսէս Հինգերորդ Աշտարակցի, իւր օծման առաջին իսկ տարում՝ 1846, սկսաւ լճակի շինութիւնը՝ Սիմէօն կաթուղիկոսի շինած թղթաշինութեան համար փոքրիկ լճակի տեղը Ղազարապատի դրան հանդէպ ի հարաւ, որոյ կոփածոյ քարինքը փակել է տուած եղել իւր նախորդը:

Այս նոր և ընդարձակ, երկար ու քառակուսի լճակը, որ շինեց բոլոր կոփածոյ քարով՝ վեց կանգուն խորութեամբ, երկու հարիւր քայլ յերկայնութիւն և իննսուն ի լայնութիւն, շրջապատ աստիճանաւ դէպ ի ներքս, հազիւ թէ չորս տարում լրացեալ էր մեծագումար ծախսով: Զառաջինն աւելի խորը չլինելու պատճառաւ ջուրը չպահեց, ուստի և կրկին ծախսով քակեց, խորացրուց մինչև ինն կանգուն (երեք սաժէն) և, աստիճանները վերցնելով, նոր և հաստատուն շինեց՝ մէկ աստիճան միայն թողլով որմոց բարձրութեան մէջ տեղը ամառուայ ջրոյ պակասութեան ժամանակ՝ թէ՛ անտառը ոռոգելու, զոր լճակի ներքև տնկեց, և թէ՛ միաբանից ու եկաւորաց զբօսանաց համար:

Լճակի այս շինութեան հետ երկրորդ տարին, այն է՝ 1847 գարնան, սկիզբն արաւ և շինութեան ընդարձակ և մեծակառոյց գոմանոցին՝ Աթոռոյ արևելեան հարաւային կողմը, պարսպէն դուրս, տնտեսատան ասացեալ մեծ պարտիզի տեղը, որ Ս. Գայիանեայ վանից արևելեան կողմն էր, և լճակի շինութեան հետ աւարտեց քառակուսի ընդարձակ շինուածովք գոմոց, մարագաց, խոտատեղւոյն, տնտեսատան և մառանի շինուածքը երկու մեծամեծ դռներով քառաբաժին շինութեանց մէջը՝ մին արևմտից կրկնայարկ, կոփածոյ քարով, որոյ երկու կողմն են տնտեսատունն, մառանն և վերակացուի բնակարանն, և միւսն՝ յարևմտից, ընդ որ անասունքն կելանեն ի դաշտ, որոյ վերնայարկն է ամառուայ բնակարան արմտեաց կասելու ժամանակ:

Այս շինութեանց հետ սկսաւ և մեծագործ անտառը տնկել տալու լճակի հարաւային կողմի ընդարձակ դաշտում, երեք սառնայ հողի երկայնութեամբ և երեք բաժին լայնութեամբ և լցրուց պղատաու թթենի և վայրի ծառերով թէ՛ շինութեան և թէ՛ վառելու համար, որոյ և ներքի երկու կարգ բաժինը Ներսիսի վախճանէն ետքը Աթոռոյ կառավարիչք տնկել տուին:

Անտառի թթի ծառերը հասնելէն ետքը, շերամի գործարան ևս շինել տուաւ Ներսէս, Սիմէօնի թղթաշինութենէն մնացած մէկ սենեկի մէջ՝ ռուս արհեստաւորաց ձեռքով, իւր վերջին տարիները շինեց յԱթոռումս և շաքարի գործարան, բայց մնաց թերի:

Աթոռոյ պարսպումն եղած շուկայն, որ վաղուց արդէն հնացած էր և խարխալեալ, Մատթէոս կաթուղիկոսի օրով քակեցին բոլորովին, մենաստանը յամէն կուսէ աղտեղութենէ մաքրելու, մանաւանդ որ վանքի մտից վրայ լինելով այս խառնիխուռն կրպակները, ընդ որ մեծամեծ անձինք կյաճախէին յԱթոռս, բաւական անվայելչութիւն կը պատճառէր վանքին, ուստի պարսպէն դուրս՝ հիւսիսային արևմտեան կողմը, Վաղարշապատ գիւղի հանդէպ նոր ի նորոյ շինեցին ընդարձակ և քառակուսի շուկայն՝ չորս մեծամեծ դրամբք, կոփածոյ քարով, հարիւր երեսուն կրպակով, յառաջները շրջապատ զարդարեցին կամարայարկ սիւներով՝ թրծած աղիւսով, որոց և որմը արտաքուստ եղած է նոյն իսկ շուկային պարիսպ քառակուսի:

Գէորգ Վեհ. կաթուղիկոս, որ այժմ կվարէ իշխանութիւնը, յաջորդելով հայրապետական Աթոռը յամին 1867, նախորդ կաթուղիկոսաց մեծագործութեան հոգւով վառուեց, որոց արարքը և գործք տեսնելով ի Կաթուղիկէ Եկեղեցին և նոցա երկար ժամանակի ընդհատութիւնը, երբ նոյն իսկ տաճարի մէջի վայելչութիւնը իւր առաջին անշքութեանն էր հասել, միտքը դրաւ Աթոռս ընդհանրապէս վայելչացնելով հանդերձ, նախորդ կաթուղիկոսացն՝ Սիմէօնի, Ղուկասու ևլն մեծագործութեանց հետևել և մշտնջենաւոր արարք թողուլ ի Սուրբ Կաթուղիկէս:

Ուստի ի Ռուսաստան ճանապարհորդած ժամանակ նոյն թուականին, երբ որ քաջալերութիւն ևս լսեց ազգիս յառաջաւորներէ և եկեղեցական տեսչութենէն գտաւ օժանդակութիւն, դառնալով յԱթոռս երկրորդ տարին՝ 1868, սկսաւ շինել Կաթուղիկէ Եկեղեցւոյ Տաճարին կից արևելեան լայնութեան հաւասար երեք նորակառոյց խորանները միանգամայն՝ պահելով արտաքուստ Եկեղեցւոյ խաչաձևութիւնը, որու արևելեան թևը կկացուցանէր Աւագ խորանի

արտաքին կիսաբոլորակ շէնքը, երեքն ևս կոփածոյ քարով, կամարայարկ և գմբէթայարդ, մեծամեծ լուսամուտներով, որոց միջինն ևս կիսաբոլորակ, որպէս ասացի, Եկեղեցւոյ խաչաձևութիւնը պահելու համար արտաքուստ: Այս կիսաբոլորակի մէջն է դրուած մարմարոնեայ քարով այս նոր շինութեանց արձանագիրը, յամի 1869[1] :

Տաճարի հարաւային խորանի դռնէն կմտնեն երկու խորանը ևս՝ մէջմէջ դռներով:

Հիւսիսային և արևելեան կողմի խորանները յարդարեց պահարան եկեղեցական բոլոր թանկագին զարդուց և մասանց սրբոց՝ իբրև թանգարան հնութեանց՝ գեղեցիկ դարակներով, որոց յառաջնում զետեղեց զգեստք, արծաթեղէն սպասք և հնութիւնք, երկրորդի մէջ՝ բոլոր սրբութիւնք, իսկ հարաւային խորանը, օրհնելով անուամբ Սրբոյն Գէորգայ զօրավարի, մեծամեծ դարակներով զարդարեց՝ առ ձեռն գործադրելի սպասուց համար պահարան:

Այս երեք խերանաց կիսագմբէթներու գլուխը ոսկեզօծ մեծ խաչերով զարդարեց և կապարով ծածկեց: Եկեղեցւոյ մէջ հին խորանների դռները բարձրացրուց և կամարակապ բարաւորեց, առաջին դասերը, որպէս և ատեանը Աստուածածնի սեղանոյ յառաջ, թափուածու և ծաղկաձև երկաթի վանդակներով պատեց: Իջման տեղի սեղանոյ ատեանը ևս արձակ լինելու համար հանդիսաւոր օրերում Եկեղեցական ուխտը թափօր կանգնելու, Եղիազար Կաթուղիկոսի դրած երկու ստուար քարերը վերցնել տուաւ:

Իսկ Եկեղեցին զարդարեց ջահաձև ապակեայ գեղեցիկ կանթեղներով, որպէս առաջի դասը, նոյնպէս և Իջման տեղւոյ Կաթուղիկէի շրջապատը, ըստ որոյ և Եկեղեցւոյ միջին վայելչութիւնը համակերպելու՝ ըստ մեծ վայելչութեան անուանն, Աւագ խորանի և Սրբոյն Ստեփաննոսի և Սուրբ Յովհաննու սեղանների համար թանկագին վարագոյրներ բերել տուաւ, նուէրք Տփխիսեցի բարեպաշտից՝ կարմիր մախմուր՝ աւագ սեղանին, և դեղին ծաղկեայ աթլաս՝ երկու սեղաններին:

Տաճարի այս շինութեանց հետ Կաթուղիկոսարանը ևս զարդարեց Վեհափառ Հայրապետը վայելուչ շէնքերով: Կաթուղիկոսա-

1 Այս խորանների շինութեան մեծ և առաջին պատճառն էր Տաճարի միջի կողմնական խորանների փոքրութիւն և անձկութիւնն, որոնք իրենց մթութեամբ և միակ անձուկ լուսամուտներով անվայելչութիւն կբերէին այսպիսի Աթոռանիստ Մայր Եկեղեցւոյ վայելչութեան, որոյ մէջէն օդ չխաղալով՝ եկեղեցական զարդք ու թանկագին զգեստները փտութեան կենթարկէին, մանաւանդ հարաւայինը, որոյ մէջ խառն ի խուռն և իրարու վրայ կդրուէին զգեստք՝ արծաթեղինաց հետ տեղւոյ անձկութենէն ստիպուելով:

բանի մտից դուռը, որ իւր նեղ և անձուկ փոքրկութեամբ անվայել էր Կաթուղիկոսական տան, փակեց զայն և նորանից ինն կանգուն դէպ ի հիւսիս Կաթուղիկոսարանի ներքնայարկը բանալով՝ սենեկաց միջոցը կտրեց և մեծ ու կամարայարկ դուռն կանգնեց սրբատաշ քարով, որոյ ներքին ելքը դէպ ի վեհարան երկու կողմից քարէ սանդուղներով բարձրացան, և այս դրան ներսի կամարայարկի վրայ տախտակամած և դեղագործեալ նոր դուռն կանգնեց դէպ ի Վեհարան՝ շրջափակ ապակի լուսամուտներով, գրեթէ Կաթուղիկոսարանի կիսաբաժնի մէջ, այն տեղ, ուր Յովհաննէս կաթուղիկոսն ևս դուռն էր թողել, բայց Ներսէս կաթուղիկոսը փակեց:

Իսկ գրատան մուտքը, որ բոլորովին անյարմար էր Աթոռոյս մեծ վայելչութեան, և տանեաց ճանապարհով Վեհարանի միջով կելանէին ի վեր այցելուք, գեղեցիկ ևս յարդարել տուաւ:

Գրատան դուռը, որ կբացուէր արևմտից գանձարանի կարգն եղած ներքնայարկ սենեակների տանեաց վրայ, արևմտեան լայնութեան հաւասար չինել տուաւ տախտակամած մեծ սրահ՝ գրատան դուռը մէջ առնլով, զարդարեց նստարանօք և յարդարեց զայն ընթերցարան միաբանից, որոյ շէնքը կցելով ի հարաւոյ Վեհարանի հետ՝ ներքուստ մինչ ի վեր կանգնեց սանդուխք, ճախարակաւոր և դրան առաջի պատշգամը, գոյնզգոյն ներկով դեղագործած՝ դրան բարձրութեանը հաւասար մեծ մեծ լուսամուտներով զարդարեց:

Ղազարապատ ասացեալ հիւրանոցը, որ խախտացած էր վաղուց, բոլորը նորոգել տուաւ և շրջապատ տախտակամած ճեմելիքը սենեկաց յառաջ հանդերձ սանդուղներով նոր ի նորոյ չինեց:

Աթոռոյս մեծակառոյց և հոյակապ Ճեմարանը ևս նոյն թուականէն 1869, սկսաւ չինել Եկեղեցւոյ խորանաց հետ, որոյ հիմնարկութեան հանդէսը նոյն տարուայ մայիս ամսին Եկեղեցական օրհնութեամբ կատարեց և երկու տարում պատից չինութիւնը աւարտեց՝ երեսներն կոփածոյ քարով, որու ներքին փայտեղէն և ատաղծագործ բովանդակ պարագայքն ու դեղագործութիւնքը չորս տարուայ միջում լրացան:

Ի մեծ վայելչութիւն նորակառոյց Ճեմարանին, որպէս և գիւղին առ հասարակ, Աթոռոյ պարսպի հիւսիսային դրան առաջի երկայն հրապարակն ընդ մէջ պարսպին և գեղջ, ուր որ յառաջն գիւղացւոց նախիրը կժողովէր առաւօտ և երեկոյ և ոչ սակաւ օդոյ անմաքրութիւն կպատճառէր, յարդարել տուաւ հասարակաց պարտէզ (բուլվար)՝ դրան յառաջէն պարսպի երկայնութեամբ ի ծայրէ ի ծայր, մինչև Ճեմարանի յառաջը, երեք հարիւր քսան և չորս

կանգուն երկայնութեամբ և իննսուն կանգուն լայնութեամբ, ուր վայրի և ընտանի նորատունկ ծառեր կարգ ըստ կարգէ տնկելով՝ բոլոր շրջապատը դեղագործեալ սիւնեակներով ցանկապատեց, որ այժմ ոչ սակաւ գիւղի անշքութեանը շուք և քաղաքի կերպարանք կտայ ի մեծ զուարճութիւն թէ՛ ծառայողաց քաղաքական կառավարութեան, որ ի Վաղարշապատ ամառ ժամանակին, և թէ՛ բոլոր գիւղացւոց զբօսանք՝ եկին և օտարին:

Լճակի եզերքը, որ ճեմելու համար երկու կարգ շրջապատ ֆարշած էր կոփածոյ քարով, մի կարգ ևս աւելցած էր Մատթէոս կաթուղիկոսի օրով, այս եզերաց ուղղութեամբ երեք կարգ ծառերով շրջապատը զարդարեց, որ ամառը մեծ վայելչութիւն կտայ լճակին և ճեմողաց՝ ոչ սակաւ զբօսանք:

Անտառի արևմտեան կողմէն կից նորան նոյն երկարութեամբ և լայնութեամբ նոր անտառ ձգեց բոլոր լեռնային և վայրի նորատունկ ծառերով, որոց կէս մասին ծառերը վերուստ ի վայր ձգուած են և հասունացած, ուստի բոլոր անտառը ապահով պահպանելու համար շրջապատ պարսպեց:

Վաղարշապատայ Կաթուղիկէ Եկեղեցւոյ ստորագրութիւնը ամբողջացնելու համար հարկ էր առնել և նորա տեղագրութիւնը ըստ կարգի, ըստ որում երեքին նորաշէն խորանները միացած են տաճարի հետ, բայց ըստ որում յիշեալ խորանաց շինութիւնքն արդէն ստորագրեցինք, աւելորդ կհամարիմք կարգել եկեղեցւոյ տեղագրութիւնն էլ՝ թողլով ընթերցողաց տեսնել զայն յԱռաքել պատմագիրն և Շահխթ. Յովհաննէս եպիսկոպոսի Կաթուղիկէ Եկեղեցւոյ ստորագրութեան մէջ:

Բ. Եկեղեցի Սրբոյն Հռիփսիմեայ

Վաղարշապատայ երկրորդ եկեղեցին, զոր շինեց Սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր Սրբոյն Հռիփսիմեայ կուսի գերեզմանի վրայ, զոր փորեց Սուրբն Տրդատ, նոյն քաղաքի հիւսիսային արևելեան կողմն է, քառորդ ժամու հեռաւորութեամբ, այն հնձանատեղւոյ վրայ, ուր որ պատսպարուած էին սուրբ Կուսանքն, և ուր նահատակուեց Սուրբ Հռիփսիմէ իւր ընկերներով, և վանքն կառուցաւ նորա իսկ անուամբ ի 301 թուականին:

Մատուռն գերեզմանին Հռիփսիմեայ, որոյ մէջ դրուած է և արկղն նշխարաց՝ է ուղղակի սեղանի բեմի տակին, փոքրիկ, կամարակապ, երկայն, մարդաչափ բարձրութեամբ, որոյ մուտքն կբացուի հիւսիսային կողման խորանի մէջ երեք աստիճանաւ դէպ ի ներս:

Գրիգոր Լուսաւորչի շինած եկեղեցին Հռիփսիմէի գերեզմանի վրայ, թէ ինչ նիւթից էր կամ ինչ ձև, Ագաթանգեղոս չի յիշատակեր, այլ միայն սուրբ կուսի գերեզմանի համար կգրէ, թէ նա ինքն Տրդատ փորեց սրբոց գերեզմանատեղը արկեղաց չափով, զոր Սուրբն Գրիգոր տուաւ նորան, որ նոցա մէջ շինեց նոցա հանգստեան մարտիրոսական յարկը (Ագաթան. եր. 287), միայն յետագայ պատմիչք կաւանդեն տաճարի շինութիւնը ի Սուրբ Լուսաւորչէն, ինչպէս յառաջ կը բերենք:

Լուսաւորչու շինած Սրբոյն Հռիփսիմեայ տաճար Շապհոյ զօրքը կործանեց 380 փրկչական թուին, զոր ապա տասն և հինգ տարիէն ետքը՝ 395, Սուրբն Սահակ Պարթև նորոգեց և յանգէտս բանալով սրբոց տապանատեղին՝ տեսաւ Սուրբ Լուսաւորչի կնիքը սուրբ կուսի տապանի վրայ, յորմէ իւր փափաքն առնելով, առանց բանալոյ արկղն, ինքն ևս կնքեց:

Այս երկրորդ շինութեան վրայ, երբ որ անցել էր արդէն երկու հարիւր քսան երեք տարի, Կոմիտաս կաթուղիկոս, որ նախ փակակալ էր Հռիփսիմեայ վանից, ինչպէս պատմիչք կվկայեն, իւր կաթուղիկոսութեան իսկ առաջին տարում՝ 618 թուին, Սահակ Հայրապետի ժամանակէն շինուած ցած ու մթին շինուածքը քակելով՝ պայծառ և վայելուչ ևս շինեց Հռիփսիմեայ կուսի եկեղեցին, կոփածոյ քարով, լայնանիստ կաթուղիկէիւ, շրջապատ պատշգամով ի ներքուստ, և արտաքուստ շրջանակը և լուսամտաց կիսաբոլորակ կամարները բոլոր փորուածոյ դրուագներով, և տանեաց վրայ Կաթուղիկէի չորս կողմը բոլորակ սենեակներ, որոյ դուռը կբացուի պատշգամբի մէջէն:

Կոմիտաս կաթուղիկոսի այս շինութեան համար կվկայէ նորա ժամանակակից Սեբէոս եպիսկոպոս պատմիչ նոյն եօթներորդ դարում, այսպէս:

«Յամի ԻԸ թագաւորութեան Ապրումէզ Խոսրովու քակեաց Կաթուղիկոսն Կոմիտաս զմատուռ սրբոյն Հռիփսիմեայ ի Վաղարշապատ քաղաքի, զի կարի ցած և մթին էր շինուածն, զոր շինեալ էր սրբոյն Սահակայ Հայրապետի՝ Հայոց Կաթուղիկոսի՝ որդւոյն սրբոյն Ներսիսի»:

Այս շինութեան ժամանակ ևս սուրբ կուսին դագաղը հանելով Կոմիտաս և չհամարձակելով բանալ, որու վրայ տեսաւ Լուսաւորչի և մեծին Սահակայ կնիքը, ինքն ևս կնքեց և այնպէս բացօթեայ թող տալով դագաղը յուխտ և ի համբոյր ժողովրդոց, եկեղեցու շինութիւնը լաւ ցամաքելէն ետքը արկղը ամփոփեց վերստին իւր կայանին մէջ:

Կոմիտաս կաթուղիկոսի Հռիփսիմեայ վանքի այս շինութիւնը կյիշատակեն յետագայ պատմիչք ևս, ինչպէս Յովհաննէս կաթուղիկոս յիններորդ դարում, Ստեփաննոս Ասողնիկ՝ տասներորդին մէջ, բայց Կոմիտասայ ժամանակակից պատմագրի վկայութիւնը բաւական համարեցինք վասն հաստատութեան միայն յառաջ բերել մեր ստորագրութիւնը աւելորդ տեղը չի երկարացնելու համար: Միայն յիշեալ հայրապետի շինութեան արձանագիրը աստ կօրինակենք, որ կայ յիշեալ եկեղեցւոյ արևմտեան դրան կամարէն վեր՝ որմի մէջ, ըստ այսմ:

«Ես Կոմիտաս եկեղեցապահ սրբոյ Հռիփսիմէի, կարգեցայ յաթոռ սրբոյն Գրիգորի, և շինեցի զտաճար սրբոց վկայիցս Քրիստոսի»:

Հռիփսիմեայ վանքի այս շինութիւնը Կոմիտաս կաթուղիկոսէն յընթացս տասն դարուց՝ 618-1653, ժամանակի աշխարհքի բռնութեանց դէմ դրեթէ մաքառելով և անհնարին փոփոխութիւններ կրելով՝ կէս մի ամայութեամբ, կէս մի աւերանքով, անցուցել էր արդէն այդ դարաւոր ժամանակները, երբ որ Պարսից և Օսմանցւոց փոխադարձ պատերազմաց երեսէն խաղաղութիւն գտնելով Հայաստան՝ ազգիս կաթուղիկոսունք վերստին սկսան նորոգել Վաղարշապատայ կաթուղիկէն և վերստին տարագիր ու հալածուած հոգևոր միաբանութիւնը ժողովել այդ աստուածահաճոյ պատսպարանների մէջ, ի գուք շարժեցաւ Փիլիպպոս կաթուղիկոսը Կաթուղիկոսական տան շինութեանց հետ, և Հռիփսիմեայ վանքի բոլոր աւերանքը շինել, և եկեղեցւոյ քայքայեալ որմերը, տանիքը և այլն ամենայն սրբատաշ քարով նորոգել, որոնք դրեթէ բոլորն ի հիմանց նոր ի նորոյ շինեց՝ միաբանք կարգելով անդ, ի 1653 թուին, որ յառաջ անմարդաբնակ և ամայի էր, որոյ և արձանագիրն Կոմիտաս կաթուղիկոսի արձանագրի ներքև կտեսնուի ըստ այսմ:

«Ի թուին ՌՃԲ (1653) Քրիստոսի ծառայ Փիլիպպոս Կաթուղիկոս ամենայն Հայոց վերստին նորոգեցի զեկեղեցիս սրբոց կուսանացն Հռիփսիմեայ և Գայիանեայ»:

Եղիազար կաթուղիկոսն ևս, որ շատ եկեղեցիք շինեց, որոց համար Սիմէօն կաթուղիկոս կվկայէ, Հռիփսիմէի վանքի մէջն ևս բաւական նորոգութիւններ արաւ:

Սիմէօն կաթուղիկոսի շինութեանց ժամանակ ի Կաթուղիկէն նորա սպասաւոր Մկրտիչ եպիսկոպոսը իւր արդեամբք և ի յիշատակ Հռիփսիմեայ վանաց քառակուսի պարիսպը շինեց չորս

բրգով՝ հիւսիսային կողմը կանգնելով կամարակապ մեծ դուռն, որու արձանագիրն դրուած է դրան կամարի մէջ ի ՌՄԻԵ, 1776 թուին:

Իսկ 1790 թուականին Ղուկաս կաթուղիկոսն Փիլիպպոսի շինած եկեղեցւոյ փոքրիկ գաւթի վրայ կառուցանել տուաւ վայելուչ Կաթուղիկէ՝ սրբատաշ քարով, չորս սեան վրայ, Ջուղայեցի Խաչիկ իշխանի արդեամբք, որ կընակէր Հնդկաստանի Կալկաթայ քաղաքը, և սորա շինութեան արձանագիրն է զանգակատան մէջ՝ դրան հիւսիսային կողմը, նոյն թուականում:

Տաճարի շէնքը դրսի կողմէն քառակուսի է, բայց ներքուստ՝ բոլորշի, ըստ որում որմասիւները հիւսիս և հարաւային որմերէն յառաջ գալով՝ բոլորշի ձև են կացուցել ներքուստ, որոց վրայ է լայնանիստ Կաթուղիկէն, ճապաղած արտաքուստ տանեաց վրայ, միջի կողմը ունի Կաթուղիկէն շրջապատ պատշգամբ, որոց մէջ կբացուի Կաթուղիկէի չորս կողմը շինած տանեաց վրայ բրգաձև սենեկաց դռները, որով և չորս լուսամուտ միայն ունի լայնանիստ Կաթուղիկէն:

Ունի մի սեղան պատարագի և չորս խորան առաջին և յետին դասերի կողմնական անկիւններում, և այն արժանայիշատակ Կաթուղիկոսաց գերեզմանները կան տաճարի մէջ, որոնք, սկսած Կոմիտաս կաթուղիկոսէն, նորոգել են Հռիփսիմէի վանքը կամ շինութիւններ արել: Բեմի առաջին Կոմիտաս կաթուղիկոսի տապանն է, որոյ տապանաքարն հաւասար է սալայատակի հետ, որ ի սկզբանն այնպէս վայելուչ, կոփածոյ քարով կանգնեց այս տաճարը եօթներորդ դարու ճարտարութեամբ:

Փիլիպպոս կաթուղիկոսի դամբարանը աջակողմեան դասի հիւսիսակողմն է՝ բարձր տապանաքարով, որ տաճարի վերջին վայելչացնողն է և շէնացնողը դարաւոր ամայութենէ:

Իսկ արևմտեան դրան առաջին արտաքուստ զանգակատան ներքև երկուց կաթուղիկոսաց դամբարանները կան՝ Կարապետ և Աստուածատուր կաթուղիկոսաց: Պարսպի միջին ևս կան քանի մի շիրիմներ, որոց մէջ նշանաւորն է Լեհացի Ստեփաննոս վարդապետինն, որ երևելի է իւր պատկերահանութեամբ և գրաւոր վաստակովք:

Սիմէօն կաթուղիկոսի օրէն սկսեալ, երբ որ պարիսպը շինուեց, բովանդակ Պարսից իշխանութեան ժամանակ շարունակ վանահայր կնստէր Հռիփսիմէի վանքը, օրական հաց և կերակուր կտանէին Աթոռէս: Պարսից վերջին բռնաւորութեանց երեսէն ստիպուած

ժողովուրդը շատ տեղերէ իրենց որդիքը ապահովելով՝ յԷջմիածին՝ իբրև տեղի ապաւինի, կտային ի հոգևորականութիւն: Մինչև վաթսուն աշակերտք Աթոռոյ կառավարիչք կպատսպարէին Հռիփսիմէի վանքի մէջ՝ նոցա սնունդ և հանդերձը հոգալով յԱթոռոյ:

Գ. Եկեղեցի Սրբոյն Գայիանէայ

Գայիանեայ սրբոյ կուսի վկայարանը, զոր շինեցին Սուրբ Լուսաւորիչն մեր Գրիգոր և Տրդատ՝ էր Վաղարշապատ քաղաքի հարաւային կողմը, արտաքոյ հարաւային դրանն, սրբոյ կուսի նահատակութեան իսկ տեղը, որոյ վերայ տեսաւ Ս. Գրիգոր երեք լուսեղէն խարիսխներէն մէկը, ուր և ամփոփեցին սուրբ նահատակի մարմինը և նորա հետ եղած երկու ընկերացն յ301 թուականին Քրիստոսի: Այս շինութիւնը ևս թէ ի՞նչ ձև էր՝ որպէս և Հռիփսիմեայ վանքի առաջին շինութիւնն ի Լուսաւորչէն, Ագաթանգեղոս ժամանակակից պատմիչն յայտնի չի գրել, ուստի եկեղեցեաց յետագայ ժամանակի շինութիւններէն կհասկացուի, որ Լուսաւորչի և Տրդատայ շինածները մատուռներն են՝ վկայարան նոցա մարմնոյ հանգստեան, և ո՛չ հոյակապ եկեղեցիք:

Մինչև եօթներորդ դարը Սրբոյն Գայիանեայ վկայարանը ևս յամայութեան մէջ էր Հռիփսիմեայ վանքի հետ, ուստի և Կոմիտաս կաթուղիկոսէն ետքը, որ Հռիփսիմեայ եկեղեցին շինեց 618 Փրկչական թուին, Եզր կաթուղիկոս, 630 թուին Սրբոյն Գայիանեայ վկայարանի նսեմ և մթին շէնքը քակելով, շինեց ընդարձակ և հոյակապ, կոփածոյ քարով, վայելուչ Կաթուղիկէիւ, և, ինչպէս կերևի, արտաքուստ պարսպելով զայն՝ պատրաստեց տեղի բնակութեան հոգևոր պաշտօնէից ի սպասաւորութիւն աստուածային խորանին ըստ վկայութեան Յովհաննէս Զ-րդ կաթուղիկոսի՝ ըստ այսմ:

«Իսկ ապա Հայրապետն Եզր զվկայարան սրբոյն Գայիանեայ, զոր երբեմն խրթին և մթին էր շինել, քակեալ զայն, ևս ընդարձակագոյն և պայծառագոյն զնա շինեաց կոփածոյ քարամբք և կրով ձուլելով և արտաքուստ յարդարէր կայանս բնակութեան քահանայական դասուց ի պաշտօն աստուածային խորանին»:

Սորանից ետքը Գայիանէի վանքը ևս մնաց անխնամ և ամայի մինչև պարսից երեսէն երկրի խաղաղանալը, երբ որ Փիլիպպոս կաթուղիկոս Հռիփսիմեայ վանքի նորոգութենէն յառաջ՝ 1652 թուին նորոգեց Գայիանեայ տաճարը գրեթէ բոլորովին, և Կաթու-

ղիկէն՝ բովանդակ, ըստ որում բոլորովին քայքայուած էր տանիքը, և կաթուղիկէն՝ խոնարհած, միայն չորս որմունքն և չորս սիւները կանգուն կմնային, և այն՝ տեղ տեղ ծակոտուած և խրամատեալ, զորոնք Փիլիպպոս կաթուղիկոս մեծ ջանքով և մեծ ծախսով նորոգեց կոփածոյ քարով ի հիմանց մինչև գմբէթը, որոյ վերայ և հաստատեց նշան տէրունական խաչին, ինչպէս Առաքել պատմագիրն կվկայէ:

«Բայց սրբոյն Գայիանեայ կուսի տաճարն առաւել աւերեալ էր, զի տանիքն բովանդակ իջեալ էր, միայն շուրջանակի որմունքն և չորեք սիւնքն կային կանգուն, գլուխն ի բաց, և յատակ որմոցն աստ և անդ ծակոտեալ և խրամատեալ, որոց արար նորոգման սկիզբն Կաթուղիկոսն տէր Փիլիպպոս մեծահղաշ կարօտիւ և ջանիւ, և բազում գանձս ծախելով՝ նորոգեաց գեղեցկաշէն ի հիմանց մինչև ցգագաթ գմբէթին, յորոյ վերայ կառուցին զնշան տէրունական խաչին»:

Փիլիպպոս կաթուղիկոսի արած այս նորոգութիւնն սուրբ Գայիանեայ վանից եղև Փրկչական 1652 թուին և Հայոց ՌՃԱ, որում գործավար և վերակացու կարգած էր Յովհաննէս աբեղայ ոմն՝ գործունեայ և արդիւնաւոր մարդ, որ Առաքել պատմագրի վկայութեան նայելով, տարակուսելով, թէ սուրբ կուսի նշխարքը անդ է, թէ ո՛չ, որովհետև մատուռը բոլորովին աւերուած էր բեմի հետ, որոյ վերայ շինած էր, առանձին ժամանակ կբանայ սուրբ կուսին գերեզմանը և հաստատութեան համար մասն մի ի նշխարացն առնլով՝ վերստին կամրացնէ զտեղին, այլ մեք ըստ որում սրբոց կուսանաց պատմութիւնը չենք գրում այս պատճառաւ, ինչպէս Սրբուհոյն Հռիփսիմեայ նշխարաց, նոյնպէս և Սրբոյն Գայիանեայ կթողունք ի բաց, որ արտաքոյ են եկեղեցեաց պատմական ստորագրութենէն:

Երեսուն տարի Փիլիպոսէն ետքը Եղիազար կաթուղիկոս, դառնալով յէջմիածին՝ Աթոռոյ մէջ արած մեծամեծ շինութեանց հետ՝ Սուրբ Գայիանեայ վանքին շինեց վայելուչ գաւիթ՝ կից եկեղեցւոյն արևմտից, երկու կողմից ևս երկայնեալ, քան տաճարի լայնութիւնը, և այս երկայնութեան հիւսիսային և հարաւային կողմերում յարդարեց փոքրիկ սեղաններ Սրբոյն Պետրոսի և Պողոսի անուամբ, փոքրիկ զանգակատներով, քառակուսի պարսպով պատսպարեց վանքը և հոգևորականաց բնակութեանց համար կանգնեց հարկաւոր շինութիւնք և հաստատեց միաբանութիւն անդ, ինչպէս գրուած է արձանագրի մէջ, որ տաճարի արևմտեան դրան ճակատի վրայ՝ ի ներքոյ նորաշէն գաւթին:

Այն ժամանակէն սկսեալ շարունակ կը նստէր վանահայր Գայիանեայ վանքում, և, ինչպէս որ գրեցինք Հռիփսիմեայ վանքի համար, նոյնպէս և Գայիանէի վանահարք Պարսից ժամանակին Աթոռէն կը տանէին հաւասար օրական հաց և տարեկան հանդերձ, ըստ որում ուրիշ միջոց չունէին կառավարութեան:

Պատերազմէն ետքը որոշեցաւ այս երեք վանքերի համար ևս վարելահող և տրուեցաւ նոցա յԱթոռոյս լծկան և կթի անասունք: Այս միջոցիս ևս Տփխիսեցի ոմն Գոգի անուն, որ երկար ժամանակ յԱթոռս կծառայէր, յիշատակ թողուց Գայիանէի վանքին մէկ մեծադիր այգի, զոր իւր արդեամբք շինեց և իւր ծախսովը հասոյց ի պտղատուութիւն:

Եկեղեցին է երկար քառանկիւնի, բարձր, հոյակապ կաթուղիկէիւ չորս սեան վերայ, ունի երեք դուռն և մեծամեծ լուսամուտներ, տաճարի հիւսիսային դուռը և քանի մի կողմնական լուսամուտներ փակուած էին յառաջագոյն, և արտաքուստ ի տեղիս տեղիս խախտուած որմունքը:

Ներկայ ժամանակումս Տփխիսեցի Եղիա Բաստամեանց ուսումնական երիտասարդը, Լազարեանց ճեմարանի աշակերտութենէն Մոսկուայի կայսերական Համալսարանում իրաւաբանական գիտութեան ուսումն աւարտելով (կանդիտատ կոչումով)՝ եկաւ Սուրբ Աթոռս Էջմիածին, ուր յարատևելով մերձ երկու տարի, ապա ըստ իւր ցանկութեան և բարեհաճութեամբ Վեհափառ Կաթուղիկոսի ձեռնադրուելով միաբան Ս. Գայիանեայ վանից՝ կոչեցաւ Վահան վարդապետ, և կարգուելով յիշեալ վանքին վանահայր 1872 թուականին՝ բոլոր եկեղեցին ներքուստ և արտաքուստ վայելչապէս զարդարեց իրեն տարեկան նշանակած սննդադրամովն և նուիրատուութեամբ ժողովրդոց, որմոց խախտուածները նորոգեց, հիւսիսային դուռը և փակած լուսամուտները բանալով՝ բոլորը ևս մեծացրուց ի պայծառութիւն տաճարին:

Իսկ եկեղեցւոյ արևմտեան ճակատը փակող հին սենեակները քակեց, որք, հիւսիսից հարաւ երկարացած, իբրև ներքին պարիսպ կձևանային և գաւթի տեսքը կփակէին արտաքուստ, տաճարի արևմտեան դրան հանդէպ, ուղղաձիգ և լայն ճանապարհ բանալով, պարսպի մեծ դուռը դիմացէ դիմաց կանգնեց նոր ի նորոյ կամարայարկ, որ յառաջ փոքր ինչ վեր էր դէպ ի հիւսիս:

Հին սենեակների հարաւային ծայրն եղած ներքնատան վերայ շինեց նոր և գեղեցիկ սենեակներ բնակութեան համար՝ մեծ լուսամուտներով և արձակ պատշգամբ կանգնելով յարևելից, ընդ որ

դրան մուտքն է, սենեկաց մէջ պատրաստելով և փոքրիկ դպրոց, ուր կուսանին հայերէն և ռուսաց լեզու ըստ մեծի մասին Վաղարշապատումն եղած քաղաքական ատենից մէջ ծառայողաց որդիք:

Հիւսիսային բաժնում ևս կառուցել է արդէն նոր սենեակների հանդէպ երկու երես մեծադիր շինուածք, չև ևս ծածկուած, որոց մէջ պէտք է լինին վանքի այլ հարկաւորութեանց համար զանազան սենեակներ և տպագրատուն, որոյ համար բերած է Վահան վարդապետ մի հատ տպագրութեան մամուլ, որով կտպագրէ արդէն «Դպրոց» Ամսագիրը, որում կմաղթեմք յԱստուծոյ և ևս արիութիւն և յաջողութիւն, որ ուրիշ վանօրէից և վանահարց օրինակ կլինի թէ՛ տպարանի հաստատութեամբ, և թէ՛ ամենայն շինութեամբ և բարեվայելչութեամբ պայծառացնելով զՍուրբ Գայիանեայ վանք՝ շնորհիւ Վեհափառ Հայրապետին մերոյ:

Դ. Շողակաթ անուանեալ եկեղեցի փակոց կուսին. 1[1]

Սրբոյն Գրիգորի և Տրդատայ շինած վկայարանների մին ևս էր «Ի տեղւոջ հնձանին», ուր սուրբ կուսանացն Հռիփսիմեանց օթևանքն էին, և ըստ տեսլեանն՝ երեք լուսեղէն խարսխաց մին անդ իջած, Ագաթանգեղոսի վկայութեամբն ըստ այսմ:

«Եւ նայեցայ և տեսանեմ այլ խարիսխս երիս, մի ի տեղւոջն, ուր վկայեաց սուրբն Գայիանէ երկու ընկերօքն, և մի ի տեղւոջն, ուր վկայեաց սուրբն Հռիփսիմէ երեսուն երկու ընկերօքն, և մի՝ ի տեղւոջ Հնձանին» (եր. 272), որոց տեղը վկայարան կանգնելու համար ևս կգրէ այսպէս. «Կանգնեալ երիս վկայարանս՝ մի ի հիւսիսոյ արևելից կողմանէ քաղաքին, ուր վկայեաց սանականն Հռիփսիմէ երեսուն երկու ընկերօքն, և զմիւսն շինեցին ի հարաւակողմն կուսէ անտի, ուր վկայեաց սուրբն Գայիանէ նորուն սնուցիչ երկու ընկերօք, և միւսն՝ մօտ ի Հնձանն ի մէջ այգւոյն, ուր էին վանք նոցա»: (Եր. 279):

Եւ այս երրորդ վկայարանը կանգնեցաւ մենաւոր կուսի[2] սպանման տեղը՝ «մօտ ի Հնձանն», որ իւր հիւանդութիւնը իւր

1 Շողակաթ կանուանէր ըստ յառաջ բերելոյ և Յովհ. Եպիսկոպոսի Շահխաթունեան Կաթուղիկէ Եկեղեցին Վաղարշապատայ, իսկ մենաւոր կուսի վկայարանը, նախ քան այժմեան հոյակապ Եկեղեցւոյ շինութիւնքը, ինչպէս կերևի յառաջ բերած Արծանագրէն, Հնձանեաց մատուռն կը կոչուէր, ուստի Եկեղեցւոյ շինութենէն ետքը կերևի սովորութիւն եղած Շողակաթ անունը:

2 Ագաթանգեղոս հիւանդ կուսին անուն չի նշանակեր, բայց միայն մենաւորն, կգրէ, որ ի հնձանին սպանաւ: (Եր. 283): Ուստի այլ անուն ընծայել նմին հաւանական չի երևիլ արտաքոյ պատմութեան:

նահատակութեան աղօթից մէջը ցոյց կտայ ըստ Ագաթանգեղոսի. «Գոհանամ զքէն, Տէր բարերար, զի և զիս ոչ զրկեցեր, զի և ես հիւանդ էի և ոչ կարացի ընթանալ և զհետ ընկերացս ժամանել»: (Եր. 69):

Լուսաւորչու շինած վկայարանէն ետքը Հնձանի վերայ կառուցաւ մատուռն՝ հոյակապ և կոփածոյ քարով, տաճար փոքրիկ, ըստ նորա արձանագրին, ըստ այնմ՝ «Շինեցաւ Հնձանից մատուռս ի թուին ՁՃ և Գ, որոյ և աւերակը մինչև ցարդ կմնայ ճանապարհի վերայ հանդերձ իւր շրջապատ աստիճաններով. միայն արձանագրի փոքրիկ խաչքարը զետեղած են եկեղեցւոյ պարսպի հիւսիսային արևմտեան բրգան վերայ մարդաչափ բարձրութեամբ, ինչպէս կերևի, մատուռը քակուելէն ետքը դրած են անդ վասն յիշատակի[1] :

Այժմեան հոյակապ փոքրիկ եկեղեցւոյ շինութիւնն եղած է Նահապետ կաթուղիկոսի ժամանակին, որ շինեց զայն արդեամբք Շոռոթեցի Աղամալ անուն իշխանին, յամի 1694, կոփածոյ քարով, անսիւն և վայելուչ կաթուղիկէիւ՝ չորս լուսամտով և երկու դռնով՝ արևմտից և հարաւոյ կողմէն, որոյ հարաւային խորանի մէջն է մենաւոր կուսի տապանաքարը, և շինութեան արձանագիրն է արևմտեան դրան ճակատի վերայ վերոգրեալ թուականով:

Ունի գաւիթ՝ փոքրիկ զանգակատնով, արևմտեան ճակատի լայնութեամբ, որոյ մէջ՝ դրան հիւսիսային և հարաւային բաժնում, ամփոփուած են Նահապետ և Կրետացի Աբրահամ կաթուղիկոսաց մարմինները:

Այս շինութեանց ժամանակ ընդարձակ քառակուսի պարսպով պատել են վանքը չորս բուրգերով, որոց հիւսիսային արևմտեան բրգան վերայ է դրած արձանագրի փոքրիկ խաչքարը՝ ճանապարհի վերայ, պարսպի կամարակապ դրան մօտ, որոյ ներքոյ և այժմ իսկ խաչ և Աւետարան կդնեն ի համբոյր ժողովրդոց, Զատկի Մեռելոց երկուշաբաթի օրը, որոնք գիւղովին կգան ի հասարակաց գերեզմանատուն:

Պարսից ժամանակին Շողակաթ նստող վանահարք բաւական չէն ու պայծառ կպահէին վանքը: Յուռշանենց ասացեալ Յակոբ

1 Արձանի թուականը՝ ՁՃ և Գ, տարակուսութեան մէջ կձգէ զընթերցողս, որովհետև չի որոշել՝ փրկչակա՞ն է, եթէ Հայոց թուական, Ազգիս սովորականին նայելով՝ ի հնումն հայ թուականն ի գործ կդնէին, ըստ այսմ, եթէ առնունք զայն երկոտասաներորդ դարու մէջ գրուած, այն է ի 1154 թիւ Փրկչին, յիշատակութիւն չեմք գտնել առ պատմագիրս Հնձանեացս մատրան շինութեանը, իսկ եթէ վերածեմք զայն ի Փրկչական թիւ, այսինքն ի 603, և ոչ այդ ժամանակ կյիշեն պատմիչք այդպիսի շինութիւն, միայն թէ այդ թուականէն տասն և հինգ տարի ետքը Կոմիտաս Կաթուղիկոս կշինէ Հռիփսիմեայ վանքը, ինչպէս նորա ստորագրութեան մէջ:

եպիսկոպոսը, որ պատերազմէն յառաջ և յետ կնստէր վանահայր, չինարար մարդ լինելով՝ իւր աշխատանքով շինեց մի մեծ այգի, և թէ՛ վանքը, և թէ՛ պարսպի մէջն եղած պարտեզները ամենակերպ վայելչութեամբ այնպէս էր զարդարել, որոյ զանազան ծառոց պտուղները կաթուղիկոսաց և հիւրոց կերթային ի վայելս:

Այս ժամանակիս էս թէ՛ աստ, և թէ՛ ի Հռիփսիմէ կային քանի մի միաբան կարգաւորք յԱթոռոյն, որոց հաց և հանդերձ թէ և յԱթոռէն էր, բայց այս վանքերը էս ունէին առատութեամբ վար ու ցանք և անասունք ո՛չ սակաւ, որով միաբանից ուտելիքը կպատրաստուէր:

Ե. Եկեղեցի Սուրբ Գրիգորի սաստկաւ յԷջմիածին

Այս եկեղեցի Սուրբ Գրիգոր կոչեցեալ, ընդ մէջն Եօթներորդ դարու յանուն երկնաւոր զուարթնոցն, շինեց Ներսէս Գ. կաթուղիկոսն ազգիս՝ հոյակապ և գեղեցիկ շինուածովք ու զանազան փորուածքներով, մինչև յետագայ պատմիչք զարմացուցիչ տեսողաց կանուանէին:

Ներսիսի ժամանակակից պատմիչն Սեբէոս եպիսկոպոս Բագրատունեաց Փրկչական 641 թուականին, որ նորա օրովք Դւնայ Դ. ժողովքի մէջ գտնուեց, այս եկեղեցին յանուն երկնաւոր զուարթնոցն կը կոչէ, որք սրբոյն Գրիգորի երևեցան բազմութեամբ զօրաց, ուր Տրդատ թագաւորն ընդառաջ գնաց սրբոյն, ուստի և նոցա անուանը նուիրեց հրաշակառոյց եկեղեցին՝ ըստ այսմ.

«Յայնժամ էարկ ի միտս իւր Կաթուղիկոսն Հայոց (Ներսէս Գ) շինել իւր բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն, որ ի Վաղարշապատ քաղաքի ի վերայ ճանապարհին, յորում ասեն ընդառաջ եղև թագաւորն Տրդատ սրբոյն Գրիգորի, շինեաց անդ և եկեղեցի մի յանուն Երկնաւոր զուարթնոցն, որոց երևեալ ի տեսլեան սրբոյն Գրիգորի բազմութեամբ երկնաւոր զօրացն, և շինեաց եկեղեցին բարձր շինուածովք և չքնաղ զարմանալեօք, արժանի աստուածային պատուոյն, որում նուիրեացն: Աձ ջուր ի գետոյն (Քասաղ) և արկ ի գործ զամենայն զվայրսն առապարս, տնկեաց այգիս և ծառատունկս և շուրջանակի պատուարեաց զբնակութեամբն գեղեցկադիր յօրինուածով բարձր պարսպաւ ի փառս Աստուծոյ»:

Իսկ Յովհաննէս Զ-րդ կաթուղիկոս պատմաբանը, որ Ներսէս Շինողէն ամբողջ երկու և կէս դար յետոյ է, կը գրէ, թէ սրբոյն Գրիգորի անուանակոչութեամբ կառոյց այս հրաշակերտ եկեղե-

ցին և կը յաւելու, թէ նշխարս ոսկերաց Սրբոյն Գրիգորի բաժանելով՝ ամփոփեց եկեղեցւոյ չորս սեան տակը, այս երկնային գանձը գերիչներէն պահպանելու համար: Այս պատճառաւ կերևի, թէ Սուրբ Գրիգոր կոչուեց եկեղեցւոյ անունը ի յետագայից, որպէս ահա.

«Դարձեալ յուսացեալ ի տէր և ոչ զմտաւ ածեալ զկրթական արշաւանս հինիցն թշնամեաց՝ գեղեցիկ իմն մոլութեամբ դնէ հիմն մեծ ու հրաշալի բազմապայծառ յարկի Տանն Աստուծոյ ըստ անուանակոչութեան սրբոյն Գրիգորի՝ յանձն առնելով զկատարումն իմաստութեան չինողին Քրիստոսի, իսկ ի հիմնարկել զաստուածակերտ փարախն հօտին Քրիստոսի, ի ներքոյ չորից սեանցն հաստահեղուսից բաժանեալ՝ դնէ զնշխարս ոսկերաց սրբոյն Գրիգորի առ ի անշուշտ մնացականութեամբ պահել գանձուն երկնաւորի ի գերչաց ապականչաց և ի պարծանս հաւատոյ քրիստոնէական կարգաց, իսկ զՔրիստոսադրոշմ և զպատուական գլուխն ոչ ի խորոջ, այլ արտաքոյ ի գզրոցի եդեալ՝ դնէ ի գանձարանս աստուածութեանն ի յոյս բարեաց փափագողացն նմա և ի բժշկութիւն ախտակրելոցն»:

Եւ որովհետև դարաւոր ժամանակներով յառաջ խոնարհած է բոլորովին Ս. Գրիգոր՝ հինգերորդ եկեղեցի համարուած Վաղարշապատ քաղաքի, պատմական քննութեամբ նորա ստորագրութիւնն ամբողջացնենք ի կարգս եկեղեցեաց Վաղարշապատայ:

Զարմանալի բան է, արդարև, թէ ընդհանուր ազգի Հայրապետական Աթոռն ի Քաղաքուդաշտի, ուր կաթուղիկէն Մայր եկեղեցեաց հաստատուն անդր ի Վաղարշապատ եղած ժամանակին՝ իւր մենաստանով, սուրբ հայրապետն Ներսէս Շինող կշինէ իւր բնակութեան համար զՍուրբն Գրիգոր՝ անջուր, անջրդի տեղ՝ յառապարին, և այն ի՞նչ ժամանակ, Յովհ. կաթուղիկոսի ասածին պէս՝ «Ոչ զմտաւ ածեալ զկրթական արշաւանս հինից և թշնամեաց»:

Դիցուք թէ այս հէնքն և այս կրթական թշնամիք, որ երկրի ևս տիրող իշխանքն էին, բունեալ էին ի Դուին, ուր էր Աթոռն Հայրապետական, և նեղութիւն կը կրէին անդ բնակելու, ընդէ՞ր ուրեմն և մեծ ու տարապարտ ծախուց տակ կմտնէր և այնպիսի հրաշափառ եկեղեցի այնպէս տեղ կշինէր, ուր բնական անջուր ու անջրդի էր, վասն զի առապար էր, և ջուրը հեռաւոր տեղէ բերելով՝ ձորերէ և ապառաժ քարերէ կանցուցանէր, ինչպէս ստորև կտեսնենք, հարկաւ շուտով ևս պիտի աւերէին ջրանցքը, և առապարումն բնակութիւնք պիտի անհետանային. ինչ էր պատճառն, ու-

բեմն, որ Շինող սուրբ հայրապետը հայրապետանոցում չի նստաւ վերստին ի մայրն եկեղեցեաց ի Քաղաքուդաշտի, քան թէ ահագին ծախուց ծանրութեան բեռն շալակեց, եթէ ամայի էր Կաթուղիկէն Վաղարշապատայ, արդէն մեծագումար դրամք և առաձեռն ունէր Շինող հայրապետն, ընդէ՞ր զայն չի նորոգեց, իսկ եթէ չէն էր, ընդէ՞ր և զՍուրբ Գրիգոր իւր բնակութեան համար չինեց: Թերևս Շինող անուն ժառանգելու:

Մեր ազգային պատմութեանց թերի կողմերն էլ այնպիսի բաներ են, զորոնք լռելով պատմիչք, հազար ու մէկ կարծեաց մէջ կթողուն զյետագայս:

Պատմութիւնը ցոյց կտայ մեզ երկու առիթ, որով սուրբ հայրապետն Ներսէս «Ի քաղաքի դաշտի» չինեց զսուրբն Գրիգոր: Առաջինն էր, որ Կոստանդին կայսեր գանձիւքը չինեց, որ Հերակլ կայսեր որդին էր. «Եւ ի նաւակատիս, վկայէ, որ կոչեաց զթագաւորն հռոմոց»: (Մովսէս Կաղտ. Գ. ԺԵ):

Երկրորդ առիթն էր, որ Սրբոյն Գրիգորի նշխարքը ամփոփեց սուրբ հայրապետը եկեղեցւոյ չորս սեան հաստահեղոյս հիմանց ներքոյ, զոր բերած էր ի Վաղարշապատ Գրիգոր Մամիկոնեան իշխանը ի Թորդանայ, իսկ զՔրիստոսադրոշմ և զպատուական գլուխն կվկայէ Յովհ. կաթուղիկոս, թէ՝ «ոչ ի խորոջ, այլ արտաքոյ ի գգրոցի եղեալ, դնէ ի գանձարան աստուածութեանն... և ի բժշկութիւն ախտակրելոցն»:

Այլ ցաւ է յոյժ և խնդիր միշտ հետաքրքրական և փափագելի, թէ ու՞ր մնաց յետ ժամանակաց և ի՞նչ եղաւ այս երկնաւոր գանձն, զպատուական գլուխն, որոյ համար և ո՛չ մի պատմիչք չեն առնել յիշատակութիւն կամ տալ տեղեկութիւն ի ծանօթութիւն յետագայից:

Թո՛ղ զայս մեր հաւատոյ սուրբ հօր «նշխարս ոսկերաց», այսքան դարաւոր ժամանակ բաժանեալ դրուած ի ներքոյ չորից սեանց հաստահեղուսից, եկեղեցին Փրկչական 1000 թուականին, որ հարիւրաւոր տարի յառաջ աւերուած էր ի տաճկաց ու կործանուած, ի հարկէ, օտարի գումարով չինուածքն էլ այսքան միայն կարող էր տևել, որ կը զօշոտէր թշնամու աչքը, յօրէ անտի մինչև ցայսօր բարեպաշտ ու վկայասէր հայը գոնէ միանգամ ևս միտք չբերեց այս անգին գանձն աստուածային ի խորոց անտի, ի ներքոյ չորից սեանցն հաստահեղուսից հանել և փոխանակ գլխոյն զայն դնել «արտաքոյ ի գգրոցի ի պարծանս հաւատոյ քրիստոնէական կարգաց՝ ի յոյս բարեաց փափագողացն նմա», երբ իսպառ կործանած է

Սուրբ Գրիգոր և հողի հաւասար եղած: Այսպէս ահա կպատուեմք մեր քրիստոնէական սրբութիւնքն և ազգային հնութիւնք:

Իսկ անդ ի Ս. Գրիգոր, որ յԱռապարին, կաթուղիկոսարան շինելու կամ մենաստան պարսպելու համար պատմիչք մէկմէկէ առնլով՝ կվկայեն, որ Ներսէս Գ-րդ Շինողն ասացեալ կաթուղիկոս, զՍուրբ Գրիգոր յանուն Երկնաւոր զուարթնոց կառուցանելէն ետքը, շուրջանակի պարսպեց զայն և մենաստանի մէջ կանգնեց ոչ միայն իւր համար յարկս բնակութեան կոփածոյ քարով, այլ և «կարգեալ կացուցանէր ի նմա, կգրէ Պատմաբանն, ամբոխութիւնս երդումարդաց ըստ պայմանի քաղաքականաց», ըստ որում Դւնայ և Արտաշատ քաղաքաց ճանապարհը ընդ այն կանցանէր:

Ուստի Քասաղ գետէն ջուր բերելով մինչև անդ, գրեթէ չորս ժամ հեռաւորութենէ, Առապարի բոլոր շրջակայ աւազուտ դաշտավայրը հերկելու դիւրացրուց, այդի և բուրաստան տնկեց, որոց քարաշար հիմունքը դեռ ևս կնշմարուին տեղ տեղ գետնի հաւասարութեան վրայ Առապարի հիւսիսակողմը՝ մերձ ի Քաւթառաձոր տեղին:

Քասաղ գետ, ինչպէս յայտնի է Վաղարշապատայ պատմութենէն (եր. 39), Նիգ գաւառէն կսկզբնաւորի, Արայի լերին արևմտեան կողմէն անցնելով՝ կը մտնի Արագածոտն գաւառ, Սաղմոսավանքի խորաձորը, անտի զառ ի վայր իջնելով մինչև յԱշտարակ, Օշական գիւղի ներքև կթափի Արարատեան դաշտ, ուստի Սուրբ Գրիգորն Առապարի՝ գետի արևելեան հարաւային կողմը կանկանի համարեա երկու ժամ հեռաւորութեամբ:

Հին ժամանակից հետէ Քասաղ գետէն երկու առու հանած են դէպ Արարատեան դաշտը, Արայի լերին յառաջը տարածուած ի հարաւոյ ընդարձակ լեռնադաշտի և առապարի միջով:

Առաջինը սկսուած է Նիգ գաւառի Աստուածընկալ գիւղի առջևէն, որ գետի արևելեան եզերքէն անցնելով, յիշեալ լերին հանդէպ յարևմտից կելանէ ընդարձակ լեռնադաշտը և այս տեղ կը կորուսանէ իւր հետքը, որոյ արևելից կը տարածուի Եղուարդայ հանդը, և հարաւոյ կողմից ի խոնարհ ուղղակի Սուրբ Գրիգորի Առապարը կերևի՝ գրեթէ երեք ժամու հեռաւորութեամբ:

Երկրորդ առուն հանած են Աշտարակ գիւղի ներքև, որ յԱրագածոտն, ձորի մէջ, որ գետի արևելեան եզերքէն, բարձր քարափի տակէն անցնելով փոքր տեղ՝ դուրս կգայ Առապար դաշտի երեսը, Օշականայ Գետառ ասացեալ տեղէն փոքր ինչ վեր և վերը յիշուած լեռնադաշտէն ի խոնարհ զառ ի վայր առապարները կոռոգէ մին-

չև Սուրբ Գրիգորի ասացեալ այգեստեղերը Քաւթառաձորի յառաջ, զոր վերը յիշեցինք, ի գլուխ Վաղարշապատայ այգեաց, որոց մերձ է և Սուրբն Գրիգոր յԱռապարին, ուստի հաւանական է, որ այս առուն հանած լինի Շինող Ս. Հայրապետն Ներսէս և բոլոր աւազախիտ վայրս Ս. Գրիգորի «ի գործ արկեալ»:

Ի նախնեաց անտի այս առուն ևս աւերուած էր մինչև մեր ժամանակը և կը կոչուի Տկահանի առու, այս ինքն՝ քարափի տակից հանած:

Սուրբ Էջմիածնի Սինոդի անդամք, տեսնելով Աթոռոյս Օշական գիւղի նեղութիւնը վարելահողի սակաւութեան մասին, գիւղացւոց մշակութեամբ, Աթոռոյ ծախսով և եռանդուն ջանիւք Գրիգոր վարդապետի (այժմ եպս.) Մուշեղեանց, հանեցին այս Տկահանի առուն և նորա տակն եղած բոլոր անջրդի և քարքարուտ առապարները բաժանելով Օշականայ բնակչաց վրայ՝ առիթ եղեն այս ընդարձակ, ամայի և անջրդի դաշտերը ոռոգելու և ցանելու (յամին 1865 և 1866), ի մեծ օգուտ Աթոռոյս, որոյ սեպհականութիւն է, և ի բարեկեցութիւն Օշականու բնակչաց:

Վերջ տալով աստանօր Վաղարշապատայ հինգ եկեղեցեաց ստորագրութեանը՝ կխոստանամք, որ եթէ միջոցներս ներեն և ժամանակ ունենամ, ի յառաջակայ գարնան պատրաստել նաև Արագածոտն գաւառի և Արշարունեաց մէջն եղած նախնական քաղաքաց և դաստակերտից թէ՛ Հայկազանց ժամանակից, և թէ՛ Արշակունեաց ստորագրութիւնները աշխարհագրական տեղեկութեամբ, որք Արարատեան դաշտի մէջ կը համարուին Երասխայ հիւսիսային և հարաւային կողմերը, որոնք են Արմաւիր յԱրագածոտն, Փառախոտ, Ցոլակերտ, Երուանդաշատ և Երուանդակերտ, նաև Արշակաւան յԱրշարունիս, կամ յԵրասխաձոր, Դուին և Արտաշատ՝ ի դաշտն Դւնայ և այլն, որոց պատմական տեղեկութիւնները առ ձեռն ունինք, միայն նոցա դիրքը տեսնելու և տեղագրութիւն անելու կպակասի մեզ միջոց:

ԱՐՄԱՒԻՐ ՅԱՐԱԳԱԾՈՏՆ ԳԱՒԱՌԻ

Պատմական տեղեկութիւնք[1]

Մեր ժամանակի հայ մատենագիրք իրենց աշխարհագրական գրուածոց մէջ ինչպէս Վաղարշապատայ, նոյնպէս և Արմաւիր քաղաքի գաւառը յանծանօթս կդնեն, այս պատճառաւ մենք Արմաւրայ պատմական տեղեկութենէն յառաջ, Արարատեան դաշտի շրջակայ գաւառաց վրայ նախընթացաբար այս տեղեկութիւնները կդնեմք, որոնք Ռուսաց սահմանին մէջն են, փարատելով առանց ականատեսութեան Արարատեան նահանգի այս գաւառները աշխարհագրողաց տարակոյսը:

Մովսէս Խորենացին բոլոր Հայաստան հնգետասան աշխարհ բաժանելէն ետքը նոյն աշխարհաց իւրաքանչիւրոց գաւառները ևս յանուանէ կնշանակէ իւր աշխարհագրութեան մէջ, որոց հնգետասաներորդը կդնէ Այրարատ, որ «Ունի, ասէ,... և զմայր եկեղեցեացն ի թագաւորաբնակ և յարքայանիստ Վաղարշապատ քաղաքի» (Խոր. աշխարհագր. եր. 611. ի մատենագրութեան նորա):

Այլ թէ այս գաւառներն ո՞վ որոշեց, կամ նոցա սահմաններն ի՞նչ ժամանակ բաժանուեց, ո՛չ Խորենացին գրէ, և ո՛չ այլ յետագայ պատմիչք:

Հայկազանց ժամանակին կտեսնեմք, որ մեր Արամ նահապետը իւր իշխանութեան սահմանները յարևմտից մինչև ի Կեսարիա ընդարձակած ժամանակ, որ անբնակ երկիրները բնակչօք լցնելով՝ Երկրորդ և Երրորդ Հայք կոչեց՝ առաջինը բուն Հայաստանը համարելով (Խոր. Ա. ԺԴ):

Իսկ Վաղարշակ Հայաստանի վրայ թագաւորելով՝ Հայաստանի իւրաքանչիւր գաւառների վրայ իշխող նահանգապետերէն նախարարութիւններ հաստատեց, ոմանց կոչումը գաւառի անունէն առնլով, ոմանց ևս անունովը զգաւառն կոչելով, որոց համար Խորենացին ևս կխոստովանի, թէ. «Ո՛չ գիտեմ յանուն արանցն զգաւառն անուանե՞ն, եթէ յանուն գաւառացն զնախարարութիւնսն կոչեցեալ» (Բ. Ը):

Խորենացւոյ նշանակած Արարատեան նահանգի ոմանց գաւառաց անունը կայ, գաւառը չկայ, ինչպէս Բ., Գ. և Դ. գաւառնե-

1 ԱՐԱՐԱՏ, 1876, 47-53; 91-93

ը՝ Գաբեղեան, Աբեղեան և Հաւնունիք ասացեալն, որոց անունով եղած գիւղք կամ տեղիք նոցա սահմանակից գաւառաց մէջ կդնէ Հին Հայաստանի հեղինակը և կխոստովանի մեր ասածը. (եր. 388) «Անյայտ լեալ հին անուան և սահմանին Գաբեղենից»:

Իսկ նոր Աշխարհագիրն Հ. Ղևոնդ Ալիշան իւր քաղաքական աշխարհագրութեան մէջ ի համեմատութեան հին և նոր գաւառաց Հայաստանի (եր. 24), Գաբեղեան և Աբեղեան գաւառները կհամարի վերին և ստորին Բասեն, երբ Բասենը ինքնին առանձին և առաջին գաւառն է Արարատեան նահանգի, և մի՞թէ վերին և ստորին ասելով այլ գաւառ պիտի ցոյց տային, երբ այս ածականները մի և նոյն բառիւ գաւառի բաժանումն ցոյց կտան, ուստի՞ կառնու իւր գրածի ապացոյցը, ինքն գիտէ՝ մենք այսպիսի գրուածքները առանց նախնեաց վկայութեան երբէք չենք ընդունել:

Գաբեղեան և Աբեղեան կոչուած գաւառները, ինչպէս պատմաբանք[1] ցոյց կտան, այս երկու գաւառաց մէջ տեղն էին Բագրևանդայ, որ արևմտեան կողմն է ի հարաւոյ Երասխայ, և Արշարունեաց, որ յիշեալ երկու գաւառաց արևելքն է, և իւր հիւսիսային սահմանը կը ձևէ նոյնպէս Երասխ Արարատեան դաշտին մէջ, յորմէ կանջրպետէ Արագածոտն գաւառ, և այս երկու գաւառաց դաշտավայրքն են, որք ի միասին կը կազմեն զդաշտն Արարատեան՝ յերկրորդումն լինելով Վաղարշապատ:

Ըստ այսմ Գաբեղեան և Աբեղեան գաւառաց տեղը կմնան միայն Մասիս լերին հարաւային արևմտեան բազուկը, որոյ լերանց շարքը աղեղնաձև կդառնայ դէպ յարևմուտս մինչև ի Ճակատք գաւառ ի Կողպ՝ Երասխայ և Ախուրեան գետոց խառնուրդը, և կպատէ Արշարունեաց գաւառի դաշտավայրը:

Այս լերանց բարձրաւանդակ լեռնադաշտերի մէջ որքա՞ն գիւղօրայք կային ի հնումն, ո՛չ ինչ յիշատակութիւն չկայ, միայն այս լերանց շղթայից հարաւային արևմտեան կողմանքը, որ այժմ Տաճկաց սահմանին մէջն են, Գաբեղեան գաւառ կը կոչուէր, իսկ հիւսիսային արևմտեան երեսքն մինչև ի լեառն Բարդող, ընդ որով է Կողպ, Աբեղեան կանուանուէր գաւառ, և այս Ռուսաց սահմանին մէջ, ուր այս լերանց ի բարձրաւանդակ ձորամէջսն կան երեք հայ գիւղօրայքն՝ Ապազկեոլ ասացեալ գիւղն՝ Գայլոտայ լճի վրայ, ուր են և սահմանապահ զազախներն ռուսաց, Կուլապ և Մոլլաղամար, որ այս Սենակ ասացեալ հովասուն լեռների մէջն են սակաւ բնակիչներով, և միշտ գերեվարութեան մէջ՝ խռովութեան ժամանակ:

1 Այս երկու գաւառները որոշակի գրուած են իրենց սահմանի մէջ Չամչեանի Պատմ. Գ. Հատորոյ աշխարհացոյց թերթի մէջ, իսկ Հ. Ալիշանի թերթի մէջ սխալմամբ գրուած է Շիրակ գաւառում:

Այս գաւառի մէջն եղած վանօրայք անգամ ի հնումն պատմաբաններէ ոմանք կդնեն Արշարունեաց գաւառին մէջ , ինչպէս Կամրջաձորոյ ասացեալ վանքն, որ այս լեռնաշարքումն եղած Բամբակի ասացեալ լերին բարձրաւանդակի ձորամիջին է, ընդ որ Զօրայ-կէաթոն-ի ասացեալ ճանապարհն է դէպ ի Կոգովիտ, Ասողնիկ կդնէ Արշարունեաց գաւառի մէջ, գուցէ և սա առանց ականատեսութեան. «Շինեցաւ, կգրէ, նախ առաջին մեծահռչակ ուխտն Կամրջաձոր ի գաւառին Արշարունեաց»:

Այս տեղից կերևի, որ ի նախնեաց անտի Հայաստանի ամեն գաւառաց սահմանները որոշուած չեն, որ հին ժամանակի պատմագիրք անգամ այսպէս մէկ մէկի կխառնեն զգաւառս, և ի՞նչ գաւառ պիտի լինէին Աբեղեան և Գաբեղեան, որոց տեարց Վաղարշակ միայն «չէնս պարգևեաց» բնակելու համար, ըստ որոյ և նոր մատենագիրք վանքերի կամ քաղաքաց, գիւղերի և աւանաց տեղերը կշփոթեն և գաւառները իրար կխառնեն, մանաւանդ որ առանց ականատեսութեան, որոց շատերի համար կգրէ Հին Հայաստան՝ գաւառն անծանօթ, որ լաւ իսկ և յայտնի կծանուցանէ Խորենացին, բայց և այնպէս շատ տեղ կհակի դէպ յաղաւաղախօսն Բիւզանդ՝ չխրատուելով դեռ ևս յայլազգի մատենագիրներէ առնուլ վկայութիւն:

Այսպէս են և Մասեացոտն և Ճակատք Արարատեան նահանգի ԺԱ և ԺԲ-րդ գաւառները, որոնք դարձեալ Արարատեան դաշտի շրջապատն են, բայց վերը գրածիս պէս անունները կան, գաւառները գրեթէ չկան, վասն զի իրենց կից եղած գաւառները բռնած են նոցա տեղը, և նոցա մէջն եղած չէնք և աւանք պատմագիրք կյիշեն մերձակայ գաւառաց մէջ:

Զօր օրինակ Մասեացոտն գաւառը, որ պիտի լինի յոտն Մասեաց, կտեսնեմք, որ նոյն իսկ լերին ստորոտը չունելով ընդարձակութիւն հիւսիսի կողմից՝ անմիջապէս կպատէ զայն եղեգնաշամբն Արտաւազդայ Երկրորդի, Մասեաց ստորոտի Սև Ջուր ասացեալն, ուր նա «հեծաւ յորս, և կալան զնա քաջք»՝ ըստ Խորենացւոյն, և շամբի երկարութեամբը տարածուած Արշարունեաց գաւառը:

Բարդող լեառն՝ վերջինն Մասեաց աղեղնաձև բազկին, ուր է Կողպ գիւղն իւր աղահանքով, Ճակատ գաւառի մէջն է, ինչպէս կդնեն պատմիչք, յորմէ կերևի, որ Աբեղեան գաւառի սահմանը մինչև այս լեառն միայն կերկարէր:

Իսկ Սուրբ Մարի ասացեալ բերդն, յորմէ այժմ Սուրմալի կանուանի և բոլոր Արշարունեաց գաւառը, որ անմիջապէս Երասխայ

հարաւային ափանց վրայ է, Բարդող լեռնէն մինչև երեք ժամ դէպ յարևելս է, պատմիչք Ճակատք գաւառում կդնեն, երբ որ նորա մօտն եղած Երուանդակերտ քաղաքը մի և նոյն ափանց վրայ է, կդնեն յԱրշարունիս (Հին Հայաստ. եր. 392):

Այս խառն ի խուռն տեղափոխութիւններէն կերևի, որ ի հնումն ևս Հայաստանի գաւառաց սահմանները որոշուած չէին:

Մենք այս տեղս առանց ստորագրելու նշանակելով, եթէ Արարատեան նահանգի քանի՞ գաւառները կը շրջապատեն զդաշտն Արարատեան, ուր է Վաղարշապատ և Մայրն Եկեղեցեաց Հայաստան աշխարհի, ի սահմանի Ռուսաց, իբրև կեդրոն և միջոց աշխարհի ըստ հնոց, սկսենք մեր ստորագրութիւնը Արագածոտն և Արշարունիք եղած նախնական քաղաքներէն:

Յարևելից հիւսիսոյ Վաղարշապատայ է գաւառն Վարաժնունիք (այժմեան Դարաչիչակու մհալը), յարևելից՝ Կոտայք, ուր է Երևան նահանգագլուխ քաղաքս (այժմ Ղրխբուլաղու մհալ), իսկ յարևելից հարաւոյ՝ դաշտն Դւնայ և Շարուր:

Ի հիւսիսոյ՝ Նիգ գաւառ, Աշոցք (Բամբակու մհալ), Շիրակ մինչև Ախուրեան գետը Ռուսաց սահմանին մէջ, Արագածոտն գաւառ, որ Արագած լերին երկարութեամբը ի հարաւոյ կտարածուի յարևելեան հիւսիսից մինչև յԱխուրեան գետ յարևմուտ հիւսիսոյ, և իւր մէջ կառնու Վաղարշապատ և Արմաւիր հանդերձ իւրեանց ընդարձակ դաշտավայրով մինչև Երասխ գետ:

Յարևմտից՝ Ճակատք գաւառ, Երասխաձոր, Աբեղեան գաւառ և կէս մի՝ յԱրշարունեաց գաւառէն:

Ի հարաւոյ՝ Արշարունիք և Մասեացոտն գաւառ, որոց սահմանները և տարածութեան չափը կը թողումք իրենց ստորագրութեանց մէջ:

Արագածոտն գաւառը, որ ստորագրած եմք Վաղարշապատայ պատմութեան մէջ, աստ նախ առաջին կտեղագրեմք Արմաւիր քաղաքը իւր պատմական տեղեկութեամբ, որ Արագածոտն գաւառին մէջն է:

Արմաւիր քաղաք չինեց զառաջինն Հայկայ թոռն՝ Արամայիս Նահապետ, տուն բնակութեան իւր համար Երասխ գետի հիւսիսային ափանց վրայ, ուր որ իւր հայրն ևս՝ Արամանեակ, Սօսեաց անտառ ձգած էր: «Իսկ որդի նորա Արամայիս, կգրէ Խորենացին, շինէ իւր տուն բնակութեան ի վերայ ոստոյ միոյ առ եզերբ գետոյն և անուանէ զնա յիւր անուն Արմաւիր, և զանուն գետոյն յանուն թոռին իւրոյ Արասստայ՝ Երասխ» (Ա. ԺԲ):

Արմաւիր ըստ այսմ Երասխ գետի եզրն եղած փոքրիկ բլրի վրայ լինելով՝ Արագածոտն գաւառի մէջն է, որոյ համար պարզ ևս կգրէ Խորենացին, ուր Արմենակ նախ քան իւր որդւոյ շինութիւնը շինած էր «Մասն ինչ ի հիւսիսային կողմանէ դաշտին և զոտն լերինն ի նոյն կողմանէ, և զլեառն անուանէ յանգագոյն յիւր անուն Արագած, և զկալուածսն՝ ոտն Արագածու» (Անդ):

Ահա և տեղին և գաւառն Արմաւրայ յայտնի ծանուցեալ անդ զառաջինն ի Խորենացւոյն, ուստի և Արմաւրայ գաւառը ծանուցեալ ի հնուց, եթէ և միայն ականատես լինէր տեղւոյն Հին Հայաստանի հեղինակը, Արմաւրայ տեղին և գաւառը չէր դնել յանծանօթս (Եր. 471-498):

Խորենացին չի յիշատակեր, թէ ո՞վ որձաքար որմով պարիսպ կանգնեց Արմաւրայ, ի հարկէ, աշխարհքի նոր քաղաքանալու ժամանակին տուն բնակութեանը կերևի, թէ պարսպովն հանդերձ կիմացուէր, իսկ Զամչեան ուստի՞ կառնու, թէ Հարմա, որ Արամ նահապետի հայրն է, «Շինեաց պարիսպ քաղաքին (Արմաւրայ) վիմովք տաշելովք» (Ա. Դ), որոյ վկայութիւն չեմք գտնել ի պատմագիրս, վասն որոյ և անընդունելի:

Մայն թէ Արմաւիր, որ զառաջինն Արամայիս շինեց իւր համար տուն բնակութեան, պարսպապատ էր և աշտարակազարդ Արամայ աշխարհակալութեան ժամանակ, վասն զի երբ որ նա պատերազմի մէջ ձերբակալ արար զՆիւքեարն կոչեցեալ Մադէս և բերեց յԱրմաւիր, պատմութիւնը կվկայէ, որ «Անդ ուրեմն ի ծայր աշտարակի պարսպին ցից վարսեալ երկաթի ընդ ճակատն, յորմն վարսել հրամայէ ի տեսիլ անցաւորաց» (Ա. ԺԳ): Յորմէ կերևի, թէ այս ժամանակին բաւական քաղաքացեալ էր Արմաւիր և պարսպապատ էր:

Բովանդակ Հայկազանց ժամանակը թագաւորանիստ էր Արմաւիր և տևեց անդր, քան Արշակունեաց թագաւորութիւնը մինչև Երուանդ Երկրորդ: Այլ աւա՜ղ, որ ո՛չ Խորենացին, և ո՛չ այլ պատմիչք յառաջ քան զնա յայլոց ազգաց անգամ չեն յիշատակեր, թէ ինչ ինչ շինութիւններ, որպիսի մեծագործութիւններ արին յԱրմաւիր մեր Արի Հայկազունք՝ Արամէն մինչև ցՊարոյր, Պարոյրէն ցտիրապետութիւն Աղէքսանդրի, որոց մէջ բաւական մեծամեծ աշխարհակալներ եղան, մեծամեծ պատերազմաց մէջ գտնուեցին Ասորեստանի թագաւորաց հետ, յունական և տրոյական արշաւանքների մարտակից:

Արշակունեաց թագաւորութիւնը նորոգուելու ժամանակին մեծն Արշակ իւր եղբօրն Վաղարշակայ «Քաղաք թագաւորութեան

կտայ զՄծբին» (Խոր. Ա. Է), բայց նա ինքն Վաղարշակ Հայկազանց ցեղի օգնականութեամբ, ինչպէս կգրէ Խորենացին, մակեդոնական զօրքերը Հայկայ զարմի քաջերի ձեռքով հալածելէն ետքը, երբ որ «Դադարեալ խաղաղէր երկիրն, նուաճեալ ընդ ձեռամբ Վաղարշակայ», և նահապետութիւնները կհաստատէր, այս ամենէն ետքը, կվկայէ նոյն մեր պատմագիր, թէ «Յետ այսր ամենայնի շինեալ (Վաղարշակայ) յԱրմաւիր՝ անդրիս հաստատէ արեգական և լուսնի և իւրոց նախնեաց» (գիրք Բ. Դ. Ե. Ը), որոց և քրմութիւնը տուել էր Վահագնի սերնդոցը, որոնք խնդրեցին Վաղարշակէն «զմեհենիցն պաշտամունս» 144 ամօք Քրիստոսէ յառաջ:

Առաջինն Արտաշիսի ժամանակ կպայծառանայր Արմաւիր նորա աշխարհակալութեանց շնորհիւ, երբ որ Ասիա գտած Արտեմիտեայ, Հերակլի և Ապողոնի պղնձաձոյլ, ոսկեզօծ արձանները Արտաշէս ուղարկելով յաշխարհս մեր, Վաղարշակայ կարգած Վահունի քրմապետները Արտեմիտեայ և Ապողոնի պատկերները Արմաւիր կանգնեցին արեգական և լուսնի կռոց հետ, իսկ Հերակլեայ առնապատկերը իւրեանց սեպհական գիւղը տարան յԱշտիշատ (Բ. գիրք. ԺԲ):

Իսկ մեծին Տիգրանայ թագաւորութեան օրովը աւելի ևս ընդարձակուեց Արմաւիր գաղթական բնակչօք, վասն զի Պաղեստինացւոց աշխարհքում պատերազմի մէջ շատ հրէայք գերի անելով Տիգրան, երբ որ Հայաստան դարձաւ, «Զգերութիւն հրէիցն, կգրէ Խորենացին, կնստուցանէր յԱրմաւիր և յաւանին Վարդգէսի» (Բ. ԺԶ):

Այսպէս Արմաւիր թագաւորանիստ էր Տիգրանայ մահուանէն ետքը ևս, վասն զի Արտաւազդայ թագաւորութեան ժամանակ, որ Տիգրանայ որդին է, Արմաւիր բնակութիւն էր արքայի յԱրարատ, երբ որ նա օրէնք դրաւ իւր եղբարց և քերց՝ «Ո՛չ կեալ յԱյրարատ ի բնակութիւն արքային», ըստ Խորենացւոյն (Բ. գիրք. ԻԲ):

Արմաւրայ այս ամեն պատմական տեղեկութիւնը հին Հայաստանի հեղինակը շատ թերութեամբ նշանակելով՝ վայր ի վերոյ տեսութեամբ է անցել Արմաւրայ անցից վրայօք, որ Հայոց թագաւորական քաղաք էր Հայկազանց ժամանակէն մինչև Արշակունեաց թագաւորութեան կէս միջոցը: Այլ միայն Երկրորդն Երուանդայ արքունիքը յԱրմաւրէն յԵրուանդաշատ փոխադրելը յիշելով՝ վերջացրել է Արմաւրայ ստորագրութիւնը, որոյ պատմական տեղեկութիւնը կտևի մինչև Բ. Արշակայ թագաւորութիւնը, գրեթէ մինչև Փրկչական 370 թիւ, զոր մենք ահա մի առ մի կգրենք:

Գանք հիմա քննելու, թէ ի՞նչ էր պատճառը, որ Հայկազուն թագաւորք յԱրմաւիր, և Արշակունիք ի Մծբին և յԵդեսիա

կնստէին, իրենց արքունիքը հարաւային կողմը յեզը Հայաստանի ի Միջագետս Հայոց հաստատեցին գրեթէ մինչև ցՎաղարշակ և մինչև ցերրորդ դար քրիստոնէութեան ազգիս:

Հայաստանի պատմական անցքերը ցոյց կտան, որ Հայկազանց ժամանակ Հայաստանի սահմանը շատ նեղ էր և անձուկ, հարաւային կողմէն կընդարձակուէր Վասպուրական միայն մինչև նահանգը, ուր էր Հարք գաւառը՝ մեր նախնւոյն Հայկայ անունովը Հայկաշէն կոչուած, Հայաստանի հիւսիսային արևելեան կողմերը տակաւին բազմացած չլինելով ազգերով՝ երկրի միջավայր սահմանում հաստատել էին իրենց արքունական քաղաքը:

Երկրորդ՝ հարաւի կողմից սահմանակից լինելով այն ժամանակ Ասորեստանի՝ դաշնակից և նիզակակից էին ասորւոց Հայկազուն թագաւորք, ինչպէս կտեսնուի Պարոյրայ ժամանակ, Հրաչեայ, Զարմայրայ և այլոց և այլոց, որք նոցա հետ զօրաբաժին կլինէին ի դէպս պատերազմի, ուստի և Հայաստանի հարաւային սահմաններում երկիւղ չունէին սահմանակից դրացիներէն, և դեռ ևս ոչ Աղէքսանդր կար տիեզերակալն, և ոչ մակեդոնական արշաւանքն յԱսիա, Կիւրոս թագաւորելով՝ կործանեց Մարաց թագաւորութիւնը և կանգնեց Պարսից պետութիւնը, բովանդակ այս ժամանակները սոցա հետ նիզակակից էին մեր Հայկազուն թագաւորք, մինչև որ Աղէքսանդր Մակեդոնացին Միջերկրական ծովէն մինչև ի Գանգէս Հնդկաց արշաւելով՝ բոլոր ասիական պետութեանց թագաւորութիւնները ջնջեց, և զՀայաստան ևս նոցա հետ միասին միօրինակ դրաւ ընդ մակեդոնական իշխանութեամբ:

Այն ժամանակէն Հայաստանի հարաւային սահմանները որպէս այլոց տիրապետութեան տակ էին, նոյնպէս պատերազմական արհաւրօք լի էր աշխարհը, ուստի և մինչև մակեդոնական իշխանութեանց անկումը հաւանական է, որ հարաւային սահմանաց բնակիչք ևս հետ զհետէ քաշուած լինէին Հայաստանի խորը:

Արշակ Պարթև Մեծն, Արևելք և Ասորեստանի վրայ թագաւորելով, սպառսպուռ ջնջեց մակեդոնական իշխանութիւնը Ասիայէն և տիրեց երրորդ մասին աշխարհիս, ինչպէս որ Խորենացին կառնու Հերոդոտոսէն, և իւր եղբայրն Վաղարշակ Հայաստանի վրայ թագաւոր դնելով՝ սահման կտայ նրան մասն ինչ արևմտեան Ասորեստանէն, Պաղեստին, Ասիա (փոքրն) և բոլոր Միջերկրեայք, Պոնտոսի ծովէն մինչև այն տեղ, ուր Կաւկաս կյանգի յարևմտեան ծով, գրչագրաց սխալ է, ինչպէս բանի միտքը ցոյց կտայ, արևելեան ծով ասելու էր: Պոնտոսի ծովը արդէն Կաւկասու արևմուտքն է, ուրեմն

ի ծովէն Պոնտոսի մինչև այն տեղ, ուր Կաւկաս յարեւմտեան ասելու տեղ, յարևելեանն ասելու էր յանդի ծով, այս ինքն Կասպից կամ Վրկանայ ծովն և Ատրպատական. «Եւ քաղաք թագաւորութեան տայ նմա զՄծբին» մակեդոնական և այլ ազգաց արշաւանաց յառաջն առնելու համար և Եփրատայ մուտքը իբրև սահմանագլուխ պահպանելու, վասն զի այս տեղից էր հին աշխարհքի վաճառականութեան և ազգաց պատերազմական միակ ճանապարհը, ընդ որ երբեմն Քսերկսէս յարևմուտս յելլադայ, և Աղէքսանդր յարևելս մինչև ի Հնդիկս արշաւեցին, ընդ որ և յետոյ յոյնք և հռովմայեցիք անցնելով՝ տիեզերակալեցին յԱսիա:

Այս էր ահա պատճառը, որ մինչև հռովմէական տիեզերակալութիւնը, մեր Արշակունի թագաւորք, իբրև կողմնակալ Պարսկական պետութեան, իրենց արքունիքը կդնէին Հայաստանի հարաւային կողմը, յեզը սահմանաց ի Միջագետս՝ Հայոց Թշնամու մուտքը պահելու, Եփրատը յարևմտից պատնէշ ունելով Հայաստանի մինչև Արշամայ և Աբգարու ժամանակները, երբ որ արդէն Հայաստանի այս ամեն սահմանները և յարևմտից մինչև ի Կեսարիա Հռովմէական պետութեան տակն ընկնելով, Աբգարէն ետքը Սանատրուկ թագաւորեց Հայաստանի մէջ, նորա որդւոյն հակառակ, որ սորա մահուանէն ետքը գնաց ի Մծբին և մեռաւ անդ:

Երուանդ Երկրորդ, որ թէ և Արշակունի, այլ թագաւորական գաւազանէ չլինելով, երբ որ հաճութեամբ նախարարաց թագաւորեց, ինչպէս կերևի, ի Մծբին և Սանատրկոյ որդիքը կոտորեց, իւր տէրութիւնը ապահովելու և հզօր օգնական ունենալու համար Հայոց Միջագետքը Հռովմէական իշխանութեան տուաւ Եփրատէն այս կողմը, ինքը բուն Հայաստանում ամրանալով իբրև ի միջոց աշխարհի՝ Արմաւրէն արքունիքը փոխեց յԵրուանդաշատ իւրաշէն քաղաքը՝ Երասխայ ափանց վրայ, Ճակատք գաւառի մէջ:

Վասն զի ո՛չ թէ միայն իւր ապահովութեան համար չինեց Երուանդ այս նոր քաղաքը կամ Թշնամիէն պահուելու, այլ Երասխ գետը այս ժամանակ տեղափոխուելով՝ հեռացել էր քաղաքէն, և ճմեռը երկար ժամանակին ջուր չէր լինել թագաւորական քաղաքին, և երկրորդ՝ Արմաւիր հարթ, հաւասար դաշտի երեսը մէկ փոքրիկ բլրոյ ոստի վրայ լինելով՝ ո՛չ մի կողմից անհնար էր ամրացնել զայն Թշնամու դէմ, ուստի այս երկու պատճառաւ Երուանդաշատ քաղաքը չինեց Երուանդ նորա արևմտեան կողմը՝ քարակտուր բլրի վրայ, զոր կշրջապատէր Երասխ գետը ի խառնուրդս Ախուրեանի:

Երուանդէն ետքը թէև լքաւ արքունիքը յԱրմաւիր, այլ շէն էր տակաւին բնակչօք մինչև Արշակ Երկրորդի ժամանակ, ցամ

Տեառն 378..., երբ նա ինքն Արշակ, չարակնելով Կամսարականաց ամուր կալուածների վրայ՝ Արտագերս ամրոցի և Երուանդաշատի, ուր նոքա կնստէին, իւր մօտ կոչեց նոցա «Ի լքեալ արքունիսն Արմաւիր իբրև զազգական իւր ի պատճառս պատուոյ մեծարանաց (Գ. գիրք ԼԱ) և միահաղոյն զարս և զկանայս հանդերձ մանկամբք հրամայեաց կոտորել»:

Գուցէ այս անօրէնութեան հատուցումն եղաւ քաղաքին, որ այնուհետև լքաւ և ի բնակչաց և ամայացաւ, ըստ որոյ և պատմագիրք յետ այնորիկ երբէք յիշատակութիւն չեն անել Արմաւրայ համար:

Արմաւիրայ պիժմեան դիրքը եւ ձեւը

Արմաւրայ բլուրը, որոյ վերայ եղած է քաղաքը, դաշտի երեսում բարձրացած Երասխայ հին անցքի վրայ հիւսիսի կողմից իւր տարածութեան մակերևոյթը հանդերձ իւր արևմտեան հիւսիսային խոնարհ բազուկովը հազիւ երեք վերստ շրջապատ կունենայ, իսկ իւր բարձրութիւնը երկրի երեսէն գրեթէ կէս վերստ ցգագաթն:

Բլուրի հիւսիսակողմը միայն է զառ ի վեր, ընդ որ ճանապարհն է ցգագաթն, իսկ միւս երեքին կողմանքն գահավէժ են բոլորովին, արևմտեան բազուկը գրեթէ ստորոտէն կսկսի և երկարելով առ ի շեղ կիսաբոլորակ ձևով մինչև նշանակած տարածութիւնը՝ կհասնի դաշտի հետ:

Բլուրը, գետնի երեսէն ուղղաձիգ բարձրացած, կէս վերստ հազիւ բարձրութիւն կունենայ և շրջապատած է բոլորովին հրաբուխի բերանից դուրս ցայտած լավայով՝ մուգ կարմիր չեչեքարով, որոնք չիջեալ հրաբուղխներէ կարտադրին, ինչպէս է Օշականայ բլուրը Քասաղ գետի վրայ, Արագածոտն գաւառի արևելակողմն ի հիւսիսոյ Վաղարշապատայ:

Արմաւրայ բլուրի դիրքը այս, իսկ նորա ձևը իւր փոքրկութեամբ արդարև իբրև «Ոստ մի բլրոյ», յատակէն ցկատարը բոլորշի է երեք կողմից, արևելքի կողմից գագաթը փոքր ինչ տափարակ է, իսկ արևմուտքից՝ սակաւ մի բարձր և սրածայր, և այս բարձրութիւնում եղած է շրջապատ պարիսպը, որու հիմանց տաշած որձաքարերը կանգնաչափ քառակուսի լայնութեամբ դեռ ևս միաչար կմնան ոլորակութեան մէջ, որոց հետն եղած էր և Արմաւրայ բևեռաձև գրոց քառակուսի որձաքարը, նոյնպէս կանգնաչափ լայնութեամբ, որում յուխտ կգային ժողովուրդք Լուսաւորչու անուամբ և մոմով ու խնկով կպատուէին: Այս բևեռագիր արձանաքարն է,

զոր մեր հոգեկից եղբայր Մեսրովբ եպիսկոպոս գտնելով անդ ի տափարակի բլրոյն՝ բերաւ Սուրբ Էջմիածին, ու տեղը կանգնել տուաւ մեծադիր խաչքար՝ արձանագրութեամբ հանդերձ, ինչպէս հրատարակուած է Արարատ ամսագրոյ մէջ: Որոյ վերայ շինած են ժողովուրդք մատուռն փոքրիկ իրենց ուխտը պատուելու համար:

Եւ յիրաւի, կարի խիստ քաջադիպութիւն է այս, զի արժանայիշատակ Յովհ. եպիսկոպոս Շահխաթունեան՝ ստորագրողն հինգ գաւառաց Արարատայ և մերձաւոր տեղեաւ Արմաւրայ, այլ ի քարինս պարսպին չի տեսնիլ այսպիսի հնութիւն կռապաշտութեան դարերէն քրիստոնեայ աշխարհքին անզոյգ և թանկագին պարգև, իսկ Մեսրովբեանց սրաբիբ աչքէն բևեռաձև գրերն անգամ անտես չեն լինիլ, և չէ զարմանք, զի և հայկական նշանագրերը հայ ազգին մշտնջենաւոր պարծանաց յիշատակ տուողը Մեսրովբ էր:

Պարսպի հետքը կշրջապատէ այս բարձրութիւնը, ուր, ինչպէս ասացինք, ի տեղիս տեղիս կտեսնուին քարաշարք, մնացածը վաղուց արդէն տարել են մերձակայ բնակիչք (տե՛ս ի ստորագր. Շահխ. Բ. հատոր, եր. 35): Շատերն ևս գրուած են գիւղացւոց գերեզմանների վրայ՝ բլրի մերձակայքում:

Գագաթի այս բարձրութեան վրայ շինած են յետինք ամրոց՝ կարմիր տաշած քարից, կրաշաղաղ աւազախառն զանգուածով, Հայաստանի աւերանաց վերջին դարերում յերեսաց հիւսիսային ազգաց, այլ այս ևս է աւերուած:

Ըստ այսմ Արմաւրայ բլրի դրից և ձևին նայելով՝ անկարելի կլինի մեզ ընդունել, թէ այսպիսի փոքրիկ , նեղ ու վեր ի վայր տեղում քաղաք լինէր ի հնումն, մանաւանդ երբ Տիգրան Երկրորդ մեր քաջ Արշակունին «Զգերութիւնն հրէից նստուցանէր յԱրմաւիր», որ, անշուշտ, և քաղաք էր բնակչօք, ուստի հաւանական է, որ ամրոցն էր բլրի վրայ, ուր «ի ծայրս աշտարակի պարսպին» զՆիւքեարն վարսել կհրամայէր Արամ, իսկ Արշակունեաց բազմամարդութեան ժամանակ քաղաքն էր ի ստորոտս բլրոյն արևելեան հարաւէն դէպ յարևմուտս տարածուած, ընդ որ Երասխ կանցանէր, մինչ ի հիւսիսային արևմտեան բազուկը կերկարէր, որ կհայի, արդարև, ուղղակի Երուանդակերտի և Երուանդաշատի վրայ յարևմտից, ուր փոխադրեց Երուանդ արքունիքը թէ՛ գետի տեղափոխութեան համար, և թէ՛ պատերազմի յարմար ապաստանի չհամարելով:

Այս բազկի առապարում է ուխտատեղին Սուրբ Դաւթի, զոր կյիշատակէ Շահխաթունեան յԲ. հատոր, եր. 30, ուր և հիմունք կերևին շինուածոյ հնոյ քաղաքին, որոյ համար յառաջ գրեցինք:

ԱՐՇԱԿԱՒԱՆ ՅԱՐՇԱՐՈՒՆԻՍ

Պատմական տեղեկութիւնք[1]

Պատմութեանց հմուտ եղող ազգայնոց քաջ իսկ յայտնի է Արշակաւանայ շինութեան սկիզբը «ի թիկանց կուսէ լերին Մասեաց» յամին 370, և փոքր ժամանակի տևողութիւնը մինչև ց 374 թիւ Փրկչական, ուստի և հարկաւ այսպիսի մի քաղաք առիթ նախանձայուզութեան ազգին և տարապարտ սպանման մարդկան բիւրաւորաց օրինաւոր և ըստ արժանւոյն պատմական տեղեկութիւն չի ունենալ, որպէս զի իւր տևողութեան ժամանակի անցքովը յագեցնէ յետագայից միտքը և բազմաց ևս զուգընթաց անցից վրա գիտութիւն տայ: Այլ շատէն շատ նորա շինութեան և աւերանաց ժամանակի պժգալի անցքերը յակամայից կարդալով ի գիրս Խորենացւոյն՝ պիտի ողբայ և կարեվեր խոցի ի սիրտ, բարբարոսական և անօրէն, անկարգ և անկառավար իշխանութեան և միանգամայն մարդկային գործոց անմտութեան վրայ, և այն առաջին քրիստոնեայ դարերում Հայաստանի նոր լուսաւորութեան ժամանակ, զոր ահա կգրեմք:

Արշակ Երկրորդ՝ Տրդատայ մեծի արքայական գաւազանէն իջած, անարժան թագաւորն Արշակունի, այն ինչ իւր չար և անօրէն գործոց, ազգակործան սրածութեանց և ընտանի արիւնահեղութեանց համար մէկ կողմէն Շապհոյ պարսկական զօրքերը իրեն հաւատարիմ ու միանգամայն ուխտադրուժ թագաւորի երկիրը յարևելից և ի հարաւոյ պատուար պարսպի կանգնած էին ի յոյնս ձեռն տալուն համար, իր երկրի մէջ իր ցեղական տունը բովանդակ, իր արեանառուքն և մերձաւորք քէն ի սրտի, և զէն ի ձեռին արքայական տունը պաշարած էին՝ ամուրն Անի (Կամախ Անին), ընտանի և մեղապարտ Աու հայրասպան որդւոյ արիւնը փոխանակ թափելու:

Այսպիսի ահա պժգալի անցից դառն դարձուածոց ժամանակ և իւր ընտանի արիւնը Աստուծոյ արդարադատին Աթոռոյ յառաջ յերկինս բողոքելու ժամանակ, դառն սրտիւ կպատմագրէ ծերունի հեղինակն Խորնոյ. «Բայց Արշակ ևս ժպրհեցաւ առնել գործ անմտութեան, ի թիկանց կուսէ լերին Մասեաց շինեաց ձեռակերտ

1 ԱՐԱՐԱՏ, էջ 211-214; 245-247

ժողով մարդկան մեղաւորաց և ետ հրաման, որ ոք անկեալ անդր բնակեսցէ, մի՛ լիցի ի վերայ նորա իրաւունք դատաստանի, և նոյն ժամայն ծովացեալ՝ լցաւ մարդկութեամբ հովիտն ամենայն, քանզի աւանդառուք և պարտականք, և ծառայք և վնասակարք, և գողք և սպանողք, և կնահանք և այլ այսպիսիք փախուցեալք անդր անկանէին, և ո՛չ գոյր նոցա այց և խնդիր, և բազում անգամ բողոքեալ նախարարացն, և ոչ լուաւ նոցա Արշակ, մինչև առ Շապուհ ևս ունել նոցա բողոք» (Խոր. Գ. Իէ):

Որով Արշակ ընտանի թշնամեաց հետ, որոնք Գնելայ և իւր հօր Տիրանայ և այլոց արեան հեղման էին վրէժխնդիր, բոլոր նախարարք և մեծամեծք, ևս և իշխանք աշխարհին, թշնամի և ոսոխ շարեց իրեն դէմ:

Շապուհ դարձաւ թէ չէ ի Յունաց, պարսիկ սպարապետ ուղարկեց հայ գնդով բռնել զԱրշակ, իսկ Արշակ փախաւ ի Կաւկաս: Հայ նախարարք ձեռն տալով սպարապետին՝ առան ամուրն Անի և գերեցին անտի բոլոր արքունի գանձը:

Ի՞նչ պիտի անէր դժբաղտն Հայաստանի արեանարբու և ազգակոտոր թշուառ թագաւորը, Աստուածային բարկութեան անէծքն էր իւր վրա Մեծին Ներսիսի բերանովը, փախաւ եղբայրասպանն Կայեն. «Եւ նա խոյս ետ ի նոցանէ, կը վկայէ պատմագիրն, զկողմամբք Կաւկասու, Վրաց միաբանելով» (Անդ):

Երանի՜ էր և մեծ երանի, այսպիսի բարբարոս թագաւորութեան անտերունչ երկրին, եթէ Ղամէք մի առաքէր Աստուած, և գայր յաւետիս Հայաստանի, խոստովանէր, թէ՝ «Այր մի սպանի ի վէրս ինձ, և երիտասարդ ի հարուածս ինձ» (Ծննդոց):

Բայց Աստուծոյ երկայնմտութիւնն անքննելի է ի դարձ մարդասպանին և մարդկան մեղաւորաց չարեաց չափը լցուելու, ո՞ գիտէ, թէ նախարարքն ևս ի՞նչ յանցանքով մեղաւոր էին առ Աստուած՝ անհաւատարմութեա՞մբ արդեօ՛ք առ իւրեանց իշխանութիւնը, արդեօ՛ք ուխտադրժութեա՞մբ առ Թագաւորս, եթէ արդեօք անմիաբանութեա՞մբ առ միմեանս:

Հարկաւ անմեղ էին նախահարքն մեր, և սպանաւ մարդասպանն, մեղաւորք էին նախարարքն մեր, և ազատուեց մարդասպանն կրկին ազգարիւն թափելու:

Ամուրն Անի առնուեց, արքունի գանձն ու թագաւորաց ոսկերքը գերի ընկաւ, իհարկէ անարժան ժառանգի վնասը մեռելոց ոսկերքին ևս կհասնի, խնդրանօք իսկ նախարարք ոսկերքը յետ առնլով ի գերողէն և յԱղցում ամփոփելէն ետքը՝ ժողովեցան

նախարարք Հայոց, ինչու՞ համար, մեղս ի վերայ մեղաց դնելով՝ դիմեցին առհասարակ Արշակաւանայ արքունի ձեռակերտին վրա և անքրիստոնեայ հոգւով և բոլորովին բարբարոսաբար կոտորեցին մարդ ու կին, հարսն ու փեսայ, բաց ի ծծկեր երեխայից, և Արշակաւան դեռ ևս ո՛չ քաղաքացեալ և ո՛չ պերճացեալ՝ նստաւ իւր հիմանց փլատակների վրա, և այն ժամանակէն սկսեալ՝ մնաց անյիշատակ առ պատմագիրս, որպէս և մեք չունիմք այլ ևս յիշատակել իւր սակաւաժամանակեայ գոյութեան կործանմանէն ետքը, բաց ի իւր այժմեան տեղւոյ դրից և ձևոյն:

Կմնայ մեզ միայն մի խորհրդածութիւն անել մեր քրիստոնեայ նախարարաց անքրիստոնեայ գործոց անգթութեան վրա:

Վասն զի, երբ որ ապաշխարութեամբ կապրին երկոտասան բիւր մարդիկ կռապաշտ աշխարհքում, որքա՜ն քրիստոնէական առաքինութիւն կգործէր մեր նախարարանին, փոխանակ սրով սուսերի հարկանելոյ զԱրշակաւան, ապաշխարութեամբ ապրեցուցանել զԱրշակաւան, այլ ձեռն Տեառն էր ի նախարարս լցուցանել զչափ հարցն իւրեանց, և Յովնան թերևս կխորդայր ի խելի նաւին Ծոփաց աշխարհքում, որ թէ և վաղ գիտացեալ էր զայս մեծին Ներսիսի, ի՞նչ էր, ուրեմն, յապաղելու պատճառը, որ անպարտ մարդկանց արիւնն էլ պարտաւորաց հետ թափուեց: Գուցէ նա ևս իւր նպատակն ունէր:

Մեր նախնեաց մատենագրութիւնները շատ պակաս կողմեր ունին, եթէ նոքա իւրաքանչիւր անձին գործոց պատմութիւնը գրելու չոր ու ցամաք չգրէին անցնէին, այլ ամեն անցից յարակից պատմութիւնը ևս գրած լինէին, ոչ ոք այսօր չէր տարակուսել շատ գործքերի վրա, որպէս և Արշակաւանայ կոտորածի, կիմանար, թէ ի՞նչ էր գլխաւոր պատճառը, որ նախարարք շատէն շատ իրենց նիւթական վնասուց համար կամ թէ առ թշնամութեան թագաւորի կամ նորա համախոհից հետ անխնայ կոտորէին այնքան բազմութիւն մարդկան՝ իրենց ազգը և իրենց արիւնը մինչև քսան հազար տուն, եթէ ուշ դնենք Մեսրովբայ պատմութեանը, որոց ո՛չ հովիտն Արշակաւանայ կբաւականանայ պարունակելու, և ո՛չ իսկ Արշակաւանայ միւս լեռնավայրք կտանէին, որոնք, ինչպէս տեսանք անձամբ այս օրերս, կարի անձուկ և նեղ են այնքան բազմութեան համար, եթէ չափազանցութիւն չլինի Մեսրովբայ գրութեան մէջ, կամ Փոստոսին Բիւզանդայ աղճատախօսութենէն առանց քննութեան առած:

Երբէք կարելի չէ մեզ, բաց ի ժամանակակից պատմաբանի գրածէ, հաւատալ կա՛մ ընդունել այլ գրուածք յետագայից, որոնք կա՛մ

առաջին պատմագրի բանը այլ ընդ այլոյ կօրինակեն, կամ այսպէս պղտոր աղբիւրներէ կառնուն: Խորենացին չի նշանակեր թիւ կոտորելոցն, որ մերձաւոր է ժամանակաւ տարաբաղդ դիպուածին, իսկ Մեսրովբ և Բիւզանդ բազմութեան թիւը յանչափս նշանակելէն ետքը, այնչափ բիւրաւոր մարդոց մահը ևս անիծից ծնունդ կհամարին մեծին Ներսիսի, որ նորա անէծքովը Արշակաւանայ այս հարուածն եղած լինէր: Այս հարուածն էլ (Հին Հայաստան, եր. 449) չարակեղ կամ ժանտ անուանեալ հիւանդութիւն կհամարի նոյնպէս «յանիծից սրբոյ մեծին Ներսիսի պատճառեալ, կգրէ, ի մարդիկ և յանասուն»:

Զարմանք է, այս մարդիկը կա՛մ վերացած են եղել մատենագրելու ժամանակ, կա՛մ երբէք չեն մտածել, թէ իրենց երևակայական գրուածքը առաջիններու հետ բաղդատելով՝ մեծ տարբերութիւն կգտնեն յետագայք, հետևաբար և մտացածին կհամարին իրենց գրուածքը և ոչ իրացն ստուգութիւն:

Թէ որ Մեսրովբայ կամ Բիւզանդայ գրուածոցը հաւատ ընծայենք, իբր քսան հազար տուն լինէր Արշակաւան, հինգ անձն մի տուն հաշուելով առ նուազն՝ հարիւր հազար անձն կոտորած պիտի լինին նախարարք երեք աւուր մէջ, որ անհնարին կթուի մեզ, երկրորդ՝ Արշակաւանայ բովանդակ միջոցը տևեց միայն չորս տարի՝ 370-374, ուստի ինչպէ՞ս կարելի էր չորս տարուայ միջում այնքան ժողով մարդկան մեղաւորաց լցուիլ յԱրշակաւան, որ մինչև հարիւր հազարի հասանէր, որ դարձեալ անհնարին կթուի. կա՛մ բազմութեան թիւը չափազանց է, կա՛մ Արշակաւանայ գոյութեան և տևողութեան ժամանակը պիտի երկարի:

Եւ մի՞թէ Հայաստան այնքան չարագործ էր, որ երեք տարուայ միջոցում այնքան ժողով մեղաւորաց արտադրէր իւր մէջէն, քրիստոնէութիւնը արդեօք ի՞նչ ներգործութիւն արած էր հասարակաց ժողովրդեան սրտի և հոգւոյ վրա, որ քրիստոնէական առաքինութեան ճանապարհէն այնքան շեղուելով՝ բոլորովին ևս քրիստոնէութեան ճանապարհէն դուրս գային, և աւանդառուք, պարտականք, գողք և սպանողք և այլք այնքան ահագին բազմութիւն կազմէին մարդկան մեղաւորաց՝ չորս տարի միայն ոտքի վրա կեցող Աւանի մէջ:

Խորենացին, որ հինգերորդ դարում կապրէր մերձաւոր ժամանակաւ Արշակաւանայ կործանմանը, իսկական անցքը կհամառօտէ այսքան խօսքի մէջ. «Եւ նախարարացն Հայոց ժողովեալ՝ դիմեցին ի վերայ արքունական ձեռակերտին Արշակաւանայ և հարին զնա սրով սուսերի յառնէ մինչև ցկին»:

Եթէ ճշմարիտ լինէր Փոստոսի գրուածքը, որ իրանից յառաջ Մեծին Ներսիսի ժամանակակից էր, նորա գրած առասպելախօսութիւնքը ևս կը կրկնէր Խորենացին, թէ քսան հազար տուն էր Արշակաւան, և յանիծից սրբոյն Ներսիսի եղաւ այն հարուածն և այլն, բայց որովհետև Խորենացին ևս քաջ գիտէր Ղազարայ նման, եթէ անհաւատարիմ ձեռն աղաւաղած էր Բիւզանդայ գրուածքը, վասն այնորիկ և ինքն ևս անդէպ համարեց այնպիսի առասպելախօսութիւն յետագայից թողուլ իբրև ստոյգ պատմութիւն անցից:

Իսկ Մեսրովբ տասներորդ դարում պատմագրելով, Խորենացու անխառն գրուածքը թողլով՝ բառ առ բառ կառնու ի Բիւզանդայ, Զամչեանի ասածին պէս:

Այսքան խորհրդածութիւն անելէն ետքը, կտեղադրենք ի վերջոյ և Արշակաւանայ տեղւոյն դիրքն ու ձևը՝ հազար հինգ հարիւր տարի կործանմանէն ետքը:

ԱՐՇԱԿԱՒԱՆԱՅ ՏԵՂԻՆ

Արշակաւանայ տեղին, զոր Խորենացին կդնէ «ի թիկանց կուսէ Մասեաց լերին», եթէ ճիշդ առնունք, աւելի Մասեացոտն գաւառի մէջ կանկանի, քան թէ ի Կոգովիտ, վասն զի եթէ Մասեացոտն գաւառը կհամարուի Արարատ լերին հիւսիսային ստորոտքը յարևելից յարևմուտք, այն քարակտուր երկարաձիգ առապարը, որոց քարակարկառի մէջ կնշմարուին տեղիքն Փառախոտոյ յարևմտից Տաշբուռուն ասացեալ գեղջ, և Ցոլակերտ ի Ղարաղօեուն գեղջ տաճկաց նոյնպէս յարևմտից մինչև յԱրհաճ գիւղ, որոյ կործանուած և սև ապառաժ անհեղեղ բերդաքարերի վրա կնշմարուին և այժմ բևեռաձև գրեր ի նախնեաց, ըստ այսմ Արշակաւան ևս անկանելով Մասեաց լերին հարաւակողմը՝ անմիջապէս նորա թիկանց վրա բարձրաւանդակ ձորամիջին, որոյ արևմտակողմն հիւսիսից հարաւ կպատէ լեառն Գինայ, Օրկովի ասացեալ սարը, նորա այս դրիցը կերևի Արշակաւան Մասեացոտն գաւառի մէջ:

Բայց Խորենացին ինչպէս Արշակաւանայ, նոյնպէս և Կոգովիտ գաւառի համար, որ գրել է զթիկամբք Մասեաց, յետագայ պատմիչք համարել են, թէ և Արշակաւանն է Կոգովիտ գաւառի մէջ, ըստ որում նորա համար ևս գրած է՝ «ի թիկանց կուսէ լերին Մասեաց շինեաց ձեռակերտ», այս տեղից առնլով և Հին Հայաստանը՝ զԱրշակաւան դրել է Կոգովիտ գաւառի մէջ, ինչպէս և Հ. Ալիշանի աշխարհացոյց թերթի մէջ:

Այլ միթէ և չորս կողմից եղած թիկունքն Մասեաց լերին հարաւակողմն է Տաճկաց սահմանին մէջ, ուր է և Պայազիտ քաղաք, իսկ Արշակաւան կից ի թիկունս Մասեաց՝ երկուց լերանց ձորամիջին, աւելի հիւսիսային բաժնումն եղած գաւառի վրա կանկանի, ուր է լեռնահովիտն Մասեաց և Գինայ լերանց կցուրդի մէջ՝ բարձրաւանդակ տափարակ դիրքով ի ձորամիջին:

Բայց մենք պատմագրաց այս համոզմունքը չենք մերժեր, որոնք թէ և Արշակաւանայ տեղւոյն ոչ են ականատեսք, բայց Խորենացու միանման գրուածքէն կհետևցնեն, միայն կտեղագրեմք զԱրշակաւան ըստ այժմեան դրից տեղւոյն և ձևին:

Արհաճ ասացեալ գիւղէն դէպ ի երկուց լերանց ձորամէջն ի վար, որ կհամարուի Ցոլակերտի մի մասն իւր հին բերդովն ու դիրքով, որ է «Առ խորշիւք լեռնոտինն, ուր մեծապէս ծախուք», տուն կշինէ Ամասիա Ցոլակայ համար, մինչև Արշակաւան երեք ժամէն աւելի է զառ ի վեր ճանապարհն առապար ձորամէջէն, ընդ որ ուղղակի դէպ ի հարաւ բարձրանալով՝ աւելի ևս անմերձենալի է ձորի արևելակողմանքը իւր ապառաժ քարակարկառ դիրքովը, այս խորաձորէն ևս բարձրանալով, ուր երկու կողմնական լերանց թիկունքը գրեթէ կհպին իրար, քարքարուտ ձորի գլուխը հասածին պէս կբացուի ընդարձակ և բոլորակ լեռնահովիտը, և երկու լերինք իրարից այնքան կհեռանան այս լեռնաղաշտի վրա, մինչև գրեթէ ընդարձակ հովիտը կտարածուի բոլորակ ձևով հինգ վերստ աւելի շրջապատ մեծութեամբ, և այս հովիտը այսպէս ընդարձակելով տափարակ դաշտի երեսը յարևմտից և ի հարաւոյ նորա՝ լեառն Գինայ ծոցաւոր և կիսաբոլորակ ձև կառնու, բոլորովին սիգաւէտ, և այս ընդարաձակ տափարակ դիրքի մէջ Արշակաւանայ ընդարձակ հովիտը կը պատէ՝ հարաւային կողմից իւր թևը կիսաբոլորակ տարածելով լեառն Օրկովի, դէպ ի արևելք վերստին կմերձենայ Մասեաց լերին: Այս ընդարձակ լեռնահովտի մէջն է Արշակաւան արևելեան կողմից՝ Մասիսի արևմտեան թևի տակ, տափարակ դիրքով, ինչպէս ասացինք, և ըստ արևելեան ազգաց սովորութեան եռանկիւնի ձևով:

Աւանը այս դիրքի վրա, և այս ձևն իւր շրջապատը գրեթէ 3 վերստ կլինի. պարսպի քարաշարը կէս մի հողի երեսին, երեք կողմից ևս կերևի, տեղ տեղ ևս շինութեանց քարաշարեր կը նշմարուին պարսպի ներսը՝ քաղաքի արևելեան անկիւնում՝ բոլորովին սև ապառաժ որձաքարերէ, պարտաւոր և անպարտ մարդկան արեամբը ներկուած և գոգցես սևացած մինչև ցայսօր: Ահարկու և

սրտառուչ տեսարան, զի մարդիկ, չպահելով զԱրշակաւան երկրիս երեսի վրա, լերինք գթալով մարդկային անգթութեան վրա՝ երկու կողմից ծոցաւորուած Արշակաւանայ դիրքն ու ձևը կպահեն սիգաւէտ և ծաղկաբոյր հովիտների և ծործորների մէջ, թերևս ի յիշատակ մարդկային անգթութեան:

Պարսպի հարաւէն մինչև ի հիւսիս և մինչ ի գլուխ ձորոյն, որ ճանապարհն է ելից, ինչպէս ասացինք, բաւական լայնութեամբ և խորութեամբ երկարացած է առուն, որ կերևի Մասիսի հարաւային բարձրաւանդակէն սկզբնաւորուած, ուր կվկայեն վրանաբնակ քուրդք, թէ կայ մեծ ջրամբար կամ լիճ ջրոյ, ուստի կբերեն եղել ձեան հալացած ջուրը ի քաղաք: Այս դիրքով և այս ստորագրած հովտի մէջ աւելի մերձ է Արշակաւան Մասեաց լերին, քան լերին Գինայ:

Մեր առաջնորդ քուրդը կպատմէր, թէ Արշակաւանայ արևելեան հարաւակողմը՝ պարսպին մօտ, կան կրաշէն հորեր, որոց մէջ կժողովին անձրևաջուր յարբումն խաշնարած հովուաց գարնան ժամանակ: Եւ այս իսկ է պատճառը, որ քաղաքամիջին և ընդարձակ հովտի երեսը ծածկած մարդաչափ խոտը, դալար ու չորացած խոտը, ուր ջուր չլինելով յարբումն խաշանց՝ ամենևին ոչխարաց հօտք չի մերձենալ այս խոտաւէտ տեղերին, ճանապարհն միայն է, ընդ որ մեք ելանք, որ կտանի ի Կոգովիտ գաւառ՝ ի սահման Տաճկաց, և վրանաբնակ և աւազակ քուրդք միայն կճանապարհորդեն ընդ այն ի Պայազիտ՝ ջուր առնլով եօթն ժամուց ճանապարհի համար Ռուսաց սահմանագլխէն՝ յԱրհաճ գիւղէն, ինչպէս և մեք սափորով ջուր առաք ընդ մեզ:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՅԵԳԻՊՏՈՍ

Յառաջնումն տուաք հատորի զանցս ճանապարհորդութեան մերոյ ի Կոստանդնուպոլիս, ընդ քաղաքսն վաճառաշահս և հայաժողովս, ընդ որս անցանել կայր մեզ ի Կարնոյ ցՏրապիզոն, յորս մարդասիրեցաք ի մերայնոց. և զոր անդ ի մայրաքաղաքին զհամազգեաց մերոց միմեանց հակառակ կուսակցութիւնս մասնաւորաց հայորերեւոյն, և զոմանց հոգևորականաց ըստ ազգիս անբաղդութեան վիճակելոց եկեղեցւոյս մերոյ, զորոց շատ է յառաջնումն ընթեռնուլ գլխի:

Աստանօր կարգեմք զանցս ճանապարհորդութեան մերոյ ի Կոստանդնուպոլսոյ յԵգիպտոս ընդ Դարդանէլեան նեղուց, ընդ Հելլէսպոնտոսն կոչեցեալ. ընդ որ Մարմարայ ի Միջերկրականն խառնի ծով, ընդ որ և մեք նաւեցաք ի Զմիւռնիա, և անտի յԵգիպտոս՝ յԱղէքսանդրիա, ուր ի հնումն երբեմն մերս Խորենացի յունականն ընթացեալ զհետ բարբառոյ, յորմէ և անդր ի Գահիրէ՝ անյաջող հողմով նաւարկութիւն ընդ Նեղոս, որ ո՛չ սակաւ նեղեաց զմեզ յիւրում նուազութեան ջուրց, զի ժամանակ տեղատուութեան էր այնորիկ:

Կարի՛ ցուրտ էին աւուրքն, յորժամ յերկուսն նոյեմբերի 1853 ամի, ճանապարհ եբաց շոգենաւն ի Կոստանդնուպոլսոյ ընդ ծով Մարմարայ. գիշերն ողջոյն ընթանայր սրընթաց և խորտակէր զալիս ջուրցն մկանանց դիզելոց զառաջեաւ ի շնչելոյ հողմոցն ցրտութեան:

Յառաւօտել գիշերոյն խաղաղանայր նաւն ի նեղուց անդր Հելլէսպոնտոս, ուր քաղաքն կոչեցեալ Զանաքգալէ, յարևելից ծովուն Ասիական կողմանն. և ահա՛ զեղան ի նաւ անդր նաւաստիք մակուկաց, որք բերէին ոմանք ճանապարհորդս, այլք վաճառս և կէսք կերակուրս ի վաճառել:

Հազիւ յապաղեցաւ աստ շոգենաւն տալ և առնուլ վաճառս. ուստի ապա նաւեցաք առանց հողմոց բռնութեան ընդ նեղուցն, որ իջանէր ի հարաւ կոյս, յորում երկուստեք մերձ էին ցամաքն լեռնոտք և անտառոց ծառովք կանաչացեալ իբրև յաւուրս ամարայնի.- Արշիպեղագոսն էին այսոքիկ, հարիւրաւոր կղզիք ի ծովու մերձաւորք իրերաց ո՛ր դիւր և ո՛ր սեպացեալ բլրովք. ընդ երեկս անձրևէին երկինք, երեսք հաստատութեան էին մրրկալիցք,

զի իբրև ի գարնան առանց հողմոյ խաղային ամպք ի հաստատութեան, և ընդհանուր անձրևէր: Գիշերն ողջոյն միգապատ էր երկինք, բայց չոգենաւ մեր աներկիւղ իբրև ի գետ հերձանէր գլուր և արագ արագ չափէր զերկարութիւն Եգեան ծովուն: Զիներորդ ժամաւ հազիւ թէ չիթք անձրեւաց բերէին զքուն ծանրացելոց աչաց յաւէտ յընդդիմահարութենէ գործեաց նաւուն իբրև յահեղ կռանահարութենէ դարբնոցաց:

Զև անցեալ գրեթէ ժամս երկուս, դադարեալ էին ամենայն շոնչիւնք, և նաւն խարսխեալ ի ծովու ի հանդիպոյ Զմիւռնիոյ յընդարձակ նաւահանգստին, յորժամ բացան աչք մեր և գտաք զմեզ ի յունական սահմանին. և ընդ արշալոյսն առաւօտու շրջապատեցին զնաւն մակոյկք՝ քաղաքին թափել զբեռինս: Ի խռան անդ բազմութեան նաւորդաց ծանօթս ետ յանկարծ նախածանօթն իմ Յովհաննէս Մարկոսեան եկեալ ընդ առաջ մեր ի կողմանէ Գաբրիէլ եպիսկոպոսի՝ առաջնորդին Եգիպտոսի, որ ըստ հրաւիրանացն մեզ իշխանացն Գահիրէի մնայր գալստեան իմում անդ ի Զմիւռնիա, ընդ որում ելեալ ի նաւէ, գնացի յողջոյն Առաջնորդին:

Կալով աստ ի Զմիւռնիա շաբաթ մի ողջոյն, հիւր եղէ ի տան Ստեփաննոսի Խալֆայեանց մեծի իշխանին, ուր ո՛չ սակաւ տեսաք մարդասիրութիւն և ի մերայնոց ամենից ծանօթից և անծանօթից:

Ապա ի կիւրակէի աւուր ընդ երեկս մտաք աստի չոգենաւ ընդ Գաբրիել եպիսկոպոսին. ո՛չ սակաւ ուղեկիցք եղեն մեզ ի քաղաքացւոցն մինչ ի նաւ անդր, որոց տուեալ ողջոյն հրաժարական, մեկնեցաք ի նաւահանգստէն ի կէս ժամու գիշերոյն, յորում փոքր ինչ խռովէր ծովն:

Ընդ ճանապարհն ողջոյն թուէր մեզ ի գարնանային աւուրց մտանել յամարայինն, զի ի չորեքշաբթի աւուր, յորում ելաք ի ցամաք յԱղէքսանդրիա, չոգ սաստիկ կալաւ զմեզ, մինչ ի նաւ անդր ո՛չ ժուժել մեզ կալ ի հանդերձ ձմերայնի:

Աստ յամեցաք զաւուրս չորեքտասան, յորս ազգային գործոց ընթացիցն կամեցեալ խնամ ցուցանել Առաջնորդին, փոխեաց զհին գործակալս եկեղեցական կալուածոց. և յառաւելն յառաջընթացութիւն վարժատան Ազգայնոց տեղւոյն՝ կարգեաց վարժապետ ի նմին զՅովհաննէս Մարկոսեան Զմիւռնացի՝ եղեալն ընդ մեզ, որ չգիտելով հայերէն դպրութիւն՝ խոստանայր գաղղիական լեզուի օժանդակութեամբ, որում հմուտ էր, մարզել զմանկտին ի հայրենի բարբառ, որոյ զքերականական հոլովս ինչ նորոգ թոթովէր. զիա՞րդ և իցէ, առ ի չգոյէ գերագունին, շատացաք գաղղիականն

չաւղօք ի մերն արուեստից զաշակերտսն ընթացուցանել չաւիղ, երբ պարտ էր մերովն օտարին բարբառոյ զհետ ընթանալ:

Կարգեալ առաջնորդին փոխանորդ ինքեան աստ յԱղէքսանդրիա զՂազարոս Տէր Գասպարեան Զմիւռնացի, և ի ձեռս տուեալ նորա զվերակացութիւն ազգային կալուածոց եկեղեցւոյն և աթոռոյն Երուսաղէմի, զոյր զհասն դարձուցեալ էին յօգուտ ազգին յաւուրց մտանելոյ Առաջնորդութեան Եգիպտոսի Հայոց ընդ Պատրիարգական իշխանութեամբ Կոստանդնուպօլսոյ, ի վեցերորդում աւուր դեկտեմբերի ճանապարհորդ եղաք ի Գահիրէ, նաւել ընդ Նեղոս, ելանելով ընդ ջրանցսն ի վեր նորոգ շինեալն ի Մահմատ Ալի փաշայէն, կարի զուարթագին աւուրքք որպէս ի տօթագին աւուր ամարան ըստ սովորութեան երկրին, յորում թուէր մեզ ի գարնանային եղանակի ելանել յամարանոց, զի երկիրն բովանդակ դալարագեղ ծիծաղախիտ լինէր ի պտղածնութեան անդ ծառոց, բուսոց և տնկոց. և մարգագետինքն համօրէն երկիրն դաշտային, և բերք ամենայն փութացեալ կապել զհասկ:

Աստի և անտի զափամբք գետոյն արկանէին գեղջէիցն տունք յաւանս յաւանս հատուածեալ, ո՛չ կարի բացակայ ի միմեանց, ի հարթութեան դաշտացն շինուածք գծուծք և անձևք, որք առ ի չգոյէ քարանց կառուցեալք են բովանդակ հողակոշտ կղմնտրօք, և շատք ևս ի նոցունց, որք աղքատացն են բնակութիւնք, կիսով չափ յերկրի փորեալք և փայտածածք արարեալ: Յամենայնի ի գիւղօրէս յայսոսիկ դիւրագիւտ ծառք են արմաւենիք, նարինջ և լեմոն, որով զարդարին պարտէզք համօրէն երկրին: Նեղոս, որ զափունս իւր զարդարեալ է համակ գիւղօրէիւքս, զաւուրս եօթն ո՛չ ետ մեզ ճանապարհ յաջող առ բնութեան հարաւային հողմոյն, թէև քսան ժամուց ճանապարհ միայն է նաւագնացութեամբ ընդ Աղէքսանդրիա և ընդ Գահիրէ:

Հազիւ ի 10 դեկտեմբերի ժամանեալ ի Գահիրէ, հաստատեցաք զբնակութիւն մեր յԱռաջնորդարանի մերում ի պարսպի Ս. Սարգիս եկեղեցւոյ ի խնամս մարդասիրութեան մերազանց և գերապատիւ առաջնորդին: Իսկ գաղթականութիւն ազգի մերոյ յԵգիպտոս՝ ըստ այսմ, զոր աստ ի Գահիրէ գրեցաք:

Գաղթականացն մերոց ազգիս յաշխարհ Եգիպտոս՝ ի կարգելն մեր պատմագրութիւն զարդեան եղելոցն աստէն, ձեռնարկեցաք զառաջինն ի պատմութիւն ազգիս, յորժամ Տեառն կամք եղև ձգել զմեզ աշխարհատեսութեամբ յԱփրիկէ, որպէս երբեմն զծերունին Խորնոյ, և նաւել ընդ Նեղոս մինչ ի քաղաք այսր Գահիրէ, յորում

արդ զսկիզբն առնեմք պատմութեան գաղթականութեան Հայոց Եգիպտոսի ի ճանապարհորդութեան մերում:

Այլ սակայն յԱզգային անդր մատենագրութեան սակաւ ինչ գտաք վէպս ի լուծումն հետազօտութեանց մերոց, և այն՝ արտաքոյ պատմութեան յայսմաւուրս, ի վարս պատմութեան վկայասիրին Գրիգորի, յորում կարի համառօտ ինչ յիշատակին յաղագս ազգի մերոյ եղելոյ յԵգիպտոս նախ քան զամս 775, զի սա մինչ ի Հռովմայ դարձ առնէր յամի 1079, նաւեաց յԱղէքսանդրիա. և մտեալ յԵգիպտոս (Մըսըր) գտանէ անդ զմեծ գաղթականութիւն Հայոց, ուր և ելանէ առ Սուլթան տեղւոյն և առ Խալիֆայն, և պատուի ի նոցունց: Եւ զի «էր, - ասէ, - յայնմ ժամանակի յազգէս Հայոց ի Մըսըր՝ համարով երեսուն հազար, ետ նոցա (վկայասէրն) Եպիսկոպոս՝ զքուեր որդին իւր Գրիգոր անուամբ[1]), և ինքն ... եկն յարևելս»:

Աստի յայտ է ապաքէն, եթէ վաղուրեմն էին աստ բազմութիւնք գաղթական Հայոց, զորոց ժամանակի գաղթականութեանն ոչ ստոյգ վէպս տան պատմաբանք ազգիս, սակս որոյ և յայն բան վկայասիրին յեցեալ՝ զգործս նորա զԳրիգորի մերոյ Հայրապետի դնեմք ի հիմն պատմութեան գաղթելոյ մասին ազգիս յԵգիպտոս:

Հայ աշխարհագիրն Ափրիկոյ ո՛չ կարէ հանել զժամանակ գնալոյ անդր Հայոց ի վեր քան զՎկայասիրին, այլ զի յաւուրս նորա էին անդր տանց երեսուն հազարաց ըստ վերոյգրեալ բանին, դիւրին լինի ապա մակաբերել, եթէ Հայք կարի յառաջ ժամանակաւ գաղթեալ էին անդր. և զի ոչ ի միում ժամանակի այնքան մեծ բազմութիւն գերդաստանաց կարէին հաւաքիլ անդր, հաւաստի է ուրեմն, եթէ յայլ և այլ տեղեաց մեծի և փոքուն Հայոց հետզհետէ չուեալ իցեն. ըստ որում ո՛չ ուրեք յիշատակի բազմութիւն այնպէս միահամուռ գաղթեալ յԵգիպտոս առ պատմաբանս մեր. եթէ լեալ ևս իցեն, որպէս յետ բարձման պետութեանն Բագրատունեաց, այլ ո՛չ ուստեքէ գտանեմք զնոսին զեղեալս անդր, բայց թէ ի սահմանաց Կիլիկիոյ և Միջագետաց ոք զնոսին կարծիցէ գաղթեալս, զայդ հաւանականաբար միայն ասել կարեմք:

Ի ներկայ յիշատակարանս ազգիս աստանօր ի Գահիրէ՝ չգտանեմք երբէք նշխարս մնացուածոց հնոյ բազմութեանն, և ո՛չ նշմարանք ինչ յարձանագիրս՝ զբազմանալոյ նոցա այնպէս յԵգիպտական պետութեանն առ նախնեօք մերովք, և ո՛չ իսկ հետք յիշատակաց ի հնոց ժամանակաց, այլ որ ինչ են աստ յիշատակք սրբու-

1 Զսա յիշէ Ներսէս Լամբրոնացի ի թուղթն իւր առ Լևոն արքայ:

թեան քրիստոնէական նշանաց, ո՛չ անցանեն քան զ1606 թուական Փրկչին, այս ինքն՝ ամք ընդ ամենն երկու հարիւր քառասուն և ինն:

Նախկին ապացոյց գաղթելոյ արդեան եղելոցն ազգիս յԵգիպտոս՝ գտանեմք զհրովարտակն մահմետականացն մարգարէի տուեալ յանուն ազգիս Հայոց՝ որպէս երևի ի Բասրայ, ոյր օրինակն ունի արդ ժողովուրդս մեր հին արաբացի բարբառովն, զոր և առնումք ի քննել:

Ի կարգս առաջնորդաց Հայոց Եգիպտոսի, որ առաջին է ժամանակաւ, քան զամենայն եղեալսն յարձանագիրս, յիշատակի առաջինն ի նոցանէ Գրիգորի վարդապետ ոմն, որ ի թուականին Հայոց ՌԾԵ (1606) գրէ արձանագիր ի վերայ օրինակի հրովարտակին, որոյ նախագաղափարն տուեալ է յանուն ընդհանուր ազգին Հայոց իբրև զիր ազատութեան ի Մահմէտէ, յետ երկուց ամաց ընտրութեան նորա ի մարգարէութիւն բովանդակ մահմետական ազգին, վասն ազատութեան ազգի մերոյ առ ի համարձակ պաշտել զՔրիստոնէութիւն և աներկիւղ ունելոյ զեկեղեցի ընդ ամենայն տեղիս:

Յիշեալ Գրիգոր վարդապետ ի վերայ նոյն օրինակի հրովարտակին վասն պահպանութեան այնորիկ ի ծոց եկեղեցւոյ Սրբոյն Սարգսի՝ արձանագրեալ է նզով այսպիսի. «Այս ազատութեան թուղթ ո՛վ յեկեղեցւոյ սուրբ Սարգսի հանէ, և ի տան պահէ, կամ ծախէ, կամ ուրիշ մարդոյ տայ, նզովեալ լիցի յերից սուրբ Ժողովոցն, և մեր մեղացն պարտական լիցի: Ես նուաստ Գրիգոր վարդապետս հաստատագրով նզովեցի զհանողն ի դրանէ սրբոյս, և օրհնեցի զխնամով պահողն. ի թուին ՌԾԵ»:

Յարձանագրութենէ աստի երևի, զի նախ քան զթուականն ՌՃՂԸ, յորում ամի դնի շինութիւն Սուրբ Սարգիս եկեղեցւոյն, եղեալ է դոյն իսկ եկեղեցի. ուստի շինութիւնն յայդի ամի համարել պարտ է նորոգութիւն և ոչ նորոգ շինութիւն, վասն զի ընդ մէջ երկուց թուականացդ ժողովին ամք ընդամենն 143, յորում Սուրբդ Սարգիս լեալ է ի շինութեան: Այլ թէ ի նոյն ժամանակէ մինչև ցշինութիւն զի՞նչ ինչ փոփոխութիւն կրեալ իցէ եկեղեցին, և ո՞յր անուամբ կառավարեալ, ոչ ուստեքէ յայտնի երևի, զի առաջնորդք, զորս կարգաւ ունիմք յիշատակել ի կարգին, չեն յառաջ քան զառումն Եգիպտոսի ի գաղղիացւոց, զի առաջինն ի նոցանէ Յարութիւն վարդապետ, որ երևի միաբան լեալ Հոգետանն յաւուրս շինութեան այնորիկ ի Տփխիսեցի Եղիսաբէթ խաթունէն,

եղեալ է առաջնորդ յաւուրս գալստեան Բոնապարտին յԵգիպտոս ի յամի Տեառն 1797, յորում կառուցեալ է և յիշատակեալդ Հոգետուն՝ արդեամբք Տփխիսեցի խաթունին. ուր յիշատակի և նոյն Յարութիւն վարդապետ ընդ ումեմն Ղազար վարդապետի: Այլ նախ քան զայս չիք յիշատակութիւն առաջնորդաց յարձանագիրս մինչև ց Գրիգոր վարդապետ, ցյիշատակեալ թուականն ՌԾԵ՝ ցամ Տեառն 1606, որպէս եդաք ի վերոյ:

Իսկ յաղագս գաղափարի հրովարտակին Մահմէտի, այսպէս ունի աւանդութիւն ազգս մեր աստ ի Գահիրէ, զի զայս գաղափար դենպետն Տաճկաց Բասրայու հանեալ է անդ յիսկական բնագրէ հրովարտակին Մահմէտի, և հաստատեալ կնքով իւրով՝ տուեալ է Հայոց, դնելով ի լուսանցսն այնորիկ զկնիք իւր. այլ թէ յորո՞ւմ ժամանակի գրեալ զայն, ո՛չ ոք ցարդ ի տաճկաց կարաց իմանալ զայն կամ ընթեռնուլ վասն կարի այլաձև լինելոյ գրոցն և հնութեան արաբացի բարբառոյն:

Այս ինչ յայտնի է, զի տաճիկք առին զԲասրայ նախ քան զամս 300, ուստի հաւաստի է, թէ յետ առման այնորիկ տուեալ են զայն Հայոց տեղւոյն յազատութիւն և անդր եղելոցն Հայոց, իսկ յետ ժամանակաց հասեալ իցէ այն գաղափար ընդ ձեռն գաղթականացն մերոց աստ յԵգիպտոս, այլ թէ ո՞յր ձեռամբ՝ այն ևս անյայտ:

Այսու երևի, թէև հայք եղեալքն այժմ յԵգիպտոս, գաղթեալ են յառաջագոյն ի Բասրայու, և զայն գիր ածեալ այսր ընդ իւրեանս:

Նախ քան զտիրապետութիւն Նապոլէոնի ի վերայ Եգիպտոսի, տիրէին այսմ աշխարհի Քեօլամանք (Մամելուքք) ասացեալ բդեշխք՝ տաճկական իշխանութեամբ, որոց առնլով զնոյն յՕսմանեան դրանէ՝ յաջորդէին միմեանց ի նմին իշխանութեան:

Սոքա՝ Քեօմալանք էին քրիստոնեայք և վրացիք ազգաւ, որք գերեալք ի Կաւկասային կողմանց, յափխազաց և ի հարաւային ափանց Պոնտոսի և ի Վրաստանէ ի ձեռն տաճկաց, ածէին ի Կոստանդնուպոլիս, ի Բաբելոն (Բաղդատ) և անտի այսր յԵգիպտոս, յորոց ի ձեռն ընկալեալ զմահմէտականութիւն, ժողովէին հարստութիւն մեծ ի շռայլութենէ տէրանց իւրեանց ըստ տաճկական մոլեկան բարուց, որովք և ազատ լինէին ի գերութենէ. և հասեալք յիշխանութիւն բարձի և աւագութեան, փոխանորդէին յաթոռ իշխանութեան երկրին, որոց և զօրացեալ այսու ի նմին ժամանակի, զերկիրն ամենայն կալեալ էին ի ձեռս պէյութեան անուամբ, թէև զիշխանութիւն յօսմանցւոց անտի առնուին, այլ յազգէ նոցին ոչ ելանէր ոք յայս յաջորդական իշխանութիւն Եգիպտոսի, և կամ այլազգ ոք յափշտակել իշխէր զայն:

Ի սոցանէ էր և ոմն Ճէպէճի-պաշի՝ անուն Մուստաֆայ պէյ՝ Հայազգի տաճկացեալ, որոյ քոյրն Եղիսաբէթ՝ անուն Տփխիսեցի՝ եկեալ յԵրուսաղէմ և լուեալ զտեղի եղբօր իւրոյ, ցանկացեալ տեսանել զնա, որ էր յԵգիպտոս, գայ աստ, ուր և անյոյս լեալ ընդ դարձ եղբօր իւրոյ, մնայ աստ, մինչև ցմահ իւր ծածուկ պահպանութեամբ ի նմանէ: Ուստի և այս կին՝ Եղիսաբէթ Տփխիսեցի չինէ ի յիշատակ հոգւոյ իւրոյ զհոգետունն առաջին (գուցէ արդեամբք եղբօր իւրոյ) և զսառնիճն վասն կարգաւորաց և պանդխտականաց Հայոց, որ յարևելից հնոյ եկեղեցւոյն Սուրբ Սարգսի ի Թուականի Հայոց ՌՄԽԶ (1757) յաւուրս Նապոլէոնի մեծի, որպէս տեսանի յարձանագրի Հոգետանս, ի ճակատ դրան սառնճին ի սրահի այնորիկ, որոց և ստորագրութիւնքն ի կարգս եկեղեցեացն:

Ի տիրել անդ Նապոլէոնի պետութեանն Եգիպտոսի յամին 1798 ի 1 յուլիսի, էր աստ յԵգիպտոս յազգէ մերմէ 50-60 տուն բնակութեան եկք ըստ մասին ի Կոստանդնուպոլսոյ:

Յետ այսորիկ Յակոբ վարդապետ ոմն յանուն Երուսաղէմի նուիրակ գնացեալ ի Հնդիկս և անտի դարձ արարեալ յԵգիպտոս որպէս աւանդէն, չինէ զերիս սենեակս ի վերնայարկի Սուրբ Սարգիս եկեղեցւոյն Առաջնորդարան անուամբ ի պէտս կարգաւորաց, յորում և վերոյիշեալն խաթուն անցուցանելով զաւուրս, վախճանի անդէն և թաղի ի գերեզմանոցին Հայոց, որ ի պարսպի Սուրբ Մինաս եկեղեցւոյն:

Յառաջին ժամանակս և ընդհանրապէս նախ քան զտիրապետութիւն Մահմատ Ալի փաշային վերայ Եգիպտոսի գրեթէ յաւուրս շարժման գաղղիացւոց ընդդէմ երկրիս, և առանձինն ցամս ժամանակաց եէնիչերաց, ազգ քրիստոնէից յԵգիպտոս՝ ունէին զմեծ նեղութիւն և հալածանս և մահ կրէին յեէնիչերաց անտի ի մասին քրիստոնէական կրօնից, և էին ի քաղաքի աստ ի Գահիրէ՝ իբրև ի բանտի, զի ի միջավայրի քաղաքին ամփոփեալքն հազիւ գտանէին զազատութիւն ելից արտաքս ընդ տունն մինչ ի շուկայն, վասն զի ի փողոցս ինչ՝ յորս պակասէր բնակութիւն քրիստոնէից, յանցանել նոցա ընդ այն ըստ դիպաց, յարձակէին ի վերայ նոցա եէնիչերիք և սրախողխող առնէին առ տեղեաւն. և չէր ոք վրէժխնդիր արեանն հեղլոց, և ոչ ոք իշխէր մխել ձեռն ի մարդասպանս անդր, և ոչ ոք ևս հարցանէր, զի արիւն քրիստոնէից դին էր ի ժամանակին գրեթէ իւրաքանչիւր բնակութեանց:

Այնքան էր այսօրինակ երկիւղ մարդասպանութեան երկրիս, մինչ զի իւրաքանչիւր քաղաքացի քրիստոնեայ ո՛չ ունէր վստա-

հութիւն հեռանալ ի կրպակաց, կամ յայնոցիկ փողոցաց՝ յորս քրիստոնէից էին կրպակք, և շատք ևս որպէս ասացաք, երկնչէին արտաքս գնալ առ ահի բռնութեան, իսկ գերդաստանաց գրեթէ չէր լեալ օրէն արտաքս ընդ դուռն ելանելոյ, զի մի՛ յափշտակեսցին ի բռնաբարողաց, որոց ի ձեռս ածեալ մանուկ ոք կամ կին՝ իսկոյն տաճկութիւն ստիպէին. և ընդ չառնուլ նոցա, ի պէսպէս անառակութիւնս չուայտէին ընդ նոսա և տանջէին հեթանոսաբար, զի ամենեքին և զօրն և զօրապետն բարբարոսք էին, մանաւանդ թէ և քաղաքականն իսկ կառավարութիւն բարբարոսական էր ի ժամանակին:

Այսօրինակ գործք էր աշխարհակալաց երկրիս, և այս ձև քաղաքական կառավարութեան իշխողացն, յորմէ առ ահի քրիստոնեայք ամփոփէին զեկեղեցի իւրեանց և արտաքուստ անհետ առնէին զձև նոցա, ի ներքուստ կառուցանելով նոցա ի տունս տունս, որոց վերնայարկս յարդարէին ի տուն բնակութեան, և ի ներքնայարկսն՝ եկեղեցի, զի մի՛ ծանիցեն տաճիկք տեղի և տուն աղօթից. որպէս զի մի՛ յաւար հարկանիցեն. թող զայս, և մեռելոց անգամ առ երկիւղի և առ բռնութեան՝ զտունս իւրեանց առնէին գերեզմանս. զի ընդ արտաքս տանել զայնս ի հանգստարան՝ բնաւ իսկ չէր կարելի վասն նախատանացս և վասն անտանելի չարիս գործելոյ առ ննջեցեալսն, որպէս և մինչև ցայժմ ի բազում տունս Ղփտեաց գոն հագստարանք մեռելոց՝ վկայք բարբարոսութեան ժամանակին:

Նշմարանք ահաբեկութեան քրիստոնէից ի ժամանակէն տակաւին երևին և պահին առ նոսա, ուր ուրեք քաղաքականացեալք են նոքին յԵգիպտոս աստ, և յընդհանուր Տաճկաստան առաւել յԱսիական մասին, յորս ահարկութիւնն դեռ անշէջ գոլով ի խուժան ռամկին՝ և գերեալ ազատութիւն կրօնից քրիստոնեայ ազանց՝ ցայժմ ևս ոչ կարեն համարձակ պայծառացուցանել զքրիստոնէական հանդիսավեհութիւն եկեղեցւոյ իւրեանց, այլ յառաջոյ դրանց նոցին է, զի կառուցեալ են տախտակամած դրունս երկրորդականս, և է՛, զի պարիսպ շրջապատ ածեալ զնոքօք, զի մի՛ արտաքուստ հայել ունիցի տաճիկ ռամիկն ի ներքս, կամ զանպատեհս ինչ ի ներքս անդր եկեղեցւոյն գործիցէ:

Ի ժամանակս անդ Քեօլամանաց և յիշխանութեան եէնիչերաց առաջնորդք ոմանք յիշատակին, ազգիս՝ աստ յԵգիպտոս, բայց ո՛չ գործոց նոցին և զժամանակաց Առաջորդութեանցն տան մեզ հաւաստիս արձանագիրք Եկեղեցեացն յիշատակարանաց՝ և ո՛չ բերանացի զրոյց պատմութեանց ծերոց ժողովրդեան մերոյ. միայն

զանուանս նոցին հանաք որչափ և գտաք յԱռաջնորդարանիս մերում աստ ի Գահիրէ, ի թղթոց և ի կոնդակաց ժողովարարութեան և նուիրակութեան աթոռոյն Երուսաղեմի, յորս բաց ի ժողովարարութեան դրամոց յազգէս՝ չի՛ք այլ պատմաբանական գիտելի արժանաւորք ծանօթութեան:

Սակայն այն ամենայն բարբարոսական գործք և բռնութիւն քաղաքական իշխանութեանն չիջաւ բոլորովին յաւուրց իշխանութեան Մահմատ Ալի փաշային, որոյ այր աշխարհաշէն գոլով և կամելով ի կրթութիւն մուծանել զաշխարհ իւր, բնաջինջ արար զբռնութիւնն, մեղմեաց զխիստ ատելութիւն տաճկական կրօնի առ քրիստոնէիցս ազգ, ետ ազատութիւն քրիստոնէական կրօնից ընդ ամենայն Եգիպտոս, եբաց և ճանապարհ հաղորդակցութեան ընդ ամենայն Եւրոպա, օրինակօքն բարեկարգեալ զաշխարհ իւր և նոցին քաղաքականութեամբք պայծառացուցեալ զժողովուրդ զեկն և զընիկն, որով և մարդավարեալ ռամկին՝ մտին ի հնազանդութիւն լծոյ օրինաց իշխանութեանն:

Այսոքիւք օրինօք եղ նա ի կարգի զդատարանսն իւր ըստ չաւղաց կառավարութեան Եւրոպական ազգին, որով արդ հետ զհետէ յառաջանայ ողջոյն Եգիպտոս ի նմանութիւն լուսաւոր ազանց, և արդ բազումք գնեն յԵգիպտոս տուն բնակութեան, զորոց բազմաթերթ հատորովք գրեալ են եւրոպացի ճանապարհորդք:

Զայժմեան ազատութիւն քրիստոնէից յԵգիպտոս՝ հաւասար տեսի մարդկային և կրօնական ազատութեան եւրոպացւոց: Այս ցոյցք լուսաւոր կառավարութեան և մարդասէր օրինաց, յորոց որպէս յառաջն զուրկ էր, Եգիպտոս զարդիս նոքօք պայծառանայ:

Ա

Որ ինչ անցք են պատմութեան ազգի մեր աստ յԵգիպտոս, ոչ ի վեր յառաջանան քան զթուական Փրկչին 1824, այն է՝ յաւուրս առաջնորդութեան Կիրակոս եպիսկոպոսի, որ եղև յետոյ պատրիարգ Երուսաղեմի:

Յեկեղեցական յիշատակարանացն չի՛ք մեզ քաղել ճիշդ ժամանակագրական տեղեկութիւնս վասն ժամանակին ընդ մէջ անցելոյ Գրիգորի վարդապետի առաջնումն յառաջնորդաց մինչ ցյիշատակեալդ եպիսկոպոս, բաց ի սակաւուց ինչ պիտելոց մերում ձեռնարկութեան, զորս և ի յիշատակարանացն ըստ կարգի առնեմք ցանկագիր, բայց և ոչ ի նոսին գտանեմք զշարունակ յաջորդութիւն

Առաջնորդարանացն ի Սուրբ Սարգիս եկեղեցւոջ, կամ նախ քան զայն ի քաղաքիս, ուստի և զայն ամենայն յակամայից թողլով յանծանօթս՝ դիմեմք ի գործս ժամանակակից առաջնորդաց և առ մեօքն եղելոց ազգիս Հայոց:

Յիշատակեալդ Կիրակոս կարգի առաջնորդ Եգիպտոսի յամին, որպէս ասացաւ 1824՝ ընդ իւր բերելով զ Գաբրիէլ վարդապետ փոխանորդ ինքեան: Սա վարէ զԱռաջնորդութիւնն զամս մետասան մինչև ցամ Տեառն 1835, իսկ յորժամ ել նա յայսմ պաշտօնէ, ընտրեցաւ փոխանակ եպիսկոպոսին յաջորդ նորա Գաբրիէլ վարդապետ ի նոյն ամի:

Յաւուրս Առաջնորդութեան Կիրակոսի եղեալ են Հայք տեղւոյս ի մեծի յաջողութեան յարքունի գործս բդեշխին, յորում և յիշխանութիւն հասեալք, որպէս է Պողոս պէյ Իւսուֆեան, որոյ գործք աշխարհածանօթ է յԵւրոպա:

Ի մեծամեծ գործս բդեշխին երկրիս՝ էր սա հաւատարիմ դրան արքունի, յորոց ի շնորհս և հայք վայելեալք են զապահովութիւն և զազատութիւն կենաց և կայից, և բազումք ևս ի վաճառականութիւն շահավաճառ լեալ:

Սակայն այս այր Պողոս պէյ որքան երևելի էր ի գործս վասն այլոց, վասն ազգին իւրոյ չկարաց առնել երևելի ինչ ի մշտնջենաւոր բարօրութիւն Եգիպտականն Հայոց:

Իսկ ի կարգի վաճառականաց երևելի եղեն ի յետին ժամանակս Եղիազարեան Ալէքսան աղայ և Միքայէլ աղայ Խաչատրեան, որք յառաջադէմ գտան վասն օգտի ազգիս ի պաշտօնի լոմայափոխութեան, որոց յիշատակ են նուիրեալ յանուն ազգին ինչ ինչ եկեղեցական տունք, ի կարգի պատմութեանս եղեալ ստորև, պտուղ բարեպաշտութեան սոցա ի փառս հայրենի եկեղեցւոյ ի պանդուխտ երկրիս՝ ի վարձ փոխարինի բարեաց հատուցման:

Ի սկզբան առաջնորդութեան Գաբրիէլ վարդապետի, որ կայաւ զառաջնորդութիւն որպէս ասացաք՝ զկնի Կիրակոս եպիսկոպոսի յամին 1835, ազգ մեր յԵգիպտոս և առաւել աստ ի Գահիրէ՝ ազգային սեպհականութեամբք հանդիսացաւ ի մէջ ազգաց տաճկաց, արաբացւոց և ղփտեաց տեղւոյս, և ծանուցաւ յաչս եւրոպացւոց և միւս քրիստոնէից՝ ազգ հին և քրիստոնէական կրօնիւք բարեպաշտեալք հաւասար քրիստոնեայ ազանց, որպէս էինն ի սկզբանէ քրիստոնէութեան իւրեանց յընդհանուր պետութեան օսմանացւոց առ ահի ճնշեալ ի քրիստոնէութեան վիճակի ի բռնութենէ մահմէտական կրօնից:

Քանզի որպէս գրեալ եմք ի ստորագրութիւնս եկեղեցեացն, ցայն վայր ազգ մեր ո՛չ ունէր զեկեղեցի առանձինն, այլ զի ազգ ղփտեաց սեպհական ազգ են Եգիպտոսի և սեպհական բնակիչք երկրին, նոքա միայն ունէին զեկեղեցի ըստ ձևոյ տան՝ տեղի աղօթից աստուածպաշտութեան, յորժամ արաբացիք զօրացեալք առին յեգիպտացւոց զողջոյն Ափրիկէ:

Այլ զի և յարաբացւոց առին տաճիկք, յայնսակս և չէր օրէն յԵգիպտոս ի նոցին պետութեան միւս քրիստոնէից ունել զեկեղեցի որպէս և Հայոց, զի որք էին ի ղփտեաց կամ ի յունաց ի վաղ ժամանակաց՝ էին յաւուրց անտի Եգիպտական պետութեանն:

Ուստի նորոգ առաջնորդ յիշատակեալ Գաբրիէլ վարդապետ զայս նեղութիւն ազգին և զանվայելչութիւն Սուրբ Սարգիս եկեղեցւոյն, զհնութիւն նորա և զանձկութիւն ևս և զմթազգածն լինել նորա ի խարխուլ միջնայարկի տանն, յորում և ղփտեացն աղօթարան ընդ նեղ և ընդ խոտոր ճանապարհ, յորում և ժողովուրդն ոչ բաւէր մեկնել, բարեդէպ միջոց վարկաւ և զամենայն ջան ի մէջ առեալ քաջալերեալ ինքնին՝ քաջալերէ և զիշխանս ևս ընդ իւր ըստ ներկայ ազատութեան քրիստոնէութեան՝ գտանել և զեկեղեցւոյ ազգին ազատութիւն, առնուլ հրաման շինութեան նորոյ և առանձին ազգային եկեղեցւոյ, որ տաճկական օրինօք փակեալ էր ընդ ամենայն աշխարհն հակառակ կրօնից համարեալ զայն:

Այսու բարենպատակ խորհրդով զամենայն եկամուտս կալուածոց Երուսաղէմի արգելու առ իւր, զորս ինքն ամի ամի առաքէր յաթոռն. և զամենայն նուէր և տուրս բարեպաշտութեան ժողովրդոց կալեալ ի ձեռին, գնէ նոքօք տունս ինչ հրէից և ղփտեաց յառաջոյ Առաջնորդարանին նորոյ՝ ի հարաւոյ Սուրբ Սարգիս եկեղեցւոյն յընդարձակ տեղւոջ, ուր է այժմ եկեղեցին, և քակէ զայնս խպառ յարդարել տեղի հիմնարկութեան Տաճարին:

Յետ որոյ ապա խնդիր արկանէ առ կուսակալ բդեշխն՝ տալ հրաման ի կառուցանել զեկեղեցի, բայց ըստ որում չէ օրէն և ցարդ ի Տաճկաստան կառուցանել քրիստոնէից նորոգ եկեղեցի, պատճառ այսպիսի ի մէջ բերէ՝ իբր թէ յառաջագոյն ի տեղւոջն յայնմիկ եղեալ է եկեղեցի Հայոց և սինովկայ Հրէից, զորս արդ կամին միացուցանել. սակս որոյ և յառաջագոյն ի դատաւորէն (ղայմաղամ) առեալ էին ժողովուրդք մեր գիր հաստատութեան:

Ելանէ ի բդեշխէն հրովարտակ շինութեան եկեղեցւոյն, իսկ իբրև շինութիւնն բարձրանայ ի կէս կատարման, մեկուսացեալ գոլով բդեշխին անտի՝ ժամանակին Իլեմայքն կոչեցեալ տաճիկք օրի-

նապահք մահմէտական կրօնից՝ բողոք բառնան միահաղոյն առ դատաստանապետ քաղաքին արգելուլ զչինութիւն եկեղեցւոյն մերոյ, որոյ չինութիւն, որպէս ասացաք, արգելեալ է մահմէտական օրինօք ըստ սովորութեան երկրին, մանաւանդ զի միւս քրիստոնեայք ևս չունէին ցայն վայր եկեղեցի յԵգիպտոս:

Զայս և որ զբացակայութիւն բդեշխին առիթ ի ձեռին առեալ փոխանորդ նորա, հրաման առաքէ առ Գաբրիէլ վարդապետ դադարեցուցանել զչինութիւն եկեղեցւոյն, միայն եթէ ունին կարօտութիւն, ասէ, նորոգեսցեն զհինն, զի չի՛ք հրաման չինութեան նորոյ եկեղեցւոյ:

Իբրև դարձ առնէ բդեշխն, վերստին մատուցանեն հայք խնդիր վասն կատարման չինութեան եկեղեցւոյն արգելեալն վայր. և վերստին առեալ հրաման չինութեան՝ հասուցանեն զեկեղեցին ի կատար:

Բայց զի շուտափոյթ եղև չինութիւնն առ երկիւղի, իբրև կատարելագործեալն էր եկեղեցին, անկաւ տանիք նորա և քակեցան որմունքն ի տեղիս տեղիս, ըստ որոյ և սակաւ ինչ ցած քան զառաջինն կանգնեցին վերստին առաւելութեամբ պարտուց, ընդ որով տակաւին ճնշէր այս նորակառոյց եկեղեցի և յաւուրս մեր յամին 1853 մինչ էաք ի Գահիրէ:

Յամենայնի յայսոսիկ ձեռնարկութեան թէ ի բանս արքունի և թէ ի չինութեան եկեղեցւոյն գործակից և միանգամայն վերակացուք էին Արգոյ Ալէքսան Եղիազարեան և Միքայէլ Խաչատրեան յառաջաւոր իշխանք ժողովրդեանն, որոց և մեծարգոյ գոլով յաչս բդեշխին ըստ հաւատարմութեանց իւրեանց առ գործավարս և առ դատաւորս իշխանութեանն, ունէին համարումն մեծ, որով և յաւարտ հասուցին զչինութիւն եկեղեցւոյն, և պատճառ եղեն այլոց ևս քրիստոնէից ունել առանձին եկեղեցի ի Գահիրէ, ուր ո՛չ գոյր և ո՛չ մի բաց յեղելոցն յառաջին ժամանակաց՝ որպէս ասացաք:

Քանզի յորժամ երկրորդ աղերս մատուցաւ յազգէ մերմէ առ բդեշխն սակս արգելլոյ Իւլեմանացն զչինութիւն եկեղեցւոյս մերոյ, հրովարտակ եհան նա ինքն բդեշխ ընդ ամենայն Եգիպտոս, զի ո՛չ միայն հայք ազատ եղիցին կառուցանել զեկեղեցիս, այլ և ամենայն քրիստոնեայք, ուր ուրեք գտանիցին ի ներքոյ իշխանութեան իւրոյ:

Եւ ահա ըստ հրամանիս ըստ այսմիկ այժմեան քրիստոնեայք ունին առ մեօք առանձին առանձին եկեղեցիս հայք, յոյնք, լատինք, գաղղիացիք, անգղիացիք, ղփտիք և հերձուածք սոցա առանձինն, մինչև ցտասն ազգ ազատութեան ընդարձակեալ զբա-

զուկ քրիստոնէութեան, ազատաբար ևս ունին զաստուածպաշտութիւն ընդ ամենայն Եգիպտոս, և քրիստոնէական կրօնիւք ծաղկին ի մէջ մահմէտական կրօնից:

Ազգ մեր աստ եկեալ են յամենայն կողմանց Ասիոյ, և բնակաւորեալ վաճառաշահութեամբ ի Գահիրէ և յԱղէքսանդրիա, ո՛չ սակաւք ի նոցանէ խառնակեալ ընդ ղփտեացն ազգ, փեսայանալով ընդ նոսա յազգութիւն: Բազումք ևս գնեալ նաժիշտ ափրիկեցի, զորս վաճառեն սովորաբար, անպսակ զնոսա ունին ի կին, և թողուն ի նոցանէ ժառանգ, ոմանք ևս երկար պահելովն զնոսա և ի մանկութենէ գնելով՝ մկրտեն զնոսա քրիստոնեայս, և զծնեալս ի նոցանէ համարեն օրինաւոր ժառանգ կայից և գոյից իւրեանց: Այսպէս ազգ մեր ի մերում ժամանակի. այսպէս իմա՛ և զմիւս քրիստոնէից:

Սակս այսորիկ և եկեղեցական իշխանութիւն մեր աստ անուամբ և եթ կայ, այլ արդեամբք գրեթէ անհետ եղեալ. ի սոցա ոմանք ո՛չ հաղորդին խորհրդոյ սրբոյ Պատարագին՝ սակս անդ մահմէտականացն ափրիկեցւոց խառն գոլոյ, և Եպիսկոպոսն ոչ կարէ իշխել նոցին: Սակաւք են, որք ունին կին օրինաւոր ամուսնութեամբ, առ որս կատարի եկեղեցականն խորհուրդ Պատարագի, մկրտութեան և այլն: Մերազինք աստանօր ամենեքին գրեթէ ի վարձու ունին տուն բնակութեան, յառաջաւորք ոմանք ի ժամանակիս չինեն սեպհական տունս և կալուածս:

Ի մերում ժամանակի յաժախեն յԵգիպտոս Զմիւռնացի մերայինք, և ամենեքին գրեթէ մտանեն ի ծառայութիւն քաղաքական իշխանութեան, ոմանք ի գրագրութիւն դատաստանական տեղեաց յարաբացի բարբառ, այլք յայսպիսի պաշտօն վերաբերեալս բդեշխին և նորին քաղաքական կառավարութեանն: Սակաւք են յաջողակք ի վաճառականութեան. առաւել քան զայս չի՛ք այլ գործք մերազնէից, զի որք են մնացեալ մասն ժողովրդոց՝ են ոմանք որք առնեն լոմայափոխութիւն, են՝ որք արծաթագործք են, այլք ի ծառայութիւնս յառաջաւորաց, սրճարանաց և պանդոկաց գտանին, և սոքա են յաղքատացն կարգի զաւուրն հազիւ հայթայթեալ պարէն:

Զերկուս իշխանս ի ժամանակի ունիմք յիշել զԳէորգ Ռափայէլեան Կոստանդնուպօլսեցի և զԿարապետ Տէր Գալստեան Վանեցի, որոց, թո՛ղ զայլ և այլ բարեպաշտական գործս աստուածահաճոյս և օգտակարս ազգին, առաջինն չինեաց ի յիշատակ զայժմեան երկյարկեան Առաջնորդարանն, և երկրորդն մեծ ևս բարեպաշտութեամբ կառուցանէր ի մերում ժամանակի դպրոց հոյակապ վասն ազգիս մանկանց լուսաւորութեան:

Բ

Եկեղեցիք և Առաջնորդարանք ազգիս աստ ի Գահիրէ Եգիպտոսի թէ՛ հինք և թէ՛ նորք, և ընդհանրապէս այլ ամենայն յիշատականք բարեպաշտութեան քրիստոնէութեանս մերոյ պարծանք յաւիտենից ի մէջ ազգաց և ազանց՝ այսոքիկ և այսպիսիք են ի ներկայ դրութեան:

Նախկին Առաջնորդարանն՝ բաց յերկուց սենեկաց, որ ի վերնայարկի Սուրբ Սարգիս եկեղեցւոյն, կառուցեալ է յարևելից այնորիկ յԱրծպուէն ասացեալ թաղին, և քառակուսի և քարաշէն շինուած կրկնայարկ ի ներքոյ ունելով զքարագործ սառնիճ ջրոյ կամ ջրամբար:

Սալայատակ սրահ նորա և դուռն է յարևելից, իսկ յարևմտից յեցեալ է յարևելեան որմն եկեղեցւոյն, ի ներքնայարկին են երկու կողմնական սենեակք ի պէտս միաբանից, որպէս և վերնայարկքն վասն առաջնորդի: Այժմ այս շինութիւն կիսաւեր և խարխարեալ է խսպառ, զորս աղքատին տնուորք վարձեալ են ի մերոց:

Առաջնորդարանս այս, որ և հոգետուն, ունի զարձանագիր շինութեան սառնճին ի սրահի անդ ի ճակատ դրանն այնորիկ օրինակ զայս:

«Է Աստուած, որ պատրաստեաց զայս սառնիճս ի պատրիարգութեան սրբոյ քաղաքին Երուսաղեմայ՝ Եւդոկիացի Պետրոսի ... շինեցաւ անուամբ Տիրամայր սուրբ Աստուածածնայ առ ի ողորմութիւն և աղքատին մեր Հայոց. որոց յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի. աշխատողաց և մասնակից անձանց մասն և բաժին յիւր դատողական աւուր ատենին եղիցի. օգնականութեամբ Թիֆլիզեցի մահտեսի Եղիսաբէթ խաթունին և ձեռամբ Խիզանցի Ղազար և Յարութիւն Աբեղայից. ի թուին ՌՄԽԶ. (1797)»:

Սուրբ Սարգիս անուամբ նախկին եկեղեցին Հայոց ի հիւսիսոյ կողմանէ նորոյ եկեղեցւոյն, և է կառուցեալ ի վերնայարկի Ղփտեաց եկեղեցւոյն. երկայնութիւն նորա տասնևեօթն քայլ, և ութ ի լայնութիւն. յարևելեան ճակատուն է սեղան փայտակերտ, ի գլուխ իւր ունելով գմբէթ ատաղձագործ. ճակատ նորին զարդարեալ է հասարակ յախճապակեայ աղիւսով, այլ վայելչութիւն չի՛ք սորա ի ներքուստ, զի ո՛չ եկեղեցի է, այլ սենեակ իմն երկարաձև, բայց աւազան ունելով յաջակողման դասուն և արձանագիր յորմն հարաւոյ ընդ մէջ պատուհանի փորագրեալ ի վերայ վիմի ի ներքոյ խաչքարի ի հանդիպոյ աւազանին ըստ այսմ:

«Շնորհիւ Տեառն Աստուծոյ և ողորմութեամբ նորին նորակերտեալ ի հիմանէ շինեցաւ սուրբ Սարգիս անուն եկեղեցին արդեամբք և ջանիւք տարապհանէճի Այվազ աղայ կոչեցեալ Վահան աղային, որ բազում աշխատանօք պայծառակերտեաց զսա ի փառս Աստուծոյ և ի յօգուտ հաւատացելոց յամի Փրկչին 1749, սկիզբն. իսկ ի մերս ՌՃՂԸ. արդ խնդրի հարկիւ ի վայելողացդ զերախտիս բարեպաշտութեան սորա ոչ մոռանալով, յիշել առ Տէր զծնողս սորին ընդ իւր զՏէր Աբրահամ պապն և զԳրիգոր զհայրն, և զմահտեսի Ուստեան զմայրն, և զմահտեսի Հռիփսիմէ կենակիցն, և զհաճի Յակոբջան որդեակն, և զհաճի Աննա դուստրն, և դուք յիշեալ լիջիք ի Տէր»:

Այս եկեղեցի ունի ի ներքոյ իւր զերկոսին եկեղեցիս Ղփտեաց, և զմի ի հաւասարութեան իւրում ի միջին յարկի, իսկ ի վերայ իւր իբր յերրորդում յարկի՝ զերկուս սենեակս շինեալս, որպէս ասացաւ, ի Տփխիսեցի խաթունէն, յորս նստէին Առաջնորդք և վարդապետք նախ քան զշինութիւն Առաջնորդարանին:

Նախ քան զՍուրբ Սարգիս չունէին մերազնեայք զայլ եկեղեցի աստի Գահիրէ, զի ազգային աւանդութիւնն ևս վկայէ այսմ, և որ հաւաստի վկայն է, տեղի եկեղեցւոյս է և արդ սեպհական ղփտեաց. պատճառ այսմ այսպէս ասեն լինել, զի որպէս ղփտիք չունին յԵրուսաղէմ առանձին եկեղեցի, և ի մերում եկեղեցւոջ անդր տուեալ է նոցա տեղի պատարագելոյ՝ զնոյն սոքա փոխարինեալ են աստ ազգի մերում ի Գահիրէ, որում վկայեն ժամանակակիցք, և այս աւանդութիւն է կարի ստոյգ:

Յառաջ քան զշինութիւն այսր հնոյ եկեղեցւոյ, այն է նախ քան զ1749 թուական Փրկչին՝ ունէին մերազինք զեկեղեցի Սուրբ Մինաս անուամբ արտաքոյ քաղաքիս ի հարաւոյ նորա՝ ի վերայ ճանապարհին, որ հանէ այժմ ի հիննն կոչեցեալ Եգիպտոս , որ ի վերայ Նեղոսի, ուր և լեալ էր զառաջինն բնակութիւն Հայոց:

Այժմիկ խափանեալ է սոյն եկեղեցի Սուրբ Մինաս, որ աւերակն կից է նոյնպէս եկեղեցւոյն Ղփտեաց, և մերձ այնմ ի հիւսիսոյ կառուցեալ են ի նմին պարսպի նովին անուամբ փոքրիկ քարաշէն եկեղեցի կառուցին ժողովուրդք մեր յամին 1843՝ մասնակցութեամբ Պօղոս վարդապետի՝ ուրումն Պոլսեցւոյ, որ իբր զամս երեսուն քահանայագործեալ է Հայոց քաղաքիս:

Շուրջ զեկեղեցեաւս ի պարսպին է գերեզմանատեղի ժողովրդեանն, որ և զառաջինն լեալ է նոյնպէս գերեզմանոց, ըստ որոյ և այս Սուրբ Մինաս եկեղեցի յատկացեալ է առ մեօք վասն գերեզ-

մանատան, ուր ամի ամի մատչի պատարագ ի հինգ Տաղաւարի յաւուրս մեռելոց. և ունի յիշատակարան շինութեան օրինակ գայս:

«Շնորհիւ և ողորմութեամբ Տեառն կառուցաւ տաճարս սրբոյն Մինասայ արդեամբք Եգիպտոսի բարեպաշտ ժողովրդոց և ձեռնտուութեամբ Պօղոս խոհեմափայլ վարդապետի Պոլսեցւոյ, յԱռաջնորդութեան Տեառն Գաբրիէլի սրբազան արհիեպիսկոպոսի յամի Տեառն 1843, Փետրուարի 14»:

Նոր եկեղեցին Հայոց աստ ի Գահիրէ, անուամբ Սուրբ Աստուածածնի, կառուցեալ է յամի 1839 քարաշէն՝ սագաձև և կարի բարձր՝ ի հարաւոյ Սուրբ Սարգիս եկեղեցւոյն ի պարսպի նորոյ Առաջնորդարանին՝ կարի հոյակապ և փառաւոր ձևով:

Երկայնութիւնն է երեսուներեք քայլ և լայնութիւնն՝ տասն և եօթն. ի հիւսիսոյ և ի հարաւոյ նորա են վեց լուսամուտք մեծ և երկայն՝ ունելով ի վերուստ մի մի փոքրիկ լուսամուտս բոլորշիս. երկուս ևս մեծ յաջմէ և յահեկէ արևմտեան դրանն, որ միայն է եկեղեցւոյն: Երեք սեղան ունի եկեղեցին, բայց յերիցն յառաջոյ միմիայն բեմ է ընդ լայնութիւն տաճարին յարևելից. միջին սեղանն մեծ՝ է անուամբ Սուրբ Աստուածածնի . աջակողմանն ի հիւսիսոյ յանուն Հոգւոյն Սրբոյ, և ձախակողմեանն՝ Սուրբ Յարութեան:

Երկու աւանդատունք են յաջմէ և յահեկէ, որոց շինութիւն արտաքուստ կից են եկեղեցւոյն, և դրունք նոցա՝ ընդ մէջ առաջին դասուց:

ի մէջ աւանդատանցս են սեղանք պատարագի. աջակողմեանն Յովհաննու Մկրտչի, և հարաւայինն՝ Սուրբ Ստեփաննոսի: Այսոքիկ ունին և մի մի դրունս յարևմտից արտաքոյ:

Յերկոսին կողմանս մեծի սեղանոյն գոն մի մի ևս խորան փոքրիկ՝ ի վերնայարկի կողմնական սեղանոյն, որք հային ի մէջ եկեղեցւոյն, յորս յաւուրս Ծննդեան և Յարութեան Քրիստոսի ընթեռնուն Աւետարան, ի միումն հայերէն և ի միւսումն արաբերէն, զի բազումք ի ժողովրդոցն, մանաւանդ ի կանանց, ոչ գիտեն զհայ բարբառ խօսից. դրունք սոցա ընդ մի ճանապարհ միանան յետուստ մեծի բոլորշի սեղանոյն, որոց ելքն են յետուստ հարաւային աւանդատանն արտաքոյ յարևելից:

Առաջին դասն հանդերձ բեմին արարեալ են սալայատակ մարմարոնեայ քարամբք:

Առաջի արևմտեան դրան եկեղեցւոյն արարեալ է սալայատակ յարդարեալ սրահ փոքրիկ, և յարևմտից ունի պարիսպ բարձր, որ ի

հիմանց մինչ ցմարդաչափ բարձրութիւն է կոփածոյ քարամբք և ի վերուստ է քարուկիր շինուածովք:

Սոյնպիսի սալայատակք գոն և յերկոսին թևս եկեղեցւոյն. և յերկուս թևս նորա կառուցեալ է նոր Առաջնորդարանն, ընդ որով է դուռն պարսպի եկեղեցւոյն, որ հայի ընդ արևմուտս ի վերայ անձուկ փողոցին: - Այսոքիկ թևք միանան ընդ միմեանս պարսպով եկեղեցւոյն:

Ի հարաւային կողմն Առաջնորդարանին ընդ մէջ սենեկի այնորիկ է ելքն ի վերնատունն կանանց, որ ի մէջ եկեղեցւոյն, զի այս հարաւային թև Առաջնորդարանին կից է եկեղեցւոյն, որոյ շինութեանն արձանագիր է ի ճակատ դրանն ըստ այսմ:

«Կարողութեամբն Աստուծոյ կառուցաւ սուրբ տաճարս նորահիմն՝ յանուն սրբուհւոյ Աստուածածնի արդեամբք լուսաւորչադաւան առհասարակ ազգիս Հայոց որ յԵգիպտոս, աշխատասիրութեամբ Մարաշցի Գաբրիէլ Սրբազան Արհի եպիսկոպոսի ի միաբանութենէ սրբոյն Սաղիմայ ի 1839, Դեկտեմբերի 19:

Առաջնորդարանն շինեալ յաւուրս Կիրակոս եպիսկոպոսի՝ է արդեամբք Ակնցի մահտեսի Եղիազար աղայի, յարևելից և ի հիւսիսոյ դաւիթ ունելով ի վերայ՝ յառաջացեալ ի հրապարակամէջն, որ է առաջի իւր սալայատակ արարեալ: Եւ է այս Առաջնորդարան կոչեցեալն հիւրանոց յարևելեան բաժնին. ունի ի մէջ իւր սենեակ փոքրիկ, և ինքն բաւականին մեծ երեք լուսամտօք. ի վերայ այսորիկ է դպրատունն՝ բաժանեալ նոյնպէս յերկու սենեակ:

Գիր յիշատակաց շինութեանն է ի ճակատ դրանն ի ներքնայարկի դպրատանն ունելով օրինակ զայս. «Ի վայելումն ազգիս Հայոց շինեցաւ դպրատունս և հիւրանոցս ի յիշատակ հոգւոյ Ակնցի սարաֆ մահտեսի Եղիազար բարեհամբաւ ամիրայի և ծնողացն և համայն կենդանեացն իւրոց, յամի Տեառն 1828 և Հայոց ՌՄՀԷ-ին»:

Սալայատակն, որ առաջի Առաջնորդարանի և հոգետանն, որ ի հարաւային բաժնի՝ հանդերձ գաւթովն շինեալ է յետոյ յաւուրս Գաբրիէլ եպիսկոպոսի՝ վասն պատսպարելոյ յերեսաց սաստկութեան տօթոյ ամարան:

Հարաւային մասն Առաջնորդարանին է, որպէս ասացաք, հիւանդանոց վասն միաբանից և տեղի բնակութեան նոցա, և է կրկնայարկ կառուցեալ ի նոյն ամի, ի ներքոյ ունելով զմեծագործ սառնիճն ջրոյ, զոր լնուն ի մակընթացութեան Նեղոսի յաւէտ ի պէտս վաճառելոյ յօգուտ եկեղեցւոյն յընթացս տարւոյն ի նուազութեան գետոյն:

Ի ներքնայարկին են սեղանատուն միաբանելոցն և խոհարանն, յորոց ի հանդիպոյ երկու սենեակք իբր շտեմարանք նիւթոց, իսկ ի միջոյ է ճանապարհ, ընդ որ սանդղովք ելանեն ի վերնայարկն, և յայսմ վերնայարկի են դէմադէմ միմեանց երկու երկու սենեակք բնակութեան կարգաւորաց. և այս ևս յիշատակ բարեպաշտութեան Եղիազար ամիրայի, որոյ արձանագիր է ի մարմարոնեայ վիմի ի վերայ դրանն, որ ի վերայ ճանապարհի վերնայարկին, ըստ այսմ:

«Ի յիշատակ սրբոց Յակոբեանց առաքելական սուրբ աթոռոյն Երուսաղէմի շինեցաւ հոգետուն և հիւանդանոցս ներքին մեծաւ-կառոյց ջրհորովն ի վայելումն միաբան կարգաւորաց և աղքատ հիւանդաց ազգիս, արդեամբք հոգելոյս Ակնցի սարաֆ մահտեսի Եղիազար ամիրային վասն հոգւոյ իւր և ծնողացն բարեջան աշխատութեամբ նորին քեռորդւոյ գերազնիւ մահտեսի Ալէքսան և մահտեսի Յակոբ աղայից յամի 1828, յԱռաջնորդութեան Տեառն Կիրակոսի Արքեպիսկոպոսի»:

Գ

Արդէն ասացաք ի կարգի պատմութեանս, եթէ ի ժամանակէ անտի Գրիգոր վարդապետի, որ զպատճէն հրովարտակին Մահմէտի արձանագրութեամբ եդ ի պահպանութիւն ի Սուրբ Սարգիս եկեղեցւոջ, այն է յամի Տեառն 1606, մինչ ցՂազար և ցՅարութիւն վարդապետս, որք զառաջին հոգետուն և զսառնիճն ետուն շինել արդեամբք Տփխիսեցի խաթունին յամի 1797, չգտանեմք յիշատակութիւն առաջնորդաց ժողովրդեանս աստ ի սուրբ Սարգիս յընթացս 191 ամաց. չգտանեմք նոյնպէս և նախ քան զնոյն ինքն Գրիգոր վարդապետ յարձանագիրս անդ՝ Առաջնորդ լեալս ոք աստէն:

Սակաւք ոմանք յիշեն յարձանագիրս յետ վերոյգրելոցն երկուց վարդապետաց, այլ առանց գործոց յիշատակութեան գիտեմք առաջնորդս լեալ ի Գահիրէ մինչև ցներկայ Գաբրիէլ եպիսկոպոս՝ անձինս ութն, միմեանց յաջորդելով ի Ղազար և ի Յարութիւն վարդապետացն մինչև ի ներկայս:

Ղազար և Յարութիւն վարդապետք Խիզանցիք յիշատակին յաւուրս շինութեան նախկին Առաջնորդարանին և սառընճին ի թուականիս Հայոց ՌՄԽԶ (1797) յամս արշաւանացն գաղղիացւոց յԵգիպտոս:

Յետ սոցա կացեալ են առաջնորդք ազգիս՝ Պօղոս եպիսկոպոս Արևելցի, Կարապետ վարդապետ Վանեցի, Կարապետ վարդապետ

Պոլսեցի, Ստեփան վարդապետ Կիպրացի, Կայծակ Կարապետ վարդապետ Կարնեցի, Սահակ վարդապետ Ռշտունի և Գրիգոր եպիսկոպոս. սոքա առանց գործոց յիշատակին ի գիրս յիշատակարանաց, որոց անուանք յայտնի են է՛ զի ի կոնդակաց աթոռոյն Երուսաղէմի, որպէս ասացեալ եմք, և է՛ զի մօտ գոլով՝ կան նոցա ականատես ժամանակակիցք:

Կիրակոս եպիսկոպոս Երուսաղէմի, յորոյ աւուրս յիշատակին շինուածք բարեպաշտութեանց Առաջնորդարանն, դպրատունն և հիւրատուն կամ հիւանդանոցն և այլն:

Գաբրիէլ եպիսկոպոս՝ այժմեան առաջնորդ, կառուցեալ է զհոյակապ եկեղեցին ձեռնտուութեամբք իշխանաց և արդեամբք կալուածոց, որ ամ ըստ ամէ բերէ մինչ ց40 հազար ղուրուշ գումար դրամոց:

Դ

Իսկ որ ինչ յԱղէքսանդրիա եղելոցն ազգի մերոյ վէպք՝ այսչափ ունիմք հաղորդել հասարակութեան, զի և նոքին եղեալքն կարի համառօտք են ի քաղաքին և ոչ կանուխ ժամանակաւ գաղթեալք անդանօր:

Ազգ մեր յԱղէքսանդրիա են կարի սակաւաթիւք՝ տունք իբրև երեսունք և ժողովածուք յԱսիոյ գրեթէ յամենայն կողմանց Օսմանեան պետութեանն. թէև եղեն ի նոսա հարուստ և երևելի անձինք առ իշխանութեամբ Մահմատ Ալի փաշային, բայց առ սակաւութեան իւրեանց չեղև նոցա փոյթ ունել առանձին եկեղեցի, և զի նախ քան զփաշայն ո՛չ գոյր ի քաղաքի աստ և ո՛չ ի քաղաքի աստ և ո՛չ հայ մի յազգէ մերմէ:

Պողոս պէյ Իւսուֆեան առաջին իշխան հայազգի և առաջին քան զամենայն գործակալս փաշայութեան Եգիպտոսի, այր այնպէս գործունեայ, որ զամենայն դարձուածս կառավարութեանն ունէր ի ձեռին, որպէս ասի, իւրով խոհական իմաստութեամբ, և ունէր գրեթէ յամենայն թաղս և ի փողոցս քաղաքին մեծամեծս կալուածս տանց և ընդարձակ գետինս յընթացս իւրոյ յաջողութեան գործոց ի քաղաքական կառավարութեան:

Ասի, թէ սոյն Պողոս պէյ ունէր դիտաւորութիւն կառուցանել ազգիս՝ հոյակապ եկեղեցի, բայց երևի թէ զսոյն դիտաւորութիւն իւր ոչ կարաց յառաջացուցանել՝ գուցէ առ երկիւղի ի կենդանութեան իւրում. միայն պարտէզ մի մեծ ի հարաւային եզր քաղաքին

գնեալ նորա, յորում և տուն մի երկյարկեան, զոր առ նորին կենդանութեամբ յարդարեն զեկեղեցի ի վերնայարկին հաճութեամբ նորա և ծախիւքն, և անդ կատարէին զժամերգութիւն առ Առաջնորդութեամբ Գաբրիէլ վարդապետի, որ զառաջինն վարէր աստ փոխանորդութիւն Կիրակոս եպիսկոպոս առաջնորդին Եգիպտոսի Հայոց, որպէս եղաւ ի կարգ առաջնորդաց: - Այսպէս սկիզբն առնու եկեղեցի Հայոց յԱղէքսանդրիա աստ Եգիպտոսի:

Նախ քան զայս ժողովուրդ մերազանց չունելով աստ սեփհական եկեղեցի, դիմէին յեկեղեցիս Յունաց և Ղփտեացն, և ոչ իսկ գոյր նոցա քահանայ, ուստի և հոգևոր պէտք ժողովրդոցն կատարիւր ի յիշեալ եկեղեցիսն. նամանաւանդ զի չէին աստ գերդաստանք նոցա, այլ սոսկ անձինք վաճառականութեամբ կամ օտարութեամբ դիպեալք աստ յերևելի աւուրս տօնից դիմէին յեկեղեցի մեր անդ ի Գահիրէ, և մերթ բերէին վարդապետս անտի:

Յայսմ ժամանակի և Պօղոս պէյ նստէր ի Գահիրէ, իսկ յորժամ Մահմատ-Ալի փաշայ կալաւ բնակութիւն յԱղէքսանդրիա, յորում ժամանակի և ձեռն արկանէր զքաղաքն բովանդակ շքեղազարդել եւրոպական կարգօք, և զկառաւարութիւն իշխանութեան իւրոյ փոխադրէր ի սոյն, յայնժամ Պօղոս պէյ գոլով յայնոսիկ գործս իշխանութեան, փոխադրեց և սա զբնակութիւն իւր աստ, յայնժամ և յամենայն կողմանց հայք յաւելան անդր՝ լուեալ զառաքինական և զազգասէր առնն մեծի, յորմէ շնորհ մարդասիրութեան տեսանէին բազումք և գտանէին հարստութիւն, ոյր վասն ոմանք ի նոցանէ կապեալք ի շահեկան ծառայութիւն, մոռանային զհայրենիս իւրեանց և ամուսնանային անդ, և ոմանք ևս հանդերձ գերդաստանօք անցեալ յԵգիպտոս՝ կալան տուն բնակութեան աստ յԱղէքսանդրիա:

Այս ժամանակ էր, յորում Կիրակոս եպիսկոպոս Երուսաղէմի առաջնորդ եկեալ Հայոց Եգիպտոսի ի Գահիրէ, առաքէ զսպասաւոր իւր աստ զմարաշցի Գաբրիէլ վարդապետ հովուել զնորեկ ժողովուրդ մեր յԱղէքսանդրին:

Սորա եկեալ և տեսեալ զնեղութիւն ժողովրդոցն ի միասին հոգևոր պիտոյից կատարման, որոց վասն ի դրունս այլոց ցայն վայր դեգերէին, խորհրդակցութեամբ և ձեռնտուութեամբ ուրումն Աբրահամ վարժապետի Պրուսացւոց (որ էր ի ծառայութեան գործոց Պօղոս պէյին) խնդրէ ի նմանէ զտունն որ ի պարտիզի անդ նորա, յարդարել զայն եկեղեցի վասն ազգիս Հայոց, որպէս գրեցաք, միայն զի ժողովուրդ մեր մի՛ մնասցեն առանց աստուածպաշտու-

թեան և հաղորդութեան սրբոյ եկեղեցւոյ և եկեղեցական խորհրդոց և ի պէտս հոգևոր հարկաց կատարման:

Եւ ահա՛ այսու բարի դիտաւորութեամբ զայն տուն կրկնայարկ ընծայէ ազգիս մեծանուն Պօղոս պէյ, յարդարել տուն և տաճար Աստուծոյ, մինչև Տեառն յաջողութեամբ որպէս խոստացեալն է, կառուցէ և եկեղեցին, բայց չև ևս կարացեալ նորա կատարել զայս խորհուրդ, կնքէ զկեանս իւր մեծահամբաւ այս իշխան բարեպաշտ, զորոյ զմարմինն թաղեն առ դրան մատրանն նուիրելոյ յինքենէ, կանգնելով ի վերայ արձան յիշատակի ի մարմարոնեայ քարանց, դրուագագործեալ ինչ ինչ նկարս գործոց նորա՝ ունելով ի շրջանակսն գիր յիշատակաց առանց թուականի օրինակ զայս.

«Ո՞վ հոգի ազգասէր Պօղոս պէյի Իւսուֆեան,
որ զմայրն Հայաստան եւ զնորն Եգիպտոս
ի սուգ տարաժամ թողեալ վերացար,
զայս յաւէրժ յիշատակ չնաշխարհիկ հանճարոյդ
ի քոյինս դաստակերտ յազգակցացդ սիրոյ
ընկա՛լ եւ հանգի՛ր»:

Յայս տուն, յորում եկեղեցի Սուրբ Աստուածածնի անուամբ որպէս ասացաւ, ի հարաւային արևելակողմն պարտիզին ի միջի նորա՝ է երկար քառանկիւն քսան և չորս քայլ երկայնութեամբ և երկոտասան ի լայնութիւն. ի ներքնայարկին ունի զերկուս դրունս յարևելից և յարևմտից հանդէպ միմեանց քառեակ աստիճանօք բարձրացեալ յերկրէ, և սալայատակ արարեալ զմիջոցն: Ի հարաւային կողմն են սենեակք երկու, իսկ ի հիւսիսի է ճանապարհն, ընդ որ ելանեն ի վերնայարկ տանն՝ յեկեղեցի անդր, որ յար և նման ձև ունի զներքին յարկին՝ երկայն և կարի նեղ, և յերկուս կողմանս իւր են երկու սենեակք՝ մին ճանապարհ տաճարին, և միւսն աւանդատուն և պահարան սպասուց եկեղեցւոյն:

Այս եկեղեցի կամ մատուռն այսպէս յարդարեալ եղև ի վերջին աւուրս Առաջնորդութեան Կիրակոս եպիսկոպոսի յամին իբր 1839:

Իբրև յարդարեցաւ յիշեալս եկեղեցի, վարդապետք գտեալք ի ժամանակին վասն հովուելոյ զժողովուրդն, որպէս և յաջորդն Գաբրիէլ վարդապետ, բնակէին ի սենեակսն, որք ի կողմանս եկեղեցւոյն, բայց յետ վախճանի պէյին տուն մի ևս նորա գոլով ի պարտիզին յարևմտակողմն, որ է այժմեան Առաջնորդարանն ասացեալ, ազգականք բարեյիշատակ հանգուցելոյն Աբրահամ և Յովսէփ չէլիպիք Աբրոյեան յետ վիճմանց ինչ ընծայեն զայն եկե-

ղեցւոյն կարեկցեալ յաղքատին վիճակ մերազնեայց հանդերձ մեծ պարտիզովն, յորում է այս տուն և եկեղեցին ի յիշատակ հոգւոյ ազգակցի իւրեանց և ի կառավարութիւն եկեղեցւոյն և հոգևորականացն տարեկան եկամտօք նոցին:

Յայս տուրս նուիրանաց իբրև ի մշտնջենաւոր կալուած եկեղեցւոյն՝ յաւելուն ազնիւ ժառանգաւորք պէյին և երկյարկեան տուն մի մեծ ի կայից նորա, որ է այժմ դպրատուն ազգիս եղեալ ի քաղաքամիջի անդ ի հնումն բաժնի մերձ ի նորն: Այս տուն սակարկեալ գոլով երեք հարիւր հազար դահեկանի՝ ընդ այլ կալուածոց հանգուցելոյն, յիշեալ ժառանգորդք թողուն ի վերայ եկեղեցւոյն կիսագնի, և ստանան զկէս բաժին գնոց: Թո՛ղ զի և բարեյիշատակ Պօղոս պէյն ի կենդանութեան իւրում եղեալ էր ի դրամատուն փաշայութեան տեղւոյն հարիւր հազար դահեկան ի մշտնջենաւոր հաստատութիւն եկեղեցւոյ յԱղէքսանդրիա և յապրուստ պաշտօնէից նորին, որոց պաշտօն է հովուել զփոքրիկ հօտ ժողովրդեան մեր անդ:

Այժմ պարտէզն, յորոյ միջի է եկեղեցին և առաջնորդարանն, է մի ի գլխաւոր կալուածոց ժողովրդեան մերոյ, տուեալ ի շահաբերութիւն ի ձեռս տեղական երկրագործաց հոգեբարձութեամբ եկեղեցպանի տեղւոյն Աւետիք անուն առն Բալուեցւոյ:

Այս եկեղեցպան ի քսան և հինգ ամաց հետէ եկաց ի սպասաւորութիւն եկեղեցւոյս, զի է միանգամայն եկեղեցպան, լուսարար և ժամկոչ. սա միանգամ մտեալ ընդ լծով ամուսնութեան, և վաճառականութեամբ անկեալ յայս երկիր նախ քան զշինութիւն եկեղեցւոյն, յետ միանգամ վաճառաբեկ լինելոյ, գայ աստ յԱղէքսանդրիա և մտանէ ի ծառայութիւն եկեղեցւոյն, որ և զայնոսիկ անցս կարևորս ականատեսութեամբ պատմեաց մեզ:

Աստ ևս որպէս և Գահիրէ, եկեղեցական պէտք ժողովրդեանն կատարի ի ձեռն վարդապետաց, և այս ի սկզբանէ հաստատութեան աստէն եկեղեցւոյ, գուցէ մնացեալ յԵրուսաղէմէ անտի այս սովորութիւն, յորոյ ընդհանուր վիճակս ժողովրդեան վարդապետք են կատարողք սրբազանն խորհրդոց եկեղեցւոյ. այլ աստ յԵգիպտոս ո՛չ ի սովորութենէ յաւէտ, որքան ի սակաւութենէ եկամտից եկեղեցւոյն, զի ո՛չ պահել բաւեն քահանայս հանդերձ ծանրութեամբ ծախուց ընտանեաց, բայց գուցէ և յԱղէքսանդրիա բարձցի սովորութիւնս յետ ժամանակի, որպէս եբարձ ի Գահիրէ Գաբրիէլ եպիսկոպոս, որպէս ասացեալ եմք, վասն անձին և ո՛չ վասն եկեղեցական օգտի:

ՊԱՏՄԱԿԱՆ, ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ, ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎՈՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ՝ ՀԱՆԴԵՐՁ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՄԲՔ[1]

Գլուխ Ա.

Թադդէոս առաքեալ՝ նախալուսաւորիչ Հայաստանի, առաջին կանոնադիր Եկեղեցւոյ մերոյ

(Ամք Տեառն 1.) Թադդէոս առաքեալ, յետ համբառնալոյ Փրկչին, ըստ Խորենացւոյն բանի՝ Գիրք Բ., գլ. Լ Գ., առաքեցաւ ի Հայս առ Աբգար Թագաւոր մեր՝ բժշկել զնա և քարոզել զԱւետարանն ըստ բանին Տեառն:

Թողլով մեր եկեղեցական մատենագրաց զանցս գալստեան և քարոզութեան Նախալուսաւորչին մերոյ՝ Սրբոյն Թադդէոսի ի Հայս, և զայլոց առաքելոցն անդ, զորոց պարզ ի պարզոյ, առաւել քան զայլ պատմագիրս, գրէ Խորենացին մեր ի նշանակեալ գիրս անդ, մեք աստ ի սկիզբն Պատմութեան Ժողովոց, ըստ յիշատակելոյ մերում ի Նախադրութեան, առաջին կարգեմք գլուխս զկանոնս սրբոյ առաքելոյն, լիակատար տեղեկութեամբն հանդերձ ի նմին գրելոյ ի ձեռն Զաքարեայ՝ նորին աշակերտի, որում և ինքն իսկ վկայէ Զաքարիա ի վերջէ յիշատակեալ կանոնացն, որ ունի վերնագիր այսպիսի.

«Սահմանք և կանոնք Թադդէոսի Առաքելոյ ի գալն նորա յՈՒրհայ քաղաք և լուսաւորել զնոսա մկրտութեամբ աւազանին, ուր յԵռնադրեաց Եպիսկոպոսաց և քահանայս և սարկաւագունս, և Հաւատարեցան վարդապետք և օրէնաւորեցան, և եղև պայծառութիւն եկեղեցւոյ Աստուծոյ և աղանոյ: Կամեցաւ գնալ անտի, զի քարոզեսցէ և այլոց քաղաքաց, և կացոյց փոխանակ ի՝ր զԱդդէ կերպասագործ, ժողովեցան ամենեքեան՝ Հարցանել նմա զկարգս եկեղեցւոյ և զկրօն Քրիստոնէութեան, և նա պատմեաց նոցա կարգս՝ ըստ Հրամանի Փրկչին, որ ունի գլուխս...»:

ա.-Հարցումն առաջին.-Որպէ՞ս արժան է եպիսկոպոսին կալ ի տեսչութիւն եկեղեցւոյ:

Պատասխանի.-Եպիսկոպոսն եղիցի անարատ, պարկեշտ, ուսուցող, մի՛ երկբան, մի՛ արծաթասէր, մի՛ կերող և արբեցող, մի՛ զօշա-

---

1 ԱՐԱՐԱՏ, 1873, էջ 400-409,; 442-452; 1874 էջ 1-13; 37-49; 80-91; 117-124;157-169; 197-203; 237-241

քաղ, մի՛ հարկանող, մի՛ կաշառառու, մի՛ բամբասող, մի՛ հակառակող: Այլ հեզ և հանդարտ, պահող, տքնող, ատեցող զհանգիստ քնոյ, լինել սիրող արտասուաց, քան ծաղու, օրինակ լինել հօտին ամենայն կարգօք, առնել արժանաւոր ձեռնադրութիւն այնոցիկ, որ հասու գիտակ են գրոց կարգաց և օրինաց Աստուծոյ, և զտգէտս խոտեալ մի՛ ձեռնադրեսցէ, քանզի անգիտութիւն Աստուծոյ ատելի է, որպէս չարագործութիւն, յայսմանէ զգոյշ լիցի, քան յամենայն իրաց, քանզի տգէտ քահանայ և սարկաւագունք կամ ով է իցէ յառաքելական աստիճանն՝ զԱստուած ի բարկութիւն շարժէ, զի թէ բերանովն ի միտ առնու և առնէ և սրտիւն ոչ իմանայ, վնասակար լինի ամենայնի եպիսկոպոսն: Արդ, քանզի կորուստ է այս ամենայն հոգւոյն, փախիցէ յայսմանէ, զուսումնասէրն յառաջացուսցէ ամենայն պատուով, իսկ զտգէտն ամենևին մի՛ կացուցանել առաջնորդ և վերակացու շնորհի ինչ եկեղեցւոյ, իսկ եթէ յանդգնեալ եպիսկոպոսին և արասցէ զայս կա՛մ վասն կաշառոյ, կա՛մ վասն մերձաւորութեան, կա՛մ վասն բարեկամութեան, այնպիսի եպիսկոպոսն նզովեալ եղիցի, և որ ինչ անտի վնասք ծնանին, ընկալցի վրէժս յաւուրն դատաստանի յանանց տանջանսն:

Բ.-Որպէ՞ս արժան է եպիսկոպոսին ունել զիւրսն կամ զօտարսն:

Պարտ է եպիսկոպոսին զամենայն հաւատացեալս միապէս սիրել, և զիւր մերձաւորսն մի՛ աւելի սիրել, քան զայլ հաւատացեալս, թէպէտ եղբայր է կամ քոյր: Եւ կաշառ ամենևին մի՛ առցէ, զինքն մեռեալ համարել յաշխարհի, մի՛ երբէք զբօսնուլ, կամ հրապարակաւ զոք յանդիմանել, առանց երկրորդ հարցմանց, նախ առանձին, և երկրորդ կամ երրորդ վկայիւք, հրեշտակական հանդերձիւք վարել, մի՛ պճնող, առանց ընկերաց հարցմանց մի՛ ինչ գործել, զի այն է հաճոյ Աստուծոյ, կացուցանել ընդ ձեռամբ իւրով տեսուչս գաւառաց, քաղաքաց վարդապետս, հովուել զհօտ Տեառն և ժողովրդոցն հնազանդ լինել հովուացն կարգեցելոց յեպիսկոպոսէն, կարգեսցէ ի շէնս երկու կամ երեք քահանայ, սարկաւագ մի, իսկ յագարակսն՝ քահանայ մի և սարկաւագ մի, զհաշմեալ ոք մի՛ ձեռնադրեսցէ, զի եթէ արատաւորն պատարագ չհրամայէ մատուցանել մարգարէն, որչա՞փ ևս առաւել զերկնաւոր պատարագն մատուցանել առանց արատոյ լինել, առանց վկայից և քննութեան մի՛ զոք ձեռնադրել և առանց հաւանութեան ժողովրդեանն, զի անտի մահաբեր վնասք ծնանին:

Գ.-Որպիսի՞ չափով պարտ է ձեռնադրել քահանայս և սարկաւագունս, և որչա՞փ կալ ի կարգին:

Արժան է եպիսկոպոսին կարգել քահանայս երեսնամէջ, և Լ. ամ կալ ի կարգին, իսկ Ծ. ամենեցիցն կամ թէ աւելի՝ մի՛ ձեռնադրել քահանայ կամ սարկաւագ, և մի՛ ամուսնութիւն հրամայել, զի յայսմ վայրի և անձն աղճատին և միտքն, և ժամանակ զինքն պատրաստել իւրում ուղևորութեան, պայծառացուցանել զլապտերսն, զի մի՛ զայլս հոգալով, զինքն անհոգս արասցէ ի յաւիտենական կենացն:

Պ.-Որպիսի՞ օրինակաւ պարտ է ընտրել զլաւսն յոռեացն և ձեռնադրել:

Աւելի հրաժարեսցի եպիսկոպոսն ի ձեռնադրութենէ տգիտաց և ախմարացն, ցոպամտաց և վատամտաց, յափշտակողաց և ի շնացողաց և յայլ վատթարագործաց, զայսպիսիսն ամենևին մի՛ ձեռնադրել և մի՛ բարկացուցանել զԱստուած:

Ե.-Զի՞նչ օրինակաւ պարտ է ուղղել զսուրբ սեղանն և որպէ՞ս սպասաւորել:

Արժան է առնուլ ի քարանց օրինակ խաչի, և զնա ծածկեսցեն սուրբ հանդերձիւք, և ընդ առաւօտս և ընդ երեկոյս և ի ժամ պատարագին անխնայ լիցի խնկարկութիւն և լուցումն ի ժամու իւրեանց:

Զ.-Զհաց և զգինի որպէ՞ս պատշաճեսցուք առ սուրբ սեղանն:

Զհաց պատարագին, յորում աւուր զպատարագն մատուցանեն, ի նմին աւուր եփեսցեն խաչապէս դրոշմամբ, նոյնպէս և զգինի սուրբ բաժակին ի սուրբ ամսան պահեսցեն և սուրբ ամանաւ հանցեն ի սեղանն, և մի՛ ոք յանդգնեսցի ջուր խառնել ի բաժակն, զի չէ այն Աստուծոյ հաճոյ, այլ անագորոյն մտաց...:

Է.-Որպէ՞ս պարտ է օրհնել զեկեղեցին և զսուրբ սեղանն:

Յորժամ զսեղանն հաստատեսցէ եպիսկոպոսն, ժողով արասցէ աթոռակցաց իւրոց, քահանայից և սարկաւագաց և ժողովրդոց, մատուցանել աղօթս տքնութեամբ, արտասուօք, սաղմոսիւք, մարգարէիւք և Սուրբ Աւետարանաւն, և ապա մատուցանել պատարագ:

Ը.-Թէ որպէ՞ս պարտ է յաւուր շնորհի մխիթարութիւն առնել ժողովրդեան կերակրովք և ըմպելեօք:

Յորժամ հաստատէ եպիսկոպոսն զսեղանն, արժան է զենմունս առնել, զուարակս և արջառս և ոչխարս, որպէս Սողոմոն արար ի շինուածս տաճարին:

Թ.-Որպէ՞ս արժան է ժողովրդականացն կալ յաղօթս յեկեղեցւոջ:

Յորժամ ժողովին ժողովուրդք հաւատացեալք ի տուն Աստուծոյ, մի՛ քրթմնջեսցեն և մի՛ ընդ միմեանս նայեսցին, զայլ ինչ մի՛

խօսեսցին, բայց միայն յաղօթս Աստուծոյ, կացցեն ընդ արևելս, ձեռս ի վեր ամբարձեալս՝ խնդրելով զարդարութիւն և արքայութեանն արժանանալ, զոր պատրաստեաց Աստուած:

Ժ.-Եթէ ոք տգիտութեամբ ձեռնադրեցաւ քահանայ, և յետոյ յայտնեսցի, զի՞նչ արժան է առնել:

Եթէ ձեռնադրեսցի ոք եպիսկոպոս կամ քահանայ կամ սարկաւագ, և յանցանք լիցի առնն, շնութիւն կամ գողութիւն կամ այլ ինչ աղտեղութիւն, և ի ձեռնադրութիւնն չգիտաց ոք, և վկայեաց ոչ ոք, և ապա յետոյ ինքն զղջացաւ և կամ պատճառանօք ինչ իրքն յայտնեցան, ոչ կարէ նա այլ ևս սպասաւորութիւն առնել սեղանոյն կամ պատարագ մատուցանել, այլ արտաքոյ եկեղեցւոյն ապաշխարեսցէ զյանցանս իւր ԺԲ ամ, և ապա որ ինչ պարտ է շնորհել նմա ի ներքոյ բեմին սպասաւորութիւն առնել՝ կալ ի պատուին միաբեկեալ մինչև ցօր մահուան իւրոյ:

ԺԱ.-Եթէ ձեռնադրեցաւ ոք և յետոյ գարշեցաւ, զի՞նչ արժան առնել:

Եթէ ուղիղ էր մարդն և ապա յետոյ շնացաւ կամ գողացաւ կամ վատթար գործեաց, այնպիսեացն ամենևին բարձցի քահանայութիւնն և շնորհն, և ձևն և նշանն, զի անհնարին է նմա այլ քահանայանալ, այլ արտաքոյ եկեղեցւոյ ապաշխարեսցէ ԺԵ ամ, ապա եկեղեցւոյ արժանանայ և հաղորդութեան սուրբ խորհրդոյն, ընդ զինուորսն կացցէ յեկեղեցւոջն, զի անհնար է նմա ի բեմ ելանել կամ կարդալ կամ սաղմոսել մինչև յօր մահուան իւրոյ, քանզի պղծեաց զսուրբ ձեռնադրութիւնն և առ ոտն կոխեաց, մի՛ ոք համարձակեսցի նմա, զի չէ՛ հնար նմա այլ քահանայանալ, իսկ եթէ յանդգնեսցի եպիսկոպոսն վասն կաշառոյ կամ վասն բարեխօսութեան և հրաման տացէ նմա քահանայութեան, կրեսցէ նա վրէժ յաւուրն դատաստանի յաններելի տանջանսն:

ԺԲ.-Ամուսնացեալ քահանայ որպէ՞ս պատրաստեսցի պատարագ մատուցանել:

Երիս աւուրս հրաժարեսցի ի կնոջէն և ապա պատարագ մատուսցէ, զի թէ զհաց Յառաջաւորութեանն չետ քահանայն առանց քննութեան և սուրբ գտանելոյ ի կանանց, որչա՞փ ևս առաւել, որ զերկնաւոր պատարագն մատուցանէ, պարտ է սուրբ լինել և պատրաստ, որպէս Աստուծոյ իսկ կալ ի սպասու ահիւ և դողութեամբ, զի պսակաց արժանի լիցի և անմահ կենացն:

ԺԳ.-Անձամբ քահանայ որպէ՞ս արասցէ:

Եթէ կուսան քահանայ ոք լիցի, այնպիսի տքնող լիցի, յորում աւուր զպատարագն մատուցանել կամիցի, պատրաստեսցի զգիշերն ամենայն սուրբ խորհրդով, կատարեալ մտօք, առանց կեղծաւորութեան, քանզի ընդ Աստուծոյ ի խորհուրդ մտանէ:

ԺԳ.-Եթէ արժա՞ն է քահանային երդնուլ:

Նմա չէ արժան կալ ի քահանայութեանն, զի զբանն Աստուծոյ անարգեաց:

ԺԴ.-Որպէ՞ս պարտ է քահանային լինել:

Արժան է աղքատասէր լինել, քաղցրաբան, խորհրդական, զմեղուցեալսն ուղղել յապաշխարութիւն, պահօք և աղօթիւք զամենեսեան արքայութեան արժանացուցանել, զի յերևելն Քրիստոսի առնուցու զանթառամ փառաց պսակն:

ԺԵ.-Որ հաւատացեալ է և մկրտեալ և անկանիցի ի մեղս, զի՞նչ արժան է առնել:

Մի՛ երբէք լիցի նոցա անկանել ընդ մեղօք, այլ աստուածահաճոյ վարել զկեանս իւրեանց, մի՛ շնալ, մի՛ գողանալ, մի՛ բամբասել և մի՛ երդնուլ, այլ որպէս Աստուծոյ իսկ ժողովուրդ՝ առանց աղտոյ լինել:

ԺԷ.-Որ շնայ, զի՞նչ պարտ է առնել:

Արտաքոյ եկեղեցւոյ ապաշխարեսցէ Գ ամ պահօք և աղօթիւք, տքնութեամբ և լուծումն ի շաբաթ և ի կիւրակէի և ի Տէրունական տօնս մինչև ի կատարիլ երից ամացն, և յամին չորրորդի հաղորդութեան արժան լիցի...:

ԺԸ.-Որ ի շնալն զորդեծնութիւնն հեղուցու, զի մի՛ մարդկան յայտնեսցի, և զԱստուծոյ երկիւղն առ ոչ ինչ համարեսցի:

Այնպիսին ընդ սպանողի ապաշխարեսցէ բազում հառաչանօք:

ԺԹ.-Որ հեղու զինքն, զի՞նչ առնելի է:

Պիղծ է այնպիսին, ընդ շնացողս ապաշխարեսցէ, և եթէ յամէ կրկին ապաշխարեսցէ, և ձեռնադրութեան արժանի մի՛ լիցի:

Ի. Որ ընդ արու պղծի, զի՞նչ արժան է առնել:

Զամենայն աւուրս կենաց իւրոց ապաշխարեսցէ արտաքոյ եկեղեցւոյն և ի ժամանակ որոշման իւրոյ հաղորդեսցի:

ԻԱ.-Եթէ ամուսնացեալք շնան, զի՞նչ արասցուք:

Տասներկու ամ արտաքոյ եկեղեցւոյն ապաշխարեսցէ արտասուօք, վեց ամ օրէնս մի առցէ, և զտարւոյն երեք մասն պահեսցէ և մի մասն կերիցէ, և զշաբաթ և զկիւրակէ և զՏէրունական տօնսն կերիցէ, և մտցէ յեկեղեցի և օրէնս առցէ:

ԽԲ.-Որ զՔրիստոս ուրանայ և զղջացեալ դառնայ, զի՞նչ արասցուք:

Զամենայն աւուրս կենաց իւրոց ապաշխարեսցէ արտասուօք, պահօք և աղօթիւք և տրօք տնանկաց, ի վախճանին հաղորդեսցի:

ԽԳ.-Որ կամօք մարդ սպանանէ, որու՞մ արժան է:

Տասն և հինգ ամ ընդ ունկնդիրս կացցէ, մի ամ՝ ընդ ձեռամբ, և յելս անձին իւրոյ հաղորդեսցի:

ԽԴ.-Որ մի մօր կաթամբ սնեալ են օտարք ի միմեանց, արժա՞ն է ամուսնանալ:

Չէ արժան, զի ծնող և սնուցող ի մի համարի են:

ԽԵ.-Եթէ ազգականք ամուսնանան, զի՞նչ արասցուք:

Քակեալ արժան է ի միմեանց և ծանր ապաշխարութիւն ի վերայ դնել, զի չէ ամուսնութիւն, և ընդ անիծիւք Արարչին է:

ԽԶ.-Որ զսահման ընկերին յափշտակէ, որպիսի՞ ինչ:

Զոր գրեաց Մովսէս յօրէնսն, իջցէ անէծքն ի վերայ նորա և եղիցի նզովեալ ի կեանս և ի մահ:

ԽԷ.-Որպէ՞ս կատարեսցուք զԱստուածային տօնից զկարգս:

Նախ պահեսցեն շաբաթ մի ի պատիւ տօնին և ապա կատարեսցեն:

ԽԸ.-Զչորեքշաբաթ և զուրբաթ արժա՞ն է պահել:

Արժան է պահել և աղօթել, զի աւուրք չարչարանաց Փրկչին մերոյ են. տրտում կալ, յիշել զնորա կամաւոր խոնարհութիւն, գոհանալով զնմանէ, որ եկն և փրկեաց զմեզ իւրով կամաւոր չարչարանօքն մինչև ցինն ժամն:

ԽԹ.-Զսուրբ Քառասունսն արժա՞ն է պահել:

Զսուրբ քառասներորդսն պահեսցեն ամենայն քրիստոնեայք սրբութեամբ որոշ ի շաբաթէ և ի կիւրակէէ, յորժամ Տեառն մերոյ չարչարանաց աւուրք գան, ժպրհել մի՛ ոք իշխեսցէ յայն աւուրս, այլ տրտում ըստ Տեառն մերոյ՝ տքնութեամբ անդադար աղօթեսցեն, և ապա զկենարար պասէքն արասցեն, ցնծասցեն ընդ Տեառն մերոյ յառնելն, աղօթիւք փառաւորեսցեն զնա, որ փրկեաց զմեզ յարութեամբն իւրոյ և ետ մեզ երգակից լինել վերնոցն, զի նմա վայել է փառք յաւիտեանս, ամէն:

«Իբրև կատարեաց զայս սուրբ առաքեալն Թադդէոս, ասէ ցժողովուրդն. հարք և եղբարք, որք Տեառն ետուք զանձինս, այս ձեզ յինէն օրէնք, և այլ՝ որ յետ ձեր լինելոց են: Արդ, հաստատուն կացէք յամենայնի, զոր լուարուք յինէն, մի՛ անցանէք ըստ սահմանս ըստ այսմ, զի ձեզ բարի լինիցի և երկայնակեացք լինիցիք, եղիցի

ձեզ յիշատակ բանս այս, և մի՛ մոռանայք յաղօթս ձեր, և զայլ կարգաւորութիւնն ուսուսցէ ձեզ Ադդէ, զամենայն, զոր լուաւ յինէն ըստ կարգին, զոր կարգեցին եղբարք և առաքեալք Տեառն, պահեսջիք խաղաղութեամբ ի փորձանաց չարին. խաղաղութիւն ընդ ձեզ»:

«Զայս օրինադրութիւն ես՝ Զաքարիա, աշակերտ առաքելոյն Թադդէոսի, գրեցի, որպէս լուայ ի նմանէ, ամենայն հաւատացելոց ի Քրիստոս»:

Գլուխ Բ

Առաջին ժողով ի Վաղարշապատ վասն ընդունելոյ զժողովն Ն-զկանոնս Նիկիոյ

(Ամք Տեառն 325) -Այն, ինչ առաջին ընդհանրական ժողովն Նիկիոյ, լինէր ի Բիւթանիա քաղաքի, հրամանաւ ինքնակալին Կոստանդիանոսի՝ ընդ դէմ Արիոսի Աղէքսանդրացւոյ, որ ուսուցանէր. «ոչ գոլ զՈրդի հաւասար Հօր, և ոչ ի բնութենէ և յէութենէ Հօր, և ոչ ծնեալ ի Հօրէ յառաջ, քան զյաւիտեանս, այլ օտար զոմն և արարած, և կրտսեր, և յետ ժամանակի գոյացեալ», և գայր հասանէր հրովարտակ ինքնակալին առ Տրդատ արքայ՝ գնալ ի ժողովն հանդերձ Ս. Գրիգորիւ: Սոցա, ոչ կամելով գնալ, առաքեն թղթով ի տեղի իւրեանց զՍուրբն Արիստակէս:

Ապա, յորժամ դարձաւ Արիստակէս, հանդերձ քսան կանոնիւք և դաւանութեամբ սրբոյ ժողովոյն, որ վասն բարեկարգութեան եկեղեցւոյ ըստ որպիսութեան այնր ժամանակի, Սուրբն Գրիգոր ժողով արարեալ ի Վաղարշապատ քաղաքի յԱթոռն Հայրապետական, ընկալաւ զկանոնս և զդաւանութիւն ժողովոյն, զհանգանակն հաւատոյ՝ կնքելով զայն բանիւս. «Իսկ մեք փառաւորեսցուք, որ յառաջ քան զյաւիտեանս, երկրպագանելով Սրբոյ Երրորդութեանն և միոյ Աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»:

Ապա, ըստ վկայութեան Խորենացւոյն, Բ. Գիրք, Ղ. «Սուղ ինչ գլուխս յինքենէ ի կանոնս ժողովոյն յաւելու վասն առաւել զգուշութեան իւրոյ վիճակին»՝ Սուրբն Գրիգոր, զորս յառաջ բերեմք աստանօր:

Վերնագիր կանոնաց Սրբոյն Գրիգորի, երկրորդ լուսաւորչին մերոյ եղեալ ի Կանոնագիրս մեր ըստ այսմ. «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթեւի՝ յաւելումն Նիկիականին», մեք առաւել հաւատա-

ըիմ համարիմք և զհետևեալ զերեսուն գլխովք կանոնս նմա լինել, քան զկարծիս Միքայէլի Զամչեան[1], զորս և յառաջ բերեմք ի Կանոնագրոց՝ ըստ այսմ:

ա.-Քահանայ, որ ի մեղս զառածեալ է, տասն ամ ապաշխարեսցէ ջերմեռանդն արտասուօք և տրովք տնանկաց, և ապա հաղորդեսցի օրինաց:

բ.-Քահանայ, որ կին առնու, հինգ ամ արտաքոյ և երկու ամ ի ներքս ապաշխարեսցէ և երկու ամ անհաղորդ կացցէ, ապա հաղորդեսցի:

գ.-Քահանայ, որ զարծաթ իւր ի վարձու տայ, մերժեսցի յեկեղեցւոյն:

դ.-Որք երթան ի տունս հեթանոսաց և ուտեն և ըմպեն անխտիր, երեք ամ ապաշխարեսցեն և ապա հաղորդեսցին:

Ե.-Որ մինն երկեակ է, և միւսն՝ կուսան, երկու ամ արտաքոյ և մի ամ ընդ օրինօք:

զ.-Եթէ ոք թողու զերկրորդն և յառաջինն դարձցի ի թողեալն, եօթն ամ ընդ յանցանացն ապաշխարեսցէ և երկու՝ ընդ օրինօք:

Է.-Որք ոք կերիցէ գաղտ և արգելցէ զուտելն, և տացէ աղքատաց զնոյն չափ:

ը.-Եթէ ոք գաղտ պսակ դնէ, պսակադիրն լուծցի:

Ը.-Եթէ ոք առևանգ արասցէ, պսակն այն յաւեր եղիցի, և պսակեալն ում կամի՝ լիցի:

Ժ.-Որ ի ձիսն յերասանին, յագելապէս, երեք ամ արտաքոյ և մի ամ ընդ օրինօք:

ԺԱ.-Իգացելոցն երեք ամ արտաքոյ և երկու ամ ընդ օրինօք:

ԺԲ.-Թովչացն հինգ ամ արտաքոյ և մի ամ ընդ օրինօք մեծաւ ողորմութեամբ հաղորդի:

ԺԳ.-Որ կուսութիւն Աստուծոյ խոստացաւ և ապա պոռնկեցաւ, եօթն ամ ապաշխարեսցէ:

---

1 Չհայեցեալ մեր ի կարծիս Հ. Միքայէլի Զամչեան, յառաջ բերեալս յԱ. հատ.,գլ. Խ, որով զեղեալ կանոնս երեսուն գլխովք, անուամբ Սրբոյն Գրիգորի Պարթևի, ո՛չ հայեցուցանէ ի հանգամանս ժամանակի սրբոյն, մեք, հաւատարիմ համարելով զԿանոնագիրս մեր ի նախնեաց առ մեզ հասեալս, և զվերնագիր կանոնացն, եդաք զայնս աստանօր ըստ կարգի պատմութեան Ժողովոց Հայաստանեայց Եկեղեցւոյ, և ոչ իսկ կամիմք մտանել ի տարապարտ քննութիւնս նորա վասն այսր կանոնաց ի նոյն Ա. հատ., եր. 647-649, մինչդեռ այս կանոնք Սրբոյ Պարթևին, դիցուք թէ ըստ նորա ոչ հային այնքան ի համգամանս ժամանակի նորա, որով կամի ասել, թէ նորոգ պայծառանային եկեղեցիք Հայաստանեայց, և վիճակ ժողովրդոց՝ քրիստոնէութեամբ և աստուածպաշտութեամբ ի բարեկարգութիւնս, բայց աւանիկ համաձայն գան այնոքիկ Նիկիականն ասացեալ առաջնոց կանոնացն գրեթէ ըստ իւրաքանչիւր գլխոց, զորս բաղդատել թողումք քննաբանից:

ԺԹ.-Մանուկ, որ առանց կնքոյ մեռանի, եթէ ի ծնողացն ծուլութենէ իցէ, եօթն ամ արտաքոյ ապաշխարեսցեն և մի ամ ընդ օրինօք, նոյնպէս և հոգաբարձուացն և քահանային, որ ծուլացաւ:

ԺԷ.-Որ զգերեզմանս առանձուկ, երեք ամ արտաքոյ ապաշխարեսցեն և մի ամ՝ ընդ օրինօք:

ԺԸ.-Որ զդիսն կողոպտեն, տասնեւհինգ ամ արտաքոյ ապաշխարեսցեն և մի ամ՝ ընդ օրինօք:

ԺԷ.-Որ կոծ դնեն և զհերսն խզեն, և զճակատս հարկանեն, նզովեալ լիցին ի կեանս և ի մահ:

ԺԸ.-Չէ պարտ՝ ուր նշխարք մարտիրոսաց դնին պատարագ մատուցանել ի վերայ:

ԺՂ.-Չէ պարտ քրիստոնէից նկատել զխառնակումն անասնոց, և առաւել ևս կանանց պատուիրեն օրէնք, և որ գտցի՝ նզովեալ եղիցի:

Ի.-Ոչ հրամայեն կանոնք անապատականաց մկրտութիւն առնել կամ օրենս տալ ժողովրդոց կամ պսակ դնել, զի այս առաջնորդաց է:

ԻԱ.-Եթէ ոք ելոյծ զհրամանս մեռելոցն և արհամարհեաց, նզովեալ եղիցի:

ԻԲ.-Եթէ ոք ի քահանայից զծածուկ խոստովանութիւն ուրուք յայտնեսցէ, անկցի յաստիճանէն և ի կարգէ պաշտօնէից մերժեսցի, և մեղք չխոստովանողացն եկեսցէ ի վերայ նորա:

ԻԳ.-Որ վասն պոռնկութեան արձակէ զկին իւր, արձակեալ լիցի, բայց մի ամ սրբեսցի:

ԻԴ.-Այր, որ զկին իւր թողու ի պատճառս աստուածպաշտութեան, նզովեալ եղիցի:

ԻԵ.-Եթէ ոք արբեցաւ ի քահանայից կամ ի սարկաւագաց կամ ի դպրաց, մի՛ իշխեսցէ ի պատարագն կամ ի պաշտօնն մերձենալ, մինչև բազում արտասուօք և գթով տնանկաց ապաշխարեսցէ, զի արբեցողքն ընդ սպանողս են:

ԻԶ.-Եթէ ոք ի քահանայից կամ յաշխարհականաց առցէ կաշառս, եկեսցեն անէծքն Սիմոնի կախարդի ի վերայ նորա, և կցորդ եղիցի Յուդայի մատնչի կաշառոյն և Գէեզի բորոտի, այրեսցին ոգիք կաշառառուացն:

ԻԷ.-Ձեռնածուացն՝ մի ամ արտաքոյ օրինացն, և մի ընդ օրինօք ապաշխարեսցեն, արտասուօք և ողորմութեամբ քաւեսցեն:

ԻԸ.-Պարտ է քրիստոնէից պատուել զկիւրակէն և հանգչիլ ի նմա, ապա եթէ ոք պահեսցէ հրէաբար, նզովեալ եղիցի:

ԺԸ.-Քահանայ, որ վայրաբար նզովէ, նզովեալ լիցի:

Լ.-Կոյս, որ նուիրեսցէ զինքն Տեառն Աստուծոյ, նոյնպէս և մոնոզոն՝ մի՛ իշխեսցէ ամուսնանալ, ապա եթէ գտցին անկեալք, մերժեսցին ի հաղորդութենէն, և եպիսկոպոսն տեսցէ զվարսն և որպէս կամի՝ մարդասիրեսցէ:

Այս կանոնք Սրբոյն Գրիգորի Պարթևի ունի վերջաբանութիւն այսպիսի ի Կանոնագիրս մեր, յորմէ առաք զվերոյ գրեալ կանոնսն:

«Եւ արդ զայս ամենայն գրեցաք առ ի փորձելոյ զիւրաքանչիւր չափ ապաշխարութեան, զի մի՛ զոք կորուսցուք յայնպիսեաց անտի, այլ զարհուրեալք ի ծանր դատաստանէն, և յահագին և ի մեծ հատուցման աւուրն Տեառն մերոյ ընկալցուք զայնպիսիսն և օգտեսցուք զնոսա հանդերձ աղօթիւք և պատարագօք և յափշտակեսցուք զնոսա յորոգայթից սատանայի, որպէս զի և զանձինս մեր կարասցուք զերծուցանել յահագին տանջանացն Քրիստոսիւ Յիսուսիւ՝ Տերամբ մերով, փառք յաւիտեանս, ամէն»:

Զհետ վերոյեղեալ կանոնացն դնին դարձեալ ի նմին Կանոնագրի և հետագայ կանոնքդ մետասան գլխովք՝ անուամբ Սրբոյն Գրիգորի Պարթևի, այսպիսի վերնագրով:

«Կանոնք Սրբոյն Գրիգորի Պարթևի»

Դարձեալ Հարցո—մն ո— պապասխանիվ նոցա

Ա.-Քահանայ, որ ընդ կնոջ ի քուն է, ի վաղիւն պատարագ մի՛ իշխեսցէ մատուցանել: Եւ աշխարհական, որ ընդ կնոջ ի քուն է, ի վաղիւն օրինաց մի՛ լիցի հաղորդ:

Բ.Հարց.-Ո՞վ է հայր մահու:

Պատասխանի.-Նախանձ:

-Ուստի՞ յայտ է:

Յայսմանէ.-Նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ:

Գ.Հարց.-Եւ ո՞վ մայր մեղաց:

Պատասխանի.-Ագահութիւն, որպէս ասեն, արմատ ամենայն չարեաց արծաթսիրութիւնն է:

Դ.Հ.-Ո՞վ է, որ տանի ի կեանսն յաւիտենից:

Պատասխանի.-Հեզութիւն...

Ե.Հ.-Եւ ո՞վ առիթ դժոխոցն:

Պատասխանի.-Լրբութիւն...

Զ.Հ.-Եթէ կարիցե՞ն կախարդք զբնութիւն արարածոց փոխել:

Պատասխանի.-Եթէ հաստատել կարեն, ապա և փոխել կարեն...

Է.Հ.-Կայեն առանց Աստուծոյ սպան զԱբէլ, և սպանողն Կայենի՝ առանց Աստուծո՞յ սպան զնա Լէն...

Պտս.-Զի թէ լինի մարդ առանց Աստուծոյ և մեռանի, ո՛չ պռունկորդին Աստուծոյ հրամանաւն լինի, և ո՛չ մեղաւորն Աստուծոյ հրամանաւն մեռուցանէ զարդարն, այլ սատանայ է պատճառ չարեաց...

Ը.Հ.-Եթէ կարիցե՞ն կախարդք որդիս տալ ամլոց...

Պտս.-Ամլութեան բազում պատճառք են. այն զոր Աստուած արգելեալ է, չէ ոք, որ նմա ձեռնհաս կարէ լինել, ոչ կախարդք և ոչ բժիշկ...

Ը.Հ.-Դիւահարութեան պատճառ ի՞նչ է մարդկան:

Պտս.-Վասն հպարտութեան մարդկան լինի...

Ժ.Հ.-Ծնունդք ե՞ն դիւաց, և մահ աճե՞ն և պակասե՞ն:

Պտս.-...

Ժա.-Հ.-Քաջք աներևոյթ արարա՞ծք են Աստուծոյ, զպատերազմունս նոքա՞ հարկանեն, զորս էրէոց նոքա՞ հարկանեն...

Պտս.-Այսպիսի յիմարութեամբ լցեալ է երկիր...

Բայց յերկուց աստի կանոնացս եղելոց ի Կանոնագիրս մեր, որպէս ասացաք, անուամբ Սրբոյն Գրիգորի՝ երկրորդ լուսաւորչին մերոյ, գտաք դարձեալ ի նմին և զերկուս ճառօրէն կանոնս նորին Գրիգորի, առաջինն՝ վասն կարգի ուխտի և որոշումն վանաց, և երկրորդն՝ յաղագս նուիրանաց քահանայից և վանօրէից՝ կոչեցեալն Ադապ, թարգմանեալ յաւուրս սրբոյն և մեծին Սահակայ՝ ընդ ձեռն Եղնակայ, որպէս է տեսանել ի վերնագրին, յորոց երևի առեալ Սրբոյն Սահակայ, և ընդարձակեալ զկանոնս արարեալս նորա յամին 426, ի Չորրորդ ժողովն Վաղարշապատայ:

Այսոքիկ կանոնք զնոյն համարիմք մեք եղեալս ի Սրբոյ Գրիգորէ Պարթևէ, զորմէ Ագաթանգեղոս և Խորենացին գրեն սուղ ինչ գլուխս յինքեանէ ի կանոնս ժողովոյն, յաւելու Սուրբն Գրիգոր վասն առաւել զգուշութեան իւրոյ վիճակին, զոր երևի չունել ի ձեռին և հայր Միքայէլ Չամչեան յիւրում ժամանակի, ապա թէ ոչ՝ ոչ յընդունայն անկանէր ի տարապարտ քննութիւնս, որպէս ասացաք ի ծանօթութեանն՝ յաղագս կանոնաց Սրբոյն Գրիգորի Պարթևի:

«Սահմանադրո-ՐԷ-ն կարգաց՝ ընկալեալ ի նահապետէն Տէառնէ Գրիգորէ, թարգմանեցա- ընդ յԵռն Եղնակայ՝ Հրամանա- Երանելւոյն Սահակայ՝ Եպիսկոպոսապետին Հայոց, Ի նորին ԸՐՈՌ-ակցաց, ՐԷ որպէս սահմանեցա- կարգ ո-խրի Ի որոշո-մն վանաց»:

«Քանզի ոմանք կարծեցին տգիտութեամբ այլ զոմն Եկեղեցի ասել Կոչարան, և այլ զոմն՝ Վանս, և տխմար բանիւք իւրեանց կամեցան կռիւս, հերձուածս մուծանել ի միաբանութիւն հաւատոյ և մոռացան զբանն պատուիրանին, որ ասէ. Մի է Տէր, մի հաւատ, մի մկրտութիւն, զի որ այլ և այլ կամի ասել, զհաւատոյ ցուցանէ զբաժանումն, քանզի Եկեղեցի ոչ ծանուցանէ զայդ պատուիրանն Աստուծոյ, որ ի քարանց և ի փայտից շինեալ է, այլ զհաւատովն շինեալ զազգս մարդկան ի վերայ վիմին հաստատութեան, ապա ուրեմն ճշմարիտ հաւատն է Եկեղեցի, որ գումարէ և շինէ զմեզ ի մի միաբանութիւն գիտութեան Որդւոյն Աստուծոյ, քանզի նոյն ինքն Կենարարն ուսուցանէ՝ ասելով ցՊետրոս. Դու ես վէմ, և ի վերայ այդր վիմի շինեցից զԵկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն»:

Արդ զի՞նչ իմանայցեմք ասելն զՊետրոս՝ Վէմ, միթէ որպէս զմի ոք ի քարա՞նց, քա՛ւ լիցի, այլ մարդ բանաւոր և գլուխ առաքելական դասուն, և զի անդրդուելի հաւատով խոստովանեաց զՔրիստոս՝ Որդի Աստուծոյ, երանութիւն ընկալաւ և Վէմ անուանեցաւ, ապա ուրեմն և շինեալքն ի վերայ նորա ոչ են քարինք անշունչք, այլ մարդիկ նորին հաւատոց հաղորդակիցք, քանզի ոչ դանդաղեն գիրք սովին անուամբ ձայնել զՏէր մեր և Փրկիչ երբեք ըստ պիտոյիցն, յիշատակէ ահա և երանելին Պաւղոս՝ զանուն եկեղեցւոյ ասելով. Զոր եդն Աստուած յեկեղեցւոջն՝ այս են. նախ՝ զառաքեալս, երկրորդ՝ զմարգարէս, երրորդ՝ զվարդապետս, և որ ինչ ի կարգին է: Տեսանե՞ս զյարմարումն և զպանծալի բարձրութիւն եկեղեցւոյ, զսուրբ և զամբիծ հաւատոյ ասեմ, որոյ առաքեալք և մարգարէք և վարդապետք են նաւավարք՝ ունելով նաւապետ՝ զմարմնացեալ և զմարդացեալ բանն Աստուած և զհաւատն, զնա իսկապէս խոստովանիմք ասել Մայր Եկեղեցւոյ ի Քրիստոս հաւատացելոց, քանզի զօրէն նաւի զամենեսին յինքն ամփոփելով ցամաքաթև յամենայն աշխարհական ծփանաց, կարող լինի ապրեցուցանել, բայց միայն աներկևան պահեսցուք զհաւատս, որով շինեցաքս, բանաւոր և մտաւոր եկեղեցւոյ՝ ի վերայ հիման առաքելոց և մարգարէից: Այսմ եկեղեցւոյ ուսուցանէ Տիմոթեայ՝ խնամ ունել երանելի առաքեալն, սիւն և հաստատութիւն և ճշմարտութիւն անուանելով, յայտնի է, ասէ, ի նմա խորհուրդ աստուածպաշտութեան, այլ միայն բանաւոր եկեղեցիս, վասն այսորիկ և սաղմոսն բարձրագոյնս գոչէ իսկ, թէ օրհնութիւն նորա յեկեղեցիս սրբոց է: Ահա և Սամուէլ մարգարէ, որ Հաւատարիմ կոչեցաւ, զսոյն ուսու-

ցանէր ի պատուիրելն իւրում առ Սաւուղայ: Իբրև գնայցես յինէն, ասէ, հանդիպեսցիս եկեղեցւոյն մարգարէից՝ մարգարէացելոցն, և դարձեալ, եթէ եկեղեցացո զժողովուրդն ի Դանայ մինչև ցԲերսաբէէ իբրև զայր մի, և եկեղեցի մարգարէացելոց մարգարէից, և Սամուէլ կայր ի վերայ նոցա:

Եւ օրհնեաց Սողոմոն զեկեղեցին Իսրայէլի: Եւ լու եղև բանս այս յականջս եկեղեցւոյն: Եւ եկեղեցիքն հաստատէին ի հաւատս: Եւ լուաւ զպատգամս զայս ի միջոյ հրոյն յաւուրն եկեղեցւոյ: Քանզի եկեղեցի արար գլուխ ամենայն մարգարէիցն Մովսէս զցեղն Իսրայէլի՝ հրամանաւն Աստուծոյ: Եկեղեցացո, ասէ, զժողովուրդն ի դուռն խորանին վկայութեան, տեսանե՞ս, զի ոչ եթէ զխորանն կոչէ եկեղեցի, յորում կայր արկղն կտակարանաց, և միւս խորանն, որ կոչէր Սրբութիւն սրբութեանց, այլ զհաւատացեալ ժողովուրդն աւետարանէ, վասն այսորիկ ևս առաւել բարձրագոյնս և առաքեալն Պօղոս՝ նորագոյնս իմն և յաւէտ հրաշալիս..., քանզի ցուցանէ եկեղեցիս անդրանկաց գրելոց ոչ յերկրի, այլ յերկինս, որոց անուանքն գրեալ են ի դպրութիւն կենաց, վասն որոյ Փրկիչն Տէր ասաց խնդալ զառաքեալսն, թէ խնդացէք, զի անուանք ձեր գրեալ են ի դպրութիւն կենաց:

Տեսե՞ր զճշմարիտ հիմն եկեղեցւոյ, զի ընդ ամենայն տիեզերս հաւատացեալք ի Քրիստոս Առաքելական յորջորջին եկեղեցի վասն Տէրունական հրամանին, որ առ նոսա, թէ՝ Գնացէ՛ք ընդ ամենայն երկիր, աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ուսուցէ՛ք նոցա պահել զամենայն, զոր ինչ պատուիրեցի ձեզ:

Արդ թէպէտև փոքր ի չատէ ասացաք յօրինակաց, որ բազմապատիկ կան ի գիրս սուրբս, վասն եկեղեցւոյ սրբոյ բաւական եղիցի, քանզի յայտնի եղև անքակ միութիւն, և ո՛չ երկպառակել, որպէս ոմանք կամեցան պատառումն առնել և կռիւս աղաղակի տխմարութեամբ իւրեանց, զի ի ճշմարիտ հօտէն Քրիստոսի, որ է Եկեղեցի Աստուծոյ, նա միայն է պատառեալ և անջատեալ, որ ի հերձուածս կործանի և մեղաց լիցի պաշտօնեայ, զի մեղքն բաժանեն և օտարացուցանեն, բայց զայս ասելով մեր, զանբաժանելի միաւորութիւն եկեղեցւոյ յայտ արարաք, և թէ զի՛նչ է եկեղեցի: Այլ ոչ եթէ արհամարհել ուսուցանեմք զչինուածովք պատուեալ տեղիսն, որ անուանի Ժողովրդանոց, քանզի և ի նոսա ժողովին քահանայք և մանկունք, ուխտի պաշտօնեայք՝ կատարել զաղօթս և զխնդրուածս, վասն որոյ աղօթարանք կոչին և սրբարանք,

զի հաստատեալ կայ ի նոսա տէրունական սեղանն, յորոյ վերայ զհացն և զգինին պատարագեմք յօրինակ կենդանարար մարմնոյ և արեանն Քրիստոսի, որ միշտ անծախապէս բաշխի մեզ ի քաւութիւն մեղաց, և ի նոսա կայ ուղղեալ աւազանն մկրտութեան, որով լուսաւորեալք վերստին ծնանիմք Հոգւովն Սրբով, և դրոշմիմք ի յոյսն կենաց յաւիտենականաց, և հանապազ անդր գումարելով՝ լսեմք զսաղմոսերգութիւնս և զպատգամս պատուիրանացն Աստուծոյ, և վասն զի միշտ անդր ժողովիմք, և ապաւէն ապաստանի է մեզ զամենայն ասացեալսդ ի նմա կատարել, սովորութիւն եղև Եկեղեցի անուանել յարանունաբար, այլ ոչ բնաւորաբար, և քանզի բազում այսպէս կան վկայարանք ուրուք յանուն, և սակայն ճանաչեմք, թէ հոմանուն նոցա են շինեալքն, այլ ոչ թէ ինքեան իսկ, յորոց անուն շինեցանն, և մի պատիւ է ամենեցուն, վասն զի մի խորհուրդ կատարի, քանզի սեղանն ամենայն ուրեք Տէրունական ասի և պատարագն, բայց միայն տօնիւքն զանազանին, զի յիւրաքանչիւր տեղւոջ սովորութիւն է կատարել զկարգ տօնիցն:

Արդ արժանաւոր է և զառաջին ճառ բանին յիշատակել, թէ որպէ՞ս և կամ յի՞նչ պատճառ շինեցան վանք, քանզի յայսմ ոչ եթէ Հայոց միայն ազգ կալաւ փոյթ յանձին, այլ և յոյնք և հոռոմք և ասորիք և այլ ամենայն ազգք ի Քրիստոս հաւատացելոց:

Զոր և երիցս երանեալ քաջ նահատակն Քրիստոսի՝ Գրիգորիոս[1] կատարեաց՝ շնորհեալ նմա ի Հոգւոյն Սրբոյ զօգուտ մատակարարութեանն, քանզի բազում օգտից է առիթ և սիւն և ճշմարտութիւնն ուխտի մանկանց, զի փայփայէ և թեւակոխի ի հրահանգս հոգևորս, և զոր ամենեցուն քահանայից և ժողովրդականաց պարտ է յարգել և մեծարել զվարդապետս և միանգամայն իսկ զամենայն պաշտօնեայս ուխտի, առանց տարակուսանաց, (որք[2]) անդր մտանեն յընդունելութիւն կամաւորական, վասն այնորիկ և դիպողագոյն եղաւ անուանքն, զի անտրտում, որոց պիտոյ իցեն՝ տացեն, և ոչ միայն առ օտարս է նոցա յաճախել, այլ և առաւել գեղջն, յորում շինեցաւ, զի օրէն է նոցա սփոփել զհիւանդս և մխիթարել զսգաւորս, և զի, որ ամուսնութեանն են պարապեալ քահանայք, բազում անգամ պատաղին ի մշակութիւն և կանանց իւրեանց հնարեն լինել հաճոյ, որպէս առաքելական իսկ ճշմարտէ բանն: Իսկ ի վանեարն բնակեալք կուսութեամբ են պարկեշտացեալք, միշտ մարտնչե-

1 Աստի երևի, թէ զայս սահմանադրութիւն Սրբոյն Գրիգորի ընդարձակեալ է Սուրբն Սահակ, այլ զվերնագիրն թողեալ անուամբ նորա:

2 Փակագծով եդեալ բառքն պակասին ի բնագրին:

լով ընդ հուր ախտին, զոր բնութիւնն վառեալ բորբոքէ, և անյապաղ զպաշտամանն կատարեն կարգս, զխաղաղութիւն խնդրելով աշխարհի, և զգեղջն շինութիւն և առողջութիւն ի տուունջեան և ի գիշերի բազում արթնութեամբ, վասն այնորիկ, ազատ յամենայն հարկապահանջ իշխանաց, սահման ընկալաւ և անդս, և զերիցագոյն պատիւ ժառանգեաց յուխտի սրբում եկեղեցւոյ:

Արդ ամաչեսցեն, որք յանդգնեցան տխմարութեամբ և անզգամութեամբ իւրեանց, այլ զոմն եկեղեցի ասել և այլ զոմն՝ վանս, քանզի յայտնի եղև ի (մի) միաւորութիւն անդամոց եկեղեցւոյ ի Քրիստոս հաւատացելոց, զի անդամք եմք միմեանց ի շինութիւն հաւատոյն սիրով, նոյնպէս և ժողովրդանոցք և մատրունք, զոր սովորութիւն եղև ի վաղնջուց կոչել եկեղեցի, թէպէտ և բազումք են ըստ գիւղի գիւղի և քաղաքաց քաղաքաց, սակայն ոչ են բազումքն ի բազումս բաժանեալք, այլ ըստ աստիճանի իշխանութեան, և այսպէս յարմարեալ՝ անյապաղ և բազում փութով պարտ է ի նմին մշտնջենաւորել: Քանզի ո՛չ եթէ ի մարդկային կարծեաց է ճառեցեալ սահմանադրութիւնս, այլ յԱստուածաշունչ Գրոց երկրորդեցաւ ի մէնջ բացորոշաբար, և որ հակառակ կայ, ո՛չ մարդկան, այլ Աստուծոյ հրամանին կայ հակառակ, և որք կամինն կալ հակառակ, անճանց դատաստանս ընդունին:

Արդ պարտ և պատշաճ է մեզ զհատուցմունս շնորհիցն սահմանադրելով (ակնարկէ ի հասս քահանայից, որ ի Սրբոյն Գրիգորէ կարգեալ Ագապն կոչի) հաստատել յայտարարութեամբ, թէ որպէս պարտ է հատուցանել ի վանս և կամ ամուսնացելոց քահանայից»:

Գլուխ Գ.

«Կանոնք Ս. Գրիգորի Պարթեւի»

«Ագաբ, որ մասնական է պատարագ, կէս կաշւոյն երթիցէ ի վանս և երկու մասունք ճրագուին, իսկ ի քահանայիցն՝ բովանդակն, և ոչխարի մորթն և դմակն անդամովն, և ճրագուն և խախացոցն: Եւ պանդուխտք, որք ի տունս քահանայիցն են, և նոցին եղբարց նոյնպէս տացեն, և զամենայն պատարագս հասարակաց կերիցեն պաշտօնեայք և աղքատք բազում մեծարանօք և եղբարք հաւատացեալք, և զհաց տօնի նորեացն առ հասարակ կերիցեն ամենայն պաշտօնեայքն, նոյնպէս և զհաց ապաշխարողացն, զոր յաւուրս Քառասնորդացն առնեն հանգիստ ի շաբաթու և ի կիւրա-

կէի: Բայց պատարագք, որ ի վանս կատարին երախայրիքն, եթէ անապատ իցէ գեղջն, անդր տայցեն, ապա թէ ոչ՝ ամուսնացելոց քահանայիցն տացեն, քանզի ոչ է օրէն ումեք զհաս տեառն ի յարկս իւրում թողուլ:

Իսկ ամուսնացելոց քահանայիցն եղիցին տօնք շաբաթն զատկի և զատիկն սուրբ և երկրորդ զատիկն, և յերրորդ զատկէն և ի վեր՝ կիւրակէ, այն ամենայն յիսներեկին և տօն սրբոյ Պենդակոստէին, յորում Հոգին Սուրբ առաքելոցն շնորհեաց լեզուս, և տօն սրբոյ Աստուածածնին և միշտ կուսին, և Վարդավառն, բայց ի մատաղինեացն, որ է կատարումն քառասնորդաց առաքելական տօնի, հաւատացելոց զատկի և պտուղ յամենայն արմտեաց քոռ քոռ, և պատարագք, որ մասնական են, կէս կաշւոյն և ճրագուին զերկուս մասունս ի վանսն թողլով, լուցմանն և պաշտամանն, զմինն տարցեն զլուցման մասն, և որ ոչխար է, դմակն անդամովն, և ճրագուն և խախացոցն և մորթն, և զգեսատան տիկնաց միայն վախճանելոց: Եւ տօն Բարեկենդանին և Ողոգոմեանն մեծ, որ թարգմանի բարեբանեալ օր, և թէ այլ տօն ոք կատարիցէ յանուն առաքելոց և մարգարէից, հասարակ եղիցի, զի այնպէս աներկեան և առանց հակառակութեան պաշտօնէիցն կացցեն դասք, գիտելով՝ որում շնորհի արժանաւորք եղեն, զի պարկեշտութեամբ և ուսումնասիրութեամբ վարժեսցին և մի եղիցին բանակռիւք, այլ սիրունք և արթունք և զուարթունք յամենայնի, զի բաւական լիցին խրատել զստահակս և զծուլացեալսն ի կարգս հաւատոց, քանզի այդ է գործ Վարդապետի և հոգևոր հովուի»:

«Այս Սահմանադրութիւն կարգաց գրեցաւ հրամանաւ երանելոյն Իսահակայ՝ մեծ Հայրապետի Հայաստան աշխարհի, ընկալեալ ի քաջ նահատակէն ի Տեառնէ Գրիգորէ, թարգմանեցաւ միայն ի Յունէ ի Յայ: Արդ, եթէ ոք անհնազանդեալ կանոնիս նորաձևել յանդգնեսցի զկարգեալ Սահմանադրութիւնս, մի՛ ընկալցի մասն և վիճակ ժառանգութեան յարքայութեանն Քրիստոսի Աստուծոյ, և որ ոք միաբանեալ կատարեսցէ, ընկալցի զօրհնութիւն ի Տեառնէ Աստուծոյ, հաղորդելով պարգևացն և անվախճան հանգստեանն և երջանկին Գրիգորի և Հօր մերոյ՝ Իսահակայ, և նոցին հետևեցելոցն ճշմարիտ ուղղափառութեան, որք ի մեծն և յերևելումն աւուրն են պսակելոց յամենաբաւական Աջոյ, անթարգմանելի պայծառութեամբ մշտնջենաւորեալք ի յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից»:

Գլուխ Դ.

Առաջին Ժողով յԱշտիշատ (Թօփրագալայ) վասն բարեկարգելոյ պեկեղեցական և պաշխարհական

(Ամք Տեառն 365): Սրբոյ և Մեծին Ներսիսի, ձեռնադրեալ ի Կեսարիա Քահանայապետ Հայոց ըստ խնդրանաց Արշակայ արքայի և նախարարացն, եկեալ ի Հայաստան՝ ընկալեալ եղև իբրև հրեշտակ Աստուծոյ, և ըստ հարցն իւրոց օրինակի պայծառացուցեալ զաշխարհս մեր ամենայն բարեվայելուչ կարգօք և ուղղութեամբ առ ի նոցանէ մնացելովքն, նորոգեաց յամենայնի և զուղիղ Սահմանադրութիւնս նոցին, որոյ և ջանացեալ բառնալ ի միջոյ զպէս պէս անկարգութիւնս, որք յայնմ ժամանակի մտեալ էին յաշխարհս մեր, խորհրդով Արքային առնէ ժողով եպիսկոպոսաց և աւագ իշխանաց յԱշտիշատ քաղաքի:

Ապա հրամանաւ թագաւորին արգել ժողովովն նզովիւք զիւրաքանչիւր անկարգութիւնս և ըստ այնց սահմանեաց:

Նախ՝ արգել որդւոց նախարարաց առնուլ ի կնութիւն զմերձաւոր ազգականս, որոց սովորութիւն էր յայնժամ վասն պահելոյ զսեպհական ազատութիւն ցեղի իւրեանց:

Երկրորդ՝ եբարձ զկոծ, զոր առնէին սաստիկ ի վերայ մեռելոց պէս պէս ոճիրս և անկարգ գործս ըստ հեթանոսաց:

Երրորդ՝ յաղագս ուրկաց և բորոտից հրամայեաց չինել բնակութիւն ըստ իւրաքանչիւր գաւառաց ի բարեխառն վայրի, որոց ախտիցն փոխադրական գոլով, հալածէին ի քաղաքաց և ի գիւղից և բնակելով յանմարդաբնակ տեղիս՝ սովամահ կորնչէին, նոյնպէս և վասն հիւանդաց՝ հիւանդանոցս, և վասն կաղաց և կուրաց՝ անկելանոցս և զայլս այսպիսիս. և յաղագս ամենեցուն սոցա կարգեաց հասս և տուրս ի գիւղից և ի քաղաքաց՝ կարգելով ի վերայ նոցա խնամատարս և սպասաւորս, յանձնելով զամենեցուն զհոգսն ի սարկաւագ իւր ի Խադ:

Չորրորդ՝ յաղագս որբ և այրի աղքատաց հրամայեաց չինել որբանոցս և այրիանոցս և կարգեաց նոցա առանձին հասս, զի անխնամ մնալով նոցին՝ ոմանք ի գողութիւն, և այլք յայլ և այլ անկարգութիւնս մտաբերէին:

Հինգերորդ՝ յաղագս հիւրոց և օտարաց հրամայեաց չինել հիւրանոցս յիւրաքանչիւր քաղաքի և ի գիւղ և կարգեաց ռոճիկս ի

գիւղից և ի քաղաքաց, զի ո՛չ գտանելով նոցին հիւրոցն և օտարաց ասպնջականութիւն յումեքէ՝ մնային բացօթեայք և գործէին չարիս:

Վեցերորդ՝ հրամայեաց չինել զերիս դասս բնակութեան յաղագս կրօնաւորաց, որք ի նմին ժամանակի առ սրբոյն Ներսիսիւ դատարկաշրջիկ լինէին, և ոմանք նստէին ի տունս աշխարհականաց ի քաղաքի, և այլք բազումք հանապազ բնակէին ի գիւղս իբրև ի վանս, որոց աղագաւ կառոյց եղբայրանոցս յանապատ տեղիս, իսկ վասն առանձին ճգնողաց՝ միայնանոցս, և առանձնակեցաց՝ խրճիթս բազումս, կարգեալ յամենեսին ի սոսա կանոնս:

Զայս ամենայն, կանոնադրեալ Սրբոյն Ներսիսի ժողովով և հրովարտակաւ Արքային, կարգեաց ի վերայ կրօնաստանաց տեսուչ և հայր՝ զՇաղիտա, աշակերտ Սրբոյն Դանիէլի ծերոյն, և զԵփրեմ և զԵպիփան և զԳինդ Սղկունի, և ըստ նոցին ընտրութեանց եղ առաջնորդ յամենայն վանօրայս:

Զորոց ամենայնէ լիօրէն գրէ Խորենացին Մովսէս ի քսաներորդ գլուխ երկրորդ գրոց պատմագրութեան իւրոյ, զորոյ զբանսն ո՛չ կարևոր համարիմք, որպէս և զայլոց պատմագրաց ազգիս յետ նորա, առաջ բերել յիւրաքանչիւրոցն Հայրապետաց ի գործս Ժողովոցն, արարելոց ի նոցանէ, զի մի ստուարասցի աշխատութիւն մեր այս՝ «Պատմութիւն Ժողովոց Հայաստանեայց Եկեղեցւոյ», բայց եթէ ուրեք ուրեք առ հարկի ստիպիցիմք դնել զայնս, յորոց վերայ իցէ հիմնեալ գլուխ բանից մերոց:

Գլուխ Ե.

Երկրորդ Ժողով ի Վաղարշապատ վասն անկանոնութեան կարգաղիկոսաց մերոյ յԱրշակունեաց

(Ամք Տեառն 366): Տեսեալ Արշակայ և նախարարացն և համօրէն աւագանւոյն զբարեկարգութիւնսն Ներսիսի Մեծի յԵկեղեցիս Հայաստանեայց և խնդացեալ ընդ այն, կամեցեալ ըստ օրինակի Աթոռոյն Երուսաղեմի և այլոց տեղեաց՝ պատուել և զԱթոռ Սրբոյն Գրիգորի Պատրիարգական կոչմամբ, ժողով մեծ գումարեցին եպիսկոպոսաց աշխարհին Հայոց ի Վաղարշապատ և կարգեցին զՍուրբն Ներսէս կաթուղիկոս և Պատրիարգ յԱթոռ Սրբոյն Գրիգորի, յորմէ հետէ և հայրապետք Հայոց ոչ ևս յաւելին առնուլ ձեռնադրութիւն կաթուղիկոսութեան ի Կեսարիոյ, այլ յեպիսկո-

պոսաց ազգիս մերոյ, ըստ վկայութեան Յովհաննու կաթուղիկոսի՝ պատմաբանի ի տասներորդ դարու, զորմէ ոչ ինչ յիշատակութիւն առնէ Խորենացին, որ զառ ի Ներսիսէ զբարեկարգութեանցն լիօրէն գրէ: Այլ պատմաբանն Յովհաննէս կաթուղիկոս, յիշելով զվեց պատրիարգական Աթոռս ցայն վայր ի վերայ աշխարհի, ասէ:

«Ըստ սմին սակի և մերն թագաւոր Արշակ և նախարարք Հայոց, համարձակութիւն առեալ, կացուցին ի պատրիարգութիւն Տանս Թորգոմայ զմեծն Ներսէս, փաստս իրաւախոհս ըստ արժանին ի մէջ առեալ զսուրբ Առաքեալսն մեր զԲարդուղիմէոս և զԹադդէոս, որք Ասգանազեանս ազին վիճակեցան ի Տեառնէ քարոզք, և Աւետարանիչք»:

Յայսմ ժողովի սահմանեցին, զի յայնմ հետէ կաթուղիկոսք Հայոց յիւրեանց եպիսկոպոսաց առնուցուն զձեռնադրութիւն, որպէս և արարին ընդ յաջորդաւ մեծին Ներսիսի՝ Շահակաւ, զորմէ նոյն պատմաբանն վկայէ Յովհաննէս, թէ. «Ոչ ևս ըստ սովորութեանն առաջնոյ առաքեալ զնա ի Կեսարիա, այլ լքեալ ի բաց զօրէնն՝ առաջին ըստ օրինի Պատրիարգաց կալան կարգ Ժողովով Եպիսկոպոսաց ձեռնադրել»:

Ըստ որոյ երևի, զի թէև Լուսաւորիչն մեր ընկալեալ էր զձեռնադրութիւն ի Ղևոնդեայ, այլ դիպող ժամու մնային լքանել զպայման ուխտին, եղելոյ ի նմին Ղևոնդեայ առ Տրդատաւ ընդ Սրբոյ Լուսաւորչին, զոր գրէ Ագաթանգեղոս ըստ այսմ. «Հաստատեալ կայցէ, ասէ, վկայութիւն ի մէջ երկոցունց կողմանցս, զի պարգևաբաշխութիւն, նորոգեալ Քահանայապետութեանդ ձերոյ նահանգի, առ ի մէնջ կայցէ անշարժ յեկեղեցւոջս Կեսարու, ուստի և հանդերձեցաւ ձեզ պատրաստութիւն շինութեան՝ ձեռնադրութիւնդ»: Թո՛ղ զի ինքն իսկ Սուրբ Լուսաւորիչն Գրիգոր, որ զձեռնադրութիւնն իւր ընկալեալ էր ի Կեսարիա, անդ զառաջինն փոխանորդ եդ ձեռնադրեաց զորդի իւր՝ զՍուրբն Արիստակէս, ի Կաթուղիկոսութիւն ամենայն Հայոց՝ ըստ Ագաթանգեղեայ վկայութեանն. «Ձեռնադրեաց, ասէ, (զԱրիստակէս) յԵպիսկոպոսութիւն փոխանակ իւր... և յետ նորա կալաւ զտեղի հայրենեացն և անդէն նստաւ յԱթոռ Կաթողիկոսութեան Հայոց Մեծաց»:

Ուստի ի սմին ժողովի հաստատեցին, զի և Կաթուղիկոսն Հայաստանեայց Աթոռոյ, անկախ յեկեղեցւոյն Կեսարիոյ ըստ այլ պատրիարգական աթոռոց, ունիցի իրաւունս ձեռնադրիլ ի ձեռն իրից եպիսկոպոսաց, հանդիսացուցեալ անուամբ և պատուով զիշխանութիւն եպիսկոպոսապետութեան և պատրիարգութեան, որպէս արարին յետ նորա ընդ Շահակ և ընդ ամենայն յաջորդս կաթուղիկոսս:

Գլուխ Զ.

Երրորդ Ժողով ի Վաղարշապատ յաղագս գիր-գրի Հայկական գրոց

(Ամք Տեառն 402): Ժողովն յաղագս գիւտի Հայկական գրոց լինի ի Վաղարշապատ հրամանաւ Վռամշապհոյ արքայի յամի Տեառն 402 ի խնդրոյ Սրբոյն Սահակայ և Մեսրովբայ, զի Մեսրովբ, որ էր ի Գողթն գաւառի, եկեալ առ սուրբն Սահակ յԱթոռն Հայրապետական ի Վաղարշապատ և վերստին խորհուրդ արարեալ ընդ նմա յաղագս հնարելոյ զգիր հայկական լեզուի, յորդորեաց զնա գումարել ժողով առ այս, իբր զի հարկաւորութիւն մեծ էր առ նոսա տեսանել յայնմ ժամանակի, զի Սուրբն Մեսրովբ ի քարոզութեան իւրում ի հինգերորդում ամի Վռամշապհոյ՝ հրամանաւ սրբոյ կաթուղիկոսին ի տեղիս տեղիս, ի գեօղս և ի քաղաքս հանապազ ընթեռնոյր ժողովրդոց զԱստուածաշունչ գիրս յասորի և ի պարսիկ լեզուս, ըստ որոյ և դժուարութիւն ոչ սակաւ կրէր յեղուլ ի միտս նոցին զիմաստս բանից Սուրբ Գրոց, և այս իսկ էր պակասութիւն ազգային, զի ընդհանուր եկեղեցիք Հայաստանեայց վարէին յարարողութիւնս ասորի գրով, և դիւանք թագաւորացն մերոց՝ պարսկականաւ յամենայն ի գործս առ ի չգոյէ հայկական գրոց, մանաւանդ թէ առ ի ձեռս բերել զուսումն ասորի, յոյն և պարսիկ գրոց, մեծամեծ ծախուց ի ներքոյ անկանէին, զմանկունս ճանապարհորդելովն յաշխարհս հեռաւորս բազում թոշակօք ի դպրոցս ասորի գիտութեան, որպէս գրէ ժամանակակից պատմաբանն Ղազար Փարպեցի:

«Հոգացեալ, ասէ, յարաժամ տրտմէր Երանելի այրն Մաշտոց, տեսանելով զմեծաջան ծախս մանկանց Հայաստան աշխարհիս, որ բազում թոշակօք և հեռագնաց ճանապարհօք և բազմաժամանակեայ դեգերմամբ մաշէին զանձինս իւրեանց ի դպրոցս Ասորի գիտութեան, նաև պաշտօնք Եկեղեցւոյ ևս և կարդացմունք գրոց Ասորի ուսմամբ վարէին ի վանօրայս և յԵկեղեցիս Հայաստան ժողովրդոցս, յորմէ ոչ ինչ էին կարող լսել և օգտիլ ժողովուրդն այսպիսի մեծի աշխարհի յանլրութենէ լեզուին Ասորւոց»:

Ի ժողովի անդր, ի խորհրդեան յաղագս իրացն հանգամանաց, Արքայ Վռամշապուհ յիշեաց զասացեալն ինքեան ի Միջագետս Աբէլի երիցու Ասորւոյ՝ լինել Հայկական գրոց առ Դանիէլ եպիսկոպոս երկրին և զաղաչանս նորա բերել զայն ի Հայս: Զայս լուեալ

յԱրքայէն՝ ընտրեցին համաձայնութեամբ զոմն հաւատարիմ ի տանէ արքային՝ Վահրիճ անուն՝ յազգէ Խաղունեաց և առաքեցին զնա յԱսորիս թղթով արքային և ժողովոյն առ Դանիէլ եպիսկոպոսն, բերել զ Դանիէլեան նշանագիրսն[1] ընդ ձեռն երիցուն ի Հայս:

Յետ որոյ ապա ի վեշտասաներորդ ամի թագաւորութեան Վռամշապհոյ, հրաշիւք ընկալեալ Սրբոյն Մեսրովբայ զհայկական լեզուիս մերոյ գիրս ի Սամուսատ, եբեր ի Հայաստան աշխարհ և զինչ ինչ թարգմանութիւնս Սուրբ Գրոց, այնուհետև պայծառացուցին զեկեղեցիս մեր, զազգային լեզու և զգրականութիւն ընդ ձեռն աշակերտաց իւրեանց երջանիկ թարգմանիչքն մեր:

Գլուխ Է.

Ժողովք ի Վաղարշապատ վասն քարեկարգութեան եկեղեցականաց ընդ յեռն Սրբոյն Սահակայ

(Ամք Տեառն 426): Սուրբն Սահակ և Մեսրովբ, ի ջանս անդ թարգմանութեան Սուրբ Գրոց ի պայծառութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ, յետ ի կարգի դնելոյ զեկեղեցական գիրս մեր և պաշտամունս ժամերգութեանց, զորոց գրեցաք ի ներածութեան պատմութեանս, ձեռնարկեցին ապա և ի բարեկարգութիւն եկեղեցականաց և ազգիս, ուստի և յամի Տեառն 426, առնէ ժողով ի Վաղարշապատ և համաձայնութեամբ Եպիսկոպոսաց ժողովոյն, գրէ Թուղթ Ընդհանրական, հաստատեալ զպէս պէս կանոնս վասն եպիսկոպոսաց, քորեպիսկոպոսաց և քահանայից և նուիրանաց վանօրէից և եկեղեցեաց և վասն հասից քահանայիցն և կրօնաւորաց առնլով զինչ ինչ ի հարազատ կանոնաց Սրբոյ Լուսաւորչին, զորմէ գրեցաք յառաջին ժողովն Վաղարշապատայ:

Ի ձեռագիր կանոնագիրս մեր, գրեալս ընդ զանազան ժամանակս, ուրեք ուրեք գլխակարգութեամբ դնին կանոնքն յանուն Սրբոյն Սահակայ Պարթևի, մանաւանդ յընդարձակս, յորոց, որպէս երևի, համառօտեալ է և հայր Միքայէլ Չամչեան յիւրում պատմագրութեանն, գլխակարգեալ ի կանոնական թղթոց նորին Սահակայ, այլ ի մերում կանոնագրի, ճառօրէն եղեալ գոլով Ընդհանրական Թուղթ ասացեալն նորին գրելոյ համաձայնութեամբ ժողովոյն, նոյն և մեք յառաջ բերեմք աստէն, զի և կարևորն մեզ՝ այն է:

1 Զ Դանիէլեան նշանագիրս, ասացեալ ի Խորենացւոյն, համարի նա «Կարգեալ ըստ ձևոյ օրինակի յունականին վաղնջուց գտեալ նշանագիր տառից»: Խոր. գիրք Գ., գլ. ԾԲ:

«Տէառն Սահակայ Կաթողիկոսի սահման Վարդապետութեան՝ թէ որպէ՞ս պարտ է Եպիսկոպոսին խնամել զընդանիս Սրբոյ Եկեղեցւոյ»:

«Այցելու հասարակաց հայր վիճակեալս Եպիսկոպոսն, վասն այնորիկ իսկ առանց ակնառութեան պարտ է խնամել զհաւատացեալ նմա յԱստուծոյ զհօտն և անաչառութեամբ յանձանձել զուխտս սրբոյ Եկեղեցւոյ, տեսուչս և առաջնորդս գաւառաց և գիւղից կացուցանելով, որք անուանին Քորեպիսկոպոսք, զի սրբոց նախանձաւորաց օրինաց և հմուտ եղելոց Վարդապետաց արժանաւոր է տալ զայնպիսի պատիւս, որք զժողովուրդն բաւական լինին խրատել, շահելով զմեղանչականութեամբն մոլորեալս և պայծառացուցանելով զճշմարիտսն ճառագայթաւէտ պատուիրանացն պատմութեամբք, զի և Քահանայք առանց տարակուսանաց ուսանիցին մեծարել զԱստուածընկալ սեղանն, յորոյ վերայ կատարի կենդանարար Խորհուրդն ապրեցուցչին մերոյ Տեառն և փրկական, զաւազանն մկրտութեան, որոյ ծննդեամբ վերստին նորոգիմք ի յոյս կոչմանն Աստուծոյ:

Արդ մի՛ ոք զայսպիսի տեսչութիւնս զինուորաց կամ տգիտաց հաւատասցէ, և մի՛ մերձաւորաց իւրոց՝ շնորհուկս ինչ նոցա առնելով սիրով գեղձմամբ, յորմէ կանխաւ հրաժարեցոյց Փրկիչն մեր և Տէր. «Ո՞վ է իմ, ասէ, մայր կամ եղբայր, եթէ ոչ՝ սիրողն պատուիրանացն Աստուծոյ, զոր և արդեամբք իսկ կատարեաց մեզ օրինադրելով, քանզի Յակոբոս և Յուդաս և Յովսէս եղբարք յորջորջէին, և Պետրոս և Յովհաննէս և այլ բազմութիւն աշակերտացն յոլով ժամանակս կատարեցին սպասահարկութիւնս և վիշտս և նեղութիւնս կրեցին՝ գուն գործելով ոգւով չափ, և անօթ ընտրութեան ոչ զոք ի նոցանէ անուանեաց, իսկ Պօղոս, որ հալածիչ և թշնամանող զինքն խոստովանէր, անօթ ընտրութեան է ինձ նա՝ կրել զանուն իմ առաջի հեթանոսաց և թագաւորացն Իսրայէլի:

Տեսանե՞ս, զի ո՛չ է ակնառութիւն առաջի Աստուծոյ. եթէ աչառիցէք, ասէ, մեղս գործիցէք, արդ եթէ ոչ վարիցի այսպիսի առաքինութեամբ Եպիսկոպոսն, ոչ կարէ աշակերտ լինել Տեառն, այլ յոյժ հեռի և օտար է, որպէս զմի ոք ի ստունգանողացն: Փրկիչն՝ զպատուիրանացն սիրողս և կատարողս, սահմանեաց իւր եղբայրս, և թէ՝ Որ սիրէ զհայր կամ զմայր, զուստերս և զդստերս առաւել, քան զիս, չէ ինձ արժանի, և դուք, ընդ բարձրանալ հրամանացն, վեր ի վայր կործանեալք ընդ երկիր, փարիք զտոհմայինն ազգա-

կանոք, պէս պէս հնարելով հնարս, զի գիրգ և փափուկ առնիցէք և աւելաստացուածութեամբքն զեղուցուք զտունսն՝ մոռանալով զպատգամս ինքնասած Աւետարանի, թէ. «Ամենայն տունկ, զոր ոչ տնկեաց Հայրն իմ երկնաւոր՝ խլեսցի»:

Տեսանէ՞ք, զի զոր յոլով ժամանակօքն տաժանիք և ջանայք արմատացուցանել, զկիրս աւուրցն կազմէք որոգայթ սատակման, ըստ այնմ, եթէ. «Որ ամբարէ զմեծութիւն առանց իրաւանց, ի կէս աւուրց իւրոց լքցէ զնա»:

Զայս ոչ եթէ յաղագս յամօթ ինչ առնելոյ զոք ասեմք ի խոր խոցելով յանդիմանութեամբ, այլ զի ամենևիմբ մի երևեսցի յեկեղեցւոջ այսպիսի անօրէն սովորութիւն, քանզի արմատ է ընդհանուր չարեաց և պէս պէս ազգապիղծ անառակութեանց, վասն որոյ գայ բարկութիւնն Աստուծոյ, այլ, որպէս վերագոյնն ասացաք, եթէ հասարակաց հայր է եպիսկոպոսն, և ըստ լաւութեան և ըստ յաջողութեան պարտի փայփայել և յառաջեցուցանել զնմանիսն և յանձն առնել զգործ Եկեղեցւոյն կանոնիս կարգաց, ուստի այլանդակ անառակութիւնքն և հերձուածք խափանին և վարք աստուածահաճոյ կենաց հանդերձ բարեպաշտութեամբ պտղալից զարդարին, բայց գիտեմք, զի ոմանք ըմբոստացեալ ճոռոմաբանեն, մանաւանդ ազգասէրք ծնկոտք՝ զմարգարէին ի կիր առնլով զբան. գրեալ է, ասեն, թէ՝ յընտանեաց զաւակի քո զակն մի՛ արկանիցես, և զայն ո՛չ իմանան, եթէ զընտանիս զմիաբանութիւն հաւատոցն կոչէ, վասն որոյ բարձրաբարբառ փողն Եկեղեցւոյ ճշդիւ մեկնելով՝ կոչէ. և զի՞նչ ասիցէ. թէ հնար է, ասէ, ընդ ամենայն մարդկան զխաղաղութիւն կալջիք, մանաւանդ առ ընտանիսն հաւատոյ, այս է պատճառ ընտանեացն խնամածութեան, բայց թէ և գետնաքարշ ոք և մոմոչ իցէ և ի պատճառս բարեպաշտութեան կեղծաւորեսցի սիրել և հարստացուցանել զազգայինսն իւր, լուիցէ միւս ևս բանիցն, որ մեզմով խրատէ, թէ՝ մի՛ գիտասցէ ձախ քո, զի՞նչ գործեաց աջ քո: Եւ մի՛ ոք իշխեսցէ անամօթ համարձակութեամբ զչարդ զայդ առնել պատճառաւ բարեգործութեան, զի չար է կամակոր լրբութիւն, քան զմեղանչելն, քանզի եղբայրասպանս կոչին, և Գէէզի, որ դառն ագահութեամբն էր զբաղեալ, քան ընդ մեղացն, ևս առաւել վասն անամօթ լրբութեանն կրեաց պատիժս պատուհասից»:

«Արդ զգուշութեամբ պահեսցի ի միջի մերում սահմանս այս կանոնական, և մի՛ ոք խոտորեսցի յաստուածահաճոյ հրամանացս այսոցիկ, որովք պայծառանան Եկեղեցիք, բերկրին Քահանայք,

զուրախութիւն համբուրեն իշխանք և գեղջուկք, երանութիւն և բան դրուատեաց ընդունիցիմք, քանզի պարտ է մեզ ըստ գրեցելոյն՝ վկայութիւն բարի և յարտաքնոցն ընդնունել, զի մի՛ անունն Աստուծոյ և վարդապետութիւնն հայհոյեսցի, որպէս երբեմն բողոքէր մարգարէն, պարտաւորելով զԻսրայէլացիսն, թէ՝ անունն Աստուծոյ վասն ձեր հայհոյի ի մէջ հեթանոսաց, իսկ վասն բարւոք կարգաց և գործոց մերոց փառաւորեսցեն զՀայր մեր, որ յերկինս է՝ ասելով, թէ՝ սոքա են զաւակք, օրհնեալք յԱստուծոյ, և ուրախութեամբ ուրախասցին ի Տէր, հրեշտակականաւն վարուց և զյաւիտենական կենացն նմանութիւն[1]. ո՛չ կաշառք և ո՛չ ընչից մեծարանք, այլ պարկեշտութիւն և պատուիրանապահութիւն մերձեցուցանէ լինել քաղաքակից սրբոց և ընտանի Աստուծոյ, և դուք յընչասիրութեան և ի կաշառս կործանիք, և զգարշելիսն և զպատուիրանազանցս, և զզինուորս և զտգէտս հաւատարիմս համարիք ի գործ սպասաւորութեան Եկեղեցւոյ, և ջոլիրս ևս յաճախեալ տողէք զկնի ձեր զմերձաւորացն անուանելոցն, զի հովուութեամբ ձերով այդուիկ զմիսս ընտրոց ուտիցէք և զոտս նոցա փշրեցէք, կերիցուք, արբցուք՝ ասելով, քանզի վաղիւն մեռանիմք»:

«Արդ եթէ յԵպիսկոպոսս կամ յԱռաջնորդս Եկեղեցւոյ գտցի ոք յայսպիսի պատուիրանազանցութիւն... ի բաց ընկեսցի ի պատուէն իւրմէ, և բաժին նորա ընդ կեղծաւորս եղիցի, զի մարդ ի պատուի էր և ո՛չ իմացաւ, զի և այլքն երկիցեն, և պաշտօն հարկիս այսորիկ մի՛ եղիցի դատապարտութեամբ, այլ փառօք, ապա եթէ ոք յիշխանակցաց իւրոց աչառիցի այնպիսեաց, դատեսցին առաջի Աստուծոյ ընդ այնոցիկ, որք աչառեցան շնորհուկս առնելով Աննա և Կայիափայ քահանայապետից՝ աստուածամարտ ուրացողաց և պարտականաց Տէրունական արեանն, որք տալոց են պատիժս յանսպառ յաւիտեանսն»:

«Այլ մեզ եղիցի անբիծ սահմանաւ պատուիրանացս վարել զկեանս մեր պանդխտութեանս, զի յամենայնի հաճոյ լինելով Աստուծոյ, խոստացելոց բարութեանցն արժանի լիցուք շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Հօր միանգամայն և Հոգւոյն Սրբոյ տացուք գոհութիւն և փառս յաւիտեանս յաւիտենից, ամէն»:

1 Յօրինակին այսպէս պակասէր բայն գուցէ ՔԵՐԻԼ:

Նորին, ըստ որպէ՞ս պարտ է եպիսկոպոսաց զգո-շո-ղեամբ պահել զգանձս Սրբոյ Եկեղեցւոյ, և կամ որո՞ց և որպէ՞ս մատակարարել:

«Նաւահանգիստ է ամենեցուն տաճարն աղօթից և տեղի խնդրուածոց մերոց, զոր յարանունաբար Եկեղեցի սովոր եմք կոչել՝ ունելով յինքեան նաւապետ կարապետութեան զտեսուչ Եպիսկոպոսն, զի խնամոտ և արդիւնարար կամօք անշարժ ունի-ցի զսահման իւրոյ կարգին, վասն այնորիկ առհասարակ ի Քրիս-տոս հաւատացեալք ապաւէն ապաստանի ունին զսուրբ Եկեղեցի, զի զի արդարոց և մեղաւորաց է նաւահանգիստ և տեղի յուսոյ փրկութեան մերոյ, և իւրաքանչիւր ոք փութայ սրտիւ յօժարու-թեամբ զուխտս և զպատարագս և զընծայս իւր մատուցանել, իշ-խանք զգեօղս և զդաստակերտս և զգանձս ոսկւոյ և արծաթոյ, այլք յանդաստանաց և ի պաճարաց և ի հանդերձից պատուակա-նաց, ոմանք վասն անձանց փրկութեան, կէսք յաղագս սիրելեաց և ծնողաց, և զվախճանելոյն հատուցանել մասունս, զարդ և պայ-ծառութիւն կազմելով ոգւոց և մարմնոց, քանզի անսայթաք յոր-դորմամբ[1] , քանզի Տէրունական բանն զգուշացուցանէ ծառայից և պատուիրանապահաց իւրոց, թէ. «Գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ո՛չ ցեց և ուտիչ ապականեն, և ո՛չ գողք ական հատանեն և գողանան»: Եթէ՝ «Դատարկաձեռն ամենևիմբ մի՛ երևեսցիս առա-ջի իմ»: «Զեն այդրէն, ասէ, յերկրի նուիրական տուրքդ ձեր, այլ ի կառս բարձրութեան երկնից, յանսխալ և անվրէպ գանձարանին»:

Տեսանես, զի Աստուծոյ են ինչքն, քանզի իւր համարի զտուրսն մեր և ո՛չ մարդոյ ումեք, բայց միայն զի պահապան և վերակա-ցու է, տեսուչ է Եպիսկոպոսն, բազում ապա զգուշութեան պէտք են Եպիսկոպոսին և երկիւղի, զի եթէ որք զմարդկան աւանդու-թիւն կամ պարտս հոգան և աշխատութիւն կրեն՝ ըղձալով, թէ երբ վճարիցեն, և եթէ դէպ լինիցի փոքր մի ինչ ծախել, գիր առնեն և վկայս անցուցանեն և երդնուն, զի մի՛ երևեսցին թերիք և դաւողք ի գործն իւրեանց, իսկ Աստուած, որ քննիչ է խորհրդոց մերոց, և չի՛ք ինչ արարած նմա աներևոյթ, այլ ամենայն մերկապարանոց կայ առաջի աչաց նորա,... զի՞նչ պատճառս կամ հնարս հնարի Եպիսկոպոսն, յորժամ զաւանդն արքունի զգուշութեամբ ո՛չ պա-հիցէ և ծախիցէ այնոցիկ, որոց ոչ իցէ օրէն: Այսպիսի ինչ, յոր-ժամ աւելի զգեստիւք զինքն պճնիցէ և փերևեթիցի սեգութեան

1 Քանզի անսայթաք յորդորմամբ՝ թերութիւն գոյ ի սմին, ուստի և միջանկեալ:

և փափկութեան պարապելով, և ազգականացն զեղուցու տայցէ, և զկատակսն պարարիցէ, և զօրէն իշխանաց բարեկամս աննմանիս յաճախիցէ, և շնորհուկս առնելով՝ ճոխաց և մեծատանց տացէ, այս է չարաչարն վատնել զարքունիսն և պատժոց լինել արժանի: Առաքելական պատուոյ եղեր ժառանգորդ, պարտիս և վարուց նոցա նմանել, որպէս գիրք գործոց նոցա վկայեն, բաշխէին ամենեցուն, ում զիարդ պիտոյ ինչ լինէր, զի գանձն աստուածային, որում տեսուչ և մատակարարդ կարգեցար, նեղելոց և որբոց և այրեաց տուաւ յապաւինութիւն, և եթէ միանգամայն ինչ աշխարհի վտանգ հասանիցէ: Բայց յայլ իրս ամենևին չէ՛ իշխանութիւն ծախել, զի յաղագս հոգւոյ փրկութեան տուան գանձքն, արդ եթէ ոք յայլ ինչ ծախեսցէ, ընդ սեղանակապուտսն տացէ դատ յաւուրն դատաստանի, և պատիւն բարձցի ի նմանէ, զի եթէ ժամանակաւոր թագաւորի գործակալք, յանիրաւ իրս ծախելով զարքունիսն, պատիժս կրեսցեն և ի պատուոցն ի բաց անկանին, որչա՞փ ևս առաւել, որ զԱստուածայինսն վատնիցեն յանուղղայս, կրեսցեն պատիժս աստ և ի հանդերձելում, և թէ ոք աչառիցի այնպիսեացն թոյլ տալով, կցորդ եղիցի չարեաց գործոց նոցա:

Բայց և դու, ով մտացի հաւատացեալդ, որ յաղագս ի մեղաց քոց փրկութեան և ախտից զտուրս քո տաս, զի ի բաց ընկեսցես գծանրութիւն մեղաց քոց և զայլոց բազմացն այնպէս գիտես, ընդէ՞ր աճապարես զընկեցեալդ տաղտկալի բեռինսն այդրէն առնուլ, վասն որոյ մարգարէն սոսկայր, թէ. «Որպէս բեռն ծանր ծանրացաւ ի վերայ իմ, և երանի, եթէ զքոյն իսկ զբեռն առնուիր և ոչ զայլոցն, զի որչափ զառնուլն յաճախես, քան զտալն, զմեղացն քոց սաստկացուցանես զբեռինսն, զի և զայլոցն ևս, որ ընկեցեալն է ի վերայ քո, մթերես յօրէնսն և զընկերին զգրաստ անկեալ ընդ բեռամբք, չհրամայէ առնել անտես: Յարուցանելով յարուսցես, ասէ, և դու զա՞նձն գլորես անկանգնելի խորտակմամբ: Եւ եթէ զայլ ոք տեսանէիր անկեալ և բեկեալ, թերևս ողորմէիր, և զքեզ անտե՞ս առնես, յափշտակես, զլանաս զորբոցն և զայրեացն վարձս, կողոպտես զսեղանն և գարշի՞լ պատճառես ի մեհենացն:

Արդ, քեզէն տուր զիրաւդ, ո՞չ ապաքէն մինչ տաս զտուրսն ի տունն Աստուծոյ, զծանրութիւն մեղացն ընդ նմին հաւատաս ի բաց ընկենուլ և յուսաս յաւիտենական պարգևացն լինել արժանի, ապա ուրեմն և առնուլն հակառակ զնորին զմեղացն զբեռինսն այդրէն ի քեզ կուտէ, և մշտնջենաւոր տանջանացն լինի առիթ, զի՞նչ օգտիցէ այնպիսի շնորհ, որ զանձն տուժէ և կորուսանէ և ոչ գտանէ փրկանս անձին իւրոյ:

Լո՛ւր աստուածային գրոցն և ուսի՛ր բարեմտութեամբ, որոց վայելել հրամայէ այնու ընչիւք: Սեղանոյն պաշտօնեայքն, ասէ, ի սեղանոյ անտի կերակրին, և զի՞նչ է կերակուրն, յայտ առնէ: Զմեղս ժողովրդեան իմոյ, ասէ, կերիցեն, վասն այնորիկ իսկ ազդէ պատրաստ կալ, թէ՝ արիք մինչ չև էք ննջեցեալք, ոյք ուտէք զհաց ցաւոց: Տեսանե՞ս զգօրութիւն կերակրոցն, քանզի և այլուր յայտնագոյն զգուշացուցանէ քեզ զպատուելն հրաման տալով, թէ՝ հպատակ կացէք նոցա, զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց, որպէս թէ համարս տալոց են ընդ ձեր:

Արդ, ընդէ՞ր զայնպիսի ծանրութիւն ձգես ի քեզ և զտոյժս անհնարինս, որ զկէս գիշերն թերևս արբեցութեան պարապիցես, թողում ասել զայլն, ևս և յորսայս անկեալ պարպատիցեն ընդերքդ՝ թաւելովն և թառանչելովն, և ի պղտորութենէ որովայնին յորձանաց և սաստիկ գոլորշեացն, որ և զձայնն անգամ լսել պաշտաման դժուարանայցես, թող թէ հսկել և տքնութեան պարապել:

Արդ, որպէս հեռի ես ի վաստակոցն աշխատութենէ, հեռանալ պարտիս և ի վարձուցն յափշտակութենէ և քոյովն շատանալ, դու աւադիկ զանց արարեր զճառեցելովքդ որբոցն և այրեաց և տնանկաց, և որ ոք այլ կամիս տալ զկնի քո, քանզի և յաղագս նոցա ապաւինութեան է գանձն աստուածային, որպէս վերագոյնն ասացաք, զի և նոքա մասնաւորք են, զորբս և զայրիս ընդունի Տէր: Եվ թէ՝ աչք նորա ի տնանկս հային: Կարդասցեն, ասէ, առ իս, և ես լուայց նոցա:

Արդ, ընդէ՞ր զնոսա կացուցանես քեզ ոսոխս և չամաչես, զմուրոյ հացիկն թէ ունէր առաջի քո, գարշէիր թերևս և անարգանս համարէիր զառնուլն, և զինչսն անխղճաբար կորզել, և ո՛չ կասկածես, եթէ հաւասար է այնմ մուրոյ, նոքա կողկողին զտառապանսն և զնեղութիւնս և զվիշտս իւրեանց պատմելով, մինչև ցամաքին լեզուքն ի բերանս և վտանգին, զվէրս և զխեղութիւն մարմնոցն մերկացեալ ցուցանեն, երիթացեալք, բրդգզեալք, դողան, սառսռին, զի գէթ հուն այնպէս ինչ գտանել կարասցեն ծածկոյթ առնել առականացն իւրեանց: Եւ դու անիրաւ և դրուագեալ բանիւք զնոցայն շոպելով ի մեռացօնսն կամիս դարձուցանել, զի փութաս այրի առնել զկին քո և որբ՝ զորդիսն, մուրող և թափառական, զի կողկողին առ դրունս վատթարաց, և ապա յիշեցէք զբանն Տեառն Յիսուսի, թէ՝ երանելի է տալն մանաւանդ, քան զառնուլն:

Վասն որոյ աղաչեմ և վկայութիւն դնեմ ձեզ առաջի Աստուծոյ և Յիսուսի Քրիստոսի, որ դատելոցն է զկենդանիս և զմեռեալս ի

յայտնութեան և յարքայութեան, զի մի՛ ումեք եղիցի թերի գտանիլ ի մասինս յայսմիկ, զոր պատուէր տալով ուսուցաք զօգուտն և զպայծառութիւն հոգւոց և մարմնոց, և զի՞նչ օգուտ մեծագոյն, քան զայն կայցէ կամ զուարճացուցանող խնդութիւն, յորժամ Եպիսկոպոսն ըստ Աստուծոյ հաճոյիցն խնամ տանի Եկեղեցւոյն, և դասք պաշտօնէիցն գովութեամբ յորդորել զսաղմոսն գեղգեղելով հնչեցուցանիցեն, և այլքն առ հասարակ գումարեալք՝ փառս տացեն ամենայաղթ Տէրութեանն, որբք և այրիք յանձանձեալք՝ այնպիսի կարգաւ բաւական լինին բանալ զողորմութեան դրունսն, երկինք ամբարական լինելով ցողոյ, երկիր՝ ցորենւոյ, գինւոյ և իւղոյ, պաճարանոց դալարազարդութեամբ և բոլորովիմբ իսկ ըղձալի կենաց իշխանաց և թագաւորաց»:

Արտաքոյ այսոցիկ երկուց կանոնական Ընդհանրական ասացեալ թղթոց Սրբոյն Սահակայ գտանին յընդարձակ կանոնագիրս և այլ կանոնք՝ գլխակարգութեամբ յանուն նորա, զորոց զհամառօտսն յառաջ բերէ Զամչեան, օրինակ զայս:

Վասն Եպիսկոպոսաց Ի Քորեպիսկոպոսաց

Ա. Իմաստունք և եթ ձեռնադրեսցին քորեպիսկոպոսք:

Բ. Քորեպիսկոպոսք ուշ դիցեն, զի սուրբ սեղանն խորհրդոյ զարդարեալ պահեսցի, և անպակաս լիցի առաջի նորա լոյս ճրագի:

Գ. Մերձ սեղանոյն կամ յաւանդատան լիցի մկրտատուն, յորում իցէ աւազան մկրտութեան:

Դ. Կարգեալ սաղմոսերգութիւնք անխափան կատարեսցին յեկեղեցւոջ:

Ե. Ցամենայն ժամ հսկեսցեն ի վերայ պաշտամանց եկեղեցւոյ և յամենայն տարւոջ շրջեսցին ի թեմս իւրեանց տեսանել, թէ որպէ՞ս կատարին ժամերգութիւնք յեկեղեցիս, և ուղղեսցեն:

Զ. Եթէ տեսցեն զոք յերիցանց կամ ի կղերիկոսաց յուլացեալ ի պաշտամունս եկեղեցւոյ, պատուհասեսցեն:

Է. Եթէ գտցեն յեկեղեցականս զարբեցող ոք կամ անառակ և կամ պղերգ, որոշեսցեն ի կարգէ պաշտօնէից:

Ը. Զգուշասցին, զի պոռնկորդիք և երկկինք մի՛ ելցեն յաստիճան կղերիկոսութեան:

Ղ. Մի՛ իշխեսցեն կեղեքել զժողովուրդս:

Ժ. Համեստ գնացիւք վարս ուղիղս յանձին ունիցին յօրինակ այնոցիկ, որ ընդ ձեռամբ նոցա իցեն:

Վասն քահանայից

ա. Քահանայք մի՛ լիցին տգէտք կամ ցոփք:

բ. Քահանայք փոյթ տարցին տալ ուսուցանել զմանկունս իւրեանց:

գ. Գլխաւոր քահանայն միշտ կացցէ յեկեղեցւոջ, իսկ այլք՝ շաբաթ առ շաբաթ փոխանակաւ:

դ. Ի մկրտել քահանային մի՛ սպասաւորեսցէ քահանային կին ոք:

Ե. Ի լինել քահանայի՝ սարկաւագունք մի մկրտեսցեն:

զ. Պատարագիչ քահանայն կացցէ յեկեղեցւոջ ի տան գլխաւոր քահանային:

Է. Գլխաւոր քահանայն կրկին առցէ յեկեղեցական հասից:

Ը. Ցամենայն ամի յետ զատկին առցեն քահանայք զիւղ Մեռոնի ի Մեծ Հայրապետէն (այսինքն՝ յընդհանրական Կաթուղիկոսէն):

Ը. Զվարագոյր սեղանոյն մի՛ յանդգնեսցեն տալ քահանայք յառագաստ հարսանեաց և մի՛ զսկիհս յանօթ ըմպելոյ, և որ զայս արասցէ, լուծցի յամենայն կարգէ:

Ժ. Քահանայք մի՛ իշխեսցեն գործակալութիւնս առնել ի տունս աշխարհականաց:

Ժա. Գերեզմանք քահանայից լիցին առ հանգստարանի ժողովրդականաց և մի՛ վասն պատուոյ ի մէջ եկեղեցւոյ, ի տեղիս սրբութեան:

Ժբ. Քահանայք մի՛ տարցեն զսրբութիւնն ի տունս աշխարհականաց և անդ տացեն նոցա, բայց եթէ վասն հիւանդաց:

Ժգ. Ուսուսցեն զժողովրդականս զգուշանալ ի չարէ և զանուղղայսն պատուհասեսցեն:

Ժդ. Զտղայս մի՛ պսակեսցեն:

Ժէ. Սոյնպէս և զչափահասս, եթէ չիցեն հաւանեալ ընդ միմեանս:

Ժզ. Քննեսցեն զգուշութեամբ, զի մի՛ խարդախութիւն ինչ լիցի կամ բռնութիւն ծնողաց ի պսակիլ որդւոց նոցա:

Ժէ. Միաբան կատարեսցեն զպաշտօնն:

Ժը. Եթէ գիտասցեն, թէ ոք կերեալ ինչ իցէ ի տան և կամեսցի հաղորդիլ, մի՛ հաղորդեսցեն զնա:

Ժթ. Զտուրս նուիրաց, ընծայեալս քահանայից յեկեղեցւոջ, աշխարհականք մի՛ իշխեսցեն բաժանել յիւրեանս:

ի. Զհասս եկեղեցւոյ, զօրս ըստ սահմանադրութեան նախնեաց սովոր են աշխարհականք տալ քահանայից, մի՛ ծախեսցեն ընդվայր:

իա. Մի՛ թոյլ տացեն քահանայք գիներբուս առնել ի սուգս մեռելոց և կամ կոծ դնել և աշխար առնել:

իբ. Քահանայք զյանցուցեալսն ի ժողովրդենէ իւրեանց մի՛ առանց քննութեան մերժեսցեն ի բաց և մի՛ պատուհասեսցեն զժողովուրդս այլոյ քահանայի:

իգ. Կրօնաւորք և վանականք մի՛ խառնեսցին յիրս աշխարհականաց, այլ յամենայնի հրաժարական կեանս ունիցին:

Գլուխ Ը.

Երկրորդ ժողովն յԱշտիշատ յա-ո-րս Մեծին Սահակայ և Սրբոյն Մեսրովբայ վասն ընդո-ունելոյ զժողովն Եփեսոսի և հերձելոյ զգիրս Թէոդորոսի Մամո-ւեստացւոյ՝ վարդապետին Նեստորի

(Ամք Տեառն 435): Զժողովն երկրորդ յԱշտիշատ վասն ընդունելոյ Հայաստանեայց զժողովն Եփեսոսի, մի անգամ գտանեմք արարեալ Սրբոյն Սահակայ առ ժամանակակից պատմագիրս մեր և ոչ երկիցս, որպէս դնէ Միք. վարդապետ Զամչեան յամս Տեառն 432 և 435, որ թէև վկայ կոչէ այսմ յայտնի վրիպանաց իւրոց զանուանս յիշեալ ազգային մերոց պատմագրաց, այն է՝ Մովսիսի Խորենացւոյն և Կորնոյ՝ նորին ազգակցի, բայց զբանս նոցին ոչ յառաջ բերէ ըստ սովորութեան իւրում ի հաստատութիւն բանից իւրոց, զի մի՛ յայտնեսցին սխալանք իւր և անհաւաստի տեղեկութիւնքն, յառաջ բերելս նորա ի բանից սիւնհոդոսաց լատինացւոց, որպէս ինքն ասէ, և երևեսցի ստութիւն երկիցս նամակագրելոց սրբոց հարց Ժողովոյն առ այն առ մերս Սուրբ Սահակ, զորմէ ստորև:

Յերկուց անտի պատմագրաց մերոց, ժամանակակցաց Սրբոյն Սահակայ՝ Խորենացին Մովսէս ըստ իւրում համառօտագրութեանն զայսչափ ինչ գրէ յաղագս ժողովոյն Եփեսոսի, առանց յիշատակելոյ և զժողովն առնել Սրբոյն Սահակայ և Մեսրովբայ առ այս յԱշտիշատ, թէ. «վասն զի ոչ հանդիպեցան յայնմ ժողովի (յԵփեսոս) մեծն Սահակ և Մեսրովբ, գրեն առ նոսա Կիւրեղ Աղէքսանդրացի և Պրոկղ Կոստանդնուպօլսի և Ակակ Մելիտինոյ եպիսկոպոսք՝ զգուշացուցանելով զնոսա, քանզի լուան, եթէ ոմանք ի չարափառացն

աշակերտաց, առեալ զգիրսն Թէոդորոսի Մամուեստացւոյ, զվարդապետին Նեստորի և զաշակերտին Թէոդորի, գնացին յաշխարհն Հայոց: Ապա եկեալ թարգմանիչքն մեր... գտին զմեծն Սահակ և զՄեսրովբ յԱշտիշատ Տարոնոյ և մատուցին զթուղթսն և զկանոնս Ժողովոյն Եփեսոսի՝ վեց սահմանեալ կանոնաւ գլխով, և զստոյգ օրինակս գրոց» (այսինքն՝ Աստուածաշնչին): Գիրք. Գ. ԿԱ:

Իսկ Կորիւն, որ մի ի յիշեալ թարգմանչացն էր, բերողաց զթուղթս ժողովական հարց ի Կոստանդնուպօլսոյ առ Սուրբն Սահակ, պարզաբար իսկ գրէ զերկրորդ ժողովոյն Աշտիշատայ, ուր սուրբ հարքն մեր, որպէս ընկալան զսուրբ ժողովն Եփեսոսի ընդդէմ Նեստորի մարդադաւանին, նոյնպէս և հերքեցին զգրուածս Թէոդորոսի Մամուեստացւոյ, յասելն:

«Յայնմ ժամանակի բերեալ երևեցան ի Հայաստան աշխարհին գիրք սուտապատում՝ ընդունայնախօս աւանդութիւնք առն ուրումն Հոռոմի, որում Թէոդիոս անուն, վասն որոյ Սիւնհոդոսական Հայրապետացն Եկեղեցեաց սրբոց նշանակեալ ազգ առնէին ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ և Մաշտոցի, և նոցա ճշմարտասէր փութով զայն ի միջոյ բարձեալ՝ աշխարհահալած արտաքոյ իւրեանց մերժեցին, զի մի՛ ի լուսաւոր վարդապետութիւնն ծուխ սատանայական յարիցէ»:

Զայս հաստատէ և Յովհան Իմաստասէրն կոչեցեալ հայրապետ ի պատմութիւն ազգային Ժողովոց, գրեալս յինքենէ՝ ի Սրբոյ Լուսաւորչէ անտի մերմէ մինչև ցինքն, որ արար զժողովն ի Մանազկերտ՝ այսպես ասելովն:

«Երկրորդ Ժողով արար սուրբն Սահակ և երանելին Մեսրովբ յԱշտիշատ, յորժամ հասին թուղթքն ի Կիւրղէ և ի Պրոկղէ, որք յԵփեսոս երկու հարիւրքն ժողովեալք, յորժամ զՓառքն ի բարձունս կարգեցին՝ յաճախելով ի բանս հովուացն՝ պարսպելով ընդդէմ Նեստորի անիծելոյ[1]»:

Յայսցանէ ահա յայտնի երևի, զի Սուրբն Սահակ ոչ եթէ ի Մաքսիմիանոս պատրիարգէն ընկալեալ էր զթուղթ և զկանոնս սուրբ ժողովոյն Եփեսոսի, այլ ի Կիւրղէ և ի Պրոկղէ ընկալաւ զգիրս և զկանոնս, ընդ որ և ինքն, հանդերձ Մեսրովբաւ երանելեաւ, երկրորդ անգամ ժողով արարեալ յԱշտիշատ Տարոնոյ, ընկալաւ զկա-

1 Այսօրինակ վկայի դարձեալ և ի պատմութիւնս Ժողովոց, որ գրեցաւն յետ մահուան Մովսէս կաթուղիկոսի ի Ժողովն Դունայ, յորում էին Թէոդորոս՝ Մարդպետական եպիսկոպոս և այլք, զոր ունիմք յառաջ բերել ի տեղւոջ իւրում(ի ձեռագիրս): Վկայէ այսմ և Մխիթար Գօշ ի թուղթն իւր առ Զաքարէ սպասալար յաղագս Ժողովոց Հայաստանեայց Եկեղեցւոյ(ի ձեռագիր օրինակին):

նոնս սրբոյ ժողովոյն, և խոստովանեցին ըստ Խորենացւոյն բանի՝ Մի Որդի Աստուծոյ՝ զՏէր մեր Յիսուս Քրիստոս, և Աստուածածին՝ զԱմենասուրբ կոյսն Մարիամ, և մերժեցին զՆեստոր և զաղանդ նորա, մերժեցին նոյնպէս և արտահալած արարին ի Հայաստան աշխարհէ ըստ գրելոյն Կորնոյ՝ զգիրս Թէոդորոսի Մամուեստացւոյ, և զՓառս ի բարձունսն ընկալան և կարգեցին ի ժամակարգութիւնս Հայաստանեայց Եկեղեցւոյ:

Ուստի երևի ի վերոգրելոցս հաւաստեաւ, եթէ Միքայէլ Զամչեան յանստոյգ աղբերաց իցէ առեալ զսուտ տեղեկութիւնսն և խանգարեալ այսպէս զստոյգ պատմութիւն Ժողովոց Հայաստանեայց Եկեղեցւոյ, որ ընդդէմ ժամանակակից պատմագրաց ազգիս երկիցս դնէ արարեալ ժողով Սրբոյն Սահակայ յԱշտիշատ բաց յառաջնոյն, վասն ժողովոյն Եփեսոսի, և թէ գրեալ իցեն թուղթս նախ Մաքսիմիանոս և ապա Պրոկղ եպիսկոպոսք Կոստանդնուպօլսոյ առ մերն Սահակ հայրապետ: Որում և անընտրողաբար հետևող երևի Միքայէլ Սալլանթեան՝ դնելով յաղիւսակի պատմութեան Ժողովոց երկրորդ և երրորդ Ժողով յԱշտիշատ յանուն Սրբոյն Սահակայ (ի տպագրեալ աղիւսակն):

Գլուխ Թ.

Առաջին Ժողով ի Շահապիվան, ուր Եղան կանոնք փոփոխանաց վասն օրինապանցից

(Ամք Տեառն 447): Ի միջոցի եօթն ամաց մահուան Սրբոյն Սահակայ և Մեսրովբայ ի սկզբան վրդովման սասանութեան համօրէն Հայաստանեայց յերեսաց Յազկերտի՝ արքային Պարսից, յորում ժամանակի և բարձեալ էր ի նորոյ թագաւորութիւն Արշակունեաց, մտեալ էին արդէն յոմանս յեկեղեցականս Հայոց և յաշխարհականս մեծամեծ անկարգութիւնք ի տեղիս տեղիս, սակս որոյ և վարդապետք ժամանակին և նախարարք ազգիս հասեալք առ Յովսէփ կաթուղիկոս, որ յաշակերտութենէ սրբոց թարգմանչացն էր, խնդրեցին ի նմանէ առնել ժողով ի դարման չարեացն յեօթներորդում ամի Հայրապետութեան նորա:

Ուստի նա, խորհրդով աւագանւոյն զնորընծիւղ չարեացն կամեցեալ ի բաց խլել զորոմն ի բազմաց սրտից, արար ժողով ի Շահապիվան՝ մերձ յաւան Բագուտն, որ ի Բագրևանդ գաւառի, ի սահմանակցութեան Ծաղկոտն գաւառի, ի տարեմտի Հայոց յամ-

սեան Նաւասարդի, յաւուր տօնի Սրբոյ Կարապետին, յորում էին քառասուն եպիսկոպոսք՝ ըստ գրելոյ Իմաստասիրին Յովհաննու ի պատմութեան Ժողովոց, և երիցունք, և վանականք, և սարկաւագք ուխտ եկեղեցւոյ, որոյ զպատմութիւն և զկանոնս, եդեալս ի նոցանէ ի նոյն լրութիւն առաքելական և Նիկիական կանոնաց հաստատութեան, որպէս գրի ի սկիզբն նախադրութեան յիշեալ կանոնացն, ամբողջութեամբ յառաջ բերեմք աստանօր ի ձեռագիր կանոնագրաց, առանց երկրորդելոյ մեր զայն:

«Սահմանք Ի կանոնք, զոր եդին Վարդապետք Հայոց ի լրո-Ղի-ն առ-ավելական Ի Նիկիական կանոնաց Հաստատո-Ղեան»

Նախադրութիւն

«Պարտ և պատշաճ է նաւավարին հոգալ զիրս նաւին և զշաւիղս ծովուն նկատել և ըստ հողմոյն յաջողութեան գնալով ի վերայ մկանանց ծովուն, նոյնպէս և զօրավարին յամենայն ժամ զգօրսն տեսանելով և ի հանդիսի անցանել զայրընտիր, զձի ընտիր, զզէն զանձամբ և ապա սպառազէն զերիվարաւն, ակն ունել ճակատուն յաղթող գտանիլ և առնուլ զպսակն ի թագաւորէն, տպա առաւելապէս արժան է վարդապետաց Եկեղեցւոյ, հովուաց և առաջնորդաց արդարութեամբ և ստոյգ պատուիրանին Աստուծոյ կենդանւոյ, յամենայն ժամ յօրէնսն Տեառն խորհել ի տուէ և ի գիշերի և զմանկունս Եկեղեցւոյ նորափետուր զարդարել ի Տէր:

Յետ փոխելոյն յերկրէս վարդապետաց հարցն արդարոց և ճշմարիտ օրէնսդիր առաջնորդացն, մանաւանդ սրբոյ քահանային Սահակայ Հայոց Կաթուղիկոսի և հոգելից, հոգեկիր ճշմարիտ վարդապետին Մեսրովբայ, որ լուսաւորեաց զերկիր Հայոց, ի փոխիլ նոցա յերկրէս, լինէր եղծումն և քայքայումն կարգաց և օրինաց սրբոյ Եկեղեցւոյ, որպէս տեսանէր յառաջագոյն ի տեսլեան քահանայապետն Սահակ, և կամ ևս յառաջ՝ մեծն Գրիգորիոս, և բազմանային, որք յաճախէին ի գործս պղծութեան և յետս ընդդէմ գնացից, ի ցամաքել սիրոյն բազմանայր անօրէնութիւնն, և ոչ ոք էր, որ քաղէր զորոմն և կորէր զգաղձն վնասակար, քանզի արմատացեալ էր սէգն և տարածէր օր աւուր և լինէր յաճախումն մծղնէից, կնահանից, պոռնկաց, անձնակամաց, գողոց և ամենայն չարագործաց յաշխարհին Հայոց ի մէջ տանն Թորգոմայ, և լինէր սուգ և տրտմութիւն, որ էին ի ժամանակին Վարդապետք, Եպիս-

կոպոսք և երիցունք և ոյք ունէին զուխտ սուրբ՝ պաշտօնեայք Քրիստոսի և մանկունք Եկեղեցւոյ սրբոյ:

Այլ և յուխտէ քահանայիցն ոչ գնային ըստ սրբութեան ճանապարհին, և մանաւանդ, զի ոչ էր ի ժամանակին յայնմիկ իշխանութիւն ի ձեռս նախանձայոյզ ազգին Մամիկոնէից, զի հնազանդեալ էին համարձակելոց Պարսկային թագաւորութեան, զի թէպէտ և հեծէին և մռնչէին ի նմանութիւն կորեանց առիւծոյ Վարդանն Մամիկոնեան ազգաւ իւրով հանդերձ եղբարբք, այլ կային իբրև ի գառագղի արգելեալք և ակն ունէին վերին օգնականութեանն և տային զիշխանութիւնն ի ձեռս նոցա:

Ապա օր աւուր բղխէ զբան և գիշեր գիշերի ցուցանէ զգործսն արդարութեան, բան առ բան հասանէր, և մարդ ի մարդոյ հնչիւն լինէր յիւրաքանչիւր լսելիս, և գային, ժողովէին ի հրամանէ միաբանութեան յեղեալ կէտն ի Շահապիվանի՝ բանակեցեալ թագաւորացն Հայոց ի ժամս նորաբեր Տօնին:

Եւ լինէր այս ի ԻԶ. ամի թագաւորութեանն Յազկերտի՝ Պարսից արքայի, և Վասակայ Սիւնւոյ՝ մարզպանին Հայոց, և Վահանայ Ամատունւոյ հազարապետի և Վրուայ Խոռխոռունւոյ Մաղխազի, և գային, ժողովէին Եպիսկոպոսք քսան և երիցունք բազումք, սարկաւագք և նախանձայոյզ պաշտօնեայք Քրիստոսի և համօրէն ուխտք Եկեղեցւոյ՝ իշխանք, գաւառապետք, գաւառակալք, պետք, բռնաւորք, զօրագլուխք, հարիւրաւորք, ազատք, կուսակալք կողմանց կողմանց մեծ աշխարհին Հայոց, նախարարք ամենայն առաջի Վասակայ մարզպանի և Վահանայ հազարապետի և Վրուայ Մաղխազի, և առաջի գլխաւոր եպիսկոպոսաց՝ Ղազարայ, Տաճատայ, Արտակայ, Գատայ, Եփրեմի և այլոց բազմաց երիցանց գլխաւորաց՝ Յովսէփայ, Յովհաննայ, Մեղտեայ, Երեմիայի, Ասպարուկայ, Դանիէլի, Ղևոնդի սրբոյ, Եղիշէի՝ դրան երիցու, և այլոց սրբասէր քահանայից, որք էին նախանձախնդիր օրինացն՝ առաջի աւագ նախարարացն քաջին և կորովւոյն Վարդանայ Մամիկոնենւոյ, և Արշաւրայ Կամսարականի և Մանաճիհրի Ռշտունւոյ՝ սպարապետին Հայոց, և Զկայ Դիմաքսենի և այլոց նախարարաց, որք միաբանեալք էին և հաւանեալք արդար օրինաց և քրիստոսական պաշտամանն, և միաբան բարբառէին այսպէս, եթէ.

«Զեղեալ զկարգն սրբոյն Գրիգորի և զՆերսեսի, և զՍահակայ, և զՄաշտոցի, դուք այդրէն հաստատեցէք, և այլևս լաւ, որպէս ձեր կամք են, և մեք ախորժելով յանձին ունիմք, զի կարգք Եկեղեցւոյ թուլացան, և մարդիկ յանօրէնութիւն դարձան, արդ, ո՛ր

օրէնք Աստուծոյ հաճոյ են և Եկեղեցւոյ, դուք զայն կարգեցէք, և մեք հնազանդիմք, և եթէ ոք հաստատուն ոչ պահէ զկարգս օրինացն Եպիսկոպոս կամ երէց, կամ ազատ, կամ շինական՝ պատուհասեսցի և տուգանս տացէ»:

Եւ զայս ասացեալ քահանայապետիցն, եթէ Առաքելականն և Նիկիականն հաստատեալ կացցէ, որպէս և էն իսկ, և մեք հնազանդեմք, բայց որ ինչ պիտոյ է ի լրութիւնս ի նոյն կանոնս, և մանաւանդ ի մէջ տանս Թորգոմայ՝ հաստատեսցի: Ապա կարգեցին և եդին այսպէս»:

Սահմանք Ի կանոնք, զոր եդին վարդապետք Հայոց՝ ի նոյն լրո-թի-ն Առաքելական Ի՝ Նիկիական կանոնաց Հաստատո-թեան

Ա. Եթէ եպիսկոպոս ոք գտցի ի պղծութեան և կամ ի պոռնկութեան և կամ զինչ և իցէ վատթարութեան, և զառաքելական պատիւն անարգեաց և զՍուրբ Աթոռն, այնպիսումն ասէ գիր՝ ընդ գողս ընթանայիր, ընդ շունս դնէիր զվիճակ քո, և վկայութեամբ ի յայտ եկեսցէ, յաթոռոյն ի բաց մերժեսցի և զքահանայութիւնն մի՛ պաշտեսցէ, ՌՄ. դրամ ի Սուրբ Աթոռն տուգանեսցի և անձին իւրում լիցի մեղադիր, քանզի՝ մարդ ի պատուի էր և ո՛չ իմացաւ, և զտուգանն կարօտելոց բաշխեսցեն, զի պարտ էր նմա յամենայն ժամ յօրէնս Տեառն խորհել և մի՛ զարտուղի անկանիլ, և մի՛ աշակերտեալք զնոյն մատուսցեն:

Բ. Երէց, որ գտցի ի պղծութիւն կամ ի պոռնկութիւն կամ յայլ վատթարութիւն, և վկայութեամբ իրքն ի մէջ եկին, զերիցութիւնն մի՛ պաշտեսցէ, երեք հարիւր դրամ տուգանեսցի յաղքատս, և նա ի դպրաց կարգի կացցէ, ապա եթէ ի դպրութեան ի նոյն պղծութիւն գտցի, ի կարգէն ելցէ և ի դպրութենէն կենաց, մինչև ի կարգ ուղղութեան եկեսցէ ապաշխարութեամբ: Եւ տեսեալ եպիսկոպոսին զճանապարհն նորա՝ ի դպրաց կարգ մտցէ: Երիցու և սարկաւագի կանոն՝ այդ կացցէ, զի եկեղեցի և սուրբ սեղանն, մանաւանդ Տէրունական խորհուրդն զանարատս ընդունի, զի մի բարկութիւնն Աստուծոյ զարթիցէ ի վերայ երկրի ի ձեռն առաջնորդի:

Եթէ կնաւ երէց գտցի ի պղծութեան և կամ յայլ գործս, և ստուգեցաւ վկայիւք, քահանայութիւնն լուծցի, և յեկեղեցւոյ բաժնէ հեռասցի, երեք հարիւր դրամ տուգանս տացէ ի կարօտեալս. թէ՛ երէց, թէ՛ սարկաւագ՝ կանոն այդ լիցի, և նոքա ի զինուորաց կարգի կացցեն ի բաժնի և ի հարկ արքունի և ընդ պաշտօնեայս մի՛ խառնեսցին: Ապա եթէ կին երիցուն կամ սարկաւագին ի շնութեան

գտցին, ընտրոյ տեարք նոյն լիցին. կա՛մ զեկեղեցին ընտրեսցեն և զքահանայութիւնն, կա՛մ զկինն. եթէ զքահանայութիւնն, զկինն ի բաց թողցէ, ապաշխարութիւն խիստ ի վերայ դիցեն:

Ապա թէ դուստր քահանայի գտցի ի պոռնկութեան, եկեղեցւոյ բաժնի մի՛ իշխեսցէ, և խիստ ապաշխարութիւն դիցեն և պատուհաս, և որդւոց երիցու նոյն լիցի. եթէ երէցն մեռցի, կինն առն չիշխէ լինել, նոյնպէս և երէցն: Եւ աղախին պոռնիկ ի քահանային տան մի՛ լիցի, զի սրբութիւն Տեառն է:

Գ. Եթէ ոք կին ունիցի և պոռնկիցի և զկարգ ամուսնութեանն սրբութեամբ ոչ պահիցէ... զայնպիսին կշտամբեսցեն գլխաւորք գանիւք և բանիւք օգտակարօք և յեկեղեցւոյն հանցեն...: Եթէ ազատ է և գան չմարթի հարկանել, ի տուգանն և յապաշխարութիւնն յաւել երկու հարիւր դրամ յեկեղեցի, երկու հարիւր դրամ կարօտելոց, երկու ամ ապաշխարութեամբ, ապա մտեալ յեկեղեցի՝ ընդ ընկերս խառնեսցի: Եթէ շինական, գան յոլով արբցէ, հարիւր դրամ տուգանս տացէ յեկեղեցի և յաղքատս և մի ամ ապաշխարեսցէ... մտցէ յեկեղեցի. եթէ այր, եթէ կին՝ կանոն այդ լիցի...: Այս կանոն լիցի նաև՛ կուսի, և՛ երիտասարդի ևն:

Դ. Եթէ թողցէ ոք զկին իւր առանց բանի պոռնկութեան կամ վասն արատոյ ինչ ի մարմնի, զորդիսն և զկեանսն և զհող և զջուր բաժանեսցեն, և զկէսն կնոջն տացեն. և եթէ կամք են այլում լինել, համարձակ զբաժինն կալցեն և զարքունի հարկ ողջ արասցեն, և այրն, որ եթող, եօթն ամ ապաշխարեսցէ, և յեկեղեցի տուգանս տացէ. եթէ ազատ է, երեք հարիւր դրամ, եթէ շինական, գան արբցէ և հարիւր դրամ՝ փոխանակ զօրհնութեան պսակն խոտելոյ:

Ե. Եթէ կին արար ոք, և կինն ամուլ պատահեաց, և այրն հանցէ վասն ամլութեանն, որ ինչ կնոջն բերեալ էր ի տունն... առնուլ իշխեսցէ և գնալ. եթէ քան զամլութիւնն այլ արատ չկայ, տուգան ևս տացէ կնոջն վասն անարգանացն, եթէ ազատ է՝ հազար երկու հարիւր դրամ, եթէ շինական՝ հազար դրամ...:

Ապա եթէ առնն յառաջագոյն խորհուրդ էր զիւր կինն թողուլ և զայլ առնուլ և կամ պոռնկեալ էր ընդ նմա, հարիւր դրամ այրն տացէ յեկեղեցի և ապաշխարութիւն առնն երեք ամ ընդ ունկնդիրս, մի ամ ընդ ձեռամբ, մտցէ յեկեղեցի...:

Զ. Անզգամ կանանց, որ յառնէ ելանիցեն, զկինն կալցեն և զայրն տացեն...: Ապա եթէ այրն շնաբարու է կամ պոռնիկ... գանիւ և խրատու կշտամբեսցեն զայրն և հնազանդեցուսցեն. եթէ ազատ է, տուգանօք զայրն ի կարգ արկցեն. եթէ դիւրաւ փոխեսցի այրն, կինն պաշտեսցէ զնա:

Է. Որ բռնութեամբ և անիրաւութեամբ առևանգեն, կալցեն զկինն և տացեն ցհայր և ցմայր և տուգան տացեն փոխանակ անարգանացն. թէ՛ ազատ է, և թէ՛ շինական՝ հազար դրամ...: Ապա եթէ սուտ փեսայն ընդ աղջկանն պոռնկեցաւ առանց պսակի, տուգան կալցեն յեկեղեցի, և երեք ամ ապաշխարեսցէ: Ապա եթէ երէց ոք գաղտ պսակ եդ առանց հօր և մօր աղջկանն, երէցն զքահանայութիւն մի՛ իշխեսցէ վարել և հարիւր դրամ տուգանեսցէ կարօտելոց, և պսակն անվաւեր եղիցի: Ապա եթէ յետ խռովութեան և տուգանաց դարձեալ ի հաւանութիւն գան... և յառաջ պոռնկեալ իցեն, պսակ մի օրհնեսցեն, այլ երկրորդի ուռ օրհնեսցեն, ապա եթէ կուսանք կացեալ իցեն, պսակ օրհնեսցի: Թ՛է ազատ, թէ՛ շինական՝ կանոն այդ կացցէ:

Ը. Եթէ ոք ի կախարդութեան գտցի կամ յուրացութեան և կամ յայլ ի չար գործս, և ի զղջումն և յապաշխարութիւն ոչ եկեսցեն, ըստ գրոց հրամանի քարկոծ լիցին, ապա եթէ խոստովանեսցի, մինչև ցմահ իւր ապաշխարեսցէ, տասներկու ամ ընդ ունկնդիրս. և մտեալ յեկեղեցի՝ ելցէ ընդ ապաշխարողսն, մի լոկ ի Քառասնեորդսն, այլ՝ յամենայն ժամ և քննեալ հետքն ի ձեռն ողորմութեան բազում ինչ ծախել ի կարօտեալս վասն փրկութեան անձին իւրոյ, ջերմ արտասուօք զյետին թոշակն առցէ:

Ը. Որք ի հարցուկս և ի դիւթս երթան, տուգան կալցեն, եթէ ազատ է՝ երկու հարիւր դրամ, եթէ շինական՝ գան արբցէ տասն և հինգ կրկին, հարիւր դրամ տուգան կալցեն և կարօտելոց տացեն, երեք ամ ապաշխարեալ՝ հաղորդեսցին: Ապա եթէ եպիսկոպոս կամ երէց երթեալ իցէ ի հարցուկս, և ստուգեսցին իրքն երկու կամ երեք վկայիւք,... եպիսկոպոսն յեպիսկոպոսութենէն անկցի, և երէցն՝ յերիցութենէն, հազար դրամ եպիսկոպոսն տուգանեսցի, և հինգ հարիւր՝ երէցն...: Ապա եթէ ի կարգէ պաշտօնէիցն և յուխտէ աբեղայից երթեալ իցեն ի հարցուկս կամ որդի երիցու, զպատուհաս և զտուգան և զապաշխարութիւն աշխարհականացն կրեսցեն և ի կարգէ պաշտօնէիցն ի բաց ելցեն: Եթէ այր, եթէ կին՝ կանոն այդ լիցի:

Ժ. Որ ի դիւթութեան գտցին, ԺԲ կրկին գան արբցեն, խանձեսցեն, մրեսցեն, ոսկերս արկցեն և յուրկանոց տարցեն, և երկու ամս աղաստցէ գոդեացն...: Եթէ ազատ է և ի գոդենոց չերթայ, երեսուն դրամ ի գոդինս տացէ և ինքն երկու ամ յիւր եկեղեցւոջն ապաշխարեսցէ և հաղորդեսցի և այլ մի՛ մեղիցէ:

ԺԱ. Որ կոծ դնեն մեռելոց և անյուսութեամբ լան, թողեալ զյուսով և զօրհնութեամբ հրաժեշտն...: Եթէ յազատաց կամ ի չի-

նականաց առաքելական կանոնիս ընդդիմացաւ և կոծ եդ, նզովեսցին դնելիքն և կոծողքն և ամ մի յեկեղեցի մի՛ մտցեն. և տուգան կալցին զազատին հարիւր դրամ և չինականին՝ յիսուն...:

ԺԲ. Որ զկին հօր որդի ունիցի... ո՛չ ընդունի զնա կանոնս և ի սուրբ եկեղեցի մի՛ մտցէ, և յամենայն ժողովոյն նզովեսցին մինչև ապաշխարեսցեն. Է ամ ընդ ունկնդիրս, Գ ամ ընդ ձեռամբ, Ծ դրամ աղքատաց, Ծ դրամ յեկեղեցի, քննեալ զվարսն՝ հաղորդեսցի: Եթէ հայր զորդւոյ կին ունիցի, զգոյն պատուհաս և նզովք, եթէ եղբայր զեղբօր՝ նոյն պատուհաս: Եւ թէ զջերմ հարազատի և զազգականի՝ մի՛ ոք իշխեսցէ առնուլ. եթէ կնոջն կամք լիցին, զպատուհաս և զտուգանս և զնզովս զնոյն կրեսցէ, բայց յապաշխարութիւն կալցեն զկինն և յուրկանոց տացեն, և Ժ ամ աղասցէ գոդեացն, ապա եթէ ազատ է, Յ դրամ տուգան տացէ:

ԺԳ. Որ զազգականն կին առնու... զքոյր կամ զքեռորդի կամ զհօրքոյր կամ զայլ ոք յազգականին իւրում մինչև ի չորրորդ ծնունդն՝ կին առնել մի՛ իշխեսցէ, զի մի՛ պատառումն եղիցի սուրբ հաւատոյն, քանզի բարկութիւն անձին իւրում գործէ այնպիսին, թերակատար եղիցի, և զաւակ անօրէն անկողնոց մի՛ բողբոջեսցի...: Արդ, եթէ ոք ընդդիմասցի օրինացս և հաստատեալ կանոնիս և ի հեթանոսութիւն և ի հրէութիւն կործանեսցի, ընդ նոսին լիցի բաժին նոցա և յեկեղեցւոյ հեռացեալ լիցի...: Եւ եթէ այնպիսեացն պսակ ոք օրհնեսցէ կամ ի հարսանիս երթիցէ, կցորդ եղիցի գործոց նոցա և ի կարգէ պաշտօնէիցն հեռասցի...: Եւ որ խոտորեցաւն յօրինաց և յեկեղեցւոյ, եթէ դարձցի ի զեղծ ամուսնութենէն, ի ձեռն մեծամեծ տրոց մինչև զկէս ընչից և զկէս իրաց և զկենաց հոգւոց իւրեանց տացեն ի կարօտեալս և ի վշտագնեալս, յԵկեղեցի զաւուրս կենաց իւրեանց ապաշխարեալ ի վախճանի իւրում լիցի արժանի հաղորդելոյ: Եւ գլխաւորք եկեղեցւոյն, որ ի խորհրդին էին և որ զպսակն օրհնեաց, Շ դրամ եպիսկոպոսն, Մ՝ երէցն տուգանեսցեն և ապա մատիցեն յերիցութիւն...:

ԺԴ. Եպիսկոպոս ոք կամ երէց կամ սարկաւագ կամ մի ի պաշտօնէից՝ տան տիկին անուն մի՛ իշխեսցէ առնել, որպէս սովորութիւն է մծղնէից, ապա եթէ ունիցի ոք և վկայութեամբ ի յայտ եկեսցէ, ի կարգէն, յորում է՝ անկցի ի բաց և համարեսցի որպէս զամպարիշտն և զմաքսաւորն, զի սուրբ եկեղեցի և խորհուրդն Տէրունական զանարատն ընդունի, զի սպասաւորք ի ձեռն նորա փրկեսցին:

ԺԵ. Զի եթէ ոք ի պաշտօնէից և յուխտէ մանկանց ի հաւատս կայցէ, կամ մենակեաց կամ զինչ և է, զսրբութիւն կամ զկուսու-

թիւն պահել և կենացն յաւիտենից հասանել, ընդ ընկերս կայցէ ընդ ճշմարիտս, և ի միմեանց չինեսցին սիրովն Քրիստոսի...: Որ միայնակեաց կամի լինել և կուսան և զհաբեղայութիւն յանձն առնուլ, զկանոնդ զայդ կալցէ, ամենայն, որ ի հաւատս կացցէ:

ԺԼ. Առանց կամաց գլխաւոր եպիսկոպոսի աշխարհին՝ եպիսկոպոսք մի՛ լիցին, և վանաց երէց կամ անապատաւոր առանց գաւառի եպիսկոպոսին չիշխէ լինել: Եպիսկոպոս ոք կամ երէց, կամ ազատ, կամ չինական վասն առաջնորդս կարգելոյ և հովիւս պատրաստելոյ եկեղեցւոյ և օրինադիրս... թէ կարի յանարգաց ոք է և յարհամարհելոց և միայն նախանձաւոր սրբութեանն և օրինացն է, յառաջ կալցեն...:

ԺԷ. Եթէ ոք նշխարս մարտիրոսաց կամիցի դնել, առանց եպիսկոպոսի աշխարհին մի՛ դիցէ...: Եթէ ոք ի սուրբ տեղեացն մարտիրոս բերէ, առ եպիսկոպոսն բերցէ վկայութեամբ և թղթով եպիսկոպոսացն՝ ուստի բերին, և իւրեանց եպիսկոպոսի հրամանաւ դիցեն՝ ուր արժան է: Եւ եթէ ոք սեղան կամի կանգնել Տէրունական խորհրդին, առանց եպիսկոպոսին մի՛ իշխեսցէ...:

ԺԸ. Եթէ վարդապետի ուրուք կամ զաշակերտ, կամ զժողովրդական, կամ զքահանայ նզովեալ իցէ կամ բանադրեալ, այլոց տեղեաց վարդապետ կամ եպիսկոպոս, կամ քահանայ մի՛ իշխեսցէ զանիծեալն օրհնել և զբանիւ կապեալն լուծանել, բայց թէ հաւատով և ի սէրն հոգևոր յուղղութիւն եկեսցէ...:

ԺԹ. Եթէ ոք ի մծղնէութեան գտցի՝ կամ երէց, կամ սարկաւագ, կամ ի հաբեղայից, քահանայութիւնն լուծցի, աղուէսադրոշմ ի ճակատն դիցէ, և ի տեղի մի ճգնաւորաց յապաշխարութիւն տացեն, ապա թէ դարձեալ ի նոյն գտցի, զջիղսն կտրեսցեն զերկոսեան և ի գողենոցն տացեն...:

Ի. Որ յուրուք ժողովրդենէ մծղնէ գտցի, և երէցքն գիտեն և ո՛չ յայտնեն եպիսկոպոսին, եթէ յայտնի լիցին, թէ գիտէր երէցն զգործս նոցա և ո՛չ բողոքեաց եպիսկոպոսին, զպատուհասն, զոր եդին կանոնքս, կրեսցեն...: Ապա եթէ երէցն ասիցէ ցեպիսկոպոսն և յայտ առնէ, և եպիսկոպոսն կարասի առնու և ծածկէ կամ աչառի... այնպիսին նզովեալ եղիցի և յեկեղեցւոյ հեռասցի: Եթէ իշխան ոք ծածկեաց և թագոյց զմծղնեայսն կամ վասն կարասւոյ, կամ վասն ակնառութեան... նոյնպէս նզովեալ եղիցի...: Կամ իշխան ոք կամ ընտանիք նորին գտցին ի մծղնէութեան, նոյնպէս նզովեալ եղիցին և ի հրապարակ մի՛ իշխեսցեն գալ...[1]:

1 Այս ամենայն քսանեքին կանոնք, եղեալք յառաջին ժողովն Շահապիվանու, կոչեցեալք Կանոնք տուգանաց վասն օրինազանցից, գրեալք են օրինակօք

Եւ եղեալ միաբան քահանայապետից և քահանայից և ամենայն հաւատացելոց զկարգս զայս և զկանոնս և ընթերցեալ առաջի ամենայն զօրացն և զօրագլխաց և հաճէին հաւանութեամբ ամենայն աշխարհն Հայոց՝ ասելով միաբան զօրացն և զօրագլխաց, իշխանացն և նախարարաց, ազատաց և շինականաց, թէ. «Այո՛,այո,՛կարգ և օրէն այդ կացցէ, ինչ որ վասն մեր օգտի է և փրկութիւն ոգւոց մերոց, իշխանութիւն եկեղեցւոյ Աստուծոյ, և մեզ առաջնորդ և առիթ ի կեանսն յաւիտենից, ամէն:

Գլուխ Ժ.

Երկրորդ ժողով յԱշտիշատ ի Հաճապիվան երկրորդ վասն պաշտպանութեան սուրբ Հա-ատոյ ընդդէմ Հալաձանաց Պարսից

(450): Յազկերտ արքայ Պարսից յերկոտասաներորդում ամի թագաւորութեան իւրոյ, որ առ ժամանակ մի ի բաց եղեալ էր զհալածումն քրիստոնէից, առեալ զթուղթ ի Վեհ-Դենշապհոյ, եղելոյ ի վերակացութեան աշխարհիս Հայոց յաղագս անդրդուելի մնալոյ Հայաստանեայց ի հաւատս, խորհրդով նախարարաց իւրոց և մեծամեծաց հրամայէ հազարապետին իւրում՝ Միհրներսէհի, գրել տալ մոգպետին ի դիմաց իւրոց զաղանդ մոգութեան առ Հայս, զի կա՛մ դարձցին, և կա՛մ անպատասխանի այնմ մնացեալ՝ պարտաւորեսցին, ընդ որում և ինքն գրէ հրովարտակ առ ամենայն Հայս, թողեալ զօրէնս քրիստոնէութեան՝ ընդունել զդէնս Պարսից, զորոց օրինակս յառաջ բերէ Փարպեցին, և զմոգուց թղթոցն և զաղանդոցն՝ պատմագիրն մեր Եղիշէ ի գլ. Բ:

Ստացեալ զայսպիսի թուղթ աղանդոց Պարսից՝ սպառնագին հրովարտակաւ Յազկերտի եկեղեցականաց Հայոց և իշխանաց, Յովսէփ կաթուղիկոս գրէ փութանակի առ համօրէն եպիսկոպոսունս աշխարհիս գալ, գումարել յԱյրարատ յԱրտաշատ քաղաք արքունական, ի պատասխանագրութիւն հրովարտակին և ընդդէմ աղանդոյ մոգուցն:

Յայսմիկ ժողովի գումարին եպիսկոպոսք տասն և եօթն, բազում քորեպիսկոպոսք և երիցունք, Ղևոնդ երէց ի Վանանդայ, Խորէն ի Մրենոյ և Դաւիթ Մամիկոնեան, ևս և վանականք բազումք և վանահարք և նախարարք ամենայն, որք վասն պահպա-

---

և ընդարձակ վկայութեամբք Սուրբ Գրոց ի կանոնագիրս մեր, զորս ըստ այսմ համառօտեցաք:

նութեան աշխարհին չէին գնացեալ ի պատերազմ Պարսից, զորոց անուանս մի առ մի յիշատակէ Եղիշէ ի պատմութեան ընդ սրբոց եպիսկոպոսաց, երիցանց և վանականաց, եղելոց յայնմիկ ժողովի, ուր ընթերցեալ միայն զհրովարտակ Յազկերտի, պատասխանի արար ժողովն հրամանաւ նախարարաց ի բերանոյ ամենեցուն առ թագաւորն, համարձակ բանիւք երկուցն ևս նամակաց, ո՛չ արժանի մաքուր լսելեաց համարեալ, և զթուղթ մոգպետին, որ յաղագս փոփոխելոյ զօրէնս քրիստոնէութեան: Իսկ զգիր Միհրներսէհի հազարապետին, գրեալ ի մոգպետէն, ընթերցեալ Յովսէփ կաթուղիկոս ընդ եպիսկոպոսաց ժողովոյն, գրեն և այնմ պատասխանի բազմապատիկ վկայութեամբ զճշմարտութենէ քրիստոնէական հաւատոյ՝ հերքելով և արհամարհելով զսնոտի պաշտամունս արեգական, զոր նոքա պաշտէին, որպէս տեսանի յԲ. գիրս Եղիշէի, եր. 26, ի տպագրեալն:

Այլ իբրև ընդունի Յազկերտ զայս պատասխանի ի վերադարձին Միհրներսէհի՝ հանդերձ մոգպետաւն, և տեղեկանայ յամենայնի ի նոսին զհաստատուն մտացն Հայոց ի քրիստոնէական հաւատս և լսէ զարհամարհանս կրօնի իւրեանց համարձակ և անվեհեր բանիւք, դառնացեալ ի միտս առաւել ի հրապուրանաց չարալեզու մոգպետին, գրէ հրովարտակ՝ լի ցասմամբ առ բովանդակ նախարարս Հայոց, յականէ անուանէ պահանջելով զնոսին ոչ իբրև ըստ նախնի սովորութեան թագաւորացն Պարսից, այլ զայրագին բանիւք:

Ըստ որոյ և նախարարք, գիտացեալ զպատճառ կոչելոյ նորա ոչ հրաւիրանօք խաղաղութեան, այլ խռովութեան վասն կորստեան ոգւոց, ապաւինեալք ամենեքին յօգնականութիւն Աստուծոյ և եթ, գումարեալք ի մի վայր՝ ուխտ դնեն անսասան ի հաւատսն մնալոյ ի ձեռն Սրբոյն Յովսեփայ, և ապա հաստատեալք ի միտս, գնացին առ թագաւորն յաղագս գտանելոյ զխաղաղութիւն աշխարհին և ազատելոյ զնախարարսն, բանտարկեալս անդէն յաշխարհին Պարսից:

Այս լինի երկրորդ ժողով ի Շահապիվան, ի բանակետղ զօրաց սպարապետացն Հայոց յամին 450:

Գլուխ ԺԱ.

Առաջին Ժողովն ի Դուին վասն ընդդեմ-Ռեան կաթուղիկոսի և փոխադրելոյ զԱթոռն Կաթուղիկոսական յԷջմիածնէ ի Դուին

(452): Յետ նահատակութեան սրբոց Վարդանանց և կոտորածի զօրացն Պարսից ի նմին պատերազմի, Ատրորմիզդ պարսիկ, եկեալ ի մարզպանութիւն աշխարհին Հայոց և կապեալ զկաթուղիկոսն Յովսէփ, զՂևոնդ երէց, զՍահակ եպիսկոպոս Ռշտունեաց և զերևելի քահանայս յԱյրարատեան աշխարհէ՝ առաւել զայնոսիկ, որք կործանեալ էին զատրուշանս Պարսից կրակատանցն պաշտօնէից, առաքէ առ Յազկերտ ի ստուգել զպատճառս մեծի պատերազմին. և ապա ժողովեալ զամենայն նախարարս և բնակիչս յիւրաքանչիւր տեղեաց՝ ցուցանէ նոցա զարքունի հրամանն յաղագս վարելոյ կեանս ըստ առաջին կարգի և համարձակ պաշտելոյ յամենայն եկեղեցիս զքրիստոնէութիւն:

Ժողովեալ նախարարացն՝ առաքեն առ մարզպանն զպատգամաւոր, զի նախ առցէ ի թագաւորէն զդաշն խաղաղութեան ուխտի ընդ իւրեանս և հաշտութեան, և ապա գնասցեն ինքեանք ի դուռն արքունի, առ որ և եկեալ իսկ էր Ատրորմիզդ, առաքել գնախարարսն առ Յազկերտ, զի ցուցցեն ընդ սրբոյ եպիսկոպոսացն զպատճառ պատերազմին:

Այսպէս յետ յայտնելոյ նախարարացն զկամս իւրեանց պարսիկ մարզպանին, չև ընկալեալ զպայմանն արքունի, գան ի Դուին քաղաք և կոչեալ զեպիսկոպոսունս, ընտրեն ի Հայրապետութիւն փոխանակ Յովսեփայ՝ Կաթուղիկոս Հայոց զմեծ եպիսկոպոսն Մանազկերտոյ՝ զՏէր Մելիտէ յամի 452, և զԱթոռ Կաթուղիկոսութեան փոխադրեալ ի Դուին, անդր հաստատեն զայն, յետ գնալոյ Սրբոյն Յովսեփայ ի Պարսս, զի ոչ կարէին թողուլ զաշխարհն առանց կաթուղիկոսի:

Գլուխ ԺԲ.

Յովհան Մանդակունի Կաթուղիկոս Հայոց և կանոնագրութիւնք նորա

Յովհան Մանդակունի, որ էր յաշակերտութենէ Սրբոյն Սահակայ և Մեսրովբայ և աշակերտակից Գիւտ կաթուղիկոսի, յետ Քրիստափորի կալաւ զԱթոռ Կաթուղիկոսութեան ազգիս յամին

480 և եկեաց ի Կաթուղիկոսութեան զամս վեց ի Դուին յաւուրս մարզպանութեան Մամիկոնեան Վահանայ:

Պատմագիրք ազգիս ոչ յիշատակեն, եթէ արարեալ իցէ նորա Ժողով ի կառավարութիւն եկեղեցւոյ և ժողովրդոց կարգեալ կանոնս վասն բարեկարգութեան, այլ ամենեքին նոքա միահամուռ գրեն զփոյթն սրբոյ հայրապետին ի կարգաւորել զժամերգութիւնս աղօթիւք և քարոզիւք, ի ճոխացուցանել զՄաշտոց գիրս եկեղեցական ծիսից և ի գրել զզանազան ճառս հոգելից: Այլ գրեթէ ի բովանդակ կանոնագիրս մեր կան սորա կանոնագրութիւնք երիւք առանձին գլխովք արտաքոյ ի տպագրելոցն կանոնաց ընդ ճառս նորին յամին 1836 ի Վենետիկ, զորս անշուշտ երևի գրեալ նորա ի միասին ընդ կարգաւորութեան եկեղեցական ժամերգութեանց՝ վերաբերեալս ի վիճակ եկեղեցականաց և ժողովրդոց իւրումն դարու, և չի՛ք երկբայութիւն, եթէ ոչ եղեն ժողովով յիշեալ կանոնագրութիւնքն, զի Եկեղեցին Հայաստանեայց, ի թարգմանչաց անտի մերոց սկսեալ պայծառանալ եկեղեցական երգովք և մաղթանօք, ի սորա աւուրս տակաւին բազում պէտս ունէր հարկաւորացն, ըստ որոյ և Սուրբն Յովհան Մանդակունի որքան աղօթս և քարոզս գրեաց ժամերգութեանց, և յաւելուածս արար ի Մաշտոց և ի Պատարագամատոյցն ըստ Ասողկայ և Վարդանայ, այն ամենայն եղեն կարգ և կանոնք Եկեղեցւոյ և եկեղեցական պաշտամանց, վասն այսորիկ և Ժամագիրք անուանեալ եկեղեցական մատեանն ժամերգութեանց ընծայի ոչ միայն Սրբոցն Սահակայ և Մեսրովբայ, այլ և Գիւտի և Մանդակունւոյ՝ Սուրբ Հայրապետաց Եկեղեցւոյս մերոյ, ուստի և ի նմին ժամանակի ի կարգաւորութեան անդ եկեղեցական պաշտամանց առ ի նմանէ, եղեալ են և կանոնքն՝ յիշատակեալ անուամբ նորա ի բարեկարգութիւն եկեղեցականաց:

Մեք աստանօր ըստ կարգի և ըստ ժամանակի կենաց նորա յառաջ բերեմք ի կանոնագրոց մերոց զառաջին գլուխ կանոնաց նորին Մանդակունւոյ ըստ այսմ վերնագրի:

Յովհաննու Մանդակունւոյ՝ Հայոց Կաթուղիկոսի և թարգմանչի, աշակերտ եղեալ Սրբոյն Սահակայ՝ Մեծի Հայրապետին Հայոց Կաթուղիկոսի՝ քան կանոնական

«Զմեծ և զանբաւ, զմարդասէր և զբարերար Տեառնէ պարտիմք գոհանալ հանապազ, որ արար զմեզ բանաւոր, մտաւոր և հոգևոր. և ետ մեզ ճանաչել զանուն իւր սուրբ, և ասէ. Ես ընդ ձեզ եմ յաւիտեանս ժամանակաց»:

Վասն սրբոյ պասեքին պահոց ի կանոնս ի շաբաթու ոչ հրամայի պահել, և յայտ անտի է, զի շաբաթ աւուր իրիկունն ապաշխարողաց ոչ քարոզի ի մի դէմսն՝ ըստ Մովսէսի օրինադրին հրամանի պարտիմք պատուել , և ի միւս, զի կարապետ է մեծի թագաւորին՝ յառաջընթաց ընդ առաջ ելանէ ճրագօք և մոմեղինօք՝ կիւրակէին:

Այլ վասն կիւրակէի պահելոյ՝ ո՛չ կանոնք հրամայեն պահել, և ո՛չ վարդապետք, այլ նզովս և անէծս ի վերայ դնեն, զնոյն և ՅԺԸ Հայրապետքն ի Նիկիա ի սուրբ ժողովն նզովեցին:

Ապա յաւուր կիւրակէի և ի Զատկէն մինչև ցՊենտէկոստէն՝ ծունր կրկնելով չհրամայեցին յաղօթս կալ:

Ապա եթէ ասիցէ ոք՝ եթէ գինի որթոյ բեր է, և ձէթ՝ ծառոց, և ձուկն՝ ջրոյ, ո՞վ անհեդեդ զգայարանք, այն իսկ է Նեստորի անիծելոյ աղանդն, զի Բարսեղ Կեսարացի զձուկն գազան ասէ, և Առաքեալն վկայէ՝ ասելովն. Այլ մարմին ձկանց է, և այլ՝ անասնոց, և այլ՝ թռչնոց:

Արդ Առաքեալն մարմին ասէ, և հերձուածողն՝ ջուր, և զիա՞րդ իցէ ջուր, զի կենդանի է, յօդք, ոսկերք, ջիղ, արիւն, աչք: Աղէ՛ քննեա՛ խորհրդիւ ի ձկունս և ի գազանս, որ ի ցամաքի են՝ առիւծ, ինձ, վիշապ, որ է օձ, և գիրք ասեն սիկղ և հիդրայ: Սիկղ շուն ասի երեքգլխեան, և հիդրայն ևս չար, քան զնա, բայց զիւրեանց որդիսն ո՛չ ուտեն, իսկ ձուկն զիւր մերձաւորն ուտէ, և մարդ ևս ուտէ, ապա զիա՞րդ է ջուր, այլ կան և հաւք ջրայինք և անասունք, և ո՞վ է, որ առանց ջրոյ սնանի:

Արդ գիրք զձուկն կենդանի ասեն, պատարագ ևս առնեն, ե՛կ և առ ձէթ, գիրք զիւղ և զձէթ միապէս ասեն, Եսայի ասէ՝ փայտ իւղոյ, և Դաւիթ ասէ՝ ծերութիւն իմ ի ձէթ պարարտութեան: Ե՛րթ և առ Աւետարանագիրն, որ ասէ վասն կուսանացն, թէ՛ ձէթ ոչ առին, և դարձեալ, թէ՛ տուք մեզ յիւղոյդ ձերմէ, ահա յայտ է, թէ իւղ և ձէթ միապէս են, և դարձեալ՝ Ադամ ոչ եթէ պանիր եկեր, այլ՝ պտուղ ծառոյ, և ել ի դրախտէն: Իսկ վասն գինւոյ գիրք ասեն՝ զարբեցութիւնս չար, քան զդիւահարս, զոր Առաքեալ ասէ. մի՛ արբենայք, և ոչ ասէ, թէ՝ մի ըմպէք, զի թէպէտ և Նոյի հրամայեաց ըմպել վասն տրտմութեանն, նոյնպէս և մեզ ի վայելչութիւն, ո՛չ թէ արբենալ և զեղխիլ, և յորժամ կերակուր ուտեմք և լնումք և ի նմին կամք, իսկ յորժամ գինւով լնումք, զայլ խորհուրդ ածեմք զմտաւ և ոչ զԱստուծոյն. վա՜յ այնոցիկ, Եսայի ասէ, որք յառնեն ընդ առաւօտն և զհետ լինին ցքւոյն, զի գինին իսկ անդրէն զնոսին այրէ, դարձեալ ասէ՝ քահանայն և մարգարէն յիմարեցան

յարբեցութենէ ցքւոյն: Յառաջ ուխտաւորքն Սամուէլ և Սամսոն և որդիքն Յովնադաբայ միս ուտէին, բայց գինի և ցքի ոչ ըմպէին, զի գինի և հացօղի և մեղրօղի և ամբրաւօղի մի են, զոր գիրք վկայեն:

Արդ, պանիր, ձէթ, ձուկն, ձու ամեն մի են, թէ ասէ ոք՝ ձու յօր քսան կենդանի լինի, և կենդանւոյ իսկ անասնոց յօր քսան, թէ դարման չլինի, մեռանի, բայց զոր Հին և Նոր Կտակարանաց ասացեալ է և վարդապետաց, որ են այս. Աթանասիոս, Կիւրեղ, Յովհաննէս, Սահակ Երուսաղէմցի, Ակակ Մելիտինի, Գրիգոր Աստուածաբան Նազիանզու, Գրիգոր Նիւսեայ, Գրիգոր Կեսարացի, Բարսեղ Կեսարացի, Իրինիոս, Որոգինէս, Յովսէպպոս, Կղէմէնտոս, Տիմոթէոս, Յովհան Կոստանդնուպոլսի, Զենոբ, Սեւերիանոս: Արդ, զոր նոցա արգելեալ է մարգարէից և առաքելոց վկայութեամբ, չէ պարտ ումեք զանց առնել. ի Զատկէն մինչև ցՊենտէկոստն ամենայն իբրև մի կիւրակէ է, ծունր ոչ հրամայի դնել, այլ յոտն կալով և երկրպագութեամբ մատուցանել զաղօթսն, ի Պենտէկոստէիցն մինչև ցՎարդավառն մին շաբաթն ուտի, երկուն պահի: Վարդավառն տօն առաքելոցն է, և մատրունք՝ ըստ հնումն. ի նորումս՝ նաւակատիք Սուրբ Եկեղեցւոյ և մարտիրոսաց յիշատակ: Եւ ի Պենտէկոստէն յառաջ ի ծոմոցն պահս ցուրբաթ օրն պահել և յուրբաթուն ուտել անկարգ է, պահել պարտ է մինչև յերեկոյ, և որք զուրբաթ որպէս զկիւրակէ պահել և ի գործոց դատարկացուցանեն՝ մեղք են, և կոչեն զնա ծեր, և ո՞յր տեսեալ է զծերութիւն նորա, զի հինգ օրն աւագ են,քան զնա, և որք ի չորեքշաբթու և յուրբաթու մարտիրոսաց յիշատակ առնեն՝ մեղք են, զի եթէ ի կարգի էր, ապա ի զատկին ուրբաթ օրն պարտ էր առնել մատաղ, զի Քրիստոս Աստուած՝ Արարիչն երկնի և երկրի, յուրբաթուն խաչեցաւ, և ընթերցուածք և Սաղմոս և Աւետարան յայն օր շատ են, և յայն օր ամենայն մարդիկ ազատեցան ի ծառայութենէ մեղաց, և դրախտն յայն օր բացաւ ի ձեռն աւազակին, և զմարդիկ ի ծառայութենէ յայն օր զերծոյց Քրիստոս, բայց կարգք Եկեղեցւոյ զայն ուրբաթ պահել հրամայեն և փոխանակ նորա ուտել զայլ ուրբաթսն մինչև ցՊենտէկոստէն: Եւ որ զԾնունդն առնեն յառաջ, քան զՅայտնութիւնն՝ չէ արժան, զի Ծնունդն և Յայտնութիւնն մի են, և յայտ յընթերցուածոյն է, որ ասէ. «Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս»:

Գլուխ ԺԳ.

Հինգերորդ ժողով ի Վաղարշապատ, ուր Հերվեկյան Բարձրա-մայ և այլ նեղոտորականք և ֆոնեկյան Հրովարտակն Զենոնի կայսեր և ժողովն Քաղկեդոնի

(491): Համբաւ հասեալ չփոթութեանց ի Հայս հակառակորդաց ժողովոյն Քաղկեդոնի, որոց էր գլուխ Դէոսկորոս եպիսկոպոս Աղէքսանդրիոյ, ի ձեռն ջատագովչաց և աշակերտաց նորին, իբր թէ յոյնք նովին ժողովով ընկալեալ իցեն զգիրսն Թէոդորոսի Մամեստացւոյ, զոր Սուրբն Սահակ մերժեալ էր Ազգային ժողովով, և թէ հաղորդեալ իցեն նոքա ընդ նեստորականաց նովին ժողովով, Բաբգէն կաթուղիկոս Հայոց յՈթմսոյ, որ ի Վանանդ, արար ժողով եպիսկոպոսաց ի Կաթուղիկէ Մայր Եկեղեցւոջ Վաղարշապատայ, ուր եկին և հասին կաթուղիկոսունք Վրաց և Աղուանից՝ հանդերձ եպիսկոպոսօք իւրեանց:

Ի հանդիսի ժողովոյն նզովեն նախ զնեստորականսն և զամենայն համախոհս նոցին և զմոլորութիւնս, ընդ որս և զԵւտիքեանցն, և ընթերցեալ զհենոդիկոն Զենոնի կայսեր և հաւանեալ ընդ այն, ըստ նորին մտաց դատապարտեն զժողովն Քաղկեդոնի՝ համարեալ.

«Նախ՝ թէ այն Ժողով ընկալաւ զգիրս Մոպսուեստացւոյն և զջատագովս նորին:

Երկրորդ՝ թէ այն Ժողով բաժանեալ իցէ զՔրիստոս յերկուս դէմս և յերկուս որդիս, ըստ մտաց Նեստորի, սահման եղեալ ի վճիռս Ժողովոյն յասելն. «Մեք՝ Հայք և Հոռոմք, Վիրք և Աղուանք, մի խոստովանութեամբ եմք հաստատեալ ճշմարիտ հաւատով ի լաւ անդր, զոր աւանդեցին մեզ սուրբ Հարքն յերիս Ժողովս. ոչ ընդունիմք զայսպիսի բանս հայհոյութեան, այլ նզովեմք միաբան զնմանիս նորա»:

Պատճառ այսր ժողովոյ և հերքելոյ զժողովն Քաղկեդոնի բացայայտ ևս գրեն ազգային պատմիչք մեր, յորոց Յովհաննէս կաթուղիկոս. «Զայսու ժամանակաւ աստուածահաճոյ վարուք և բարեպաշտ հաւատով երջանիկ արքայն Հոռոմոց՝ Զենոն, վախճանէր, որ ի ժամանակի տէրութեան իւրոյ զմիգատարը և զօդախիտ բքայորդոր չար հերձուածս քաղկեդոնականաց ի բաց մերժեալ, զլուսասփիւռ, պայծառատարած, ճառագայթաւէտ զհաւատս առաքե-

լական ծաղկեցուցանէր յԵկեղեցւոջ Աստուծոյ»: Եւ յաղագս Անաստասայ՝ նորին առաջնորդի, ասէ. «Հաստատէր զաւանդութիւն բարեպաշտութեան հարցն սրբոց, և շրջաբերական թղթովք նզովեաց զամենայն հերձուածողս, ընդ ամենեսին և զժողովն Քաղկեդոնի նզովէր»: Իսկ վասն ժողովոյս այսորիկ՝ այսպէս. «Մեծ Հայրապետն Հայոց Բաբկէն առնէ Ժողով Եպիսկոպոսաց Հայոց, Վրաց և Աղուանից ի Նոր քաղաքի, ի սուրբ Կաթուղիկէի ի Մայրն Եկեղեցեաց Հայոց, որք նմանապէս նզովեալ խոտեցին զժողովն Քաղկեդոնի, քանզի և չէ իսկ էր ընկալեալ զաշխարհակործան աւանդութիւնն, այլ ի նմին հիման սրբոյն Գրիգորի հաստատեալ կային»:

Գլուխ ԺԴ.

Երկրորդ ժողով ի Դուին վասն քարեկարգելոյ զժողովոցդն Քրիստոսի

(Ամ Տեառն 527): Ներսէս Երկրորդ, յաջորդեալ Ղևոնդեայ յԱթոռն Հայրապետական ի Բագրևանդ գաւառէ, ի գեղջէ Աշտարակաց յամի Տեառն 524, առնէ ժողով եպիսկոպոսաց ի Դուին յԱթոռն Հայրապետութեան յամի 527, վասն ուղղելոյ զանկարգութիւնս ոմանց ի քահանայից և յեկեղեցականաց յաւէտ ի գիւղօրայս. երևելիք էին՝ Ներշապուհ եպիսկոպոս Մամիկոնէից և Պետրոս Քերթող՝ եպիսկոպոս Սիւնեաց:

Ի սմին ժողովի յուղղութիւն անկարգութեանցն սահմանեն կանոնս երեսուն և ութն, առեալ զբազումս ի կանոնաց Սրբոյն Սահակայ Պարթևի, որք ի կանոնագիրս մեր կոչեն Կանոնք Ներսէսի և Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի, որոց և համառօտութիւն դնի աստանօր:

ա. Զտուրս քահանայից տարցեն յեկեղեցին և մի՛ ի տուն միոյ ուրուք քահանայի և եթ:

բ. Զտուրս ողորմութեան Պատարագի առանց զօշաքաղութեան առցեն քահանայք:

գ. Տուրք եկեղեցւոյ մի՛ տացին վաշխիւք:

դ. Մի՛ վաճառեսցի ումեք շնորհք քահանայութեան , և մի՛ իշխեսցեն աշխարհականք առնել զգործ քահանայի:

ե. Երկկին պաշտօնեայք որոշեալ կայցեն յեկեղեցական կարգէ և մի՛ վայելեսցեն զհասս եկեղեցւոյ:

զ. Քահանայք մի՛ խափանեսցեն զպատարագսն յաւուրս շաբաթու և կիւրակէի և մի՛ ծուլասցին ի պաշտամանց յաւուրս տո-

նից. և եթէ անփոյթ լիցին, ի հասից աւուրն զրկեսցին:

Է. Քահանայք մի՛ իշխեսցեն նուազեցուցանել զբաժակ սրբոյ հաղորդութեան պատճառաւ չքաւորութեան:

Ը. Ի մատակարարել քահանայից ի սուրբ բաժակէ առ ժողովուրդն մի՛ խառնեսցին ի նոյն նորոգ գինի:

Թ. Զվարագոյրս խորանին մի՛ տացեն ի տունս փեսայի և հարսին:

Ժ. Քահանայք մի՛ տացեն այլոց, մանաւանդ կանանց, զջուր մկրտութեան պահել ի տուն և մկրտել զերեխայս:

ԺԱ. Ի քահանայս նախագահ համարեսցի, որ իցէ ձեռնադրեալ յառաջագոյն:

ԺԲ. Առանց քահանայի մի՛ իշխեսցեն դպիրք յեկեղեցւոջ պաշտամունս կատարել:

ԺԳ. Քահանայք մի՛ զգեցցին զգեստ աշխարհականի կամ զինուորի:

ԺԴ. Տուրք եկեղեցւոյ ըստ օրինի բաժանեսցին. աւագ երիցանց՝ երկու և կէս մասն, հասարակ քահանայից՝ երկու մասն, սարկաւագաց՝ մի և կէս մասն, դպրաց և այրի կանանց, եթէ իցեն կարօտ՝ մի մասն:

ԺԵ. Սպասք Եկեղեցւոյ ի ձեռս աւագ երիցուն լիցի, և ընաւ յաշխարհական իրս մի՛ զբաղեսցի:

ԺԶ. Մկրտութիւնն յեկեղեցւոջ լիցի հանդերձ ամենայն սպասուք յաւազանն սուրբ, և եթէ վտանգ կայցէ, ի տան կատարել:

ԺԷ. Ի մկրտել քահանային մի՛ կայցեն առ նմա կանայք՝ ունելով զտեղի սարկաւագաց:

ԺԸ. Սարկաւագունք մի՛ իշխեսցեն մկրտութիւն առնել առանց հարկի:

ԺԹ. Քահանայք մի՛ իշխեսցեն տրովք կատարել զխորհուրդ ապաշխարութեան:

Ի. Եթէ քահանայն յայտնեսցէ զխոստովանութիւն ապաշխարողաց՝ նզովիւք լուծցի:

ԻԱ. Մի՛ լիցի հասարակ գերեզման յեկեղեցւոջ:

ԻԲ. Քահանայք մի՛ իշխեսցեն առնուլ վաշխս:

ԻԳ. Զագապս, այս ինքն՝ զնուէրս, որք վասն աղքատաց ընծային, մի՛ բաժանեսցեն քահանայք ըստ հաճոյս, այլ ի նմին ժամու յանդիման ընծայողին բաշխեսցեն աղքատաց:

ԻԴ. Որք հաղորդելոցն են, մի՛ ճաշակեսցեն ինչ նախ ի տան, և եթէ գիտասցեն զայս քահանայք կամ կղերիկոսք, մի՛ թողցեն հա-

ղորդել:

ԺԵ. Տղայոց պսակ մի՛ լիցի, և որք ի չափ հասեալ իցեն, առանց տեսանելոյ զմիմեանս մի՛ պսակեսցին:

ԺԶ. Կոյս ընդ այրւոյ մի՛ պսակեսցի, և ոչ այրի ընդ կուսի առանց հարկի:

ԺԷ. Քահանայք մի՛ իշխեսցեն երթալ և ընտրել ըստ հաճոյս իւրեանց զարջառ վասն ողորմութեան նուիրաց:

ԺԸ. Քահանայք մի՛ իշխեսցեն զնուիրեալ անասունս պահել կենդանի, այլ տացեն զենուլ և բաշխել աղքատաց:

ԺԹ. Զաւուրս Քառասնորդաց կամ զԱռաջաւորաց մի՛ ոք իշխեսցէ լուծանել:

Լ. Ի մեծի շաբաթու ճրագալուցի մի՛ ոք յառաջ, քան զՊատարագն հաղորդեսցի օրինաց, բայց եթէ վասն հարկի տկարութեան:

ԼԱ. Ժողովրդականք հակառակ քահանայից մի՛ իշխեսցեն հրաման տալ:

ԼԲ. Մի՛ գտցի քահանայ արբեցող կամ հանգանակող, և մի՛ ունիցի արծաթագին աղախին, և մի՛ առնուցու ինչ ի կապենից:

ԼԳ. Մի՛ բնաւ մտցէ կին ի վասն աբեղայից վասն հաց եփելոյ կամ կով կթելոյ, և մի՛ վասն ո և իցէ գործոյ:

ԼԴ. Անապատաւորք յառաջ, քան զմուտս արևու դարձցին յանապատ իւրեանց:

ԼԵ. Վանականք մի՛ օթեսցին ի տունս աշխարհականաց, այլ ի մերձակայ վանս, և եթէ չիցէ ի տեղւոջ վանք, ի տունն աւագերիցու կացցեն:

ԼԶ. Վանականք մի՛ իշխեսցեն վաճառականութիւն առնել և մի՛ պահեսցեն առանձին զերիվարս և զայլ ինչ այսպիսի:

ԼԷ. Աղանդաւորաց բնակութիւն մի՛ տացի ի տան:

ԼԸ. Ցամենայն ամիսս մի պահք պահեսցի:

Գլուխ ԺԵ.

Երրորդ ժողով ի Դուին, որ սահմանէցաւ նոր Տոմար ի ընդ հայոց

(Ամք Տեառն 551): Մովսէս յԵղուարդայ, յԱրագածոտն գաւառէ, յաջորդեալ յԱթոռ Հայրապետութեան ի Դուին յետ Յովհաննու Երկրորդի ի Գաբեղենից, արար ժողով եպիսկոպոսաց և իմաստնոց անդէն ի Դուին յԱթոռն Հայրապետական և բազում քննութեամբ

նորոգեաց և ուղղեաց զՏոմարն Հայոց ըստ ձեռնտուութեան ժամանակին նորոգ սկսեալ զշրջանն, զորմէ փոյթ յառաջագոյն ունէր, յամի Տեառն 551, յորմէ սկսաւ և թուական Հայոց, զի ի յաջորդ 552 ամի ժողովոյն եղև առաջին ամ Հայոց թուականին, որով սկսան Հայք վարիլ այնուհետև նովին տոմարաւ և զթուական ամացն անտի չափել, այն է՝ ի 552 ամէն:

Յովհաննէս կաթուղիկոս՝ պատմաբան զժողովոյն Մովսէսի յաղագս նորոգութեան Հայոց տոմարին, վկայէ այսպէս:

«Յամի տասներորդի հայրապետութեան նորա (Մովսէսի) և 31 ամին Խոսրովայ՝ որդւոյ Կաւատայ արքային Պարսից, լցեալ, բովանդակեալ շրջանակ բոլորակի 532 ամաց, ապա ի հրամանէ մեծին Մովսէսի՝ քերթողք և գիտունք արուեստին եդին զկարգ թուականութեան Թորգոմեանս համարոյ, որ է շարժումն յառաջախաղաց և հիմն զանազան մասանց արուեստին: Եւ այսպէս, ըստ հայկականս լեզուի տուեալ տոմար տօնից տարեկանաց, յայնմ հետէ ոչ կարօտանային իբրև մուրացիկ իմն՝ առնլով յազգաց զպիտանի խորհրդոցն արարողութիւնս»:

ԳԼՈՒԽ ԺԶ.

Զորրորդ Ժողով ի Դ-ին վասն Կիւրիոնի կաթ-ղիկոսին Վրաց

(Ամք Տեառն 596): Կիւրիովն՝ Վրացի վաներէց եկեղեցւոյ Կաթուղիկոսարանին Հայոց ըստ կացուցանելոյ հայրապետին Մովսէսի, և քորեպիսկոպոս Այրարատայ, յառաջագոյն հասու լեալ մտաց ժողովոյն Քաղկեդոնի, իբրև ձեռնադրեցաւ ի Մովսէսէ ի կաթուղիկոսութիւն Վրաց, քարոզեաց անդ ի Վիրս զդաւանութիւն ժողովոյն, որում հակառակ կացեալ Մովսէս եպիսկոպոս Ցրդաւայ քաղաքի ի Վիրս, ձեռնադրեալն ի Կիւրիովնէ, ի կոչելն զնա Կիւրիովնի, փախաւ առ Աբրահամ կաթուղիկոսն Հայոց փոխանորդ Մովսէսի, և չարախօս եղև զկաթուղիկոսէ իւրեանց, իբր զի յաղագս չընդունելոյ իւրոյ զժողովն Քաղկեդոնի հալածեաց զինքն:

Ապա Աբրահամ կաթուղիկոս, յետ բազում փոխադարձ թղթակցութեանց առ միմեանս, տեսեալ զհաստատուն միտս Կիւրիովնի ընդ քաղկեդոնեան դաւանութիւնն, զոր ընկալեալ էին ի ձեռն նորա և Վիրք համօրէն, ժողով առնէ եպիսկոպոսաց ի Դուին յերրորդ ամի Հայրապետութեան իւրոյ՝ յամի 596, և մատուցեալ անդ զբանս ժողովոյն Քաղկեդոնի՝ գրեալ ի Կիւրիովնէ, և համարեալ

զայն ըստ մտաց Թէոդորոսի և Նեստորի, հերքեցին զայն և նզովեցին զԿիւրիովն և զնոսին, որք ընդունին զժողովն Քաղկեդոնի, արգել ևս նզովիւք, զի մի ոք հաղորդեսցի ընդ Վիրս, որով և որոշեցաւ Եկեղեցին Հայոց ի Վրաց, որոց կաթուղիկոս ձեռնադրէր ցայն վայր ի կաթուղիկոսէն մերմէ:

Այլ Յովհաննէս կաթուղիկոս այսպիսի ունի բան զԿիւրիովնէ. «Այս Մովսէս զԿիւրիովն սրբոյ Կաթուղիկէի վանաց երէց ձեռնադրէ յարքեպիսկոպոսութիւն Վրաց նահանգին և Գուգարաց և Եգերացւոց ըստ օրինակի կարգացն առաջնոց, իսկ ապա մերձ ի վաղճանն Մովսէսի Կիւրիովն, զճշմարիտ կարգաց և զկրօնից ուղղութիւնն ի բաց խզեալ, զոր ի հարցն մերոց ուղղափառաց աշակերտեալ էին կողմանքն այնոքիկ, միտէր զհետ ամբարիշտ ժողովոյն Քաղկեդոնի, զկնի փառամոլ ամբարհաւաճութեանն իւրոյ ձգեալ դաւաճանեալ զնախահարս աշխարհին: Ապա վաղվաղակի ի դերև ելանէր խոկացեալ նորայն դաւաճանութիւն»:

Իսկ զժողովոյն հրամանաւ Աբրահամու և քաջին Սմբատայ՝ այսպէս. «Բայց մեծ Հայրապետն Աբրահամ Քրիստոսաւանդ կարգօք և առաքինահրաշ երկօք գուն ի վերայ գործէր, զի թերևս հնար լիցի դարձուցանել զԿիւրիովն և զհնազանդեալսն նմա ի մոլորութեան ճանապարհէն, այլ նոքա ոչ թերևս զճշմարտութիւն պատուէին, քան թէ միայն զօշաքաղութեան և փառամոլ բարուց բոյսս ի վեր ընծիւղեալ աճեցուցանէին: Եւ այսպէս ապա զմարդադաւտն տօմարն Լևոնի փոխանակէին ընդ առաքելական աւանդից երիցս երանեալ սուրբ Լուսաւորչին Գրիգորի, որ եբաց նոցա զդուռն լուսոյ ճշմարիտ աստուածգիտութեան:

Եւ այնուհետև բազում եպիսկոպոսաց Ժողով արարեալ մեծի Հայրապետին Աբրահամու ի Դուին քաղաքի՝ հրամանաւ քաջին Սմբատայ և այլոց ևս նախարարաց, աստուածամերձ և ամբիծ այցելութեամբ ուշ եղեալ աստուածային գրոց և ստուգագէտ իմացուածիւ ծանուցեալ զուղիղ դաւանութիւն սուրբ Հարցն, նզովեցին զԿիւրիովն՝ զպառակտիչն Եկեղեցւոյ Քրիստոսի և զամենայն հնազանդեալս և զհամախոհս չար հերեսիութեանն, և անէծս ցաւագինս ուղղափառ դաւանողաց մերոց նահանգիս ի վերայ եդին, ոչ բնաւին իսկ ընդ նոսա միաբանել, որք զկնի Կիւրիովնի չարափառի չեղեցան» և այլն:

Գլուխ ԺԷ.

Առաջին ժողով ի Կարին վասն բանի ժողովոյն Քաղկեդոնի

(Ամք Տեառն 629): Դարձ արարեալ Հերակլի կայսեր ի պատերազմացն ընդ Պարսից ի Կարնոյ քաղաք Թէոդուպոլիս և բազում խնամօք առ Հայս ցուցեալ զսէր յեղեալ ի բաժնին Յունաց, լուեալ եթէ բազում խռովութիւն գոյ ի մէջ նոցա և Հայոց եղելոցն ի բաժնի Պարսից, ուրանօր էր և Հայրապետութիւն Հայոց ի Դուին, յաղագս ընդունելոյ եղելոցն ի բաժնի Յունաց զժողովն Քաղկեդոնի, հրամանաւ կայսեր գումարեցաւ գաւառական ժողով ի նմին քաղաքի յեպիսկոպոսաց Հայոց և ի Յունաց, ուր կոչեցեալ և Եզրի հայրապետի հրեշտակութեամբ Մժեժի Գնունւոյ՝ զօրավարի Հայոցն, եղելոց ի Յոյնս, յաղագս ընդունելոյ և պարսկահայոց զժողովն Քաղկեդոնի, տարաւ ընդ իւր Եզր հայրապետ ի Հայաստանէ զչորս եպիսկոպոսունս, զերկուս վարդապետս և զքեռորդի իւր՝ զԹէոդորոս, զեղբօրորդի Կոմիտաս Կաթուղիկոսի, նաև զայլս՝ հանդերձ քանի մի իշխանօք, ըստ գրելոյ Զաքարեայ Ծործորեցւոյ և Խորենայ Սահառունւոյ:

Յայսմիկ ժողովի եպիսկոպոսաց ի յառաջարկել կայսեր ընդունել հայրապետին և եպիսկոպոսացն զժողովն Քաղկեդոնի, խնդրեն ի կայսերէն զհանգանակ հաւատոյ Եկեղեցւոյն Յունաց ձեռագրութեամբ նորին, և քննեալ զնոյն դաւանութիւն, յետ բազում խորհրդոյ ընդ իշխանս և ընդ եպիսկոպոսս ի վերայ այնորիկ, ի մի հաւանութիւն եկեալ ընկալան զժողովն Քաղկեդոնի ի ներկայութեան կայսեր, միաբանեալ ընդ Յոյնս ի բան խոստովանութեան հաւատոյ յամի 629, և յառաջնում ամի հայրապետութեան իւրոյ:

Ապա պարգևս ի կայսերէն ընկալեալ զերեք մասն Կողբ գեղջ հայրապետն Եզր, իբրև վերադարձեալ մտանէր ի Հայրապետական Աթոռն ի Դուին, յընդառաջելն նմին ուխտի եկեղեցւոյն՝ ոչ ելանէր ընդ նոսա Յովհաննէս վարդապետ՝ փիլիսոփայ ի ժամանակին՝ ըստ գրելոյ Յովհ. կաթուղիկոսի պատմագրի, որ փակակալն էր կարգեալ ի հայրապետէն եկեղեցւոյ Սրբոյն Գրիգորի անդ ի Դուին ի Հայրապետական Աթոռն, յաղագս ոչ տանելոյ հայրապետին և զնա ընդ իւր առ կայսր ի Կարին վասն բանի Քաղկեդոնի ժողովոյն, գիտացեալ, թէ ընկալեալ է հայրապետին զայն ժողով, զոր լուեալ հայրապետին, բռնութեամբ ածել առ իւր, իբրև հար-

ցանէ զպատճառ չելանելոյ նորա ընդ առաջ իւր, պատասխանի տայ Յովհաննէս ըստ գրելոյ Յովհ. կաթուղիկոսի. «Խրոխտումն և ամբարհաւաճութիւն յիս ոչ գտանի, այլ ջատագով ճշմարտութեանն լինել հաւանիմ, բայց քո յիրաւի կոչեցաւ անունդ Եզր, վասն զի յեզր հաներ զՀայաստանեայս, քակեալ զսահման հաւատոյ հարցն մերոց ուղղափառաց, և խրամատեալ զցանկն առաքելական, և ի մարդադաւան տոմարն Լևոնի կործանեալ»:

ԳԼՈՒԽ ԺԸ

Հինգերորդ ժողով ի Դուին վասն քարոզեկարգելոյ աղանդեցականաց և պաշտարհականաց

(Ամք Տեառն 645): Յառաջնում նուագի անդ աւերանաց Դուին քաղաքի ի Հագարացւոց յամի Տեառն 639, յորում էր և Աթոռն Հայրապետական, ժողովով նախարարաց և յորդորմամբ Թէոդորոսի Ռշտունւոյ, յաջորդեալ ի տեղի Եզրի ի Կաթուղիկոսութիւն Հայոց Ներսէս Երրորդ եպիսկոպոս Տայոց՝ կոչեցեալ Շինող յաղագս բազմաց հռչակաւոր եկեղեցեացն ի նմանէ կառուցման ի Հայաստան, յաղագս երից գլխաւոր պատճառաց և անկարգութեանց, մտելոց յԵկեղեցիս Հայոց, արար ժողով ի Դուին ի վեցերորդումն ամի Հայրապետութեան իւրոյ, յոր գումարեցան եօթնևտասն եպիսկոպոսք և բազում վարդապետք և իշխանք ո՛չ սակաւք:

Երեք այսոքիկ էին ի ժամանակին անկարգութեանց պատճառք լեալ ի Հայաստան և յեկեղեցականս:

Նախ՝ յայնմ ժամանակի յայտնեալ էին մոլորական գրեանք յանուն Յովհաննու Մայրավանեցւոյ և աշակերտի նորին Սարգսի, որ և թարգմանեալ էր զաղանդաւոր գիրս Յուլիանոսի Աղիկառնացւոյ, զորմէ Յովհաննէս կաթուղիկոս պատմ. ոչ տայ կարծիս հերձուածողութեան վասն այնպիսւոյ իմաստութեան առն, այլ ի թշնամեաց հաւատոյ զայն համբաւ հանեալ զնմանէ, բայց որ ինչ յաղագս աշակերտի նորին՝ ոչ հակառակի այնմ, զի ասէ. « Զսմանէ (զՅովհաննէ) ապա համբաւ ամբաստանութեան պատմի, իբր դառն հերձուածս նմա մուծանել յԵկեղեցի սուրբ, սակայն ես ո՛չ կարեմ հաւանութիւն իմոյ կամացս տալ այնպիսւոյ առնն... այլ կարծիս իմն ընդունի սիրտ իմ ի հակառակադիր և ի խորիմաց այլոց կամաց այս գործ համբաւոյ լեալ: Բայց եթէ սակս Սարգսի՝ աշակերտի նորա, համբաւէ ոք զայսպիսի չար հերձուածս ընձիւղել, և ես

ո՛չ վասն նորա հակառակիմ, զի իմ իսկ ընթերցեալ է զգիր վնասու նորա: Այլ վասն զի Յովհան ի բաց յիւրմէ հալածեաց զՍարգիսն, սակս այնորիկ արտաքոյ կամաց նորա ասեմ զնորայն հերձուած»:

Երկրորդ՝ մտեալ էին թուլութիւնք և անկարգութիւնք ինչ յեկեղեցականս, նաև բռնութիւնք յաշխարհական իշխանս:

Երրորդ՝ ի յաճախել շարականաց այլևայլ շարականս երգէին և զայլոցն արհամարհելով՝ խռովութիւնս յարուցանէին:

Ապա յաղագս այսոցիկ ի սմին ժողովի նզովեն զամենայն հերետիկոսս և զամենայն հերձուածողական գիրս, ընդ որ և զժողովն Քաղկեդոնի համարեալ զայն նպաստ արծարծելոյ հերետիկոսութեան նեստորականաց և խռովութեան ի մէջ ազգաց, ուր և յաղագս ժառանգաւորաց եկեղեցւոյ և աշխարհականաց սահմանեն զերկոտասան կանոնս, որոց համառօտութիւնն է.

Ա. Եպիսկոպոսն զայլոյ եպիսկոպոսի վիճակ մի՛ յափշտակեսցէ:

Բ. Եպիսկոպոսն մի՛ իշխեսցէ յայլում վիճակի սեղան հաստատել կամ քահանայ ձեռնադրել:

Գ. Եպիսկոպոսն այցելութիւն արասցէ ի վիճակի իւրում ի վանորայս, ի դպրոցս և ի հիւանդանոցս և մի՛ իշխեսցէ առնուլ ինչ յումեքէ բռնութեամբ:

Դ. Ժառանգութիւն եկեղեցւոյ մի՛ վաճառեսցի այլում:

Ե. Քահանայք և պաշտօնեայք, եթէ յուլասցին ի պաշտամանց եկեղեցւոյ, պատժեսցին յեպիսկոպոսէն:

Զ. Որք թողեալ զգործ քահանայութեան կամ սարկաւագութեան՝ զբաղին յիրս աշխարհի կամ յորսս, զրկեսցին ի հասից եկեղեցւոյ:

Եւ քանզի ի գերութեան աշխարհին Հայոց, որով գերեցան արք և կանայք, բազումք ի մնացելոց անտի, առանց լսելոյ զմահ ամուսնոյ իւրեանց, պսակեցան ընդ այլում, վասն այնպիսեաց կարգեցաւ այս կանոն եօթներորդ:

Է. Որք առանց սպասելոյ զեօթն ամ յետ գերութեանն լսել զկենդանութիւն ամուսնոյ իւրեանց ամուսնացան ընդ այլում, անվաւեր լիցի պսակ նոցա: Իսկ եթէ յետ եօթն ամաց ամուսնացեալ իցեն յանգէտս, ի դառնալ ամուսնոյ իւրեանց ի գերութենէ թողցեն, զոր առին, և դարձցին առ առաջինն և ապաշխարեսցեն ըստ սահմանելոյ եպիսկոպոսին, սոյնպէս եղիցի և որք ի գերութեան գոլով՝ ամուսնացան:

Ը. Ժառանգաւորք եկեղեցւոյ, եթէ անորդի իցեն, զինչս իւրեանց զանշարժս, որք կարգեալ են նոցա յեկեղեցւոյ, մի՛ իշխես-

ցեն տալ մերձաւորաց իւրեանց, իսկ եթէ կամիցին որդեգրել զոք, յետ մեռանելոյ իւրեանց եթէ քահանայասցի որդեգրեալն, նա վայելեսցէ, ապա թէ չիցէ արժանի քահանայութեան, թողցին եկեղեցւոյ, այլ՝ շարժական ինչք նոցին տացեն մերձաւորաց:

Ը. Եկեղեցականք ազատ լիցին ի հարկաց, և եթէ իշխան ոք առցէ ի նոցանէ զհասս կամ ծառայեցուսցէ զնոսա, զրկեսցի յօրհնութենէ եկեղեցւոյ, և մի ոք ի քահանայից մատուսցէ պատարագ վասն նորա, մինչև ապաշխարեսցէ:

Թ. Աշխարհական իշխանք մի՛ իշխեսցեն կարգել վանահայր կամ ընկենուլ ըստ կամաց իւրեանց և մի՛ բնակեսցին ընտանեօք ի վանս:

Ժա. Իշխանք մի՛ առցեն հարկս ի տկարաց, որ ի հիւանդանոցս:

ԺԲ. Իշխանք և հեծեալք ի հասանել ի գիւղ՝ մի՛ ագահիցեն ի վանս ուտել և ըմպել:

Ապա յաւարտման ժողովոյն հայրապետն Ներսէս յանձն արար Բարսեղ վարդապետի՝ առաջնորդին Դպրավանից ի Շիրակ, զորոշումն առնել շարականաց՝ ընտրելով զպիտանին յանպիտանեաց: Եւ զորս ընտրեաց սա ի շարականացն՝ կոչեցաւ Ճոնընտիր, զի և ինքն յայն անուն մականուամբ Ճոն կոչէր:

Բայց ի յաջորդ ամի կայսրն Կոստանդին եկեալ ի Դուին և անդ յեկեղեցւոջ Կաթուղիկոսարանին հրամայէ հոռոմ քահանային պատարագ մատուցել, ուր կայսրն և կաթուղիկոսն, քարոզելով զժողովն Քաղկեդոնի, կամայ ակամայ ընդունի զայն, և որք ընդ իւր եպիսկոպոսք, որպէս գրէ Սեբէոս:

Գլուխ ԺԹ.

Վէճերորդ ժողովս ի Դուին վասն վանելոյ զժողովն Քաղկեդոնի

(Ամք Տեառն 648): Վերակացուք զօրացն Յունաց, թողեալք ի կայսերէ ի դառնալ նորա ի Կոստանդնուպոլիս ի վերայ աշխարհին Հայոց, յաղագս ինչ ինչ անկարգութեանց իւրեանց և բռնաբարութեանց ի վերայ ժողովրդեան և եկեղեցականաց Հայոց, ըստ հրապուրանաց ոմանց քահանայից և աշխարհականաց թուլամորթ անձանց, ընդունողաց զժողովն Քաղկեդոնի ի նեղել զհայս, որովք լինէին առիթք գայթագղութեան և խռովութեան բազմօք ի ժողովուրդս, յոլով կշտամբանս և նզովս ի Հայոց ընկալեալ, որք, խորշեալ ևս ի նոցունց իբրև ի չարափառաց, բողոքեն նոքա զՀա-

յոց առ կայսր՝ ամբաստանեալ, թէ՝ հայք ընդ մեզ իբրև ընդ հերետիկոսս վարին և ամենայն իրօք խորշին ի մէնջ վասն լինելոյ մեր քաղկեդոնահաւատս, իբր զի, որ հայք յառաջն առ երեսս ընդ հայրապետին Ներսիսի հաղորդակից կայսերն գտան ի Դուին, և հաղորդեցան ևս եպիսկոպոսք ոմանք ընդ հայրապետին ի խորհուրդ սրբոյ պատարագին՝ ի նշան ընդունելոյ զժողովն Քաղկեդոնի՝ մատուցեալ ի քահանայից Յունաց, որ ընդ կայսերն էին ի Դուին, այժմ յետս դարձեալ՝ խորշին ի մէնջ:

Զսմանէ Յովհ. կաթուղիկոս այսպէս վկայէ. « Ապա հեզաբար գնացեալ (Կոստանդեայ կայսեր) ի քաղաքն Դուին՝ իջևանս ի տան Կաթուղիկոսարանին արարեալ, և անդ ապա հրամայէ հոռովմ քահանայիցն պատարագ ի սուրբ եկեղեցւոջն մատուցանել և քարոզել ի նմա ժողովն Քաղկեդոնի, և հաղորդեցան օրինացն ի միասին թագաւորն և հայրապետն մեր Ներսէս, այլև ժողովեալ ևս եպիսկոպոսունքն:

Եւ այսպէս, ապա թէ կամաւ, թէ ակամայ պատճառք գայթագղութեան բազմաց այս լեալ, չարժեցաւ հաւատն, որ ընձիւղեալ էր ի Սրբոյն Գրիգորէ, և ցայն վայր, անշուշտ, կացեալ մնացեալ:

Իբրև կայսրն լսէ զայնպիսի ամբաստանութիւն վերակացուացն զՀայոց, ո՛չ անագան գրէ բարկութեամբ հրովարտակ առ հայրապետն Ներսէս, առ եպիսկոպոսունս, և առ կիւրապաղատն Սմբատ Վարազտիրոցեան, և առ զօրավարն Թէոդորոս Ռշտունի, յաղագս սիրով և խաղաղութեամբ գնալոյ ընդ Հոռոմս և ոչ խոտելոյ զընկալեալ ժողովն Քաղկեդոնի, ըստ որոյ և պահանջէ յամենեցուն նոցա զգիր հաստատութեան:

Առ այս հրովարտակ կայսերն ժողով արարեալ ի Դուին եպիսկոպոսաց և իշխանաց յամի Տեառն 648, հրամանաւ կաթուղիկոսին և Սմբատայ կիւրապաղատի և Թէոդորոսի Ռշտունւոյ, մերժեն զժողովն Քաղկեդոնի առաջի Դաւթի փիլիսոփայի, որ բերեալ էր զհրաման կայսերն՝ ասելով այսպէս. « Մեք նոր աւանդութիւնս ոչ ընդունիմք, զոր ինչ ընկալեալ եմք վարդապետութիւն հաւատոյ ի հայրապետէն մերմէ՝ Գրիգորէ, և յերից սուրբ Ժողովոց և ի սրբոց Թարգմանչաց մերոց, զայն միայն ունիմք հաստատուն, զայլ ոչ կարեմք յանձն առնուլ»:

Եւ առ հրովարտակ կայսերն զայսչափ և եթ պատասխանեն գոլով ինքեանք ի նեղութեան, ոյր ամբողջութիւն մտացն է. «Մեք աղօթող եմք վասն ձեր և խնդրեմք թոյլ տալ մեզ կալ ի հաւատս մեր, որպէս թոյլ ետուն և թագաւորք Պարսից Կաւատ և Խոսրով»:

Գլուխ Ի.

Առաջին ժողով ի Մանազկերտ Հակառակ Քաղկեդոնականաց

(Ամք Տեառն 651): Յովհաննէս վարդապետ ի սահմանաց Մանազկերտու, Մանազկերտցի կոչեցեալ, ի տեղապահութենէ գահակալութեան Ներսիսի Երրորդի՝ ըստ կացուցանելոյ զօրավարին Հայոց Թէոդորոսի՝ Ռշտունեաց տեառն, որ արդէն գրգռեալ էր ընդդէմ հայրապետին ընդ հաղորդութիւն նորին ընդ յոյնս ի բանս Քաղկեդոնի հաւատոյն և պատճառ լեալ հրաժարելոյ հայրապետին յաթոռոյ ի Տայս, տեսեալ, ըստ գրելոյ Հ. Զամչեանի, թէ հայք ըստ մեծի մասին պահս Քառասնորդաց ըստ օրինակի յունաց պահեն ի բռնադատելոյ զօրավարին Յունաց, և ոմանք զտօն Ծննդեան առանձին կատարեն, և քահանայք ոմանք սկսեալ են խմորուն և ջրախառն պատարագել, և զայլս այսպիսի միտեալ ի դաւանութիւն յունաց, հարաւ ի նախանձ բարկութեան և հաւանեցուցեալ զեպիսկոպոսս և զվարդապետս Հայոց զինիլ ընդդէմ նոցա և հնարել խափանել զայն ամենայն, գնայ ի Մանազկերտ՝ հանդերձ միաբանելովքն, զի ի Դուին առ լինելոյ բանակին յունական՝ ո՛չ իշխեաց առ ահին, և անդ ապա ժողով արարեալ՝ նզովեաց զժողովն Քաղկեդոնի և զտոմարն Լևոնի, ևս և զժողովն Կարնոյ՝ հանդերձ Եզր կաթուղիկոսիւ, որ անդ ուրեմն ընկալեալ էր զքաղկեդոնական դաւանութիւնն՝ յառաջ բերեալ փաստս ապացուցականս, իբր քաղկեդոնականաց բաժանաբար ասացեալ զերկու բնութիւն ի Քրիստոս, ընդ դէմ որոյ սահմանեաց ասել մի բնութիւն ի Քրիստոս անշփոթ:

Կարգեցին ի սմին ժողովի գումարեալ եպիսկոպոսք և զհինգ կանոնս ընդ դէմ արարողութեանց և ծիսից յունաց, զորս արդէն ընկալեալ էին ի Հայոց ոմանց ի Դուին:...

Ապա Յովհաննէս վարդապետ Մանազկերտցի գրէ յաղագս այսր ժողովոյ զճառ մի յընդունելութիւն ժողովոյն ի մէջ ազգին, ըստ որոյ և յետ ժամանակի այս ժողով հռչակեցաւ յանուն Յովհաննու Մանդակունւոյ, որ զյարգ մեծ ի մէջ ազգին ունէր:

Գլուխ ԻԱ.

Առաջին ժողով ի Պարտաւ, մերձ ի Դանձակ Աղուանից, վասն ընդդեմ-ռելեան կաթողիկոսին Աղուանից և կանոնաց ինչ

(Ամք Տեառն 709): Յաղագս ընդունելոյ կաթուղիկոսին Աղուանից Ներսիսի և դշխոյի նոցին զժողովն Քաղկեդոնի, Եղիա կաթուղիկոս յԱրճիշոյ, յետ բազմադիմի յորդորանաց, յետս կալոյ յընդունելութենէ ժողովոյն, տեսեալ զհաստատութիւն նոցին և լուեալ զամբաստանութիւն աղուանցւոց զկաթուղիկոսէն և զդշխոյէն յաղագս սոցին իրաց, մատնէ զնոսին կապանօք ի ձեռս ամիրապետին Օմարայ, որոյ ընդ իշխանութեամբ էր ի նմին ժամանակի աշխարհ Հայաստան: Եւ ինքն Եղիա, գնացեալ յԱղուանս աթոռանիստն Պարտաւ, առնէ ժողով եպիսկոպոսաց, որոց հաւանութեամբ ձեռնադրէ նոցին ի կաթուղիկոսութիւն զՍիմէովն ոմն փոխանակ Ներսիսի, յորում և Սիմէովն, յաղագս բարեկարգութեան աշխարհին Աղուանից, սահմանէ զքանի մի կանոնս:

Գլուխ ԻԲ.

Եօթներորդ ժողով ի Դ-ին վասն բարեկարգ-ռեան եկեղեց-ոյ

(Ամք Տեառն 719): Ի յաջորդել Յովհաննու Դրդի Իմաստասիրի ի գաւառէն Տաշրաց յաթոռն Հայրապետական յամի 718, վերստին մտեալ էին յազգս Հայոց ինչ ինչ յունական ծէսք և արարողութիւնք և անկարգութիւնք ի պողիկեանց, նախ՝ աղմուկ չփոթից լինէր բազում ուրեք ի կեղծաւորութենէ ամենաչար աղանդաւորացն պողիկեանց, որք եկեալ էին ի Հայս յաւուրց Եղիայի:

Երկրորդ՝ յանկարգութենէ ոմանց քահանայից և աշխարհականաց բազում ինչ անպատշաճ գործէին յեկեղեցւոջ և արտաքոյ:

Երրորդ՝ հակառակասէրք ոմանք, եկեալք ի մասնէ Յունաց առ Հայաստանեայսս, վիճէին ի վերայ ծիսից եկեղեցւոյ՝ պնդելով, թէ խմորուն և ջրախառն պարտ է պատարագել և առանց խաչեցարի զՍ-ուրբ Աստո-ածն երգել, և զտօն Ծննդեան ի 25 դեկտմ. կատարել առանձին, զիւղ երեխայից և հիւանդաց ի կիր առնուլ, յաւուրս քառասնորդաց ի շաբաթու և ի կիւրակէի չուտել զձուկն և զձէթ, (այս կանոն սահմանադրեցաւ յայնժամ ի Մանազկերտ ի Յովհան-

նէս վարդապետէ Մանազկերտցւոյ, զոր և բազում Հայաստանեայք վարէին անխտիր ընդ դէմ յունական ծիսից) և այլք բազում բանք:

Յայսպիսի յանկարգութեանս չեղեալք, ոմանք սկսան յայլ ինչ խոտորել արտաքոյ կարգի, ոմանց խմորուն և այլոց ջրախառն պատարագել, բազմաց ՆԱՐԷ ԱՊՈՒՇԱՆ ի դէմս Երրորդութեան առանց խաչեցարի երգելով, և կիսոց յՈրդին սուրբ խաչեցարիւ հանդերձ, շարժեցին զանարատ ծէս Հայաստանեայց Սրբոյ Եկեղեցւոյ, անարատ ընկալեալ ի Սրբոյն Գրիգորէ, յորոց առ հասարակ ազգն գայթագղեալ, որ զնախնի սովորութիւն ունէին առաջնորդ յարարողութիւնս, գուն գործէին հալածել զամենեսին զնոսա միտեալս զհետ յունական արարողութեանց, և քանզի մեծ հայրապետն Յովհաննէս Իմաստասէր ի դառնութեան յայնմիկ ժամանակի փոյթ ունէր ի խաղաղութեան զազգն պահել և հօտին իւրում ուղղութեամբ լինել խնամատար, ժողով մեծ գումարեաց եպիսկոպոսաց մեծին և փոքուն Հայոց ի Դուին մայրաքաղաքի յԱթոռն Հայրապետական, յորում ինքնին Հայրապետն, առաջի եղեալ զվիճակ եկեղեցւոյն յայնմ ժամանակի և զառաջին բարեզարդութիւնն կարգեալ ի սրբոց հայրապետաց ի նախնումն և յետ երկարաբան գեղեցիկ ատենաբանութեանց իւրոց յաղագս այսոցիկ, կարգէ ի ժողովի յայնմիկ զերեսուն և երկու կանոնս, զորս դիցուք ի ստորև:

Իսկ յաղագս մերժելոյ զմոլորութիւն Յուլիանեայ Աղիկառնացւոյ և զգիրս նորա հանդերձ ամենայն համախոհիւք նորին, արար ժողով ի Մանազկերտ, զի Անաստաս պատրիարգ, լուեալ յերկուց ոմանց ասորի խռովարար, բանսարկու անձանց ի Բարշապհոյ և ի Գաբրիէլէ, զորս հալածեալ էր սրբոյ հայրապետին մերոյ ի Հայաստան աշխարհէ յետ անսաստութեանց նոցին նորին խրատու, գրէ առ մերս հայրապետ, թէ ըստ լսելոյ իւրոյ՝ հայք խոտորեալ են ի մոլորութիւնս Յուլիանոսի Աղիկառնացւոյ և առ աչօք զտնօրէնութիւնն Քրիստոսի ասեն, ըստ որոյ՝ ազգ առնէ զգուշացուցանել զազգս մեր յայնպիսի մոլորութենէ և խնդրէ ևս ժողովով մերժել զնոյն աղանդ Աղիկառնացւոյն և առ այս առաքէ առ հայրապետն զվեց եպիսկոպոսունս, որք ի միասին ընդ հայրապետին և ընդ վեց եպիսկոպոսաց մերումս Հայաստանեայց Եկեղեցւոյ ի ժողովին ի Մանազկերտ հերքեցին զՅուլիանոսի գիրս և զհամախոհս նորին և նզովեցին ևս զերկուս զայնոսիկ զարս բանսարկուս ասորիս՝ զԲարշապուհ և զԳաբրիէլ:

Այս ժողով, արարեալ ի սրբոյ հայրապետէն յետ եօթն ամաց առաջնոյն, եղև երկրորդ ժողով ի Մանազկերտ:

Եւ յաղագս բարեկարգութեան եկեղեցւոյ կանոնադրութիւնք սորին այսոքիկ են, որպէս ի վեր անդր յիշեցաւ, որոց ընդարձակն տպագրեալ է ի գիրս նորին ի Վենետիկ:

Ա. Եկեղեցականք յարբեցութեան գտեալ՝ մի՛ իշխեսցեն մատչիլ ի խորհուրդ, բայց եթէ յետ արժանաւոր ապաշխարութեան:

Բ. Աշխարհականք արբեցողք եթէ ոչ զգաստասցին՝ որոշեսցին:

Գ. Յաւագ շաբաթու մի՛ լիցի պսակ:

Դ. Որք առ վաղիւ պսակելոց են, մի՛ յարբեցութեան զեղխեսցին յերեկոյն:

Ե. Ի Զատկէ մինչև ի Պենտէկոստէ մի՛ լիցի հարսանիք:

Զ. Յաղուհացսն յաւուրս շաբաթու և ի կիւրակէի պատարագ մատուսցի անխափան:

Է. Ի հացն և ի գինին, որք մատչին ի սեղան պատարագի, մի՛ նորաձևս ինչ առնել, այլ հաց անխմոր և գինի անապակ ընծայել ի խորհուրդ ըստ նախնի աւանդութեան ազգին՝ առեալ ի Լուսաւորչէ:

Ը. Զսուրբ մեռոնն հայրապետն օրհնեսցէ:

Ը. Զձէթն երեխայութեան յատուկ ի կիր առնուլ, զոր քահանայն օրհնեսցէ այնչափ, որչափ պիտոյ է:

Ժ. Սեղան պատարագին մի՛ լիցի փայտեղէն, այլ քարեղէն և անշարժ:

ԺԱ. Աւազանն մկրտութեան քարեղէն լիցի:

ԺԲ. Յընծայել ուրուք յերեխայութիւն՝ առ դրան մկրտարանին օծցի և ապա տարցի ի մկրտարանն:

ԺԳ. Որ հանդերձեալ են պսակիլ, տարցէ զնոսա քահանայն յեկեղեցին և անդ պսակեսցէ:

ԺԴ. Սոյնպէս արասցեն և որք ընդունելոց են զերկրորդ պսակ, իսկ եթէ յառաջ, քան զպսակելն գործեալ իցեն ինչ, ապաշխարեսցեն նախ և ապա չկամիցեն պսակիլ կամ ի միմեանց մեկնել, որոշեսցեն յեկեղեցւոյ:

ԺԵ. Յերեկոյի շաբաթուն ՏԼ.ՈՅՈ ՏՈՐՆ ասել և զպաշտօն Մարտիրոսաց կատարել և ծունր չկրկնել:

ԺԶ. Ի գիշերի, յոր լուսանայ կիւրակէն, գիշերապաշտօն առնել և տքնութեամբ և աղօթիւք զանցեալ աւուրց զյանցանսն ջնջել և պատրաստել զանձն յարժանաւոր ընդունելութիւն հաղորդութեան՝ ակնկալեալ անձկանօք Տեառն:

ԺԷ. Յառաւօտուն և յերեկոյի և ի ժամ պատարագի ՏԱՍ-ՐԲ ԱՊՈՍԺՆ ասել:

ԺԸ. Յերգելն զՍուրբ Աստուածն ի դէմս Որդւոյ՝ մի՛ նուազեցուցանել ի շնորհաց խաչին Քրիստոսի՝ միանգամ և եթ խաչեցեալ ասելով, այլ՝ երիցս:

ԺԹ. Ի գիշերային ժամուն զամենայն կանոնեալ սաղմոսն և զառ ի Յովհաննէ Մանդակունւոյ կարգեալ քարոզն և զաղօթսն ասել:

Ի. Զառաւօտեան ժամու կարգսն անթերի կատարել:

Իա. Նոյնպէս և զերեկոյինն:

ԻԲ. Եւ զԿիւրակէին ըստ պատշաճի:

ԻԳ. Եւ զԳիշերապաշտամանն ըստ կանոնաց:

ԻԴ. Ի տօնի Յայտնութեան կատարել զՋրոյն օրհնութիւն և ի Ծաղկազարդի ոստս բառնալ:

ԻԵ. Ի Յայտնութեան ընթեռնուլ զՄկրտութեան և Ծննդեան աւետարանս, զի որպէս տօնն երկուցն ևս հասարակաց է, նոյնպէս և կարդացմունքն:

ԻԶ. Եթէ ոք չինեսցէ խաչ յինչևիցէ նիւթոց, տացէ քահանային օրհնել և օծանել մեռոնաւ:

ԻԷ. Պաշտել զխաչս օրհնեալս և երկիր պագանել այնմ և մի՛ հրաժարել յերկրպագութենէ, թէ և մեռանել հասանիցէ:

ԻԸ. Զօր կիւրակէի մինչև ցերեկոյ պատուել և մի՛ մինչև ցճաշն:

ԻԹ. Մի՛ անխտիր հաղորդութիւն առնել ընդ յիմար հերձուածողս, զի պատկառեսցին:

Լ. Մի՛ բնականալ ի տեղիս չարաղանդիցն պօղիկեանց, մի՛ աղօթել անդ, և մի՛ ընտանենալ առ նոսա, և մի՛ խօսակից լինել ընդ նոսա, այլ ամենևին հեռանալ և գարշել ի նոցանէ, զի որդիք սատանայի են նոքա և լուցկիք յաւիտենական հրոյն, և եթէ ոք յարեսցի ի նոսա կամ բարեկամասցի, խոշտանգանօք և ծանր պատժովք պատուհասեսցի, մինչև զգաստասցի, և եթէ վերստին յարեսցի ի նոսա, հատցի իբրև ժանտախտ յանդամոց եկեղեցւոյն Քրիստոսի:

ԳԼՈՒԽ ԻԳ.

Երկրորդ ժողով ի Պարսպա-, ո-ր եդան վասն Ն շորս կանոնք վասն Քարբեկարգո-ռնեան եկեղեց-ոյ

(Ամք Տեառն 768): Սիովն կաթուղիկոս՝ երջանիկ այր՝ եպիսկոպոս Աղձնեաց, յաջորդեալ երկրորդն Տրդատայ ի Հայրապետու-

թիւն ի հրամանէ Սուլէյման ոստիկանի աշխարհին Հայոց ի Դուին, ի մտի եդ ժողովով բառնալ զթուլութիւն և զանկարգութիւնս և զբռնակալութիւնս և զօշաքաղութիւնս յոմանց առաջնորդաց եկեղեցւոյ և դարման ուղղութեան մատուցանել նմին և անարատ հովուել զհօտ բանաւոր ոչխարաց տանն Աստուծոյ:

Այսու հոգատարութեամբ և ջանիւք գրեաց առ ընդհանուր եպիսկոպոսս Հայոց աշխարհին յամենայն տեղիս վիճակաց նոցին գալ, գումարիլ ի ժողով ի Պարտաւ քաղաք Աղուանից, զի ոչ կարէր ի Դուին հանգստեամբ գնոյն առնել, գուցէ յերեսաց բազմութեան պարսից: Այլ զի բազմաց ի նոցանէ անկարելի թուէր ի ժամանակին անդր ամենեցուն հասանել ըստ հայրապետականն հրամանի, բազումք թուղթս և հաւանութիւնս գրեցին առ հայրապետն, հնազանդել ամենայնի և ընդունել զոր ինչ ժողովն սահմանեսցէ:

Ապա Սիովն կաթուղիկոս, առեալ ընդ իւր զերևելի եպիսկոպոսս և զվարդապետս, զվանականս և զվանաց երէցս և զբազմութիւն իշխանաց, գնայ ի Պարտաւ և անդ ժողով արարեալ՝ սահմանէ յաղագս բարեկարգութեան եկեղեցւոյ զքսան և չորս կանոն՝ զոմանս ի նոցանէ ի վաղագոյն հաստատելոց յայլևայլ ժողովս ի Հայաստան, որոց համառօտութիւն է այս:

Ա. Եպիսկոպոս, քորեպիսկոպոս և երէց, եթէ զհետ լինելով փառաց և զբօսանաց անհոգ լիցին ի խնամելոյ հօտին, լուծցին ի կարգէ:

Բ. Եպիսկոպոսունք մի՛ իշխեսցեն ձեռնադրութիւն առնել ի վիճակ այլոյ Եպիսկոպոսի:

Գ. Եպիսկոպոսք մի՛ ստիպեսցեն զյանցաւորս՝ տալ ինչ յեկեղեցի, այլ հրամայեսցեն, զի նոքա իւրեանց ձեռօք տացեն աղքատաց:

Դ. Եպիսկոպոսք մի՛ թոյլ տացեն քորեպիսկոպոսաց կամ քահանայից սեղան հաստատել կամ եկեղեցի օրհնել:

Ե. Եպիսկոպոսք մի՛ իշխեսցեն մեռովն օրհնել կամ յօրհնեալն յաւելուլ ինչ, այլ ի հայրապետէն առցեն ամ յամէ:

Զ. Եպիսկոպոսք կարգեսցեն վարդապետ յեկեղեցւոջ՝ անխափան քարոզել և ուսուցանել զժողովուրդն:

Է. Վանք չինեսցին ի գեօղս, զի անդ հանգիցեն առաջնորդք, նաև հիւրանոց և աղքատանոց, և հաս նոցա ի գիւղից տացի:

Ը. Աւազանն մկրտութեան մաքուր պահեսցի և պատուեսցի, և ջուր մկրտութեան մի՛ թափեսցի յանսուրբ տեղիս:

Թ. Քահանայ, որում հասեալ է կարգ սպասաւորելոյ եկեղեցւոյ, սրբութեամբ արասցէ և զաստուածային աղօթսն անխափան կատարեսցէ:

Ժ. Քահանայ եթէ ամուսնասցի կամ եթէ երկրորդ ամուսնացեալն ձեռնադրեսցի, մի՛ իշխեսցէ քահանայութիւն առնել, այլ յապաշխարութեան կացցէ:

ԺԱ. Քահանայք զգոյշ լիցին մի՛ պսակել զհաւատացեալս ընդ անհաւատի:

ԺԲ. Զնշխարս սուրբ խորհրդոյն քահանայք պատրաստեսցեն, և մի՛ աշխարհականք:

ԺԳ. Եթէ քահանայ պսակ արասցէ երրորդաց յառաջագոյն շնացելոց, նզովեալ եղիցի և պսակն քակտեսցի:

ԺԴ. Ինչք և սպասք եկեղեցւոյ մի՛ վաճառեսցին:

ԺԵ. Կրօնաւորք մի՛ տեղափոխ լիցին վանաց ի վանս, այլ կացցեն անդ, ուր կրօնաւորեցան, բայց եթէ կոչեսցեն ի վիճակ առաջնորդութեան:

ԺԶ. Ամուսնութիւն մի՛ լիցի մերձաւորաց մինչև ի չորրորդ զարմ:

ԺԷ. Անկելանոցք չինեսցին վասն նոցա, որք յաղագս ախտից ինչ հալածեալ լինին ի քաղաքաց, և հաս կարգեսցի նոցա ի ժողովրդենէ:

ԺԸ. Ի մեռանել ուրուք՝ տուրք ողորմութեան վասն յիշատակի հոգւոյ նորա տացին այնմ եկեղեցւոյ և այնմ վանից, որոյ էր ժողովուրդ, բայց եթէ յաւելցի ինչ:

ԺԹ. Բանադրեալն յեպիսկոպոսէ եթէ յառաջ, քան զարձակելն մեռցի, հանդիսիւ մի թաղեսցի:

Ի. Եթէ երեխայ ոք առանց մկրտութեան մեռցի, հանդէս թաղման մի՛ կատարեսցի ի վերայ նորա:

ԻԱ. Քորեպիսկոպոսունք մի՛ իշխեսցեն փակել զդրունս եկեղեցւոյ կամ խափանել զաստուածային պաշտամունս:

ԻԲ. Իշխան գեղջն եթէ վասն պահանջելոյ զհարկս տացէ փակել զեկեղեցին՝ նզովեալ լիցի:

ԻԳ. Որք գերի վարեալ ի հեթանոսս, եթէ կեցեալ իցեն ըստ կրօնի հեթանոսաց և անպատշաճ ինչ գործեալ ըստ նոցա, թէպէտ և առանց ուրանալոյ զհաւատս, ի դարձին իւրեանց ամ մի ապաշխարեսցեն և յայնմ ամի ծոմապահ լիցին յաւուրս չորեքշաբաթու և ուրբաթու:

ԻԴ. Սուրբ Գիրք համարեսցին ի Հին Օրինաց՝ սոքա՝ Ծննդոց, Ելից, Ղեւտացւոց, Թուոց, Բ. Օրինաց, Յեսուայ, Դատաւորաց, Հռութայ, Զրդ. Թագաւորաց, երկու գիրք Մնացորդաց, երկու գիրք Եզրայ, Տոբիթայ, Յուդիթայ, Եսթերայ, Մակաբայեցւոց, չորս գիրք

Սաղոմոնի, Յոբայ, Սաղմոսք Դաւթի, գիրք երկոտասան Մարգարէից, Եսայեայ, Երեմիայ (ընդ որ իմանի և Բարուքայն), Եզեկիէլի և Դանիէլի, և Իմաստութիւն Սիրաքայ:

Զայս ամենայն քսանևչորս կանոնագրութիւնս կոնդակաւ ընդ ամենայն աշխարհն Հայոց սփռեալ՝ Սիովն կաթուղիկոս տարածեաց և յաշխարհն Աղուանից՝ հաւանութեամբ կաթուղիկոսի նոցին և իշխանացն:

Գլուխ ԻԴ.

Առաջին ժողովն յԵրնջակ յաղագս վնասոյ–ռեան վարդապետի Յովհաննու–կաթուղիկոսի Օվայեցւոյ

(Ամք Տեառն 841): Յետ Դաւթի Երկրորդի, նստեալ յԱթոռ Կաթուղիկոսութեան Յովհաննու Հինգերորդի ի Կոտայից, ի գեղջէ Օվայից, այր խոնարհամիտ և անարգամեծար, յամի Տեառն 833, իբրև չարաբանք ոմանք ի տանէ Կաթուղիկոսարանին յութերորդ ամի Հայրապետութեան սորա ամբաստանութիւն զսմանէ առ Բագարատ Բագրատունի մատուցանեն, որ պատրիկն էր ի վերայ ազգին, յաղագս ընկենլոյ զնա ի կաթուղիկոսութենէ և լուեալ, թէ պատրկին այնմիկ ունկն մատուցեալ ամբաստանողացն իւրոց կամի վրէժխնդիր ինքեան լինել և գրել հրովարտակ ընդ ամենայն տեղիս, ի բաց կալ յինքենէ և ընկենուլ զինքն ի կաթուղիկոսութենէ, ապա բանադրէ զնոյն ինքն զպատրիկն Բագարատ, որ յաւէտ յաղագս սնոտի պարծանաց իշխանութեան իւրոյ և ոչ ըստ իրաւանց զայն առնէր, և ինքն թողեալ զԱթոռն Հայրապետական՝ գնայ յԱյրիվանս ի Գեղարքունիս, ի վայր Սրբոյն Սահակայ:

Զայս ամենայն լուեալ՝ ասպետն Սահակ Բագրատունի և Գրիգոր Սուփան՝ տէր Սիւնեաց, և այլ նախարարք գան, ժողովին յԵրնջակ, և զեպիսկոպոսունս Հայոց անդր գումարեալ՝ քննեն զբանս բամբասողաց յաւէտ երից արանց զհայրապետէն, և սուտ հանեալ զամենայն ամբաստանութիւնսն՝ վերստին հաստատեն զՅովհաննէս յԱթոռ Կաթուղիկոսութեան, և ի յաջորդ ամի ժողովոյն անմեղութիւն մեծի հայրապետին ոչ ընդ վարագուրաւ ամբաստանութեան ամբաստանողացն մնայր, զի պատիժ Աստուածահաս զերիս զարսն կորուսանէր, որպէս և նա ինքն Բագարատ էառ զհատուցումն՝ յետ քանի ամաց անկեալ ի դատապարտութիւն:

Գլուխ ԻԵ.

Առաջին ժողով ի Շիրակա-ան, ուր ընդրեցա- Զաքարիա կաթո-ղիկոս ի Կոտայից

(Ամք Տեառն 854): Յաւուրս սարսափելի կոտորածին գրեթէ ընդհանուր Հայաստանեայց յոստիկանէն Բուղայէ՝ ըստ հրամանի ամիրապետին հագարացւոց, յորժամ Սմբատ սպարապետ, որ փութայրն հասանել առ նոյն ոստիկան ի Դուին, յետ փոխելոյ յաշխարհէս Յովհաննու Ե. հայրապետի, որ մեկուսացեալն էր ի վանս Մաքենոցաց վասն դառնութեան ժամանակին, հրամայէ վաղվաղակի ժողով եպիսկոպոսաց գումարել յԵրազգաւորս և ընտրել զնոր կաթուղիկոս ի Հայրապետութիւն Հայաստանեայց Աթոռոյ:

Անդանօր ի ժողովին ընտրեն ապա ի կաթուղիկոսութիւն զԶաքարիա ի Կոտայից՝ ի Ձագ գեղջէ, և ի միում աւուր ըստ առն արժանաւորութեան կոչեն զնա յաստիճան սարկաւագութեան, քահանայութեան, վերածեն յեպիսկոպոսութիւն և ձեռնադրեն ի Կաթուղիկոս Հայաստանեայց Եկեղեցւոյ ի Ծաղկազարդի կիւրակէին՝ առ ստիպման հարկին և կարճութեան ժամանակին ըստ դառնութեան անցիցն Հայաստանեայց:

Գլուխ ԻԶ.

Երկրորդ ժողով ի Շիրակա-ան վասն ֆննո-ռէան հա-ապոյ Ի- ժողովոյն Քաղկեդոնի

(Ամք Տեառն 862): Յաղագս միաբանութեան Հայոց ընդ Յոյնս յընդունելութիւն ժողովոյն Քաղկեդոնի, Փոտ պատրիարգ Յունաց Կոստանդնուպօլսոյ գրէ առ Աշոտ մեծ իշխանն Հայոց և առ Զաքարիա կաթուղիկոս, որպէս զի ժողով արարեալ՝ քննեսցեն զճշմարտութիւնն, և մի խտրոց անջատման և հակառակութեան ի հաւատոյսն արկցեն ի մէջ երկուց ազգացն, զի Զաքարիա կաթուղիկոս յառաջ, քան զայս լուեալ զնեղութիւն Հայոց յիշխանութեանն Յունաց ի նոյն իսկ պատրիարգէն յաղագս բանի յիշեալ ժողովոյն՝ գրեալ էր առ նա թուղթ, և առ այն, զի զՀայս նախատական անուամբ կոչէին ծանծալիկեանս:

Ընկալեալ Զաքարեայ զթուղթ պատրիարգին՝ առնու ընդ իւր զՆանայ սարկաւագ Ասորի և զարքեպիսկոպոսն Նիկիոյ՝ զՎահան

զնամակաբեր պատրիարգին, և գնայ առ Աշոտ իշխան յԵրազգաւորս և նորին հրամանաւ ժողով առնէ բազմութեան եպիսկոպոսաց և վարդապետաց, կրօնաւորաց և երևելի իշխանաց ի ներկայութեան նորին Աշոտոյ, ուր հաստատեն զխորհուրդ Երրորդութեան Աստուածային անձանց և մարդեղութեան Քրիստոսի և զԱստուածամայրութիւն Սրբոյ Կուսին, որպէս դաւանի մերս եկեղեցի, այլ զժողովն Քաղկեդոնի հերքեն հարք ժողովոյն՝ հաստատեալ, թէ ընդդէմ է այն ժողով առաքելական աւանդութեանց և երիցն Տիեզերական Սուրբ Ժողովոց:

Յաւարտ ժողովոյն Վահան եպիսկոպոս (զորմէ կարծէ Հ. Զամչեան լինել հայ ազգաւ և յոյն կրօնիւք), տեղեակ երկուցն ևս լեզուաց, խօսի երկար ճառս ի վերայ խորհրդոց Ամենասուրբ Երրորդութեան և մարդեղութեան և ի դիմաց ժողովոյն կարգէ զհնգետասան կանոնս՝ հանդերձ նզովիւք: Այլ այս կանոնք սորին Վահանայ չեղեն ընկալեալ ի կանոնագիրս մեր, վասն այսորիկ և ոչ դնեմք զնոյնս աստանօր:

Գլուխ ԻԷ.

Ա՛ռաջին Ժողով ի քաղաքն Անի վասն դիմելոյ զվարս Վահանայ կաթո՛ղիկոսի

(Ամք Տեառն 970): Անանիայ կաթուղիկոսի, յաջորդեալ ի Հայրապետութիւն ըստ նորին յանձնարարութեանն Վահան ի Սիւնեաց, ընկալաւ զԿաթուղիկոսութիւն Հայոց մեծաւ ժողովով յԱնի քաղաք, ուր և գտաւ Յովհաննէս կաթուղիկոս Աղուանից:

Սորա յառաջագոյն, միտեալ ընդ ժողովն Քաղկեդոնի և ի կաթուղիկոսութեան ևս թղթով միաբանեալ ընդ յոյնս և ընդ վիրս ի ձեռն մետրապօլտին Մելիտինոյ, յարոյց ընդդէմ իւր զուղղափառ Եկեղեցւոյ Հայաստանեայց զՋատագովս, զեպիսկոպոսս և զվարդապետս, յորոց գլխաւորք էին՝ Խաչիկ՝ եպիսկոպոս Արշարունեաց, Պողիկարպոս՝ առաջնորդ Կամրջաձորոյ, Սարգիս՝ վանական Հոռոմոսի վանաց, և Ստեփաննոս՝ Սևանայ, որք հրամանաւ Աշոտոյ արքայի ժողով բազմաց եպիսկոպոսաց և միանձանց գումարեալ յԱնի՝ քննեցին զմիտս և զգործս Վահանայ, և ընդ յայտնութիւն միաբանութեան նորա ընդ յոյնս ի վերայ Քաղկեդոնի ժողովոյն և յերկպառակելն, այն ինչ ժողովն խորհէր ընկենուլ զնա յԱթոռոյ, Վահան, ինքնին թողեալ զհայրապետութիւն, փախստեայ անկանի

յաշխարհ Վասպուրական առ Աբուսահլ արքայ Արծրունի:

Ըստ որոյ և ժողովն ընտրեաց առ այս ի Կաթուղիկոսութիւն Հայոց զՍտեփաննոս Գ.՝ վանահայր Սևանայ վանաց, յազգականութենէ Մաշտոցի և Յովհաննու պատմաբանի:

ԳԼՈՒԽ ԻԸ.

Երկրորդ ժողով յԱնի, ո՞ր ընդդէմ Խաչիկ ի Կաթո՞ղիկոսո՞ւթիւն Հայոց

(Ամք Տեառն 972): Ստեփաննոս՝ յաջորդ Վահանայ, յերկրորդում ամի Հայրապետութեան իւրոյ նզովս արձակէ առ Վահան և առ Ապուսահլ, որ պաշտպանեաց զնա, և նա առ սոյն Հայրապետ զփոխադարձն: Առ որ Ստեփաննոսի ժողովեալ զբազմութիւն կրօնաւորաց ի Տարոնոյ, ի Հաշտենից, ի Ծոփաց և ի Խորձենոյ, ընդ որս և զՄովսէս վարդապետ և զԲաբկէն վանական Սիւնեցի, գնայ յաշխարհ Վասպուրականի ի յանդիմանութիւն Վահանայ, այլ չև սոցա հանդիպեալ արքայի և նմին Վահանայ, աքսորին արքունի հրամանաւ յԱղթամար կղզին, ուստի ի խոնարհիլ ոմանց ի նոցանէ առ Ապուսահլ և յարձակել յիւրաքանչիւր տեղիս, Ստեփաննոս հայրապետ միայն վարեցաւ յԱպուսահլայ ի Կոտորոց բերդ, ուր կացեալ նորին ամիսս ինչ՝ մեռանի:

Ապա ըստ այսմ հանգամանաց յետ ամսոց ինչ, յամի 972, առաջնորդք Հայոց աշխարհի, ժողովեալ վերստին հրամանաւ Աշոտոյ՝ հանդերձ եպիսկոպոսօք և վանականօք յարքայանիստն Անի, կացուցանեն ի Կաթուղիկոսութիւն Հայաստանեայց Աթոռոյ զԽաչիկ Արշարունեաց եպիսկոպոս՝ զքեռորդի Անանեայ Հայրապետի:

Թէև ոմանք ըստ յորդորանաց արքայի Աշոտոյ խորհին զՎահան վերստին կոչել յԱթոռն, այլ չատք ընդդիմացեալք յարուցին զխռովութիւն, վասն այնորիկ և զԽաչիկ կոչեցին:

ԳԼՈՒԽ ԻԹ.

Առաջին Ի երկրորդ ժողով ի Հարք ընդդէմ Թոնդրակեցի աղանդա-որսաց

(Ամք Տեառն 1002): Յանհետել Սարգիս կաթուղիկոսի զաղանդ Թոնդրակեցւոց, սկզբնաւորեալն յաւուրց հինգերորդն Յովհաննու Ովայեցւոյ գրեթէ յամէ Տեառն 833, յորում կոչեցաւ նա յԱթոռ ըստ դնելոյ և մերումս Մագիստրոսի, գումարէ ժողով եպիսկոպոսաց ի Հարք ըմբերանել զաղանդաւորսն և արմատախիլ զնոյն առնել, բաց ոչ կարացեալ յառաջնում ժողովի որոշել զվճիռ իմն, վերստին գումարեցան եպիսկոպոսք, վարդապետք, երիցունք և կրօնաւորք ջնջել իսպառ զաղանդ Թոնդրակեցւոց, որ ի սմին ժամանակի առաւել իբրև հուր արծարծեցաւ յաւուրս Սարգսի հայրապետի, զի Յակովբոս եպիսկոպոս ոմն ի ժամանակին յայնմիկ՝ առաջնորդ գաւառին Հարքայ, ըմբռնեալ յաղանդ Թոնդրակեցի, կեղծաւորեալ առ երեսս, վարէր զխիստ կեանս քրձազգեացս, բոկագնաց և պահեցողութեամբ, որով բազմաց զսիրտս յինքն յանկուցեալ, մանաւանդ յիշխանաց, քարոզէր, Թէ պատարագք և նուիրմունք և աղօթք ոչ օգնեն վասն Թողութեան մեղաց, այլ որ մեղաւ, զոր ինչ ինքն գործէ յանձին իւրում, այն միայն օգնէ նմա: Զայս քարոզէին և հետևողք նորա և զենուլ զանասունս խտուրս աղքատաց՝ ամենևին ծաղրականս գրէին, և հաղորդել ժողովրդոց ի կենարար մարմին և արիւն՝ անգոսնէին և զնոքօք ծիծաղէին մինչև անկանել տարակոյս ի ժողովուրդն, ոմանց յետս կալ յառաջնորդէն և ի հետևողաց նորին և այլոց երկբայեալ ի խորհուրդ եկեղեցւոյ, որովք շփոթ մեծ և շշուկ ծագեալ ընդ ամենայն տեղիս, հոգևորականք առհասարակ յաղօթս ապաւինեցան առ Աստուած՝ այց առնել և բառնալ զչարն ի միջոյ:

Այլ Հարք ժողովոյն, Թէ և անդէն զառաջնորդն մոլորեցուցիչ՝ զՅակովբոս դատապարտել կամէին և հատանել յեկեղեցւոյ, բայց տեսեալ, Թէ նա ապաւինեալ է յիշխանս, և ինքեանք ո՛չ ունին ի ձեռին զյայտնի յանցանս նորին, լռեցին՝ վերստին յանձնեալ զդատաստան առն ի ձեռս Աստուծոյ, մինչև Սարգիս աշակերտ նորա Կարնեցի՝ այր երկիւղած, ի վերայ հասեալ չար աղանդոյ վարդապետին և անօրէն գործոցն, ի ծագել խռովութեանս ի մէջ ազգին վաղվաղակի ծանուցանէ սրբոյ հայրապետին, որ և ձեռնտուու-

թեամբ ոմանց իշխանաց առ ինքն բերեալ զՅակովբ եպիսկոպոս, ելոյծ զնա ի քահանայութենէ և աղուեսադրոշմ ի ճակատն եդեալ՝ շրջեցուցանել տայ զնա ի հրապարակս, որոյ առաջի քարոզն աղաղակէր. «Որ ի սուրբ հաւատոյ Եկեղեցւոյ Քրիստոսի սողոսկեալ՝ յանօրէն Թոնդրակեցեաց ի մարդադէմ գազանաց փարախն մտեալ միաբանի, դատ և իրաւունս զայս կրեսցէ»:

Գլուխ Լ.

Երբորդ ժողով յԱնի վասն վնասոյ–ՊԼան վարուց Դէոսկորոս կաթուղիկոսի

(Ամք Տեառն 1036): Յովհաննու Սմբատայ արքայի Հայոց և նախարարացն, դժուարացեալք ընդ յարատեւութիւն Պետրոս կաթուղիկոսի՝ Գետադարձն կոչեցելոյ, ի Սեբաստիա և առանձնանալոյ ի նոցանէ զամս չորս ի Վասպուրական, ի Զորոյ վանս, սուտ երդմամբ վերադարձուցեալ զսուրբ հայրապետն յԱնի արքայանիստ՝ կալանաւորէ զնա և առաքէ յարգելանս ի մեծ ամուրն Բջնի առ Վահրամայ՝ հօրեղբօր Գրիգորի Մագիստրոսի, և ապա բերեալ զԴէոսկորոս՝ վանահայր Սանահինի, կացուցանէ արքայ ի կաթուղիկոս, բայց երևելիք եպիսկոպոսացն Հայոց, ո՛չ ընկալեալ զնա, չտան թոյլ նմա ձեռնադրել զոք յեպիսկոպոս և չյիշեն զանունն ի պատարագի, ընդ որ և համօրէն ժողովուրդք չհաճեն երբէք, բայց միայն յարքայէ և ի նախարարաց:

Զանարգութիւն իւր տեսեալ Դէոսկորոսի յաչս ամենեցուն, ինքնին ևս զպատիւ իւր անարգեալ և ձեռնարկ լեալ յանարժանութիւն, կոչէ յեպիսկոպոսութիւն զանպիտանս և զվատթարս ի մարդկանէ, և յաթոռս վերստին՝ զմերժեալսն վասն յայտնի յանցանաց, և զարժանաւորս և զիմաստունս մերժէ յիշխանութենէ՝ յափշտակեալ զնոցին ստացուածս: Առ որ եպիսկոպոսք և վարդապետք Հայոց ի խորհուրդ եկեալ՝ նզովեն զարքայ և զնախարարսն՝ զպատճառսն անակնկալ չարեացս:

Լուեալ արքայի և նախարարաց զայս գործ պաշտօնէից տանն Աստուծոյ և յերկիւղ մեծ լեալ՝ բազում թախանձանօք և աղաչանօք հնարեալ դարձուցանել զՊետրոս յԱթոռն և խոստացեալ հնազանդիլ ի բանս նորա, նա ոչ զիջանի յաղաչանս նոցին, մինչև թագաւորն նախարարաց իւրոց խորհրդով հրաւիրէն աղաչանօք զՅովսէփ կաթուղիկոս Աղուանից ի քաղաքն արքայական, ուր

արքունի հրամանաւ լինի ժողով մեծ հայրապետաց, վարդապետաց և իշխանաց, իբրև չորս հազար անձանց յամի 1036:

Անդ ապա ամենայնիւ պարտաւոր գտեալ զԴէոսկորոս, ընկենուն յԱթոռոյ և պատառեալ զհայրապետական քօղ յերեսս նորին, զոր ցայն վայր հայրապետք զգլխով արկանէին, առաքեն յաքսոր յիւր նախնի վանս Սանահին յետ հայրապետանալոյ նորա զամ մի և զքանի մի ամիսս, և զամենայն զձեռնադրեալս ի նմանէ ընդ բանիւ արարեալ՝ ապաշխարանս ի վերայ նոցին կարգեն, և վերստին հաստատեալ զսուրբ հայրապետն Պետրոս՝ կոչեն զնա յԱթոռ իշխանութեան:

Գլուխ ԼԱ.

Երկրորդ ժողով ի Հարք՝ ընդդէմ Թոնդրակեցւոց

(Ամք Տեառն 1051): Յաւուրս դքսութեան Գրիգորի Մագիստրոսի ի Միջագետս, երկուք ոմանք քահանայ անուամբ ի Թոնդրակեցւոց, ի շնորհացն Աստուծոյ լուսաւորեալք ի գիտութիւն ճշմարտութեան, դիմեն յոտս նորին և պատմեալ նմին զամենայն չարութիւն գործոց աղանդոց իւրեանց՝ մկրտին յանուն Ամենասուրբ Երրորդութեան, կոչեցեալք մին Պողիկարպոս և միւսն՝ Նիկանորա, և աղաչեն զնա բառնալ զաղանդն ի գաւառէ անտի՝ ցուցեալ և ուր ուրեք յաղանդաւորաց ի նորա իշխանութեան ի Միջագետս կային:

Ապա Գրիգոր Մագիստրոս, դիմեալ յԱպահունիս յաւանն Թոնդրակ, քակէ զժողովատեղի նոցա և անդէն կառուցեալ զտաճար անուամբ Սրբոյն Գէորգայ՝ հալածէ զՂազար՝ առաջնորդ նոցին, պատուհասեալ զամենեսին, սրբելով զտեղին, յորոց բազմաց ի Թոնդրակեցւոցն զարհուրեալք, դարձան յաղանդոցն, յաղագս որոց վերստին ժողով արարեալ անդր ի Հարք յամի Տեառն 1051, հրաման առնեն մկրտիլ հազարաւոր բազմութեանն յանուն Ամենասուրբ Երրորդութեանն ի ձեռն Եփրեմ եպիսկոպոսին Բջնոյ, ըստ որոյ և հալածեալքն ի նոյն աղանդաւորաց յամենեցունց և յայլազգեաց ևս դառնային հետզհետէ և ընկալեալ զմկրտութիւնն՝ մտանէին յեկեղեցի սուրբ:

Գլուխ ԼԲ.

Առաջին ժողով ի Սեա-լեառն վասն ընկենլոյ զԳէորգ կաթողիկոս

(Ամք Տեառն 1072): Գէորգ Լոռեցի՝ յատենադպրութենէ Գրիգորի Վկայասիրի, հաճութեամբ իշխանացն կողմանց Ծամնդաւայ, ի հրաժարել նորին Գրիգորի յանապատ, ձեռնադրեցաւ ի նմանէ կաթուղիկոս ի Թաւբլուր, բայց, որպէս երևի, զղջացեալ ընդ այն, ապա Վկայասիրին ի գրգռելոյ հակառակորդացն Գէորգայ, յետ երկար չփոթութեանցս այսոցիկ առնէ Վկայասէրն Գրիգոր ժողով սակաւ եպիսկոպոսաց և վարդապետաց ի Սեաւ լերինն և նոցին թելադրութեամբ ընկենու զԳէորգ յԱթոռոյ Հայրապետութեան և վերստին վարէ ինքն զիշխանութիւնն՝ եկեալ ի Մուտառասուն:

Եւ թէև պատճառ այսր անկման Գէորգայ Լոռեցւոյ զնա ինքն համարի Հ. Ջամչեան, իբր զչարելով նորա ընդ համակրութիւն ազգին առ Վկայասէրն, և խռովութիւնս յարուցանել, յորմէ ստիպեալ իցէ Գրիգոր ընկենուլ զնա յԱթոռոյ, բայց ես համարիմ զսոյն բարուրանք պապականին, մինչդեռ չէ հաստատեալ զբանս իւր վկայութեամբ ժամանակակից պատմագրաց, և զի համակրութիւն ազգին առ առաջին հայրապետն՝ զիա՞րդ առիթ զչարելոյ համարիցի առ ի Գէորգայ, երբ ինքն ևս հաճութեամբ ազգին ձեռնադրեալ էր կաթուղիկոս յիւրմէ Վեհապետէն, առ որում լեալն էր ատենադպիր:

Գլուխ ԼԳ.

Երկրորդ ժողով ի Սեա-լեառն, ո-ր մերժեցա- Դա-ւիթ կաթո-ղիկոս Աղթամարայ

(Ամք Տեառն 1114): Իբրև օծաւ ի Կաթուղիկոսութիւն Հայաստանեայց Գրիգոր Պահլաւունի՝ եղբայր Շնորհալւոյն, ըստ ընտրութեանն Բարսղի Հայրապետի ի մահուան իւրում յամի 1113, ի Կարմիր վանս Սեաւ-լերին, համբաւ առեալ մահուան Բարսղի և կոչման Գրիգորի ի քսանամեայ պատանեկութեանն՝ Դաւիթ արքեպիսկոպոս Աղթամարայ՝ առիթ ինքեան գտեալ զտիս տհասութեան հասակի նորոգ հայրապետին, որ արդէն փայլէր իմաստութեամբ և զառաքինութեամբ ծերոցն անցեալ, ապստամբեալ ի Հայրապետա-

կան իշխանութենէ և խռովութիւն յարուցեալ յազգին՝ ձեռնադրի կաթուղիկոս ի հինգ եպիսկոպոսաց ի Զորոյ վանս և հայրապետանայ յԱղթամար, փաստ ապացուցականս ի մէջ առեալ՝ զգերեզման Վահանայ և այլոց հայրապետաց ի Վասպուրական, զսեղան Սրբոյն Գրիգորի, զքօղ նորա, զգաւազան, զգօտի մաշկեղէն և զնորին զԱՂ սուրբ, և որ մեծն է՝ աթոռ լինել Վասպուրականի, ասէ, թագաւորացն Արծրունեաց:

Ընդ այս ապստամբութիւն Դաւթի և ինքնակոչ ելանել ի գահ Հայրապետութեան, գումարէ Գրիգոր կաթուղիկոս զբազմութիւն եպիսկոպոսաց, վարդապետաց, և վանահարց, և միանձանց, մինչև ցերկու հազար հինգ հարիւր անձինս և առնէ ժողով ի Սեաւլեառն, յորում առաջի արարեալ զապստամբութիւն Դաւթի՝ ամենեքին ձեռագրով բանադրանս և նզովս եդեալ ի վերայ նորին իսկ Դաւթի, և որոց յաստիճան կաթուղիկոսութեան բռնութեամբ կամ կաշառօք ելանիցեն, մերժեցին միանգամայն զնա և վասն այսորիկ գրեցին առ եպիսկոպոսունս և իշխանս յարևելս Հայաստանի և առ նոսա, որք ընկալեալ էին զԴաւիթ, որոց առ այս մերժեալ զնա, դարձան յօրինաւոր հայրապետն և օրհնեցան ի նմանէ, իսկ Դաւիթ միայն նստաւ յԱղթամար, յորմէ և յետ քանի ամաց զԱՂ և զքօղ և զգաւազան Լուսաւորչին գողացեալ ոմանց՝ ածեն առ Գրիգոր:

Յայս ժողով, ասէ հայր Միքայէլ Զամչեան, թուի, թէ սահմանեցաւ այն կանոն, զի ընտրութիւն կաթուղիկոսաց լիցի համաձայնութեամբ չորից գլխաւոր աթոռոց արքեպիսկոպոսաց ի մեծն Հայս, որք են՝ Բջնոյ, Հաղբատայ, Թադէոսի Առաքելոյ վանաց և Տաթևու:

ԳԼՈՒԽ ԼԴ.

Առաջին ժողով ի Հռովմկլայ, ուր ընդդէմ՝ Ներսէս Շնորհալի ի կաթուղիկոս

(Ամք Տեառն 1165): Հասեալ Գրիգոր կաթուղիկոսի ի վերջին չունչ ծերութեանն և ազդեցութեամբ Հոգւոյն իմացեալ զվաղճան կենաց՝ արար ժողով եպիսկոպոսաց և վարդապետաց ի Հայրապետանոց անդր ի Հռովմկլայ, ի նոյն նահանգէ, ուր յետ յանդիման խօսելոյ յորդորական բանից, հաւանութեամբ ամենեցուն ընտրեաց փոխանակ իւր յաթոռ Հայրապետութեան զհարազատ եղբայրն իւր՝ զՆերսէս Շնորհալի, որում բազում անգամ յառաջարկել նո-

ըա, չէր լեալ յանձնառու, որ և յեպիսկոպոսութենէ իւրմէ և ցայն վայր էր նա ինքն շնորհալի հաւասարակից իբր գործավար եղբօր իւրում՝ հոգւով չափ տքնեալ ի յառաջադիմութիւն ազգին և յանքուն հսկողութիւն ի վերայ բանաւոր հօտին Քրիստոսի, յանձն եղելոցն ի Հայրապետական տեսչութիւնն:

Այլ այսմիկ ընտրութեան, թէ և զանձն իւր ոչ արժանի մատուցանէր Սուրբն Շնորհալի, յառանձնութեան պարապել կամելով, սակայն ժողովն ամենայն ստիպեալ զնա ընդունիլ զառաքելապետական զայն պաշտօն ի կոչմանէ Հոգւոյն, որում ամենեքին ակն ունէին, ապա նա ինքն Գրիգոր կաթուղիկոս էօծ զնա՝ զգեցուցեալ նմա զգեստ քահանայապետական կարգի և զքօղ կաթուղիկոսական ի գլուխ նորա արկեալ՝ կոչեաց զնա յԱթոռ իւր, և զգաւազան հայրապետական իշխանութեանն եդ ի ձեռս նորա, երկիր պագեալ նմա իբրև կաթուղիկոսի, ուր ապա բացեալ զհոգեբուղխ բերան իւր՝ Շնորհալին Ներսէս խօսեցաւ զիմաստալից իւր ատենաբանութիւն յիւրում յայնմիկ ձեռնադրութիւն, որպէս կայ յԸնդհանրական թուղթս նորա:

Գլուխ ԼԵ.

Երկրորդ և Երրորդ Ժողովք ի Հռովմկլայ վասն միաբանութեան Հայոց ընդ յոյնս

(Ամք Տեառն 1167-1178): Թողլով մեր զերկարաձիգ անցս պատմութեան յաղագս միաւորութեան Եկեղեցւոյ մերոյ ընդ յունաց և յաղագս երկուց ազգացս միաբանութեան, յորոց վերայ այնքան բանակցութիւնք եղեն յերկուց ևս կողմանց յաւուրս Կիւ Մանուէլի կայսեր և երից կաթուղիկոսացն մերոց՝ Գրիգորի Պահլաւունւոյ, Շնորհալւոյն Ներսիսի և եղբօրորդւոյ նորին՝ Գրիգորի՝ Տղայ կոչեցելոյ, յամս Տեառն 1167-1180, և զնոցին փոխադարձ թղթակցութիւնսն զդաւանութեանց հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ, որ յԸնդհանրականս Շնորհալւոյն, աստէն համառօտ կարգեմք Երկրորդ և Երրորդ Ժողովոց պատմութիւնս Եկեղեցւոյս մերոյ՝ եղելոցն ի Հայրապետական Աթոռ անդր ի Հռովմկլայ:

Տեսեալ Մանուէլի կայսեր զթուղթ Շնորհալւոյն Ներսիսի զառաջինն յաղագս դաւանութեան հաւատոյ և կարգաց Եկեղեցւոյ մերոյ ի ձեռս փեսային իւրոյ՝ դքսին Ալէքսի, ըստ խնդրանաց նորին ի Մամեստիա քաղաքի, գրեալս ի նորին Շնորհալւոյ յեպիս-

կոպոսութեան իւրում և թարգմանեալ զայն, ընթերցան ինքնին կայսրն և պատրիարգ նոցին Միքայէլ, և հասու եղեալ ուղղափառութեան հաւատոյս մերոյ դաւանութեան յԱմենասուրբ Երրորդութիւնն, ի մարդեղութիւն Քրիստոսի և աւանդութեանց կարգաց և ծիսից, վառեցան ի սէր միաբանութեան և ի տեսութիւն իսկ նորին Շնորհալւոյ, ուստի և անդ զառաջինն գրեաց թուղթ կայսրն առ Գրիգոր կաթուղիկոս՝ եղբայր Շնորհալւոյն, յաղագս միաբանութեան և առաքելոյ գեղբայրն ի Կոստանդնուպոլիս, բանիւ բերանոյ ևս խօսել ի վերայ գրելոցն նորա, զի բարձցի ի միջոյ պատճառ բաժանման երկուց եկեղեցեաց, և զայս թուղթ առաքէ ի Հռովմկլայ դեսպանութեամբ ումեմն հայազգւոյ ծառայի իւրոյ՝ Սմբատայ:

Բայց սորա ընդ ժամանել ի Հռովմկլայ, վախճանեալ գոլով Գրիգոր կաթուղիկոսի, ընդունի զթուղթ կայսեր յաջորդ նորա Շնորհալին Ներսէս և պատասխանի արարեալ նմին, գրեաց և զընդարձակ նամակ դաւանութեան հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ՝ ըստ խնդրանաց դեսպանին, յառաւել ևս տեղեկութիւն յունաց՝ դաւանութեան մերոյս հաւատոյ:

Զայս թուղթ Շնորհալի հայրապետին, ընկալեալ կայսեր և եկեղեցական դասուց յունաց, թողեալ այնուհետև զատելութիւն, փափագէին միաբանութեան, ընդ որ կայսրն առաքեաց ի կողմանէ իւրմէ առ կաթուղիկոսն մեր զԹէորիանէ աստուածաբան և զՅովհաննէս ուԹման՝ խօսիլ ընդ նմա ի վերայ բանից հաւատոյ՝ հանդերձ երկրորդ թղթով ի 1170 ամի, յորում ցուցանէր զուրախութիւն իւր ընդ յօժարութիւն կաթուղիկոսին սակս միաւորութեան եկեղեցւոյ և ուղղափառ հաւատոյ:

Անդանօր յառաջարկել Թէորիանեայ զտարակուսութիւնս յունաց ի վերայ խնդրոց ինչ, պատասխանէր հայրապետն ըստ վարդապետութեան Հայաստանեայցս Եկեղեցւոյ, նախ՝ ի վերայ երկուց բնութեանց Քրիստոսի, երկրորդ՝ յաղագս Տօնի Ծննդեան Քրիստոսի, երրորդ՝ ի վերայ երից սրբասացութեանց, չորրորդ՝ յաղագս մեռոնի, հինգերորդ՝ յաղագս աղօթելոյ յեկեղեցւոջ, և վեցերորդ՝ յաղագս ժողովոյն Քաղկեդոնի:

Վեցից այսոցիկ խնդրոցս պատասխանի Շնորհալի հայրապետին, զորոց և յառաջին թուղթն իւր գրեալ էր բացայայտ, արձանագրեալ Թէորիանեայ՝ ըստ վկայելոյ Լամբրոնացւոյն ի Ներբողեան Շնորհալւոյն, դարձաւ ի Կոստանդնուպոլիս՝ հանդերձ նամակաւ սուրբ հայրապետին, ընդ որ յոյնք առաջի արարին խնդիրս

ինն գլխակարգութեամբք վերստին ընդ յիշեալ աստուածաբանին՝ հանդերձ կայսերական թղթով, յամին 1172՝ ընդունել մերումս հայրապետի եկեղեցական ժողովով:

Այսոքիկ ինն գլուխք են խնդրոցն, զորս յառաջ բերեմք ի Զամչեանէ:

Ա. Նզովել զմի բնութիւն ի Քրիստոս ասողսն՝ զԵւտիքէս և զԴէոսկորոս, և զՍեւերիոս, զՏիմոթէոս զկուզն և զամենայն համախոհս նոցունց:

Բ. Խոստովանել զՏէր մեր Յիսուս Քրիստոս՝ մի որդի, մի դէմք, մի անձնաւորութիւն անորիշ, անփոփոխ, անայլայլելի, անշփոթ, ոչ այլ զորդին Աստուծոյ ասել և ո՛չ այլ զորդին սրբոյ Աստուածածնի, այլ և զնոյն՝ որդի Աստուծոյ և որդի մարդոյ՝ զմին (զՔրիստոս) խոստովանել Աստուած և մարդ յերկուս բնութիւնս, զնոյն. մի Քրիստոս՝ ունելով երկուս ներգործութիւնս և երկուս կամս՝ Աստուածային և մարդկային, ո՛չ հակառակք միմեանց, այլ ընթանայ մարդկային կամքն զկնի Աստուծոյ կամացն:

Գ. Ասել զերեքսրբասացութիւնն, բաց ի խաչեցելոյն վասն մեզ և բաց յԼէն:

Դ. Տօնել և զտօնսն ընդ հռոմս, այս է՝ զԱւետեաց Տեառն ի Իե մարտի, և զԾնունդն ի դեկտեմբերի Իե, զթլփատութիւնն յութերորդն զկնի Ծննդեանն Քրիստոսի, այս է՝ յառաջինն յունուարի, և զՏեառնընդառաջն ի փետրուարի Բ, և պարզաբար զամենայն տօնսն Տէրունականս և զՍրբուհւոյ Աստուածածնին, և զԿարապետին և զսրբոց առաքելոցն և զայլոցն:

Է. Առնել զմիւռոնն ձիթով ի պտղոյ ծառոց:

Զ. Զաստուածային հաղորդութիւնն առնել խմորուն հացիւ, գինեաւ և ջրով:

Է. Ամենայն քրիստոնեայքն, քահանայք և ժողովրդականք ի ներքս յեկեղեցւոջն կացցեն, յորժամ կատարի աստուածային պատարագն, բաց յայնցանէ, զորս արգելուն կանոնք յաղագս ապաշխարութեան, նոյնպէս և յայլ կարգս եկեղեցւոյ:

Ը. Ընդունել զչորրորդ, զհինգեր., զվեց. և զեօթներորդ զտիեզերական ժողովսն:

Ը. Ընդունել զառաջարկութիւն Կաթուղիկոսին միայն ի թագաւորէն հռոմոց:

Ընդ այս խնդիր յունաց, գրեալ Ներսիսի թուղթս առ ամենայն եպիսկոպոսս և վարդապետս մեծին Հայոց յաշխարհ Արարատեան, յորս կային եպիսկոպոսք աւելի քան երեք հարիւրք և յոլով վար-

դապետք, ծանոյց նոցա զամենայն անցս միաբանութեանն, առանց որոց դժուարին էր ընդունել զխնդիրսն, և մինչ պատրաստ էր հրաւիրել զնոսին հասանել անդր առնել ժողով ընդհանուր, զի մի ծագեսցի երկպառակութիւն յազգին, հասեալ նմա վախճան կենաց, փոխեցաւ ինքն Շնորհալին առ Աստուած, և ոչ գումարեցաւ ժողովն:

Իսկ Երրորդ ժողովն ևս անդ ի Հռովմկլայ, որ եղև ընդ ձեռն եղբօրորդւոյ Շնորհալւոյն՝ Գրիգորի Տղայի, որ յաջորդեաց յետ նորա յԱթոռն, այն ևս այսպիսում դիպաւ վիճակի և մնաց անկատար, որպէս արդ ի համառօտագրութեանս:

Սա ինքն Գրիգոր կաթուղիկոս հաւաստի գիտելով, եթէ ոչ ունի ընդունել երբէք ազգ մեր զփոփոխութիւն ծիսիցն, ամփոփելոց յինն խնդիրս անդ յունաց, խորհրդով վարդապետաց իւրոց խնդրեաց գրով ի կայսերէ՝ մի՛ պահանջել զայնս ի հայոց, այլ միայն, զորս ի հաւատս վերաբերին, զի հնացեալ սովորութիւն է, ասէ, ազգիս, զոր միայն ի ձեռն խաղաղութեան ընդհանուր ժողովով, սէրն կատարեսցէ, ասէ:

Ապա իբրև ընկալաւ Գրիգոր կաթուղիկոս զպատասխանի կայսերն և ժողովոյ մետրապօլտացն Յունաց, որոց թողեալ զինն խնդիրսն զայնոսիկ, խնդրէին ի հայոց միայն մի բանս հաւատոյ ի նիւթ միաբանութեան, արար զժողովն երրորդ ի Հռովմկլայ յամի 1179, յորում գտան երեսուն երեք եպիսկոպոսք միայն, ընդ որս էր և Կաթուղիկոսն Աղուանից, վարդապետք, քահանայք, վանահարք և իշխանք, իսկ երեք հարիւր երեսուն և վեց եպիսկոպոսք արևելեան Հայոց, արգելեալք ի չփոթութենէ ճանապարհաց, զթուղթ հաւանութեան միայն առաքեն ի ժողովն, որպէս և այլք, ոմանք մերժեցին զհրաւէր կաթուղիկոսին:

Ի ժողովի յայսմիկ, ուր ընթերցաւ Լամբրոնացին Ներսէս զատենաբանութիւն իւր, ընթերցան և զթուղթս ժողովոյն Յունաց և կայսերն և համաձայն գտեալ զայնս դաւանութեան հաւատոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ, ստորագրեցին ամենեքին, և վերստին գրեալ ժողովով զգիր դաւանութեան հաւատոյ՝ առաքեցին ի Կոստանդնուպոլիս, բայց հրեշտակք հայրապետին, հասեալ ի Կեսարիա և արգելեալք ի խռովութեանց ճանապարհի, դարձան յետս առ կաթուղիկոսն՝ հանդերձ թղթովք ժողովոյն, և յայսմիկ միջոցի վախճանեցաւ և կայսրն Մանուէլ յամի 1180, և մնաց անկատար միութիւն երկուց ազգաց Եկեղեցեաց, որով և ապարդիւն եղև հնգետասան ամաց ջանք և աշխատութիւնք:

ԳԼՈՒԽ ԼԶ.

Առաջին ժողով ի Սիս, որ սահմանէցան որոն եկեղեցական կանոնք

(Ամք Տեառն 1204): Զաքարիա սպասալար՝ երևելի իշխան Հայոց՝ ի զօրավարութեան Վրաց, բազումս ի նոցանէ կրեալ մեղադրութիւն, յաղագս չունելոյ ընդ ինքեանս և հայկական զօրացն ընդ իւրով իշխանութեամբ ըստ նոցայն սովորութեան զքահանայս և զշարժական սեղան, սակս տեսանելոյ զպատարագ և ընդունելոյ զսուրբ հաղորդութիւն և նախանձ բարի յանձին բերեալ առ այս և հասու ևս լեալ, եթէ էր յառաջագոյն և յազգս մեր այն սովորութիւն ի բացօթեայս պատարագել, այլ յետ Բագրատունեաց այն անհետացեալ, ապա գրէ թուղթ առ արքայ Լեւոն և առ Յովհաննէս կաթուղիկոս, չև ևս լուեալ զկաթուղիկոսութիւն Դաւթի ի Սիս, առաքեալ անդր առ նոսա զդեսպանս, խնդրեաց ի նոցանէ զերեսին զայսոսիկ առաջարկութիւնս կարի հարկաւորագոյնս յայնմ ժամանակի, նախ՝ շրջեցուցանել ընդ իւր զսեղան պատարագի, երկրորդ՝ զի քահանայք հանդիսիւ կատարեսցեն զպատարագն, որպէս առնէին Վիրք սարկաւագօք և դպրօք, և երրորդ՝ զտօն Վերափոխման և Խաչի կատարեսցեն ըստ աւուրց պատշաճի ընդ Վրաց:

Ապա Լեւոն արքայ ի վերայ այսօրինակ խնդրանաց Զաքարեայ, խորհրդեամբ Դաւթի կաթուղիկոսի, վաղվաղակի հրամայեաց առնել ժողով առ ինքն ի Սիս ի շրջակայ եպիսկոպոսաց, վարդապետաց և վանահարց, և իմաստնոց և այլոց բազմաց, յորոց ի գումարման առաջի եղեալ զխնդիրսն Զաքարեայ և ուղիղ և բանաւոր զայնս դատեալ համաձայն առաքելական կանոնաց, ընդ որս և զինչ ինչ քննելիս՝ նուազեալս յայնմ ժամանակի յահէ այլազգեաց յարևելս ուրեք ուրեք, ի քննութիւն մատուցեալ, վճռով հաստատեցին ի ժողովն զուրթն զայսոսիկ բանս ի կանոնադրութիւն եկեղեցւոյ:

ա. Մատուցանել զպատարագ սարկաւագօք և դպրօք և քահանայական զգեստիւք, որպէս սովորութիւն էր յառաջն յազգի մերում, և որպէս օրէն է ամենայն քրիստոնէից:

բ. Ունել հրաման պատարագ մատուցանելոյ վրանաւ ի բանակի, ի վերայ շարժական սեղանոյ ի բացօթեայս:

գ. Մատուցանել պատարագ ոչ միայն վասն ննջեցելոց, այլ և վասն կենդանեաց:

Դ. Զտօն Վերափոխման Սրբոյ Աստուածածնին կատարել յօգոստոսի ԺԵ, յորում աւուր և պատահեսցի, և զԽաչին՝ ի սեպտեմբերի ԺԴ, յերկիր տէրութեան Յունաց և Վրաց:

Ե. Պահել ի Ճրագալոյցսն Յայտնութեան և Զատկի մինչև ցերեկոյ և յերեկոյին ոչ այլ իւիք լուծանել, բայց եթէ ձկամբք և ձիթով:

Զ. Յարգել զպատկերս Փրկչին և սրբոց ամենայնի:

Է. Մի՛ առանց դպիր ձեռնադրելոյ սարկաւագ ձեռնադրել:

Ը. Մի՛ ստանալ կրօնաւորաց առանձին ինչ ստացուած, և կալ միաբան ի վանս և չուտել ևս զմիս:

Առեալ դեսպանաց Զաքարեայ իշխանի զայսոսիկ կանոնս ժողովոյն հանդերձ թղթով՝ դարձան առ նա յարևելս:

ԳԼՈՒԽ ԼԷ.

Ա՛ռ-աջին ժողով ի Լո՛ռի վասն պահելոյ զո՛-ՐԱՆ կանոնս ժողովոյն Սսոյ

(Ամք Տեառն 1205): Ընկալեալ Զաքարեայ զթուղթ և զվճիռ ժողովոյն և զթուղթս երկուց կաթուղիկոսացն՝ Յովհաննու ի Հռովմկլայ և Դաւթի ի Սիս՝ հանդերձ պատգամաւ արքային Լեւոնի ի ձեռն դեսպանաց իւրոց, վասն որոյ առաքեալքն էին, ուրախութեամբ սրտի ժողով մեծ առնէ ի Լոռի քաղաքն վասն ընդունելոյ ըստ իւրումն ըղձի զկանոնսն, ուր հասին ըստ իշխանական հրամանի Սանահնեցին Գրիգոր Տուտէորդի՝ եպիսկոպոս Հաղբատայ, Յովհաննէս վարդապետ՝ Սանահնի և Դաւիթ Քոբարեցի, Սարգիս՝ եպիսկոպոս Անւոյ, Վրթանէս՝ Բջնոյ, Գրիգոր՝ Դունայ, Յովհաննէս՝ Կարուց, Եղիա՝ վանահայր Հաւուց Թառայ, Տուրքիկ՝ Թեղենեաց, Մանոնիկ Գրիգոր Կեչառեցի, Սարգիս Սևանեցի, ընդ որս և Խաչատուր վարդապետ Տարոնեցի՝ առաջնորդ Հողարծնի վանաց, և Մխիթար վարդապետ Գանձակեցի Գօշ՝ առաջնորդ Գետկայ, և այլ բազում վարդապետք, վանահարք և քահանայք:

Սոքա՝ հարք ժողովոյն, իբրև ընթերցան զթուղթս և զվճիռս ժողովոյն Սսոյ և եպիսկոպոսացն և թագաւորին, ոմանք հաւանեցան այնց, մանաւանդ Խաչատուր և Մխիթար վարդապետք, այլ որոց անհաւան գտան, գլխաւորք էին՝ Տուտէորդին Գրիգոր, Դաւիթ Քոբարեցի, Յովհաննէս Սանահնի և այլք բազումք, որովք և երկպառակեալք քակտեցան ի միմեանց:

Այլ յետ այսորիկ Զաքարիա սպասալար զերկպառակիչսն կալեալ և կապեալ ի բանտի՝ յամենայն վանորայս, որ ընդ իւր իշխա-

նութեամբ պատգամաւորս առաքէ և հրամայէ զկանոնսն կատարել, և զԱստուածածնի և զխաչի զտօնսն ըստ աւուրց պատշաճի կատարել և ի կիւրակէս: Ըստ որոց և թշնամութիւնք, երկպառակութիւնք, աղաղակք և կռիւք և այլ արտասուաց արժանի գործք գործեցան, ասէ Կիրակոս պատմագիր:

ԳԼՈՒԽ ԼԸ.

Զորրորդ ժողով յԱնի վասն ո–ՂՆ կանոնաց ժողովոյն Սսոյ

(Ամք Տեառն 1207): Առ ի խաղաղել Զաքարեայ սպասալարի զշփոթութիւնսն և զաղմուկս յեկեղեցականաց Հայոց ի վանորայսն Հայաստանի յարևելս, որք յայնժամ առաւել ևս սաստկացեալն էր ի նոսին, և վերստին ընդունելոյ ամենեցուն նոցա յեկեղեցական արարողութիւնս զութն կանոնսն ժողովոյն Սսոյ, որոց վասն և արարեալ էր ժողով յառաջնումն ի Լոռի, հրաման եհան վերստին գումարել եպիսկոպոսաց և վարդապետաց յԱնի առ ընդունելութիւն կանոնացն, որպէս ասացաւ, ի համօրէն եկեղեցիս Հայաստանեայց:

Անդ գումարեցան նոյն եպիսկոպոսք և վարդապետք առաջնոյ ժողովոյն, այլ յայսմ նուագի ոչ եկն ի ժողով անդր Մխիթար Գօշ, որում ամենեքեան պատկառ կային առ ծերութեանն, և առանց նորին հաւանութեան չհաճէին ընդ կանոնսն, ապա Զաքարիա ստիպեաց զվարդապետս ժողովոյն ընդունել զկանոնս, որք խնդրանօք իւրովք առաքեալքն էին, և տալ ձեռագիրս համաձայն թղթոց ժողովոյն: Առ այս, թէև ժողովն բովանդակ առանց ներկայութեան Գօշն Մխիթարայ ըստ ամենայն ստիպմանց սպասալարին ոչ տային զհաւանութիւն ընդունելութեան, այլ նորա ցուցեալ նոցա զթուղթս հաճութեան Մխիթարայ առ ինքն իսկ գրեալ, և ի չհաճել նոցա ընդ այս ևս, կոչեալ զՄխիթար յապարանս իւր ի վանաց նորա և զկարծիս նորա և հաւանութիւն ի բերանոյն իսկ լուեալ, ապա պատուիրէ նմին Մխիթարայ երթալ, արձակել միանգամայն զժողովն յիւրաքանչիւր տեղիս՝ չանսացեալ այլ ևս հաւանութեան ժողովոյն: Այլ Մխիթար զպատգամս միայն առաքեալ զԶաքարեայ առ ժողովն՝ յորդորեաց զնոսա գնալ ի վանս այր իւրաքանչիւր:

Բայց Զաքարիա սպասալար յետ աւուրց ինչ զանհաւանս զամենեսին գաղտ ի միմեանց արտաքսէ ի վանաց յայլ և այլ տեղիս, յորոց ոմանք ըստ խնդրանաց եղբօր՝ Զաքարիա Իւանէի անդ-

ըէն ի տեղիսն դարձեալք, ըստ հաճութեան Զաքարեայ զկանոնսն կատարեցին ըստ Սսոյ վճռոյն, և ոմանք ըստ իւրեանց սովորութեան զպատարագն առանց պաշտօնէի մատուցին և առանց քահանայական զգեստուց, որք յետոյ անհետացան և ի նոցանէ:

Գլուխ ԼԹ.

Երկրորդ ժողով ի Սիս, ուր եղան վասն Հինգ կանոնք վասն Եկեղեցականաց

(Ամք Տեառն 1243): Ի քսաներեքերորդում ամի Հայրապետութեան Կոստանդեայ կաթուղիկոսի Ա. Բարձրբերդցւոյ, պէսպէս անկարգութիւնք մտեալ և յազգ մեր, և ցոփութիւնք յեկեղեցականս և ի ժողովուրդս, որպէս տարածեալ էին յայնմ ժամանակի և յաշխարհ բովանդակ, մեծամեծ թուլութիւնք յայսպիսեաց լինէին: Ապա և Կոստանդին կաթուղիկոս, խնամ մեծ ի վերայ հօտին իւր ցուցեալ վասն զգաստացուցանելոյ զհաւատացեալս իւր, ելեալ յաթոռանիստն Հռովմկլայէ, գնայ առ արքայ Հեթում ի Սիս, որոյ խորհրդով և հրամանաւ գումարէ ժողով մեծ ի դարման անկարգութեանցն, յեպիսկոպոսաց, յառաջնորդաց, ի վանօրէից և յիմաստուն վարդապետաց, յորս երևելի լինի և մեծն Վարդան Բարձրբերդցի, ևս և յաշխարհական իշխանաց արևմտեայ կողմանց՝ հանդերձ արքայիւ և արքայորդւով, յամի 1243:

Ուրանօր ապա յատեան ժողովոյն զիւրաքանչիւր անկարգութիւնսն յառաջ բերեալ և հերքեալ՝ ընդդէմ նոցին ամենայնի կարգեցին ժողովով զքսան և հինգ կանոնս, որք թէպէտ և յառաջագոյն ևս կային յազգի մերում, այլ ի շփոթութեանց և յանկանիլ աշխարհին Հայոց ընդ այլ և այլ իշխանութեամբ և ի ձեռս խառն ազգաց, աղաւաղեալք էին այն ամենայն կանոնք, զորս հաստատուն և վճռովք կանոնադրեցին յայս երկրորդ ժողով Սսոյ, որք ըստ Կիրակոսի ականատես պատմագրի Գանձակեցւոյ՝ են օրինակ զայս:

ա. Ձեռնադրութիւնք առանց դրամոց լիցին:

բ. Վկայեալքն միայն ընտրեսցին յեպիսկոպոսութիւն:

գ. Եպիսկոպոսունք ձեռնադրեսցին զէթ երեսնամեայ, աշխարհական երէցք՝ քսան և հինգամեայ, և սարկաւագք՝ քսանամեայ:

դ. Արժանաւորք միայն ձեռնադրեսցին քահանայ և սարկաւագ:

Է. Քահանայք ծոմ կատարեսցեն զխորհուրդ եկեղեցւոյ, բաց ի վտանգէ մահուան:

Ը. Խորհուրդք եկեղեցւոյ պատկառանօք պաշտեսցին:

Է. Աւազանն մկրտութեան հաստատուն լիցի յեկեղեցւոջ:

Ը. Պսակ մի՛ լիցի ի մերձաւոր ազգականս ցեօթն ծնունդ...:

Թ. Եպիսկոպոսունք կամ երիցունք յայլոց թեմս մի՛ իշխեսցեն կատարել զպաշտօն իւրեանց առանց հրամանի:

Ժ. Յամենայն տեղիս ուսուցիչք կարգեսցին:

Ժա. Զսուրբ գիրս միայն գիտունք և ուղղափառք գրեսցեն:

ԺԲ. Երկիցս ի տարւոջ շրջեսցին եպիսկոպոսունք յայցելութիւն ի թեմս իւրեանց:

ԺԳ. Ծեր և գիտուն լիցին խոստովանահարք, որք և յամենայն կիւրակէի յորդորեսցեն զժողովուրդն ի խոստովանութիւն:

ԺԴ. Զսուրբ հաղորդութիւնն առանց բուրվառի և մոմեղինի մի՛ տարցին առ հիւանդս:

ԺԵ. Պոռնիկք և հմայողք պատժեսցին:

ԺԶ. Հայհոյիչք աշխարհական դատաստանաւ պատուհասեսցին:

ԺԷ. Պահք առանց ձկան և ձիթոյ պահեսցին, բաց ի հարկէ հիւանդութեան:

ԺԸ. Քահանայք եթէ պարապեսցեն վաճառականութեան կամ որսորդութեան՝ զրկեսցին ի ժողովրդենէ իւրեանց:

ԺԹ. Ժողովուրդք մի՛ ըստ հաճոյս իւրեանց ընտրեսցեն ժողովրդապետս, այս ինքն՝ ծխատէր, այլ՝ հրամանաւ եպիսկոպոսին:

Ի. Քահանայք միանգամ ի տարին մասնաւոր խնամովք քննեսցեն զընթացս ժողովրդեան իւրեանց, թէ յորում զարգանան և յորում նուազին:

ԻԱ. Ժողովրդականք տայցեն հասս քահանայից:

ԻԲ. Քահանայք հոգասցեն վասն պիտոյից եպիսկոպոսացն:

ԻԳ. Նոյնպէս եպիսկոպոսունք վասն Հայրապետական Աթոռոյն:

ԻԴ. Երկոքին աղօթքն՝ առաւօտու և յերեկոյի, այս ինքն՝ **Գ՞ՀԱՆԱՄՂ ՂԷՆՆ ԵՒ ԼՈ՞Ր ՅԱՅՆԿՅ ՄԷՐՈՅՆ**, *յորոց ի վերջն երգեմք* **ՂՍՈ՞ՐԲ ԱՌՊՈ՞ԱՅՆ**, *աւարտեսցեն ի դէմս Որդւոյ՝ յարելով զկնի զբառսդ* **ԲՐԻՆՈՅՈՍ ԱՌՊՈ՞ԱՅ ՄԷՐ**, *զի յայտնի ծանիցի, թէ ի դէմս Որդւոյ ասի խաչելեալն:*

Գլուխ Իս

Երրորդ Ժողով ի Սիս յաղագս վարդապետո-ՊԷան Հա-ապոյ Հոգ-ոյն Սրբոյ

(Ամք Տեառն 1251): Այս խնդիր շարժեցաւ, ասէ Վարդան մերս պատմագիր, ի մեծ պապէն Հռովմայ (Իննովկենտիոս Դ.) ի թուին Հայոց Զ., և գրեաց յամենայն ազգս քրիստոնէից, առ Կոստանդին կաթուղիկոս և առ արքայն մեր Հեթում, թէ պա՛րտ է զԱմենասուրբ Հոգին Աստուած խոստովանել ի Հօրէ և յՈրդւոյ բղխեալ, և ոչ եղև հաճոյ, ասէ, յունաց և ասորւոց, բաց ի հայոց:

Ընդ որ արքայ և հայրապետն գումարեն ի Սիս ժողով եպիսկոպոսաց և վարդապետաց Հայոց, յորում և ինքն գտանէր Վարդան, հաւանեցան ընդ այն, զորմէ Կաթուղիկոսն և Արքայ գրեցին ապա առ եպիսկոպոսունս ի Մեծն Հայս և մասնաւորապէս առ Վանական վարդապետ՝ համբաւեալն իմաստութեամբ ի ժամանակին:

Իսկ Արևելեան վարդապետք քննեցին, ասէ նոյն Վարդան, զդաւանութիւն առաջնոց սրբոց ի ձեռն աստուածամերձ վարդապետին Վանականի և գտին զայն համախոհ երևելի արանց փառաւորաց՝ Աթանասի, Գրիգորի Աստուածաբանի, Գրիգորի Նիւսացւոյն, Գրիգորի Լուսաւորչին և այլոց սրբոց:

Հայաստանեայցս Եկեղեցի, առ որս ասել մնայ մեզ, չէ՛ շեղեալ երբէք ի բանից սրբոց հարց ի հաւատոյս, որք հիմնեալք են ի վերայ Աւետարանին բանի, այլ խորշեալ է միշտ և խորշի ի նորաստեղծ և ի նորամոյծ բառից ինչ ի յետագայից՝ ի վարդապետութիւնս հաւատոյ, որպէս Բղխո-մն ասել Հոգւոյն Սրբոյ և յՈրդ-ոյ, զոր և նա ինքն իսկ ոչ ուրանայ Զամչեան, զի բովանդակ վկայութիւնս վարդապետաց Եկեղեցւոյ մերոյ, զորս յառաջ բերէ նա ի պատմագրութեան, Գիրք Գ, գլ. ԼԱ, ոչ երբէք գտանի բղխումն Հոգւոյն Սրբոյ ասացեալ՝ Ի յՈրդ-ոյ, մանաւանդ ի Վանականին բանս, որով ջանայ ցուցանել զայս վարդապետութիւն, զի բղխումն և ելումն ո՛չ նոյնանշան իմաստս ունին: Եկեղեցի Հայոց և վարդապետք նորին ընդ Սրբոյ Լուսաւորչին իւրոյ ըստ Փրկչին բանի Սուրբ Աւետարանին խոստովանի, զՀոգին ճշմարտութեան, որ ի Հօրէ ելանէ, Յովհ. Գլ. ԺԵ. 26: Եւ զի առնու յՈրդւոյ, վկայի ևս անդ, յիմմէ անտի առնու, ԺԶ. 14., խոստովանի նոյնպէս զհամագոյակցութիւն Հոգւոյն Սրբոյ ընդ Հօր և ընդ Որդւոյ ըստ Սրբոյ

Լուսաւորչին. «Հայր յանձնէ, Որդի ի Հօրէ, և Հոգին Սուրբ ի նոցունց էութենէ»:

Ապա չեն մեզ այլ վարդապետութիւն կարևոր ի դաւանութեան Հոգւոյն Սրբոյ, աւելի քան զքարոզեալն մեզ ի Սուրբ Աւետարանէն և ի մերոյ Լուսաւորչէն, ընդունայն և անհիմն պահանջմունք են պապից, և ընդվայր յեղյեղումն Քղքոնա բառիս՝ ի Զամչեանէ, մինչդեռ նա անհաւատարիմ գտանի այսպէս յիւրմէ իսկ յառաջ բերելոցն բանից սուրբ վարդապետաց մերոց, յորս ոչ գոյ բառդ, որպէս ասացաք:

Գլուխ ԽԱ.

Զորդորդ Ժողովն ի Սիս վասն Ծռ-ազատիկի

(Ամք Տեառն 1292): Յամին 1292 դիպեալ Ծռազատիկ, այն է՝ խոտորումն աւուր տօնի Զատկին, յարեաւ խռովութիւն, վէճ և աղմուկ ի տեղիս տեղիս, մինչև ոմանց ի վեցն ապրիլի ընդ յոյնս կատարել զտօն, և բազմաց ըստ առաջնոյ տոմարին միով շաբթով յետոյ, քան զյոյնս, և առ այս երկաքանչիւր կողմանք յիւրաքանչիւր կարծիս պնդեալ՝ հակառակութեամբ ընդ միմեանս վիճէին:

Զայս ամենայն կամեցեալ արքայի Հեթմոյ բառնալ ի ժողովրդենէ և ի հոգևորականաց, կոչեալ առ ինքն ի Սիս զՍտեփաննոս կաթուղիկոս ի Հռովմկլայէ, հրամայէ գումարել ժողով եպիսկոպոսաց և վարդապետաց ի քաղաք անդր:

Ապա ի ժողովին յայնմիկ անաչառ քննեալ զուղիղ ժամանակ զատկի և զգուշաւոր հետազօտութեամբ ի վերայ հասեալ, յայնմ ամի ընդհանուր Կիլիկիա տօնէ զՁատիկն ընդ յունաց ի վեցն ապրիլի, բայց ըստ պատմութեան Կիլիկիոյ՝ բնակիչք Մեծին Հայոց ի Կեսարիոյ, ուրոյն ի կիլիկեցւոց, ըստ իւրեանց առաջնոյ սովորութեան տօնեցին յայնմ ամի զՁատիկն միով շաբթով յետոյ, քան զնոսա:

Գլուխ ԽԲ.

Առաջին ժողով ի Սիսն, որ գրեցաւ առ Գրիգոր կաթուղիկոս Անաւարզեցի վասն անփոփոխ պահելոյ զՅիսուս Հայաստանեայց Եկեղեցւոյ

(Ամք Տեառն 1294): Վարդապետք Արևելեան Եկեղեցւոյ Հայոց, լուեալ զյաջորդութիւն Գրիգորի Անաւարզեցւոյ յաթոռն Հայրապետական, սկսան խռովիլ ընդ այն, յարուցանելով տրտունջ ընդ մէջ, զի գիտէին, եթէ նա հետամուտ է ծիսից փոփոխութեան, նմանելով այլոց ազգաց, ըստ որոյ և Հռոմն կոչէր մականուն նորա, զի ի յաջորդութեան Կոստանդեայ Երկրորդի յամի 1287, յորժամ Լևոն արքայ ջանայր հաւանեցուցանել զժողովն, զի ընտրեսցի նոյն ինքն Գրիգոր, հարք ժողովոյն, բովանդակ ընդդէմ կացեալ կամաց արքային, ոչ ընկալան զնա, զի Հռոմ է, ասէին, զառաջնորդութիւն այդպիսեաց ոչ կամիմք, որով և խափանեցաւ զառաջին ընտրութիւն նորա:

Ապա գահակալեալ սմին Գրիգորի յաթոռն Հայրապետական յամին 1294, յետ գերութեան Ստեփաննոսի Դ-ի յԵգիպտոս, առ աւերանացն Հռովմկլայի, փոխեաց զԱթոռ կաթուղիկոսութեանն ի Սիս, ջանացաւ զայսոսիկ ծէսս մուծանել յԵկեղեցի Հայոց ըստ լատինացւոց և յունաց եկեղեցեաց:

ա. Խառնել ջուր ի բաժակն և յաւելուլ ինչ ինչ ի սպաս պատարագի:

բ. Բառնալ զխաշէցարն ի սրբասացութենէ:

գ. Զամենայն տօն տօնել ըստ աւուրց ամսոց:

դ. Պահել պահս հսկմանց ըստ Լատինացւոց, նոյնպէս և զայլ քանի մի պահս:

ե. Փոխել զբանս Մաշտոցին ի կանոնս մկրտութեան, դրոշմի, ձեռնադրութեան և այլոց օրհնութեանց:

զ. Միայն ի չորս եղանակս տարւոյն ըստ լատինացւոց առնել ձեռնադրութիւն:

է. Փոխել ինչ ինչ ի ժամերգութեան յառաւօտու և յերեկոյի և յաւելուլ ի նոսին պէսպէս կցուրդս այլոց ազգաց:

ը. Ի կիր առնուլ զիւղ երեխայից:

թ. Կատարել զխորհուրդ վերջին օծման հիւանդաց:

Եւ վասն այսոցիկ ամենայնի կատարմանց արարեալ էր նա զնոր տօնացոյց՝ պահեալ ի ծածուկ առ իւր, զի սպասէր յաջող ժա-

մանակի ի լոյս ածելոյ, բայց յայսմ ամենայնէ կանոնաց և ոչ մին ընկալեալ եղև ուրեք ո՛չ ի Կիլիկիա, և ո՛չ յարևելս. միայն, զի վերջին օծումն ոմանց եղև ընդունելի, և ինքն ի ծիսիցն, զորս կարէր, կատարէր ի ծածուկ, զորոց ոմանց վկայէ ինքնին, որպէս խառնել զՋուր ի բաժակն ևն:

Տեղեկացեալ արևելեան վարդապետք ի լրոյ, թէ Գրիգոր կաթուղիկոս զայս ամենայն լատինադաւան և զյունադաւան փոփոխութիւնս յառաջադրեալ է մուծանել ի ծէսս Եկեղեցւոյ Հայոց կամ լաւ ևս, բառնալ զայնս, դժկամակ յոյժ ընդ նորաձևութիւն, արարին ժողով ի Սիւնիս յամի 1294, ուր և գրեալ թուղթս առ նա ինքն Գրիգոր, առաքեն բազմանուն ստորագրութեամբ, զորոց զանուանս և զթղթոյն պատճէնս դնեմք աստանօր:

Սարգիս եպիսկոպոս՝ առաջնորդ Նորավանից, Գրիգոր եպիսկոպոս՝ Ստեփանէ, Յովհաննէս եպիսկոպոս՝ Բջնոյ, Յովհաննէս եպիսկոպոս՝ Հաղբատայ, Գրիգոր վարդապետ Բջնեցի, Մարգար վարդապետ՝ եղբօրորդի Վանական վարդապետի, Եսայի վարժապետ, որոյ աշակերտ էր Յովհաննէս Քռնեցի, և Դաւիթ վարդապետ յԱյրարատայ, ընդ որս և Ստեփաննոս Օրբելեան՝ եպիսկոպոս Սիւնեաց, և եղբայր նորա՝ Ելիկում իշխան, և հօրեղբօրորդի նոցա՝ Լիպարիտ՝ որդի Իւանեայ, և այլևս իշխանք:

Իսկ ի թղթոյ ժողովոյն կարևորսն և եթ դնեմք աստանօր, յորում նախ յայտնեն կաթուղիկոսին զկասկածանս իւրեանց յառաջագոյն ևս զնմանէ վասն ծիսափոխութեան նորա, և համարեալ զայն, ասէ յեղաշեղումն կրօնից և աւանդութեանց, ազգեն նմա ի բաց կալ յայնօրինակ նորաձևութեանց, ապա այսպէս ուրեմն աւարտ տան բանից իւրեանց. «Գիտութիւն լիցի աստուածային գլխոյ Հայրապետութեանդ, զի թէպէտ հնազանդ եմք ամենայնիւ Տեառնդ մերոյ, սակայն աղաչեմք զսնոտի կարծիս կրսեր և տգէտ մտաց մերոց բառնալ և բժշկել, զի տկարն յամենայնի շահել պարտ է, և զոր խնդրեմքս՝ հեննետիկոն թղթովք ձեռնագրել և առնել ձեռնարկ հաստատուն և անկախ կտակաւ՝ միաբանութեամբ սուրբ և երջանիկ եպիսկոպոսացդ, և ուղարկել առ մեզ իբր զյետկար անջինջ, զի յայնժամ առաւել հաստատութեամբ և հլու հպատակութեամբ հնազանդ լիցուք աստուածային գլխոյդ, և թագաւորեսցես յեկեղեցիս մեր՝ գահաւորեալ որպէս զարեգակն, ապա թէ աւելի ինչ կամ պակաս կամիք մուծանել յեկեղեցիս մեր, զոր ոչ ունիմք ի հարցն, և կամ գրեալքս խոտան են առ ձեզ, յայնժամ մի՛ աշխատ լինիք և մի՛ զմեզ աշխատ առնէք, ըստ ձեր կամաց լիցի աշխարհդ

այդ, և այլ ոք, որ կամիցի, և զմեզ թողէք ի մեր գիտութիւնս, և մեք կացցուք մնասցուք՝ ակնունելով վերին այցելութեանն: Ողջ լեր թագաւորական արգասիւքդ ծնողդ իմաստից և անվախ ախոյեանդ սուրբ եկեղեցւոյ Գրիգորիոս կաթուղիկոս Հայոց, և Տէրն տերանց հովանասցի ի վերայ գլխոյդ»:

Գլուխ ԽԳ.

Հինգերորդ ժողովն ի Սիս վասն Հա-ապոյ Ի ծիսից

(Ամք Տեառն 1307): Հինգերորդ ժողովն Սսոյ եղև յետ մահուան Գրիգորի Անաւարզեցւոյ հրամանաւ Լեւոնի արքայի և Հեթմոյ թագաւորահօր, վասն զի նախ ժողովով ընտրեսցի նոր Կաթուղիկոս և ապա ընկալցին և հաստատեսցեն զկանոնս ծիսափոխութեան Գրիգորի՝ զարարեալն ի կենդանութեան իւրում, զորս նա ցանկայր առ իւրով ժամանակօք հաստատել ի ձեռն ժողովոյ յԵկեղեցիս Հայաստանեայց, զորոյ և զհանգամանս նախ առաջի դիցուք, որպէս և յիշատակեցաւ ի վեր անդր:

Գրիգոր Անաւարզեցի, յառաջագոյն պատրաստեալ զփոփոխութիւն ծիսից, զոր վաղուց ի մտի եդեալն էր, այն ինչ խաղաղանայր աշխարհ Կիլիկիոյ, ապա առ ի հաւանեցուցանել ընդ այն զարևելեան եպիսկոպոսունս, ժամ պատեհ վարկուցեալ՝ գրէ առ ամենեսին նոսա թուղթս՝ առաջի առնելով նոցին զխորհուրդ իւր, որոց երևելիքն են՝ Յովհաննէս Որբէլ՝ արքեպիսկոպոս Սիւնեաց, որ պայազատէր և զմարմնաւոր իշխանութիւն աշխարհին, Զաքարիա Ծործորեցի՝ արքեպիսկոպոս Արտազու և առաջնորդ Թադէոսի վանաց, Յովհան վարդապետ Ծործորեցի, այն է՝ Եզնկացի, Յովհաննէս՝ արքեպիսկոպոս Բջնոյ, և առ բազումս:

Ապա իբրև յարեաւ հակառակութիւն ընդ մէջ Յովհաննու Որբելի և Զաքարիայ Ծործորեցւոյ ընդ բանս թղթոց կաթուղիկոսին յարևելս, որք և հանգամանօք իսկ հասին ի լուր ինքեան Գրիգորի, ևս և յայլ և այլ կողմանց այլ և այլ զրոյց ընդ բանս թղթոց նորա յաղագս փոփոխութեան ծիսից, կասկածեալ, եթէ խափանեսցի գուցէ խորհուրդ իւր, զոր ցանկայր հաստատել ժողովով՝ ի կողմն իւր ունելով զԼևոն արքայ, բայց զի ոչ ինչ իշխէր առնել թագաւորն առանց հրամանի թագաւորահօրն Հեթմոյ, նորին աղագաւ ապա Գրիգոր կաթուղիկոս գրեաց յաղագս փոփոխութեան ծիսից և ժողով առնելոյ ստիպմամբ առ Հեթում թուղթ յորդորանաց, խնդրեալ

ի նմանէ՝ ժողով լինել և զարժանի փոփոխութիւն ծիսից ընդունել և համաձայնիլ այլոց եկեղեցեաց, ըստ որոյ և ինքն պատրաստէր զնամակ դաւանութեան, նշանակելով ի նմին զիննն գլուխս բանից, զորս ցանկայր ժողովով հաստատել՝ սպասելով պատասխանւոյ առ ի Հեթմոյ:

Այլ մինչ չև ընկալեալ էր Գրիգորի զկատարումն փափագանաց իւրոց՝ հասեալ նմա վաղճան, փոխեցաւ յաստեաց յամի 1306, զորոյ զմահուանէն Ղազար կաթուղիկոս Ջահկեցի ի գլուխս ժողովոց այսպէս վկայէ՝ համարելով աստուածահաս պատուհաս. «Քանզի, ասէ, Գրիգոր Անաւարզեցի յաւուր միում մինչ նստեալ ի վերայ աթոռոյն իւրոյ հայհոյէր զառաջին սուրբ Հայրապետս մեր, նոյնժամայն յանկարծակի անկեալ յաթոռոյն՝ դիւահարեցաւ, և բազում աւուրս լկեալ ի դիւաց՝ յանկարծակի դառն մահուամբ վճարեաց զկեանս իւր»:

Ապա ի հրամանէ արքայի և թագաւորահօր, որպէս յիշեցաք ի վերոյ, գումարեալք ի ժողովն ի Սիս, քառասուն և մի եպիսկոպոսք, որոց անուանք մի առ մի գրեալք են յընդարձակ պատմագրութեան Չամչեանի, տասն վարդապետք և եօթն վանահարք, քահանայք և երէցք արքունի պալատանն և այլք, և կրօնաւորք ոչ սակաւք, և արքայ և Հեթում և պարագայք և պալատականք նոցին, ընդ որս և իշխանք աշխարհին և պարոնայք, ընթերցան զնամակ դաւանութեան Գրիգորի և ընկալան զիննն գլուխ բանս փոփոխութեան ծիսից՝ բովանդակեալսն ի դաւանութեան, որ դէպ ի ստորև, և ստորագրեցին այնմ նամակի հարք ժողովոյն՝ յանձնառութեամբ ամենայնի այնոցիկ:

Յետ որոյ հաւանութեամբ բովանդակ ժողովոյն կոչեցաւ վերստին յաթոռ Հայրապետութեան Կոստանդին Կեսարացի՝ ընկեցեալն յաթոռոյ ի Հեթմոյ Բ. արքայէ, փոխանակ Գրիգորի:

Կանոնք դա–անո–ՌԷան ՌՂՌոյն Գրիգորի

ա. Խոստովանիլ ի մի անձն Քրիստոսի բացայայտ բառիւք զերկուս բնութիւնս և զերկուս կամս և զերկուս ներգործութիւնս՝ զաստուածային և զմարդկային:

բ. Յերեքսրբասացութեան յաւելուլ զբառդ Քրիստոս և ասել. Սո–ՐԲ Աստո–ած, սո–ՐԲ Ե Հզօր, սո–ՐԲ Ե անմահ Քրիստոս, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ:

գ. Տօնել զտօն Ծննդեան Քրիստոսի ի դեկտեմ. 25 ըստ յունաց և ըստ լատինացւոց, ըստ այսմ և զայլ տօնս, որք ի նոյն հային՝

ըստ պատշաճի աւուրց ամսոյ, նոյնպէս և զայլ ամենայն տօնս ըստ Այսմաւուրաց կատարել:

Դ. Պահել զաւուրս հինգ վասն տօնի Ծննդեան Քրիստոսի և զաւուրս հինգ՝ վասն տօնի Յայտնութեան Քրիստոսի:

Ե. Ի ճրագալոյցսն Ծննդեան և Յայտնութեան և Յարութեան՝ ձկամբ և ձիթով միայն լուծանել:

Զ. Ի պաշտաման պատարագի զգենուլ զսուրբ զգեստս ըստ իւրաքանչիւր աստիճանի կարգին:

Է. Ի սեղան խորհրդոյն դնել զգորփուրայ կամ մարմնակալ:

Ը. Ի խորհուրդ պատարագին արկանել ջուր ի բաժակն:

Թ. Ընդունել զեօթն ընդհանուր Ժողովսն և զսահմանադրութիւնս նոցա:

ԳԼՈՒԽ ԽԴ.

Վեցերորդ Ժողով ի Սիս վասն վերոգրեն գնելոյ զկանոնս Ժողովոյ Նորին

(Ամք Տեառն 1309): Յետ սրախողխողելոյ Լևոնի և թագաւորահօրն Հեթմոյ ի Պելդար իշխանէն Թաթարաց, յԱնարզաբայ քաղաք ընդ այլ իշխանս Հայոց երևելեաց յաղագս ատելութեանցն ի վերայ փոփոխութեանց ծիսից Հայաստանեայց Եկեղեցւոյ ըստ մատնութեանց ոմանց իշխանաց մերոց, գահակալեալ յաթոռ թագաւորութեան Օշնի եղբօր՝ Հեթմոյ Բ-րդի, հրաման առ ամենայն առաջնորդս հանէ կատարել անխափան զկանոնսն ժողովոյն Սսոյ՝ զարարեալսն յԱնաւարզեցւոյն:

Ընդ այս հրաման արքայի ոչ հաճեալ երբէք արևելեան եպիսկոպոսաց Հայոց, և արևմտեայց ամբոխեալ առհասարակ վանահարց և ժողովրդոց, յարուցին, լցին յամենայն տեղիս խռովութիւն մեծ, մինչև յեկեղեցիս, ի փողոցս և ի հրապարակս և վանորայս բողոք բառնալ և ոչ ընդունել զկանոնսն, մանաւանդ զտօնսն և զպահսն, և զխառնումն ջրոյ ի բաժակն և զայլայլութիւն Սո-րբ Աստո-ածին:

Ապա Օշին ի խաղաղել զայս ամենայն, պատգամ յղեալ առ նոսա՝ խոստանալով ըստ կամաց նոցին առնել, գնայ ի կողմանս Բաղիշոյ և հրամայէ ժողով լինել անդ եպիսկոպոսաց և վարդապետաց, զի քննեսցեն զկանոնս և որոշեսցեն՝ զինչ արժանն է առնել:

Բայց եպիսկոպոսք և վարդապետք ամենեքին, առ որս հրաման եհաս արքունի ի վերայ բանիս այսորիկ, հրաժեշտ տուեալ ընդ կո-

չումն, դիմեն ի Սիս և անդ ժողով արարեալ՝ միանգամայն մերժեն զգործս ժողովոյն Սսոյ ի հինգերորդ նուագի և հերքեն զկանոնս ծիսափոխութեան, բարձեալ միանգամայն զաղմուկ և զխռովութիւն, ուր հասեալ և մեծ բազմութիւն քահանայից, սարկաւագաց, կրօնաւորաց և միանձանց և անհամար ժողովրդոց՝ արանց և կանանց, բողոք բառնային ընդ ծիսափոխութիւնսն Հայաստանեայց Եկեղեցւոյ:

Թէև հարք ժողովոյս հուսկ ապա կրեն զմեծամեծ հարուած ի բարկութենէ արքային, ոմանք զբանտարկութիւն, ոմանք զաքսորանս և բազումք ի ժողովրդոց զմահ ևս, բայց այսու ամենայնիւ ոչ ոք ի նոցանէ ընդ կամս արքային հաճեալ պահեն զկանոնս ժողովոյն, այլ միայն անխափան կանոնքն կատարեցան յարքունիս և ի կաթուղիկոսարանի: Զի ի վարել ուրուք այսոքիւկ կանոնովք ի ժողովուրդս, նորանոր չարիք երևէին, որպէս տեսանի ի պատմութեան Կիլիկիոյ:

Գլուխ ԽԵ.

Առաջին ժողով յԱպտանայ վասն Ծիսից և հաստատոյ

(Ամք Տեառն 1316): Տեսեալ Օշնի, եթէ բռնանալով ի վերայ եպիսկոպոսաց և առաջնորդաց աշխարհին ոչ երբէք ածէ զաղգն և զեկեղեցին յընդունելութիւն ծիսից և փոփոխութեան կանոնացն, այլ յաւէտ երկպառակութիւն, և մահ և օձտումն ի միմեանց յառաջանայ յազգին, մանաւանդ թէ և Գրիգոր եպիսկոպոս Կարնոյ սպանաւ վասն խառնելոյ նորա զջուր ի բաժակն, և թէ Սարգիս եպիսկոպոս Երուսաղեմի առ ոտն արկեալ զհրաման իւր և Կոստանդեայ կաթուղիկոսի, հրամանաւ ամիրային Եգիպտոսի նստաւ յԵրուսաղէմ և ընդվզեալ ի կաթուղիկոսական իշխանութենէ՝ ինքնագլուխ վարէր զիշխանութիւն, յղեաց դեսպանս առ Կղեմէս պապն Հռովմայ վասն գժտութեան ընդ մէջ իւր և արքային Կիպրոսի, ևս և վասն հրաման խնդրելոյ ի նմանէ պահել ի պալատան իւրում զվեց լատին կրօնաւորս ի վանացն Կիպրոսի, առ որ և պապն գրեալ՝ հրաման տայ պահել ըստ ցանկութեան իւրում զկրօնաւորսն ի պալատն իւր:

Ընդ այս խրախուսեալ արքայի առնու ի ձեռն դարձեալ զստիպումն առաջնորդաց՝ վասն անխափան պահելոյ զկանոնսն, և իբրև ոչ կարաց առնել ինչ ըստ առաջնումն՝ յարուցանէ հալածումն

մեծ ի վերայ նոցա, ընդ որս ևս հուսկ ուրեմն անճարացեալ՝ վերստին ժողով արար հրամանաւ իւրով յԱտանայ քաղաքի, ի տաճար Սրբոյն Մինասայ յամի 1316, ի ներկայութեան իւր և բոլոր պալատականացն և մեծամեծ իշխանաց և նախարարաց տէրութեան իւրոյ:

Յայս հրաման արքունի բազումք դժուարացեալք՝ ոչ իսկ եկին ի ժողովն, իսկ որ սակաւք յեպիսկոպոսաց գտան անդ՝ էին անձինք եօթնևատասն, որք հնազանդեալք հրամանին, ընթերցան զսահմանադրութիւն ժողովոյն և զինն կանոնս այնորիկ, ևս և զնամակ դաւանութեան Գրիգորի, ընկալան դարձեալ և հաստատեցին զայն ստորագրութեամբք ամենեցուն:

Բայց այսոքիկ սահմանադրութիւնք և ինն կանոնք թէև երկիցս հաստատեցաւ, թէև ընկալաւ ի ժողովն, այլ նոքին իսկ հարք ժողովոյն առաջնոյն և վերջնոյս՝ երբէք չվստահացան կատարել յեկեղեցիս առ ահի ժողովրդոցն, ըստ որոց երևի, թէ բռնութեամբ իշխանութեան լինէին ժողովքն:

Գլուխ ԽԶ.

Եօթնեբորդ ժողով ի Սիս վասն պապականելոյ նամակի Պապին

(Ամք Տեառն 1342): Յառաջնում ամի Հայրապետութեան Մխիթարայ Քռնեցւոյ Ներսէս եպիսկոպոս Որմեայ, տուեալ զանձն ի կարգս ունիթոռաց, եկն առ նա, որ հալածանս կրեալն էր յազգէն ցայն վայր յաւուրս Յակոբայ Սսեցւոյ, այլ իբրև և ի Մխիթարայ յանդիմանեցան գործք նորա իբրև արհամարհող օրինաց, դարձաւ գնաց առ Բենեդիկտոս պապն Հռովմայ և յԱւենիոն քաղաք և յարեալ անդ յոմանս յազգէ հայոց, որք ի կարգէ ունիթոռացն էին, և յինքեանս յանկուցեալ զլատինս ոմանս փորձառուս արևելեան իրաց ըստ իւրեանց վկայութեանն, մատուցին պապին զչարախօսութիւն ծանր զՀայոց Կիլիկեցւոց և արևելեայց՝ ջանացեալ ցուցանել, թէ լի են հայք ամենայն մոլորութեամբք, զորպիսի ամբաստանութիւն գրեալն էր յառաջագոյն առ պապն և գործակից Ներսիսի՝ Սիմէովն բէկ՝ եպիսկոպոս Կարնոյ՝ հալածեալն ի Կիպրոս յերեսաց հայոց:

Առ որ և ամենեքին նոքա առաջնորդութեամբ Ներսիսի զամենայն ինքնահնար ամբաստանութիւնս զՀայոց ժողովեալ ի մի գիրք՝ կցկցեն ի վերայ Եկեղեցւոյն Հայոց զհարիւր տասն և եօթն

մոլորութիւնս՝ հաստատեալ բանիւք ոմանց հակառակասիրաց, և մատուցանեն պապին՝ յօդելով, թէ հայք լի են այսպիսի մոլար վարդապետութեամբք:

Զայս ամենայն ընթերցեալ և լուեալ պապին, կամեցեալ ստուգել զամբաստանութիւնսն, առաքէ ապա զպատճէն գրոյն մոլորութեանց առ Լևոն արքայ և առ Մխիթար կաթուղիկոս և խնդրեաց ևս, զի ժողովով հերքեսցեն զայն ամենայն և ցուցցեն զուղղափառութիւնս Եկեղեցւոյն Հայոց: Իսկ արքայի ծանրացասումն եղեալ ընդ զրպարտութիւնսն և ընդ գիրս մոլորութեանն՝ հրամայեաց ուրումն Դանիէլ վարդապետի պատասխանի գրել առ պապն ընդդէմ գրոցն, ըստ որոյ և նա ինքն շարադրեալ զգիրք մի՝ ստէ զամենայն ամբաստանութիւնս հակառակորդացն և հրամայէ ևս արքայ ժողով գումարել և հերքել զմոլորութիւնսն:

Այլ զայս ժողով առնէ Մխիթար կաթուղիկոս յետ վախճանի արքային և յաջորդութեան ի թագաւորութեանն Կոստանդնի Պայլ կոչեցելոյ յամի 1342, ի Սիս, ուրանօր գումարեալք քսան և ինն եպիսկոպոսք յայլ և այլ կողմանց աշխարհին Հայոց, հինգ գլխաւոր վարդապետք, տասն վանահարք և բազում աւագերիցունք՝ հանդերձ քահանայիւք իւրեանց, և յատեան հանեալ զգիրս մոլորութեանցն և հերքեալ մի առ մի՝ գրեն պատասխանի ընդարձակ յոյժ, ցուցեալ, թէ այնոքիկ ամենեքեան շաղփաղփութիւնք ծառածեալ մտաց և քսու արանց ամբաստանութիւնք են և ոչ ուղղափառ ազգի դաւանութիւն և առաքեն առ Կղեմէս Վեցերորդ պապ՝ յաջորդեալն Բենեդիկտոսի, ստորագրութեամբ միաբան ժողովոյն:

Այլ թէ որպիսի՞ ինչ էին ամբաստանութիւնքն և պատասխանիք ժողովոյն, ոչ ամենայնն ի մի վայր գոյ, և զի պատմութեան Հայոց ևս եղեալ են կարևորքն և եթ, նորին աղագաւ թողաք ի բաց, յորում յաղագս ժողովոյն Քաղկեդոնի գրեն այսպէս. զժողովն Քաղկեդոնի վասն այնորիկ մերժեցին ոմանք ի հայոց, զի յոմանց վատ արանց և ի սուտ բանից զխռովութիւն սերմանողաց յեկեղեցի, յորոց խորշի Հոգին Սուրբ, չարաչար համբաւեցաւ ի Հայս:

Գլուխ ԽԷ.

Ո–ՐԵՐՈՐԴ ԺՈՂՈՎ Ի ՍԻՍ ՎԱՆԱ ՀԽԱՌՆԵԼՈՅ ԸՆԴ–ՐՔ ԲԱԺԱԿՆ

(Ամք Տեառն 1361): Յաւուրց անտի հինգերորդ ժողովոյն Սսոյ և Ատանայ մուծեալ յԵկեղեցիս Հայոց ուրեք ուրեք ի Մեծն Հայս և

յընդհանուր գրեթէ Կիլիկիայ սահմանադրութիւն խառնելոյ զջուր ի սուրբ բաժակն, բազում վէճք և աղմուկք յայն սահմանսն յառնէին, յաւետ և խռովութիւնն բորբոքեալ ի վանօրայս, յերիցունս և ի ժողովուրդս, սրօք և բրօք գրեթէ պատահէին միմեանց և ոճիրս բազումս գործէին, զի ոմանք պնդէին, թէ պարտ է խառնել զջուր ի բաժակն, և այլք, թէ՝ պարտ է զանապակն պահել ըստ առաջին սովորութեանն:

Ապա Մեսրովբ հայրապետ՝ յԱրտազ գաւառէ, որ յաջորդեալ յԱթոռն էր յետ Յակոբայ Սսեցւոյ, ջանացեալ խաղաղել զնոսին, առնէ ժողով եպիսկոպոսաց և վարդապետաց աշխարհին Կիլիկիոյ ի Սիս և յետ բազում խորհրդոց և բանից ընդ մէջ մտելոց՝ հրամայէ ամենեցուն միօրինակ վարիլ ըստ առաջնոյ սովորութեանն, այս ինքն՝ անապակ գինեաւ կատարել զխորհուրդ պատարագին, որով և բարձաւ յայնմհետէ և յապա գործածութիւն խառնելոյ զջուր ի բաժակն, ամենայն ուրեք, նա և յաշխարհին իսկ Կիլիկիոյ:

Գլուխ ԽԸ.

Վէցերորդ ժողով յէջմիածին, ո՞ր փոխադրեցա՞ Կաթո՞ղիկոսո՞ն

(Ամք Տեառն 1441): Ի ժամանակի յայսմիկ յաջորդեալ յԱթոռ Հայրապետութեանն Սսոյ Գրիգոր Մուսաբէկեանց յետ Յովսեփայ Երրորդի Սսեցւոյ և տեսեալ, թէ խսպառ անշքացեալ է Աթոռն, և ոչ գոն եպիսկոպոսք բաւականք ի Կիլիկիա, ձեռնադրէ առանց ընտրութեան զհինգ եպիսկոպոսունս, և առանց կամաց եպիսկոպոսաց կողմանցն Կիլիկիոյ, որոց հաւանութեամբ եպիսկոպոսական ձեռնադրութիւն կատարէին կաթուղիկոսք, ընդ որ չորեցունց նոցա բողոք բարձեալ՝ գրեն միաբանութեամբ առ ամենայն արևելեան եպիսկոպոսունս և վարդապետս՝ ծանուցեալ, եթէ աթոռն Սսոյ հասեալ է յանարգութիւն, եթէ ոչ աճապարեսջիք, ասեն, փոխել զսա, ի նախատինս լինիմք առաջի ամենայն ազգաց:

Ընկալեալ արևելեայց զթուղթս եպիսկոպոսացն Կիլիկիոյ և հասու իրացն լեալ՝ չհաճեցան ընդ ընտրութիւն Գրիգորի, զի առանց հաւանութեան չորից աթոռոց և առաջնորդաց նստեալ էր նոյն Մուսաբէկեան, և առ ի նորոգ ընտրել զոք կաթուղիկոս հաւանութեամբ ազգին, փոխադրելով և զԱթոռն յէջմիածին, հրաւիրեն միաբան հաւանութեամբ զ Գրիգոր յէջմիածին, այլ ի չառնուլ նորա յանձն, խորհրդով առաջնորդաց ազգիս և ձեռնտուութեամբ

մեծամեծացն Հայոց ի Հայաստան, ի Վիրս և հաճութեամբ խանին Երևանայ՝ գումարեն ի Վաղարշապատ Այրարատայ զմեծ ժողով եպիսկոպոսաց՝ եօթն և տասն անձանց, յորս էր կաթուղիկոսն Աղուանից և առաջնորդք չորից գլխաւոր աթոռոցն, որոց հաւանութեամբ լինէր ընտրութիւն Կաթուղիկոսի, և բազմութիւնք վարդապետաց, վանահարց, կրօնաւորաց և քահանայից և իշխանաց՝ թուով եօթն հարիւր անձանց, իսկ որոց առ ժողովն հասին թուղթք հաւանութեան եպիսկոպոսաց և վարդապետաց, էին տասն և վեց անձինք, ընդ որս և միաբանք Աղթամարայ աթոռոյն, խոստացեալ հնազանդիլ իշխանութեան այնմ, զոր ժողովն կոչեսցէ ի Հայրապետութիւն:

Ապա ի սմին ժողովի հաւանութեամբ ամենեցուն ընտրեալ ի Հայրապետութիւն Կիրակոս վարդապետ Խորվիրապեցի՝ այր խոնարհ և խիստ ի ճգնողական վարս, ընդունի զօծումն եպիսկոպոսութեան և Կաթուղիկոսութեան ամենայն Հայոց և հաստատէ զԱթոռն յԷջմիածին, յետ աստանդելոյ այնմիկ զամս ինն հարիւր ութսուն և ինն յայլ և այլ տեղիս, որ և յայնմ հետէ և յապա զհետ լինի նորոգութեան և բարեզարդութեան Աթոռոյն:

Գլուխ ԽԹ.

Եօրնէրորդ Ժողով յԷջմիածին վասն ընդրութեան նոր կաթուղիկոսի

(Ամք Տեառն 1603): Դաւիթ Հիգերորդ կաթուղիկոս՝ յաջորդ Առաքելի, որ առ առաւելութեան պարտուց Աթոռոյ Էջմիածնի կացոյց յաջորդ ինքեան զՄելքիսէթ Գառնեցի յԱղջոց վանաց յամի 1593, որք և գրեթէ միշտ թափառական շրջէին ի գեօղս և ի քաղաքս, տառապեալք առ ահի պարտատերացն, մինչև և դարման կենաց ինքեանց ոչ գտանել, ապա ի սմին ժամանակի լուեալ, եթէ առաջնորդ Ամդայ Սրապիովն վարդապետ Մեծ կոչեցեալն ունի բազում ստացուածս ի Հայրենի ժառանգութենէ, գրէն առ նա ի միասին Դաւիթ և Մելքիսէթ, զի նա եկեալ թեթևացուսցէ զպարտս Էջմիածնի և յանձն առցէ զկաթուղիկոսութիւն, յորմէ երկոքին նոքա ևս կամաւ հրաժարէին:

Ընկալեալ Սրապիովնի զայսօրինակ գիր նոցին՝ դիմէ առ նոսա ի հին Ջուղայ, ուր ի ժողովի կաթուղիկոսացն և եպիսկոպոսաց՝ իբրև մեղադրական բանս ինչ խօսի առ նոսա, Մանուէլ եպիսկոպոս յարուցեալ անդէն զաղմուկ և տարաձայնութիւն, ցրուին ամենե-

քին անտի և Դաւիթ և Մելքիսէթ գնան ի վանս Ստաթէի, այլ Սրապիովն, կացեալ անդէն ի Ջուղայ և քարոզութեամբ աստուածային բանից հաճոյ լեալ յաչս Ջուղայեցւոց, առնուն զնա Ջուղայեցիք և ածեալ յէջմիածին՝ կացուցանեն կաթուղիկոս ժողովով եպիսկոպոսաց, վարդապետաց և իշխանաց յամի 1603՝ կոչելով զանունն Գրիգոր Երեքտասաներորդ:

Բայց Դաւիթ և Մելքիսէթ իբրև տեսին, թէ այսպէս յիշխանութիւն իւրեանց յաջորդեաց Սրապիովն Գրիգոր, և ծանրութիւն պարտուցն ևս դարձեալ մնաց ի վերայ ինքեանց, խորհեցան դիմել յԱսպահան առ բնակիչս տեղւոյն, որք գաղթեալքն էին ի Հայաստանէ, և ներկայանալ Շահաբաս արքայի և գտեալ զօգնութիւն ի նոցանէ յաղագս պարտուցն՝ վերստին հաստատուն ունիցին զկաթուղիկոսութիւնն:

Գլուխ Ծ.

Ո–ՐԵՐՈՐԴ ԺՈՂՈՎ ՅԷՋՄԻԱԾԻՆ ՎԱՍՆ ԸՆՏՐԵԼՈՅ ԶՆՈՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ

(Ամք Տեառն 1629): Սահակ կաթուղիկոս իբրև խոյս ետ յերեսաց հարկահանիցն ի Վան վասն բազմանալոյ արքունի հարկացն ի վերայ Աթոռոյ Էջմիածնի, հայք Ասպահանայ և Ջուղայու, լուեալ զայն և ոչ կամեցեալ զաթոռն առանց հայրապետի թողուլ ամայի, գրեն առ բնակիչս Մեծին և Փոքուն Հայոց, զի ընտրեսցեն ի կաթուղիկոսութիւն Էջմիածնի զՄովսէս վարդապետ Սիւնեցի, զորոյ զփոյթ վայելչացուցանելոյ զԱթոռն լուեալ էին ի համբաւոյ, մանաւանդ զբարի անունն: Ըստ որոյ և առ Մովսէս հասանէին յայնմ հետէ յերևելեաց ազգին թուղթք յորդորականք յամենայն կողմանց աշխարհին Հայոց և Պարսից, և Վրաց և Յունաց և յայլոց տեղեաց, զի յանձն առցէ զՀայրապետութիւն Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի:

Այսպէս ստիպեալ Մովսիսի ի յորդորանաց ազգին և յաւէտ ի սիրոյ սրտին իւրոյ, զոր ունէր ի վերայ Էջմիածնի, օծաւ կաթուղիկոս մեծաւ հանդիսիւ ժողովով եպիսկոպոսաց և բազմութեամբ վարդապետաց ի Սուրբ Էջմիածին յամի Տեառն 1629: Եւ զհետ եղև ինչ ինչ չինութեանցն Էջմիածնի՝ սկսելոցն յաւուրց փակակալութեան իւրոյ:

ԳԼՈՒԽ ԾԱ.

Առաջին Ժողով յԵրուսաղէմ, ուր եղան երէվդասան կանոնք վասն եկեղեցականաց

(Ամք Տեառն 1651): Գնալն Փիլիպպոս կաթուղիկոսի ի Կոստանդնուպոլիս, գրէ Հ. Զամչեան, եթէ էր յաղագս խաղաղեցուցանելոյ նորայ զխռովութիւնսն, ծագեալս անդր ի Կ. Պոլիս, ընդ մէջ ժողովրդոցն և պատրիարգաց՝ յաջորդելոց մի զհետ զմիոյ:

Ելեալ նորա ի ճանապարհ, դիմէ, ասէ, նախ յԵրուսաղէմ, ուր և ընդ Աստուածատուր պատրիարգի տեղւոյն և Ներսէս կաթուղիկոսին Սսոյ, որ դիպաւ անդանօր, արարեալ իցէ ժողով վասն բառնալոյ զանկարգութիւնսն, մտեալս յեպիսկոպոսունս յաշխարհին Հայոց, և կարգեալ զհետևեալ կանոնս:

Հակառակ թուին ուղիղ դատողութեան բանքս, յառաջ բերեալք ի նոյն Զամչեանէ, զի երևի յայտնապէս զիսկութիւն իրին խռովութեան պատրուակաւ ծածկեալ:

Նախ՝ եթէ գնալ կաթուղիկոսին ի Կ. Պոլիս էր յաղագս խռովութեանցն, ծագելոց ընդ մէջ ժողովրդոց և պատրիարգացն Պոլսոյ, ընդէ՞ր ապա դիմեաց նա նախ յԵրուսաղէմ:

Եւ երկրորդ՝ եթէ վասն բառնալոյ զանկարգութիւնսն, մտեալս յեպիսկոպոսունս աշխարհին Հայոց, գնաց կաթուղիկոսն յԵրուսաղէմ և արար անդէն ժողով և կանոնս եդ ի նմին, զի՞նչ հարկ կայր ապաքէն ընդհանրական կաթուղիկոսին վասն բառնալոյ զանկարգութիւնս եպիսկոպոսաց աշխարհին Հայոց թողուլ զՀայրապետական Աթոռ իւր, ուր իսկզբանէ և ցայն վայր վասն ամենայնի այնպիսեաց կարևորաց ազգի Հայոց լեալ էր ժողով բազում, անգամ և տարևոր ժամանակօք հեռանալ յԱթոռոյ իւրմէ, և ի ծայրս իշխանութեան իւրոյ և Հայաստան աշխարհի վասն նոյն իսկ աշխարհին Հայոց առնել ժողով կամ կանոնս կարգել վասն զանկարգութիւնսն բառնալոյ:

Այլ զի զկարևոր պատճառս գնալոյ Փիլիպպոսի ի Կ. Պոլիս, այն է՝ զխռովութիւնսն, յարուցեալս անդր, ոչ յայտնի բացատրէ, ծեքելով զայն ի շնորհս Հռովմայ, որպէս և ոչ զանկարգութիւնսն, եղեալս ի մէջ եպիսկոպոսաց ևն, մեք առանց ակնառութեան յայտնի գրեսցուք: Ո՞չ ապաքէն արբանեակք գահին Հռովմայ յաճախեալ անդր ի Կ. Պոլիս և ի կողմն իւրեանց շորթելով զտկարա-

միտս և զթեթևահաւատս ի Հայոց՝ ընդ մէջ միամիտ ժողովրդոց յարուցանէին նոքօք զխռովութիւն և ջանային զազգն ևս դարձուցանել ի պապականութիւն, որպէս և ի մերումս այսր ժամանակի՝ ոմանք ի պապականութիւն, և ոմանք ի բողոքականութիւն ևլն, շրջել ճգնին զԵկեղեցին Հայաստանեայց:

Եւ զի եպիսկոպոսունք կաթուղիկոսութեան Սսոյ, մուտ գործեալ յայնժամ ի վիճակս ժողովրդոց պատրիարքական իշխանութեան Կ. Պոլսոյ, ընդարձակէին ինքնագլուխ ի ժողովուրդս պէս-պէս անկարգութեամբք և ջանային տակաւ առ տակաւ տիրապետել վիճակացն և տալ ընդվզել զեկեղեցականս և զաշխարհականս ի հնազանդութենէ Մայր Աթոռոյ, որպէս զի դիւրաւ արկցեն զորսացեալսն ի գուբ պապականութեան: Առ այս և Փիլիպպոս կաթուղիկոսի հարկ եղև ըստ խորհրդոյ ողջամտաց յԵրուսաղէմ անդր դիմել նախ, ուր ո՛չ պատահմամբ, այլ խորհրդով ոմանց անդ գտաւ և Ներսէս կաթուղիկոս Սսոյ, և առ ի փրկել զվիճակս ժողովրդոց ընդհանրական իշխանութեան իւրոյ, մանաւանդ, թէ պատրիարգունք Կ. Պոլսոյ, գոլով բնակեալ ի թագաւորեալ քաղաքն Կ. Պոլիս, ընդ հզօր իշխանութեամբ Օսմանեան պետութեան գործէին, զոր կամէին ի ձեռն Բ. Դրան, և Կաթուղիկոսական Աթոռն էջմիածին էր յառարկայ յափշտակութեան իշխողաց երկրին, յորում կաթուղիկոսունք ազգիս չէին իսկ ձեռնհաս զկաթուղիկոսական իշխանութիւն իւրեանց հաստատուն ի կայի պահել, թո՛ղ թէ զազգն համօրէն ի սփիւռս աշխարհաց, ջանային նոքա իւրաքանչիւր յիւր իշխանութիւն զազգն յաւելուլ և զնախնական վիճակս ժողովրդոց ընդհանրական Կաթուղիկոսի ամենայն Հայոց յՕսմանեան անդր պետութեան իւրացուցանել, ուստի պարտաւորեցաւ երանելին Փիլիպպոս հայրապետ զփոքրագոյնն երկուց չարեաց ընտրելով զեղծումն օրինաց՝ զիջանիլ իբր ի դաշնակցութիւն ընդ Սսոյն, որպէս զի մարթասցի զառաջս առնուլ մեծամեծ վտանգաց, որ սպառնային, և կանոնափակ առնել զապօրինի ձգտումն կաթուղիկոսին Սսոյ և պատրիարգին և այլոց, հրաւիրելով ի սէր ազգի և եկեղեցւոյ զամենեսին, և ի ժողովի անդ ընդ այլոց յօդուածոց կանոնացն անճարացեալ երանելին յանձն առեալ է, զի իւրաքանչիւրն միայն զիւրոյ վիճակի նուիրեալսն ձեռնադրեսցէ, թէ և ապօրինաւորապէս, այլ, անշուշտ, վասն խաղաղեցուցանելոյ զվրդովեալս և զիջուցանելոյ զհրդեհ պապականութեան և վերադառնալով ի Պոլիս, որպէս երևի, զի պատրիարգն ժամանակին ի կողմն պապականաց էր, հանեալ զնա ի պաշտօնէ պատրիարգութեան, կացուցանէ

ի տեղի նորին զԵրևանցի կամ զՄուղնեցի Յովհաննէս վարդապետ՝ զհարազատն դաւանութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ: Եւ ահա յօդուածք կանոնացն, որ եդան ի ժողովի անդ, յայտնի ցուցանեն, թէ յի՛նչ պատճառս են եղեալք, և որպէս շփոթեալ են զկարգադրութիւն Եկեղեցւոյն Սսականք ի ձեռն մոլելոց ի կողմն պապութեան, քանի՛ք ի Սսոյ, ելեալք ի ձեռն քաղաքական իշխանութեան, կարգեալ են առաջնորդք վիճակաց, քանի՛ անարժանք գնացեալք ի Սիս՝ ձեռնադրեալ իցեն յեպիսկոպոս, և քանի՛ անարժանք թողեալ զիւրեանց վիճակի եպիսկոպոսն՝ դիմեալ են յայլս՝ առնուլ զկարգ քահանայութեան կաշառօք, և սակս զառաջս այնպիսեաց առնուլ մարթելոյ՝ երանելին Փիլիպպոս արարեալ է զիջումն առժամանակեայ՝ զապագայն յանձնելով ի խնամս Տեառն:

Այսոքիկ են կանոնք՝ եղեալք ի ժողովի անդ:

Ա. Երկու Աթոռք՝ Էջմիածնի և Սսոյ, սէր ունիցին առ միմեանս, և իւրաքանչիւր միայն զիւրոյ վիճակի նուիրեալսն ձեռնադրեսցէ:

Բ. Եւ որ ձեռնադրելին է, մի՛ իշխեսցէ առ այլ կաթուղիկոս գնալ, այլ առ իւրն:

Գ. Առանց վկայութեան ժողովրդեան մի՛ ոք ձեռնադրեսցի եպիսկոպոս:

Դ. Մի՛ ոք յեպիսկոպոսաց յափշտակեսցէ զվիճակ այլոց:

Ե. Միոյ վիճակի մի՛ լիցին երկու առաջնորդք:

Զ. Եպիսկոպոս մի՛ ձեռնադրեսցէ զոք յայլմէ վիճակէ:

Է. Եպիսկոպոս առանց հրամանի կաթուղիկոսին մի՛ իշխեսցէ այլոց վիճակաց բռնութեամբ այլազգեաց:

Ը. Մի՛ ոք ի վարդապետաց տայցէ այլում իշխանութիւն վարդապետութեան, եթէ չիցէ կատարեալ հասակաւ և վկայեալ յառաքինութեան և յուսման:

Թ. Քահանայն յիւրմէ յեպիսկոպոսէ ձեռնադրեսցի հաւանութեամբ ժողովրդեանն:

Ժ. Եպիսկոպոսք և քահանայք մի՛ զրկեսցեն զմիմեանս ի հասս, զորս առնուն ի ժողովրդենէ:

ԺԱ. Երիցունք մի՛ յափշտակեսցեն զվիճակս (այս ինքն՝ զծուխս) իրերաց:

ԺԲ. Երիցունք ի նշանադրութեան աղջկանց բազում աւուրքք յառաջ ծանուսցեն զայն ի մէջ եկեղեցւոյ, զի թէ գուցէ ինչ արգել՝ յայտնեսցի:

ԺԳ. Երիցունք, որոց վախճանեալ իցէ ամուսին, եթէ իցեն վկայեալ ի պարկեշտութեան և իցեն ծեր և ունիցին մանկունս սնուցանելոյ, կայցեն յեկեղեցւոջ, ապա թէ ոչ՝ գնասցեն ի վանս:

Գլուխ ԾԲ.

Իններորդ ժողով յէջմիածին վասն ընդդեմ-Ռէական նոր կաթո-ղիկոսի

(Ամք Տեառն 1655): Յետ մահուան Փիլիպպոս կաթուղիկոսի, միաբանքն Աթոռոյ Էջմիածնի և եպիսկոպոսք և վարդապետք, որք եկեալ էին ի թաղումն հայրապետին, ժողով արարեալ յետ աւուրց ինչ, ընտրեն զՅակովբ վարդապետ Ջուղայեցի ի կաթուղիկոսութիւն, և յուխտերորդումն աւուր ապրիլի ի սոյն ամի 1655, օծանեն զնա յԱթոռ Հայրապետութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ, որ առաքինի վարուք իւրովք յամենայն ի գործս իւր երևեցաւ արդիւնաբեր և բարեկարգիչ Աթոռոյն:

Գլուխ ԾԳ.

Տասներորդ ժողով յէջմիածին վասն նոյն իրին

(Ամք Տեառն 1707): Յորժամ վաղճանեցաւ Նահապետ կաթուղիկոս Եդեսացի յամի 1705, ոչ ումեք յաջողեցաւ ամբառնալ յԱթոռ Հայրապետութեան գրեթէ աւելի քան զամ մի, որում ապա յաջորդեաց Տէր Աղէքսանդր Ջուղայեցի ի Կաթուղիկոսութիւն ամենայն Հայոց յէջմիածին, յամի Տեառն 1707:

Գլուխ ԾԴ.

Ա-աջին ժողով ի Կոստանդնո-պօլիս, ո-ր ընդդէմ- Կարապետ կա-ղո-ղիկոս

(Ամք Տեառն 1726): Յաւուրս խռովութեանց աշխարհին Արարատայ ի սմին ժամանակի վասն պատերազմաց ընդ մէջ օսմանցւոց և պարսից, Աստուածատուր կաթուղիկոս Համատանցի, ոչ կարելով հանապազ նստիլ յէջմիածին, շրջէր թափառական, և առ այս առիթ լեալ նորա յՕշական գեղջ, յաւուր միում իբրև ելանէ ի տանիս առ դիտելոյ զխաւարումն լուսնի, անկանի ի վայր գիշերայն և յետ աւուրց փոխի յաստեացս:

Զայս մահ Աստուածատրոյ, լուեալ Յովհաննու պատրիարգի՝ Կոլոտիկն կոչեցելոյ, ի Կոստանդնուպօլիս, առ ինքն ժողովեալ

զեպիսկոպոսունս և զվարդապետս և զերևելի իշխանաւորս քաղաքին, ամենեցուն հաւանութեամբ ընտրեն զԿարապետ վարդապետ Զէյթունցի արքեպիսկոպոս և առաջնորդ Գաղատիոյ՝ այր զգօն և գովանի վարուք, զոր հրաւիրեալ անդ ի Պոլիս՝ օծանեն զնա ի Կաթուղիկոսութիւն Աթոռոյ Էջմիածնի, արքունի հրամանաւ, երկոտասան եպիսկոպոսօք մեծաւ հանդիսիւ յեկեղեցւոջ Սրբոյ Աստուածածնի ի 27 աւուր փետրուարի, յամի 1726, որ յետ երկուց ամաց անագան ուրեմն դարձաւ յէջմիածին՝ յԱթոռն Հայրապետական:

Գլուխ ԾԵ.

Երկրորդ ժողով ի Կոստանդնո-պոլիս վասն ընտրելոյ զնոր կաթո-ղիկոս

(Ամք Տեառն 1753): Մինաս կաթուղիկոս յաջորդ Ղազարու իբրև վաղճանեցաւ յամի Տեառն 1753, յետ վարելոյ զիշխանութիւնն զամ մի և զամիսս Ը, միաբանք Աթոռոյն ազգ արարեալ ի Կոստանդնուպոլիս, խնդրէին, զի կամ Յակովբ պատրիարգ և կամ Սահակ վարդապետ ահագին ընտրեսցին ի կաթուղիկոսութիւն:

Այլ Յակոբ պատրիարգ, ոչ հաճեալ ընդ ընտրութիւն իւր ի միաբանից Աթոռոյն, արար ժողով յաղագս ընտրելոյ զոք ի Հայրապետութիւն, ուր ապա ընտրի հաւանութեամբ ժողովոյն Աղէքսանդր վարդապետ Կոստանդնուպոլսեցի՝ Ղարաղաշ կոչեցեալ, որ ելեալ անտի և եկեալ յէջմիածին՝ օծաւ կաթուղիկոս ի յաջորդ ամի, ի 1754, ի 6 մարտի, յետ տասն ամսոց վաղճանին Մինասայ:

Գլուխ ԾԶ.

Մէկրասանէրորդ ժողով յէջմիածին վասն ընտրելոյ զնոր կաթո-ղիկոս

(Ամք Տեառն 1763): Իբրև վաղճանեցաւ Յակովբ կաթուղիկոս Շամախեցի յետ հայրապետութեան իւրոյ զամս երեք և ամիսս ութ, եղև ժողով հնգիցս վասն ընտրութեան նոր կաթուղիկոսի յԱթոռն յէջմիածին, բայց և ոչ ոք ընտրեցաւ, զի ժողովն ընդհանուր գրեթէ զայլևայլ անձինս ի մէջ բերէին ընտրութեանն, վասն որոյ և ոչ ումեք յաջողէր վիճակն:

Այլ ի հինգերորդ գումարման ժողովոյն Յարութիւն վարդապետ Բասենցի, յառաջի արարեալ զՍիմէովն վարդապետ Երևանցի,

յառնէ ի տեղւոջէ և համբուրէ զաջ նորա՝ ասելով. Կէցցէ Հոգեւոր փէր մեր Սիմէոնն կաթո-ղիկոս, ընդ որ ամենեքին յաւանեալ՝ ընտրեցին զնա և օծին կաթուղիկոս առանց հաւանութեան երևելեացն Պոլսոյ, որոց կամօք և գիտութեամբ լինէր ընտրութիւն կաթուղիկոսաց:

Ապա Սիմէոն կաթուղիկոս, յետ օծման իւրոյ գրեալ առ Յակոբ պատրիարգ և առ մեծամեծս Պոլսոյ, յայտնեաց նոցա զընտրութիւն իւր և զօծումն, ընդ որ հաճեցան նոքա ևս:

Գլուխ ԾԷ.

Երկրորդաանգամ ժողով ի Վաղարշապատ, ուր ընտրեցաւ Դանիէլ կաթո-ղիկոս ի պատրիարգութեան Կոստանդնո-պոլսոյ

(Ամք Տեառն 1800): Յետ վախճանին Ղուկաս կաթուղիկոսի, միաբանք Հայրապետական Աթոռոյ Սուրբ Էջմիածնի, ըստ ազգային սովորութեանն, ժողով արարեալ ի Կաթուղիկէ Մայր Եկեղեցւոջ յեկեղեցականաց և յաշխարհականաց՝ ընտրեն ի կաթուղիկոսութիւն զԴանիէլ արքեպիսկոպոս՝ պատրիարգն Հայոց Կոստանդնուպոլսոյ, միաբան համաձայնութեամբ և գրեն առ նա և առ ազգ մեր անդր ի մայրաքաղաքն՝ խնդրելով ընդ ձեռն հրաւիրակի Դանիէլ եպիսկոպոսին յանձն առնուլ զՀայրապետութիւն ընդհանուր ազգի Հայոց:

Ընդ որ ամենայն հոգևորականք ազգիս, որ անդր, ամիրայք և ժողովուրդք, ժողով արարեալ ի պատրիարքական եկեղեցւոջն, թէև զառաջինն ընտրեցին զպատրիարգն Դանիէլ ի հայրապետութիւն, բայց հաւաստի եղեալ, եթէ Յովսէփ արքեպիսկոպոսն Արղութեանց՝ առաջնորդն Հայոց Ռուսաստանու, հետամուտ է Հայրապետական Աթոռոյ, և հրովարտակ վասն նորին հաստատութեան մերձ է ելանել յՕսմանեան դրանէ ընդ ձեռն դեսպանին Ռուսաց ի մայրաքաղաքին, լուծին զժողովն՝ ընտրելով փոխանակ Դանիէլի զԲարդուղիմէոս եպիսկոպոսն Իգնիմիտու:

(1801): Այլ յետ վախճանին Յովսեփայ, յերկրորդումն անդ ազգային ժողովի ընտրեն զԴանիէլ ի Կաթուղիկոսութիւն ազգի Հայոց ընդ կրկին խնդիր հոգևորականաց Էջմիածնի, յորժամ ևս ինքն դարձ արարեալ էր Դանիէլ յաքսորանացն յԵւդոկիա յերեսաց խռովութեանցն ըստ առաջնոյ ընտրութեան իւրոյ, յորմէ յելանելն և ի գալ յԱթոռ Էջմիածին, լուեալ ճանապարհին որպէս

զմահ Յովսեփայ, նոյնպէս և զյաջորդել Դաւթի յաթոռն, գնաց և ինքն յԵրեքխորանեանն ասացեալ վանս (Իւչքիլիսայ) ի Բագրեւանդ և օծանի անդէն կաթուղիկոս:

Գլուխ ԾԸ.

Երեվելիաանելոյոյ ժողով ի Վաղարշապատ՝ յիշմեծին, որով Հրա-երեցա- ի կաթո-ղիկոս-ութեան Եփրեմ՝ արքեպիսկոպոս Հայոց Ռո-ասապանի

(Ամք Տեառն 1810): Դանիէլ կաթուղիկոս, որ ի վերջին հիւանդութեան իւրում հաստատեալ էր զսինոդական կառավարութիւն վանաց Սուրբ Էջմիածնի յերկոտասան եպիսկոպոսաց, և ի ձեռն նոցա կտակաւ հաստատեալ էր յաջորդ ինքեան փոխանորդել զԱթոռն Եփրեմ արքեպիսկոպոս՝ առաջնորդն Հայոց Ռուսաստանի, երկուցեալ յերեսաց Դաւթի, որ կայրն հրաժարեալ ի սենեկի իւրում, ի վախճանիլ նորին՝ ժողով արարեալ միաբանից Էջմիածնի, առաքեն հրաւիրակ առ ընտրեալն Եփրեմ զՌեթէոս եպիսկոպոս՝ յԱժտարխան, որոյ ներկայացեալ այսու առթիւ կայսեր Ռուսաց Աղէքսանդրի առաջնոյ, ընդունի ի նմանէ զհրովարտակ կաթուղիկոսութեան, գայ, ժամանէ ի Տփխիս, ուր գտանելով զբազմութիւն միաբանից Էջմիածնի, փախուցեալ յերեսաց բռնութեան Դաւթի, առեալ անտի և զամենայն սրբութիւն և զսպասս Մայր Աթոռոյս, յաւանդի եղեալ յարքունի գանձարանն վեց ամօք յառաջ ի պատերազմին, նովին բազմութեամբ միաբանութեան եկեալ ի Սուրբ Էջմիածին, կալաւ զԱթոռ Հայրապետութեան, զոր ընկալան և ընդհանուր Հայք Տաճկաստանի ըստ կտակին Դանիէլի և ըստ առաքինի վարուց սուրբ հայրապետիս:

Գլուխ ԾԹ.

Զորեվելիաանելոյոյ ժողով ի Վաղարշապատ՝ յիշմեծին, ո-ր ընտրեցա- ի կաթո-ղիկոս-ութ-ն Յովհաննէս եպիսկոպոս Կարբեցի՝ ա-ազ լո-ասարար Սրբոյ Տաճարին

(Ամք Տեառն 1831): Յովհաննէս արքեպիսկոպոս Կարբեցի՝ փակակալ Տաճարիս Սուրբ Էջմիածնի, մին յերկոտասան եպիսկոպոսաց անդամոց սինոդական կառավարութեան Աթոռոյ, որ յամին

1830 կարգեալն էր առաջնորդ Հայոց Վրաստանի ի տեղի Ներսէս արքեպիսկոպոսին, որ և տանելով ընդ իւր զհրաժարական թուղթ Եփրեմ կաթուղիկոսին առ կուսակալն Վրաստանի՝ ի կաթուղիկոսութենէ՝ առ ծերութեան և առ պակասելոյ տեսութեան աչացն..., իբրև հրաման եղև ի կայսերէ ընտրութեան նոր կաթուղիկոսի, առեալ զհաճութիւն կուսակալին, դարձաւ յէջմիածին նորին տնօրէնութեամբ՝ առնել ժողով վասն ընտրութեան նոր կաթուղիկոսի, ուր գումարեալ հոգևորականք յամենայն վիճակաց Հայոց ի Ռուսաստանէ, ընտրեն ժողովով զտեղապահ կաթուղիկոսի Մարտիրոս և զՅովհաննէս Կարբեցի զերկոսին արքեպիսկոպոսունս՝ արժանաւորս կաթուղիկոսութեան, որոց զթուղթն ընտրութեան յառաջարկելն վեհափառ կայսեր ընդ ձեռն կուսակալին Վրաստանի, նորին կայսերական մեծութիւնն, խնայելով ի ծերութիւն Մարտիրոս եպիսկոպոսի, որում հաւաստի լեալ էր ի գրութեանց կուսակալին, հաստատէ զԿարբեցի Յովհաննէս արքեպիսկոպոս առաջնորդն Վրաստանի և տայ հրովարտակ կաթուղիկոսութեան նորա, որով և ընկալաւ նա ինքն Կարբեցի Յովհաննէս զԱթոռ Հայրապետութեան՝ օծութեամբ ի Սուրբ Կաթուղիկէ Էջմիածին ի նոյն ամի յիններորդ կիւրակէի Սուրբ Խաչին, առանց մասնակցութեան Տաճկաստանի Հայոց մերազանց՝ սակս չփոթութեանց ընդ մէջ տիրող պետութեանցն Հայաստանի ի ժամանակին:

Գլուխ Կ.

Հանգիստանէրորդ Ժողով ի Վաղարշապատ, ի Հայրապետական Աթոռն Էջմիածին, ո-ը ընդդէմ- Նէրսէս Ե-րդ կաթո-ղիկոս Աշտարակցի

(Ամք Տեառն 1843): Յետ վախճանին Յովհաննու Կարբեցւոյ յամին 1842, ի լրման ժամանակի ընտրութեան նոր կաթուղիկոսի, նշանակելոյ ի Սինոդէ Սուրբ Էջմիածնի ըստ կայսերական կարգադրութեանն՝ տուելոյ յաղագս կառավարութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ ի Ռուսաստան, յորում միջոցի հրատարակեալ էր Սինոդն գրով ընդ ամենայն տեղիս առ ազգս Հայոց որպէս զմահ կաթուղիկոսին Յովհաննու, նոյնպէս և յամենայն քաղաքաց խնդրեալ էր պատգամաւոր ի հոգևոր և ի մարմնաւոր կուսէ յաղագս ընտրութեան նոր կաթուղիկոսի, ըստ որոյ ապա ժողովն ընտրութեան եղև ի Հայրապետական Աթոռ Սուրբ Էջմիածին ի 17 ապրիլի 1843 ամի, յորում միաձայն հաւանութեամբ պատգա-

մաւորաց ժողովրդոց վեց վիճակաց Հայոց Ռուսաստանի և գրաւոր համաձայնութեամբ Հայոց Տաճկաստանի և այլոց յամենայն տէրութիւնս, և համախմբութեամբ միաբանութեանն ընտրեցաւ արքեպիսկոպոսն Ներսէս յընդհանրական Կաթուղիկոս ամենայն Հայոց՝ յառաջնորդութենէն Բեսսարաբիոյ, ուստի յետ երից ամաց ժամանեալ ի Սուրբ Էջմիածին, ընկալեալ զօծումն յերկոտասան եպիսկոպոսաց՝ կալաւ զԱթոռս Հայրապետութեան ազգիս:

Գլուխ ԿԱ.

Վեշտասանեւրորդ ժողով ի յԷրեւան Էջմիածին ի Վաղարշապատ, ո՞ր ընդրեցա՝ Մատթէոս արքեպիսկոպոս Կոստանդնո՞պօլսեցի ի կաթո՞ղիկոսո՞ւթի՞ն

(Ամք Տեառն 1858): Մեծ պատճառ այս էր ընտրութեան կաթուղիկոսի յայս նուագ յարքեպիսկոպոսացն ազգիս հպատակաց տէրութեան Տաճկաց, զի վերստին հաստատեցի հոգևոր միութիւն սիրոյ հոգևոր իշխանութեան ազգիս եղելոց ի Տաճկաստան, որ քակեալն էր ի քառասուն ամաց հետէ՝ ի տարագրութենէ Եփրեմ կաթուղիկոսի յԱթոռոյ իւրմէ յերեսաց բռնութեանց Պարսից և խռովութեանց ժամանակին:

Ուստի ըստ կարգին նշանակելոց յընտրութեան Ներսիսի ի Գլ. ԾԹ, ըստ որոյ իւրաքանչիւր վիճակի ժողովուրդք մերազանց, թէ՛ ի Ռուսաստան, և թէ՛ ի Տաճկաստան ի հոգևոր և ի մարմնաւոր կողմանց, որ պարտ էին ընտրել ի միջոյ իւրեանց զարժանաւոր դատեալ զոմն ի կաթուղիկոսութիւն, Ազգային Ժողովն Հայոց Կոստանդնուպօլսոյ առաջարկեալ էր թղթով ի ժողովն ընտրութեան զհինգ արքեպիսկոպոսունս, և զիրաւունս քառասուն և հինգ առաջնորդութեանց Տաճկաստանի, ամփոփեալս յինն ձայն, յանձնարարեալ էր պատգամաւորաց հասարակութեան Հայոց Տփխիսոյ ընտրել ժողովն, զոր և կամիցի ի հնգիցն եպիսկոպոսաց:

Առ որ ի համազգային ժողովի, գումարելոյ ի 17 մայիսի 1858 ամի, ընտրեցաւ ի Կաթուղիկոսութիւն ամենայն Հայոց արքեպիսկոպոսն Մատթէոս Կոստանդնուպօլսեցի՝ եղեալն երբեմն պատրիարգ, որոյ ընտրութիւնն հաստատեցաւ կայսերական հրովարտակաւ:

Գլուխ ԿԲ.

Եօթներորդ ժողով յԸնտրոս Հայրապետական ի Սուրբ Էջմիածնի ի Վաղարշապատ, ուր ընտրեցաւ Կաթուղիկոս ամենայն Հայոց Գէորգ արքեպիսկոպոս Կոստանդնուպօլսեցի յառաջնորդս-ընտրեն Պուրսայու, երբեմն պատրիարգն Կոստանդնուպօլսոյ

(Ամք Տեառն 1866): Ըստ կանոնական սահմանաց կարգադրութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ՝ Սինոդն Սուրբ Էջմիածնի յետ վախճանին Մատթէոսի, հրատարակեաց ընդ ամենայն տեղիս առ ազգս Հայոց զմահ հանգուցեալ կաթուղիկոսին, և ընդ այնմ զժամանակ ընտրութեան յաջորդի նորին ի գահակալութիւն Հայրապետական Աթոռոյ նշանակեաց ի 17 սեպտեմբերի, յառաջակայ 1866 ամի, ըստ տրամադրութեան մտաց յիշեալ կարգադրութեանն:

Ամենայն քաղաքք ի Ռուսաստան, յորս են ազգ մեր, ժողով արարեալ հասարակութեան ըստ կարգին տուեցելոյ ի Սինոդէ Սուրբ Էջմիածնի, ընտրեցին ի միջոյ իւրեանց աշխարհական պատգամաւորս և զարժանաւոր դատեցեալն յինքեանց՝ զմին յեպիսկոպոսաց ազգիս նշանակեալ վասն կաթուղիկոսութեան, առաքեցին ըստ ժամանակին ժողովոյ ընտրութեան ի Սուրբ Էջմիածին, նոյնպէս և ի հոգևոր կուսէ հասին պատգամաւորք յամենայն վիճակաց անդր:

Իսկ ի Կոստանդնուպոլիս, ուր ընդ պատրիարքական իշխանութեամբ են առաւելագոյն մասն բազմութեան ազգիս Հայոց, և յամենայն վիճակս և ի քաղաքս քաղաքս Տաճկաստանի՝ ո՛չ իբրև զառաջին ընտրութիւնս կաթուղիկոսաց արարին ժողով, այլ յայս նուագ համաձայն կարգադրութեան Սինոդի և ըստ կարգի ընտրութեան վիճակաց Ռուսաստանեայց ազգիս, արարին և անդ ընտրութիւն նոր կաթուղիկոսի համազգային ժողովով, զերիս արքեպիսկոպոսունս ի վիճակաց Տաճկաստանի և Ռուսաստանի Հայոց արժանաւորս դատեցեալ կաթուղիկոսութեան, արկին վիճակս ի վերայ երիցն այնոցիկ ընտրելոց և քուէարկութեամբ Երեսփոխանական ժողովոյն Կ. Պոլսոյ՝ ըստ նոցին սահմանադրութեան, առաւելութեամբ քուէից որոշեցին զմին յերիցս եպիսկոպոսաց՝ զգերապատիւ առաջնորդ Պուրսայու և զերբեմն պատրիարգն Կոստանդնուպոլսոյ՝ զՏէր Գէորգ արքեպիսկոպոսն Կոստանդնուպոլ-

սեցի ի Կաթուղիկոսութիւն ամենայն Հայոց և այնպէս ընտրեալ և զերկուս պատգամաւորս ի հոգևոր և ի մարմնաւոր կուսէ ի դիմաց համօրէն ազգիս Հայոց Տաճկաստանի զհոգեզգօն Ներսէս եպիսկոպոս Վարժապետեան և զմեծապատիւ Յակոբ Նորատունկեան, առաքեցին զնոսա ի Սուրբ Էջմիածին, ի համազգային ժողովն ընտրութեան կաթուղիկոսի՝ հանդերձ թղթովն ընտրութեան և պատրիարգական թղթով, նշանակելով ի նմին զամենայն վիճակս առաջնորդութեանց Հայոց Տաճկաստանի, յորում ի դիմաց հասարակութեան ժողովրդոց վիճակացն լեալ էին պատգամաւորք, նոյն իսկ անդամքն Երեսփոխանական ժողովոյն Պոլսոյ ի նմին ընտրութեան իւրեանց, իսկ ի դիմաց բոլոր հոգևորականաց նոցին իբրև նախագահ եկեղեցականաց՝ պատրիարգն Կոստանդնուպոլսոյ՝ գերապատիւ Տ. Պօղոս արքեպիսկոպոսն, որք ըստ վերոյ ասացելոցս ընտրելով կաթուղիկոս զՏէր Գէորգ արքեպիսկոպոսն՝ խնդրէին յընդհանրական ժողովէն ըստ ձայնից բազմութեան ազգի Հայոց և ըստ առաւելութեան վիճակաց՝ զնա ինքն կացուցանել կաթուղիկոս՝ զընտրեալն իւրեանց, և ո՛չ զայլ ոք:

Ըստ որոյ և ի համազգայնում ժողովին, եղելոյ ի 17 սեպտեմբերի 1866-ի ի Սուրբ Էջմիածին, ներկայութեամբ ազգային պատգամաւորաց և հոգևորական անդամոց այնր ժողովոյ, բացարձակ և ստուար մեծամասնութեամբ ձայնից ընտրեցաւ ի Կաթուղիկոսութիւն ամենայն Հայոց Տէր Գէորգ արքեպիսկոպոսն՝ երբեմնեան պատրիարգն Կոստանդնուպոլսոյ՝ յառաջնութենէն Պուրսայու, և թուղթն ընտրութեան առաջարկեցաւ ի հաստատութիւն կայսեր ընդ ձեռն փոխարքային Վրաստանի, և հրաւիրակք Աթոռոյս առաքեցան առ նորընտիր կաթուղիկոսն ամենայն Հայոց ի Կոստանդնուպոլիս:

Ապա իբրև ել կայսերական հրովարտակ հաստատութեան նորընտիր կաթուղիկոսի, ի գարնան հետևեալ 1867 ամի ժամանեալ նորա ի Սուրբ Աթոռս Էջմիածին բազմաթիւ ուղեկցօք, ի 21 մայիսի, յուրախութիւն հանուրց Հայկազանց, մեծաշուք հանդիսիւ օծաւ ընդ ձեռն երկոտասան եպիսկոպոսաց ի Կաթուղիկէ Մայր Եկեղեցւոջ Սուրբ Էջմիածնի՝ Արարատեան նախամեծար Հայրապետական Աթոռոյ, յընդհանրական Կաթուղիկոսութիւն ամենայն Հայոց, ի փոխանորդութիւն և ի յաջորդութիւն առաքելոցն՝ Սրբոց Թադէոսի և Բարդուղիմէոսի և Սրբոյն Գրիգորի Բ. Լուսաւորչի, որ արդ ի լուսաւորութիւն ազգիս Հայոց և ի պայծառութիւն մանկանց Եկեղեցւոյ՝ վարէ զիշխանութիւն կաթուղիկոսութեան:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱԼԱԾՉԱՑ, ՈՒՐԱՑՈՂԱՑ, ՀԵՐՁՈՒԱԾՈՂԱՑ ԵՒ ԲԱԺԱՆԵԼՈՅ ՅԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՅՈՑ[1]

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Զպատմութիւն հալածչաց Եկեղեցւոյն Հայոց, ուրացողաց, հերձուածողաց և բաժանելոց գրեցաք մեք՝ հետևելով ազգային պատմաբանից մերոց՝ Խորենացւոյն և Յովհաննու կաթուղիկոսի, բաղդատութեամբ ընդ Զամչեանն կոչեցեալ պատմագրութեան, որպէս և զԺողովոց Եկեղեցւոյն Հայոց իբրև առաջին հատոր սորին՝ հանդերձ Եկեղեցական կանոնագրութեամբքն, ըստ գլխակարգութեանց աղիւսակին Միքայէլ արքեպիսկոպոսի Սալլանդեան՝ կոչեցեալն ի նմանէ Պատմութիւն Եկեղեցւոյն Հայոց յաղիւսակս համառօտեալ, տպագրեալ ի Մոսկով յամի 1841, որ է ցանկ միայն գլխակարգութեանց պատմութեանս, որպէս և Ժողովոցն, Կաթուղիկոսաց, Թագաւորաց, Նահատակաց և Թարգմանչաց, բովանդակելոց ի վեց աղիւսակս, զորոց ամենից զպատմութիւնսն յանձն առեալ եմք գրել ըստ այսմ կարգի, եթէ Տէր յաջողեսցէ մեզ յետ այսորիկ, մաքրելով զամենեցուն անցս ի սուտակասպաս և ի պատուաստեալ պատմագրութեանցն Զամչեան, որ զանուն դնելով այնմ եռահատոր մատենի Պատմութիւն Հայոց, ստուարացուցեալ է զայնս գրեթէ բովանդակ ստութեամբ բանից ի հաճոյս Հռովմայ ընդ դէմ ստուգութեան գրուածոց նախնեացն մերոց մատենագրաց և պատմաբանից, և այս յաւէտ ի վէպս պատմութեան անցից կաթուղիկոսաց ազգիս ի յետին դարս, որոց եկեղեցական կառավարութիւն ազգի մերոյ եղեալ է ընդ տեսչութեամբ և ընդ իրաւասութեամբ պապին Հռովմայ չինուածոյ թղթոց և ինքնահնար նամակաց յանուն Կաթուղիկոսաց ազգիս, որոց և ոչ հետք երևին առ ազգային պատմագիրս և ոչ ի դիւանս Կաթուղիկոսաց մերոց:

Այս եղև մեզ առիթ գլխաւոր գրելոյ զՊատմութիւն Եկեղեցւոյս մերոյ ի վեց առանձին գիրս՝ ըստ վեցից աղիւսակաց Սալլանդեան Միքայէլի, որպէս ասացաք, յորոց նախ զերկուս զայսոսիկ՝ զՊատմութիւն Ժողովոց և զՊատմութիւն հալածչաց Եկեղեցւոյն Հայոց

---

1 ԱՐԱՐԱՏ, 1875, էջ 5-10; 44-48; 83-87; 121-126; 165-171; 206-210; 247-254; 287-294; 323- 331; 363-370; 404-408; 1876, էջ 6-12; 43-46

գլխաւորելով, զչորեսին ևս ըստ այսմ կարգի գրել ունիմք Տեառն յաջողութեամբ յետ այսորիկ, եթէ ձեռնտու լիցի մեզ և ժամանակն:

Յօդ. Ա

Ընանէ և Սանատրոկ Թագաւորք Հալաձիշէ

(Ամք Տեառն 34): Ընանէ՝ որդի Աբգարու, յետ մահու հօրն թագաւորէ Հայոց յԵդեսիա, և Սանատրուկ՝ քեռորդի Աբգարու, հակառակ Ընանեայ՝ ի Շաւարշան, և նախարարք Հայոց, թողեալ զհաւատս և ոչ անագան ի կռապաշտութիւն դարձեալք, յայն շրջեցին և զմիտս Սանատրկոյ՝ մերժելով զօրէնս քրիստոնէութեան, յոր ինքեանք յերկիւղէ Աբգարու կեղծաւորութեամբ առ երեսս զառաջինն հաւատացեալքն էին:

Այսպէս և Ընանեայ, զքրիստոսական հաւատսն թողեալ, բանայ զտաճարս կռոցն յԵդեսիա և խորհէ բառնալ զՔրկչական պատկերն, որ ի վերայ դրան քաղաքին, դժկամակեալ ընդ գործս ժողովրդեան, որք ի պատիւ պատկերին կանխէին: Այլ Ադդէ եպիսկոպոսի աստուածային յայտնութեամբ իրացն կանխագէտ լեալ՝ յայնայտս ծածկէ յորմն ի գիշերի զաստուածային պատկերն, առ որ և խորհուրդ թագաւորի ի մտացն անկանէր յաստուածային խնամոց:

Այլ սա ինքն Ընանէ յետ այսորիկ հրամայէ զսրունս ոտիցն հատանել սրբոյն յաղագս ոչ առնելոյ նմա խոյր ինքեան, որպէս և հօրն իւրում Աբգարու, բայց և այնպէս որով մահուամբ և զսուրբն եբարձ ի կենաց, նովին և ինքն վճարէր զկեանս, զի ի նորոգութեան ապարանից իւրոց յԵդեսիա սիւնն մեծ կճեայ, առ որով Ընանէ կայր ի գնին, հոսեալ ի վերայ և խորտակեալ մանրեալ զոտս նորին՝ սպանանէ զնա ի չորրորդ ամի թագաւորութեան իւրում:

Իսկ Սանատրկոյ, որ հաւատացեալ էր ի Քրիստոս և մկրտեալ ի Թադէոսէ, և թողեալ զնոյն յետ Աբգարու ի հրապուրանաց նախարարացն իւրոց ըստ Յովհան կաթուղիկոսի՝ երդուեալ բնակչաց Եդեսիոյ յետ մահուն Ընանեայ մի մեղանչել ի քրիստոնէութիւն նոցին, առնու զքաղաքն և ստերդումն գտեալ ուխտին՝ ի սուր հանէ զամենայն զաւակ տանն Աբգարու, բաց յաղջկանց և ի դշխոյէն, և լուեալ զդարձ դեսպանաց հռովմայեցւոց առ ինքն արանց հնգից ի քրիստոսական հաւատս, որոց գլխաւորի Ոսկի ճանաչիւր անուն ի ձեռն Թադէոսի առաքելոյ ի սահմանս Միջագետաց, կոչէ

առ ինքն ի Շաւարշան զառաքեալն սուրբ և սպանանէ զնա անդ, ընդ որում և զսուրբ կոյսն Սանդուխտ՝ զդուստր իւր, վասն հաստատուն կալոյ նորա ի հաւատս Քրիստոսի՝ ուսեալ ի սրբոյ առաքելոյն:

Ի սքանչելիս անդ նահատակութեան կուսին Սանդխտոյ՝ դստերն իւրոյ, այն ինչ հաւատայ ի Քրիստոս նախարարն մեծ՝ Սամուէլ կոչեցեալ, զչարեալ ընդ այն Սանատրկոյ՝ բևեռս հրացեալս վարսէ յուս նորա, որ կատարեցաւ ի Քրիստոս, յիշատակեալ Յայսմաւուրս ի 23 դեկտմ., ընդ սմին սպան արքայ Սանատրուկ և զտիկինն մեծ Զարմանդուխտ անուն ընդ նորայնոցն ամենեցուն ոգւոց իբրև երկերիւրոց, որք հանդերձ տիկնամբն հաւատացեալ ի սմին ժամանակի՝ մկրտեցան ի Քրիստոս:

Եւ զի յայսմ ժամանակի Բարդուղիմէոս առաքեալ ևս դիմեալ ի Ստորին Հայս՝ յաշխարհ Անձևացեաց, ընդ իւր ունելով զպատկեր Սուրբ Աստուածածնի՝ նկարեալն ի Յովհաննու աւետարանչէ, քարոզութեամբ աւետարանին բազմացուցանէր զեկեղեցիս Քրիստոսի և հաստատէր ի հաւատս զամենեսին զնոսա, յորս և զքոյր Սանատրկոյ՝ զթագուհին, և զհազարապետ նորին: Սոյն Սանատրուկ, կալեալ զքոյր իւր, սպան զնա և զառաքեալն սուրբ մորթ, ընդ գլուխն հանեալ՝ խաչեաց յԱրևբանոս քաղաքի ի խորին Հայս յաշխարհին Կորճէից, ուր թաղեցաւ սուրբ առաքեալն: Զայս քաղաք Արևբանոս, ուր նահատակեցաւ սուրբ առաքեալն, Յովհ. կաթուղիկոս կոչէ **Արաաքէնոն**:

Այսպէս Սանատրկոյ հալածող լեալ Եկեղեցւոյն Հայոց ի քրիստոսական հաւատոյսն յընթացս երեսուն և չորից ամաց թագաւորութեան իւրոյ, յետ վերստին դարձին իւրոյ ի կռապաշտութիւն ի սկզբան թագաւորութեան իւրոյ՝ հեծեալ ի կամս նախարարաց, մեռանի նետահարեալ յանգէտս ի ծառայէն, ի զբոսանս որսոց, յամի Տեառն 67, ոչ ինչ զերևելիս ցուցեալ ի կեանս, ըստ որոյ և ոչինչ յիշատակաց արժանի համարեցաք, ասէ Խորենացին:

Յօդ. Բ

Արդա–ապէտ արվայորդի՝ նահապետակիչ Ոսկէանց

(Ամք Տեառն 107): Թոռն Սանատրկոյ՝ Արտաւազդ Երկրորդ՝ որդի Արտաշիսի Բ., ի վեշտասանամեայ իւրում հասակի առիթ գտեալ զդարձ Սուքիասեանց ի քրիստոսական հաւատս ի քարո-

զութենէ սրբոց Ոսկեանց յարքայական քաղաքն Արտաշատ, նահատակէ զսուրբսն հնգեսին ևս ի լեառն Ծաղկէոյ ի Ծաղկոտն գաւառի, յակունս Եփրատայ, ի պատճառս ազգականութեան իւրեանց ընդ Սուքիասեանս ի կողմանէ մօր իւրոյ Սաթինկան, որ զայսպիսի իմն ունի զպատմութիւն:

Յետ իբր քառասուն և երեք ամաց սրբոյ առաքելոյն Թադէոսի կատարմանն ի Քրիստոս նահատակութեամբ ի Սանատրկոյ, աշակերտեալք սրբոյն սուրբ Ոսկեանք հնգեքին ընկերք, որք դարձեալ էին ի Քրիստոս յաւուրս դեսպանութեան իւրեանց ի Հռովմայեցւոց առ Սանատրուկ, աստուածային ազդեցութեամբ իջեալք ի կրօնաւորական վայրաց ի լեռնէն Ծաղկէոյ, մտանեն առ արքայ Արտաշէս Բ. յարքունի քաղաքն Արտաշատ և առ թագուհին Սաթենիկ, քարոզել զքրիստոնէութիւն և զաստուածութիւն Քրիստոսի և զկռոցն տկարութիւն: Այլ արքայի ի զբաղանս պատերազմաց լեալ խօսին նոքա զնոյն բանս առ Սաթենիկ, առ որում լուեալ և ազգականաց թագուհւոյն, եկեղոցն յԱլանաց, աշակերտեցան սրբոցն հաւատացեալք ի Քրիստոս բոլորով սրտիւ, որոց զհաստատութիւն հաւատոցն ի Քրիստոս տեսեալ սրբոյ Ոսկի քահանային՝ մկրտէ ի գիշերի զամենեսին զնոսա զոգիս իբրև ութևատասն յակունս Եփրատայ և ի նշան ընդունելութեան նորա շնորհաց Հոգւոյն Սրբոյ, փոխեալ զանուն նոցին, առաջնոյ նոցին անուամբ կոչեաց Սուքիասանք:

Եւ ի միւսանգամ գալ սրբոց Ոսկեանց յարքունիս ի քարոզութիւն, որդիք արքայի, որդիք Սաթենկան, իմացեալ զդարձ ազգականաց իւրեանց, հալածեն զնոսա թշնամանօք ի դրանցն արքունի, ընդ որս խոյս ետուն և նոցին աշակերտեալքն, այլ իբրև տեղեկացան, եթէ ընդ Ոսկեանսն գնացին և նոքա, կրտսեր որդիք թագուհւոյն ընդ երիցագոյնն Արտաւազդայ հանդերձ թիկնապահօք յարձակեալ ի բնակարանս սրբոցն և տեսեալ զՍուքիաս՝ աղաչէին դառնալ յետս ի քրիստոնէութենէ, զնոյն խնդրէին և ի սրբոց Ոսկեանց յորդոր լինել նոցին, այլ յառաւելն պնդել նոցա զնոսա ի հաւատսն, բարկացեալ Արտաւազդայ հրամայէ արբանեկաց իւրոց առ ետեղբ իսկ զսուրբ Ոսկեանսն խողխողել:

Յօդ. Գ

Բառ-ահլա՝ նահապետական Սո-վիսանեանց

(Ամք Տեառն 130): Սուքիասանք արք թագաւորազունք էին, գլխաւորք ի պալատական կարգէ ի դրան արքային, Ալանաց ոգիք իբրև ութեւտասն ազգականք Սաթենկայ՝ դստեր թագաւորին Ալանաց, որք հարսնածուք լեալք Սաթենկան յաւուրս դշխոյանալոյ նորին մերումս Արտաշիսի Բ-ի՝ որդւոյ Սանատրկոյ, մնացեալ ի Հայս յարքունիս անդր, աշակերտեցան սրբոց Ոսկեանց ի հաւատս Քրիստոսի և մկրտեալ յանուն Յիսուսի ի ձեռն սրբոյ Ոսկի քահանային յակունս Եփրատայ՝ կային անդէն ի Ջրաբաշխ և ի ծաղկաւէտ տեղիս, որոց գլխաւորի անունն կոչեալ Սուքիաս, որ յառաջն էր Բահադրաս կամ Բարաքադայ, նորա անուամբ և ընկերք նորին Սուքիասանք կոչեցան:

Եւ մինչ ի պատճառս դարձի սոցին սուրբ Ոսկեանքն զնահատակութիւն ընկալան ի հրամանէ Արտաւազդայ՝ որդւոյ Սանատրկոյ, ի լերին անդ, թաղեալ անդ զմարմինս սրբոցն, և զի յայտնի իսկ եղեւ այնուհետև դարձ իւրեանց ի Քրիստոս ի դուռն արքունի և առ խոտաւէտ լինելոյ վայրացն մարմինք նոցին պարարէին, ապա յետ ոչ բազում ժամանակաց փոխեալ զբնակութիւն իւրեանց՝ գան ի Ջրաբաշխ լեառն ի Բագրեւանդ գաւառի առերի Նպատ լերին, և յաւելան օր ըստ օրէ ի կարգ և ի հրեշտակական կրօնս, որ յետոյ կոչեցաւ և լեառն՝ յանուանէ գլխաւորի նոցին Սուկաւ, կամ առ անպարարտ լինելոյ այնորիկ՝ կոչեցաւ Սուկաւ ի հռովմէական ձայնէս սիքքուս, այս ինքն՝ չոր, ցամաք:

Այսպէս թագնութեամբ ի լերինս այսմիկ կրօնաւորին սոքա ամենեքին ցամ Տեառն 130, մինչև ի ժամանակս թագաւորին Ալանաց Գեգիանոսի կամ Դատիանոսի, որոյ ի դնելն կարգ ի զօրս իւր, ստուգեալ յոմանց երթեւեկաց ի Հայս, եթէ նոքին արք յարքունի գնդէն վաղ ուրեմն ընդ Սաթենկան դշխոյի չուեալ յաշխարհն Հայոց, հաւատացեալ են ի Քրիստոս և զկեանս իւրեանց վշտօք ի լերինս անցուցանեն, ապա առաքէ զզօրավար Բառահլա անուն՝ ի խոյզ և ի խնդիր արանցն, հրաման տուեալ կա՛մ պարգևաց խոստմամբ հաւանեցուցանել և դարձուցանել, և կա՛մ սրով բառնալ զնոսա ի չգալն, որոյ եկեալ ի Հայս և առաջնորդութեամբ լրտեսաց դիմեալ ի լեառն ի Սուկաւ՝ եգիտ զսուրբ Սուքիասեանսն,

և իբրև յորդորանաց զօրավարին ոչ մատուցանէին ունկն և զպարգևս խոստմանցն ևս առ ոտն հարին և ոչ զաշխարհային փառացն զհետ երթեալ կամէին՝ թողեալ զփառս անանցական կենաց, ապա սուր ի վերայ եդեալ դահճաց զօրավարին՝ կոտորեցին զամենեսին զնոսա անդ ի լեառն ի ճգնարանս նոցին յամի Տեառն 130:

Յօդ. Դ

Խոսրով Թագաւոր՝ նահատակող Եղիսպոնէից

(Ամք Տեառն 215): Յաւուրս Խոսրովայ առաջնոյ՝ որդւոյ Վաղարշայ, որ թագաւորէ Հայոց յամի Տեառն 214, գտանէին բազում քրիստոնեայք յաշխարհին Հայոց ուրեք ուրեք, սա վասն զի ձեռնարկեալ էր ի նմին ժամանակի ի չինութիւն բազում քաղաքաց, աւանից և ապարանից, ևս և իջևանաց, զբազումս ի նոցանէ ի քրիստոնէիցն ածէ ի գործ չինութեանցն և ի դառն աղիւսարկութիւնս և բազումս ևս նահատակէր ըստ յիշատակութեան Խորենացւոյն ի գիրք Բ. 72, առեալ ի Փերմելիանեայ եպիսկոպոսէ Կեսարիոյ կապադովկացւոց՝ յաշակերտէ Որոգինեայ:

Եւ բան Խորենացւոյն է. «գրէ բազում վկայեար և ի Խոսրովու ի մերում աշխարհիս, համայն և յետ նորա օտարք յօտարաց, բայց զի ոչ ճշմարտութեամբ ոճով պատմէ և ոչ զանուանս նշանակէ կամ զտեղի կատարանցն, ոչ ինչ կարևորագոյն համարեցաք երկրորդել»: գիրք Բ.75

Յօդ. Ե

Տրդատ Թագաւոր՝ Հալածող Ի նահատակիչ

(Ամք Տեառն 287): Որպէս հռչակաւոր է վրէժխնդրութիւն Տրդատայ ի Սրբոյ Գրիգորէ մերս Բ. Լուսաւորչէ յաղագս չմատուցանելոյ նորա զոհս դիցն Անահտական յԵրզնկայ, առ որ յարեալ էր մեծի առնն, թերևս քաւել մտադրելով զյանցանս հօր իւրոյ ի սպասու ծառայութեան Տրդատայ գտանելով հարուստ ժամանակաւ, այնպէս հռչակագոյն ևս է նորին ինքեան արքային Տրդատայ հրաշալի դարձն ի քրիստոնէութիւն ի ձեռն Սրբոյն Գրիգորի, յոյր ձեռն նուէրս Արտեմեայ մատուցանել զառաջինն կամէր, ուստի և հռչակաւոր և հանդիսական այս է գործ նորին Տրդատայ, զի որում

նախ զնահատակելն հրամայէր յաղագս դիցն անարգանաց, ապա ի ձեռն նորա և զքրիստոնէութիւնն ընկալաւ:

Ապա ըստ այսոցիկ երկուց ներհակակիր գործոց դասեալ լինի Սուրբն Տրդատ, ըստ առաջնումն՝ ի կարգս հալածչաց և նահատակչաց Եկեղեցւոյն Հայոց, և ըստ երկրորդին՝ ընդ սուրբս և ընդ նահատակս և ընդ խոստովանողս Հայոց Եկեղեցւոյն:

Արդ սա ինքն Տրդատ, ընկալեալ զթագաւորութիւն ի Դէոկղետիանոս կայսերէ Հռովմայեցւոց, առ որում քաջագործեալն էր ի մանկութենէ, իբրև գայր, ելանէր յԵկեղեաց գաւառ ի Հայաստան, ի շնորհս Արտեմեայ վարկուցեալ զայն պատիւ արքայական՝ զոհս գոհութեան նմին մատուցանէ, ի նոյն հրամայեալ և Գրիգորի փունջս ծաղկանց ի մեհեան նորին հանել, այլ ընդ չառնուլ նորա յանձն զայն պաշտօն առ դիսն, մեծաւ ափշութեամբ զարմացեալ Տրդատայ ընդ Գրիգոր, դնէ զնա յարգելանս և առ առաւել բռնադատել զսուրբն ի պաշտօնս կռոց, իբրև զանարգանս ևս ի նմանէ լսէ ընդ ստութիւն դիցն, ապա հրամայէ մատուցանել զնա ի չարչարանս տանջանաց, յետ որոյ լուեալ, եթէ որդի է Անակայ, առաքէ զնա յԱրտաշատ քաղաք՝ արկանել ի խոր Վիրապ մահապարտաց: Սա յետ ժամանակաց նահատակէ և զսուրբ կուսանսն Հռիփսիմեանս վասն խոստովանութեան նոցին Քրիստոսական հաւատոց:

Յօդ. Զ

Արևորդիք Հայք ի Ծագմանէ նոցին ցվերջն

(Ամք Տեառն 315): Արևորդիք, յարևապաշտութենէն հայոց մնացեալք յաւուրց կռապաշտութեանց նոցին ի Հայաստան, թէ և բարձաւ այսպիսի տարրապաշտութիւն հայոց, այն ինչ դարձաւ ի քրիստոնէութիւն ընդհանուր Հայաստան ի ձեռն Սրբոյն Գրիգորի ի սկզբան չորրորդ դարու քրիստոնէութեան, բայց այսու ամենայնիւ հետք ինչ նորա մնացին յազգս մեր ի Միջագետս, զի գեօղք և աւանք ինչ յեզր սահմանաց Հայաստանեայց, խառն ի հայոց և յօտար ազգաց, մնացին ի հեթանոսութեան ի ծածուկ, ընդ որս և արևորդիքն կոչեցեալք, տևեալք ի մոլորութեան իւրեանց ի բազում ժամանակս և մերթ ընդ մերթ ի վեր երևեալք, որպէս յաւուրս Սրբոյն Մեսրովբայ, Գրիգորի Մագիստրոսի և Ներսիսի Շնորհալւոյ:

Յաւուրս Մեսրովբայ, ի վերջն չորրորդ դարու, ի Գողթան գաւառի ի վեր երևէր աղանդ արևորդեացն, որ, որպէս յիշատակեցաւ, մնացեալ ի ժամանակէ Սրբոյն Տրդատայ ի Հայս, զոր լուեալ Մեսրովբայ, և անդր հասեալ, ձեռնտուութեամբ Շաբաթ իշխանի տեղւոյն, բառնայ և արմատախիլ առնէ զայն աղանդ, ուր և նշանք աստուածայինք լինէին (ասեն Խոր. և Կորիւն), որպէս առ Սրբովն Գրիգորիւ, հալածական լեալ դեւքն մարմնաւոր տեսլեամբ՝ անկանէին ի կողմանս Մարաց:

Յետ քսան և վեց ամաց իբրև նա ինքն Մեսրովբ ի բաժնին Յունաց բացեալ զդպրոցս՝ սերմանէր ի սիրտս մանկանց եկեղեցւոյ զվարդապետութեան սերմունս ի հայրենի լեզու, և ընդ նմին հալածական վարէր ի գաւառաց անտի զնոյնօրինակ աղանդաւորս ըստ բանի Ատտիկոսի պատրիարգին՝ գրեալ առ Սուրբն Սահակ, կոչելով զայն աղանդ բորբորիտոնաց, լուաւ դարձեալ զնոյն աղանդ՝ ընձիւղեալ ի Գողթն, զոր յառաջնումն սպառ սպուռ սրբեալ էր անտի. և առ այս վերադարձեալ նորա յԱյրարատ՝ հասանէ անդր ի Գողթն, զոր և ըստ առաջնումն օրինակի ի ձեռն իշխանի տեղւոյն՝ Գիւտայ՝ որդւոյ Շաբաթայ, եբարձ զնոյն չար աղանդ:

Աստանօր տեղեկացեալ ևս, թէ ոմանց յաղանդաւորաց, իջեալք առ Բաղասականս և առ Գարդմանականս, սփռեալ են զմոլորութիւն այսր աղանդոյ, փութացաւ անդ, և զորս ոչ կարաց յուղղութիւն ածել անդ առ Բաղասականս, հալածեաց յերկրէ նոցին, և զորս դարձոյցն, աղաչեաց զեպիսկոպոս տեղւոյն՝ զՄուշեղ անուն, անդարձ զնոսին պահել ի գիտութիւն ճշմարտութեան, նոյնպէս և առ Գարդմանացւոց դարձոյց զաղանդաւորսն հանդերձ Խուրս անուն իշխանաւ նոցին, որք ամենեքին սոքա՝ և՛ Բաղասականք, և՛ Գարդմանականք, ի սերնդոցն Հայկայ էին[1] *:*

Տարակուսութիւն է առ մատենագիրս յաղագս աղանդոյս, որ ի հայոց ազգէ և որ յօտարաց, զոր եբարձ Սուրբն Մեսրովբ ի Գողթան և ի տեղեացն, որ յիշատակեցան, թէ որպիսի աղանդ էր այն կամ մոլորութիւն:

1 Ձայսմանէ Կորիւն այս օրինակ բերէ ի յիշատակ. «Առեալ այնուհետև երանելւոյն (Մեսրովբայ) զհաւատացեալս իւր, դիմեալ իջանէր յանկարգ և յանդարման տեղիս Գողթան, այլ և ընդ առաջ ելանէր նմա իշխանն Գողթան՝ այր երկիւղած և աստուածասէր ըստ աշակերտաց հաւատոցն Քրիստոսի: Իսկ երանելւոյն վաղվաղակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկանէր զգաւառովն հանդերձ միամիտ սատարութեամբն իշխանին... ի հայրենեաց աւանդելոյ և ի սատանայական դիւապաշտ սպասաւորութենէն ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր: Եւ յորժամ ի նոսա զբանն կենաց սերմանեալ, յայտնի իսկ բնակչաց գաւառին նշանք մեծամեծք երևէին կերպակերպ նմանութեամբ դիւացն, փախստական լինելով՝ անկանէին ի կողմանս Մարաց»:

Խորենացին վկայէ լինել աղանդաւորաց ոչ ի հայոց, այլ հեթանոսաց, մնացեալք ի խորչս ինչ Հայաստանի յաւուրց Լուսաւորչին առ ի ցուցանել, թէ արևապաշտութիւն էր այն աղանդ:

Թէ հայք յետոյ խառնեալ իցեն յարևապաշտութիւն զկնի դարձից իւրեանց ի ձեռն Սրբոյն Գրիգորի, հաստատէ Գրիգոր Մագիստրոս ի թուղթն առ կաթուղիկոսն Ասորւոց. «Ահա և այլք ոմանք ի Զրադաշտ մոգէ՝ մոգք պարսկականք, և այժմ ի նոցունց դեղեալք՝ արեգակնապաշտք, զոր արևորդիսն անուանեն»:

Այլ թէ սոքին արևորդի հայք զորպիսի՛ պաշտամունս ունէին ի պաշտաման անդ արեգական և յի՛նչ հաւատային յայնոսիկ ընդարձակութիւնս ժամանակաց ի Լուսաւորչէ ցմերն Շնորհալի, ո՛չ ինչ յայնցանէ գոն յայտնի նշանակեալք, միայն Սուրբն Ներսէս ի դարձին նոցա գրէ առ Թորոս քորեպիսկոպոս ի Սամոսատիա, ուր և հաստատէ, թէ արևորդիք էին յազգէ հայոց՝ յապացոյց վերոյգրելոցն ամենեցուն. «Եհաս, ասէ, ի ձէնջ գիր առ մեզ յաղագս արևորդեացն, որք ի քաղաքի ձերում բնակեն, եթէ կամին և աղաչեն ի հօտն Քրիստոսի խառնել զնոսա, զի որպէս ազգաւ և լեզուաւ ի տոհմէ Հայոց են, յօժարին, զի և հաւատով և հոգւով ի նոր միաբանութիւն հաւասարեսցին ընդ նոսա», և յաղագս մնալոյ նոցա ի ժամանակէ կռապաշտութեան՝ ասէ. «Որպէս ազգն Հոռովմոց Պողոմելոսք անուանեալք մնացին խաւարեալք ի լուսոյ աւետարանին... այսպէս և Արևորդիքդ յազգս մեր, ի մասին սատանայական խաւարին մնացեալք, ո՛չ կամեցան լուսաւորիլ աստուածային լուսովն ի ձեռն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:

Եւ յորժամ առնեն (ըստ օրինաց քրիստոնէութեան), ապա ուսուցէք նոցա, թէ զարեգակն մի՛ ինչ այլ համարիք, քան թէ ճրագ աշխարհի... նոյնպէս զլուսին և զաստեղս, և զբարտի ծառն մի՛ աւելի պատուէք, քան զլուսին և զկաղախաղին և զայլս ի ծառոց, և մի՛ կարծէք, թէ փայտ խաչին Քրիստոսի բարտի էր. ստութիւն է այդ և խաբէութիւն սատանայի, որ մոլորեցոյց զձեզ և եհան յԱստուծոյ»:

Ըստ այսոցիկ ապա երևի, թէ արևորդի հայք պաշտէին նաև զբարտի ծառ, քանզի ասի անդ, թէ այդ ծառ, որ բարտի անուանի, ի կռապաշտութեան ժամանակն ի պաշտօն առեալ էր նոցա, յոր և դևք մտանէին և ի մարդկանէ երկրպագութիւն ընդունէին, և եթէ այլ ոք, ասէ, ի ձէնջ գիտէ առ նոսա դիւական ինչ բժժանք, և զայնոսիկ յայտնեցէք նոցա և ասացէք թողուլ և բաց կալ:

Յօդ. Է

Շապո–Հ արքայ Պարսից՝ Հալածող Հայոց զամ 70

(Ամք Տեառն 270): Շապհոյ արքայի Պարսից՝ որդւոյ Սասանեանն Արտաշրի, հաշուին ամք թագաւորութեան ի կարգի պատմութեան Հայոց ի հնգետասաներորդ ամաց հասակին նորին:

Զսա, յորում ժամանակի հայր իւր՝ Արտաշիր թագաւոր, զինքն Հայոց և բոլոր Ասիոյ անուանեաց յետ մահուան Խոսրովու առաջնոյ արքայի Հայոց ի նոյն ամի և գահակից թագաւորութեանն արար, հրամանատար ի վերայ բոլոր իշխանաց Հայոց կարգեալ, այն է յամի Տեառն 270, երեսուն և մի ամօք նախ քան զերկրորդ զլուսաւորութիւն մեր ի հաւատս Քրիստոսի ի ձեռն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին:

Յետ մահուան հօր իւրոյ Արտաշրի՝ սորա յաջորդեալ զաթոռ թագաւորութեանն Պարսից, ի բոլոր կեանս իւր, հայրենի օրինացն նախանձ բերելով՝ զանթիւ չարիս քրիստոնէից ի վերայ էած յընդհանուր տէրութեան իւրում, ևս և ի Հայաստան և յԱսորեստան, ուր ուրեք և ձեռնհաս լինէր ըստ հրապուրանաց մոգուց պարսկականն դենից: Որպէս ահա ակներև տեսցի աստանօր ի հալածանս իւր, յարուցեալս ի վերայ քրիստոնէից, ըստ որոց և դասի սա գրեթէ իբրև առաջին ի կարգս հալածչաց Եկեղեցւոյն Հայոց:

Ի հալածանս Շապհոյ ի Պարսս հանդիսացաւ զառաջինն նահատակութեամբ Շմաւոն՝ եպիսկոպոսապետ Պարսից Տիզբոն և Սղկայ քաղաքացն, փառահեղ այր՝ փայլեալ սրբութեան վարուք և լուսաւոր վարդապետութեամբ: Սա, այն ինչ Շապուհ և ի սմանէ պահանջէր զառաւելագոյն հարկս, որպէս և ի քրիստոնէից ի հնարել դարձուցանել զնոսա ի դէնս պարսից, կարի ընդդիմացաւ նմին՝ չկարացեալ առաւելուլ զայն, զոր ապա ետ բռնաւորն կապանօք ածել առաջի, և յաղթեալ ի բանից սրբոյն՝ արկանել հրամայէ զնա ի բանտ, որ և յետ առաջի աչաց տեսանելոյ զգլխատումն հարիւրաւոր եկեղեցականաց և աշխարհականաց՝ կատարեցաւ և ինքն ի նոյն հրամանէ յամի 340:

(Ամք Տեառն 328): Եւ զկնի նահատակեցան այլ ևս հազարաւորք, յորս երևելի էր Փուսիկ կամ Փասիկ կիւրապաղատն արքունի և Կուսան դուստր նորա, որպէս և երկու քորք Շմաւոնի և Աղատ ներքինին: (Վարք սրբոց, հատոր ԺԲ, եր 304 և 305): Իբրև կատարեցան Շմաւոն եպիսկոպոս և Փուսիկ կիւրապաղատ և որք ընդ նոսին, ապա հրաման Շապհոյ սաստկանայր առ զօրս իւր սփռել

յամենայն տեղիս և կոտորել զանհամար անձինս, որք խոստովանէին զՔրիստոս, և ըստ գրելոյ ճառընտրին՝ անդ յառաջնում յարձակման «Մեռան հազարք հազարաց և բիւրք բիւրոց ի վեց ժամէ Աւագ Ուրբաթու սկսեալ մինչև ի ցՊենտէկոստէ»: Կատարեցան յայսմիկ կոտորածի և քոյր Շմաւոն եպիսկոպոսի՝ Տարբուղա անուն, և Փերփութէ, և սուրբ վկայքն Յունան և Բարաքիաս, և ինն ևս վկայք:

Եւ այն ինչ քոյր նոյն իսկ Շապհոյ ի հալածանս յայսմիկ լուսաւորեալ յԱստուծոյ եղև քրիստոնեայ, վերստին սաստկացաւ հրաման Շապհոյ, որով նահատակեցան Յովհաննէս եպիսկոպոս և Յակոբ քահանայ՝ յազգէ պարսից, կատարեցան ի Տէր և Ակիփսիմէ եպիսկոպոս, Յովսէփ քահանայ և Այիաթալա սարկաւագ՝ յազգէ պարսից, նաև Բարդիշաւ և Շահակ, և Շմաւոն ասորիք, Սադովկ եպիսկոպոս Տիզբոնի՝ յաջորդ Շմաւոնի, հարիւր քսան և ութ արամբք, Բարբաշմէն եպիսկոպոս՝ նորին յաջորդ, վեշտասան ընկերօք, նաև Աբրահամ եպիսկոպոս Արտավիլ քաղաքի՝ ձեռնադրեալն ի Լուսաւորչէն մերմէ: Եւ ապա Սուրբն Մելիտոս, Բուր քահանայ և Շինէ սարկաւագ, յորոց զոմանս դնեն ճառընտիրք ի ժամանակս Որմզդի նահատակեալք:

Այս ամենայն հալածանք Շապհոյ ի Պարսս և յԱսորեստան, և նահատակութիւնք բազմաց քրիստոնէից՝ եղեալք ի նորին հրամանէ, են, որ իւրով ներկայութեամբ կատարեցան, և են, որ ի ձեռն դահճաց ի սաստկանալոյ հրամանին առ նոսա, այլ յետ այսոցիկ որչափ ինչ չարիս թափեաց նա ի Հայաստան առ թագաւորս մեր և առ քրիստոնեայս և այլուր, նովին եղանակաւ, որով ի Պարսս վարեցաւ թէ՛ պատերազմաւ, և թէ՛ հալածանաց յարուցմամբ, զայն ամենայն համառօտագրութեամբ իմն չարակարգեմք:

Եւ տեսեալ Շապհոյ, եթէ ոչ ինչ օգտի, ձանձրացաւ և դադարեցաւ ի հալածելոյ և թոյլ ետ իւրաքանչիւր մարդոյ վարիլ ըստ իւրում կրօնի[1] :

1 Ձհանգամանս այսոցիկ երևելի հալածանաց Շապհոյ գրեաց Մարութաս եպիսկոպոս Նփրկերտոյ՝ ժամանակակից մեծին Սահակայ Պարթևի, հայրենեօք Ասորի և հայ ի մօրէ, և արար զպատմութիւն մարտիրոսաց կատարելոց ի Պարսս՝ սկսեալ ի Շմաւոն եպիսկոպոսէ Պարսից յաւուրս սոյն Շապհոյ ցժամանակս իւր, և ժողովեալ զնշխարս նահատակելոցն յարևելս և զպատմութիւնս նոցին ըստ վկայութեան ճառընտրաց՝ ամփոփէ ի տապանակի և դնէ յորմն եկեղեցւոյ, որպէս գրեալ լինի. «Եւ արարեալ յորմն տանն (Աստուծոյ) խորանս և դնէ տապանակաւ ի նոսա գեղեցիկ յօրինուածովք և իմաստիւք ճառս կարգեալ նոցա»: Այս պատմութիւն թուի գրեալ նորա ի լեզու ասորի:

Այլ հաւատարմագոյն ևս վկայութեամբ զանցիցս ամենայնի գրէ մերս Եղիշէ՝ եղեալ ի բերան Մոգպետին պարսից, խօսեցեալ նմա ընդ Վասակայ առ նահատակութեամբք Վարդանանց, յորմէ առեալ է Հ. Չամչեան (հատոր Ա. Եր. 406-407):

Սա՝ այս Շապուհ, իբրև մերն Տրդատ պատերազմ ածէր յաշխարհն Ասորեստան ի նմին ժամանակի, որ ի ձեռս պարսից, խաղայ զօրօք ի Հայաստան, այլ ընդ դէմ եկեալ մին Տրդատայ՝ վանէ զնա չորիցս հալածական յաշխարհն նորին, մինչև դադարել պարսից այնուհետև ի պատերազմելոյ ընդ հայս:

Եւ ընդ գնալ Տիրանայ Խոսրովեան մերումս արքայի առ կայսր յետ մահու հօր իւրոյ առնուլ զթագաւորութիւն, դիմեալ Շապհոյ պարսկային զօրօք ի վերայ Հայոց, վտանգեցաւ նա յԱրշաւրայ Կամսարականէ, ում հաւատացեալ էր աշխարհն, և ի փախուստ դարձաւ:

Ապա յորժամ էր նա ինքն Շապուհ ի Մազանդարան, լուեալ զամբաստանութիւն ոմանց զՍրբոյն Սարգսէ յաղագս դարձուցանելոյ նորա զբազումս ի զօրաց ի քրիստոնէութիւն, որոց զօրավարէրն ի նմին ժամանակի ի կողմանս Տաճկաստանի, ածէ առ ինքն և սպանանէ զնա հանդերձ որդւով նորին ընդ այլ քրիստոնեայս, որք կային անդանօր ի ծածուկ:

Եւ ի պատերազմի իւրում ընդ կայսերն Յուլիանոսի ուրացողի, լուեալ, եթէ մերն Տիրան զօրօք եղեալ է նմին ձեռնտու, խաբէութեամբ հրաւիրէ զնա առ ինքն հրովարտակաւ բարեկամութեան և կուրացուցեալ զաչս Տիրանայ ի գաւառն Ապահունեաց՝ առաքեաց զնա յԱյրարատ նստիլ ի Կուաշ:

Իսկ յամին 372 ի սակս քինուն իւրոյ ընդ Արշակ՝ որդի Տիրանայ, զոր թագաւորեցոյց նա Հայոց յետ կուրութեան հօր նորա, ի վերադարձին իւրում ի պատերազմէն ընդ յոյնս, իբրև առաջի նորա փակեցաւ Տիգրանակերտ քաղաք հրամանատարութեամբ Անդովկայ նահապետին Սիւնեաց և ոչ տուաւ նմա մուտ ոտից ի քաղաքն, յայնժամ մեծաւ պատերազմաւ էառ զայն և զամենեսին ի սուր սուսերի մաշեաց:

Յետ այսորիկ ապա կապէ և զԱրշակ երկաթի շղթայիւք և առաքէ ի Խուժաստան՝ յԱնյուշ բերդն կոչեցեալ:

Զայսոսիկ անողորմութիւնս նորին Շապհոյ յիրս պատերազմականս թէ և չէր մարթ դասել ի հալածումն Եկեղեցւոյն Հայոց, այլ զի արարք նորա այսպիսիք հայէին ի բարձումն քրիստոնէութեան ի Հայաստանէ ևս և յաշխարհէ իւրեանց, և հանել զամենեսին ի քրիստոնէական հաւատոց, ըստ որում յետ այսոցիկ և ինքն հրամայէ ուրացելոցն ի մէնջ Մեհրուժանայ և Վահանայ, տուեալ նոցա զօրս, դիմել յաշխարհս մեր, յաւարի առնուլ զքաղաքսն և գերել զամենեսին, մանաւանդ զամրոցն, ուր ամրանայր թագուհին

Փառանձեմ, որոց կատարեալ զհրամանն, զգերիսն վարեն յԱսորեստան և ի ցիցս սայլից հանեալ զամենեսին՝ ստիպեն զբազումս յուրացութիւն հաւատոյ, ընդ որս և Զուիթայ երէց Արտաշատու կատարի մահուամբ ի չարախօսութեանց ուրացելոցն առ Շապուհ, որպէս թէ խրատող եղեալ էր նորա գերելոցն պինդ ունել զօրէնս քրիստոնէութեան:

Այլ քանզի ի յաջորդ գլուխն պատմին գործք Մեհրուժանայ և Վահանայ՝ ուրացելոցն ի նորին հրամանէ եղեալ ի Հայաստան, վասն այսորիկ և վերջ առնեմք աստ զհալածումն Շապհոյ և զմնացեալսն տամք ուրացելոցն, հալածումն, անողորմութիւն:

Յօդ. Ը

Մեհրու-ժան Արծրու-նի, Վահան Մամիկոնեան և այլ ուրացող հալածիչք

(Ամք Տեառն 381): Մեհրուժանայ Արծրունւոյ սակաւ ինչ պատմին ուրացութեան հանգամանք ի գիրս Բիւզանդայ (գլ. 23 և 24), օրինակ զայս. «Մի ոմն ի նախարարացն Հայոց Մեհրուժան Արծրունի, ապստամբեալ յԱրշակայ, չոքաւ առ Շապուհ և ուրացեալ զհաւատսն՝ եղև զօրավար Շապհոյ, և հրամանաւ նորա ժողովեալ զօրս աւելի քան, զոր յառաջն, դիմեաց յաշխարհն Հայոց, մինչդեռ Արշակ ի կողմանս Անգեղտան էր, և այրեաց զբազում տեղիս և կոտորեաց զբազումս, և զօրք նորա քանդեալ աւերեցին զմիջնաշխարհն»: Յորում, որպէս երևի, զպատճառ ապստամբութեան նորա և ուրացութեանն ոչ նշանակէ պատմագիրն, որպէս և ոչ այլք յիշատակեն, միայն հալածանք նորա ի վերայ հայոց յետ ուրացութեան գրին բազում ուրեք, զորոց մեր բանքն են:

Այլ զի գործք հալածանաց Մեհրուժանայ և Վահանայ խառն ի մի վայր պատմելոց է բանս, նորին աղագաւ և զՎահանայ ուրացութեանցն նախ կարգեսցուք ծանօթութիւնս, թէ որպէ՞ս և է՞ր վասն և յորու՞մ ժամանակի, և ապա զնոցին հալածանս առ քրիստոնեայս ի Հայաստան:

Իբրև ձանձրանայր նախարարանին յետ երեսուն և չորսամեայ պատերազմին ընդ պարսից ձեռամբ Արշակայ, թողեալ զարքայն, դիմէին նոքա, որ առ Շապուհ և որ առ կայսր Յունաց, և Վահանայ Մամիկոնէի քեռորդւոյն՝ Մեհրուժանայ ուրացելոյ, հրապոյրս ի նմանէ ընկալեալ, գնայ ի Պարսս և հաւատուրացութեամբ անդէն

փեսայանայ Շապհոյ, որով և գրգռիլ Շապհոյ առ ի Վահանայ ընդդէմ Արշակայ և Վասակայ նորին Սպարապետի:

Որչափ ինչ համառօտ յիշատակութեամբ անցաք ի հալածանս Շապհոյ յաղագս սոցին գործոցն ի Հայս, աստէն զնոյնս ընդարձակեմք, որք թէև ընդ նորին հրամանաւ առնէին, զոր միանգամ առնէին պարսկական զօրօք, այլ քան զՇապուհ չարաչար զհետ քրիստոնէից զակատեցան և յաւեր և ի բարձումն քաղաքաց և եկեղեցեաց դիմեցին, որովք որքան յաւելան ի մեղս ուրացութեամբ, առաւել ևս թաղեցան ի խորս դժոխոց յարուցմամբ հալածանաց ի վերայ քրիստոնէից, մինչդեռ կենդանիքն էին:

Դառնանայ Շապուհ, յորժամ լսէ զգայրացումն նախարարաց հայոց ընդ հրաման Արշակայ, զորս կոչէր առ ինքն ի Պարսս ընդ կնոջ իւրոյ, ևս և զյարձակումն նոցա ի վերայ զօրաց իւրոց, եկելոցն ի Հայս, ոյր աղագաւ տուեալ զօր բազում ի ձեռս ուրացելոցն Մեհրուժանայ և Վահանայ՝ առաքէ ի Հայս:

Նոքա (Մ. Վ.), մտեալ ի Հայաստան և գտեալ ամայի զնոյն ի տեարց՝ դիմեն զօրօք ի վերայ բերդին Արտագերից յԵրասխաձոր, ուր զօղէր առ երկիւղի դշխոյն Փառանձեմ, այլ սոքա, թէև չկարէին մատչիլ յամրութիւն բերդին և զաւուրս բազումս պատերազմէին, սակայն ընակիչք ամրոցին ոչ ինչ յոյս օգնութեան առ ի Պապայ գտեալ ցայն վայր, առ որ գրեալ էր մայր նորա՝ թագուհին Փառանձեմ, բացեալ զդուռն՝ անձնատուր պարսից եղեն, ապա Մեհրուժան և Վահան գերի արարեալ զքաղաքն ողջոյն և զդշխոյն՝ ածին յԱսորեստան և անդէն զգերեալսն ամենայն ստիպեալ յուրացութիւն հաւատոյ, իբրև չառնուին նոքա յանձն, զամենեսին առ հասարակ հանէին ի ցից սայլից և տանջանօք սպանանէին:

Աստանօր հրաման ի Շապհոյ առեալ Մեհրուժան և Վահան ուրացողք դառնալ ի Հայս և կորուսանել զամենայն քաղաքսն և աւերել և զամենայն հրեայս անձնատուրս և զգերեալս ի Հայոց գերել ի Պարսկաստան, յետս ընդ կրունկն փութացան ի Հայս և դիւրութեամբ զչար հրամանն արքունի կատարեցին, այն զի և աշխարհս մեր ունայնացեալ իմն յիշխանացն էր, զի շատք փախուցեալ էին ի Յոյնս, և ոմանք յայլ և այլ կողմանս ցրուեալք: Եւ առեալ զգերեալ հրէայսն, որ օրինօք հրէութեան ի Վանն Տոսպայ էին, և զհաւատացեալսն ի նոցունց յԱրտաշատ և ի Վաղարշապատ, գնացին ի Պարսս. ընդ հրէայսն էր և Զուիթայ՝ քահանայ Արտաշատու, որ բազում տանջանօք կատարեցաւ ի Շապհոյ ի չարախօսութենէ Մեհրուժանայ, իբր քարոզ գալ նորա հրէից առ անյողդյողդ ի հաւատսն մնալ: (Յայսմաւուրն, փետր. 3):

Յետ այսորիկ վերստին զօրավար կարգեալ Մեհրուժան ի Շապհոյ՝ բազմութեամբ զօրաց գայ ի Հայաստան՝ խոստումն ընկալեալ ի նմանէ թագաւորութեան ի վերայ Հայոց, եթէ կարասցէ նուաճել զնախարարանին և դարձուցանել զաշխարհն ի պաշտամունս Պարսից պետութեան, առ որ և մոգք և մոգպետք բազումք ի Շապհոյ ընդ նմա ի Հայս առաքեցան:

Եւ իբրև նա այսու պատուիրանաւ յորջացաւ յաշխարհի մերում հանդերձ մոգպետօք իբրև ծարաւի գազան, ապա յայնմհետէ հնարեաց զյագ քաղցին լցուցանել և անդ զառաջինն ձեռբակալեաց ի բերդս զկանայս և զազգականս նախարարաց փախուցելոցն և ցրուելոց՝ ակնկալեալ դարձից նոցին ամենից, որք իբրև զկալանաւորութիւն ազգականացն լուիցեն:

Եւ զի առաջին խորհուրդ էր նորա ի սրտին՝ զքրիստոնէութիւն սպառսպուռ ջնջել յաշխարհէ մերմէ առ տիրանալոյ և հայկական թագին ըստ խոստմանցն ի Շապհոյ, ընթացաւ, կալաւ զառաջնորդս քրիստոնէութեան՝ զեպիսկոպոսունս և զքահանայս, և շղթայակապեալ զամենեսին՝ առաքեաց ի Պարսս և յԱսորեստան, յորս բազումք տանջանօք կատարեցան, և այլք ի շղթայս մնացին կապեալք:

Եւ զամենայն մատեանս հայկականս և յունագիրս որչափ ինչ ի ձեռս ածեալ՝ եբարձ հրայրեաց՝ հրաման հանեալ աշխարհին մի՛ ումեք ուսանիլ զյունաց գիր և զլեզու, որովք ցայն վայր վարէր Հայաստան, բայց միայն զպարսից:

Իսկ մոգուցն դահիճս ընդ իւրեանս առեալ և ի գեօղս և յաւանս աշխարհին բունեալ, զամենեսին՝ զարս և զկանայս, յուրացութիւն հաւատոց բերէին, և զորս ոչ յանձն առնուին, չարաչար մահուամբ բառնային:

Ապա Մեհրուժան լուեալ, եթէ գայ Պապ թագաւորել Հայոց ի ձեռն Թէոդոսի մեծի՝ բազմութեամբ փախուցեալ նախարարացն, պատուէր տայ բերդապահաց, յորս բանտարկեալքն էին կանայք և ազգականք նախարարացն, կախել զնոսին ի պարսպաց ի նախատինս արանց նոցին, զի լիցին կերակուր թռչնոց՝ խոյս տուեալ ինքնին յաշխարհէն Հայոց:

Իսկ իբրև ազդէ Շապհոյ նա ինքն Մեհրուժան ի փախչել իւրում զթագաւորել Պապայ, և գալուստն յունական զօրօք ի Հայաստան աշխարհ հայրենի, ապա վերստին կարգեալ զօրավար զօրաց Պարսից ի հրամանէ նորին և այնպէս զօրաժողով բազմութեամբ պարսից, ղեկաց և աղուանից՝ գայ ի վերայ Պապայ և Տերենտիանոսի՝

զօրավարի յունական զօրուն: Այս յայսմիկ ահեղ պատերազմի, որպէս գրեն պատմագիրք, ի սուր սուսերի անցուցեալ զբազմութիւն զօրացն Պարսից քաջքն Հայոց ի դաշտին Ձիրաւ, Սմբատ ասպետ Բագրատունի լուեալ, եթէ Մեհրուժան ուրացեալ ընդ փախստէիցն Պասից գնայ մազապուր, աճապարեաց, կալաւ զնա ի Շամբին Կագայովտի և ըստ հայրենի սեպհականութեան արքայական թագադրութեանն պատուոյն դնէ անդէն ի գլուխ ուրացելոյն զերկաթի չիշ հրացուցեալ թագաձև՝ փոխանակ արքայական թագին Հայոց, որում զհետ էր ցայն վայր, և զնա այսպէս սատակէ առ տեղեաւն:

Բայց զսատակումն Վահանայ ուրացելոյ Մամիկոնեան ոչ յիշատակեն Խորենացին և այլք, միայն Բիւզանդ, յետ թուելոյ զամենայն չարիսն, զորս հասուցին ի Հայս չարքն անօրէնք, որում Հ. Զամչեան տարբերութիւնս տայ ի բանից Խորենացւոյն, անհարազատս իմն վարկուցեալ զԲիւզանդայն պատմութիւն, որ է. «Իբրև սկսաւ ուրացողն Վահան Մամիկոնեան առաւել բորբոքել զչարիս յաշխարհն Հայոց և լնուլ ուսմամբ Պարսից և յաճախել կրակատունս, որդի նորա՝ Սամուէլ[1], որ հաստատուն էր ի քրիստոնէութեան, եհար և սատակեաց զնա և զմայր իւր՝ զՈրմիզդուխտ՝ զքոյր Շապհոյ, և ինքն փախեաւ յաշխարհն Խաղտեաց:

Յօդ. Թ

Հակառակաշունչ կաշառողք՝ Սուրմակ, Բրէնշոյ և Շմուէլ պատանի

(Ամք Տեառն 428): Իբրև ոչ տեղի տայր Սուրբն Սահակ ամբաստանութեանց նախարարացն զԱրտաշիր արքայէ Հայոց առ Վռամ

1 Զայս Սամուէլ կարծեօք իմանայ Հ. Չամչեան և զերկուս անցսն կամի խառնել ի մի, զյիշատակեալն ի մի ի Խորենացւոյն յԳ. գիրս, ի 48 գլ. յասել նորա. «Սամուէլ Մամիկոնեան սպանեալ էր զհայր իւր՝ զՎարդան, վասն ուրացութեան և զմայր իւր՝ զՏաճատուհի, և ոչ իշխէր զատչել ի կողմանցն Յունաց:

Եթէ Որմիզդուխտ լեալ է անուն քեռ Շապհոյ, գիտեմք զնա կին Մեհրուժանայ և ոչ Վահանայ, որում տայ Բիւզանդ, այն զի յԳ. գիրս իւր ի գլ. ԼԶ. գրէ Խորենացին. «Յետ մահուան Արշակայ գումարեաց Շապուհ զօր բազում ի ձեռն Մեհրուժանայ և արձակեաց ի Հայս՝ ի նա հաւատալով զաշխարհս մեր և տուեալ նմա կին զքոյր իւր՝ զՈրմիզդուխտ,... և խոստացաւ տալ նմա զՀայոց թագաւորութիւն:

Ի բանից աստի յայտնի երևի, եթէ այլ էր Վահան Մամիկոնեան, և այլ Վարդանն՝ սպանեալ ի Սամուէլէ, զի նա ինքն Մովսէս Խորենացի՝ նոցին ժամանակակից, ոչ թերևս խառնէր զերկոսին անուանս ի մի, որպէս համարի Հ. Չամչեան, և տայր միում անձին զերկուս կանայս, զորս ուրոյն-ուրոյն յիշատակէ:

Այլ այսպիսի տարբերութիւն է բանիցն Բիւզանդայ ի Խորենացւոյն, զի զքոյր Շապհոյ՝ զՈրմիզդուխտ՝ զՄեհրուժանայ հարսնացեալն, տայ ի կնութիւն Վահանայ:

Պարսից թագաւորն և միաբանելոյ ընդ նոսա առ այն յաղագս արկանելոյ զնա յաթոռոյ թագաւորութեան, ապա նախարարքն միաբան ընդ ինքեանս, առեալ զՍուրմակ ոմն երէց ի գաւառէն Բզնունեաց՝ ի քաղաքէն Արծկէյոյ, դիմեն առ Վռամ ի Պարսս՝ յամբաստանութիւն զարքայէն և ի կացուցանել յաթոռ զՍուրմակն փոխանակ Սրբոյն Սահակայ:

Իսկ Վռամայ լուեալ ամբաստանութեանց նոցին՝ կոչէ ի դուռն զՍուրբն Սահակ և զԱրտաշիր՝ տեղեկացեալ և նոցին բանից ըստ նոցա ամբաստանութեանցն: Այլ զի խնդիր էր նախարարացն բառնալ զթագաւորութիւն Հայոց և զպարսիկ մարզպան յաշխարհիս կացուցանել, ընդ այս յաւէտ յօժարակամ հաճեցաւ Վռամ, քան որ արքայի և սրբոյն Սահակայ բանից յանմեղութիւն անձանց իւրեանց, և առեալ զպատիւ արքայական յԱրտաշրէ և ի սրբոյն՝ զկաթուղիկոսական պատիւ, զՍուրբն Սահակ դնէ ի բանտի և զարքայ աքսորէ ի Խուժաստան ըստ Յովհ. կաթուղիկոսի և Ասողկայ[1] ՝ կացուցեալ յաթոռ զՍուրմակն երէց, և մեծամեծ պարգևօք դարձուցանէ զնախարարսն յաշխարհ իւրեանց:

Այլ Սուրմակայ զամ մի կալեալ զքահանայապետական աթոռն, հալածեալ ի նախարարացն առ անարժանութեան իւրոյ՝ անկանի վերստին առ Վռամ, առնու աղաչանօք ի նմանէ զառաջնորդութիւն իւրոյ գաւառին Բզնունեաց, ուր ապա զղջացեալ ընդ յանցանս իւր՝ դնէ այնուհետև ի խոնարհութիւն զանձն իւր:

Եւ Վռամ ի խնդրոյ նախարարացն Հայոց առաքէ փոխանակ նոցին զաթոռակալ՝ զԲրգիշոյ ասորի կամ Աբդիշոյ անուն: Այլ սորա եկեալ վատթար ընկերօք և տան տիկնամբք՝ սկսանի յափշտակել զինչս և զվիճակս վախճանեալ եպիսկոպոսացն, և անառակ վարուք, քան թէ քահանայապետական իշխանութեամբ վարել:

Ընդ անարժան գործս սորա ևս սրտմտեալ նախարարացն, ոմանք խնդրել կամէին ի Վռամայ զայլ ոք ի տեղի սորա, այլ կէսք զՍուրբն Սահակ ցանկային վերադարձուցանել մաղթել, և վասն

1 Յովհ. Կաթուղիկոս. «Այլ թէպէտ, ասէ, և Սուրբն (Սահակ) այսպէս արդարախոհ լինէր, սակայն Վռամայ զլսելիսն չարախոհացն մատուցանել և առաւել Սուրմակայ, որ զլեզուն սուսեր սատակիչ պատրաստեալ, ակնկալեալ, փոխանակ Սրբոյն Սահակայ գահակալել յաթոռն: Եւ ապա ի բանտ զԱրտաշիր արգելեալ և զմարզպան պարսիկ հայոց կացուցեալ՝ զՍուրմակն չարալեզու փոխանակ սրբոյն Սահակայ կացուցանէ, որ ոչ աւելի, քան զմի ամ տևեալ, հալածի ի նախարարաց»:

«Յետ որոյ զկնի նորուն կացուցանէ Վռամ զոմն ասորի Բրգիշոյ՝ այր ապարասան և յափշտակող, որ տանտիկին կանամբք զտուն իւր մատակարարէր: Եւ վասն զի և զսա ևս նախարարքն ատեցին, ապա տայ զայլ ոմն ասորի Շմուէլ անուն, որ հետևող գտանէր վարուցն Բրգիշոյի առաւել ևս ագահութեան մասամբ, և Սրբոյն Սահակայ զվարդապետելն հրամայէ և ձեռնադրել, զոր Շմուէլ հրամայէ»:

այսորիկ մինչ յերկուց կողմանց ևս առաքեցան երկու նախարարք առ Վռամ, որք էին վասն նորոգ կացուցանելոյ զոք յաթոռն, Վաչէ՝ Արծրունեաց տէր, և Հմայեակ՝ Աշոցաց, և վասն խնդրելոյ զՍուրբն Սահակ՝ Մանէճ՝ Ապահունեաց տէր, և Սպանդարատ կամսարական՝ Արշարունեաց տէր: Վռամ, կամեցեալ շահել զերկու կողմն ևս, իմացեալ զպատճառ գալստեան նոցին, եդ յաթոռ եպիսկոպոսութեան անուամբ միայն զՇմուէլ զոմն ասորի՝ վատթարագոյն, քան զԲրգիշոյ, և զսուրբն Սահակ եթող գնալ, նստիլ յիւրում վիճակի, որում և հրամայեաց վարդապետել և ձեռնադրել զայնոսիկ, զորս Շմուէլ հրամայեսցէ:

Եւ վասն զի Անատոլիոս զօրավար յունաց լուեալ էր, եթէ ոչ կամին հայք նստուցանել զՍուրբն Սահակ յաթոռ իւր ի բաժնին Պարսից, առաքեալ էր զարս խնդրել զնա ի Վռամայ ի մասն բաժնին Յունաց վասն նստելոյ անդ յԱթոռ Հայրապետութեան, սորին աղագաւ և Վռամ պատուիրեաց սրբոյն մի հակամիտիլ ի յոյնս, այլ մնալ ի հնազանդութեան:

Եկեալ, նստեալ Շմուէլ յաթոռ եպիսկոպոսապետութեան և առեալ ի ձեռին զգործ ագահութեան Բրգիշոյի և առաւելեալ ևս, քան զնա՝ յափշտակէր զվիճակ ոչ միայն վախճանեալ եպիսկոպոսացն, այլ կենդանեացն իսկ, և զբազումս ի նոցանէ յանիրաւի հալածեալ՝ կողոպտէր զինչս և զստացուածս նոցա, և ի մեռանել ուրուք յեպիսկոպոսաց, չտայր թոյլ Սրբոյն Սահակայ ձեռնադրել զայլ ոք ի տեղի նոցին, զի կարասցէ կորզել զինչս և զհասս վիճակի վախճանելոյն:

Ապա յետ հինգ ամաց աթոռակալութեան իւրոյ և անուանակրթութեան կաթուղիկոսութեան Հայոց, որովք չարաչար վարեաց զիշխանութիւնն իւր, մեռանի անդէն յաշխարհին Հայոց յամին 436. զորոյ զանարժանութեան գործսն առաջի առնէ Մովսէս Խորենացի և Յովհ. կաթուղիկոսն, որպէս գրեցաւն:

Յօդ. Ժ

Յազկերտ Բ. Ղաղա–որ Պարսից՝ Հալածող Հայոց զամս 17

(Ամք Տեառն 440): Յազկերտի Երկրորդի՝ Պարսից արքայի՝ որդւոյ երկրորդն Վռամայ, թագաւորեալ գահին հօր իւրում՝ իսկ և իսկ դիմէ ի վերայ զօրացն Յունաց ի Մծբին ըստ Խորենացւոյն՝ մոռացեալ զհաշտութիւն հայրենի, և յարշաւանս հասուցանէ

աշխարհի մերում զգունդն Ատրպատականի, զի նորա ի սրտի էր ոխերիմ թշնամութիւն ընդ քրիստոնեայս, որով յարոյց անհնարին տառապանս հալածանաց ի վերայ ազգի Հայոց, որով սա առաւել գտաւ առ ազգ մեր ըստ դժնէութեան բարուցն, քան զամենայն թագաւորս Պարսից, որ երևեցան անհաշտ թշնամի քրիստոսական հաւատոց, յամենայնի զանձն տուեալ գործակից սատանայի, որպէս ասէ Սուրբ Եղիշա. «Զոր եգիտ բանսարկու իւր գործակից և զամենայն մթերեալ թոյնսն թափեաց ի բաց, և ելից զնա իբրև զպատկան դարան դեղեալ նետիւք, և սկսաւ եղջիւր ածել անօրէնութեամբ, գոռոզանայր և գոռալով հողմն հանէր ընդ չորս կողմանս երկրի, և թշնամի և հակառակորդ երևեցուցանէր զհաւատացեալսն ի Քրիստոս և նեղէր, տագնապէր անխաղաղասէր կենօք, քանզի յոյժ սիրելի էր նմա խռովութիւն արեանհեղութեան: Վասն այնորիկ յանձն իւր տարաբերէր, թէ յո՛ թափեցից զթոյնս դառնութեան, կամ ու՛ր բացատեցից զբազմութիւն թիւնաւոր նետիցն»:

Զայս ամենայն թիւնաւորէր ի սիրտս Յազկերտի մեծ հազարապետ նորա՝ Վէհմիհրներսէհ, և հանապազօր խրատեալ՝ յորդորէր զնա ըստ Փարպեցւոյն, մինչև առաւել ևս յուզեալ Յազկերտի՝ հաստատեաց ի մտի, իսկ և իսկ ստիպել զքրիստոնեայս ամենայն, որ ընդ իւրով իշխանութեամբ՝ ի կրօնս մոգութեան, և վաղվաղակի յետ արշաւանաց նորա ի Մծբին՝ ի վերայ Յունաց, հրաման եհան յաշխարհ տէրութեան իւրոյ ստիպել զքրիստոնեայս, բնակեալս անդէն ի պաշտօն կրակի և արեգական, զոմանս սպառնալեօք ահացուցանէր խախտել ի հաւատոց և զայլս ի բանտ և ի կապանս մատնէր և սրոյ մահուամբ վախճանէր, և առ հասարակ «Մեծաւ անարգանօք տանջէր զամենեսեան, բայց, սակայն (ասէ Եղիշա) ոչ ինչ կարացին բեկանել զհաստատուն արութիւն ոգւոյ քաջ նահատակացն, քանզի կամակար ընթանային ճեպով ցանկացեալք հասանիլ մահու, որով կեանք անմահութեան հանդերձի» (442 թ.):

Իսկ իբրև Վարազվաղան Սիւնի՝ փեսայ Վասակայ Սիւնւոյ, յատելութեանց աներոյն իւրոյ առ ինքն գնացեալ ի Պարսս առ Միհրներսէհ՝ ի նորին հրապուրանաց դարձաւ ի պաշտօն կրակի՝ թողլով զքրիստոսական հաւատս, ապա ինքն հազարապետն և ևս սկսաւ գրգռել զթագաւորն առաւել ընդդէմ հայոց, այլ առաջի եդեալ մոգուցն, եթէ բռնութեամբ ոչ վճարեսցին իրք որպէս և յաշխարհին իւրում ի քրիստոնեայս, մինչդեռ մեծամեծք աշխարհին և պատերազմող զօրք են ի Հայաստան, ապա ի չորրորդ ամի թա-

գաւորութեան իւրում գրեաց Յազկերտ հրովարտակ և առաքեաց դեսպանս որպէս յաշխարհ ամենայն տէրութեան իւրոյ, նմանապէս և նախ առ Վասակ Սիւնի՝ կացուցեալ զնա մարզպան աշխարհին Հայոց՝ ակն ունելով ձգել պՀա յօրէՀա պարսից:

Եւ հրովարտակն էր այսպիսի ինչ՝ ըստ յառաջ բերելոյն Եղիշայ ի գլ. Ա. 9. «Առ ամենայն ազգս տէրութեան իմոյ արեաց և անարեաց բազմասցի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ, դուք ողջ լերուք, և մեք մեզէն ողջ եմք դիցն օգնականութեամբ: Առանց ինչ զձեզ աշխատ առնելոյ՝ խաղացաք, գնացաք յերկիրն Յունաց, և առանց գործոյ պատերազմի՝ սիրով մարդասիրութեամբ նուաճեցաք զամենայն երկիրն ի ծառայութիւն մեզ, դուք բարի զմտաւ ածէք և անսպառ լերուք յուրախութեան, բայց զայս բանս կատարեցէք վաղվաղակի, զոր ասեմս: Մեք ի մտի եդաք անվրէպ խորհրդով գնալ յաշխարհն արևելից՝ աստուածոցն օգնականութեամբ դարձուցանել ի մեզ զտէրութիւնն Քուշանաց (հիւսիսականաց, այս ինքն՝ Հոնաց), դուք իբրև զհրովարտակս զայս տեսանիցէք, անխափան վաղվաղակի այրուձի գումարեցէք առաջ քան զիս և յանդիման լիջիք ինձ յԱպար աշխարհի:

Ընկալեալ հայոց զայս պատուէր հրամանին Յազկերտի՝ ընդդիմանալ ոչ իշխեցին, այլ գունդ մեծ արարեալ ի զօրացն հայոց հանդերձ բազում նախարարօք և ուխտիւք Եկեղեցւոյ՝ առաքեցին յԱպար աշխարհ, յորս էին և Ատովմ Գնունի և Մանաճիհր Ռշտունի, և գնացեալ անդանօր՝ յանդիման եղեն Յազկերտի (443 թ):

Զսոսա Յազկերտի յետ զամս իբրև եօթն յապաղեցուցանելոյ ընդ այլ քրիստոնէից ի պատերազմունս հոնաց և չարաչար մղելոյ զնոսա ի գործավարութիւն շինից բերդին ի դուռն Ալանաց և յետ քանիցս անգամ փոփոխակի ածելոյ անդր զզօրս հայոց, ապա ի մետասաներորդ ամի թագաւորութեան իւրոյ առ որսալոյ ի կամս իւր զքրիստոնեայս՝ ձեռն էարկ կապեաց զնախարար ոմն մանկագոյն՝ զԳարեգին՝ ի տոհմէ Սրուանձտեայց, յաղագս զիրաց հաւատոյ, ընդ որ զչարեալ Ատովմայ Գնունւոյ և Մանաճհրի Ռշտունւոյ և տեսեալ, թէ այնուհետև հանդերձեալ է Յազկերտ ստիպել և զինքեանս յուրացութիւն հաւատոյ, հանդերձ զօրօք իւրեանց մեկնին զանխուլ ի տեղւոջէն (445-9 թ.):

Զփախուստ սոցին լուեալ Յազկերտի, առ ի չզայրացուցանել զսիրտս զօրականացն հայոց առ ինքն, թուղթ ողոքական գրէ[1]

1 Հրաման Յազկերտի ունէր օրինակ զայս առ Ատովմեանս և առ ընկերս նորա. «Յազկերտէ՝ յաստուածոց հաւասարէ, յԱրքայից արքայէ առ սիրելի ծառայսդ, առ ազատսդ և առ ռամիկ հեծեալսդ Հայոց, որ ի մարզէ աստի մեկնեցայք, ողջոյն հասցէ

առ Ատովմ և առ նորին ընկերս և արձակէ պատգամաւորօք առ նոսա մինչև ցմէջ սահմանակցութեան աշխարհին Հայոց և Պարսից, որոց ընկալեալ զպատգամս Յազկերտի և յայտնի գիտացեալ զհնարս նենգութեան՝ ոչ անսացին պատգամաւորին, այլ յետս ընդ կրունկն դարձուցին զնա՝ ծանուցեալ զհոգւոյ վտանգն: Այլ իբրև Յազկերտ գունդ մի ստուար առաքեաց առ Ատովմեանս յետ դարձի պատգամաւորին՝ մահու սպանանել զնոսա յոչ անսալն նոցա ի վերադառնալ, նոքա անկանին յաշխարհն Վասպուրական ի կողմանս Անձևացեաց յանապատ տեղիս, ուրանօր և ի կրօնաւորէ յումեմնէ սրբոյ ընկալեալ զյայտնութիւն, եթէ հանդերձեալ են մարտիրոսանալ, և տեսիլ ևս առ այս ետես Ատովմ և պատմեալ ընկերացն՝ ցնծութեամբ սրտի կացին յաղօթս՝ երանեալ անձանց, զի փոխանակ պսակելոյ յերկրաւոր և ի բռնաւոր թագաւորէ՝ պսակիմք յերկնաւորէն:

Յայսմիկ ուրախութեան սոցին հասին պարսիկք ի վերայ, և ի զէն ընթանալն իւրեանց պատերազմիլ ընդ նոսա՝ տեսիլն առաջին կրկնեցաւ առ ամենեսին, ըստ որոյ և զէնընկեցս կացին առաջի պարսից, և յետ բազում ստիպմանց նոցա յուրացութիւն, հաւատոյ սոքա հաստատուն հաւատով և ուրախութեամբ ի Քրիստոս մատնեցին զանձինս իւրեանց ի մահ:

Յետ այսորիկ Յազկերտի զգուշացեալ սակս քրիստոնէից ի բանակին, զի մի և այլք փախիցեն, յայտնի հրաման եհան առ նոսա սպառնացմամբ մահուան և սրոյ՝ դառնալ ամենեցուն յարևապաշտութիւն: Այլ քանզի առաջի կայր նմա պատերազմ ընդ հոնաց և տեսանէր ևս զպնդութիւն հաւատոյ նոցին, քաղցրութեամբ վարել սկսաւ ընդ նոսա, զի մի լի լքցին ձեռք նոցա ի պատերազմելոյ, որով և խոստանայր նոցին բազում պարգևս և զազատութիւն յետ յաղթութեան թշնամւոյն:

Այլ իբրև յաջողեցաւ նմա գործ պատերազմին, ապա, զոր խոստացեալն էր քրիստոնեայ զօրաց ի բանակին, զհակառակն եցոյց, զի վերստին հրաման եհան՝ երկիրպագանել միայն արեգական և հրոյ և յանձն առնուլ զամենայն օրէնս մոգութեան, բայց և այնպէս, եթէ ոչ յանձն առնուն քրիստոնեայք զպատուէր նորա, մատոյց ի տանջանս ի կարգէ աւագացն հայոց զչորս զօրականս և եդ զնոսա ի բանտի՝ յայլ պատճառս տալով զբանտարկութիւնն, զի մի

ի մերմէ տէրութենէս: Յիշեցաք զվաստակս ձեր և զքաջութիւն, որ առ թշնամիս մեր, և կամիմք մեծաւ պատուով, ճոխութեամբ արձակել զձեզ յաշխարհս ձեր, զի տեսեալ եղբարցն ձերոց՝ առաւել փութասցին ի մեր ծառայութիւն, միայն զի փութով հասանիցէք առ մեզ»:

հայք տեսեալ, եթէ վասն հաւատոյ տանջէ ի նոցանէ, ի ձեռն առցին զքաջութիւն իւրեանց:

Եւ յընթրիս տալն Յազկերտի մեծամեծացն քրիստոնէից, ածեալ առաջի նոցա զզոհեալ՝ ջանայր հաւանեցուցանել զնոսա յուտել, այլ իբրև ոչ յանձն առին նոքա, դառնացեալ ի սրտի իւրում՝ ել արտաքս և արգել զամենեսին զնոսա ի ներքս՝ կապեալ զձեռս նոցա յետս, և ի բազում նեղութեան պահէին զնոսա զաւուրս քանի մի և ազգի ազգի տանջանօք չարչարէին զնոսա, «զոր և ոչ ընդ գրով իսկ արկանել արժանի համարեցաք», ասէ Եղիշէ: Եւ ի վերայ այսր ամենայնի, ի քաղց և ի ծարաւ և յանձկութիւն նեղէր զնոսա, այլ նոքա առ սէրն Քրիստոսի խնդութեամբ ընդունէին զամենայն, ընդ որ և հեթանոսաց զարմացեալ և ի գութ ի վերայ նոցա շարժեալ՝ յորդորէին զնոսա հաստատուն կալ յայնպիսի հաւատս. «լաւ իցէ, ասեն, մարդոյ մահու չափ ճգնել, քան յայդպիսի օրինաց ուրանալ»:

Բայց զի յամենայնի յայսոսիկ ոչ կարաց զմիտս նոցա շրջել ի կամս իւր, ապա արձակեալ զնոսա ի կապանաց՝ վարանէր հանապազ հնարիւք մոլորեցուցանել զնոսա ի հաւատոց, և առ այս իսկ կամելով զառաջինն զբուն աշխարհն Հայոց նեղել և տառապեցուցանել, զի և ընդ իւր եղեալքն, լուեալ զդարձ աշխարհին, դարձցին յօրէնս պարսից, առաքեաց յաշխարհս մեր զմին ի հաւատարիմ պաշտօնէից իւրոց Դենշապուհ անուն:

Սա, վասն զի պատուէր առեալ էր ի Յազկերտէ ըստ թուելոյն Եղիշեայ, նախ՝ ի համար արկեալ զմիայնակեացս անինչս, որք բնակեալ էին յանապատս և ի վանորայս, էառ և վասն նոցա հարկս, ևս և վասն եպիսկոպոսաց և երիցանց: Երկրորդ՝ զամենայն եկեղեցիս, որք ազատ էին ի հարկաց, էարկ ընդ հարկաւ: Երրորդ՝ զհասարակական հարկ աշխարհին առաւել ևս ծանրացոյց և էառ հասս վասն դաշտաց, լերանց ևն: Չորրորդ՝ էարկ բանսարկութեամբ խռովութիւն մեծ ի նախարարս և ի տունս մեծամեծաց՝ սոյնպէս, որով լցաւ աշխարհս աղմկայոյզ շփոթութեամբ: Հինգերորդ՝ զմեծ հազարապետն՝ զամենեցուն բարերարն՝ զՎահան Ամատունի, սուտ զրպարտութեամբ ընկեց յիշխանութենէ և եդ ի վերայ Հայոց զպարսիկ վերակացու և զմոգպետ մի ընդ նմա իբր դատաւոր աշխարհին, այլ յետ այսոցիկ ամենայնի իբրև ոչ կարաց Դենշապուհ առնել, զոր կամէրն, ծանոյց զամենայնն Յազկերտի:

Զայս թուղթ Դենշապհոյ առեալ Յազկերտի և իմացեալ զհաստատութիւն հաւատոց նոցին ի Քրիստոս, ևս և զարհամարհիլ

հրամանին իւրոյ ի նոցունց՝ խորհրդով մեծամեծաց իւրոց ետ գրել մոգպետին զաղանդ դինին իւրեանց ի բերանոյ հազարապետին իւրում Միհրներսէհի մեծի, զի յղեսցէ ի Հայս՝ կարծելով, եթէ գուցէ հայք հաւանեալ այնմ՝ դարձցին, կամ չկարելով պատասխանել այնմ՝պարտաւորեսցին, ընդ նմին և գրեաց հրովարտակ առ ամենայն հայս՝ թողուլ զքրիստոնէութիւն և դառնալ յօրէնս պարսից, զորոյ օրինակն ունի Փարպեցին, յԲ. հատոր. Զամչեան, եր. 25: Այլ թէ քանի՛ առասպելեալ էր այն թուղթ աղանդոյ, առաջի կայ ընթերցողաց ի գիրս Եղիշէի, գլ. Բ. եր. 23-25:

Հասեալ նամակաց ի ձեռս Յովսէփ կաթուղիկոսի Հայոց՝ փութանակի գրեաց առ ամենայն եպիսկոպոսունս աշխարհին Հայոց՝ գալ, ժողովիլ յԱյրարատ՝ յարքունական քաղաքն Արտաշատ, որպէս գրեալ է մեր ի Գիրս Ժողովոց՝ ի 5-րդ հատոր գրոցս, և նախարարք և աւագք, և սեպուհ իշխանք աշխարհին ժողովեալ առ սուրբ կաթուղիկոսն յամի Տեառն 450, և ընթերցեալ զգիր աղանդոյն և հրովարտակ արքունի՝ հրաման ետուն ժողովոյն գրել առ թագաւորն ի բերանոյ ամենեցուն համարձակ բանիւք, յորում յետ բազում բանից ասեն. «Բայց այս և եթ ձեզ ի հաւատոյս մերոյ յայտնի լիցի, զի տարերց ոչ ծառայեմք՝ արեգական և լուսնի, հողմոց և կրակի, որպէս դուքդ, և բազում աստուածոցդ, զոր անուանէքդ դուք ի յերկրի և ի յերկնի, պաշտօն ոչ մատուցանեմք, քանզի ուսաք, և հաստատեալ ծառայեմք միումն միայնոյ ճշմարտին Աստուծոյ, որ արար զերկինս և զերկիր և զամենայն ինչ, որ ի նոսա, և նա միայն է անուանելոցդ ի ձէնջ աստուածոցդ՝ Աստուած և արարիչ, թագաւոր թագաւորաց և տէր տէրանց, և նմա միայնոյ վայել է ամենայն բանաւորաց մատուցանել երկրպագութիւն և պաշտօն»:

Ըստ սմին օրինակի պատասխանի առնեն և բանից աղանդոյն առ հազարապետն՝ ստելով զամենայնն, և զթուղթսն առ հազարապետն իսկ առաքեն յաշխարհ Պարսից, ընդ որս զամօթի հարեալ ամենեքին, և աղանդապետն իսկ նոցին դառնացեալ ընդ այն առաւել, քան զինքն դառնացոյց զթագաւորն, և յայլ խորհուրդ չրջեալ զնա՝ ետ գրել թագաւորին առ ամենայն նախարարս Հայոց ածել ի դուռն, որպէս զի բռնութեամբ երկիրպագանել տացէ արեգական և հրոյ, այլ ոչ որպէս օրէն էր արքայից Պարսից, գրեցաւ հրովարտակն ծանր և զայրագին բանիւք, յանուանէ զմեծամեծ նախարարս աշխարհին նշանակեալ, զորս ինքն ճանաչէր, որոց և անուանք յառաջի դնին ի գիրս Եղիշէի՝ թուովք տասն:

Ըստ այսմ հրամանի նախարարք հասեալ ի դուռն արքային և անդ յետ բազում անգամ յանդիմանութեանց նոցին յերեսաց նորա և բազումս դիմագրաւ լինելոյ նոցին ի պատասխանիս հաւատոյ՝ արկանին ի բանտ, և պ ատրանօք արձակեալ՝ դան վերստին յաշխարհ Հայաստան, որովք և հաստատունքն ի հաւատս յարդարեն զայն պատերազմն մեծ, անուամբս քաջ զօրավարին Վարդանայ, ընդ զօրացն պարսից բիւրաւորաց վասն հաւատոյ և պաշտպանութեան եկեղեցւոյն Քրիստոսի և ազգի և հայրենեաց, զորոց զհանգամանս լիօրէն եղեալ է մեր ի վարս նահատակաց Եկեղեցւոյն Հայոց:

Յետ մեծի պատերազմին, որ ամ մետասաներորդ էր հալածանաց Յազկերտի ի վերայ հայոց, տեղեկացեալ ի Մուշկան Նիւսալաւուրտն զօրավարէ իւրմէ զամենայն անցս մեծի պատերազմին և զիւրաքանչիւր նահատակաց Հայոց զառն առն քաջութիւն, ևս և զխորամանկ չարութիւնս Վասակայ առ իւր հայրենի Եկեղեցին, ապա խորհրդով հազարապետին իւրոյ կոչեալ վերստին զնախարարս Հայոց ի դուռն և զուրացեալն Վասակ, նորոգ կացուցեալ մարզպան աշխարհին զոմն Ատրոյրմիզդ, և անդ ուրեմն ի յանդիմանախօսութեան նախարարացն և կոչեցեալն քահանայից և ուրացելոցն, յամենայնի մահապարտ ցուցեալ զՎասակ՝ դնէ ի բանտ ընդ նախարարսն և ընդ քահանայսն:

Եւ յամի 454, յորժամ խաղայր Յազկերտ ի վերայ Հոնաց, զնախարարսն նովին կապանօք հանդերձ երիցամբքն առաքէ յԱպար աշխարհ, զի մի դիւրութիւն ինչ տացի նոցին յիւրում աշխարհի, և ի պատերազմին յաղթեալ ի հոնաց և համարեալ, եթէ աստուածք իւր սպառնացեալ են ի նա վասն սպանանելոյ կապեալ քահանայից զկրակ, առաքեաց զայր առ նոսա և նահատակեաց զնոսա ի նոյն յԱպար աշխարհի, ի գիւղն Սէվան, յետ երից ամաց նահատակութեանց Վարդանանց, որպէս տեսցի ի վարս Ղևոնդեանց:

Ապա յեօթնևտասներորդում ամի հալածանաց իւրոց վարկուցեալ ի միտս, եթէ նախարարք Հայոց ի վշտաց բանտին ճանճրացեալ դարձցին ի հաւատոց և երկիրպագցեն արեգական, առաքեաց պատգամաւոր առ նոսա զՄիհրներսէհ հազարապետն, որում եկեալ և տեսեալ զհաստատութիւն հաւատոց նոցին՝ դառնայ և պատմէ Յազկերտի, այլ մինչչև էին ազատեալ նախարարք ի խնդրոյ Շղոմշապհոյ՝ տեառն Ապար աշխարհի ի նոյն Յազկերտէ, հասանէ սմին իսկ Յազկերտի մահ, և չարաչար բառնի ի կենաց յիններևտասներորդ ամի թագաւորութեան իւրոյ:

ՅՕԴ. ԺԱ

Վասակ Սիւնի, Վարազվաղան, Գաղիշոյ, Գդիհոն Սիւնի և այլ ուրացող հալածիչք նոցն

(Ամք Տեառն 450-500): Զ Վարազվաղանայ զուրացութեան գործ բացայայտ իմն գրէ Փարպեցին, յորմէ քաղուածու առնեմք աստանօր ի բանս մեր:

Վարազվաղան սեպուհ Սիւնի, առեալ ի կնութիւն զդուստր Վասակայ իշխանին Սիւնեաց, միշտ կռուով կեայր ընդ կնոջ իւրում, մինչև Վասակ՝ հայր աղջկանն, հնարէր սպանմամբ հանել զվրէժ իւր ի փեսայէն իւրմէ, այլ չյաջողեալ սպանութեանն՝ հալածեաց և եթ զնա յաշխարհէս Հայոց: Վարազվաղան, ոչ կարելով զդէմ ունել բռնութեան իշխանին Վասակայ, որ զօրաւոր էր, փախուցեալ գնաց յերկիրն Պարսից և ապաւինեալ անկաւ առ Մեհրներսէհ, որ հազարապետն էր արքունի, բայց կարի իմն յարեալ ի դէն մոխրապաշտութեան, ոգին վրէժխնդրութեան այնքան մոլորեցոյց զՎարազվաղան, մինչև ուրացեալ զքրիստոնէութիւն՝ ընկալաւ զդէնս պարսից և ջանայր մոլորեցուցանել և զայլս առ ի հաճոյանալ Միհրներսէհի և ի ձեռն նորա առնուլ զվրէժ իւր ի Վասակայ՝ այսպէս խորհելով ի մտի. «Իմ ջանս և արարուած երկուց իրաց առիթ է ինձ բարւոյ. կամ հաւանի աշխարհն Հայոց և ուրանայ, (յայնժամ) մեծաց պարգևաց և պատուոյ արժանի լինիմ յԱրեաց որպէս հաւատարիմ նախագիւտ և օգտացոյց այսպիսի կարևոր և մեծ իրաց, և կամ չհաւանին յանձն առնուլ և ընդդիմանան՝ չկարացեալ կալ առաջի այսպիսի մեծի ուժոյ, կորնչին ամենևիմբ տամբք և կարասեաւ, կորնչի Թերևս և իմ թշնամին (Վասակ) յիրիս յայսմիկ: Եւ ես, թէպէտ և ոչ միոյ այլ իմիք չհանդիպիմ բարւոյ, սակայն շատ իսկ է ինձ և բաւական լուրն և տես կորստեան թշնամւոյ իմոյ, քան զամենայն օգուտս և մեծութիւնս, որ են յաշխարհի»: Եւ այսպէս. «Այն այր ի տոհմէն Սիւնեաց եղև, ասէ, պատճառ կորստեան բազմաց և կոտարածի աշխարհիս Հայոց»: (Ի Թղթ. 65-70):

Բայց Վասակ Սիւնի, ոչ շատացեալ իւրով ուրացութեամբն, զայլս ևս ի նախարարացն ի նոյն արկանէր. «Այլ ինքն Վասակ, ասէ Ղազար, զխաբէութեան ճանապարհն կազմեալ նիւթէր ի սրտի իւրում՝ ունելով կամակիցս և աստուածանենգ արս խորհրդոցն իւրոց յազատացն Հայոց», և ոչ միայն ի նախարարացն Հայոց իւր

կողմն ձգեաց և որոշեաց յուխտապահ իշխանացն միաբանութենէ, այլ նաև «Քակեաց, ըստ Եղիշէի, և զմիաբանութիւն աշխարհին Վրաց և Հայոց, և Աղուանիցն ոչ ետ յառաջ խաղալ, և զաշխարհն Աղձնեաց ըստ նմին իսկ օրինակի յետս կալաւ», զորս ահա կարգեմք ստորև՝ համառօտելով ի գրուածոցն Եղիշէի Սրբոյ:

Վասակ Սիւնի՝ այր ճոխ և փառաւոր ի մէջ ազգին, որ ի մանկութեանն զանուն բարեպաշտութեան ունէր և առ Սահակաւ և Մեսրովբաւ պաշտօնասէր ևս երևէր՝ ըստ Կորնոյ և Խորենացւոյն (ի գլ. Գ. 54), զառաջինն նենգանօք և քսութեամբ ետ սպանանել զհօրեղբայր իւր՝ զՎաղենակ՝ զմեծ իշխանն Սիւնեաց, և յինքն էառ զտէրութիւն աշխարհին, որով և եհաս մարզպանութեան ի վերայ Հայոց, քանզի Յազկերտ յաղագս տանելոյ ի պատերազմ զքրիստոնեայս ըստ խորհրդոյ մոգուցն և դարձուցանելոյ զնոսա ի հաւատոյ, զոր մտադրեալն էր, ի չորրորդում ամի թագաւորութեան իւրոյ՝ յամի 442, արձակեաց դեսպանս յաշխարհ իւր և ի Հայս առ Վասակ՝ հանդերձ հրովարտակաւ, որով և կացոյց զնա մարզպան ի վերայ Հայոց, ըստ որում մեծ և հզօր, քան զամենեսին նա յայնմ ժամանակի երևէր և նենգութեամբ իւրով հաճոյ ևս լեալ էր յաչս թագաւորին:

Սա՝ այս Վասակ, որ ընդ նախարարացն բազմութեան ի դուռն արքունի ընկալեալ էր վերին երեսօք զդէնս պարսից վասն պահպանութեան եկեղեցւոյ և ազատութեան իւրեանց, սրտի մտօք այնպէս ուրացեալ էր և զՔրիստոս, ըստ որոյ և այն, ինչ հարին զմոգսն հաւատացեալք ի դարձի նախարարացն, յորժամ մոգքն զեկեղեցիսն Աստուծոյ քակել կամէին, խրատ ետ մոգպետին բերել տալ զզօրս, զի դիւրին լիցի նոքօք հաստատել զմոգութիւն ամենայն ուրեք, և ինքն մտեալ յԱրտաշատ՝ խաբէութեամբ հանդարտեցոյց զամբոխն՝ որսացեալ զբազմաց միտս, որպէս զի առ ժամանակ մի թոյլ տացի մոգուցն կատարել զպաշտամունս իւրեանց, մինչև վստահ ի մեզ եղեալ՝ մեկնեսցին ի մէնջ, և մեք դարձեալ զհաւատս մեր պաշտեսցուք, և զպարզամիտսն ևս ստիպէր երկիրպագանել արեգական, որովք և համարձակութիւն առեալ մոգպետին՝ յաճախեցին կրակատունս յամենայն տեղիս և ինքեանք նստան բնակութեամբ ի տունս նախարարացն ըստ տնօրէնութեան Վասակայ:

Եւ իբրև այս օրինակ հանեալ էին մոգք և յԱղուանս, և հայրապետ նոցին և կաթուղիկոս փախստեայ անկանէին ի Հայս և զօգնութիւն ևս ի նախարարացն խնդրէին վասն պաշտպանութեան հաւատոյ, ապա ամենայն նախարարանին դեսպանս առաքեալ առ

փոքրն Թէոդոս կայսր՝ ինքեանք համագումար միակամութեամբ զամենայն զօրսն յերիս գունդս բաժանեն, զորոց զերորդն յանձնեալ անօրինին Վասակայ ի պահպանութիւն աշխարհին Հայոց: Սա յընտրութեան նախարարաց և զօրաց առնու յինքն զայնոսիկ, զորս ինքն գիտէր թուլահաւատս և դիւրադարձս, և ի հեռանալ երկուց գնդիցն յաշխարհէս Հայոց ի պատերազմ, յորոց առաջնոյն զօրավարէր Ներշապուհ Ռմբոսեան, և երկրորդին՝ Վարդան Մամիկոնեան, անօրէնն Վասակ խպառ թողեալ զքրիստոնէութիւն և որ ընդ իւր միաբանեալք՝ բազում չարիս Հայոց աշխարհիս հասոյց, աւերեաց զբազում տեղիս և հրձիգ արար բազում քաղաքս Այրարատայ, յորս ջերմագոյն զՔրիստոս պաշտէին, յափշտակեաց զբազում բերդս ի ձեռաց հաւատարիմ պահապանաց և ինքն եդ ի նոսա յիւրոց անտի պահապանս, կալաւ զորդիս նախարարաց՝ միաբանելոց ընդ Վարդանայ, եդ պահել զնոսա յամուր բերդս աշխարհին Սիւնեաց: Գրեաց առ իշխանս Յունաց և այլոց ազգաց պատրեալ զնոսա, զի անկասկած լիցին ի խնամս չարութեան իւրոյ: Եւ հաւանութեամբ համախոհից իւրոց դեսպանս արձակեաց առ Միհրներսէհ և առ այլ իշխանս Պարսից՝ թողուլ զօրէնս քրիստոնէութեան իւրոյ՝ ծանուցանելով, զոր արար, և ուխտ դնելով կանգնել զմեհեանս և պաշտել ի նոսա զարև և զհուր: Ըստ որոյ և ինքն ձեռն արկանէր ապա ի սուրբ եկեղեցիս և էառ զսպասս սեղանոց, կալեալ զքահանայս՝ դնէր ի բանտի և զբազում միայնակեացս հալածէր յաշխարհէն և ասպատակ սփռեալ յԱյրարատայ յամենայն տեղիս՝ կանգնէր սեղան պաշտամանց արեգական և հրոյ:

Ի յաճախել պաշտամանց հրոյ ի տեղիս տեղիս Հայոց աշխարհին ի պատրանաց ուրացելոյն Վասակայ, բազումք ևս զնորա մոլորութեան զհետ զակատեցան, մինչև և երկուք յերևելեաց, թո՛ղ զռամիկս՝ Շաւասպ Արծրունի և Վնդոյ Դունեցի, կանգնեցին ի նոյն իսկ Դուին զկրակատունս, յորում և Վնդոյ կարգեաց քրմապետ զորդի իւր՝ զՇիրոյ, ձեռնտու ինքեան ունելով զՄշկան ոմն, որ յառաջն հազարապետ լեալ էր աշխարհին:

Այսպիսում չար գործոց ուրացելոցն յետոյ կամակից եղեն Արտակ Ռշտունի, Ընճուղ Ակէոյ, Ներսէհ Ուրծայ և Մանէն՝ սեպուհ Ամատունեաց, մինչև ի յարձակիլ Վարդանայ Մամիկոնեանի գնդաւ ի վերայ սոցա ընդ լսելն զուրացութեան գործս սոցին, ամենեցուն զահի հարեալ յերեսաց զօրավարին քաջի՝ փախստեայ մազապուրծ յամուր բերդս աշխարհին Սիւնեաց անկանէին:

Սա՝ այս Վասակ, ուրացեալ ի պատրաստութեան այնմիկ մեծի պատերազմին Պարսից ընդ Հայոց, որոյ վասն ի Փայտակարան

աշխարհ մտեալ էր զօրօք բազմութեան հազարապետն Միհրներսէհ, ըստ նորուն հազարապետին կոչելոյ գնացեալ առ նա՝ յանձն առեալ էր, զոր առնելոցն էր, զի առաջի եդեալ էին ինքեան մեծամեծ խոստմունք ի նմանէ ըստ Եղիշէի. «Իշխանութիւն աւելի քան, զոր ունէրն, և հայեցոյց զնա ի կարծիս սնոտիս, որ ի վեր էր, քան զիւր տէրութիւն, իբրու թէ տացէ նմա հասանել մինչև ի թագաւորական վիճակն», ապա յաշխարհին իւրում՝ ի Սիւնիս, զբազումս ի մեծամեծաց և ի ռամկաց որսաց յիւր կողմն և գտեալ զերկուս զերիցունս՝ զՋանգակ և զՊետրոս՝ զԵրկաթի կոչեցեալ, և զերկունս սարկաւագունս՝ զՍահակ ոմն ձայնող և զՄուշի, առաքեաց յայլ և այլ կողմանս աշխարհին Հայոց և ի տունս տունս միաբանելոցն ընդ Վարդանայ, որոց ի դիմաց ուրացելոցն երդմունս կռեալ՝ հաւատացուցանէին , եթէ այսուհետև համարձակ պաշտեսցեն զքրիստոնէութիւն, միայն զի յետս կացցեն ի միաբանութենէն ընդ Վարդանայ և ընդ այլ միաբանելոցն, որոց ոմանք արհամարհեալ զմիաբանեալսն իբրու զանհաւանս՝ խառնեցան ի Վասակեանս՝ քակտեալք ի Վարդանեանց: Այսպէս քակեաց և զմիաբանութիւն Վրաց և Աղուանից ի Հայոց, և զաշխարհն բովանդակ գրեթէ Հայոց զԱղձնիս, զՏմորիս և զԿորդրիս, զԱրցախ և զԽաղտիս հանեաց ի միաբանութենէ, զի անաշխատ տիրեալ աշխարհին՝ համարձակ պաշտեսցէ զկրակ:

Ոչ շատացեալ այսոքիւք՝ ուրացեալ ոգին գրեաց առ միւս ոմն Վասակ Մամիկոնեան զօրավար Յունաց և առ վերակացուս Հայոց ի բաժնին Յունաց, թէ. «Վարդան՝ սպարապետ Հայոց, խորհելով զապստամբութիւն ի Պարսից՝ ժողովեաց զոմանս ի Հայոց հանդերձ նախարարօք և եպիսկոպոսօք ոմամբք, վասն որոյ և թագաւորն յարուցեալ է պատերազմն ի վերայ նոցա: Զայս ամենայն լուեալ Վասակ համանման գործովք Վասակայ Սիւնւոյ՝ գրեաց զամենայնն ի դուռն կայսեր Յունաց և առ եպիսկոպոսս՝ բարդեալ ի վերայ միաբանելոցն զբազում ամբաստանութիւն, մինչև ատելի ևս արար զնոսա յաչս կայսեր և ամենայն յունաց, և ահա այսպէս. «Եգիտ, ասէ Եղիշէ, այս Վասակ զայն Վասակ իւր գործակից ի մեծամեծ չարիս, զոր միաբանեցին երկոքեանն»:

Այսպէս լցեալ անօրէնութեան գործովք հալածանաց Վասակայ տեառն Սիւնւոյ՝ ոչ եթող չարիս, զորս ոչ արար ազգին իւրոյ. «Հալածեաց և փախոյց, ըստ Եղիշէի, զամենայն միայնակեացս աշխարհին, որք հայհոյէին զանդարձ ամբարշտութիւն նորա, արար և կատարեաց զամենայն չարիսն ընդդէմ ճշմարտու-

թեանն, և զոր ինչ ոչ գիտէին անօրէն հեթանոսքն, իմացուցանէր նոցա, և վասն ուխտին քրիստոնէութեան, թէ որպէս հնարիւք կարասցէ բառնալ յաշխարհէն Հայոց», մինչև յետ պատերազմին մեծի, յորում ի վերայ ճշմարտութեան հաւատայ նահատակեցան քաջ զօրավարն Հայոց Վարդան՝ ընկերօքն, յոր և անկան ի պարսից բիւրաւորաց երեք հազար այր ընդ մեծ և փոքր, կոչեցեալ Յազկերտի ի դուռն զՎասակ և զամենայն վնաս կորստեան մարդկան երկուստէք և փոխադարձ երկարատև խռովութեանցն՝ եղեալ ի վերայ իսկ ուրացելոցն ըստ վկայելոյ հազարապետին Միհրներսէհի, և մերոց սրբոց քահանայից և ուխտապահ նախարարացն, որք ընդ նմա ի դուռն կոչեցան, և զամենայն խաբեպատիր նենգութիւնս նորա ճշմարտութեամբ առաջի եղեալ արքային, որովք զերկուս կողմանսն ևս՝ զՊարսից և զՀայոց, թակարդէր ի կորուստ, և թէև որպէս երիցս երդուեալ յԱւետարանն սուրբ և դրժեաց ուխտին, և որպէս ուխտեալ ընդ զօրավարսն արքունի վասն անխախտ մնալոյ յուրացութեանն, և ընդ ինքեանս գաղտ ի նոցունց դարձեալ միաբանէր և թղթակցէր ի դուռն կայսեր Յունաց և զօրս և զօգնութիւն խնդրէր ևն, ապա ի պատիժ այսչափ անօրէնութեանց, նորին արքայ Յազկերտ յառաջի ամենայն նախարարակոյտ ատենին իւրոյ զգեցուցեալ զգեստ մահապարտի և հրամայեալ կապել ի շղթայս՝ եհան արտաքս, առաքեաց ի բանտ մահապարտից, ուր և երանելի քահանայքն էին: Ուր, ըստ Եղիշէի, «Եռացին որդունք ընդ աչս նորա և ի վայր սորեցին ընդ ըռնգունս նորա... ճաշակեաց զմահ հեղձամղձուկ և էջ ի դժոխս անհնարին դառնութեամբ... ոչ ինչ եթող չար, զոր ոչ գործեաց, և ոչ ինչ մնաց ի մեծամեծ չարեաց, որ ոչ անցին ընդ նա ի մահուան նորա»:

(452): Ապա փոխանակ Վասակայ կարգեաց Յազկերտ մարզպան աշխարհին Հայոց զՎարազվաղան՝ փեսայ նորին զուրացեալն, և առաքեաց յաշխարհն իւր ընդ այլ ուխտանենդ նախարարաց, յորս էր, որպէս երևի, Գդիհոն Սիւնի, որոց եկեալ և պարապ գտեալ՝ շինեցին յիւրաքանչիւր տունս՝ զկրակատունս, և պաշտօն տանէին կրակի:

Ի դարձի նախարարացն ի կապանաց, այն ինչ յետ մահուան Մովսէս կաթուղիկոսի նստաւ Գիւտ, տեսեալ, եթէ բազումք ի Հայոց վասն փառաց հասանելոյ ի Պարսից և զդիւրութիւն գտանելոյ յուրացելոց համարի եղեալ՝ բացեալ են ի քաղաքս զկրակատունս, և զպատիւ տանուտերական առեալ յանհաւատից՝ հեթանոսութեամբ վարին, և ոչ գոյ նոցին յոյս փրկութեան և ուղղութեան,

սկսաւ այնուհետև բանիւք և գրովք յանդիմանել զուրացողսն, և զի առաջին ի նոսա՝ Գադիշոյ, ճանաչիւր Խոռխոռունի Մաղխազեանց և չար էս, քան զայլ ուրացողսն, և յորդորիչ իբրև Վասակ այլոց յօրէնս մոգութեան զնա առաւել, քան զամենեսին նախատէր և կշտամբէր, այլ Գադիշեայ առնուլ կամելով զվրէժ քինու ի սրբոյ հայրապետէն՝ չոքաւ առ Պերոզ արքայ Պարսից և ամբաստանեալ զհայրապետէն՝ ետ կոչել և զնա ի դուռն և արկանել յԱթոռոյ Հայրապետութեան:

Եւ յորժամ Վահան Մամիկոնեան սպարապետ վասն պաշտպանութեան հաւատոյ ընդ միաբանելոցն հանդերձեալ էր հարկանել զպարսիկս ուրացելովքն հանդերձ, անդ ի դիմի հարկանել մերոցն՝ չորիր գնդաւ բազմութեան զօրացն Պարսից, Գարջոյր Մաղխազունի (գուցէ ազգական Գադիշեայ, որ յուրացեալսն էր), որ գլուխ կարգեալն էր երրորդ գնդին, առեալ զգունդն՝ էանց ի Պարսիկս և դասեցաւ ընդ ուրացեալ նախարարսն, ուր գտանէր ի սմին ժամանակի և Գդիհոն՝ Սիւնեաց տէրն:

Այլ Վարազվաղանայ, յետ բազում անիրաւութեանց և չարեաց գործոց և զբազումս յիւրոց ի պարսից կրօնս մոլորեցուցանելոյ, լլկեալ ի դիւէ՝ սատակի այսահար: Որ, ըստ բանի Փարպեցւոյն, «Տանջեալ զամս բազումս առաջի ամենեցուն հանապազօր նշաւակօք զգետնեալ փրփրէր անզգայութեամբ... մինչև ի բազում ժամանակս չարալլուկ կտտանօք զարկուցեալ հեղձոյց»: (Եր. 69):

Բայց Գդիհոն ուրացող Սիւնի հարաւ ի քաջացն Հայոց ի պատերազմի Շապհոյ պարսիկ մարզպանի ընդ Վահանայ և չարաչար սատակեցաւ ի նիզակաց արանցն չորից ի գնդէն նորին իսկ Վահանայ:

ՅՕԴ. ԺԲ

Յո–լխանէան Հայ աղանդա–որ է ի պանալան գեղէ

(Յամի Տեառն 490): Հակառակորդք Քաղկեդոնական ժողովոյն տարածանէին զչփոթալից բանս ընդդէմ այնմ ի Հայաստան, որ զայսու ժամանակաւ առ վայր մի հանգիստ առնոյր ի հալածանաց յաւուրս Բաբկենի կաթուղիկոսութեան Հայոց, սոքա ի ջատագովչաց և յաշակերտաց Դէոսկորոսի և Պարսամայ քարոզէին, եթէ յոյնք ընկալան զգիրս Թէոդոսի Մամեստացւոյ, որ ի նեստորութիւն թուէր դարձուցանել զեկեղեցին, զոր ժողովով երկիցս մեր-

ժեալ էր Սուրբն Սահակ:

Էին, ըստ վկայելոյ Տաթեւացւոյն(Թ. 7. եր.543), ի Հայս և թուղթք յառաջագոյն ի Դէոսկորոսէ, ի Պարսամայ, ի Պետրոսէ Կնափեցւոյ՝ աղանդապետն եղելոց աստուածաչարչար կոչեցելոց, ի Պետրոսէ Գաղացւոյ և ի սոցին համախոհից, զորս քարոզեցին ի Հայս և խռովեցուցանէին հետևողք Յուլիանեայ աղանդոյն, յորոց մին էր և Շմուէլ՝ աշակերտ Պարսամայ, որոյ պատուիրեալ էր աշակերտին ի մեռանել իւրում՝ գնալ և քարոզել հայոց՝ հակառակ ժողովոյն Քաղկեդոնի, որ ի խռովարարութեան իւրում անկաւ ի պէս-պէս մոլորութիւնս:

Այլ զի և աշակերտաց և գործակցաց Բարծումայի, հասեալք յարևելս, քարոզէին և տարածանէին զաղանդ նորին՝ զնեստորականութիւն, ընդ որ պնդէին ևս, եթէ ժողովն Քաղկեդոնի ևս ընկալեալ իցէ զՆեստորի վարդապետութիւն, յարեան բազումք յասիացւոց և յասորւոց ընդդէմ երկուցն ևս աղանդոց, մերժեցին զերկոսին ևս՝ զՔաղկեդոնին և զՆեստորին՝ ընկալեալ միայն զհրովարտակ Զենոնի կայսեր՝ համաձայն երից նախընթաց սուրբ ժողովոցն: Զոր յաւուրսն յայնոսիկ բերին ոմանք ի Հայս ըստ վկայութեան Յովհ. կաթուղիկոսի:

Յայսպիսեաց շփոթութեանց յարուցելոց առ բազումս ի հայոց, որովք բազումք ևս մոլորէին զհետ քարոզողացն մոլորութեանց, Բաբկէն կաթուղիկոս առնէ զհինգերորդ Ժողով ի Վաղարշապատ, յորում և ընկալեալ զհրովարտակն Զենոնի՝ հերքեն զՔաղկեդոնի Ժողովն, իբրու այն, զի ընկալեալ իցէ զգիրս Թէոդոսի Մամեստացւոյ կամ զաղանդն իսկ Յուլիանեայ, զորմէ տես ի հատորն ժողովոց (Գլ.11):

Զաղանդն Յուլիանեայ Աղիկառնացւոյ սկսաւ արծարծել և Եւտրապիոս՝ եպիսկոպոս Եփեսոսի, ի սկզբան թուականութեան հայոց յամի Տեառն 552, որ անչարչարելի ասէր զմարմինն Քրիստոսի և առ աչօք համարէր լինել զամենայն մարդկային կիրս և զչարչարանս Փրկչին, և այս մոլորութիւն սփռեաց ի ձեռն եպիսկոպոսաց մինչև ի սահմանս Հայաստանեայց (Յովհ. Ասորի՝ եպիսկոպոս Ասիոյ՝ ժամանակակից նորին):

Այլ Մովսէս կաթուղիկոսն իմացեալ՝ իսկ և իսկ ետ արտաքսել զաղանդաւորսն ի կողմանց վիճակին իւրոյ և զոք ոչ եթող յարել ի նոցին վարդապետութիւն, զոր յետոյ դատապարտեաց ժողովով Յովհ. Իմաստասէր:

Յօդ. ԺԳ

Նէսպորական Հայէ ոմանէ, որէ Ի գԳիրս ինչ Ղարգմանէն յասորոյ ի Հայ

(Ամք Տեառն 530): Յաւուրս Կիւրիովնի կաթուղիկոսին Վրաց, որ կալաւ զաթոռ նոցա ի վաներեցութենէ Մայր Եկեղեցւոյ կաթուղիկոսարանին Հայոց և ի քորեպիսկոպոսութենէ Արարատայ, էին ի կողմանս նոցին բազում նեստորականք ի խուժիկ ազգէ, որք զարհամարհանս կրելով ի նոցունց վասն բանի հաւատոյ՝ դարձան կեղծաւորութեամբ ի մոլորութենէ իւրեանց, ըստ որոյ և Կիւրիովն, չգիտելով զստութիւն դարձի նոցին, ընդունի զնոսա ի հաղորդութիւն եկեղեցւոյ: Այլ Մովսէս կաթուղիկոս լուեալ զսոյն՝ գրէ մեղադրութիւն առ Կիւրիովն իբր այն, թէ զնեստորականսն հաղորդեաց ի հաւատս ուղղափառ եկեղեցւոյ, և նորա վերստին ստուգեալ զստութեամբ դարձս նոցա՝ նզովիւք հերքեաց զնոսա յեկեղեցւոյ յիւրմէ: (Թուղթ Կիւրիովնի և Աբրահամ կաթուղիկոսի):

Յօդ. ԺԴ

ՅովՀանն Գ. Հակառակաթոռ կաթուղիկոս զամս 16

(Ամք Տեառն 596): Աբրահամու կաթուղիկոսի յԱղբաթանից ի նզովելն ժողովով զԿիւրիովն կաթուղիկոս Վրաց և յորոշելն զնա յԵկեղեցւոյն Հայոց յաղագս ընդունելոյ նորին զՔաղկեդոնի ժողովն, նա ինքն Կիւրիովն ամբաստան եղև զԱբրահամ կաթուղիկոսէ առ Մօրիկ կայսր Յունաց ի վերայ այսր գործողութեան, և նա տեսեալ, եթէ հայք ոչ ընդունին զայն, և ժողով ևս արարեալ ընդ ամբաստանութիւն Կիւրիովնի՝ իբրև ոչ ընկալան եպիսկոպոսք Հայոց ուրանօր գտան քսան և մին անձինք ըստ մտաց կաթուղիկոսին Վրաց և գժտութիւն ևս անկաւ այսու ի մէջ հայոց և վրաց, ապա կայսրն, որոշեալ զՀայս իւրոյ բաժնի յունական մասին ի հնազանդութենէ Աբրահամու, (Թ. 600) կացուցանէ նոցա հակառակաթոռ զՅովհաննէս կաթուղիկոս ի Կոգաց գաւառէ, ի Բագարան գեղջէ՝ տեղի բնակութեան տալով նմա ի Կոտայս՝ զքաղաքագիւղն Աւան: Այս եղև պատճառ առաւել ևս սաստկանալոյ հակառակութեանց ի մէջ հայոց և յունաց մինչև ցմահ Յովհաննու:

Բայց (Թ. 605) յառնել Խոսրովայ արքայի Պարսից ի վերայ քաղաքացն Յունաց յաւուրս Փոկասու կայսեր ի վրէժ մահուն Մօրկայ, փախուցեալ գոլով առ ահի պատերազմաց ի Կարին, որ էր ի բաժնին Յունաց՝ իբրև տեղի ապահով, վարեցաւ ընդ գերեացն բազմութեան յետ երկուց ամաց պատերազմին յԱհմատան յԱշոտոյ զօրավարէ Հայոց՝ յորդւոյ Սմբատայ ասպետին Բագրատունւոյ, և անդ, ուրեմն, յետ մետասան ամաց գերեվարութեանն իւրոյ վախճանեալ՝ բերաւ մարմին նորա յԱւան և եդաւ յեկեղեցին, զոր իւր իսկ էր կառուցեալ: (Յովհ. Կթ.-Սամուէլ.-Ասողիկ Վարդապետն.-Կիրակոս):

Յօդ. ԺԵ

Սարգիս՝ աշակերտ Յովհաննու– Մայրավանեցւոյ

(Ամք Տեառն 629): Եղբ կաթուղիկոս Հայոց այն ինչ ընկալեալ զժողովն Քաղկեդոնի ի Կարին՝ վերադարձաւ Յաթոռն Հայրապետութեան ի Դուին, յընդառաջելն նմին ուխտի եկեղեցւոյն, Յովհան Մայրավանեցի՝ Փիլիսոփոս կոչեցեալն ի Յովհ. կաթուղիկոսէ, որ փակակալ կարգեալն էր ի նմանէ եկեղեցւոյ Սրբոյն Գրիգորի, լուեալ, եթէ կաթուղիկոսն ընկալեալ է զժողովն Քաղկեդոնի, հերքեալն մի անգամ և երկիցս ի վարդապետաց Հայաստանեայց Եկեղեցւոյ, իբրև ոչ ել նա ընդ առաջ կաթուղիկոսին, մերժեաց զնա յեկեղեցւոյ, որում հալածական գնացեալ յերեսաց հայրապետին յԱղուանս ի գլուխ Գարգման գաւառի՝ ստացաւ անդէն յաշակերտ ինքեան՝ զՍարգիս ոմն անուն: Սա անկանի ապա յայլ և այլ հերձուածս և յաղանդ Յուլիանեայ և Սաբելի ըստ Վարդանայ մեծի, որով և զբազումս կարծեցոյց անկանել վարդապետին իւրոյ մեծի յայն մոլորութիւն հերձուածողութեան, զոր հերքէ Յովհ. կաթուղիկոս իւրովն բանիւ՝ եղեալ զհերձուածս ի վերայ նորին աշակերտի, որպէս եղեալ է մեր ի պատմութեան Ժողովոյն:

«Զսմանէ ապա (Յովհ. Մայրավանեցւոյ) համբաւ ամբաստանութեան պատմի իբր դառն հերձուածս իմն նմա մուծանել յեկեղեցի սուրբ: Սակայն ես ոչ կարեմ հաւանութիւն իմոյ կամացս տալ վասն այնպիսւոյ առնն, թէ զիարդ նա կարէր խորհել առ ի փլուզանել զուղիղ հաւատոյ շինուածս, այլ կարծիս իմն ընդունի սիրտ իմ ի հակառակադիր և խորիմաց այլոց ամաց այս գործ համբաւոյ լեալ, բայց եթէ սակս Սարգսի՝ աշակերտի նորա, համբաւէ

ոք զայսպիսի չար հերձուած ընձիւղել, և ես ոչ վասն նորա հակառակիմ, զի իմ իսկ ընթերցեալ է զգիր վնասու նորա: Այլ վասն զի Յովհան իրաց յիւրմէ հալածեաց զՍարգիսն, սակս այնորիկ արտաքոյ կամաց նորա ասեմ զնորայն հերձուած:

Սոյն Սարգիս՝ աշակերտ Մայրավանեցւոյն, բազում ինչ առեալ ի մոլորութենէն պողիկեանց՝ խառնեաց ընդ մոլորութիւնս յուլիանիտաց, ապողինարեանց, մարկիոնեանց և սաբելեանց, և հնարեալ զայլ իմն մոլորական աղանդ՝ գրեաց ևս զպէսպէս թիւնալից բանս ի խորհուրդ հաւատոյ և ի տնօրէնութիւնսն Քրիստոսի, զորս Յովհ. Կաթուղիկոս չար և դառն հերձուածս կոչէ:

Ի սփռել այսպիսի աղանդաւոր բանից Սարգսի, զորս թարգմանեալ էր ի Յուլիանեայ Աղիկառնացւոյ, զորս Զամչեանն տայ և վարդապետի նորին Մայրավանեցւոյ, Ներսէս Գ. կաթուղիկոս Շինող ժողով արարեալ եօթնեւտասն եպիսկոպոսաց Հայոց՝ նզովեցին զամենայն հերետիկոսս և հերձուածողական գիրս, ընդ որս և զՔաղկեդոնի ժողովն ըստ աւանդութեան Յովհ. կաթուղիկոսի:

Իսկ եթէ թարգմանիչ գրոյն Յուլիանեայ Աղիկառնացւոյ էր Սարգիս՝ աշակերտ Մայրավանեցւոյն, վկայէ և Փոտ պատրիարգ ի թղթին առ Զաքարիա կաթուղիկոս. «Եւ յորժամ, ասէ, թարգմանեցին ի հայս գիրքն Յուլիանեայ Աղիկառնացւոյ ի ձեռն Սարգսի ի ժողովն Մանազկերտու, առաւել զօրացան և բանք նորա ևն: Որով յայտ է, թէ ընդունայն է զրպարտութիւն Հ. Զամչեանի, որ հայհոյական և յիմարական կոչէ զբանս նորա առ Եզր:

Յօդ. ԺԶ

Ընդ-որդէ Հայէ Բաղմացեալէ

(Ամք Տեառն 655): Ի ժամանակին, յորում Ներսէս Գ. Շինող զՀամազասպ Մամիկոնեան փոխանակ Սմբատայ՝ պատրիկ և իշխան Հայոց կացուցանէր և զորդի Թէոդորոսի Ռշտունւոյ՝ զՎարդ, ի զօրավարութիւն Հայոց, ի վեր երևէին դարձեալ ի տեղիս տեղիս Հայաստանեայց աշխարհի աշակերտեալք ոմանք ի դասուէ աղանդաւորաց պօղիկեանց՝ շառաւիղեալք ի մանիքեցւոց, յորս խառն էին և արևորդիք, որպէս յիշատակեցաք մեք ի գլ. ծագման արևորդեաց յամի 315, զորս Սուրբն Մեսրովբ երկիցս ջնջեաց ի Գողթն գաւառէ:

Ընդ դէմ սոցին գրեաց Յովհաննէս Իմաստասէր ճառս սքանչելի վարդապետութեամբ՝ ունայնացուցեալ խսպառ զհերետիկոսու-

թիւն նոցա, որք զանդամսն Քրիստոսի յիւրեանս պատուաստեալ՝ ի ձեռն իշխանութեան այլազգեաց բռնանային ի վերայ բազմաց:

Բազումք ի սոցանէ կոչեցան պօղիկեանք կամ պոլլիկեանք, և այս ասէ Հ. Զամչեան կամ վասն հետևելոյ նոցին ի մոլորութիւն երկուց աղանդաւորաց մանիքեցւոց, որոց անուանք էին Պօղոս և Յովհաննէս, յորոց և սոքա հաւաստի է, եթէ կոչեցեալք իցեն պողիկեանք կամ պող-յովհանեանք: Սոքա զանուն քրիստոնէութեան ունէին և զամենայն օրէնս քրիստոնէութեան առ ոտն հարկանէին, արտաքուստ բարեպաշտ ձևանային և ի ներքուստ լի ամենայն պղծութեամբ ևլն, որպէս տեսանի ի Ծան. Բ. գրոց. եր. 766. Զմչ. Պատմ. :

Սոքա աղանդաւորք սփռեալ ի զանազան աշխարհս՝ ոմանք եկին ի Հայս ընդ մէջն եօթներորդ դարու, որոց ընդ դէմ, որպէս յիշեցաք, Յովհաննէս Իմաստասէր յետ իբր վաթսուն ամաց գրէ այսպէս. «Սոքա, ասէ, գտան որոգայթ իբրև զվարմ հաւորսաց՝ ձգեալ ի յետին ժամանակս ի մէջ ժողովրդեան ըմբռնել զախմարս և զպարզամիտս ի մարդկանէ, որք չարեաց ի չարիս վերացեալ՝ ելին ի պատկերամարտութենէ ի խաչամարտութիւն և ի քրիստոսատեցութիւն, և անդուստ՝ յանաստուածութիւն և ի դիւապաշտութիւն ևլն»: (Բ. հար. եր. 356): Յայսոցիկ աղանդաւորաց սերեցան յունադաւան հայք կամ հայհոռոմք, որոց շառաւիղք կան մինչև ցայսօր ի փոքրն Հայաստան:

Յօդ. ԺԷ

Պա–ւլիկեան Հայ աղանդա–որէ ի զանազան դէղիս

(Ամք Տեառն 717): Ի վերջին աւուրս կաթուղիկոսութեան Եղիայի միւսանգամ երևեցան յաշխարհին Հայոց չար աղանդաւորք՝ հետևողք պողիկեանց, որոց զբազումս ի պարզամտաց որսացեալ՝ արկին ի խորխորատ կորստեան, որոց և բազում ընծայիւք հաճեալ զմիտս ոստիկանին Վլթայ՝ նորին ձեռնտուութեամբ զօրանային:

Քարոզէին սոքա ըստ չարութեան իւրեանց, նախ՝ թէ չէ արժան պատիւ տալ պատկերաց, և յետոյ՝ թէ և ոչ խաչի, ասելով՝ կռապաշտութիւն է այն, հայհոյէին, թէ և ոչ Աստուծոյ պարտ է պաշտօն մատուցանել արտաքուստ, զի նա ոչ կարօտի, ասեն, մերում երկրպագութեան, և ապա քարոզէին, թէ պարտ է պատուել զդէս, զի մի չար ինչ արասցեն մեզ, այլ բարեկամացեալ՝ յաջո-

ղեսցեն, ի խաւարի զխաւարայինսն գործէին ծանակութեամբ և ի լոյս տունջեան անախտ զանձինս երևեցուցանէին առ ի պատրելոյ զմիամիտս, վասն օգնութիւն գտանելոյ աղաչէին զարեգակն և զլուսին, կոչէին կախարդանօք զօդային դևս, զմեռեալս դնէին ի վերայ տանեաց և շշնջէին ի վեր հայելով, առեալ զարիւն տղայոց՝ ընդ ալեր գանգեալ ուտէին, զառաջին ծնունդ կնոջ խաղացուցեալ ձեռաց ի ձեռս, յոյր ձեռն և մեռանէր, զնա մեծ ոմն պաշտէին և վկայ զնա կոչէին յիրս երդման, ի մեռեալ տղայն ևս երդնուին, որով կարծեցուցանէին տգիտաց, եթէ յԱստուած Հայր և ի միածին Որդի նորա երդնուն: Սոքա էին յաղանդաւորացն՝ երևեալ յաւուրս Ներսիսի Շինողի, յիշատակեալ առ ի մէնջ ի գլ. Արևորդեաց, յամին 655, յորոց ելին եզիտիք, որք և մասնաւոր անուամբ արևորդիք կոչէին: Որք և յետ մահու Ներսիսի միւսանգամ խլրտեալ՝ եդին զորջ իւրեանց ուրեք ի Հայս առ Ջրկայ լճիւ:

Յարեցան յաղանդաւորս յայսոսիկ և յԱղուանից ոմանք, որք վասն պատկերամարտութեան մերժեալ ի կաթուղիկոսաց իւրեանց՝ հետզհետէ խոյս տուեալ՝ ապաւինեցան ի սոսա: Յաւելան ի դաս սոցա և ի Հայոց յաւուրս կապանաց Սրբոյն Սահակայ ի վրդովման աշխարհին, զի ըստ Յովհաննու Իմաստասիրի՝ «Ի միասին ընթացեալ՝ կուտեցան ամենայն ուստեք, որպէս անգեղք աշխարհաց ի նեխաշաղիղ ինչ գէջ»:

Եւ զի ի նմին ժամանակի յուզէին ի բաժնի Յունաց յերկուց կողմանց ևս ի քաղկեդոնականաց և ի պօղիկեան աղանդաւորաց վասն ինչ ինչ խտրութեանց ծիսից, որպէս եղեալ է մեր յԵօթներորդ ժողովն Դունայ յամի 719, ի 5-րդ հատոր մատենիս: Հասեալ ոմանց ի սոցանէ ի Մեծն Հայս՝ խռովեցին զժողովուրդն փոխանակ զճշմարիտն քարոզելոյ, մինչև կոչել զնոսա հերետիկոս և աստուածաչարչարս և արհամարհել զպաշտամունս և զպատարագս նոցին, և թէպէտ Եղիա կաթուղիկոս հալածէր զնոսա ի վիճակէ իւրմէ, բայց ոչ կարաց խաղաղացուցանել զազգն: Այլ յաջորդ սորին՝ Յովհաննէս Իմաստասէր, փոյթ ունելով յանդորրու պահել զհօտ իւր, որ յերեսաց աղանդաւորացս տարուբերէր, ժողովով հերքեաց զամենայն աղանդաւորսն պողիկեանց և զնոցին հետևողս յերկրորդում ամի կաթուղիկոսութեան իւրում: (Տես ի 5-րդ հտր. Գրոցս):

Յօդ. ԺԸ

Սթէփաննոս Ա. կաշառ-ընդէր կաթո-ղիկոս ի Դո-ին

(Ամ Տեառն 788): Ի վախճանին Եսայեայ կաթուղիկոսի, այն ինչ հարկահան ամիրապետին Իպնդօկլ, բռնի ածեալ առ իւր զամենայն սպաս Հայրապետական եկեղեցւոյն Դւնայ, ընդ որ և հաճիւր առնոյր ինքեան, Ստեփաննոս՝ դրան երէց տան Կաթուղիկոսարանի, մատուցեալ ինչս նմին՝ նստաւ յԱթոռ Հայրապետութեան, յորում և վարեալ զիշխանութիւն զամս երկու՝ վախճանի անդէն:

Յօդ. ԺԹ

Ամբատ՝ Հէղինակ աղանդոյ Թոնդրակէց-ոց, յ830ամէ ց1080

(Ամք Տեառն 830-1080): Զթոնդրակեցւոցն աղանդ ի Հայս ի ծագմանէ ցվերջն այսպէս իմն ի մերոց մատենագրաց համառօտէ հայրն Զամչեան, յորմէ և մեք ծաղկաքաղ դնեմք ըստ մեր համառօտագրութեան ի կարգի:

Յաւուրս հայրապետութեան Յովհաննու Ովայեցւոյ և ի սպարապետութեան Սմբատայ Խոստովանողի Բագրատունւոյ, ի սկզբան աւերանաց աշխարհի Հայոց, Սմբատ անուն ոմն ի Ծաղկոտն գաւառէ, ի գեղջէն Զարեհաւանայ, ընկալեալ նախ զաղանդ պողիկեանց նոր մանիքեցւոց, ուսաւ ապա և ի Մշուսիկ մոգ պարսկէ զպէսպէս մոլորութիւնս և եկեալ ի Թոնդրակ աւան ի գաւառին Ապահունեաց՝ բնակեցաւ անդ՝ արտաքուստ ձևացուցեալ զինքն քրիստոնեայ և ի ներքուստ ամենայն իրօք հակառակեալ ամենայն օրինաց քրիստոնէութեան: Աշխարհական էր և ձևանայր եպիսկոպոս, բայց ոչ առնէր զձեռնադրութիւն, զի ցուցցէ, թէ կարգ քահանայութեան է ընդունայն ինչ, ուրանայր զհանդերձեալ կեանս ըստ սադուկեցւոց, զնախախնամութիւնն Աստուծոյ՝ ըստ եպիկուրեանց, զչնորհս Հոգւոյն Սրբոյ և զամենայն խորհուրդս եկեղեցւոյ, ուրանայր զվարդապետութիւնն ուղիղ վարուց, ոչ գոլ, ասէր, մեղք կամ պատիժ, օրէնք կամ իշխանութիւն, զամենայն արհամարհէր և զամենայնիւ ծիծաղէր, զսա Գրիգոր Մագիստրոս կոչէ անիծեալ շուն, գազան արիւնռուշտ, վավաշ շամբուշ, յղփեալ չարագործ և դարան կորստեան:

Ոչ ոք մնաց գրեթէ յաւանն Թոնդրակ, որ ոչ ընկղմեցաւ հետզհետէ յաղանդ սորա, այլ որք արտաքոյ աւանի էին, չկարացին իմանալ զչարարուեստ աղանդն և արբանեկաց նորին, զի ամենայն իրօք իբրև բարեպաշտ ուրեմն դիմէ ի լեառն Խլաթայ և անտի՝ ի Մուֆարգին քաղաք, յարեալ յայլազգի մանիքեցիս՝ սատակի անդէն չարաչար մահուամբ:

(Ամք Տեառն 1004): Յետ սորա Կունծիկ ոմն անուն աբեղայ ի սահմանս Մանանաղւոյ սահեալ յաղանդ Թոնդրակեցւոց, յինքն յանկուցեալ զմեծատուն և զկին մի լեզուանի, և նա՝ զերկուս կանայս՝ զքորս, որոց և բաց ի բազմաց, զեղբայր ևս իւրեանց՝ զՎրվէռ, սկսան քորքն այնոքիկ երկուք կործանել զխաչս յեկեղեցւոջ ի հայրենի ժառանգութեան իւրեանց յերկոսին գիւղս և փակեալ զդրունս նոցին՝ զբնակիչս նոցա գթեցին ի մոլորութիւն իւրեանց, սոյնպէս առնէ Վրվէռ յիւրում կալուածի, զի չինեալ գոլով անդէն զվանս կրօնաւորաց՝ փակեաց զայն և զկրօնաւորսն հալածեալ անտի՝ եկն և բնակեցաւ առ քորս իւր, և որքան յառաջնումն բարեպաշտ էր, այնքան և ի վերջնումն գտաւ չարագործ:

Եւ զի սոքա ի ձեռն գեղջկանաց իւրեանց կործանեցին զխաչ մի պայծառ՝ յօրինուած յաւանին Բազմաղբիւր կոչեցելոյ, որ և ուխտատեղի էր հաւատացելոց ի հատուածս լերին Պախրայ, առ այն ամբոխ մեծ արարեալ ժողովրդոց՝ հանդերձ եպիսկոպոսօք և երիցամբք, որ շուրջ զգաւառօքն էին, և դիմեալ ի տեղի նոցին՝ այրեցին զբնակարանս նոցա և զստացուածս, և զառաջնորդս նոցին կալեալ զարս վեց՝ էարկ ի ճակատս նոցա խարան, Սամուէլ եպիսկոպոս նոցա, ըստ օրինակին Սարգիս հայրապետի, զի հալածեսցին ի մարդկանէ: Եւ զի այսու պատճառաւ մոլորեալն Վրվէռ բողոք կալաւ առ յոյն դատաւորն Ելիաս ի նոյն գաւառի ի կալանաւորելն նորա զյիշեալ եպիսկոպոսն՝ վիճակաւորք եկեղեցւոյն, որք հասեալ էին առ նոսա, ի լինիլ իրացս՝ երիցունք, կրօնաւորք, եկեղեցականք և աշխարհականք՝ տեսեալ, եթէ զինուորք դատաւորին խաբէութեամբ միայն անցուցեալ զեպիսկոպոսն յայն կոյս Եփրատայ և զինքեանս թողին զայս կոյս, միաբան բազմութեամբ լեալ միջամուխ ի գետն՝ անցին անվտանգ ընդ այն, զոր սքանչելեօք իմն համարի լեալ ժամանակակիցն Լաստիվերտցի: Իբրև լուաւ դատաւորն զայնպիսի հրաշիւք անցանել ժողովրդեան ընդ գետն խոր, զգուշութեամբ փոյթ տարաւ տեսանել զդատ նոցա և ի վերայ հասեալ չարութեան աղանդաւորացն՝ այն ինչ կամէր ունել զՎրվէռ, նա անկաւ առ եպիսկոպոս Յունաց Եպիսառատ և խոս-

տացաւ նմա դառնալ ի Յոյն, միայն զի ապրեցուսցէ զինքն ի ձեռաց դատաւորին: Այսպէս ի ձեռաց դատաւորին զերծանի Վրվէռ, իսկ որք միանգամ յընկերաց նորա ածան առ դատաւորն, գանիւք և հարուածովք տանջեցան և հալածեցան ի սահմանաց անտի և աւերեցան բնակութիւնք նոցա, և Վրվէռ, ոչ շատացեալ ի կեանս՝ ջեռեալ յախտն ցաւագին, և պէտք կարեաց որովայնին ընդ բերանն ելեալ՝ գոգութեամբ տանջեալ սատակէր:

(Ամք Տեառն 1050): Յաւուրս իշխանութեան Գրիգոր Մագիստրոսի ի Միջագէտս երկու քահանայք ի Թոնդրակեցւոց լուսաւորեալ յԱստուածային շնորհաց և դիմեալ առ Մագիստրոսն՝ պատմեցին զչար գործս աղանդոյ իւրեանց և մկրտեցան յանուն ամենասուրբ Երրորդութեանն, որք և աղաչեցին զնա հոգ տանել բառնալ ի գաւառէ անտի զայն աղանդ, ուր ուրեք և ինքեանք ցուցանէին յիշխանութեան նորա ի Միջագէտս: Զայս գիտացեալ Մագիստրոսի՝ վարեաց զամենեսեան յիշխանութենէ իւրմէ, զորոց կասկածէր ըմբռնեալ յայն աղանդ, և գնացեալ յԱպահունիս՝ յաւանն Թոնդրակ, քանդեաց զժողովատեղի նոցա և հալածեալ զառաջնորդ նոցա՝ զՂազար, և զամենեսին պատուհասեալ՝ մաքրեաց զտեղին և չինեաց ի նոյն ժողովատեղւոջ զեկեղեցի յանուն Սրբոյն Գէորգայ:

(Ամք Տեառն 1051): Յայսպիսի գործոց Մագիստրոսին զահի հարեալ, որ ի Թոնդրակեցւոց աղանդաւորքն էին, արանց իբրև հազարաց թողեալ զաղանդն՝ եկին և մկրտեցան յանուն Ամենասուրբ Երրորդութեանն առաջնորդութեամբ Եփրեմ եպիսկոպոսի Բճնոյ՝ հրամանաւ ժողովոյն, որ եղեւ առ այս ի թուին Հայոց իբր Զ., այլք ևս, հալածեալք յամենեցունց և ի հեթանոսաց ևս, գային յետ այսորիկ, և մկրտեալք մտանէին յեկեղեցի սուրբ, իսկ որոց ոչն դառնալ կամէին, չգտեալ օգնութիւն ուստէք (1055), դիմեցին առ կաթուղիկոսն Ասորւոց և չարախօսեալ զՄագիստրոսէն՝ աղաչէին զնա վասն հալածանաց իւրեանց գրել մեղադրութիւն առ նա, այլ թէ և դրդեալ ի բանից նոցին՝ գրեաց նոյն կաթուղիկոս առ Մագիստրոսն, այլ նա, երկար բանիւք յայտ արարեալ զխաբէութիւնն նոցա և զծագումն աղանդոյն և զչար մոլորութիւնն, յոր մոլորեցան, յորդորէ և զնա մի՛ ընդունել զնոսա և մի՛ ողորմել նոցա և մի՛ միաբանիլ և մի՛ արժանի տեսութեան զնոսա առնել: Եւ վասն Ղազարու, որ գլխաւոր էր նոցին, ասէ. «Ղազարդ այդ, որ այժմ զառաջնորդութիւն կուրացդ կոյրդ հաւանել ունի, բազմամեայ մեռեալն հոգւով, զոր ոչ Քրիստոսի է յարուցանել զդա չորեքօրեայ, այլ նեռին, որոյ է կարապետ, զի կրկնակի կործանեալ կորիցէ դա»:

Գրեաց և առ ոմանս ի նոցունց առաջնորդաց Թոնդրակեցւոց՝ բնակելոց յաւանս Թուլայլ, որք խնդրեալ էին ի Պետրոս կաթուղիկոսէ, որ նստաւ յետ Սարգսի, հաղորդել ընդ Հայս և մտանել յեկեղեցի, յորում նա ինքն Մագիստրոս ասէ. «չէ՛ մեզ մարթ ընդունիլ զձեզ, զի խաբէութեամբ մտեալ յեկեղեցի՝ որսայք զանմեղսն»: Եւ պահանջէ ի նոցանէ նզովել զՍմբատ՝ զառաջին առաջնորդ մոլորութեանց նոցա, և զյաջորդսն մինչև ցՅեսու, այլ և զՂազար՝ համախոհիւքն իւրովք հանդերձ, և յաւելու ասել, թէ և գրեալք էին, ասէ, «թէ մեք անիծանեմք և նզովեմք զՍմբատ, բայց ոչ զանեծսն ինչ համարիմք զձեր և ոչ զօրհնութիւն, զայդ քաջ գիտեմք, որ ո՛չ զնա ընդունիք և ո՛չ զայլ ոք, վասն զի ի մէնջ ոչ էք, և ո՛չ այլ ոք ոչ երևի, եթէ ի նա հպեալ յանգեցայք: Բայց երանի՛ թէ յայնցանէ էիք, զորս անիծէիք, զի մեք զերծեալ ի մահացու թունից ձերոց և ի գաղտնի նետից՝ ննջէաք արդեօք խաղաղական: Եւ ոչ միայն հերձուածողացն համեմատ երանեմ ձեզ լինել, այլև հրէութեան և հեթանոսութեան, և եթէ այլ ոք, քան զայսոսիկ չարագոյն...: Փրկիչն հրամայէ երկիցս բողոքել եղբօրն, ապա թէ ոչ լուիցէ, եղիցի իբրև զայլազգի և զհեթանոս, և ահա փոխանակ երկուց և երից բողոքելոց՝ զհարիւր և զեօթանասուն ամ երեքտասան հայրապետք Հայոց մեծաց, նոյնչափ Աղուանիցն, և բիւր եպիսկոպոսք և անթիւ քահանայք և սարկաւագունք բողոքեցին ձեզ, և ոչ լուայք, խօսեցան և յանդիմանեցին՝ և ոչ պատկառեցիք, անիծեցին և արտաքսեցին՝ և ոչ զղջացայք... յուսամ ի տէր Աստուած այն, որ նստին ի քերովբէական աթոռ, զի ի ձեռն իմ ձագեսցէ առ ձեզ զողորմութիւն մարդասիրութեան իւրոյ, մոռանալ ձեզ զչարութիւն ախտի և ամենայն սովորութեան, զոր յանօրէն և ի չար առաջնորդաց ձերոց դեղեալք և յղացեալքդ էք, ապա թէ ոչ, յուսալի է ինձ ի նոյն զօրութիւն բազկի Աստուծոյն իմոյ, զի մատնեսցէ զձեզ ի ձեռս իմ, և եթէ ոչ զղջասջիք, յարուսցէ զայլ ոմն պահպանող և ցանկակարկատ, զի նա բարձցէ զձեզ ի միջոյ»: Եւ այսպէս ինքնին Գրիգոր Մագիստրոս անհետ արար յամենայն տեղեաց զամենայն Թոնդրակեցիս, և ուր ուրեք մնացորդք երևին, նոքա ևս միշտ հալածէին ի Հայոց:

Սոքա՝ աղանդաւոր հայք, յայն սակս կոչեցան Թոնդրակեցիք, զի այս աղանդ արմատացաւ զառաջինն ի Թոնդրակ աւանի, ի գաւառին Ապահունեաց, որպէս և ի վեր անդր կոչեցան Թոնդրակք, զոր Մագիստրոս ստուգաբանէ տեղի այրման, իբր թէ թոնիր՝ լցեալ հրով:

Ոմանք ի սոցանէ, բնակեալ յաւանին Թուլայլ ի Մանանաղուոյ գաւառին, կոչեցան Թուլայլեցիք, և զայս ստուգաբանէ Մա-

գիստրոսն՝ այլ թոյլ, այս ինքն՝ թուլացեալ յամենայն այլանդակութիւնս: Բնակեցան ի սոցանէ և յաւանն Խնուն կամ Խնուս՝ կոչեցեալ խնունեցիք, որ և ստուգաբանութիւն ունի խնեալք՝ ըստ Մագիստրոսին, այս ինքն՝ խցեալք: Յերիս յայսոսիկ յերամակս աղանդաւորաց կայր խտրութիւն ինչ, զի բանք և կարծիք և գործ իւրաքանչիւրոց նոցա տարբեր ի միմեանց էին յիրս ինչ, մի քան զմի չար:

Կոչեցան և մանիքեցիք կամ մանինեցիք վասն ունելոյ ինչ ինչ ի մոլորութենէ նոցա ըստ Մագիստրոսին, զոր և հաստատէ Պետրոս Սիկիլիացի հոյն մատենագիր, որ զաղանդս թոնդրակեցւոց ի Հայս մասամբ իւիք յիշատակեալ՝ կոչէ մանիքեցիս՝ խառն ընդ այլազգիս, և զառաջին աղանդապետ նոցա դնէ Սարգիս՝ փոխանակ Սմբատայ, ևն:

Սկիզբն աղանդոյս այսորիկ դնէ Մագիստրոս յաւուրց Յովհաննու Հայրապետի Ովայեցւոյ և Սմբատայ Բագրատունւոյ, և որպէս ի նամակին ասէ, «եկաց այն մոլորութիւն ցաւուրս երեքտասան կաթուղիկոսաց», այս ինքն՝ յՈվայեցւոյն ցՊետրոս Գետադարձ, իբրև յամս 170, այլ զի դնէ երբեմն և զամս 200, զայս առնու ի հնգետասան ամաց կաթուղիկոսութեան Յովհաննու, յորում նզովեցան թոնդրակեցիք, մինչև ի մեծ ժողովն Հարքայ, ուր ջնջեցաւ գրեթէ իսպառ այն աղանդ:

Յօդ. Ի

Բո–ղայ ոստիկան՝ Հալածող Հայոց զամս 5

(Ամք Տեառն 849): Բնակիչք Սիմ լերին՝ կոչեցեալ Սասունք, այն ինչ ընդ վտարանդութիւն Բագարատայ, որ կապանօք ի դուռն ամիրապետին, գրոհ տուեալ միաբան բազմութեամբ՝ սպանին զոստիկանն հագարացի Ապուսէթ՝ ցրուելով զբազմութիւն զօրացն նորա, սրտմտեալ բարկութեամբ ի վերայ նոցա ամիրապետն, որ կոչիւր Ջաֆրէ, զմեծ զօր անհամար բազմութեամբ իբրև զաւազ ծովու՝ յանձն առնէ միումն յընդոծնաց իւրոց Բուղայ անուն և առաքէ ի Հայս՝ պատուէր տուեալ զամենայն իշխանս Հայոց առհասարակ կապանօք առ ինքն առաքել, և զայլ ամենայն մարդ, որ զսուր առնուլ կարիցէ՝ անխնայ սատակել, և որք յօրէնս հագարացի դարձցին, ընդ իւր դարձուցանել առ ինքն, միայն թէ զարս քաջս և գեղեցիկս, միայն զռամիկս ժողովրդեան ապրեցուցանել, եթէ չիցեն արժանիք մահու:

(Ամք Տեառն 850): Այսպիսի պատգամաւ հասեալ Բուղայի ի Տարոն գաւառ և յաշխարհն ամենայն հրոսեալ զզօրն իբրև զհեղեղ գետոց՝ կալաւ և կապեաց զերկուս որդիսն Բագարատայ՝ զԱշոտ և զԴաւիթ, և զամենայն պայազատս և զհամախոհս նոցին, ընդ որս և զԳրիգոր Մամիկոնեան՝ թոռն Գրիգորի, և արգել զնոսա ի բանտի և առ ի վրէժ բնակչաց Սիմ լերին, որոց սպանեալն էր զԱպուսէթ, նախ առաջին ի ծործորս լերինն ասպատակ սփռեաց՝ ի սուր սուսերի մաշեալ զամենեսին զբնակեալսն անդէն ի վայրս դիւրամատոյցս, և ապա արձակեալ զօրս ի գաւառն Տարոնոյ՝ կոտորեաց զամենայն խուժացիս ի վերայ Վաշգինակ անուն լերին, և անտի յարձակեալ ի հեծելազօրս գնդին Հայոց, որք ի Սիմ լեռնէ իջեալն էին, զբազումս ի նոցանէ կոտորեցին, և զբազումս ևս ձերբակալեալ՝ ածին կապանօք առ Բուղայ, յորոց նա ըստ պատուիրանացն՝ զընտիր ընտիրս ի բանտի տուեալ առ ի դարձուցանել յօրէնս հագարացւոց, զայլն ամենայն ետ խողխողել առաջի աչաց իւրոց: Այսպէս անցոյց և ի յայլ բազում գաւառս այնր կողման: Յետ որոյ զյառաջագոյն կապեալսն ի բանտի զորդիսն Բագարատայ՝ Աշոտ և Դաւիթ, առաքէ առ ամիրապետն հանդերձ ընտանեօք:

(Ամք Տեառն 851): Ի յաջորդ ամին Աշոտ՝ մեծ իշխան տանն Արծրունի, զի լուեալ էր զամենայն անցսն ի Տարոն, թէև պատրաստեալ էր տալ պատերազմ ընդ Բուղայի, յուսացեալ ի քաջութիւն և ի պէսպէս հնարս ձեռին, բայց նախարարք իւր քակտեցան ի նմանէ, որք և միաբանիլ ընդ նմա յօժարեալ իսկ էին, ինքն ևս միայնակ չկարելով զդէմ ունել և զաշխարհն ևս անձեռնհաս ի պահել՝ գնաց հեզութեամբ և ընծայիւք առ Բուղայ, այլ նա իսկ և իսկ կապեալ զնա ի շղթայս և կալեալ զկին և զորդիս նորին և զազգականս՝ զամենեսին առաքեաց առ ամիրապետն, և ինքն Բուղայ զօրաց բազմութեամբ խաղացեալ յերկիր նորա՝ յաշխարհ Վասպուրական՝ սփռէր զզօր ի գաւառս գաւառս ունել և կապել զամենայն այր, որ զգէն շարժել կարէցէ, զորս և ըստ պատուիրանին յերկուս վիճակս կենաց և մահու զատեաց, զվայելչահասակսն ի դարձումն հաւատոյ, և զանկարս և զապիկարս՝ ի սուր սուսերի սատակումն, որոց ոչ գոյր թիւ, զոր և արար ըստ օրինակին, որ ի Տարոն գաւառի, մինչև արեան սպանելոցն գետօրէն զերկիր ոռոգել, և զպահեալսն ի հաւատափոխութիւն իբրև ոչ ի նոյն հաւանեցուցանել կարէր, դառն տանջանօք խողխողեաց զբազումս ի նոցանէ, յետ որոյ պատրաստէր և ինքն խաղալ զօրօք յաշխարհ Արարատեան և հասանել ի Դուին մայրաքաղաք աշխարհին:

(Ամք Տեառն 852): Սմբատ Բագրատունի սպարապետ՝ Աբլաբասն կոչեցեալ, տեսեալ զաղէտս թշուառութեան աշխարհին և գիտացեալ, թէ ոչ կարէ այնուհետև զդէմ ունել վասն օգտի հասարակաց, իբրև մերձ էր հասանել Բուղայ ի Դուին, բազում ընծայիւք գնաց առ նա, և նա պատուով ընկալեալ զնա՝ արար իւր առաջնորդ յամենայն գործս վնասու և ուղեցոյց խորհրդակից ինքեան արարեալ, զի գտանէր զնա յամենայնի հաւատարիմ:

Մտեալ ի Դուին նովաւ հանդերձ, անտի ընդ ամենայն գաւառս Այրարատայ ասպատակ սփռեալ՝ կալան զամենայն այր, որ զսուր առնուլ կարէր, յորոց զոմանս խողխողեցին, և զոմանս տոռամբ ձգեալ առ Բուղայ՝ ընտրեաց նա ի նոցանէ զառոյգս և զվայելչահասակս, որպէս յայլ տեղիս, և կրկին կապանօք եդ ի բանտի ընդ առաջինսն և զորս անպիտանս համարէր, կոտորեաց զնոսա անխնայ: (Ամք Տեառն 853): Յետ աւուրց ինչ յատեան կոչեալ զամենայն շղթայեալսն՝ եհարց զնոսա, եթէ ընկալցին զօրէնս իւրեանց, ընդ որ շատք ի նոցանէ ուրացան զՔրիստոս վասն մահուն երկիւղի, և շատք ևս հաստատուն ի հաւատս կացեալք՝ զմիմեանս յորդորելով՝ ասեն՝ քաջս և արիս տեսանելով սորա զմեզ՝ զինուորս առնել կամի օրինաց իւրոց, այլ արդ, եթէ ճշմարիտ քաջք իցեմք, ցուցցուք զքաջութիւն մեր առաջի Քրիստոսի զինու զօրութեան նորա և մեռցուք քաջութեամբ վասն նորա, և նա ընկալցի զմեզ:

Զայս հաստատութիւն մտաց նոցին տեսեալ ոստիկանին և զքաջալերելն զմիմեանս՝ անհնարին տանջանօք չարչարեաց զնոսա, և իբրև ոչ այսու կարաց զնոսին դրդուեցուցանել ի հաւատաց, հրամայեաց մի առ մի այրել զնոսին: Այսու օրինակաւ կատարեցան ի Քրիստոս ոգիք իբրև հարիւր և յիսուն, բաց ի մարտիրոսացելոցն սոցին օրինակաւ յայլ և այլ գաւառս: Ի սոսա էին եօթն արք, որոց գլխաւորն Ատովմ՝ ի գաւառէն Աղբակայ, յՈրսերան գեղջէ, որոց ընդ հրաշալի տիպ կերպարանաց հիացեալ հագարացի զօրաց և նոյն իսկ ոստիկանին, թէ և բազում պարգևաց խոստմամբ և գերդաստանաց և իշխանութեան պատուոյ ջանացաւ քակել զհաստատուն միտս նոցա յուրացութիւն Քրիստոսի, այլ տեսեալ, եթէ ոչ յանձն առնուին թողուլ զՔրիստոս, յետ տանջանաց բազմաց հրամայեաց խաչել զնոսա, որոց և ընդ առաջնոց տօն կարգեաց կատարել Յովհաննէս հայրապետ յՅն մարտի ընդ նախնի Ատովմեանց յամին 853:

Այլ որք ամրացեալն էին յանմատոյց տեղիս նախարարք ոմանք, ածեալ զմտաւ, եթէ որդիք և կանայք անկանին հետզհետէ

ի ձեռս անօրինին, ոմանք ի նոցանէ փակեալ զկիրճս ձորոյն, ընդ որ անցանելոց էին մասն ինչ ասպատակող զօրաց Բուղայի, ուր և ի վերայ յարձակեալ նոցա, զորս սպանեալ և զորս փախստական արարեալ՝ թափեցին զգերեալսն ի ձեռաց նոցա, և ածին, ամրացուցին ի վայրս անառիկս: Բայց բազմութիւն զօրացն ընդ այլ ճանապարհ դիմեալ ի վերայ նոցա՝ կալան զնոսա, և ածեալ առ Բուղայ՝ նորին հրամանաւ հատին զգլուխս նոցա յետ տանջանաց և յորդորանաց յուրացութիւն, ի սոսա անկան երևելիք ոմանք՝ Գէորգ՝ յԱկեաց տոհմէ, և Խոսրով՝ ի Գաբեղենից տանէ, ի սոսա և ոմն յայլազգեաց անտի, որ, տեսեալ զհամբերութիւն վկայից, դարձաւ ի քրիստոնէութիւն:

Յետ յաջողութեամբ կատարելոյ ոստիկանին զկամս իւր յԱյրարատեան աշխարհի, առաքեաց զօր բազում ի Սիւնիս և ի Սիսականս՝ առնել ըստ առաջնոցն օրինակի, ունել զամենայն տեարս աշխարհին, մանաւանդ զիշխանն Սիսական՝ զՎասակ, և զԱշոտ՝ զեղբայր նորա՝ զորդիս Բաբկենի, որոց հասեալ անդր, թէ ոչ աւելի, բայց և ոչ ինչ պակաս, քան զայլ գաւառս, արարին կոտորած մեծ և լցին զաշխարհն դիակամբք, ընդ որ զահի հարեալ իշխանաց աշխարհին՝ փախստեայ զերծանին յանառիկ ամրոցս ի գաւառին Բաղաց: Բայց Վասակ իշխան, պաշարեալ ի զօրացն և զերծեալ վերստին, անկաւ ի Կոտայս գաւառ, այլ իբրև զօրքն պնդեալ զհետ հասին նմա ճեպով՝ չգտեալ նորա տեղի թագստեան, դարձաւ ընդ կրունկն յետս և զամենեսին չարաչար յերկիր կործանէր, հասեալ մինչև ի զօրավար նոցա և առաթուր զնա յերկիր հարեալ՝ գնայ, անկանի յարևելս կոյս յերկիր Գարդմանաց առ Կտրիճ անուն իշխան տեղւոյն: Սա զառաջինն պատուով ընկալեալ զփախուցեալն Վասակ, ապա խաբէութեամբ կապեալ զայրն քաջ (854)՝ առաքէ զայն ոստիկանին ի Դուին՝ պատուոյ մեծի առ ի նմանէ ակն ունելով: Բուղայի առեալ զՎասակ՝ ուրախ եղև յոյժ, և պատգամ առաքեալ առ եղբայր նորա Աշոտ և առ մայրն գալ առ ինքն, ապա թէ ոչ, ասէ, սպանից զՎասակ, այլ չև դեսպանաց առ նոսա ժամանեալ՝ ասպատակք զօրացն կալեալ զնոսա, ընդ որս և զայլս յիշխանաց ածին կապանօք ի Դուին առ Բուղայ, զորս և առեալ նորա ընդ առաջին կապելոցն՝ խաղաց ի ներքնակողմանս արևելից՝ պատգամ յղեալ առ սպարապետն Սմբատ, որ չէր յայնմ ժամանակի առ իւր:

Իբրև եհաս առ Բուղայ, սպարապետն, իմացեալ ի նմանէ, եթէ Ատրներսէհ իշխան՝ տէր Խաչենոյ, նստի ի նոյն իսկ յամրոցն Խա-

չենոյ յԱրցախ աշխարհի, անդր խաղացեալ զօրօք և պաշարեալ զամրոցն՝ էառ և կալաւ զԱտրներսէհ և զազգատոհմ նորա և զարս երևելիս, զամենայն արս պատերազմողս յամրոցին կոտորեաց ի բերան սրոյ և լուաց զերկիրն յարիւն անմեղաց: Անտի եմուտ յաշխարհն Ուտի ի Գարդմանացւոց գաւառ, ուր կալանաւորեալն էր Վասակ Սիսական, առեալ զբերդն՝ կալաւ զմատնտուն Վասակայ ի կապանս բանտի, կալաւ և զիշխան աւանին Տուս՝ Ստեփաննոս անուանեալն Կոն, սորա ազգն կոչէին Սևորդիք ի նախնոյն իւրեանց: Այլ թէ բաց ի կալանաւորելոցս քանի կոտորածս արար Բուղայ յՈւտի, չեղև հնար Յովհաննու Կաթուղիկոսի ընդ գրով արկանել:

(Ամք Տեառն 855): Անցեալ և յաշխարհն Աղուանից՝ հնարիւք իմն կալաւ զիշխան նոցա՝ զԵսայի, և զամենայն ազգականս նորա, և զամենայն մեծամեծս տեղւոյն՝ ի սուր սուսերի մաշելով զաշխարհն ամենայն, յորս ծովանայր արիւն անմեղաց: Անտի դիմեալ ի վերայ Տփխեաց՝ արար վնաս բազում, ուր և ի փայտի հանեալ զիշխանն Վանանդայ՝ զՍահակ, դարձեալ ի Պարտաւ՝ սպան զՄոկաթլ Վանանդացի ի վերայ խոստովանութեան հաւատոյ: Աստանօր ժողով կազմեալ ոստիկանին զկապելոցն գերելոց՝ էած զամենեսին ի Դուին քաղաք, ուր և համագունդ ի մի խառնեալ և զի դիպահոլ եղեալս անդէն խաղացոյց ընդ իւր առ ամիրապետն ի Բաղդադ՝ ընդ իւր ունելով և զսպարապետն Սմբատ՝ զիւր զհաւատարիմ խորհրդական ի գործ չարութեան, որոյ ի վարձ փոխարինի հատոյց ամիրապետն՝ զբանտ և կապանս ի մահ՝ զարդարապէս հատուցումն, թէ և խոստովանութեամբ ի Քրիստոս, որով և Խոստովանողն կոչեցաւ, իբր զի ի ներկայանալ ամիրապետին բոլոր կապելոցն ի Բուղայէ և ի ստիպելն նորա զնոսա յուրացութիւն, կապեաց և զՍմբատ և եդ ի բանտի, յորոց ոմանք զանգիտեալք՝ դարձան, այլք գրեթէ ամենեքին արտաքուստ ուրացան զքրիստոնէութիւն, բայց երեքն ի նոցունց՝ Ստեփաննոս Կոն կոչեցեալ, Գրիգոր Մամիկոնեան և Սմբատ սպարապետ, չառնլով յանձն զուրացութիւն, Ստեփաննոս տանջանօք կատարեցաւ, Գրիգոր փախստեայ ի բանտէ՝ հասեալ ի Բագրևանդ գաւառ՝ ի Գազանածագ անուանեալ տեղին, ուր և յետ եօթն աւուրց վաղճանի, գլուխն առ ամիրապետն առաքի յԱշոտոյ՝ որդւոյն Սմբատայ, և Սմբատ զղջմամբ սրտի աւանդէ զհոգի ի բանտին: Զորմէ ի հատորն 4:

ՅՕԴ. ԻԱ

Յ–ՍՈ–Փ ՈՍՏԻԿԱՆ՝ ՀԱԼԱԾՈՂ ՀԱՅՈՑ ՊԱՄ 25

(Ամք Տեառն 908): Իննևտասներորդ ամ էր թագաւորութեան Սմբատայ Առաջնոյ՝ որդւոյ Աշոտոյ արքայի Բագրատունեաց, յորում ժամանակի քեռորդի նորա՝ Գագիկ Արծրունի, յաղագս հայրենի ժառանգութեան Նախիջևան քաղաքի ապստամբեալ ի նմանէ՝ գնայ յԱտրպատական բազում ընծայիւք առ ոստիկանն Յուսուփ, որում հարկս հարկանէր աշխարհս Հայոց յանուն ամիրապետին, և թագաւորեալ ի նմանէ ի վերայ տանն Արծրունեաց՝ կարի գժտմնեցոյց զոստիկանն ընդ դէմ Սմբատայ արքայի, որովք և աղմուկ և խռովութիւն յաշխարհին մեծ յոյժ: Ընդ որ զահի հարեալ արքայի և նախարարաց, միաբան եղելոցն ընդ նմա, իբրև առաքեն ի հաշտութիւն ընդ ոստիկանին զՅովհաննէս կաթուղիկոս բազում և մեծագին ընծայիւք, ևս և յուխտ խաղաղութեան, նա, ընկալեալ պատուով ի վերին երեսս զհայրապետն, կապէ ապա ի բանտ խաւարին՝ իբրև զդաւաճան ոք՝ սպառնացեալ՝ տալ նմա զկարիս բազում: Եւ ինքն ընդ մերումս հակառակաթոռ արքային Գագկայ և եղբօր նորա Գուրգենայ, որ հազարապետն էր արքայի Սմբատայ ի վերայ Հայոց աշխարհին, զօր մեծ գումարտակ արարեալ՝ գայ ընդ գարնանամուտն ի Նախիջևան քաղաք, խաղալ անտի ի վերայ աշխարհին Սմբատայ, ուր ածէ ընդ ինքեան և զկապեալն հայրապետ՝ զպատմագիրն Յովհաննէս Զ-րդ, անդ կոչեալ առ ինքն ոստիկանին զԳագիկ և զԳուրգէն՝ հանդերձ զօրօք իւրեանց, զզօրսն տրոհեալ՝ մտին զառաջինն յաշխարհն Սիւնեաց:

Այլ որ անդէն Գրիգոր Սուփան նախարար Սիւնի՝ որդի Գաբուռն Վասակայ՝ քեռորդի արքային, հանդերձ եղբարբք, ժողովեալ զզօրս, զանցս մտիցն ճանապարհաց կալեալ ունելով՝ սրոյ ճարակ տան զբազումս ի զօրացն Յուսփայ, այլ վասն զի այցելութիւն Տեառն անտես արարեալն էր զնոսա ըստ Յովհան. պատմաբանին, վասն անմիաբան լինելոյ նոցա ընդ թագաւորին իւրեանց, չկարելով ևս զդէմ ունիլ ասպատակացն՝ անկանէին յամուրս քարանձաւաց, և նոցա յարձակեալ ի սահմանս նոցին՝ կոխան արարին զաշխարհն Սիւնեաց, և զորս միանգամ արտաքոյ քաղաքաց գտանէին, էր զոր կոտորեցին, և էր, զորս ի գերութիւն վարեցին (909) յաւուրս տօնի մեծի Զատկին:

(Ամք Տեառն 910): Զկնի այսորիկ իբրև լինէր ոստիկանն ի Դուին առ ի ունել խաբէութեամբ զՍմբատ, էառ հարկս ի նմանէ՝ զդահեկանս վաթսուն հազար, և առժամայն մղեալ զզօրս ի Շիրակ գաւառ՝ փախուցանէր զարքայ հետամուտ զօրօք մինչև ի ձորս Կղարջաց գաւառին յաշխարհն Գուգարաց, և յարձակեալ ի քաղաքս իշխանութեան նորա՝ կոխեաց և մանրեաց, զորս եգիտ արտաքոյ և յաւեր դարձուցանէր զաշխարհն և զամառն ողջոյն շրջեալ ի կողմն ինչ Հայաստանի, յաւերել և ի քանդել գիւղս և զաւանս, դառնայ ի Դուին: Եւ անդ իբրև պակասէր ռոճիկ զօրուն, սկսաւ այնուհետև կեղեքել զնախարարսն ընդ իւր եղեալս, որպէս և զԳագիկ և զՅովհաննէս կաթուղիկոս, զոր առ իւր ի բանտի ունէր, զորմէ և ինքն գրէ[1] , և ի պահանջել ոստիկանին ի Հայաստանէն գանձս ոսկւոյ և արծաթոյ, ժամ դիպող գտեալ ինքեան՝ խնդրեաց զազատութիւն առ ի ժողովել և բերել առ նա զդրամս, արձակեալ ի բանտէ և ոչ ի կապանաց՝ ժողովէ ըստ կարի զարծաթ և առաքէ առ ոստիկանն, որով և գտեալ ապահովութիւն՝ փախստեայ անկաւ յԱղուանս առ մեծ իշխանն Սահակ և առ թագաւորն Աղուանից Ատրներսէհ: Իսկ ինքն ոստիկան, որ առ իւր զնախարարսն Հայոց ունէր, հանապազ ընդ նոսա ի խորհուրդ մտանէր, թէ որպէս ի Սմբատ արքայ դնիցեն զորոգայթ բանիւք՝ այս ինքն ձերբակալ առնելով:

Ապա իբրև գարունն հասանէր, զօրք Յուսփայ և Գագկայ, ոյր և ձեռամբ և նորին նախարարաց պատերազմեալ ընդ զօրաց Սմբատայ արքայի ի Նիգ գաւառին՝ ի Ձկնավաճառ կոչեցեալ տեղին, որոց զօրավարէին երկոքին որդիք արքայի՝ Աշոտ և Մուշեղ, թէև հարուածս անակնուն ելիս հասուցին ի զօրս ոստիկանին, մինչև ահաբեկել բովանդակ երկուց գնդից նորա ի ձեռաց երկուց քաջացն եղբարց, բայց ի լքանել Սևորդեացն ի զօրաց արքունի, Աշոտ, ճեղքեալ զգունդ թշնամեացն, աճապարի ի փախուստ, և Մուշեղ, որ ըստ եղբօրն օրինակի աճապարեալ էր ի փախուստ՝ անհնարին քաջութեամբ հարկանելով զթշնամին, բայց ձերբակալեալ ի դարանելոցն Սևորդեաց՝ ածեալ լինի առ Յուսուփ:

Ընդ այս ոչ սակաւ խնդութիւն ցուցանէր ոստիկանն յանձին, իբր թէ կործանեալ իցէ սիւն մեծ զօրութեանն Սմբատայ,

1 «Կրեցի այնուհետև, ասէ, ի դահճաց անտի մահահոտ իմն լուտանօք գանս և բանտս, և գելարանս և արգելարանս ի խաւարչտին տեղւոջ և յանձուկ վայրս, այլ և ի վիրապս և ի վիհս խորոց ընկեցայ սաստիկ և դառն կտտանօք: Եւ պահպանացն սաստիկ աղաղակն և ճիչն դատափետ ոչ հեռացեալ՝ հատանէր ի լսելեաց իմոց յերկորեայ մինչև ցառաւօտն, և սակս այնորիկ բարձեալ էր յինէն նինջ արտևանաց և հանգիստ իրանաց իմոց»:

որ և ստիպով մեծաւ ի գունդս գունդս զիւր և զ Գագկայ զօրսն բաժանեալ՝ ասպատակ սփռէ ընդ ամենայն Հայաստան, որոց իբրև հուր հրդեհեալ յաւանս և ի գիւղս և յանպարիսպ քաղաքս՝ յաւեր և յապականութիւն դարձուցին, զեկեղեցիս կողոպտեցին և զբազումս ի նոցանէ հրով այրեցին և զոմանս քանդեցին: Եւ զորս միանգամ գտին՝ զարս և զկանայս, զաշխարհականս և զեկեղեցականս, զաղքատս և զմեծատունս, էր՝ զորս գերեցին, և էր՝ զորս սրով սպանին, ի գերութեանց աստի և ի հարուածոց զերծանէին, որ անառիկ քաղաքք և անմատչելի բերդք էին ապաստանարանք մարդկան աշխարհին: Եւ որովհետև այնոքիկ քաղաքք ևս ի վտանգ չարեացն կային, անտի ևս խոյս տուեալ ապաստանելոցն ի լերինս և ի խորս ձորոց՝ խոտովք և արմատովք կերակրէին, և բազմաց փափկասունք գոլով և իշխանագունք չտանելով տառապանացն՝ անդէն և մեռանէին, իսկ որ ի նախարարացն էին առ նոսա, բազումք կամակար անձնատուր եղեն ի Յուսուփ, գործակիցք նմին լեալ և ոչ Սմբատայ արքայի, յորս երևելիքն էին չքնաղագեղ պատանին Վասակ՝ որդի Աշոտոյ Սիսականի, և գեղեցկատեսիլն Սմբատ՝ որդի Սահակայ՝ եղբօր արքայի, և փոխանակ բարւոյ առ յոստիկանէն՝ չարիս անձանց նիւթեցին ի նմանէ, քանզի ի մտի եդեալ Յուսփայ զամենայն նախարարսն Հայոց կորուսանել՝ սուտ պատճառանօք զոմանս կապեաց և խեղդել ետ զնոսա լռելյայն, և զայլս մահապարտ ցուցեալ՝ յայտնապէս սպան, և զկէսս գանիւ և սովով կորոյս, և զօրս երևելիսս ի նոսին, զորոց և կասկածս ցուցեալ էր, մի մի կորուսանէր, որպէս զՍուփանն կոչեցեալ Գրիգոր Սիւնի՝ քեռորդի արքային Սմբատայ՝ զանձնատուր եղեալն յառաջագոյն, ի դեղ մահու սպանեալ՝ չքմեղս եղև, և հրամայեաց թաղել զնա յեկեղեցւոջ Սրբոյն Սիմոնի: Յետ նորա ապա և ձերբակալեալն Մուշեղ կորովի՝ զորդի արքայի, գանիւ և սովով տանջեալ յուրացութիւն հաւատոյ՝ դեղով մահու բառնայր ի կենաց, թաղեալ զմարմին նորա ի Բագարան առ հարցն գերեզմանի Աշոտոյ սպարապետի՝ եղբօրորդւոյ արքայի, այսու մահուամբ վճարի ի կենաց յոստիկանէն և երիտասարդն Սմբատ՝ որդի Սահակայ՝ եղբօր արքայի, զոր Գագիկ արքայ խնդրանօք թաղել տայ ի Դարոնս: Եւ պատանին Վասակ՝ որդի Աշոտոյ Սիսականի, ընդ Սմբատայ կալանաւորեալն ի բանտի, չգտեալ հնարս ազատութեան յոստիկանէն, յանկարծակի իբրև ցայտեալ գիշերի յարգելանացն՝ փախստեայ անկանի յաշխարհ իւր ի Սիսականս:

(911): Սահակ և Վասակ Սիւնիք, տեսեալ զասպատակսն հեղեալ յերկիր և լուեալ ևս զմահ եղբօր իւրեանց Սուփանն Գրիգորի

և զայլոց նախարարացն, առեալ զամենայն աղխ տան իւրեանց՝ դիմէին ի ծովակն Գեղամայ, որ էր յիշխանութեան իւրեանց, ուր նաւակս և լաստս յարդարեալ՝ մտին ի Սևան կղզի, բայց ոչ անագան պաշարեցան ի հինից ասպատակաց ըստ հրամանի ոստիկանին, վասն զի լուեալ զփախուստ նոցա՝ առաքեցին ոստիկանն և Գագիկ զօրս զկնի նոցա, որոց եկեալ և չև ևս պատրաստական ի կղզին մտեալ նոքա ամենայն աղխիւք՝ աճապարեալ ելին յայն կողմն, և յետոյ իգալստեան ասպատակաց զհետ իւրեանց հարուածեալ զնոսին՝ անցին, դադարեցան ի գաւառին Գարդմանաց յՈւտի աշխարհին:

Ընդ այս դառնացեալ Յուսփայ՝ վերստին սփռեաց զասպատակ յաշխարհն Սիւնեաց և յեզր ծովակին Գեղամայ, ուր կային բնակիչք, և ի կողմանս Տաշրաց և Կանգարաց՝ աւար հարկանել զերկիրն ամենայն և զազգն մնացեալս առնել ճռաքաղ: Եւ ինքն խորհուրդ արարեալ ընդ Գագկայ և ընդ մնացեալ նախարարս Հայոց առ ինքն՝ առաքեաց և զնոսա զօրօք ի վերայ Վաղարշակերտ ամրոցին՝ առնուլ զայն, ուր և խոստացեալ էր Գագկայ գնալ ոստիկանին և զհանդէս թագաւորութեանն կարգել, և զիւրաքանչիւր նախարար յիշխանութիւն մեծ հաստատել և դառնալ ինքեան յաշխարհ իւր:

Խաբեալ Գագկայ և նախարարաց ի դաւաճան միտս ոստիկանին՝ գնան և զօրօք փակեն զՎաղարշակերտ, բայց ի բնակչաց այնորիկ ընկալեալ զհարուածս սաստիկ ի զօրս իւրեանց՝ մեծապէս խայտառականօք դարձան ամօթով առ ոստիկանն յետս:

(913): Յետ այսորիկ ըղձացեալ Յուսփայ գլխովին տիրել բոլոր աշխարհին՝ ջանայր ձերբակալել զՍմբատ, և յայս գործ դաւաճանութեան նենգութեամբ խոստացեալ Գագկայ թագաւորեցուցանել ի վերայ Հայաստանեայց՝ յամենայնի առնէր զնա ինքեան գործակից, զի զարքայ սպանցեն: Ապա ժողովեալ զամենայն զօրս իւր և զհայոց, զոր ի ձեռին իւրում, խաղաց ընդ գարնանամուտն ի վերայ Սմբատայ՝ հանդերձ Գագկաւ և Գուրգենաւ յամրոցն Կապուտայ, ուր նստէր Սմբատ փոքու զօրօք: Եւ իբրև ի պատերազմին յառաջ մատուցանէր Յուսուփ զզօրս Հայոց և յիւրսն խնայէր, որք զհարուածս ոչ սակաւ ընդունէին ի կորովեացն նետաձգողացն ամրոցապահաց, արքայ Սմբատ խնայեալ ի կոտորածս հայոց, որք միայն վասն իւր զայնչափ աղէտսն թշուառութեանց կրէին, հոգացեալ վասն փրկութեան նոցա և զհարուածսն դադարեցուցեալ՝ խնդրեաց յոստիկանէն յետկար երդման խնայել յինքն և ի զօրս իւր,

և ապա անձնատուր եղև նմա: Եւ յայնմհետէ ապա, թէև ի պատուի ունէր զնա առ երեսս, բայց օր աւուր խորհէր սպանանել զնա: Եւ զի այսմ գիտակ էր և արքայ, հեռացաւ ի նմանէ պատճառաւ իւիք ի Շիրակ գաւառ, մինչև ցաւուրսն ցայնոսիկ, ուրանօր փախեաւ և Գագիկ՝ հանդերձ Գուրգենաւ՝ եղբարբ իւրով, ընդ որ զանգիտեալ Յուսփայ, թէ մի գուցէ գնացեալ միաբանեսցին փախստեայքն ընդ Սմբատայ, կապեաց ի շղթայս առ իւր եղեալ զնախարարսն Հայոց, և յետ սակաւուց հրաւիրեալ առ ինքն և զՍմբատ՝ կապեաց և զնա ի շղթայս և եդ ի բանտ խաւարային ի Դուին քաղաքի: Յոր եկաց զամ մի ողջոյն, ուր և զպէտս կենաց խնայէին նմա, զի հնարէին դարձուցանել զնա ի հաւատոց:

(914): Ապա յորժամ դիմէր զօրօք ոստիկանն ի վերայ ամրոցին Երնջակայ ի Գողթան գաւառի, էած անդր շղթայիւք և զՍմբատ, զի զօղեալ էին յամրոցին, բաց ի բնակչացն և տիկնայք երևելեաց Հայոց, որպէս մայրն Սմբատայ Սիսակեանց, և կին նորա, որ քոյրն էր Գագկայ բռնաւորի, և կին Սահակայ՝ եղբօր նորին Սմբատայ, և այլ ազատ կանայք և բազում որդիք նախարարաց, որոց ոչինչ կարացեալ ստնանել ոստիկանն անօրէն, տանջանօք հրամայէ չարչարել զՍմբատ արքայ յանդիման եղելոցն ի բերդին, ուր յետ բազում խոշտանգանաց սրով հատեալ զգլուխ երանելի արքային, զմարմին նորա ածեալ ի Դուին՝ բևեռեն ի խաչի ի նախատինս ազգին, որպէս և լիօրէն գրեալ է ի վարս իւր ի հատորն 5:

Իսկ զամրոցն դաւանօք իմն ի ձեռս ածեալ ոստիկանին՝ արարին անդէն կոտորած սարսափելի, մինչև ի ծագել արեգականն կարմրացեալ երևէր քաղաքն արեամբ սպանելոց և ի մնացելոց զգեղեցիկ և զառոյգսն գերեցին՝ հանդերձ կանամբք և որդւովք մեծատանց, և զքաղաքն ողջոյն յաւարի առեալ՝ չուեցին ի Դուին, ուր և կրեցին զնեղութիւն և տառապանս, որպէս վկայէ պատմաբանն. «Առան գանձք նոցա և աւար հարան զարդք և կազմուածք տանց նոցա և այսպէս կոծ և աղաղակ և կականումն և ճիչ բազում յապարանս նոցա լսելի լինէր:

(916): Ընդ գործս քաջութեանց Աշոտոյ՝ որդւոյ արքային Սմբատայ, որ կալաւ միով զաթոռ թագաւորութեան նորա, ամաւ յառաջ զչարեալ Յուսփայ ոստիկանին (որ ի սմին ժամանակի նստէր յաշխարհ Ատրպատական), զորս արար նա ի վերայ զօրաց իւրոց, եղելոց ուրեք ուրեք յաշխարհին Հայոց, զորս ընդ ձեռամբ ունէին, յամենայն կուսակալութեանց պարսից և Ատրպատականի զօրս հանեալ՝ առաքեաց ասպատակութեամբ ի Հայս՝ դարձեալ

կոտորել և գերել զազգն համօրէն և աւերել զաշխարհն, զի ժամ դիպող համարեցաւ զանմիաբանութիւն հայ նախարարաց:

(917): Մտին ի Հայաստան զօրք Յուսփայ և կուսակալացն պարսից և յարձակեալ յաւանս և ի գիւղս՝ զոմանս սրոյ ետուն ճարակ, զոմանս վարեցին ի գերութիւն և ի գերելոց զծերս և զպառաւունս ընդմէջ կտրէին, և զտղայս ստնդեայս ի գրկաց մարցն հանեալ՝ զգետնի հարկանէին, զյղիսն ընդ ոտիւք կոխոտէին և զոմանց պատառեալ զորովայն, զյղացեալն ի բաց կորզեալ՝ արտաքս ընկենուին, զմանկունս ի հարց և զեղբարս ի հարազատից բաժանէին, զկին յառնէ և հարսն ի սկեսրէ յափշտակէին, յորս էր տեսանէլ, ասէ Յովհաննէս կաթուղիկոս, տեսութիւն ողորմելի, և ողբք անհանդուրժելի, և լալումն անտանելի, և բախումն կրծից և կքումն արտեւանաց, և դողումն անձին և ցրտումն գեղոյ, և խզումն հերաց»: Եւ այսպէս, ուր ուրեք և ոտք կոխեցան նոցա, զնոյն անցս անցուցանէին, բաց յայնոցիկ, որք փախուցեալքն էին յամուրս ամրոցաց և քաղաքաց: Սոքա և առ պակասելոց կերակրոց՝ զգերեալսն բազումս նօթիս ի մահ հասուցանէին, և առ դարձուցանելոյ ի հաւատոց՝ դառն տանջանօք զնոսա սպանանէին, զոմանս կենդանւոյն թաղէին և զոմանս ընդ բեռամբ ճմլէին, և զայլս պրկեալ՝ խեղդէին, զկէսս ի կրծոց ի վայր սրով ճեղքէին, և զշատս ևս յոտից և ի ձեռաց ծայրատէին, և էր, զի զոմանց զոտս և զգլուխ ի մի պրկեալ՝ այսր անդր դարձուցանէին և սրով ընդ մէջ կտրէին: Էր, զորս յերկիր տարածեալ՝ արջառաջլօք յորովայն և ի կողս հարկանէին և ի քարշ յածեցուցանէին ցաւանդել շնչոյն, և էր, զորս ըստ իւրաքանչիւր անդամոց կացնով ջարդէին, զորս ընդ մեռեալս կենդանւոյն թաղէին և զորս գլխիվայր գծառոց կախեալ՝ գանէին:

Իսկ զորս և ի գերելոցն ապրեցուցին զգեղեցիկս և զառոյգս զարս և զկանայս ըստ ոստիկանին հրամանի, ածին առ նա ի Դուին, ընդ որս քաղցրութեամբ խօսեցեալ նորա առ ի դարձուցանել զնոսա ի հաւատոց՝ խոստմամբ մեծամեծ պարգևաց ևս և դարձուցանելոյ ինքեանց զստացուածս նոցին, և տեսեալ, եթէ հաստատուն կան նոքա ի հաւատս, պէսպէս տանջանօք խողխողեաց զնոսա սրով: Յայս տանջանս մատուցանէր ոստիկանն և զամենեսին զնոսա, որք յասպատակացն իւրոց հետզհետէ կապանօք անդր ածեալ լինէին ի կողմանց կողմանց աշխարհին Հայոց: Ի սոսա էին եղբարք երկու ի Գնունեաց ազգէ՝ Դաւիթ և Գուրգէն, որոց առ գեղեցկութեանց և երիտասարդ հասակացն վայելչութեանց ոչ երբէք զիջեալք ի հրապուրանս ոստիկանին և ի պարգևսն երկրաւորս

ուրացութեամբ հաւատոց և յաղաչանս ևս նորա, այլ անխախտ հաւատով խոստովանելով զՔրիստոս՝ կատարին ի հրապարակի քաղաքին առ աչս բազմութեան ժողովրդեան: Ի սմին անցս չարչարանաց մահու աշխարհիս մերոյ և ոմն ի կուսակալաց Յուսփայ զբազմութիւն գերեաց ի մի խումբ արարեալ իբրև պսակ բոլորաձև, յորժամ ոչ լսէին նոքա յորդորանաց ուրանալ զհաւատս, և շուրջ զնոքօք ընթացեալ՝ հրամայեաց հատանել զգլուխս նոցին՝ մանուկելով ի նոսա ոմն Միքայէլ անուն եօթնեւտասն ամաց ի Գուգարաց աշխարհէն, յափշտակեալ ի զօրականէն ի միջոյ խմբին, առ զուարթածաղիկ պայծառութեան դիմացն, ոչ կամեցեալ նորա զատանիլ յընկերացն երանելեաց՝ վերստին անկանի փախստեայ ի նոսին և ընդ նոսա կատարի, որոց կարգեցաւ տօն յիշատակի ի ԻԷ մարերի, որ է ի յունիսի 3, որպէս գրէ Յովհաննէս կաթուղիկոս:

Յօդ. ԻԲ

Յակոբ Ա Խորով Հերշեալ Եպիսկոպոսի Սիւնեաց

(943): Յաւուրս Անանիայ հայրապետի Մոկացւոյ, որ եկաց կաթուղիկոս յԱղթամար յետ Եղիշէի, Յակովբ եպիսկոպոս Սիւնեաց աշխարհին, համախոհ ինքեան արարեալ զԽոսրով ոմն քորեպիսկոպոս, յարեցաւ յաղանդաւորս թոնդրակեցւոց և զբազում անսովոր ծէսս եմոյծ յԵկեղեցիս Հայոց, յորս և սերմանէր զբազում բանս մոլորականս, յորոց մին էր և այս, թէ չէ պարտ եպիսկոպոսաց հնազանդել կաթուղիկոսին՝ իբրև վեհագունի, քան զինքեան, որով և յարուցանէր զխռովութիւն բազում:

Հասեալ այս ամենայն յականջս Անանիա կաթուղիկոսի՝ գրէ առ Յակոբ եպիսկոպոս ի բաց կալ յայնպիսի մոլար վարդապետութենէ և յանսովոր ծիսից, այլ իբրև ետես հոայրապետն, եթէ նա ինքն Յակովբ եպիսկոպոս պաշտպան և ապաւէն ինքեան արարեալ զդշխոյն Սիւնեաց՝ զկին որդւոյ Վասակայ Սիւնւոյ, արհամարհեաց զբան նորա և ապստամբեալ յինքենէ՝ ապստամբեցոյց ընդ ինքեան և զբազումս և զոմանս ևս յիշխանաց Սիւնեաց, նզովեաց զնա ինքն զՅակովբ եպիսկոպոս և գրեաց առ դշխոյն Սիւնեաց՝ տալ զնա ի ձեռս իւր, և իբրև դշխոյն ոչ լինէր յանձնառու, նզովէ և զնա հանդերձ իշխանօք Սիւնեաց: Որ և յետ վաղճանին Յակվբայ գնացեալ ի Սիւնիս, քարոզութեամբ գրաւեալ զմիտս իշխանաց՝ արձակէ զնոսա ի նզովիցն կապից և ձեռնադրէ նոցա արքեպիսկոպոս՝ զՎահան, ի գաւառէն Բաղաց:

ՅՕԴ. ԻԳ.

Թէոդորոս Հակառակաղոռ կաղռողիկոս յԱնի զամ 2

(1035): Յովհաննէս-Սմբատ արքայ, որ և զԱնին վաճառեաց, գժամնեալ ի վերայ ընդ երկար տարակացութեան Պետրոս հայրապետի յԱնւոյ, որ Գետադարձն կոչիւր, նոյնպէս և նախարարք Հայոց, յորժամ խաբանօք իմն կալաւ զնա և եդ ի բանտի, ածեալ յԱնի քաղաք զվանահայր Սանահինի վանաց՝ զԴէոսկորոս, կացոյց զնա կաթուղիկոս փոխանակ Պետրոսի, բայց ոչ ընկալեալ երևելի եպիսկոպոսաց Հայոց զկաթուղիկոսութիւն նորա յաղագս կենդանի գոլոյ օրինաւոր հայրապետին, և ոչ իսկ զանուն Դէոսկորոսի թոյլ ետուն յիշել յեկեղեցիս ի սուրբ պատարագի, և ոչ ձեռնադրէլ զոք յեպիսկոպոս, յայս առիթ և ժողովուրդ երկրին չէին հաճեալ ընդ նա, բայց եթէ արքայն և նախարարք իւր:

Զայս ամենայն անարգութիւն յաչս այլոց՝ զչարեալ և Դէոսկորոսի ընդդէմ մախացողաց, սկսաւ և ինքն գործել զանարժանս, կոչեաց զբազումս յանպիտանեաց և ի վատթարաց յեպիսկոպոսութիւն, և զորս արժանի էին, ընկեց յիշխանութենէ և յափշտակեաց զստացուածս նոցա, և զմերժեալսն վասն բանի յանցանաց դարձոյց յաթոռն իւրեանց, որովք և անկաւ ընդ նզովիւք ի ժողովոյ եպիսկոպոսաց և վարդապետաց Հայոց՝ ինքն և կուսակիցք իւր՝ թագաւորն և նախարարք, որք եղեն պատճառք չարեացս ամենայնի և ընկեցին զՊետրոս՝ զսրբասնեալն վարուք:

Ի բանից յայսցանէ երկուցեալ արքայ և նախարարքն՝ իբրև Պետրոս հայրապետ ոչ յանձն էառ վերստին զԱթոռն ըստ թախանձանաց նոցա (1036), հրաւիրեցին զՅովսէփ կաթուղիկոս Աղուանից՝ հանդերձ եպիսկոպոսօք իւրովք, և արքայն ժողով արարեալ եպիսկոպոսաց, վարդապետաց և կրօնաւորաց յԱնի քաղաքի, որպէս ասացեալ է մեր ի Պատմութիւն Ժողովոցն՝ ի հատոր 5, անդ պարտաւոր դատեն զԴէոսկորոս և ընկեցեալ յաթոռոյ իշխանութեան՝ պատառեն զքօղն, զոր ընդ գլխով կրէր ըստ սովորութեան ժամանակին, զոր և յաքսորս առաքեցին ի վանս իւր ի Սանահին, և ածեալ վերստին զՊետրոս յաթոռն՝ եդին ի վերայ ամենայն ձեռնադրելոցն առ ի Դէոսկորոսէ զապաշխարութիւն՝ ընդ բանիւ առնելով զնոսա:

Յօդ. ԻԴ

Սարգիս Հակառակաթոռ կաթուղիկոս ի Հոնի զամս 4, և Թէոդորոս յԵպ նորա զամս 14

(Ամք Տեառն 1073): Փիլարտոս զօրավար Յունաց՝ ազգաւ հայ, ապստամբեալն ի կայսերէ, թշնամացեալ ընդ Գրիգորի Վկայասիրի յաղագս արհամարհելոյ Թոռնկայ Մամիկոնեան իշխանին Տարօնոյ և Սասնոյ զնա ինքն՝ զՓիլարտոս, զի սա ի ձեռն կաթուղիկոսին կոչեալ էր առ ինքն զԹոռնիկ, ըստ որոյ և նա արհամարհեաց զհրաւէր իւր: Յետ վախճանին Թոռնկայ գնացեալ նորա ի Թաւբլուր և ոչ գտեալ անդ զկաթուղիկոսն՝ յետ երկիցս կոչելոյ նորա զԳրիգոր ի Հայրապետական Աթոռն, իբրև ոչ դարձաւ անդր հայրապետն, նորին հաւանութեամբ ժողով արարեալ Փիլարտոս ի Հոնի քաղաք՝ ի Ջահան գաւառի, ձեռնադրել տայ ի կաթուղիկոսութիւն յԱթոռն Հայրապետական զՏէր Սարգիս՝ զքեռորդի Պետրոսի Գետադարձին, հաստատեալ զաթոռն ի նմին քաղաքի ի Հոն: Առ որ և առաքէ նա ինքն Գրիգոր կաթուղիկոս զքօղ և զգաւազան Գետադարձին Պետրոսի:

(1077): Այլ Սարգսի չև ևս վարեալ զիշխանութիւն իւր զամս իբր չորս՝ վախճանի անդէն ի Հոն քաղաքի ի գաւառին Ջահանայ:

Սմա յաջորդէ նոյնպէս հակառակաթոռ կաթուղիկոս Տէր Թէոդորոս՝ փակակալ եկեղեցւոյն Հոնոյ ի նմին քաղաքի, որ յաղագս քաջ նուագելոյ զալէլուիայս՝ կոչեցաւ մականուամբ Ալախօսիկ:

(1074): Յերկրորդում ամի հայրապետութեան Սարգսի՝ տեղապահ եդաւ Հայրապետական Աթոռոյն յԱնի Տէր Բարսեղ՝ քեռորդի Վկայասիրին, ի նմանէ իսկ՝ որդի Վասակայ՝ որդւոյ Ապիրատայ, յորժամ նա ինքն Վկայասէր գնաց ի Կոստանդնուպօլիս՝ և անտի՝ ի Հռովմ:

Յօդ. ԻԵ

Պօղոս Հակառակաթոռ կաթուղիկոս ի Մարաշ զամինս վեց

(Ամք Տեառն 1073): Փիլարտոս զօրավար, յիշատակեալն ի նախընթաց գլուխդ, որ կացոյց հակառակաթոռ կաթուղիկոս զՍարգիս՝ քեռորդի Գետադարձին, և զԹէոդորոս Ալախօսիկ ի Հոնի քա-

ղաք, սա, յորժամ մազապուրծ փախեաւ յերեսաց Պոլտաճի անուն ամիրայի ի նմին քաղաքէ և զերծաւ քաղաքն Մարաշ, ուր էին հայք ոչ սակաւ, յորդորեաց Թէոդորոս կաթուղիկոս զԱլախսիկն՝ զկացուցեալն իւրմէ ի Հոնի, թողուլ զքաղաքն զայն և գալ, նստիլ առ ինքն ի Մարաշ: Այլ ի չառնուլ նորա յանձն զգալն, ածեալ անդր զօրավարին ապստամբելոյ զՊողոս վարդապետ՝ զվանահայր Վարագայ, ձեռնադրել ետ զնա ի կաթուղիկոս, որով և աթոռ կաթուղիկոսաց Հայոց եղև չորս, այս ինքն՝ Մեծին Գրիգորի Վկայասիրի՝ ի կողմանս Տորոս լերին, Բարսղի՝ քեռորդւոյ նորա՝ յԱնի, Ալախսիկն Թէոդորոսի՝ ի Հոնի Ջահանայ, և այսր Պողոսի՝ ի Մարաշ:

Այլ սոյն սա տէր Պողոս տեսեալ, եթէ ի բազմանալ կաթուղիկոսաց ազգին՝ բազմանան ուրեք ուրեք ի նոսա և յուզմունք, և շփոթութիւնք, այր խոնարհ գոլով և խաղաղասէր, ոչ բարւոք համարեցաւ կալ ի նմին իշխանութեան, ապա յետ իբր վեց ամսոյ կալոյ յիշխանութեան ի Մարաշ՝ եթող զիւր կաթուղիկոսութիւն և դարձաւ վերստին ի վանս իւր և եկեաց անդ:

Յօդ. ԻԶ|

Դ–ԻԹ Հակա–ակաթոս կաթո–ղիկոս յԱղթամար, որ–մ յաջորդէն Ն–այէ մինչ– ցայսօր

(Ամք Տեառն 1113): Դաւիթ արքեպիսկոպոս Աղթամարայ՝ որդի ուրումն Թոռնկայ, լուեալ, եթէ ըստ յանձնարարութեան Բարսղի օծաւ ի կաթուղիկոս ամենայն Հայոց Գրիգոր Պահլաւունի՝ եղբայր Շնորհալւոյն ի քսանամեայ հասակի պատանեկութեան, զչարեալ ընդ այս յոյժ, առիթ առեալ զտհասութիւն նորա՝ ապստամբեցաւ ի նմանէ և յարոյց զվրդովումն յազգին, և ժողովեալ զհինգ եպիսկոպոսունս ի Ջորոյվանս՝ ձեռնադրի ի նոցանէ կաթուղիկոս և նստի յԱղթամար, ուր և յընդունելութիւն կաթուղիկոսութեան իւրոյ՝ տայ կաշառս ոչ սակաւ այլազգի իշխողի տեղւոյն և գրէ թուղթս ի զանազան տեղիս՝ ընդունել զինքն կաթուղիկոս Հայոց, և զպարզամիտս ջանացեալ հաւանեցուցանել ընծայիւք և աղաչանօք՝ զպատճառս զայսպիսիս ի մէջ առեալ, թէ աստ ի Վասպուրական աշխարհ է գերեզման Վահան կաթուղիկոսի և այլոց ոմանց, թէ աստ է սեղան Սրբոյն Գրիգորի, և քօղ և գաւազան և գօտի մաշկեղէն նորա, և որ մեծն՝ Աջ նորա սուրբ, և հողաթափ մի

Հռիփսիմեայ սրբոյ, և շղարշ կամ դաստառակ նորա: Եւ թէ աթոռ է Արծրունի թագաւորաց Հայոց այս տեղի, որովք և հետևեցուցանէ տեղւոյն արժանի լինել և կաթուղիկոսարան, ընդ որ իշխանաց բազմաց հաւանութիւն ցուցեալ և արևելեայց եպիսկոպոսաց՝ ընկալան զնա, և բազումք ևս անհաւան ընդ այն և հակառակաթոռ ևս զնա համարեալ՝ մերժեն զնա իբրև զապստամբ ի հարազատ Աթոռոյն Հայրապետութեան:

(1114): Զայսպիսի գործսն Դաւթի լուեալ Գրիգոր կաթուղիկոս՝ արար զայն ժողով մեծ յեպիսկոպոսաց, ի վարդապետաց, միանգամայն երկու հազար և աւելի ևս անձանց, որպէս դնի ի կարգի Ժողովոց ի հատորն Ե՝ ի Սեաւ լեառն, ուր առաջի եղեալ և ի վերայ այնոցիկ, որք ի ձեռն աշխարհական իշխանութեան և կաշառանօք ամբարձցին յաստիճան կաթուղիկոսութեան կամ եպիսկոպոսութեան, և յաղագս ամենայնի այսոցիկ գրեն յարևելս առ եպիսկոպոսս և իշխանս և առ նոսա իսկ, որոց ընկալեալ էր զ Դաւթին կաթուղիկոսութիւն, որք և ըստ բանից ժողովոյն մերժեալ զնա՝ յարեցան ի Գրիգոր:

Յօդ. ԻԷ.

Արևորդի Հայէ նո-ապէալէ

(Ամք Տեառն 1170): Արևորդիք, յիշատակեալք ի յօդ. Զ և ԺԶ, կային ի սմին ժամանակի, որպէս ի նոյն յօդուածսն գրի, ի Սամոստիա քաղաքի և յայլ տեղիս, որոց ճանաչելով զմոլորութիւն իւրեանց յաւուրս Շնորհալւոյն՝ դիմէն աղաչանօք առ քորեպիսկոպոս քաղաքին Թորոս՝ ընդունել զինքեանս ի հաւատս ճշմարիտս: Եւ եպիսկոպոսն զդարձից նոցա գրեալ առ Շնորհալին Ներսէս և ընկալեալ ի նմանէ զամենայն, զոր ինչ արժան էր ընդունելոյ ի հաւատս Քրիստոսի՝ մկրտէ զնոսա, որովք և ուսեալ դարձելոցն զբանս ուղիղ հաւատոյ՝ հաստատեցան ի ճշմարիտ աստուածգիտութիւն, ըստ որոյ և անհետ եղև սակաւ առ սակաւ մոլորութիւն արևորդեաց:

ՅՕԴ. ԻԸ.

Բարսեղ Հակոբակերոս կերոզիկոս յԱնի զամս 23

(Ամք Տեառն 1180): Յաղագս ժողովոյն Հռովմկլայու, որ վասն միաբանութեան Հայոց Եկեղեցւոյն ընդ Յունաց յաւուրս Գրիգորի Տղայ կոչեցելոյն, չփոթութիւն և աղմուկ ծագեալ ի վանականս Սանահնի և գրեթէ յամենայն հոգևորականս մայրավանիցն Հաղբատայ և Զորագետացւոց, որոց յամենայնի գլուխ գոլով Տուտէորդւոյն Գրիգորի, ի բաց կացեալ ի Գրիգոր կաթուղիկոսէ՝ յարեցան յեպիսկոպոսն Անւոյ քաղաքի ի Բարսեղ, և յոմանս ի Շիրակացւոց, մտեալք ընդ իշխանութեամբ Բարսղի՝ ծանեան զնա հայրապետ իւրեանց, բայց Հայք արևելեան և արևմտեան, մերժեալ զնոցին զայս անջատութիւն, կացին ընդ իշխանութեամբ Գրիգորի, ընկալեալք անդիմադարձ զմեծ ժողովն Հռովմկլայու և զբան նորին համաձայն հարազատ դաւանութեան իւրեանց, որ յաղագս երկուց բնութեանց անխառն և անշփոթ միաւորութեան ի Քրիստոս և ոչ միայն ի Կիլիկիա, այլ և յամենայն սահմանս Հայոց՝ յԱնի, ի Դավրէժ, ի Տփխիս:

Սոյն Բարսեղ առաւել ևս զօրացաւ ի վտարանջութեան իւրում ի նպաստից Ապիրատ իշխանի՝ եղբօր իւրոյ, յորժամ նա նիզակակից եղև արքային Վրաց, յորմէ հետէ և ինքնիշխան վարէր ի կողմանս Անւոյ Հայրապետական ճոխութեամբ:

(1195): Իսկ յորժամ յետ ժամանակաց վախճանեցաւ Գրիգոր կաթուղիկոս Զորրորդ, և ընտրեցաւ Գրիգոր Ապիրատ, կուսակիցք Բարսղի՝ Տուտէորդին Գրիգոր և Դաւիթ Քոբարեցի, և այլ ևս համախոհք սոցին, դառնացեալ ընդ կաթուղիկոսութիւն Ապիրատին և ոչ ևս կամելով հնազանդել նմին՝ ջանացին ամենայն զօրութեամբ կացուցանել կաթուղիկոս զԲարսեղ՝ յիշատակեալն եպիսկոպոս Անւոյ, այլ չկարացեալ հաճեցուցանել ընդ այս զԼևոն Երկրորդ՝ բազում բանս չարս զԼամբրոնեցւոյն Ներսիսէ գրեցին առ նոսա՝ համարելով զնա ինքն զԼամբրոնեցին արգելառիթ ընտրութեան Բարսղի (1196), ըստ որոց և պառակտեցան հիւսիսայինք ոմանք ընդ յիշատակելոցս վանաց առ ժամանակ ինչ և կալան իւրեանց իբրև առանձին կաթուղիկոս զԲարսեղ մինչև ցմահ նորա, բայց ազգն, բաց ի Շիրակայնոց և եպիսկոպոսի նոցին, ընդդէմ դառնային նոցա իբրև ապստամբից Հայրապետական Աթոռոյն:

Եւ ապա յընկենուլ Լեւոնի Առաջնոյ արքայի Հայոց զՅովհաննէս Կաթուղիկոս Հռոմկլայու (1203), և ի հաստատելն նորա ի Սիս յԱթոռ Կաթուղիկոսութեան զԴաւիթ Երրորդ, ի մեծն Հայս հաստատեցին զիշխանութիւն Անեցւոյն Բարսղի և կացուցին իւրեանց կաթուղիկոս, յորում ժամանակի և բնակիչք Փոքուն Հայոց կացուցանէին ինքեանց զԱնանիա կաթուղիկոս:

Յօդ. ԻԹ.

Անանիա Հակոբակաթոռ կաթողիկոս ըստ 4 ի Սեբաստիա

(Ամք Տեառն 1203): Իբրև վախճանէր Գրիգոր կաթուղիկոս՝ Ապիրատն կոչեցեալ ի Սիս, և ընտրութիւն լինէր նոր կաթուղիկոսի ի հրամանէ արքային Լեւոնի Ա, յերկու կողմն պառակտեցան ժողովն եպիսկոպոսաց, կէսք հաճէին յԱնանիա եպիսկոպոս Սեբաստիոյ՝ համարեալն յազգականութենէ Գետադարձին, և կէսք՝ յարքեպիսկոպոսն Սսոյ՝ ի Յովհաննէս, յորոց առաւելն երկպառակել՝ Լեւոն արքայ հրամայէ ածել ի կաթուղիկոսութիւն զՅովհաննէս՝ զընտանի համարեալն իւր, և սիրելի պալատականաց իւրոց՝ այր փառացի անձամբ:

Եւ յօծանիլն Յովհաննու ի կաթուղիկոսութիւն ըստ հրամանին արքունի իբրև քրթմնջէին կողմնականք Անանիայ, եթէ ոչ համակամութեամբ եպիսկոպոսաց ընտրեցաւ Յովհաննէս, այլ միայն ըստ հաճոյս արքային, Անանիա վստահացեալ այսու՝ ձեռներէց լինէր յայն աստիճան, և միաբանութեամբ եպիսկոպոսաց և վանականաց փոքուն Հայոց և առաւել ևս բնակչացն Սեբաստիոյ, հետամուտ եղեալ կաթուղիկոսութեան, և մեծագին ընծայիւք առեալ զկամս Ռուգնատին՝ մեծ ամիրային Իկոնիոյ, որ իշխէր կողմանց այնոցիկ, նստաւ առանձին կաթուղիկոս ի Սեբաստիա, և այս իշխանութիւն յաջողէր նմա ապաքէն ըստ հիմանցս այսոցիկ, զի էր աթոռ թագաւորական Սեբաստիա՝ քաղաք Արծրունեաց, և զի Աթոռ Գետադարձին Պետրոսի, ուր կայր մարմին նորա: Եւ որպէս ասացաւ ի նախընթաց յօդուածն, յօծանել Դաւթի ի Սիս յաթոռ կաթուղիկոսական և յարհամարհել Յովհաննու զհրաման արքայի ի Հռոմկլայ, օծաւ և նա ինքն Անանիա կաթուղիկոս ի Սեբաստիա: Որ և շրջէր այնուհետև տիրաբար այցելութեամբ ի թեմս իւր՝ առնելով զզանազան կարգաւորութիւնս, զի ունէր ընդ իւրև ոչ սակաւ եպիսկոպոսս:

(1204): Ի սմին այցելութեան գնացեալ նորա ի Կեսարիա քաղաք Կապադովկացւոց՝ ժողովուրդն համօրէն ընկալան զնա մեծ պատուով իբրև եպիսկոպոսապետ ազգին, ուր գտեալ նորա և ի նահատակիլ Թէոդորոսի՝ ուրումն որդւոյ առն բարեպաշտի ի Հայոց, որպէս ի հատորն Դ, ի կարգի նահատակաց Հայոց Եկեղեցւոյն, առաքէ առ նա զոմն Գէորգ քահանայ քաջալերել զնա, որով ուրախացեալ Թէոդորոսի՝ ժամ առ ժամ փափագէր կատարման:

Ի յաճախել յարևելս ի վարդապետս Հայոց բազմադիմի չփոթութեանց ի վերայ ժողովոյն Սսոյ, ըստ բանից Զաքարիայ սպասալարի և ինչ ինչ ծիսից փոփոխմանց (1206), մեռաւ սա ինքն Անանիա առանձին կաթուղիկոս Սեբաստիոյ, և բարձաւ երկպառակութիւն կաթուղիկոսական իշխանութեան:

Յօդ. Լ.

Կոստանդին Կարս-կէջի կաշռս-ղէկոս ի Սիս

(Ամք Տեառն 1287): Յետ վախճանին Յակոբայ Կլայեցւոյ ի ժողովն ընտրութեան նոր կաթուղիկոսի, յորժամ Լևոն արքայ Երկրորդ ջանայր կացուցանել ի գահ Հայրապետական զԳրիգոր Անաւարզեցի, հարք ժողովոյն հակառակեալ նմին յաղագս պարզամտութեան նորա և յարելոյն ի Հռոմս՝ միաբան հաւանութեամբ ընտրեն ապա ի Հայրապետութիւն ազգիս զԿոստանդին արքեպիսկոպոս Կեսարիոյ՝ զԿատուկեցին զմականուամբ կոչեցեալն Պրոնագործ, և յԱւագ շաբաթու մեծի Զատկին ձեռնադրեցաւ ի Սիս փառաւոր հանդիսիւ կաթուղիկոս ամենայն Հայոց:

Իբրև հասին թուղթք պապին Հռովմայ Նիկողայոսի Զորրորդի առ արքայ Հեթում, որ յաջորդեաց Լևոնի, յաղագս միութեան Հայոց ընդ եկեղեցւոյն Հռովմայ և գնալոյ զհետ վարդապետութեան Յովհաննու լատին կրօնաւորի, որ հրեշտակութեամբ գնացեալ էր առ պապն ի դիմաց Հեթմոյ, յաղագս այսոցիկ իրացս ծագեցաւ գժտութիւն ի մէջ արքայի և հայրապետին, և ի հրամանէ արքային լեալ ժողով ի վերայ բանիցս, անկաւ Կոստանդին յԱթոռոյ և աքսորեցաւ:

(Ամք Տեառն 1290): Այլ ի ժողովն մեծ ի Սիս յետ վախճանի Անաւարզեցւոյն յաղագս ընտրութեան նորոյ կաթուղիկոսի և ընդունելոյ զնամակ դաւանութեան նորա, զորմէ տես ի Ժողովս, վերստին կացուցաւ կաթուղիկոս ի Սիս (1307), ուստի աքսորեալ

էր զառաջինն, և յարշաւանս անդ թաթարաց յաշխարհն Կիլիկիոյ և այլոց ազգաց (1322)՝ գրէ թուղթ առ պապն Հռովմայ՝ հանդերձ արքայիւ Լևոնիւ Բ և եպիսկոպոսօք՝ յօգնութիւն հասանել հօտին իւրոյ ի սէր քրիստոնէութեան՝ պատմելով նմա զամենայն արկածսն, զի այս հուր, որ բորբոքեցաւ, ասէ, օր, քան զօր ծաւալի, և չիք հնար շիջուցանելոյ:

Յետ այսորիկ ոչ հանդուրժեալ նորա այլ ևս առ սաստիկ ցաւոց սրտին յաղագս այնչափ աղէտիցն հօտին իւրոյ, զոր տեսանէր առաջի աչաց, վախճանի անդէն յետ վարելոյ զիշխանութիւն կաթուղիկոսութեան զամս տասն և վեց (1323):

Յօդ. ԼԱ.

Գրիգոր Է. Անաւարզեցի Ծիսապետ և լապինամիջ կաթողիկոս

(Ամք Տեառն 1294): Յորժամ Ստեփաննոս կաթուղիկոս վաղճանի ի վտարանդութեան յԵգիպտոս ի ցաւոց սրտին, հաւանութեամբ եպիսկոպոսացն Կիլիկիոյ նստաւ յԱթոռ Հայրապետութեան եօթներորդ Գրիգոր Անաւարզեցի, որ և զառաջինն արժանի համարեալ էր կաթուղիկոսութեան ի Լևոն արքայէ յետ մահուան Յակոբայ Կլայեցւոյն, սա, վասն զի աւերեալ էր Հռոմկլայ ի նմին ժամանակի, անտի փոխեաց զԱթոռն Կաթուղիկոսական ի Սիս և անտի եցոյց սէր առ Կաթուղիկոսական աթոռն Աղթամարու, յորմէ յետէ արարեալ էր խաղաղութիւն ի մէջ երկուց հայրապետական աթոռոցն, Լևոն արքայ, բառնալով ի նմանէ զնզովսն, եդեալս ի վերայ նորա ի ժողովոյն յաւուրս Դաւթի վասն ինքնագլուխ վարելոյն անկախ ի մեծ կաթուղիկոսէն:

Համբաւ կաթուղիկոսութեան Գրիգորի Անաւարզեցւոյ, հասեալ ի Մեծն Հայս յարևելս, եղև պատճառ խռովութեան վարդապետաց, որ անդր, որով և տրտունջ ի մէջ նոցա, զի գիտէին զնա հետամուտ ծիսից ազգաց այլոց, որոյ վասն և Հռոմ մականուանէր, և լուեալ, եթէ փոփոխութիւնս կամի առնել եկեղեցական արարողութեանց և այլայլել զինչ ինչ մասունս հաւատոյ, դժկամութեամբ յոյժ ընդ այն արարին ժողով ի Սիւնիս ի նմին ամի՝ գրեալ առ նա թուղթ՝ հանդերձ ստորագրութեամբք մետասան եպիսկոպոսաց և վարդապետաց և քանի մի երևելի իշխանաց, յորում յայտ առնեն զկասկածանս իւրեանց վասն փոխելոյ նորա զծէսս, և համարելով զայն իբր յեղաշրջումն կրօնից և աւանդութեանց ազգիս, և ազդ առնեն

նմա ի բաց կալ յայնպիսի նորաձևութենէ, և մի մուծանել յԵկեղեցի աւելի ինչ կամ պակաս, որ ոչ են եղեալ ի հարցն սրբոց, ապա թէ կամիցիս, ասեն, յայնժամ մի աշխատ առնէք, ըստ ձեր կամաց լիցի աշխարհդ այդ, և այլ ոք, որ կամիցի, և զմեզ թողէք, ասեն, ի մեր գիտութիւնս, և մեք կացցուք և մնասցուք՝ ակնունելով վերին այցելութեանն: Խնդրեն ի նմանէ ևս առնել ձեռնարկ հաստատուն և անխախտ կտակաւ միաբանութեամբ եպիսկոպոսացն Կիլիկիոյ և առաքել առ ինքեանս իբր զյետկար անջինջ առ ի հնազանդութիւն իւրեանց Հայրապետական Աթոռոյ նորին:

Այլ զի ընդ սոսա էր Ստեփաննոս եպիսկոպոս Սիւնեաց Օրբելեան և գրիչ Թղթոյ ժողովոյն առ Անաւարզեցին Գրիգոր և ատելութեամբ ընդ նմա, գրեաց առ նա և ինքն թուղթ առանձին յանդիմանական յաղագս վերոյգրեալ հանգամանաց և ի նոյն միտ գրեաց զգիրք մի ընդդէմ դաւանութեան և աւանդութեան յունաց՝ կոչեցեալ «Ձեռնարկ Ստեփաննոսի Սիւնեցւոյ», որպէս տպագրեալն է ի Պոլիս, ընդարձակելով ի նոյն զկարգ բանից Թղթոյ նախասացեալ վարդապետաց: Բայց չէ յայտնի, եթէ զինչ պատասխանի արար Կաթուղիկոսն Գրիգոր Թղթոյ ժողովոյն: Երևի, թէ զխնդիրս նոցին ոչ ընկալաւ, վասն զի արար զմտադրեալ փոփոխութիւն ի ծէսս և յարարողութիւնս Հայոց Եկեղեցւոյն, որպէս ի կարգի բանիցս տեսցի ստորև:

Իբրև գլխաւոր աւագանիք թագաւորութեանն ի թշնամութիւն բերեալք ընդ Հեթմոյ Բ. արքայի ի վերստին յաջորդել նորա յԱթոռն՝ կամէին կորուսանել զնա, և արքայ, նոցա փոխադարձն, յետ լսելոյն զդաւաճանութիւնն, Գրիգոր կաթուղիկոս մտեալ ընդ մէջ՝ հաշտեցոյց զնոսա և ցուցեալ հաստատութեամբ զհաւատարմութիւն իշխանացն՝ առնէր խաղաղութիւն ի միջի:

Յետ այսորիկ ի խաղաղութեան աշխարհին Կիլիկիոյ ժամանակ յաջող ինքեան համարեալ ի վեր հանել զխորհուրդ մտաց իւրոց ի փոփոխութիւն ծիսից և արարողութեանց (1305), գրեաց թուղթ առ երևելի եպիսկոպոսունս արևելեայց վասն այսր իրի, նախ՝ առ արքեպիսկոպոս տանն Սիւնեաց՝ Յովհաննէս Որպէլ, որ մարմնաւոր իշխանութեամբ ևս պայազատէր զաշխարհն, ապա՝ առ Զաքարիա Ծործորեցի՝ արքեպիսկոպոս Արտազու և առաջնորդ վանաց Թադէոս առաքելոյն, և առ մեծ վարդապետն Յովհան Ծործորեցի ի վանս Ծործորու, գրեաց և առ Յովհաննէս արքեպիսկոպոս Բճնոյ և առաջնորդն լերին Վարագայ և առ այլս, որպէս և առ Եսայի վարդապետ Նչեցի՝ դասասաց վարժապետ արևելեայց ի կողմանս Երևանայ ի Գայլեձոր:

Որոյ վասն Զաքարիա Ծործորեցի և Յովհաննէս Որպէլ, հանդիպելով միմեանց ի Դավրէժ, խորհուրդ արարեալ ի վերայ բանից կաթուղիկոսին հանդերձ վարդապետօք ոմամբք, թէև հաւանեցան խառնել ջուր ի խորհուրդ բաժակին և կատարել զծնունդն Քրիստոսի ի 25 դեկտեմբերի, այլ հուսկ անկարելի դատեալ զփոփոխութիւնսն մուծանել յարևելեան եկեղեցին՝ գրեաց Յովհաննէս արքեպիսկոպոս Սիւնեաց Որպէլ առ կաթուղիկոսն, թէ չկարեմք բնաւին հաւանեցուցանել զազգն ի նորաձևութիւնն, և եթէ բուռն առնեմք, ծագեսցին աղմուկք մեծամեծք:

Այլ մինչ վասն այսպիսի փոփոխմանց ծագեցաւ շփոթութիւն ընդ մէջ Ծործորեցւոյն և Որպելին Յովհաննու և ի տեղիս տեղիս, և հասին տարաձայնութիւնք այլ և այլ վարդապետաց ի կողմանց կողմանց ի լուր Անաւարզեցւոյն, անկանէր ի կասկած՝ երկուցեալ, եթէ խափանեսցի մտադրեալն իւր խորհուրդ, զոր ջանայրն կատարել, սակս որոյ և գրեալ նորա թուղթ յորդորանաց առ թագաւորահայրն Հեթում երկար բանիւք բոլորագրութեամբ հանգամանացն փոփոխմանց արարողութեանց և ծիսից՝ աղաչէր զնա ձեռնտու լինել յայն ի կատարումն և ժողով առնել եպիսկոպոսաց և վարդապետաց, և զգուշաւոր քննութեամբ տեսեալ զիրսն, զոր արժանն է, ընդունել և համաձայնել այլոց եկեղեցեաց, զի առանց խորհրդոյ և կամաց նորա ոչ իշխէր առնել ինչ, թէև ի կողմն իւր ունէր զարքայն Լևոն, մանաւանդ զի և չէր իսկ հաճեալ թագաւորահայրն ընդ կամս նորա և պատուէր ևս յղեալ էր առ կաթուղիկոսն՝ վարել զգուշութեամբ, զի մի խռովութիւն ինչ ծագեսցի յազգին յայնպիսում դառնութեան ժամանակի:

Այսպէս յայտարարեալ կաթուղիկոսին առ Հեթում զխորհուրդ սրտի իւրոյ ի վերայ ծիսիցն փոփոխմանց, չև առեալ պատասխանի ի նմանէ՝ շարադրէր ինքնին զնամակ դաւանութեան՝ եդեալ ի նմա, զոր միանգամ հաստատել ըղձայր ժողովով, զոյր և օրինակ մատուցեալ առ արքայ Լևոն՝ ծանուցանէր նմա ևս, թէ գրեալ է զայնմ ամենայնէ առ թագաւորահայրն Հեթում՝ խնդրեալ զհաճութիւն նորա: Այլ մինչդեռ յայսմիկ խորհրդեան կայր և ակնունէր տանել ի գլուխ զայսպիսի իրողութիւն հաւատոյ և մուծանել յԵկեղեցի Հայաստանեայց զդաւանութիւն այլոց ազգաց ի հաճութենէն Հեթմոյ և թագաւորին, հասանի նմա մահ կենաց յետ կալոյ իւրոյ զամս տասն և երեք կամ տասն և չորս (1305):

Իսկ թէ ինչ ինչ էին փոփոխութիւնք, մտադրեալք ի նմանէ մուծանել յԵկեղեցիս մեր, այն ամենայն եղեալ են յԵրրորդ ժողովն Սսոյ և Ատանայ, ըստ որում վերաբերի ի կարգս Ժողովոցն:

Սոյն Գրիգոր Անաւարզեցի արար գործ վաստակոց զքանի մի ճառս և զերգս բազումս և Շարականս ի խնդրոյ արքային Հեթմոյ և եղբօր նորա Կոստանդեայ, և եղբօրորդւոյ նորա Լեւոնի՝ յանուն նոցա և իւր զսկզբնատառսն յօրինելով, բայց զի էին ամենայնն յոճ անպիտան, չեղեն ընդունելի ի գործածութիւն: Արար առանձին և Շարականս Մեծացուսցէից ըստ պատշաճի ի տօնի իւրաքանչիւր սրբոց և սա զառաջինն եմոյծ սովորութիւն զամենայն աւուրս ասել զՄեծացուսցէս, զի յառաջ, քան զայն յաւուրս տէրունական տօնից և Աստուածածնի միայն ասէին, այլ ազգն զսովորութիւնն միայն ընկալեալ՝ զՇարականս Մեծացուսցէից ի գործ եդ զնախնեացն վասն տէրունական տօնից: Սմա տեղեակ գոլով լեզուի յունաց և ասորւոց, թարգմանեալ ինչ ինչ ի նոցանէ, յաւել ի Յայսմաւուրն՝ կարգելով զայն ըստ աւուրց ամսոյ: Եւ վասն փոփոխութեան տօնից արար զնոր Տօնացոյց ըստ ամսոյ, այլ պահէր առ իւր առանձին՝ սպասելով ժամանակի:

Սա ջանացաւ յարմարել զծէսս հայոց ընդ լատինացւոցն և յունաց, որոց գլխաւորք էին ինն, վասն որոյ ժողովն եղև յետ վախճանին նորա, և են այսոքիկ. 1. խառնել զջուր ի բաժակն և յաւելուլ ինչ ինչ ի սպասս պատարագի, 2. բառնալ զխաչեցարն ի սրբասացութենէ, 3. զամենայն տօնս տօնել ըստ ամսաթուոյ, 4. պահել զպահս հսկմանց ըստ լատինացւոց և զայլ քանի մի պահս, 5. փոխել զբանս Մաշտոցայ ի կանոնս մկրտութեան, դրոշմի, ձեռնադրութեանց և այլոց օրհնութեանց, 6. միայն ի չորս եղանակս տարւոյն առնել ձեռնադրութիւն ըստ լատինացւոց, 7. փոխել ինչ ինչ ի ժամերգութիւնս առաւօտու և երեկոյի և յաւելուլ ի նոսին զպէսպէս կցորդս յայլոց ազգաց, 8. ի կիր առնուլ զիւղ երեխայից, և 9. կատարել զվերջին օծումն հիւանդաց: Բայց յայսմ ամենայնէ և ոչ զմին ընկալաւ Եկեղեցին Հայոց ոչ ի Կիլիկիա և ոչ յայլ տեղիս, միայն զվերջին օծումն՝ ոմանք և եթ, որ և այժմ դադարեալ:

Զինչ-ինչ ի ծիսից աստի ինքնին գործ եդ ըստ իւրում վկայութեան, բայց յոյժ ծածուկ, զի մի անկցի յԱթոռոյն, որպէս ջուր խառնել ի բաժակն և զայլս ըստ կարեաց:

ՅՕԴ. ԼԲ.

Յակոբ Բ. Սսեցի Թիւապիոն լապինացեալ կաթող–ղիկոս

(Ամք Տեառն 1327): Յաջորդեալ յԱթոռ Հայրապետութեան Յակոբ Բ. Սսեցի՝ քեռորդի Անաւարզեցւոյն, յետ վախճանին Կոստանդեայ Լամբրոնեցւոյ ի չորրորդում ամի կաթուղիկոսութեան իւրոյ (1331) արար պատասխանի առ պապն Հռովմայ, նանրացուցեալ զչարախօսութիւն ունիթոռաց զԼևոն արքայէ, զորմէ գրեալն էին, եթէ կործանեաց զեկեղեցիս և զվանորայս, որպէս տեսցի ի պատմութեան նորին (Մխիթար Ապարանցի), և առ ի շահել զսիրտ դեսպանաց պապին, եկեղոցն վասն այսր ամենայնի և առ ի ստանալ ի նոցանէ զերեսուն հազար ոսկիս, զոր առաքեալ էր պապն վասն նորոգութեան աշխարհիս մերոյ, ժողով արար ոմանց եպիսկոպոսաց և վարդապետաց, յորս էր Զաքարիա Ծործորեցի և Յովհան Եզնկացի, և հաւանութեամբ նոցին գրեաց թուղթ ընդհանրական առ ամենայն հայս՝ չհալածել զՅովհան Քռնեցին և զընկերս նորա, այն է՝ զունիթոռս, այլ լինել ձեռնտու, բայց տեսեալ, եթէ ոչինչ լուաւ այնմ ազգն, այլ առաւել շփոթի յունիթոռաց անտի, գրէ և առ Յովհան Քռնեցի՝ չխրտուցանել զազգն (1336), այլ յետ այսորիկ տեսեալ, եթէ բազմացեալ ունիթոռեանք և ի կարգս կարգս բաժանեալք՝ յարուցանէին զաղմուկ վասն վերստին մկրտութեան, որպէս լիօրէն տեսցի ի գլուխն յետագայ, հրամանաւ արքային Լևոնի զոմանս գլխաւորս ի նոցանէ կալեալ յանդիմանէ, և առ ի խաղաղելոյ զազգն՝ գրէ առ պապն աղաչել՝ յանդիմանել զարևելեան լատինս՝ գրգռիչս ունիթոռաց, ի խռովել զազգ Հայոց:

Յետ երկիցս հարուածելոյ աշխարհին Կիլիկիոյ յերեսաց եգիպտացւոց ի սակս յարակցելոյ ազգի մերոյ առ պապն Հռովմայ և օգնութիւն խնդրելոյ յարևմտից, անկեալ գժտութիւն վերստին առ այս ընդ մէջ կաթուղիկոսին և արքայի, և եպիսկոպոսաց և իշխանաց՝ Յակոբ կաթուղիկոս գրգռեալ ի բանսարկուաց՝ կշտամբէ զԼևոն արքայ իբրև պատճառող երթևեկութեան ընդ արևմտեայց, յորմէ հասանին աշխարհին հարուածք այնպիսիք: Բայց ոչ տանելով արքայի այնմ (1341)՝ ընկենու զկաթուղիկոս յաթոռոյ յետ կալոյ նորա յայնմ զամս ԺԴ:

Իսկ ի գրգռիլ չարախօսաց զազգէս Հայոց առ պապն Հռովմայ, որոց բազումք էին յունիթոռաց անտի, յետ փոխադարձ թղթակ-

ցութեանց արքային և Մխիթար կաթուղիկոսի, որ յետ անկման սոյն Յակոբայ յաջորդեաց զաթոռն (1354), և ի պապէն առ նոսա, և ոչինչ օգտելոյ անտի, սա ինքն Յակոբ գնայ ի Գաղղիա առ պապն Կղեմէս Զ-րդ, և զոր միանգամ թղթով ոչ կարէին հաւատարմացուցանել՝ զայն ամենայն բերանով առաջի եդեալ նմա, հաճէր զնա յոյժ և դիմեալ անտի ի Հռովմ յուխտ սրբոց տեղեաց, ի դառնալ իւր վերստին (1355) յաշխարհ իւր, վաղճանեալ Մխիթարայ՝ նստաւ վերստին յաթոռ հայրապետութեան հաւանութեամբ Կոստանդեայ արքայի և եպիսկոպոսաց Հայոց, ուր յետ վարելոյ զիշխանութիւն այլ ևս ամս չորս՝ վաղճանի առ Տէր:

Յօդ. ԼԳ.

Լատինահայ ուղղափառ ի Հայաստան և այլուր, որ յետ իբր 100 ամաց շէջացան

(Ամք Տեառն 1317): Յաւուրս Կոստանդեայ կաթուղիկոսի Լամբրոնեցւոյ՝ հրամանաւ պապին Հռովմայ Յովհաննու եկեալ ի կողմանս Ատրպատականի Բարդուղիմէոս լատին եպիսկոպոս ի կարգէ քարոզողաց (Մխիթար Ապարանցի), գոլով ուսեալ զլեզու պարսից առ սակաւ՝ առնէր քարոզութիւն անդէն, որում և յաջողեալ գործ քարոզութեանն՝ չինէ վանս ի կողմանս քաղաքին Մարաղու:

Յովհան վարդապետ Քռնեցի կոչեցեալ՝ փափագելով, եթէ որպէս իցեն վարդապետութիւնք նորա (1328), գնաց առ նա ի Մարաղայ ըստ պատուիրանաց վարժապետին իւրոյ Եսայեայ վարդապետի Նչեցւոյ, որում հաճեալ յոյժ ընդ վարդապետութիւն նորա՝ ծանուցանէ իւրումն վարժապետի, և ինքն զտեղի կալեալ անդէն՝ մնայ առ լատին եպիսկոպոսն զամ մի և կէս, և ուսուցանելով նմա և նորին ընկերաց զբարբառ հայոց՝ ինքն ևս ուսանի ի նմանէ զլատին լեզու, ուրանօր և գործակցեալ միմեանց, յորս յարի և Յակոբ վարդապետ ոմն թարգման, թարգմանեն ինչ ինչ ի լատինացւոց անտի ի հայ:

Ապա բերեալ Քռնեցւոյն զԲարդուղիմէոս եպիսկոպոս յաւանն Քռնայ՝ գրէ առ աշակերտակիցս իւր, ընդ որս ուսեալ էր յոդս Նչեցւոյն և առ այլ վարդապետս, հասանիլ անդր և առ նորին Բարդուղիմեայ խորհել ժողով ի վերայ կրօնից և ծիսից (1330), որք յայս ժողով կոչեցան ի Քռնեցւոյն, էին այսոքիկ աներևելիք

ոմանք՝ Մարգար վարդապետ ի գեղջէն Ոծոպայ, Հայրապետ վարդապետ յԵօթնաղբիւր գեղջէ, Յովհաննէս վարդապետ ի Ծուան գեղջէ, Սիմէօն վարդապետ ի Բասին գեղջէ, Ներսէս վարդապետ ի Թարխան գեղջէ, Առաքեալ և Լալ վարդապետք յԱրտազ գաւառէ, Գրիգոր վարդապետ յԱպրակունի գեղջէ, Կոստանդին և Յովհաննէս վարդապետք ի Կաղզուանայ, Սիմէովն վարդապետ ի Խաչենոյ և Յակոբ վարդապետք ի Քռնոյ, ընդ որս և իշխան տեղւոյն Գէորգ՝ քեռորդի Քռնեցւոյն Յովհաննու: Որք հաստատեցին ժողովով լինել քարոզիչս ուղղափառութեան, և զի հաստատուն և անփոփոխ ի նոյն մնասցեն և ապահով (գուցէ թէ պաշտպան լինէր նոցա եկեղեցին Հռովմայ) համաձայն կամօք ի բաց թողեալ զբովանդակ աւանդութիւնս ազգիս՝ լատինականօքն վարեցան ծիսիւք յամենայն իրս և յաւէտ եկեղեցական պաշտամունս, զորս և փոխադրեցին ի հայրենի բարբառ:

Այսու մտօք դարձեալ յիւրաքանչիւր տեղիս՝ ձեռն ի գործ արարին միաւորել զազգն ընդ Հռովմէական եկեղեցւոյն, ըստ որոյ և յորդորէին զնոսա փոխել և զարտաքին ծէսս՝ զհայրենի սուրբ աւանդութիւնս, և մուծանել յեկեղեցիս զայլ և այլ կարգս ըստ նոցին, որով և յարուցին ուրեք ուրեք վէճս և աղմուկ մեծ ի Մեծ Հայս և ի Կիլիկիա, ընդ որ վշտացեալ Եսայեայ Նչեցւոյն և պատճառ եղեալ շփոթութեանցն զՔռնեցին՝ գրեաց նմա գիր յանդիմանական՝ շիջուցանել զաղմուկ ի մէջ ազգին՝ յարուցեալ ի պատճառս այլայլութեան կարգաց և հայրենի աւանդութեանցն բարձման, ևս և վիճմանց ի վերայ բառիս «բնութիւն», զի մեք, ասէ, դաւանիմք անշուշտ ի սկզբանց և այսր, եթէ մի Քրիստոսն ճշմարտապէս Աստուած է և մարդ՝ զաստուածային և մարդկային ունելով բնութիւնս միաւորեալ անշփոթ, ըստ այսմ պարտ է մեզ զգաստութեամբ վարել և ոչ կարգել ի վերայ այսոցիկ յանդիման Մրգուզ շինականաց (զոր ի մէջ բերէ Մխիթ. Ապարանցի):

Այլ իբրև ապախտ արարեալ սոցա զբանիւք Եսայեայ՝ օր ըստ օրէ յաւելին զշփոթութիւն յազգին, առաջնորդք և վարդապետք յամենայն տեղիս, յորս և գտանէին, զնոսա առհասարակ հալածէին, ընդ որս և արքայ Լևոն Ե-րդ առաքեաց զարս, կալան զոմանս յընկերաց Քռնեցւոյն և արգելին ի բանտի, յորոց նեղեալ սոցա՝ ամբաստան եղեն առ պապն Հռովմայ, եթէ Լևոն արքայ Հայոց կործանեալ զեկեղեցիս և զվանորայս՝ արկ հերձուած ի մէջ ազգին (1331), առ որ պապն, թէև գիտէր զհաւատարմութիւն արքային, այլ երկմտեալ ի չարախօսութեանց բազմաց՝ գրեաց առ դեսպանս

իւր ի Կիլիկիա՝ չտալ զերեսուն հազար ոսկին, զոր առաքեալ էր ի պէտս նորոգութեան աշխարհին, մինչև ստուգեսցին ամբաստանութիւնքն, և զի գրեալ ևս էր զայսմանէ առ Յակոբ կաթուղիկոս Սսեցին, սա ունայնացոյց առաջի դեսպանաց պապին զամբաստանութիւնս զարքայէ և առ ի փութով ստանալ ի նոցունց զդրամսն ի շինութիւն աշխարհին (1331)՝ ժողով արարեալ եպիսկոպոսաց և վարդապետաց, յորս էին Զաքարիա Ծործորեցի և Յովհան Երզնկացին, նոցին հաւանութեամբ գրեաց թուղթ հանրական յամենայն տեղիս՝ չնեղել զընկերակիցս Քռնեցւոյն, այլ լինել ձեռնտու, այլ ի չփոթիլ ազգին ի վերայ ինչ ինչ լատինական ծիսից, զորս նոքին ջանային մուծանել յԵկեղեցիս մեր, գրեաց ապա և առ համախոհս Քռնեցւոյն յետս կալ ի խռովելոյ զազգն:

Այսօրինակ հալածումն սաստկացաւ յազգէն և ևս ի վերայ նոցա (1333) իբրև վախճանեցաւ լատին եպիսկոպոսն Բարդուղիմէոս, յորում ժամանակի և ընկերք Քռնեցւոյն առաւել համարձակութեամբ վարէին, յորմէ նեղեալ յոյժ նա ինքն Քռնեցի՝ չոգաւ ի Հռովմ առ քահանայապետն Յովհաննէս և առնոյր հրաման ի նմանէ հաստատել ի մէջ Հայոց զկարգ դոմինիկեանց կոչեցեալ միաբանողաց, որ ըստ լատինացւոց է ունիթոռ, այսու մտօք դարձեալ յերկիր իւր՝ բազմացոյց զընկերս և զաշակերտս:

Ի սոցանէ սկիզբն առին լատինահայ կաթոլիկք և կրկնակնունք կոչեցեալքն կամ լաւ ևս ի Քռնեցւոյն, որ զայսչափ դարշահոտութիւնս քռեաց ի միութիւն ազգին և խորշեցոյց յիրերաց զմիակ ուղղափառ Եկեղեցին Հայաստանեայց, և կամելով յուղղութիւն վերածել զազգն ըստ քմաց, ատելութիւն ստացեալ յազգէն՝ եղև պատճառ բաժանման ազգային միութեան և երկպառակութեան յայլ և այլ արարողութիւնս և ի ծէսս, և բազմաց ի հերձուածս և յանօրէնութիւնս, որպէս ի ներքոյ:

Քանզի Քռնեցին և որ ընկերք նորա՝ կառուցեալ զվանորայս ի բազում տեղիս և զեկեղեցիս ի գաւառն Մարաղու, ի Նախիջևան, ի Սուլտանիէ, ի Տփխիս, ի Ղրիմ՝ ի քաղաքն Կաֆայ, որ ընդ իշխանութեամբ Ճենուացւոց, թարգմանեցին զգիրս ինչ ի լատինէ ի հայ, ոմանք եղեն արք իմաստունք՝ խաղաղարարք բազմաց, ոմանք ևս անհրահանգք՝ առիթք դայթակղութեան ազգին, որպէս և հերձուածապետ սոցա՝ Քռնեցին Յովհան, որ յաղագս բազմաց տառապանաց կրելոց ի հայոց, ստացեալ ատելութիւն ընդդէմ նոցա, զորս միանգամ եգիտ յարս մասնաւորս, զայն ամենայն եդ ի վերայ ամբողջութեան ազգին և եցոյց զնոսին մոլորեալս, զորս ինքն սերմանեաց:

Ըստ այսոցիկ ի բազմանալ ունիթոռաց՝ անհնարին պառակտումն անկաւ ի մէջ ազգին բովանդակ (1335), վասն զի նոքին՝ ունիթոռք, հնարէին ամենայն իրօք միաւորել զազգն ընդ Հռովմէական եկեղեցւոյն, իսկ հայք դժուարանային ընդ այսպիսի բանս նոցա, որով և անմիաբանք ի գործս նոցա, քանզի եղեալ էր մեծ մասին նոցա ի միտս, եթէ ոչ երբէք բաժանեալ են հաւատով յեկեղեցւոյն Հռովմայ յաւուրց Լուսաւորչին, այլ զաւանդութիւնս և զծէսս, զի ընկալաք, ասեն, ի Լուսաւորչէն և ի թարգմանչաց մերոց սրբոց նախնի հարց, անհնար է մեզ յեղաշրջել, յորում կամք, մնամք, ասեն, անշարժ: Զսոսա Մխիթար Ապարանցի կոչէ հայք միաբանք, որք և ամենայն իրօք ըստ նախնի հարց սովորութեանցն և անփոփոխ յաւանդութիւնս, բայց ի բանս հաւատոյ և ի փրկութիւն, ասէ, համաձայնէին ընդ սրբոյ եկեղեցւոյ: Ի սոցին համարի էին և այնոքիկ բնակիչք Կիլիկիոյ, որք ոչ ընկալան զժողովս Սսոյ և Ատանայ յաղագս ծիսից, այլ միայն ըստ վարդապետութեան հաւատոյ, զոր յառաջմէ ունէին, և սոքա կոչէին Սոնթք՝ ըստ Սսեցւոց կոչելոյն, իբր զի բաժանեցան ի Սսոյ միաբանութենէն:

Իսկ որք յանձն առին փոխել զծէսս, որոշելով զանձինս յազգէն Հայոց, կոչեցան, ասէ, հայք կաթոլիկք, յորոց ոմանք ի Կաֆայ, յերկիրն Նախչուանայ, յԵրնջակ և յայլ տեղիս, որք և օրինօք և արարողութեամբ խորհրդոց յարեցան յեկեղեցին Հռովմայ:

Այլ որք մտին ի կարգս ունիթոռաց՝ իբր յերրորդ դասու եղեալք, զգեցեալ զգեստ դոմինիկեան պատրկաց և համախոհից նոցին, ըստ ամենայնի վարեցան լատին արարողութեամբ, յորոց ոմանք առ ի հաճոյանալ լատինացւոց՝ արհամարհէին զամենայն ինչ, որ հայոց էր, համարելով զնոսին իբրև զհերետիկոսս և զանհաւատս, և ըստ գրելոյ Ապարանցւոյն, որ և յարեցաւ ի նոսա, և Մխիթար կաթուղիկոսի յաջորդին Յակոբայ առ Հռովմայեցիս, որպէս ի ներքոյ, զորս միանգամ ի հայոց յինքեանս դարձուցանէին, կրկին մկրտէին, դրոշմէին և ձեռնադրէին, որպէս և Ապարանցին վկայէ զանձնէ. «մկրտել զոմանս յազգէ մերմէ ի ծածուկ տեղիս և ի հնձանս այգեստանեայց»:

(1336): Եւ զի յարեան ի սմին ժամանակի Ներսէս Պաղոն եպիսկոպոս Որմեայ և Սիմէովն բէկ եպիսկոպոս Կարնոյ, և միաբանեալք զարս ոմանս ընդ ինքեանց, քարոզէին աստ և անդ, թէ հարկ է կրկին մկրտել և դրոշմել զամենայն հայս լատինական ծիսիւք և վերստին զքահանայս նոցին ձեռնադրել և պատարագել տալ լատին բարբառովք, և փոխել զամենայն սովորութիւնս ի միաբանու-

թիւն ընդ Հռովմայ եկեղեցւոյն իբր այն, զի ասէին, թէ մկրտութիւնն Հայոց երկբայելի է, և պատարագ նոցա ոչ է ճշմարիտ, առ այս ամենայն անկարգութիւնս սոցին Յակոբ կաթուղիկոս և Լեւոն արքայ, արքունի իշխանութեամբ արձակեալ զարս յամենայն ուրեք, կալան զոմանս ի խռովարար անձանցն ի բանտի և աքսորեցին զբազումս՝ հազիւ ուրեմն կարացեալ չիջուցանել զաղմուկ նոցա, իսկ զՆերսէս և զՍիմէովն զնոցին գլխաւորս ածեալ առ կաթուղիկոսն, որոց յետ սաստիկ կշտամբանաց, յանձն առեալ ի վերին երեսս զխոնարհութիւն՝ չոքան Ներսէս ի բերդն Կաչնոյ և Սիմէովն ի տեղի իւր, խրատեալ բազմօք՝ ըստ Մխիթար կաթուղիկոսի, «զի մի հնարեսցեն անձանց զնորանոր խաբէութիւնս, և մի լիցին պատճառ կորստեան հոգւոց...», և ազդ արար ի բաց կալ ի կրկին մկրտութենէ..., քանզի, ասէ, մեք զմկրտութիւն իւրաքանչիւր եկեղեցւոյ մի գիտեմք, և ոչ է լաւագոյն մին, քան զմիւսն:

Այլ սոյն Ներսէս և անդ յաւանն Կաչնոյ կրկին յարոյց զխռովութիւն ի բնակիչս յաղագս արարողութեանց եկեղեցւոյ և հալածական ի ժողովրդէն անկաւ ի հեռաւոր տեղիս, Յակոբ կաթուղիկոս գրեաց առ պապն Հռովմայ՝ յանդիմանել զխռովարարսն Հայոց և զնոցին հրապուրողս՝ զարևելեան լատինս, և զսպել զնոսին, այլ թէև ազդ արար պապն արևելեայց՝ սանձել զունիթոռսն ի զգաստութիւն, սակայն նոքին՝ ունիթոռք, և Ներսէս Պաղոն և Սիմէոն բէկ հերձեալ եպիսկոպոսք զբազում չարախօսութիւնս գրեցին ի Հռովմ զկաթուղիկոսէն և զարքայէն Լեւոնէ:

Զանարժան վարմունս ունիթոռաց և զհերձուածողութիւնս նոցին, որովք զմիութիւն ազգին քակտեցին ի բազում հերձուածս, իմի վայր յիշեցուցանէ Մխիթար կաթուղիկոս ի թուղթս գանգատանաց առ հռովմայեցիս՝ ըստ յառաջ բերելոյ Զամչեանին ի հաւաքմանց Ժողովոց. «յանդգնեցան, ասէ, ի ծածուկ և յայտնի մոլորութիւն մուծանել յեկեղեցի, քանզի ինքեանք, կրկին ձեռնադրեալք և կրկին մկրտեալք, նաև զայլս բազումս ձգեցին առ ինքեանս և կրկին մկրտեցին և կրկին ձեռնադրեցին, զի զոմանս ի բաղանիս, զայլս ի տունս և զայլս յանցս ջրոց կրկին մկրտէին և ի ծածուկ տեղիս և ի վայրս անտառաց կրկին ձեռնադրէին: Եւ պատճառ զայս այսպէս առնելոյ, ասէին նախ, թէ յորժամ զառաջինն մկրտեցայք, ոչ ճանաչէիք, ուստի և չէք գիտակ, թէ արդէօք քահանայն ասացեալ իցէ. «ես մկրտեմ քեզ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ» և գուցէ չիցէ ասացեալ վասն արբեցութեան, վասն որոյ հարկ է ձեզ մկրտիլ ի կատարեալ հասակի, զի ստուգապէս

ընկալջիք ի քահանայէ զձև մկրտութեան և հանջիք զերկբայութիւն ի սրտից ձերոց: Երկրորդ՝ զի զմեղսն, զորս գործեցիք, գուցէ ապաշխարութեամբ չկարացիք ջնջել, այլ մկրտութեամբ քաւեալ՝ սրբեսջիք, և առանց պատժոց քաւարանի կարասջիք անցանել յարքայութիւն երկնից»:

Յետ որոշելոյ ունիթոռաց յազգէ և յեկեղեցւոյս մերմէ նստաւ նոցա գլխաւոր և առաջնորդ ի Նախչուան, որք էին հայք ազգաւ և վարէին լատին ծիսիւք, որք և յետոյ կոչեցան Ջահուկք կամ Ջահկեցիք յաղագս բնակելոյ նոցա և ի Ջահուկ գաւառին Սիւնեաց աշխարհի, յորոց, որպէս ասացաւ, յարուցեալ մեծամեծ խռովութիւնք յաւուրս բարձման թագաւորութեան Հայոց և Լանկթամիրայ և անդր ևս՝ եղև պատճառ միւսանգամ շփոթութեան, վասն զի ի ձեռն թարգմանեալ մատենից, զորս ի լատինացւոց փոխէին ի հայ, քարոզէին յերկիրս Նախչուանայ, Ջահկայ և Երնջակայ և Գողթնայ մինչև ցԴավրէժ՝ ցՄարաղայ և ցայլս և քաղէին այսու երբեմն զօգուտ և երբեմն պտուղ գայթակղութեան և ատելութեան:

(1376): Յաւուրսն յայնոսիկ էր ոմն Սարգիս վարդապետ Հայոց ի վերին վանս Ապրակունեաց ի գաւառին Երնջակայ, զոր կոչեն Մեծոբեցին, և Մխիթար՝ քաջ վարդապետ և առաքինի ըստ հայոց որպիսութեանց, որոյ ոչ էր, ասեն, կերեալ միս և ըմպեալ գինի ամենայն համանման աշակերտօք իւրովք, առ որ աշակերտք Կարապետ վարդապետի՝ երևելոյն ի մէջ ունիթոռացէ՝ Ճագարակերն կոչեցելոյ, բանս եդեալ՝ եկին փորձել զնա բանիւք ի գրոցն առաքինութեանց, այլ զի ունէր և սա զաշակերտս ոչ սակաւ՝ հաստատեալս ի վերայ վիմի ուղղափառ հաւատոյ, յորոց միումն անցեալ գոլով ի կողմն ունիթոռաց, լուեալ, եթէ աշակերտք Ճագարակերին ունին երթալ և բանիւք նենգաւորօք պաշարել զվարդապետ իւր նախկին, պահելով զյարգ առաջնոյ վարդապետին իւրոյ՝ նախ քան զնոսին փութացաւ առ Սարգիս և ետ նմա զօրինակ առաքինութեանց գրոցն, և զոր, ինչ հարցանելոցն էին ի նմանէ, ասաց նմա հմտանալ, ըստ որոց և նա ինքն Սարգիս պապանձեցոյց զաշակերտսն՝ զեկեալս առ իւր ի պատրելոյ մասին, որովք և ունիթոռք արարին այնուհետև ընտանութիւն ընդ նմա: Ի սմին ընտանութեան ոմանք յունիթոռաց բանս ի մէջ արկեալ, ասեն, եթէ հայք չեն միաբան ընդ եկեղեցւոյն Հռովմայ, այլ Սարգիս եդ առաջի, եթէ դուք ձեզէն խոստովանիք, թէ այդ գիրք առաքինութեանց է յօրինեալ ըստ ուղիղ դաւանութեան Հռովմէական Եկեղեցւոյ, և ահա յընթեռնուլ

իմ զայն, զտի համաձայն Հայաստանեայց եկեղեցւոյ՝ ամենայն իրօք, և թէպէտ, ասէ, գիտեմ, զի ոմանք չարախօսք բանսարկուք կամին բաժանումն ընդ մէջ արկանել, բայց ես խրատեմ զստահակս յերկոցունց կողմանց և լռեցուցանեմ զամբաստանողսն զՀայոց և զՀռովմայեցւոց. ընդ այս մեկնեցան ի նմանէ ունիթոռք սիրով, բայց՝ ո՛չ հաճութեամբ, զի ոչ կարացին ձգել զնա իւրեանց կողմն:

Եւ զի՝ սա այսպէս յերկոցունց կողմանց զխռովարարսն նախատէր, վասն այսորիկ և յերկուց կուսէ տառապանս կրեաց ոչ սակաւ, զի ունիթոռք բամբասէին զնա, թէ ոչ է կատարեալ ուղղափառ, և հայք, եթէ զազգ մեր կամի դարձուցանել ի լատին:

Այլ վասն զի, որպէս սոյն Սարգիս վարդապետ Ապրակունեցի, նոյնպէս և այլ ոմն համանուն սորին Սարգիս ճգնաւոր յանապատին Շամբի ձորոյ՝ ընդ եղբօր իւրում՝ Ղուկաս վարդապետի, առաջնորդին կրօնաւորաց անդէն ջանային պահել զմիաբանութիւն ընդ հռովմայեցւոց և զերկուց կողմանց զբանսարկուսն բանիւք նախատէր, որովք և սոքա միաբանս զինքեանս համարէին ընդ Հռովմէական եկեղեցւոյն, միայն ընդ նոսա ոչ ի ծէսսն նմանեալ (1380)՝ չոգան ունիթոռք բազմութեամբ ի վանս Ապրակունեաց առ Սարգիս վարդապետ, առ որում էին և բազմութիւն աշակերտաց իւրոց, և ասեն, թէ պարտ է ձեզ իսպառ կա՛մ միաբանիլ ընդ Հռովմէական եկեղեցւոյն հաւատովք և և ծիսիւք, կա՛մ իսպառ անմիաբանս զձեզ ցուցանել ի նոյնս, որովք այնչափ հրապուրեցին զոմանս յաշակերտաց Սարգսի, մինչև յանձն առին միւսանգամ մկրտել և միաբանութեամբ ընդ նոսա քարոզել ամենայն ուրեք, եթէ ամենայն աւանդութիւն և պաշտօն Եկեղեցւոյն Հայոց է թիւր և անվաւեր, և մոլորեալք են հայք, ըստ որոց և յարեալ յինքեանս զբազումս՝ ձեռնադրէին և մկրտէին ի հեռաւոր տեղիս, որպէս ասէ Մխիթար Ապարանցի, որ մինն ի մկրտողաց անտի էր:

Ընդ այս անարժան գործ սոցա վառեցան առ հասարակ վարդապետք Հայոց և իշխանք և ռազմիկք, բազումք ևս, ըստ Մեծոբեցւոյն, ողբս ի բերան առեալ՝ անմխիթար ոգով լային, յորոց Մաղաքիա վարդապետ կոչեցեալն ճգնաւոր յերկրէն Ղրիմու, տեսեալ զայսպիսի գործս սոցա և վառեալ ի վրէժխնդրութիւն՝ գնաց առ Սարգիս վարդապետ ի վանս Ապրակունեաց՝ խորհրդակցեալ ընդ նմա՝ պատուհասել զունիթոռս և զյարեալսն ի նոսին, և զի բազմաթիւ էին աշակերտք Յովհաննէս վարդապետի Կախիկ կոչեցելոյ, որ և բարեկամ իշխանաւորաց ի Ստաթև, եկ գնաց Մաղաքիաս առ նա, զոր և առեալ բազմութեամբ աշակերտաց, քա-

հանայից և իշխանաց՝ դարձաւ անդրէն յԱպրակունիս, աստանօր տուեալ զինչս բազումս ի դրունս այլազգեաց հարիւր վաթսուն հազար դահեկանս ըստ Ապարանեցւոյն, զաշակերտսն Սարգսի՝ զյարեալսն յունիթոռս, և զոմանս ևս ի նոցունց յատեան ածեալ և դատեալ հրապարակաւ զնոսին՝ զոմանս ի նոցանէ բրածեծ առնեն իբրև զկրկնակնունքս և ապստամբս յեկեղեցւոյ, զոմանց հերս և զմօրուսն փետեալ՝ անարգեն, և զայլս այլով օրինակաւ չարչարեալ՝ զբազումս ևս ի բանտի եդին երկաթի շղթայիւք, յորոց ոմանք յետ աւուրց զերծեալ և հասեալ յարևմուտս՝ առ լատինս խօսեցան զամբաստանութիւն բազում զազգէն Հայոց, որպէս և ունիթոռք գրեցին ի Հռոմ. զայս տեղեկացեալ՝ վարդապետք Հայոց առաւելեան ի զայրոյթ սրտի և զոմանս կալեալ ի նոցանէ՝ մատնեցին ի ձեռս իշխանաց, որք արկին ի նոցունց կէս մի ի ջուր եռացեալ, և կէս՝ ի տապակ ջեռուցեալ, որոց թէև անհաւան գտանէր Ապրակունեցին Սարգիս, այլ լռեաց յիշխանացն սաստից:

Այլ այս Մաղաքիաս, որ զգուշացաւ այսպէս զՀայոց Եկեղեցւոյն յունիթոռաց անտի (1384), ի թուին Հայոց ՊԼԳ մեռաւ յանկարծ ի ժամ կերակրոյ, և համբաւ էլ, եթէ դեղ մահու ետուն նմա ունիթոռք: Սորա աշակերտ էր զամս տասն Մխիթար Ապարանեցի, որ զանցս ունիթոռաց և զվիճակի այնր ժամանակի Եկեղեցւոյն Հայոց գրեաց և ինքն ևս էանց յունիթոռս և ատելութեան ոգւով գրեաց, զոր միանգամ գրեաց զհայոց, զորմէ և ի վասն իւր:

Յօդ. ԼԴ.

Հայհոռոմէ ի ղանազան պէղիս քաղմացեալէ

(Ամք Տեառն 1350): Ոչ գտանելով մեր առ ազգային պատմագիրս զհայհոռոմոց ոճով ասացեալ, մանաւանդ առ պատմագիրս վերջին դարուց առ Առաքելի Դաւրիժեցւոյ, առ Զաքարիա Սարկաւագի և առ Զամչեան Միքայէլի, թողումք զայս գլուխ ի կարգէ Հալածչաց, ուրացողաց, հերձուածողաց և բաժանելոց յեկեղեցւոյն Հայոց և կարգեմք զհետևեալ գլուխս ըստ Սալլանդեան ցուցակին:

ՅՕԴ. ԼԵ.

(1386): Լենկթեմուրի՝ Հալածիչ Հայոց և ամենայն Եւրոպայի

Անիշխանացեալ Հայոց՝ զայսու ժամանակաւ էին ընդ իշխանութեամբ Պարսից, որոց յաղթեալ պատերազմաւ Լենկթեմուր յամս 1380-1386, յետ առնլոյ նորա զԲաղդատ, դարձ արար ի Հայաստան՝ յաշխարհ Վասպուրական, բազմութեամբ զօրաց եօթն հարիւր հազար արանց, որպէս ոմանք թուեն, յորմէ փախստական գնացին բնակիչքն յերկրից Տարոնոյ, այլ Լենկթեմուր անցեալ ընդ արևելակողմն նահանգին և պաշարմամբ առեալ զամրոցն Երնջակ՝ ի սուր սուսերի կոտորեաց զբնակիչս նորա, գնոյն արար ի Սիւնիս, յԱյրարատ և յԱրցախ, յորս աւերեցին զբազում տեղիս և ետուն հարուածս մեծամեծս, և յաւարի առեալ զամենայն շրջակայ գիւղօրէս Ճակատ գաւառին յԱյրարատյան դաշտի՝ զՄարի կոչեցեալ ամրոցն առին և ի գերութիւն վարեցին, զոր ինչ և գտին:

Անցեալ յարևելս կոյս՝ առին զԲճնի ի Նիգ գաւառին, որ առ ափն Հրազդան գետոյ, և զբնակիչսն ստիպեալ յուրացութիւն՝ զոմանս ի նոցանէ սպանին, զայլս կախեցին գլխիվայր և բևեռեցին ցցովք, և զեպիսկոպոս նոցա սպանին չարաչար:

(1388): Այսպէս արար Լանկթամիր և յաշխարհին Վրաց, ուստի դարձ արարեալ՝ էանց ընդ Այրարատ ի կողմանս Տարոնոյ, և ուր ուրեք անձնատուր լինէին նմա բնակիչք աշխարհին, առնէր նոցա ազատութիւն, իսկ զգերեալսն ի Հայաստանէ վարէր առ հասարակ ի Սմրղանտ:

(1390): Դարձ արարեալ Լանկթամիր յետ երկուց ամաց՝ եմուտ ընդ Ատրպատական ի Տոսպ գաւառ Վասպուրականի, ուր պաշարեալ զՎան քաղաք զաւուրս քառասուն և նեղեալ զբնակիչսն ի սովոյ՝ էառ զայն, և զի ընդդէմ կացին նոքա բռնաւորին, զմանկամարդս և զմանկունս հրամայեաց ապրեցուցանել, զմնացեալսն առ հասարակ գահավէժ առնել ի պարսպէ քաղաքին: Այսպէս արար Լենկթեմուր յԱրճէշ քաղաքի և յայլ բազում տեղիս ի Հայաստան:

(1394): Այլ Լանկթամիր ի մտի ունելով տիրել բովանդակ Ասիոյ, ըստ գրելոյ Զամչեանի, յորմէ քաղուածու առնումք զանցս հալածանաց նորա, յետ այսորիկ անցեալ ընդ Ասորեստան՝ եմուտ ի Միջագէտս, էառ զԱմիթ քաղաք և յամենայն սահմանս նորա սպան անխնայ զմեծամեծսն և զհասարակ ժողովուրդս գերի վա-

բեաց տունս երեք հազար ի հայոց և յասորւոց, և աւար հարկանելով ի շրջակայ գիւղօրայս և ի քաղաքս՝ եհաս ընդ հիւսիսակողմն աշխարհիս մերոյ մինչև յԵկեղեաց գաւառ, առեալ զԵրիգա քաղաք՝ կործանեաց զեկեղեցիս նորա և զկաթուղիկէ Սրբոյն Սարգսի:

Անտի յառաջ վարեալ զասպատակ զօրս իւր ի Բասեան գաւառ՝ եմուտ դարձեալ յԱյրարատ, և աւերեաց զշէնս ի Շիրակ և ի Վանանդ, առեալ զԿարս քաղաք՝ սրախողխող կորոյս զբնակիչս նորա և զայլս վարեաց ի գերութիւն:

(1399): Այլ ի մեկնիլն Լանկթամիրայ յաշխարհէն Հայոց, և ընդ յառնել խռովութեան ի մէջ ամիրայից Վասպուրական աշխարհի, և ընդ վերստին վրդովել խաղաղութեան երկրին, լի ցասմամբ հասեալ անդր Լանկթամիր՝ զապաւինեալսն ի լերինս և յայրս քարանձաւաց յայս նուագ կոտորեաց և գերեաց (1397), և ոտնակոխ առնելով զՎասպուրական աշխարհ՝ վերստին անգամ դարձաւ ի տեղին:

(1403): Յետ ամաց ինչ անցանելոյ ի վերայ եկն միւսանգամ ի Հայաստան ի վերայ Օսմանցւոց, ուր պաշարեալ զՍեբաստիայն բազմամարդ՝ խոստացաւ քաղաքացւոցն ի չընդդիմանալ նոցա ոչ սպանանել զնոսա սրով, և այսու խոստմամբ իբրև էառ զքաղաքն, զերիտասարդսն գերեաց և յետ կողոպտելոյ զմեծատունս՝ զամենեսեան առ հասարակ պէս պէս խոշտանգանօք զրաւեաց ի կենաց, զի խոստացեալ էր ոչ սպանանել զնոսա սրով: Կործանեաց զեկեղեցիս քաղաքին և հիմնայատակ արար զմեծ տաճար սրբոց Քառասնից՝ զկառուցեալն քառասուն գմբեթիւք: Եւ ապա ի ներքս մխեալ մինչև ի Պայազիտ՝ աւարեաց զբազում տեղիս և գերեաց ոգիս մինչև վաթսուն հազար տանց ըստ թուելոյ ոմանց, յորոց բազումք էին յազգէս Հայոց, յղելով զնոսա ամենեսին ի Խորասան:

Ժողովողն ազգային պատմութեան՝ ժամանակակից պատմիչն Միքայէլ Վ. Զամչեան, զայս ամենայն աւերածութիւն և գերեվարութիւն Լանկթամիրայ ի Հայաստան առնլով յականատես պատմիչէն՝ ի Թովմայէ Մեծոբեցւոյ՝ յաւելու յառաջ բերել յանանուն յիշատակարանէ, եթէ Լանկթամիր զամենայն մատեանս՝ գտեալս նորա յաշխարհին Հայոց և Պարսից, տարաւ ի Սմրղանդ և եդ յաշտարակ մի մեծ՝ պատիժ կարգելով ի վերայ, զի մի ոք հանցէ անտի գիր ինչ, այլ ընթերցցի: Այսմ դժուարին է մեզ հաւատալ, մինչ դեռ ականատես պատմիչն չէ նշանակեալ, և ինքն իսկ ոչ յայտ առնէ, եթէ որպիսի ինչ յիշատակարան իցէ այն:

Յօդ. ԼԶ.

(1408): Իսկէնդէր բռնաւոր՝ Հալածող Հայոց պատ. 20

(1408): Մահուամբ Լանկթամիրայ կենդանացան փախստական բռնաւորք՝ կողմնականք Ամիրայքն կոչեցեալք՝ տիրողք ի ժամանակին հարաւային և արևմտեան սահմանաց անտերունջն Հայաստանի, որք կենդանւոյն մեռեալք էին ի հարուածոցն Լանկթամիրայ և հալածական ղօղեալք յանձուկ և յանառիկ վայրս պետութեան իւրեանց:

Սոքա էին՝ ամիրայն Եգիպտոսի Ահմէտ խան՝ սուլթան Բաբելացւոց, և Յուսուփ ամիրայն՝ փախուցեալն յԱսորիս, ըստ գրելոյ Զամչեան Միքայէլի, որք յետ մահուան Լանկթամիրայ զօրաժողով լեալ՝ դարձ արար առաջինն և տիրեաց վերստին աշխարհին Բաբելոնի, երկրորդն՝ բազմութեամբ զօրաց դարձ արար յԱսորւոց ի Հայս և ստուարացուցեալ զզօրս իւր ձեռնտուութեամբ ամիրային Բաղեշու՝ եմուտ ի Ռշտունիս, և աւերեալ զբազում տեղիս՝ տիրեաց բովանդակ գաւառին՝ հարկատու արարեալ Եզդին անուն ամիրայն Ոստանայ տիրող գաւառին, ուստի անցեալ՝ էառ զառաջինն զԴավրէժ ի ձեռաց Միրանշահ անուն՝ որդւոյ Լանկթամիրին, և յերկրորդումն նուագի սպան զնա և զեղբայր նորա ի պատերազմի:

(1411): Ապա դարձաւ անտի ի Հայաստան Յուսուփ ամիրայ և ընդ իշխանութեամբ արարեալ զբազում տեղիս՝ էանց ընդ Եկեղեաց գաւառ ի Միջագէտս, ուր էառ զՄերտին և զայլ բազում քաղաքս, և պաշարեաց զԱմիթ և զԱրղնի, այլ չև ևս վնասեալ բնակչացն՝ արար հաշտութիւն ընդ իշխողի աշխարհին Օթման ամիրայի: Այլ փութանակի դարձ արարեալ անտի ի Դավրէժ, զոր առեալ էր ի հեռանալն իւր Ահմէտ խան ամիրայն Բաղդատու, կալաւ և խեղդամահ արար զնա և զորդի նորա (1412): Ապա չուեալ նորա յԱսորիս՝ էառ զԲաղդատ, և կացոյց իշխան աշխարհին զորդի իւր՝ զԻսկենտէր խան, զորոյ զհալածանս և կոտորած որքան արար և ի Հայաստան, զայնս միայն նշանակեմք, զի հալածանքն նորա արտաքոյ Հայաստանի, արտաքոյ է և մերումս այսր աշխատութեան:

(1422): Սա յետ տիրելոյ Ատրպատականի և զանձն անուանելոյ թագաւոր Հայաստանի (Շահարմէն)՝ եկն ընդ Միջագետս ի Հայաստան, և առեալ զբերդն Աղուանից կոչեցեալ՝ կոտորեաց ի Հայոց

ոգիս երկերիւր և տասն, և աւերելով զմերձակայ երկիրն, ապա պաշարեաց զՎան քաղաք ի Տոսպ գաւառի՝ ամիսս չորս, և զշրջակայ վայրն ամենայն աւերեաց, յորմէ տագնապեալ բնակչացն՝ կրեցին սով սաստիկ, բայց ինքն ոչ կարացեալ առնուլ զբերդն (1424)՝ դարձաւ ի Դավրէժ, և յամին երկրորդի յարձակեցաւ յաշխարհէն Սիւնեաց, որ զառաջինն գերութիւն բազում կրեալ էր ի Լանկթամիրայ, և կողոպտեալ անդ և յԱյրարատ զգիւղօրայս Հայոց՝ դարձ արար բազում աւարաւ ի Դավրէժ, որով և «նստեալ էր ազգս Հայոց ի լաց և ի սուգ»՝ ըստ Մեծոփեցւոյն:

(1425): Ապա ի միւսում ամի եկեալ միւսանգամ՝ պաշարեաց զՎան ընդ երկար, և հուսկ առեալ զայն՝ յաւարի էառ և զաշխարհն, յափշտակեալ և զկղզին Աղթամարայ և զայլ տեղիս բազումս, անցեալ անտի Իսկենտէր ի Պարսկահայս՝ էառ զՈրմի քաղաք, յորում կոտորելով զեօթն հարիւր ոգիս ի մահմետականաց՝ ի Հայոց միայն զմանկունս ապրեցոյց և զաղջկունս, իսկ զմնացեալսն բոլոր ի սուր սուսերի մաշեաց և չեթող անդ և ոչ մի հայ ոք:

Այլ իբրև խոյս ետ Իսկենտէր յերեսաց Շահռուհ խանի՝ որդւոյն Լանկթամիրայ ի Սալմաստ (1427), փախստական զօրք նորա հասեալ ի Վան՝ կողոպտեցին զգիւղս և վանօրայս շուրջ զեզերօք ծովուն, և ոչ թողին, ըստ Մեծոբեցւոյն, հաց ուտելոյ և ոչ խոտ ճարակելոյ:

Իսկ ինքն Իսկենտէր ասպատակէր յաշխարհն Սիւնեաց, յԱյրարատ և յայլ տեղիս և զնոյն գործէր, ուր և հասանէր, ի ժամանակի աստ լուեալ նորա, եթէ ամիրայն Ամիթ քաղաքի եմուտ ասպատակութեամբ ի Հայս, զցրուեալ զօրս իւր ժողովեալ առ ինքն՝ եհաս առ նա, և վանեալ զնա ի սահմանաց անտի (1429)՝ իբրև պաշարեաց նա զԱրծկէ քաղաք և զընդդիմութիւն կրէր ի բնակչացն, հաս ի վերայ նորա որդի Շահռուհ խանին, որում ոչ կարացեալ ի դիմի հարկանել Իսկենտէրին՝ խոյս ետ ընդ կրունկն, և Իսկենտէր դարձ արար ի Դավրէժ, ապա յՈրմի և անտի կրկին ի կողմանս Վանայ, ուր զօրք նորա արշաւեալ յայսր և ի լերինս, յորս ապաստանեալ, թագուցեալ էին հյք այնր գաւառի, կոտորեցին, զորս միանգամ ի ձեռս ածին և բազմադիմի չարիս գործէին առ նոսա:

(1430): Որ և վերստին պատրեալ զԱրծկէ և առաջնորդութեամբ արևելեաց Հայոց առեալ զքաղաքն՝ ի շնորհս երեսաց նոցին ոչ ումեք արար ինչ վնաս, բայց զիշխան քաղաքին սպան և եթ և զօրէնս ուսոյց դատաւոր նոցա:

(1435): Իբրև ել Շահռուհ անհամար զօրօք ի Խորասանայ և եկն յաշխարհս Հայոց ի վերայ Իսկենտէրի՝ գրգռեալ յիշխանէն

Շամախու, առ որ գնացեալն էր փախստեամբ, իբրև ոչ եկն Իսկենտէր ի կոչ շահին, անցեալ նորա ընդ գետն Երասխ ի Սիւնիս՝ պաշարեաց զԵրնջակ, ուր որդի Իսկենտէրի և մայր նորա առաքեցին դեսպանս առ շահն և խոստացան նմա սպանանել զԻսկենտէր ի դէպ ժամանակի:

Իբրև Իսկենտէրի չև ևս լցեալ չափ չարութեանն և շարժեալ ի վերայ իւր զվրէժխնդիր աջ բարկութեանն Աստուծոյ յաղագս հեղման անպարտ արեան բիւրաւորաց մարդկան՝ էանց սակաւ զօրօք ի Կոգովիտ գաւառ, և ժողովեալ անդ զօրս երեք հազար հեծելոց՝ դիմեաց ի Կարին, և անդ սպան զամիրայն Միջագետաց և զորդի նորա, հալածական արար և զզօրս նորա:

Աստի խոյս տուեալ Իսկենտէր յերեսաց որդւոյ Շահռուհայ, որ պնդէր զհետ նորա երեսուն հազար զօրօք, չոգաւ ի Կապադովկիա և անտի յԵւդոկիա, ուր ի հասանել գարնան ժողովեալ զօրս աստի և անտի քառասուն հազար՝ դիմեաց ի վերայ գիւղից և քաղաքաց և անցոյց ընդ նոսա չարիս բազումս և եհաս ի Սեբաստիա, ուր ի յայրին մեծի գտեալ զբազմութիւն յոյժ հայոց արանց և կանանց, խոստմամբ և սպառնալեօք հանեալ զնոսա անտի յետ կողոպտելոյ զինչս նոցուն՝ զոմանս ի հուր էարկ, զայլս էարկ ի հարուածս գանից և մնացորդսն գերեալ ընդ իւր՝ եկն ի Խարբերդ, իբրև ետես, եթէ բնակիչք նորա ոչ ընկալան զինքն սիրով, հրով և սրով ապականեաց զերկիրն և զհայս բոլոր վարեաց ի գերութիւն, և անցեալ ընդ Դերջան գաւառ (1436)՝ զամենայն հայ բնակիչս եհան անտի՝ կահիւք և կարասեօք և ամենայն տամբ, և վարեաց զնոսա ի ձմերային խստութեան ժամանակի յաշխարհն Արարատ և ի Սիւնիս, յորմէ վտանգեցան մեծապէս գաղթեալքն ամենեքին:

Ընդ որս և ինքն իսկ Իսկենտէր եկեալ յԱյրարատ՝ բնակեցոյց զնոսա յաշխարհսն, որպէս ասացաւ, յետ որոյ դիմեալ ի վերայ եղբօր իւրոյ Ջահանշահի, որ ապստամբեալ էր յինքենէ, զօրք նորա, լքեալ ի նմանէ, դարձան առ Ջահանշահ, ըստ որոյ և Իսկենտէր փախուցեալ սակաւուք՝ ապաւինեցաւ յամրոցն Երնջակ, ուր և յանդորրութիւն Հայաստանի և ընդհանուր մարդկութեան և խաղաղութեան աշխարհի, սպանաւ գիշերի բռնաւորն յորդւոյն իւրմէ և ի կնոջէն, որով և բարձաւ չարն յերեսաց երկրի:

Յօդ. Լէ.

Յակոբ Սեբեցի (անարժան) կաթո–ղիկոս

(*Ամք Տեառն 1409*): *Քեռորդի Գրիգորի Անաւարզեցւոյ՝ Յակոբ եպիսկոպոս Սսեցի՝ յետ վախճանի Կոստանդին կաթուղիկոսի Լամբրոնեցւոյ, նստաւ կաթուղիկոս ի Սիս՝ կոչեցեալ Յակոբ Բ, յամին 1327:*

Ի գործս նորին Յակոբայ ո՛չ գտանեմք զանարժանութիւն ինչ անվայել աստիճան կաթուղիկոսութեան, զոր Միքայէլ Սալլանդեան դրոշմէ ի ճակատ նորա իբրև կնիք մեղադրանաց, որով յանցուցեալ ինչ իցէ ընդդէմ սրբութեան Եկեղեցւոյն Հայոց կամ ուղղափառութեան հաւատոյ, յորոյ ի ժամանակի հայրապետութեան բորբոքէին ունիթոռեանքն ասացեալք հերձուածողք ի Հայոց զհրդեհ ատելութեան ի մէջ ազգիս մերոյ ընդ բանս կրօնից ծիսից ի Վերին Հայաստան, զորոյ գործս համառօտեմք ահա ի Զամչեան հատորոյ:

Ընդ ամբաստանութիւնս ունիթոռանց զազգէ մերմէ առ պապն Հռովմայ, իբրև գրեաց նա առ Յակոբ կաթուղիկոս ի քննութիւն ամբաստանութեանցն, սա ծանոյց դեսպանաց պապին զստութիւն այնոցիկ, ու և հաւանութեամբ եպիսկոպոսաց և վարդապետաց ոմանց թուղթ ընդհանրական գրեաց առ հայս, առ ի ձեռնտու լինիլ գործակցաց Քռնեցւոյն, և առ համախոհս նորին, զի մի՛ տեղի գայթակղութեան տայցեն յազգին:

Կորուստ տանն Հայոց Կիլիկիոյ և աւերած երկրին էր միշտ յընդունայն յարաբերութենէ թագաւորաց մերոց ընդ արևմտայս և առաւել ընդ պապն Հռովմայ, որ սնոտի յուսով պատրելով զնոսա՝ մեծամեծ խոստմամբ ևս գողանայր զհաւատս Հայոց ընդ ձեռն արբանեակաց իւրոց սփռելոց յանտերունջ երկիրս մեր. ուստի և թագաւորք մեր, ի ժամանակին չունելով քաղաքականութիւն երբէք, ատէին զդրացի զիշխանութիւնս և յարէին ի հեռաւորս. ուստի և յաճախութեամբ թղթոց և փոխադարձ երթևեկութեանց՝ գրգռեցին ի վերայ իւրեանց զսուլթանս Եգիպտոսի յաւեր և ի կործանումն երկրին առհասարակ. և պապական հովանաւորութիւնն այսչափ միայն եղև, զի ոչ միայն պատճառ եղև բարձման գահին Կիլիկիոյ, այլ և յայսմ իսկ ժամանակի առիթ գժտութեան արմատացաւ ընդ մէջ Լևոնի և կաթուղիկոսին. ընդ որոյ ցասուցեալ

արքայի՝ ընկէց զՅակոբ Բ յԱթոռոյ Հայրապետութեան (1341), *և կացոյց փոխանակ նորա զՏէր Մխիթար Քռնեցի:*

Եւ զի Յակոբ Սսեցի յետ անկանելոյ իւրոյ յԱթոռոյ և յետ ամաց գնաց ի Գաղղիա առ պապն Իննովկենտիոս, գրէ Զամչեան, և ցրել յանձնէ զամբաստանութիւնս, որ յունիթոռանց անտի, և վերադառնալ, զսոյն և մեք ապաստան առնեմք ի ստուգադրութիւնս ազգային ժամանակակից պատմագրաց, այլ այսմ ևեթ հաւատս ընծայեմք, զի յետ վախճանին Մխիթարայ կալաւ Յակոբ զԱթոռ կաթուղիկոսութեան զամս այլևս չորս, և (1355) *մեռաւ:*

Յօդ. ԼԸ.

Գրիգոր Թ. Մուսաբէկեանց ապստամբ կաթողիկոս ի Սիս

(1440) *Յետ վախճանին Յովսեփայ Երրորդի, զորոյ զկաթուղիկոսութիւնն չև էր ընկալեալ ազգին, ի ձեռն ընտրութեան ոմանց նստաւ կաթուղիկոս Գրիգոր Թ. Մուսաբէկեանց առանց հաւանութեան Արևելեան եպիսկոպոսաց, ի ստիպել նորա ի պակասութենէ ձեռնադրել առանց ընտրութեան ար օրին զհինգ եպիսկոպոսունս, բողոք կալան եպիսկոպոսք կողմանցն Կիլիկիոյ առ Արևելեան եպիսկոպոսունս Հայոց յաղագս յանարգութիւն հասանելոյ Աթոռոյն Սսոյ և յաղագս առանց հաւանութեան ազգի ամբառնալոյ Գրիգորի ի կաթուղիկոսութիւն, որոց համաձայնութեամբ եպիսկոպոսացն Կիլիկիոյ ո՛չ հաւանեալ ընդ ընտրութիւն նորին Գրիգորի, հաստատեցին ի միջի նորոգ ընտրել կաթուղիկոս ազգային հաւանութեամբ՝ կա՛մ զնոյն ինքն Գրիգոր, կա՛մ զայլ ոք, և նստուցանել կաթուղիկոս ո՛չ ի Սիս, այլ՝ յէջմիածին, յաղագս որոյ և հրաւիրեցին զԳրիգոր գալ և նստիլ աստ՝ յէջմիածին, այլ ի չառնուլ նորա յանձն զայս հրաւէր, ժողով մեծ գումարեալ ի Վաղարշապատ, համահաճութեամբ ընդհանուր ազգին զԱթոռն Հայրապետական հաստատեալ վերստին ի Ս. Էջմիածին՝ կացուցին կաթուղիկոս զՏէր Կիրակոս՝ Վիրապեցին կոչեցեալ, յամին 1441:*

Յօդ. ԼԹ.

Շահաբաս Ա. Հալածող Հա–ապոյ Հայոց ղամա 25

(1586-1603): *Շահաբաս Ա., որ յետ եօթնեւտասն ամաց հաշտութեան իւրոյ ընդ օսմանցիս, գրգռեալ ի փախուցելոցն Հայոց բազմաց և վրաց ի ձեռաց օսմանեան բդեշխից, ընդ որոց ձեռամբ էին աշխարհ Արարատեան և Վիրք, ևս ի սահմանամերձ ամիրայից մարաց ապստամբելոց յՕսմանեան տիրապետութենէ, պատրաստեցաւ ի պատերազմ զանխուլ յարձակել ի վերայ քաղաքացն, որոց տիրեալ էին օսմանեանք ի սահմանս պետութեան Պարսից, առ որ եկեալն էր և Մելքիսէթ կաթուղիկոսն մեր:*

Այլ քանզի մեք զհալածանս միայն Շահաբասայ գրել ունիմք աստանօր, յարուցեալս ըստ կարգի նորա ի Հայաստան, սորին աղագաւ որքան ինչ չարիս հասուցեալ է նորա ազգի մերում և հայրենեաց, զայն ևեթ գրեմք ըստ ամաց իշխանութեան նորա:

Ի ժամանակի աստ յայսմիկ, յորում տիրեաց Շահաբաս Դավրիժոյ, ժողովեաց նա ի քաղաքէն և յամենայն գաւառաց նորա զամենայն եկս և զպանդուխտս Հայս և զհրեայս և վարեաց զնոսա յաշխարհն Պարսից, և ապա ասպատակ սփռեալ ընդ ձեռն զօրավարաց իւրոց յերկիրն Նախիջևանայ և փախուցեալ անտի զզօրս օսմանցւոց՝ խաղաց և ինքն զհետ ի ներքս յԱյրարատ, և զօրապետն իւր Զլֆիղար էառ զքաղաքն առանց պատերազմի:

Ջուղայեցի հայք ելեալ ընդառաջ՝ բազում պատրաստութեամբ ընկալան Շահաբաս և արքայավայել ընդունելութիւնս արարին նմա, որոց և միամտութեամբ և անձընծայ հաւատարմութեամբ ցուցեալ զփարթամութիւն ի պարգևս Շահին՝ շարժեցին զընչաքաղցութիւն նորա, որով խորհէր առնուլ զամենայն քաղցրութեամբ, առ որ եկաց զաւուրս երիս:

Իբրև եմուտ ի Նախիջևան, առաքեաց անտի զօրօք զԱմիրգիւնայ նախարար իւր ի վերայ Գանձակայ՝ առնուլ զայն և զգուշանալ անդ զօրացն օսմանցւոց չյարձակել յանկարծ ի վերայ իւր, իսկ ինքն վերակացու եղեալ ի Նախիջևան և յառաջ խաղացեալ՝ պաշարեաց զԵրևան, և ժողովեալ ի գաւառէն զամենայն քաջս ի հայոց, զորս և ի միասին գումարեալ ընդ վրաց, առաջի կացոյց զնոսա պատերազմին՝ յանդիման ռմբացն հոսելոց ի պարսպէն, յորմէ բազումք յառաջուստ անկանէին, բազումք ևս յետուստ ի

ճակատու զօրացն պարսից, այլ (1604) *յերկարիլ պաշարման ամրոցին՝ սփռեաց աստի Շահաբաս ասպատակ զզօրս իւր ի գաւառս Հայաստանի՝ եղեալս ընդ իշխանութեամբ Օսմանցւոց՝ Շիրակայ, Վաղարշապատու, Արտագու և Ապահունեաց, ի կողմանս Կարնոյ, Բասենայ և Խնուսայ, զորս աւերեցին և ածին աւար բազում և գերի բազում յազգէ Հայոց:*

(1604): Նախարարն Շիրազայ՝ Ալլահվերտի խան, որ հրամանաւ Շահաբասայ գնաց յօգնութիւն Մահմատ փաշայի գաւառին, վարեաց ի գերութիւն զամենայն երիտասարդս և կանայս և զայլս կոտորեաց ի բերան սրոյ. անտի մտեալ ի Վասպուրական և ի սահմանամերձ գաւառս աշխարհին, գերեաց ի չորից գաւառաց աստի՝ Բզնունեաց, Առբերանոյ, ի Քաջբերունւոյ և ի Տոսպայ՝ ոգիս քսան երեք հազար յազգէ Հայոց, բաց ի կոտորելոցն, զորս և ամենայն ախիւք եբեր Ալլահվերտի առ Շահաբաս, որ նստէր տակաւին հանդէպ Երևանայ, (1605) զոր առեալ յետ ինն ամսոց պատերազմի՝ զաշխարհն համօրէն արար ընդ տէրութեամբ Պարսից:

Աստանօր զԴաւիթ զՄելքիսէթ կաթուղիկոս Հայոց կոչեաց առ ինքն Շահաբաս՝ լուեալ, եթէ մեծ գումար դրամոց պարտական էին նոքա օսմանցւոց ի ժամանակի տէրութեան նոցա, պահանջէր ի նոցանէ տալ յարքունիս իւր որչափ ինչ պարտական էին նոքա գումարս դրամոց, զի օրէնք են, ասէ, ի տիրել թագաւորի այլում աշխարհի՝ ամենայն գանձք և ստացուածք պարտելոյն պարտի մտանել յարքունիս, ընդ որ զահի յարեալ նոցա և ի չկարելն լրիւ հատուցանել՝ մատնեցին և սոքա զՍրապիոն կաթուղիկոս, որ կալեալ ի Ջուղայ՝ եդաւ ի բանտի, և կապանօք և գանիւք վճարել, զոր ունէր, և զոր փոխառութեամբ հազիւ լցուցեալ էր՝ արձակեցաւ երաշխաւորութեամբ, և ճողոպրեալ գանձն խոյս ետ ի Վան տկարացեալ տուայտեալ ի հարուածոց գանիցն, և ապա անտի յառաջին տեղին իւր յԱմիթ (1606) վախճանեցաւ:

Այս ամենայն աւարառութիւնք և աւերմունք աշխարհաց և գերեվարութիւն Շահաբասայ լուր եղեալ ի Կոստանդնուպոլիս՝ ի դուռն արքային Օսմանցւոց՝ Սուլթան Ահմէտի նորոգ գահակալելոյ, որոյ հուսկ ամենայնի միաբանեցուցեալ զիշխանս իւր և զնախարարս՝ առաքեցին զՍինան փաշայ անուանի զօրավարն ամենայն զօրօք օսմանցւոց ի վերայ Շահաբասայ:

Իսկ Շահաբաս իշխան, կարգեալ Երևանայ և բոլոր գաւառին զԱմիրգիւնէ նախարարն, ինքն բոլոր բանակաւն հանդերձ յառաջ խաղաց գնալ ի վերայ Կարուց, այլ հասեալ ի Շիրակ գաւառ՝ լուաւ,

եթէ օսմանցիք եկեալ են ի Կարին՝ զօրավարութեամբ Սինան փաշայի, երկուցեալ Շահին յերեսաց նորա՝ դարձ արար անդրէն յԱրարատ և բանակեցաւ յԵրուանդակերտ, որ ի ճակատ գաւառի:

Եւ զի գիտէր Շահաբաս, եթէ ոչ կարէ զդէմ ունել զօրութեան օսմանցւոց, յորժամ վերստին լուաւ, եթէ Սինան փաշայ, ելեալ ի Կարնոյ, գայ տագնապաւ ի վերայ իւր, զխորհեալն իւր յառաջագոյն եդ անդէն ի գործ, այն է՝ զհամօրէն բնակիչսն աշխարհին վարել ի Պարսկաստան և զաշխարհն բովանդակ աւերել առաջի օսմանեան բանակին, զի մի՛ գտցէ ուրեք բնակութիւն և պաշար զօրաց, որպէս արար յառաջ, քան զայս ընդ ձեռն Ալլահվերտի խանին Շիրազու ի Քաջբերունիս՝ ի գաւառս նորա յԱրծկէ, յԱրճէշ, ի Վան և յամենայն գաւառս նորին ի սահմանս Բզնունեաց և Ռշտունեաց, զորոց զբնակիչսն, բաց ի սպանելոցն, բերեալ էին և խմբեալ յերկրին Երևանայ:

Ուստի և առ պատրել նորա զբնակիչս երկրին, կոչեաց զիշխանս և զմեծամեծս Հայոց, յորս երևելի էր աղա Տէրտէր ասացեալ Յովհաննէս երէց Երևանցի, և կեղծաւորութեամբ առաջի արար նոցա, զի գայթակղեսցեն նոքա բոլոր բնակչօք երկրին յիւրաքանչիւր տեղեաց և ի գաւառաց, զի մի անկցին, ասէ, ստացուածք և ինչք նոցա ի ձեռս օսմանցւոց, եթէ վանեսցուք մեք, ասէ, զնոսա, դարձցին յիւրաքանչիւր բնակութիւնս և ի խաղաղութեան կացցեն ընդ իշխանութեամբ մերով, իսկ եթէ նոքա յաղթեսցեն մեզ, դարձցին և եղիցին ընդ նոցին իշխանութեամբ, ընդ որ թէև պատճառս ետուն իշխանքն անհնարին լինելոյ գաղթել, զի աշնանային էր ժամանակն, և ձմեռն՝ վերահաս, այլ ոչ ինչ անսացեալ նոցա Շահաբաս առ ահի օսմանեան զօրաց, որք մերձ էին ժամանել յԱյրարատ, իւրաքանչիւր գաւառաց և սահմանաց աշխարհին Հայոց վերակացուս կարգեալ ի նախարարաց իւրոց, և ի վերայ նոցա՝ զԱմիրգիւնէ նախարարն Երևանայ, հարաման ետ նոցա, զի ուր և հասանիցեն, առհասարակ վարեսցեն յաշխարհաց անտի զբոլոր բնակիչս ամենայն աղխիւք և անասնովք, և ժողովեսցեն ի դաշտն Արարատեան՝ տանել անտի յաշխարհն Պարսից, և եթէ ոք ոչ կամիցի գնալ, առցեն զամենայն ինչս նորա և գերի արասցեն զնա կամ սպանցեն առանց միում ումեք խնայելոյ՝ ծերոյն և երիտասարդի:

Ժամանակակիցն Շահաբասայ՝ Առաքել պատմագրող, անցիցս ոչ նշանակէ յանուանէ զգաւառս Երևանայ, որոց վարեցան բնակիչք ի Պարսկաստան, բաց ի գաւառացն Բզնունեաց և Ռշտու-

նեաց, և նոցին քաղաքացն՝ Վանայ, Արծկէոյ, Բաղիշոյ և ի սոցին սահմանաց, այլ և Կարնոյ, Բասենոյ, Խնուսայ, և մասնաւորապէս ի գաւառացն Շիրակայ, Վաղարշակերտու, Արտազու և Ապահունեաց, զորոց գրեցաք ի վեր անդր, զորոց և բնակիչս առհասարակ վարեալ էր ամօք յառաջ Ալլահվերտի և ածեալ յԵրևան:

Բայց Միքայել Զամչեան, որ զայս ամենայն պատմութիւն աւերանաց աշխարհիս մերոյ առնու ի նոյն Առաքել պատմագրէ, հիշէ աստանօր յանուանէ իբրև կրկնութիւն և զառաջին սահմանս գաւառաց ընդ գաւառաց երկրիս Երևանայ, յորս յայս նուագ սփռեցան նախարարք Շահաբասին՝ հանդերձ իւրաքանչիւր զօրօք հանել զբնակիչսն և վարել ըստ առաջնոյն ի Պարսկաստան, սկսեալ ասէ, ի սահմանացն Շիրակայ մինչև Լոռի, ի Նախիջևանայ մինչև ի Կուր գետ, ի Վաղարշակերտոյ մինչև ի յԱրտազ, և յԱրտազ գաւառէ մինչև յՈրմի և ի Դավրէժ, նոյնպէս և ի սահմանս Բզնունեաց և Ռշտունեայց, զոր երևի կրկնութիւն արարեալ աստէն զառաջնոց գերեվարութեանցն և չուոց ժողովրդոցն ի յիշեալ սահմանաց Օսմանեան պետութեան:

Այլ ի սմին բռնավարութեան, որպէս կարգ բանիցն ցուցանէ, զբնակիչս երկրին Երևանայ և նորին սահմանամերձ գաւառացն, որպէս Գառնոյ, Արշարունեաց, որք են ի նմին Արարատեան դաշտին, միայն արտահանեալ յիւրաքանչիւր գիւղից բնակութեանց, նոյնպէս և զԱթոռս Էջմիածին յաւարի առեալ և մերկացուցեալ զնա՝ խառնեցին ընդ առաջնոցն վարելոց ի դաշտն Արարատեան, ընդ որս ի մի բանակ կազմեցին ինմին դաշտի և վարեցին շտապ տագնապաւ յառաջոյ բանակին պարսից մինչև ի Նախիջևան՝ յափն Երասխայ, ուր հասեալ Շահաբաս, և զկնի նորա Սինան փաշայ, բոլոր օսմանեան բանակաւ յառաջ խաղացեալ և յառաջոյ իւր վարեալ զբանակն պարսկական, զտեղի էառ ի Նախիջևան, և Շահաբաս՝ յափն Երասխայ, ուր էրն բանակ բնակչացն ի բռնավարութեան, ի սոսա բերին, խառնեցին և զորս ի բնակչաց գեղջն Գառնոյ, գերեցին զօրքն Շահաբասայ և ի կոտորածէ նոցին, որ յայրս Խորաձորոյն զօղեալքն էին իբրև յամրի ապաստանի:

(1605): *Աստանօր լուեալ Շահաբասայ, եթէ Սինան փաշայ հասեալ է բանակաւն զկնի իւր ի Նախիջևան, մերձ երից ժամուց ճանապարհ, ստիպեաց զզօրավարս իւր անցուցանել ճեպով ընդ գետն զժողովուրդն ամենայն, զի՛ մի անկցին ի ձեռս օսմանցւոց, և զի և նաւք և լաստք ոչ բաւէին վասն ահագին բազմութեանն և ոչ իսկ յամել կարէին, թօթափեցին զօրավարք հետզհետէ զխաժամուժ*

ամբոխն ի գետ անդր յահէ սպառնալեաց Շահաբասայ, որ յեզր գետոյն նստեալ՝ զայրագինս որոտայր ի վերայ վարչացն:

Այսպէս եղև և անցք ջուղայեցւոց ընդ գետն զհետ մեծի բանակին ժողովրդեանն, յորոց բազումք հեղծան, ոմանք ի նորահարսից վարէին ի գերութիւն, և այլք սպանանէին յերկիւղ և յահ դանդաղելոցն, և Ջուղայ քաղաք փարթամ եղև հրոյ ճարակ յետ ելից բնակչացն, զի մի՛ մնասցէ նոցա յոյս կրկին դարձի: Յետ որոյ բանակ բովանդակ ժողովրդեանն ընդ անձուկ և ընդ ափափայս դժուարուստս լերանց ածեալ ի յերկիր ապահով՝ անդ ետուն ձմերել զնոսա, զոր ապա ի գարնան հանին ի Դավրէժ և անտի հասուցին ի Խորին Պարսս յԱսպահան, զքաղաքացիս ի քաղաքս, և զգիւղացիս ի գիւղօրայս բնակեցուցին, և ամենայն հայք, զորս վարեաց Շահաբաս, էին տունք երկոտասան հազար՝ բաց ի կորուսելոցն ի չուս ճանապարհի:

Մելքիսէթ կաթուղիկոս, փախուցեալ ի կէս ճանապարհէ, որ էր ընդ ժողովրդեանն վարելոյ ի Պարսկաստան, եկն յէջմիածին և ժողովեալ զթագուցեալսն և փախուցեալս յեպիսկոպոսաց և ի վարդապետաց, յետ կալոյ անդէն ամիսս ինչ՝ գնաց յԵրևան և զտեղի էառ անդէն, զի անապատ էր դարձեալ Էջնիածին, իսկ Դաւիթ կաթուղիկոս ընդ ժողովրդեանն վարեալ էր յԱսպահան:

Իսկ Սինան փաշայ ոչ ևս զհետ պնդեալ Շահաբասայ, իբրև լուաւ, եթէ այնքան բազմութիւն ժողովրդոց փութով կարաց վարել ի Դավրէժ, անցեալ ընդ Երասխ, ընդ Հեր և Զարևանդ գաւառ՝ գնաց ի Վան և ձմերեաց անդէն իւրով բանակաւն:

Ապա ի գարնան Ալլահվերտի խան հրամանաւ Շահաբասայ յարփակեցաւ յերկիրն և արար գերի և աւար բազում ի մերձակայ սահմանաց Վասպուրականի, յորս կային օսմանցիք, և տարաւ ի Դաւրէժ:

(1606): *Յետ պարտութեան օսմանցւոց յերեսաց պարսից և յետ մահուն սպարապետի նոցին Սինան փաշայի, խաղաց Շահաբաս կրկին ի Գանձակ և առեալ զայն պատերազմաւ և կոտորեալ զայլազգի բնակիչսն՝ եկն ի գաւառն Գեղամայ՝ ի Վայոց ձոր, և բնակեցաւ անդ* (1608), *դարձաւ անտի ի Շամքոռ՝ մերձի Գանձակ, և անդ ևս յետ տիրելոյ այնմ, արարեալ կոտորած մեծ՝ դարձաւ ընդ Դավրէժ ի Պարսկաստան, ուրանօր սէր մեծ ցուցանէր առ վտարեալ ազգ մեր թեթևութեամբ հարկաց, զի մի՛ փախիցեն գաղտնի:*

Յաւերանաց աստի աշխարհիս մերոյ յառաջնոյն Շահաբասայ՝ պատճառեցաւ կրկին գաղթականութիւն հայոց յայլ և այլ պետու-

թիւնս, յորս հարիւրաւոր ամօք յառաջ քաղաքականացեալք էին հայք, զի փարթամք և մեծատուն ազնուականք, որ յերեսաց գերեվարութեանս փախստեամբ ապաւինեալ էին ի քաղաքս ամուրս, ոչ ևս դարձան. ոմանք գնացին ի Կ. Պոլիս, ոմանք ի Մոլդաւիա, ոմանք ի Մազքութ, յԱժդարխան, ոմանք ի Կաֆայ յերկիր Ղրիմայ, այլք ի Պողոնիա, ի Լեհս, և կէսք յայլ և այլ սահմանս, և բազումք ևս կրօնաւորք ցրուեալք յայլ և այլ յաշխարհս: Իսկ որք յետ մեկնելոյ աւարառուացն յաշխարհէս մերմէ, աղքատք և անկարողք ժողովրդեանն ելեալք ի Թագստենէ՝ դարձան և վերստին նորոգեցին զանձնիւր բնակութիւնս կործանեալս և այրեցեալս, զնոսին ևս վերստին ժողովեցին և տարան յԱսպահան տունս իբրև հազարս:

Շահաբաս Ա, յետ վարելոյ զհայս ի Պարսկաստան և բնակեցուցանելոյ զնոսա յԱսպահան քաղաքի խառն ընդ պարսից, գիտացեալ նորա, եթէ ոչ չիջանի ի սրտէ նոցին փափագ և սէր ի հայրենիս դառնալոյ ոչ միայն իբրև յաշխարհ քրիստոնէից, այլև իբրև ի տեղի և ի կեդրոն քրիստոնէական հաւատոյ իւրեանց, ուր է և Աթոռ Հայրապետութեան ընդհանուր ազգի իւրեանց Սուրբ Էջմիածին, և Աջ Սրբոյ Լուսաւորչին՝ իբրև պաշտպան իւրեանց, որով օրհնի Մեռոնն սրբարար և բաշխի յամենայն տեղիս, եդ ի մտի կործանել զէջմիածին, բերել տալ յԱսպահան զԱջ Լուսաւորչին և անդր փոխադրել զԿաթուղիկոսութիւն Հայոց:

Եւ յայս միտ իբրև կամեցաւ շահել Շահաբաս զսիրտ գաղթական ժողովրդոցն Հայոց անդր յԱսպահան, ի խորհելն իւրում ընդ Խոճայ Նազարի իշխանին ջուղայեցւոց յաղագս շինելոյ անդ վասն նոցա զնոր Էջմիածին և քակելոյ զհինն ի հայրենի աշխարհս նոցին, և փոխադրելոյ զհողս և զքարինս նորա ի նիւթ նորոյ շինութեանն՝ Խոճայ Նազար դարձոյց զչար միտս նորա ի բարին՝ասելովն, եթէ կամք արքայի հաճեսցի կանգնել և աստ Էջմիածին, կարող էք յոսկւոյ և արծաթոյ ևս շինել, զինչ հարկ, ուրեմն, զայնչափ աշխատութիւն տարապարտ յանձն առնուլ և մեծագումար ծախուք զքարս և զհողս երկրին ածել այսր, զի բաւական և շատ իսկ են քարինք և հող երկրիս, եթէ սոքօք ևս կամիցիք շինել, շնորհ մեծ լիցի մեզ ի մարդասիրութենէդ:

Ի բանից աստի ի բաց կացեալ Շահաբասայ առ ժամն ի դիտաւորութենէ իւրմէ քակելոյ զէջմիածին՝ դարձ արար նա յաշխարհն Վրաց և յապականութիւն դարձոյց զՎրաստան:

Ի սմին ժամանակի, մինչ Շահաբաս էր ի Վիրս՝ մերձ ի Գորի քաղաք Թագաւորութեան Կախեթու, Դաւիթ կաթուղիկոս, նեղեալ ի հակառակութենէն, որ ընդ Մելքիսէթի, դիմեաց առ արքայն և

ամբաստան եղև զնմանէ առաջի Շահաբասայ, եթէ ետ հանել լատին կրօնաւորաց զնչխարս Հռիփսիմեայ և տանել այլուր:

Իսկ Շահաբաս, զի յառաջագոյն ևս իսկ ոխացեալ էր ընդ Մելքիսէթ կաթուղիկոս վասն գաղտ դառնալոյ նորա յետս ի վարիլն ժողովրդեանն, լուեալ և զայս, բարկացաւ ի վերայ Մելքիսէթի, և յայսմ ամբաստանութենէ Դաւթի առիթ առեալ նորա և ժամ յարմար համարեալ զդիտաւորութիւն իւր կատարել զյառաջագոյն եդեալն ի մտի, զԱՂ Լուսաւորչին փոխադրել յԱսպահան և քանդել զէջմիածին, վասնորոյ գրեաց վաղվաղակի առ որդի Ամիրգիւնայ նախարարին Թահմազ Ղուլի բէկ, որ փոխանակ հօր իւրոյ նստէր յԵրևան, ունել զՄելքիսէթ կաթուղիկոս և պատուհասել, զի հատեալ ի մսոյ նորա և տուեալ նմա ուտել բռնի՝ առաքեսցէ զնա կապանօք առ ինքն և զԱՂ Լուսաւորչին ընդ նմա:

Առեալ Թահմազ-Ղուլի զայսպիսի հրաման Շահին՝ գնաց յէջմիածին, և կալեալ զՄելքիսէթ կաթուղիկոս և զմիաբանսն՝ սպառնացաւ նոցա տալ ինքեան զԱՂ Լուսաւորչին: Եւ ի բանալ նոցա զտեղին, ուր Աղն էր, տեսեալ անդ և զոսկիապատ Աւետարան մի և զխաչ մի արծաթի, էառ և զայնս և եբեր ընդ Մելքիսէթին յԵրևան, ուր ըստ հրամանին արքայի տարածեալ զնա դահճաց ի վերայ գետնոյ և ի չորից կողմանց պրկեալ՝ հատին ագցանաւ զմիս մարմնոյ նորա և ետուն նմա ուտել: Յետ որոյ կապեալ զՄելքիսէթ ի շղթայս՝ առաքեաց առ Շահաբաս ի Գորի՝ հանդերձ Աղով Լուսաւորչին, Աւետարանաւն և Խաչիւ:

Շահաբաս, որ ի շնորհս երեսաց Ամիրգունայ նախարարին ոչ սպան զՄելքիսէթ կաթուղիկոս, որպէս մտադրեալն էր, զի սիրէր զնա նախարարն սակս առատ ընծայիցն, ի գալն նորա, բարկութեամբ խօսեցեալ ընդ նմա, վերստին դարձոյց զնա զօրականօքն առ Թահմազ Ղուլին յԵրևան հանդերձ Աղով Լուսաւորչին՝ գրելով առ նա, զի գնացեալ յէջմիածին՝ հանցէ յորմոց տաճարին զպատուականագոյն և մեծամեծ քարինս, և առաքեսցէ յԱսպահան հանդերձ Աղովն և Մելքիսէթ Կաթուղիկոսիւ:

Թահմազ Ղուլի խան ըստ հրամանի արքային վաղվաղակի առաքեաց յԱսպահան զԱՂն սուրբ՝ հանդերձ Խաչիւն և Աւետարանաւ և Մելքիսէթ կաթուղիկոսիւ, և ապա գնացեալ զօրօք յէջմիածին՝ եհան ի տաճարէն զհնգետասան նշանաւոր քարինսն ըստ Առաքեալ պատմագրին, սեղանն, որոյ վերայ մատչի պատարագ, և սիւն նորա, այս ինքն՝ Վէմ քարն ասացեալ, հանդերձ պատուանդանով, վէմն Իշման տեղւոյն, աւազանն, աստիճանաքարս երկուս ի հարաւային և ի հիւսիսային կողմանց բեմին, չորս քարինք

անկեանց եկեղեցւոյն արտաքուստ, երկու քարեայ ճրագակալքն և երեք քարինք ի սալայատակէ բեմին, զորս և պատեալ կաշւով (1614)՝ առաքեաց ի յաջորդ ամի նոյնպէս յԱսպահան ընդ ձեռն Յովհաննէս քահանային Էջմիածնեցւոյ, որ զԱյն Լուսաւորչին տարեալն էր անդր ի նախընթաց ամին:

Իսկ Շահաբաս, ի դառնալն իւրում յաշխարհէս Վրաց, հրաման ետ Դաւիթ կաթուղիկոսի գնալ յէջմիածին և վարել զիշխանութիւն ի խնամս Ամիրգունայ նախարարին, որում յանձն արար, որոյ եկեալ յԱթոռս, առաջի աչաց նորա հանեալ եղեն յիշատակեալ քարինքն:

(1616): Ի դրժել Շահաբասայ պայմանին ընդ դրանն Օսմանցւոց, և յառաքելն ի վերայ սորա սուլթան Ահմէտի զբազմութիւն զօրաց իւրոց երկիցս անգամ յաշխարհ Հայաստան՝ ի Գանձակ և ի Նախիջևան, և ընդ գերել նոցա ի կողմանց Դավրիժոյ ոգիս իբրև երեսուն հազար յայլ և այլ ազգաց՝ եկն միւսանգամ Շահաբաս ի Հայաստան, և ոչ կարացեալ նորա առնել ինչ ընդ եղեալսն՝ եկն և բանակեցաւ ի լերինս Գառնւոյ ի Վայոց-ձոր:

Աստ լուեալ նորա վերստին զտառապանս Դաւիթ կաթուղիկոսին յԱմիրգունայ նախարարէն և ծանուցեալ, եթէ առ սիրոյ Մելքիսէթի ատէ նա զԴաւիթ, և զի Մելքիսէթ յետ առաքելոյ ի Շահէն յԱսպահան առանց հրամանի վարէր անդ զկաթուղիկոսութիւն, ընդ ձեռն ծառայից իւրոց բերել ետ առ իւր կապանօք զՄելքիսէթ, այլ ի վարանիլ նորա ի հոգս պատերազմին և ի գալ իւր և ձմերել ի Նախիջևան, առ դրան նորա մնացին երկոքին ևս կաթուղիկոսքն՝ Մելքիսէթ ի կապանս, և Դաւիթ ի վարանս:

Ուր ապա Դաւիթ ընկալեալ ի Շահէն պարգևի մասին ի դարման պիտոյից իւրոց գիւղ մի յԱսպահան՝ գնաց անդր նորին հրամանաւ կալ ի լռութեան:

Իսկ Մելքիսէթ ի շղթայս կալով ի բանակին՝ իբրև կամէր Շահն ընդ տուգանօք արկանել և զնա, որպէս արար անդ յԱգուլիս զՄովսէս և զՊօղոս վարդապետսն յետ անպարտ նահատակութեան անդէն Անդրէաս քահանայի, կոչեաց զՄելքիսէթ առ ինքն և յետ բազում սպառնալեաց շնորհեալ նմա զկեանս, յազատութիւն նորա ի տառապանացն՝ հրամայեաց նմա տալ յարքունիս երեք հարիւր թուման, և զրկեալ յիշխանութենէ՝ գնալ, ուր կամք իցեն նմա, և մերժեաց յերեսաց իւրոց և մնաց այնպէս կացեալ ի բանակին:

(1618): Ի տառապանս յայսմիկ նեղեալ և չարչարեալ Մելքիսէթի, ի հատուցումն ապա իւրոց այս ամենայն չարեաց և ի թեթևութիւն ինքեան ի ժամանակաւոր վշտացն, զոր կրէր նա ըստ

բնութեանց իւրոց, կամեցաւ մշտնջենաւորապէս տառապեցուցանել փոխանակ իւր և զողորմելի Աթոռս Էջմիածին և արկանել ընդ տուգանօք մի միայն վասն բարեկեցութեան իւրոյ և շռայլելոյ տրովք առ այլազգի իշխանաւորս, յաղագս որոյ կրկին թուղթս աղաչանաց մատուցեալ նորա առ Շահն՝ խոստանայր ամ ըստ ամէ տալ ինչս յարքունիս ի ռոճիկ ծառայից նորա, եթէ հաստատեսցի յիշխանութեանն: Որով և զերծեալ Մելքիսէթ ի կապանաց՝ յեկն յէջմիածին և հոգայր զտարեկան կապալն, զոր եդ ի վերայ Աթոռոյս:

Գնացեալ Շահաբաս յԱսպահան՝ առաքեաց նախարարս զօրօք ի կողմանս Դավրիժոյ, Արտաւիլայ, Երևանայ և Գանձակայ՝ վարել զամենայն հայս նորեկս, որոց ժողովեալ իբր տասն հազար տունս ի կողմանցն նշանակելոց՝ վարեցին անդրէն ի Պարսկաստան և բնակեցուցին զքարահատսն ի նոցանէ ի հարաւային կողմն Ասպահանայ, և մնացեալսն՝ ի քաղաքն կոչեցեալ Վահրապատ, յորոց հազիւ չորս հարիւր տունք մնացեալ էին ի ժամանակս պատմագրին Առաքելի Դավրիժեցւոյ:

Յառաջնում ամի լրանալոյ արքունի հարկին վճարման, զոր պայմանաւ եդ Մելքիսէթ ի վերայ Էջմիածնի, սահմանեաց Շահաբաս ի վերայ Մելքիսէթի զարս չորս երևելիս՝ հանդերձ ծառայիւք նոցին՝ առնուլ ի նմանէ զսահմանեալ հարկն, որք ոչ միայն զհարկն պահանջէին, այլ և զծախս իւրեանց և զծառայիցն առնուին ի կաթուղիկոսէն, ըստ որոյ և յանճարանալ նորա տանել ծանրութեան պարտուցն՝ ձեռն էարկ յամենայն անկարգութիւնս ի վանորայս և ի ժողովուրդս ի հայթայթել զհարկն, որ իբրև ոչ կարաց վճարել, և ազգն ևս գիտելով զվնասակարութիւն նորա՝ մերժեաց զնա իսպառ, և զի յընթացս չորս ամաց հասեալ էր պարտքն ցչորս հարիւր թուման, հրաժարեալ նորա ի կաթուղիկոսութենէն՝ ձեռնադրեաց զեղբօրորդի իւր՝ զՍահակ եպիսկոպոս ի կաթուղիկոսութիւն Հայոց, և ինքն հուսկ ամենայնի յազատութիւն ի ձեռաց հարկահանացն (1624) փախեաւ ի Կոստանդնուպօլիս, բայց մերժեալ նորա յազգէն և անդանօր՝ գնաց ի Լեհաստան՝ յԻլով քաղաք, և ձեռնադրեաց անդ զՆիկոլ եպիսկոպոս, զորոյ անցսն ի նորին գործս Նիկոլի գրեմք ի յաջորդ գլուխդ: Զորոյ և զմնացորդս տառապանաց կրեաց ի հարկահանաց Շահաբասայ Սահակ կաթուղիկոս, մինչև եբարձ զայն Մովսէս կաթուղիկոս յետ փախստեան նաև Իսահակ կաթուղիկոսի և ազատեաց զԱթոռս ի պարտուց (1628), որով և վախճան էառ հալածանք Առաջնոյն Շահաբասայ:

ՏԻՐԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Անծանօթ մատենագիր Ժ. դդ դարու–[1]

Տիրան վարդապետ անծանօթ էր ազգիս մատենագրաց կարգը, ուստի և նորա հեղինակութիւնները աւելի անծանօթ ազգիս գրականութեան մէջ:

Սորա նշանակեալ հեղինակութիւնը որ ի ներքոյ, կայ սուրբ Աթոռոյս գրատանը, և մի քանի օրինակներ են, որպէս և կյիշատակուի ի ցանկս նիւթոց ճառընտրաց անդ:

Ուրիշ ժամանակ պատեհ կունենանք Սուրբ Աթոռոյ գրատան վրայ ընդարձակ տեղեկութիւն տալ հանդերձ քանի մի ձեռագրաց ծանօթութեամբ , իսկ աստ Տիրան վարդապետի վրայ ինչ ինչ գրքերէ առած ծանօթութիւններս մի առ մի կը նշանակեմք հանդերձ նորա մատենագրութեան վրայ մեր գրած ծանօթութիւններով, որ ժամանակաւ յառաջ գրած եմք գրաբառ ըստ այսմ:

«Ի խնդիր են յազգիս միշտ արդիւնաւոր վաստակք գրականութեան նախնեաց մերոց հարց. որովք լուսաւորութեան ազգիս հիմն եդաւ ի Լուսաւորչացն մերոց թարգմանչաց, և որ յետ նոցին ի նոյն հետևողաց՝ յիմաստից նոցին զարգացմունս. մանաւանդ որ յոսկեղէն գրչաց երջանիկ մատենագրաց ազգիս անկորուստ մեզ հասին: Տինա և որոց անգիւտ ցարդ մնացեալ անմատոյց ի բանասիրաց յանկիւնս ուրեք մերոց հայրենեաց, նոցին անուամբն և եթ ճոխանայաք:

Յայսպիսեաց են սակի և այնոքիկ, որոց հազուագիւտ գաղափարք միամտութեամբ աղաւնւոյ աւանդեալ ի մերայնոց յազգային գրականութեան նենգողացն ի ձեռս, ի խոյզ և ի խնդիրն լինել նոցա, ցորչափ նոցին տպագրութեամբն յղփանան, որք գրաւոր հարստութիւնքն են ազգիս, նոյնչափ և զազգս մեր նախատեն իբրու չգիտողս ոմանս յարգ և զարժէք յիշատակաց հայրենի հարստութեանց. և այս հաւասարակշիռ հատուցմունք նոցա այո՛ այո՛ երախտագէտ սրտից առ ի նոցանէ՝ ի տրիտուր փոխարինի մերոց բարեսիրացն ձեռնտուութեանց բարեպաշտական դիտմամբ յանմահութիւն գործոց ի վայելս ազգիս:

Բայց գիտէ աշխարհ, թէ Հայք չեն անգրագէտք և անմեծարուք նախնեացն թղթոց, այլ որք նշխարեցին նենգողաց զյիշա-

1 ԱՐԱՐԱՏ, 1876, 93-96

տակս ինչ գրաւոր հնութեանց, եռանդ էր այն ազգասէր ոգւոյ վասն ազգի օգտին նուիրեալ. բայց իբրև դրացին մեր և համազգայինն ի մէնջ օժանդակեալ գործովն, զգործ նոյն՝ յանգրագիտութիւն մեզ ի վեր երևեցոյց, բացաւ և առագաստ նենգութեանն. և ահա յայն վայրկեան զառաջինն ազգական ոգւով հայրենասիրութեան ազգասէրքն մեր ի ցոյցս մեծարանաց նախնեացն մատենագրութեանց, թո՛ղ զանցեալսն առաջինս՝ ածին մուծին ի տիպ երէկ և այսօր զՍէբէոս եպիսկոպոսի պատմագրութիւն և Տանն Արծրունեաց զԹովմային Արծրունւոյ, որպէս զի մի՛ ևս անկցին այնոքիկ դաւողացն ի ձեռս. որոց մատեանք ոսկեզօծելովքն եղերօք ախորժակս գրասիրաց մանկտւոյն զարթուցեալ, զգանձս ազգիս նման աղբեր գանձեն ի մթեր, և զի հայրենասիրացն այնոցիկ ճաշակ մատուցեալ ազգայնոց ազգային մատենագրութեան, յուսացին և ակնկալեացն հասանել մերոյ ազգիս գրատպութեամբք, ըստ որոյ գուցէ և ընտիր և հազուագիւտ գաղափար գրոց մնացեալ տակաւին ի ձեռագիրս՝ յանապատս և ի վանօրայս ազգիս, ո՛չ անխնամ ապահովեսցեն յայսմհետէ յուսով տպագրութեանց համազգային ձեռնտուութեամբք:

Մատենագրութիւն Տիրանայ վարդապետի՝ է պատասխանի հարցմանց Թագաւորացն Աղուանից Ատրներսեհի և Փիլէի. գործ գոլով սորա մի յընտիր մատենագրութեանց նախնեաց, է շարայարեալ յոճ միջին դարու, որպէս թուի, առ ժամանակօք երջանկայիշատակ Հայրապետաց Յովհաննու Օձնեցւոյ և Յովհաննու Դրասխանակերտցւոյ՝ և այլոց սոցին ժամանակակցաց. համառօտագիր լուսաբանութիւն մթին և խորհրդական տեղեաց Հին և Նոր Կտակարանաց ՃԾԲ պարբերութեամբ ի ստեղծագործութենէ աշխարհի մինչև ցՀամբարձումն Տեառն՝ հանդերձ յառաջաբան թղթով՝ առ նոյն թագաւորսն Աղուանից. յորոց հայցուածոցն հարցմանց՝ ստիպեալ է գրել սուրբ վարդապետն ըստ իւրումն վկայութեան, որպէս տեսցի ի յառաջաբանին:

Ցանկալի էր յոյժ, եթէ և զհարցմունս թագաւորացն կից ընդ պատասխանեաց դնէր սուրբ վարդապետն. մի՝ զի վասն կարևոր իրաց լինելով խնդիրքն՝ գրասէր ոգւոց նոցին եղձ ծանօթ լինէին յետագայիցս. և միւս՝ զի ի նոցունց հարցմանցն բանից՝ իցէ թէ կարողանայաք հաւաստել զժամանակ մատենագրելոյ հեղինակին զայս գործ. ըստ որում օրինակն մեր չունի զթուական գրչութեան, և ո՛չ իսկ ձեռագիր մատեանն, յորմէ արտագրեցաք, ուր թէ և այլուր չգտաւ, որպէս ասացաք՝ օրինակ այսր մատենի, որով գէթ

դիւրին լինէր մեզ և ամենայն գրասիրաց առնուլ ծանօթութիւն զհեղինակէն, թէ յորո՞ւմ ժամանակի և ո՞յր վանաց վարդապետ լեալ իցէ. զի Տիրան անուն վարդապետ ի կարգս մատենագրաց ազգիս չյիշատակէ և Միքայէլ եպիսկոպոս Սալլանդեան, որ Հայոց Եկեղեցւոյն մատենագրաց անուանս ժողովեաց ի գաւազան յառաջին դարէ անտի քրիստոնէութեան մինչև ց19-րդ դար:

Միայն տեղի ապաստանի ունիմք ի գիւտ ժամանակի գրչութեան մատենիս՝ զՄովսէս Կաղանկատուացի զպատմագիր Աղուանից. որ ի քսաներորդ երրորդ գլուխ մատենին Բ հատորոյ, յազգահամարս թագաւորաց տանն Աղուանից յիշատակէ միայն զԱտրներսէհ որդի Սահլի, որ ի Տոհակայ՝ Տէր Սիւնեաց, «որոյ ասէ, բռնազբօսութեամբ կալեալ էր զգաւառն Գեղամայ»:

Ատրներսեհիս այսմիկ որդիք են՝ Գրիգոր և Աբուսէթ, որոյ և թոռն որ ի Գրիգորոյ՝ Սահակ Սեւադայ կոչեցեալ, աներ Երկաթն Աշոտոյ՝ այր քաջ. իսկ Փիպէ ո՛չ անդ ի կարգս Աղուանիցն թագակալաց, այլ Փիլիպպէ կայ անուն թոռին յիշեալս Ատրներսեհի՝ որդի Սահակայ. ոյր և որդի միւս էր նոյնպէս Ատրներսէհ. եթէ հաւանիմք ուղիղ դատման, թէ յանգրագէտ գրչաց յապաւեալ իցէ Փիլիպպէդ անուն ի Փիպէ, յայնժամ հաւաստեաւ գտանեմք զստուգութիւն իրիդ առ ժամանակօք թագաւորին Բագրատունեաց Երկաթն Աշոտոյ, այս ինքն զժամանակ կենաց Տիրանայ վարդապետի, և խնդիր հայցուածոց երկուց եղբարցն՝ ժառանգաց թագաւորութեան Աղուանից, ի նորին Տիրանայ: Յայլում պատեհի տացուք և զառաւելն քան զայս ծանօթութիւն ի վերայ արքայորդւոցս, որոց երևի ի գահ արքայական ամբարձեալ, երբ բանք իցեն մեզ զՄովսէսի զԱղուանից պատմագրութենէն:

Նորոյ գրուածոյ ևս հանդիպեցաք ի ձեռագիրս յաւուրս յայսոսիկ, յորում ընծայի և այլ հեղինակութիւն՝ Հաւատոյ թուղթ անուամբ՝ Տիրանայ վարդապետի. զոր ընդ մերոյ վերնոյն Տիրանայ՝ համարիմք նոյն»:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԱՔԱՐԻԱՅ ՊԱՏՄԱԳՐԻ՝ ՍԱՐԿԱՒԱԳԻ ՅՈՎՀԱՆՆԱՎԱՆԱՅ[1]

Զաքարիա Սարկաւագ Յովհաննավանաց, որ էր ի սերնդոց ազատացն Վրաց, որոյ և նախնիքը Քանաքեռ գիւղը կընակէին, մեր ազգի մեջ Դավրիժեցի Առաքել պատմագրէն ետքը եօթնեւտասներորդ դարու պատմագրաց մեկն է:

Սա իր պատմագրութիւնը երեք հատորի բաժանելով՝ առաջին և երկրորդ հատորոց պատմութիւնը Շահաբազայ օրէն կսկսանի և կհասցնէ մինչև հայոց ՌՃԼԶ (1687) թուականը, որ Եղիազար կաթուղիկոսի իշխանութեան ժամանակը կիջանի, իւր կենաց հասակի վաթսուներորդ տարին, ինչպէս ինքը կգրէ, ի ժամանակի ծերութեան իւրոյ:

Իսկ իւր պատմագրութեան երրորդ հատորը Յովհաննավանից Կոնդակ ասացեալն է, որ կսկսի նոյն վանքի պատմութիւնը ի Ս. Լուսաւորչէն և կհասցնէ մինչև վերոյիշեալ թուականը, ուր վանքի շինութեան և յարատեւութեան անցքերը կարգաւ կպատմագրէ, արձանագրութիւնները ի մի վայր կխմբագրէ, առաջնորդաց շարքը հանդերձ թուականով նաև կալուածքները կնշանակէ և իր ժամանակի քանի մի առաջնորդաց պատմութիւնը կենսագրական տեղեկութեամբ կտայ և իր նախնեաց ազգաբանութեամբ կը կնքէ զայն:

Ոճը անարուեստ է, թեև գրաբառ, բայց աշխարհաբառի խառնուրդով կը կազմէ: Այս ևս գովելի է, որ բոլոր անցքերի հաւաստիքը վկայութեամբ և ականատեսութեամբ կգրէ. պատմութեանց երեք բաժինը գրեթէ իր վաթսնամեայ հասակին մեջ լսած ու տեսած Հայաստանի կեդրոնամիջին պատահած դէպքերն են: Ուրիշ անգամ առանձին տեղեկութիւն կտանք պատմագրութեան վրայ:

Այսքան համառօտաբար տեղեկութիւն տալով Զաքարիայի պատմագրութեան վրայ՝ նորա կենսագրութիւնը անենք նորա պատմագրութեան երրորդ հատորէն:

Վերը յիշեցինք, որ Զաքարիա Սարկաւագին սերունդը Վրաց ազատների ցեղից կիջնէին, որոց համար ինքը կպատմէ իրենց ազգաբանութեան մէջ, որ այն ազատները տասներկու երիտասարդ տղայք էին ազատ տանէ: Սուրբ Գէորգայ մասունքը վերադարձնելու պայմանաւ՝ այս տղայքը իւր նախարարներէն ժողվելով,

1 ԱՐԱՐԱՏ, 1870, սեպտեմբեր, 151-155

Յովհաննավանքը պատանդ կուղարկէ Վրաց Դաւիթ (Դաթո) թագաւորը, որոյ իշխանութեան տակն էր այն ժամանակ և Արարատեան աշխարհքը, որ է Յովհաննավանք:

Այլ երբոր թագաւորը կդրժէ իր ուխտին, այս ազատ որդիքն էլ մէկ ժամանակ նեղութիւն քաշելով վանքին մէջ, կցրուին այս տեղ, այն տեղ Արարատեան գաւառին մէջ, յորոց Ղապօ անուն մէկը կգայ Քանաքեռ գիւղը: Սորա ցեղէն Մկրտիչ անուն, որ որդի ի հօրէ առնլով՝ Ղապօյի եօթներորդն էր, կծնանի զԶաքարիա:

Ինքը կպատմէ, որ իր Մկրտիչ հայրը այս Վրաց ազատորդւոց ցեղէն էր, ըստ այսմ, ինչպէս ասացինք. «Եւ նա ունէր, կասէ, որ ի վաղնջուց դրած էր ժողովածու, սորա մէջ դրած էր վասն որդւոցն Վրաց որդւոց յորդի, մինչև ցհաւրն իմ Խաչատուր, իսկ հայրն իմ, կասէ, գրեալ էր ի հօրէ և յեղբարց իւրոց և վասն իւր այն գիրքն կայր առ մեզ, և յորժամ եղև ահագին շարժն (յամին 1679), գիրքն այն անյայտ եղև»:

Զաքարիա իրենց ազգաբանութենէն իմանալով, որ իրենք Յովհաննավանքին պատանդ են, իր տասը տարուան հասակին մէջ կերթայ, կը կրօնաւորի այն վանքի մէջ, մանաւանդ որ իր հօրեղբայրն էլ այս ցանկութեամբ անդ միաբանել և անդ վախճանած էր: Ինքը իւր այս կրօնաւորելուն թուականը չի ցոյց տար, բայց իր գրոց Գ. հատորի յառաջաբանին մէջ, որ կնշանակէ իր պատմագրութեան թիւը և իր կենաց ամքը՝ վաթսուն, սոյն գրոց վերջին գլխի մէջն էլ կգրէ, թէ յիսուն տարի է, որ կընակի Յովհաննավանք, որով անսխալ կգտնենք սորա վանական լինելու թուականը, որ կելանէ Հայոց ՌՁԶ թիւը՝ (1637) Փիլիպպոս կաթուղիկոսի իշխանութեան հինգերորդ տարին, երբ որ նա գնացել էր Ասպահան՝ Սուրբ Լուսաւորչի Աջը բերելու:

Այս թուականիս Զաքարիա Յովհաննավանք մտնելով՝ աշակերտեցաւ իրեն անուանակից Զաքարիայ եպիսկոպոսին, որ այն տարի Յովհաննավանքին վանահայր կարգուած էր Փիլիպպոս կաթուղիկոսէն:

Այս վանահայրը կբարեկարգէ մենաստանը և ամեն կերպ զարդարելեն ետքը՝ կհաստատէ նաև դպրատուն վանքին մէջ, և ուսուցիչ կը կարգէ Զաքարիա:

Զաքարիա եպիսկոպոսէն ետքը, Զաքարիա կաշակերտի նորա յաջորդ Յովհաննէս վարդապետին. այս երկու վանահարց քառասուն և եօթը տարի ձեռնասուն աշակերտ կը լինի Զաքարիա: Կերևի, թէ այս միջոցիս սարկաւագ եղած է, և այս աստիճանը իբրև ի վարձ իւր բազմամեա ծառայութեանը տրուած, վասն զի մարմնոյ

պակասութիւն ունի եղել՝ կաղութիւն ոտից, ինչպէս յետագայք Կալ Զաքարիա կը կոչեն, միայն թէ ինքը որոշ չի գրեր, թէ յիշեալ վանահարց որէ՞ն առած է սարկաւագութեան աստիճանը, այլ այսպէս կպատմէ. «Որ և ես՝ վերջին ի ծնունդս Եկեղեցւոյ, քանքարաթագոյց ծառայ Քրիստոսի՝ Զաքարիա, գոլով ի փարթամ աւանէն Քանաքեռայ, որ եկեալ բնակեցայ յԱստուածաբնակ և ի հրաշափառ մենաստանս Յովհաննավանից, առ դրունս մեծի Ամլորդւոյն Յովհաննու Կարապետին, առ ոտս երիցս երանեալ քաջ բաբունապետին Զաքարիայի և նորուն յաջորդի Յովհաննէս վարդապետի՝ ամս խէ ընկալեալ աստիճան Արշիդիակոնութեան»:

Այս տեղից կերևի, որ Զաքարիա Սարկաւագը իւր պատմագրութեան Ա. և Բ. հատորոց վրայ չի խօսիր, ուստի հաւաստի է, թէ յետոյ պիտի գրած լինի Ա. և Բ. հատորը, թէ որ յառաջ գրած լինէր, անշուշտ, պիտի յիշէր, կամ Գ. հատորին յառաջաբանութիւն առանձին չէր գրէլ:

Մենք այս տեղ վերը գրածներս ստուգելու համար դնենք Գ. հատորոյ յառաջաբանութիւնը, որ կսկսանի այսպես:

ԿՈՆԴԱԿ ՅՈՎՀԱՆՆԱՎԱՆԱՑ

«Ցուցմունք ժամանակաց և պատմութիւնք նոցին գրեալ եղև յառաջնոց պատմագրաց, որք ի ժամանակս և ի դարս գրեցին, որպէս գիտացին ըստ իւրեանց իմաստութեանն՝ զերից ժամանակաց, այսինքն՝ զանցեալն ընթեռնլով, զներկայն գրելով և զապագայիցն յուշ առնելով, յայտ արարին. ոմանք յաճախաբանութեամբ, ոմանք համառօտելով, ոմանք յառաջագիրք, և ոմանք ժամանակագիրք, որպէս և պատմութիւնն իւրեանց ցուցանէ ըստ ոճին իւրեանց, ոմանք փիլիսոփայական ճարտասանութեամբ, և ոմանք Աստուածաշունչ գիտութեամբ, ոմանք լի իմաստութեամբ, և ոմանք աշխարհօրէն, և որով իւիք և է, մեզ ծանուցին զանցեալն, զի և մեք, ներկայումս ուսանելով, ապագայիցդ ծանուսցուք:

Որպէս և ես՝ վերջինս ի ծնունդս Եկեղեցւոյ, քանքարաթագոյց ծառայ Քրիստոսի՝ Զաքարիա, գոլով ի փարթամ աւանէն Քանաքեռոյ, որ եկեալ բնակեցայ յԱստուածաբնակ և ի հրաշափառ սուրբ մենաստանս Յովհաննավանից, առ դրան մեծի Ամլորդւոյն Յովհաննու Կարապետին, առ ոտս երիցս երանեալ քաջ բաբունապետին Զաքարիայի և նորուն յաջորդի՝ Յովհաննէս վարդապետի՝ ամս խէ ընկալեալ աստիճան Արշիդիակոնութեան, և յամե-

նայն օր դեգերէի, թէ ընդէ՞ր ոչ գոյ հաստատուն Կոնդակ առ այն, այլ և խորհէի առնել, սակայն ոչ լինէի ձեռնհաս յաղագս երկուց. նախ՝ զի ընդ ձեռամբ տերանց էի, երկրորդ՝ ի մէջ մարմնաւոր զբաղմանց, բայց յետ վախճանի տերանց իմոց վերոգրելոց, հարկեցայ այժմուս Առաջորդէ՝ ի Սարգիս վարդապետէ՝ խոհեմոյ և բանասիրէ. արարի ինձ օժանդակ Հոգին Սուրբ և ամենամաքուր կոյսն Մարիամ, և միջնորդ ունելով ողջախոհ և անմեղ աղաւնին զսուրբ Կարապետն, և սկսայ առնել ի ժամանակի ծերութեան Կ. ամի կենաց իմոց ի թուին ՌՃԼԶ, և թէ տացէ կարողութիւն նոյն Հոգին Սուրբ աղօթիւք ձերովք՝ յայտ արարից, որպէս և գիտեմք, թէ՛ ի պատմագրաց, թէ՛ յիշատակարանաց, թէ՛ յարձանաց և թէ՛ ի լրոց իմաստուն արանց և ի գիտուն ծերոց, նշանակեցից զամենայն ստուգութեամբ, զի որք զկնի մեր գայցեն՝ ընթեռնլով ի միտ առնուն, որպէս և Մովսէս ասէ. «Հարցջի՛ր դու հարց քոց, և պատմեսցի քեզ ի ծերոց, և ուսցիս զամենայն, որպէս և կամիս, վասնորոյ և դու, ո՛վ մտերիմ հարազատ, որ ընթեռնուս, մի՛ ապախտ համարեսցիս, զի կարողութիւն իմ այսքան է, ո՛ղջ լեր»:

Յիշեալ Գ. հատորոյ վերջին գլուխը, որ Զաքարիա Սարկաւագի ազգաբանութիւնն է, նորա յաւարտն այսպէս կվերջաբանէ.

«Վասնորոյ աղաչեմ առ լուսածնունդ զաւակսդ սուրբ աւազանին՝ որդեգրեալք հօրն երկնաւորի, բազմաչարչար նահատակութեամբ սուրբ Լուսաւորչին, համակրօն և միադաւան Ասքանազեան շառաւիղէ սերեալք, որք մակաղեալ կայք ի գոգ և ի ծոց սուրբ Կարապետիս, մի՛ վարկպարագի համարիք զաշխատանս ստորասուզեալ և գետնամածեալ ծառայի ձերոյ. ընդ բազում երախտեաց ձերոց ընկալարուք և զսակաւս իմ, վասն զի են յագունք, որ յոգունց զյոգունս ճօնեն, և ես՝ փոքրս ի փոքունց, ընձեռեցի, որպէս ի նկարսն զսեաւն չարայարեալ, ընդ մեծին՝ զմանունսն կարգեալ, վասնորոյ ընկալարու՛ք զխեցեղէնս ի պէտս արտաքոյ լաւացն, զի մի՛ ի ժամու պիտոյիցն՝ լաւն վատթարիցի, ո՛ղջ լերուք ամենայնիւ առ ամենայն իրս:

Ի թուիս ՆՆ. ՃՃ. ԾԾ. ԺԺ. ԵԵ. ԳԳ. , այսինքն՝ ՌՃԼԶ (1687), որ է Զաքարիայի վաթսնամեայ հասակին թուականը, թուականին տակը անմիջապէս գրած է. «գծեցաւ ձեռամբ յոգնամեղ Գրիգորի Երևանցւոյ»:

Զաքարիա Սարկաւագի պատմագրութիւնը Ս. Աթոռոյս տպարանէն յետ ոչ բազում աւուրց ի լոյս կընծայուի, որով կյուսանք, թէ մեր ժողովուրդը, ծանօթանալով այնպիսի հռչակաւոր մենաս-

տանի առաջին վայելչութեան և շքեղութեանը և այժմեան աւերանաց և ամայութեանը, կը շարժին ի ջերմեռանդութիւն՝ նորոգելու և վերստին ուխտիւ և միաբանութեամբ պայծառացնելու զՍուրբ Յովհաննու վանքն և ազատելու զայն յաւերանաց և ի կործանմանէն, յորում գտանի այժմ, ինչպէս տեսողք ևս կվկայեն, կյուսանք ևս, որ փոքր միջոցում նորա տեղագրութիւնն էլ Արարատի միջոցաւ կհրատարակենք:

ԱՐԺԱՆԱՅԻՇԱՏԱԿ ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ[1]

Արարատ ամսագրոյս մեծարգոյ թղթակիցներէն Պ. Գալուստ Շիրմազանեանց երջանկայիշատակ Ղուկաս կաթուղիկոսի վրա գրած այլանդակ պատմութիւնը հանելով ի սրբոց Յակովբեանց յուխտէն յԵրուսաղէմ 1872 թուին տպուած գրքէն՝ իւր համոզմանց մէջ անհրաժեշտ պարտք կդնէ միաբանութեանս վրա՝ ճշմարտութիւնը պաշտպանել... և թոյլ չտալ մի ուղղափառ կաթուղիկոսի անուն և համբաւը յումպէտս հերձուածողութեամբ արատաւորի նորա եօթանասուն և երկու տարի վախճանէն յետոյ (Տե՛ս Արարատ Է. տարի, թիւ Գ):

Մենք մասնաւորապէս մինչև ցայսօր մեր այս սուրբ պարտաւորութիւնը չկատարեցինք՝ յուսալով, որ մեր «ձեռքը կանցնի» հուսկ ամենայնի նշանակեալ գիրքը, և ըստ այնմ մեր պարտաւորութիւնը կը կատարենք, յորմէ և այլ բազում այլանդակութիւնք ազգիս բազմաշխատ և վաստակաւոր կաթուղիկոսաց վրա գտնել կմակաբերենք:

Բայց տակաւին մեր ձեռքը չհասնելով գիրքը ցայս վայր, մեր ընթերցող ազգայնոց անտարբեր չերևնալու համար ճշմարտութիւնը յերևան հանելու կփութամք. ճշմարտութիւն, որ եթէ հրապարակական թերթերի մէջ թագուցուած լինէր, լռութիւն պահելը խոհեմութիւն էր ժամանակիս խառն միջոցներին նայելով, բայց այսպիսի գրքի գուցէ անգիտութեամբ արած զրպարտութիւնը ջրելու պարտքը և մեք կը կատարեմք աւասիկ, որ Ղուկասու նման վաստակաւոր և ի սէր ազգին և եկեղեցւոյ տառապակիր կաթուղիկոսի անուան վրայէն այնպիսի անհաստատ ի կրօնականս և դիւրահաւատ ընաւորութեան կեղտը սրբուի, մինչդեռ արժանայիշատակ հանգուցեալն յիւր ժամանակին մէկ կողմէն Աթոռը պայծառացնելով, միւս կողմէն քաղաքական բազմավրդով ժամանակին բռնաւոր իշխանութեանը կդիմէր յաղերս և ի խնդիր՝ իւր ժողովուրդը չգերելու և իւր Եկեղեցին պահպանելու:

Եթէ մեր կրօնական թշնամիքը ի նախատինս մեզ և ի պարծանս պապականութեան այդպիսի կրօնափոխութեան կեղտ դրած լինէին Ղուկաս կաթուղիկոսի վրա, երբէք արժանի էլ չէր մեզ պատասխանելու, բայց ահաւասիկ Միքայէլ Զամչեան, որ Ղուկասու

1 ԱՐԱՐԱՏ, 1876, էջ 12-16

աթոռակալութիւնը կգրէ Կաթուղիկոսաց պատմութեան վերջը՝ յԳ հատորոյ մէջ, այսպիսի զրպարտութիւն երբէք չի յիշեր նորա վրա, բայց երբ որ մեր ազգային տանէ կը բղխի այն «պղտոր աղբիւրը»՝ սրբոց Յակոբեանց ուխտէն և այն իւր նիւթովն ամբողջ գրքի մէջ և «Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութիւն» անուամբ, որ և հեղինակը՝ յիշեալ Զամչեան, պատմութիւնն անգամ չի կարդացել, ի՞նչ ասենք, բայց եթէ այս:

Դնենք, թէ հեղինակը պղտոր աղբերէ առած էր այնպիսի մի զրպարտութիւն, բայց Երուսաղէմի Ս. Պատրիարգը, հետևաբար և Ս. Յակովբեանց ուխտի կրօնական ժողովը չկարդա՞ց, չխորհե՞ց և չդատե՞ց զձեռագիրը կամ ձեռագրողը, որ այնպէս արձակ համարձակ հրատարակուեցաւ յիշեալ ուխտի տպարանէն ի լոյս և ի տես աշխարհի՝ իններեասներորդ դարու սկիզբը վախճանող կաթուղիկոսի վրա անլուր զրպարտութեամբ:

Մի՞թէ Հայաստանեայց Եկեղեցիէն դուրս է և Երուսաղէմն՝ մեր, մի՞թէ նորա փառքն ու նախատինքը մերը չէ, և մերը՝ փոխադարձաբար նորան, մի՞թէ կարող է և կը կամի երբէք Հայրապետական Աթոռոյս տպարանը Երուսաղէմի պատրիարգաց անցելոց և ներկայից վրա այսպիսի զրպարտութիւն թոյլ տալ իւր մամլոյն տպելու՝ առանց պղտոր աղբիւրը ցուցանելու:

Մինչ դեռ մեր ժամանակի ազգային հեղինակները պապական եղբարց գրուածքը ազգային մատենագրաց վկայութեամբն հանդերձ չեն ընդունիր կամ շատ կասկածանօք, վասն զի պատմութիւնք կամ ևս առաւել եկեղեցական պատմութիւնք խմորով զանգուած կը համարին:

Ուստի այսպիսի մեծ զրպարտութիւն Ղուկաս կաթուղիկոսէն վերցնելու համար ճշմարտութեան պաշտպան պիտի լինի ընդ մեզ և Ս. Յակոբեանց ուխտը՝ իւր տպարանի համբաւը չկոտրելու և Հայաստանեայց Եկեղեցւոյ ասացեալ պատմութեան հեղինակի անունը կասկածանքէ փարատելու՝ հրատարակելով այն յօդուածը, ուստի առած է Ղուկաս կաթուղիկոսի վրա հայթայթեալ սուտ և սնոտի պատմութիւնը:

Իսկ մենք յիշեալ արդիւնաւոր և վաստակաբեկ հայրապետի պատմութիւնը, թէ ուստի՞ և ո՞ր աղբիւրէ առած եմք, և ի՞նչ գրաւոր ապացուցութիւն ունիմք ի ձեռին, բաց ի եպիսկոպոսաց ձեռնադրութեան Մաշտոցի յիշատակարանէն, որ տպուած է ամսագրոյս անցեալ տարուայ սեպտեմբերի թերթին մէջ, կը գրեմք աստ և Աստապատցի Աբրահամ վարդապետի գրած ընդարձակ պատմա-

կան յիշատակարանը, որ Ղուկաս կաթուղիկոսին ժամանակակից գոլով, ինչպէս Մահմատ խանի արշաւանքը կգրէ ի Հայաստան և ի Վիրս, նոյնպէս և վկայ կլինի յիշեալ կաթուղիկոսի կրած տառապանաց և աշխատութեանց ի դրունս զօրավարաց և մեծամեծաց խանին անդ ի բանակին ի սէր ազգիս և եկեղեցւոյն իւրոյ հոգևոր որդւոց և մեծ գումարով ազատեց զժողովուրդն ի գերեվարութենէ յամին 1796:

Ի յիշատակարանի ձեռագիր Աւետարանին, եղելոյ ի Վանս սրբոյն Թովմայի Առաքելոյ յԱգուլիս, գրեցելոյ ի թուականին Հայոց ՌՃԺ, գրեալ է Աբրահամ վարդապետ յետ ընծայաբերութեան բանիցն զանցս ժամանակին այսպէս:

«Քանզի առ մերովս ժամանակաւ որդին Մահմատ Հասանայ մեծազօր բռնաւորին՝ Աղայ Մահմատ խանն, ըստ յաջողելոյ բաղտին զօրացեալ յոյժ՝ յինքն գրաւեաց զբովանդակ աշխարհն Պարսից և տիրեաց մասնաւորապէս նաև այլոց աշխարհաց, և թագաւորական անուամբ և շքով նստէր ի քաղաքն Թէհրան: Սա ի թուականիս մերում ՌՄԽ եկն անթիւ բազմութեամբ զօրաց ի Դավրէժ քաղաք և ի Մարանդ գաւառ և անտի հրաւիրակս առաքեալ յերկիրն Ատրպատական՝ յինքն կոչեաց զամենայն նախարարս, այս ինքն՝ զխանն Հատրբէճանու, սկսեալ ի յՈրմիոյ մինչև ցԱրտաւիլ, ընդ որս և զքաջ իշխողն Նախիջևանայ՝ զՔեալբալի խանն՝ զորդի Հասան խանին, որք հնազանդութեամբ գնացին առ նա և եղեն նմա հարկատուք, և նորա մեծապէս պատուեալ զսա և զամենեսին՝ դարձոյց յիւրաքանչիւր (տեղիսն)՝ առնլով պատանդս ի սոցանէ՝ զոմանց կանայս, և զոմանց որդիս և զեղբարս»:

«Բայց Հերակլ բարեպաշտ արքայն Վրաց և նախարարքն Շուշի բերդին և Երևանայ ոչ կամեցան մտանել ընդ լծով հնազանդութեան նորա, և նա ի նմին ամի դարձ արարեալ՝ գնաց ի քաղաքն իւր ի Թէհրան, և զկնի երկուց ամաց առաքեաց զստրատելատն իւր՝ զՍիւլէյման խանն, որ նստաւ ի Դավրէժ քաղաքի և կոչեաց առ ինքն զՔեալբալի խանն Նախիջևանայ, կասկածեալ ի նմանէ վասն քաջութեան նորին, զի մի՛ ապստամբեսցի միանգամայն, և զի իւրեանց ձեռնտու լիցի և զօրավիգն ի մարտ պատերազմի, զոր առեալ տարաւ ընդ իւր ի Թէհրան առ Աղայ Մահմատ խանն, որ մնաց անդէն առ նմա ամս երկու, և ի բազում տեղիս բազում քաջագործութիւնս և յաղթութիւնս արարեալ՝ պատուեցաւ և փառաւորեցաւ յոյժ ի նմանէ, և ստացաւ անուն քաջութեան, վասն զի նա ինքն Քեալբալի խանն է իրաւասէր և արդարադատ, խնամող

Հայկազեանց ազգի, սիրող եկեղեցւոյ և վանօրէից, միանգամայն և քաջահմուտ և յաջողակ ի զինուորական իրողութիւնս և առիւծանման հզօր ի պատերազմի, որ անձամբ անձին մղէր զբազում պատերազմունս յաղթական՝ գտեալ յամենայնի օգնականութեամբ վերին զօրութեան:

Քանզի ի թուականութեանս մերում ՌՄԼԸ (1789) նախարարն Ահարայ, այն է՝ Ղարադաղի, Մուստաֆայ խանն եկն բազում զօրօք ի վերայ Գողթան գաւառի և կողոպտեալ՝ յաւարի էառ զամենայն ինչս մեծի Առաքելական Աթոռոյս՝ զեկեղեցականս և զարտաքսականս, և եկեալ Քեալպալի խանին՝ խորտակեաց զզօրութիւն նորա մեծաւ քաջութեամբ և փախոյց զնա ամօթով յետս, և զկնի երկուց ամաց Իբրահիմ խանն Շուշի բերդին ժողովեալ զլեռնականս, ոյք լեկզի կոչին, եկն ի վերայ սորա ծանր զօրօք, և սա ամրացաւ ի բերդն իւր ի Նախիջևան և յետ քանի մի աւուրց օգնութիւն գտեալ յԵրևանայ և ի Խոյայ՝ ել յամրոցէն, և եհար չարաչար զզօրս նորա և ցանուցիր կացուցեալ՝ փախստական արար, և այլ բազում մասնաւոր քաջութիւնս արար , զորոց չէ տեղւոյս գրել մի ըստ միոջէ, զոր և ի թուականութեանս մերում ՌՄԽԳ առեալ ընդ իւր Աղայ Մահմատ խանին՝ գնաց ի վերայ Նիւթալի խանին, որ նստէրն ի Քիրման քաղաքի, զոր յետ պաշարելոյն ամիսս ութ, էառ մեծաւ պատերազմաւ և զբազումս ի բնակչացն սրոյ ճարակ ետ, և զնոյն ինքն՝ զՆիւթալի խանն ձերբակալ արարեալ՝ կուրացոյց զաչս նորա, որ զկնի սակաւուց զիւրովին դեղակուր եղեալ՝ վճարեցաւ ի կենաց, յետ որոյ առաւել ևս զօրացեալ Աղայ Մահմատ խանն՝ հաստատեցաւ յիշխանութեան իւրում: Եւ ի թուականիս մերում ՌՄԽԴ եկն միւսանգամ անթիւ բազմութեամբ զօրաց Պարսից ի յԱտրպատական երկիր՝ բերելով ընդ իւր և զՔեալբալի խանն, և անցեալ ընդ Երասխ գետ՝ դիմեաց ի յԱրցախ աշխարհ, որ է Ղարաբաղ, և պաշարեաց զանառիկ զընդարձակ բերդն Շուշի և անտի ասպատակ սփռեալ՝ յաւարի էառ զգաւառսն Աբանդայ, զՋաւընդուր և զԳիւնէիւզ, և գերեաց զբազումս: Եւ զեղբայր իւր՝ զԱլիղուլի խան, առաքեաց երկոտասան հազար զօրօք առ Նախիջևանաւ ի վերայ Երևանայ, որոյ եկեալ՝ բանակեցաւ Հանդէպ բերդին, ուր ընդառաջ նորա եկն աստուածապատիւ Հայրապետն ամենայն Հայոց Տէր Ղուկաս երջանիկ Կաթուղիկոսն Ս. Աթոռոյն Էջմիածնի իբրև քաջ հովիւ՝ հոգւոց դնելով զանձն իւր ի վերայ Հօտին և հարսին հոգևորի, և մատոյց նմա բազում ընծայս ըստ արժանւոյն՝ ջանահնար լինելով յամենայնի զերծուցանել զՍուրբ Աթոռն ի

գլխաւոր վնասուց, և առ այս ծախեաց անդէն առ դրան նորա չափազանց դրամս՝ ոմանց բազում և ոմանց սակաւ տալով, և ինքն սրբազան Հայրապետն մեծապէս փառաւորեցաւ և խիլայեցաւ ի նմանէ»:

«Իսկ յետ աւուրց ինչ զօրավարն Պարսից մեկնեցաւ անտի՝ առեալ պատանդ ի Մահմատ խանէն Երևանայ զկին և զեղբայր նորա, և գնաց դէպ ի Վրաստան, քանզի Աղայ Մահմատ խանն, որ նստէր ի վերայ Շուշի բերդին, իբրև ետես, թէ պաշարումն քաղաքին երկարի յոյժ և դժուարին է առնուլն, եթող զայն և խաղաց ամենայն հեթանոսական բազմութեամբն յաշխարհն Վրաց և փախուցեալ զարքայն նոցա՝ զբարեպաշտն Հերակլ, էառ զմայրաքաղաքն Տփխիս, քանդեալ աւերեաց զշինուածս քաղաքին, կոտորեաց զբազումս ի բերան սրոյ և զանհամար քրիստոնեայս, մանաւանդ զհայս ի գերութիւն վարեաց ըստ ծովացեալ մեղաց մերոց, և յաւարի էառ զամենայն ինչս և զստացուածս նոցա և զանօթս եկեղեցեացն, մանաւանդ զՄայր Աթոռոյն մերոյ Սրբոյն Էջմիածնի մեծագոյն զգեստս, և զմարգարտաշար և զականակուռ թագս և սաղաւարտս, և զոսկեղէն և զարծաթեղէն ծանրագին անօթս, որք անդէն ի նմին քաղաքի ի պահեստի էին, ընդ նոսին և զբազում պատուական գրեանս»:

«Եւ յետ աւուրց ընդ կրունկն դարձաւ անտի Աղայ Մահմատ խանն և եկն ի սահմանս Գանձակայ, որ է Գեանճայ, և զի Քեալբալի խանն Նախիջևանու փեսայ էր Մահմատ խանին Երևանայ, զսա առաքեաց անտի առ Մահմատ խանն՝ հաւանեցուցանել զնա և ածել առ ինքն, որոյ եկեալ յԵրևան՝ միամտեցոյց զաներ իւր՝ երաշխաւոր դնելով զինքն վասն նորա առաջի Աղայ Մահմատ խանին, և առեալ ընդ իւր՝ տարաւ առ նա, զոր բազում սիրով ընկալեալ Աղայ Մահմատ խանին՝ մեծապէս պատուեաց իբրև զազգական իւր, քանզի և իշխողն Երևանայ բուն ազգաւ պարսիկ էր, որոց ցեղն յատուկ անուամբ Ղաճար կոչի»:

«Եւ յետ աւուրց չուեաց անտի Աղայ Մահմատ խանն և եկն յարգաւանդահող և ի յընդարձակ դաշտն Մուղան, և բանակ հարեալ՝ նստաւ անդ, և ի նմին տեղւոջ խիլայեաց զՄահմատ խանն Երևանայ և մեծապէս փառաւորեաց՝ կացուցեալ զնա Մարզբան, այս ինքն է Բէկլարբեկի, և դարձոյց ի տեղի իւր»:

«Եւ քանզի անդր, քան զԿուր գետն եղեալ նախարարքն, այս ինքն՝ Դարբանդայ, Բաքուայ և Նուխուոյ և այլոց տեղեաց ևս խանքն հնազանդեալ էին Աղայ Մահմատ խանին, և թոշակ տա-

յին զօրաց նորա, և միայն Շամախի էր ի միջի անդ ապստամբ, վասնորոյ առաքեաց Աղայ Մահմատ խանն զքաջ զօրավարն իւր՝ զՔեալբալի խանն, բազում զօրօք ի վերայ Շամախւոյ, որոյ գնացեալ անդր՝ յապականութիւն դարձոյց զերկիրն, և պատեալ պաշարեաց զամրոցն, ուր էր արգելեալ ինքն նախարարն Շամախւոյ, բայց զկնի սակաւուց ի տեղի Քեալբալի խանին առաքեաց Աղայ Մահմատ խանն զայլ ոմն զօրավար, և զնա եբեր առ ինքն և մեծապէս պատուեալ՝ փառաւորեաց, և դարձոյց խիլայիւ ի քաղաքն իւր ի Նախիջևան: Եւ ինքն Աղայ Մահմատ խանն բանակեալ է առայժմ ի Մուղան դաշտին և ունի ձմերել անդէն և յաւուրս գարնան գնալ վերստին ի վերայ Շուշի բերդին: Առ նոյն ժամանակաւ, թէ զինչ իրագործութիւնք հանդերձեալ են լինել, Աստուծոյ է գիտելի, որ Տէրն է ժամանակաց». գրեալ ի թուականիս Հայոց ՌՄԽԷ և Փրկչական 1796»:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ
ԹԱԳԱՒՈՐԱՑ ԻՍՐԱՅԷԼԻ ԵՒ ՏԱՆՆ ՅՈՒԴԱՅ[1]

Թէ ի քանի՞ ամս թագաւորեցին և յորո՞ւմ տեղւոջ, ո՞ւր օծան և յորո՞ց մարգարէից, թէ ո՞յք ի նոցանէ յաստուածպաշտութեան կացին և ո՞յք կռապաշտեցան, զի՞նչ գործեցին և յորո՞ւմ տեղւոջ Աստուածաշնչին գրեալք, հանդերձ ծանօթութեամբք:

Ընդ որս և բովանդակութիւն Ա և Բ Մնացորդաց և Եզրասայ երից գրոցն:

Թագաւորք Իսրայէլացւոց	*Ու՞ր գրին*	*Ու՞ր թագաւորեցին*	*Ի քանի՞ ամս*
1. Սաւուղ թագաւոր օծանի ի Սամուէլէ, թագաւորէ Իսրայէլի	*Ա. Թգ. ժ. 1.*	*Յերուսաղէմ*	
2. Դաւիթ օծանի ի Սամուէլէ առ կենդանութեամբ Սաւուղայ, թագաւորէ Իսրայէլի		*Ի Քեբրոն*	*7*
		Յերուսաղէմ	*33*
3. Սողոմոն օծանի ի Սադովկ քահանայէ և թագաւորէ Իսրայէլի	*Գ. Թգ ա. 39*	*Յերուսաղէմ*	*40*
Շինէ զտուն Տեառն յամի ելից Իսրայէլի յԵգիպտոսէ 440, և ի չորրորդ ամի թագաւորութեան իւրոյ, զամս եօթն կատարի տուն Տեառն:	*Գ. Թգ. զ...*		
4. Ռոբովամ՝ որդի Սողոմոնի, օծանի ի Սիկիմ, այլ թէ յո՞ւմմէ, չի՛ք անուն	*Գ. Թգ. ժբ. 1*		
5. Աբիու՝ որդի Ռոբովոմայ, թագաւորէ Յուդայ, ի սմանէ սկսանի չդնել տեղի օծութեան, և թէ յորո՞ց օծան ի մարգարէիցն	*Գ. Թգ. ԺԷ.1*	*Յերուսաղէմ*	*3*
6. Ասա՝ որդի նորա, թագաւորէ Յուդայ	*Գ. Թգ. ժե. 9*	*Յերուսաղէմ*	*41*
Սա արար ուղղութիւն առաջի Տեառն, որպէս Դաւիթ, և ի բաց արար զմայր իւր ի տիկնութենէ, զի կռապաշտեաց	*Անդ. 13*		
7. Յովսափատ՝ որդի նորա, թագաւորէ, առնէ ուղղութիւն առաջի Տեառն: Ի սորա աւուրս Եղիսէ մարգարէ:	*Գ. Թգ. իբ. 42*	*Յերուսաղէմ*	*25*
8. Յովրամ՝ որդի նորա, թագաւորէ, արար չար առաջի Տեառն, զի դուստր Աքայաբու էր նորա ի կնութեան:	*Դ. Թգ. ժը. 16*	*Յերուսաղէմ*	*40*
ՅԱ Մնացորդաց ԻԱ, 20, դնէ զութն ամ թագաւորել սմա Յերուսաղէմ և մեռանել:			

1 ԱՐԱՐԱՏ, 1875, 376-382

9. Աքայաբ՝ որդի Ամրեայ, թագաւորէ Իսրայէլի, յերեսուն և ութերորդ ամի թագաւորութեան Ասայի՝ արքայի Յուդայ, առնէ չար առաջի Տեառն, քան զամենեսեան, որ յառաջ, քան զնա էին:	Գ. Թգ. ժզ. 29 Անդ. 30	Ի Սամարիա	
Առնու յիւր կնութիւն զՅեզաբէլ՝ դուստր Յովբաղայ արքայի Սիդոնացւոց:	31		
Կանգնէ սեղան Բահաղու ի տան գարշելեաց նորա, առնէ անտառ ի բարկացուցանել զՏէր: Աբդիու հազարապետ Աքայաբու՝ այր երկիւղած յԱստուծոյ, յառաջագոյն ի կոտորել Յեզաբէլայ՝ կնոջ Աքայաբու, զմարգարէս Տեառն, թագոյց զհարիւր այր մարգարէ յիսուն յիսուն յայրի և կերակրեաց զնոսա հացիւ և ջրով:	Գ. Թգ. ժզ. 33 Անդ. ժը. 3		
Այլ թէ վասն ի՞նչ պատճառի կամ ո՞ւր ուրեք կոտորեաց Յեզաբէլ զմարգարէս Տեառն, ոչ գրի ի գիրս Թագաւորութեանցն և ի Մնացորդսն ևս: Եւ թէ ո՞յք էին նոքին մարգարէքն՝ չի՛ք յիշատակութիւն:			
10. Ոքոզիա՝ որդի Յովրամայ, թագաւորէ: Սպանանի Ոքոզիա ի Մակկեդով, զի եհար զնա ի կառսն Յէու ի զառիվայրն Բերայի, ուստի հանին զնա ծառայք նորա և թաղեցին յԵրուսաղէմ ընդ հարս նորա:	Դ. Թգ. ը. 25	յԵրուսաղէմ	1
11. Գոգոզիա՝ մայր Ոքոզիայ, յետ մահուան որդւոյն կորուսանէ զամենայն զաւակ թագաւորութեան ի տանն Յուդայ, յորոց ապրի միայն որդի Ոքոզիայ՝ Յովաս, ի տաճարի Տեառն, ուստի Գոգոզիա թագաւորէ Երուսաղէմի զամս վեց:	Անդ. Թ. 27		
Սպանանի ի տան թագաւորին յամին եօթներորդի ի թագաւորել Յովասայ:	Անդ. ժա.		
12. Յովաս՝ որդի Ոքոզիայ, թագաւորէ: Օծաւ ի Յովիադայ քահանայէ և պահեաց զուխտն ընդ Աստուծոյ: Այլ յամբարշտիլն իւրում, յորժամ Ազարիա՝ որդի Յովիդայեայ, խօսեցաւ նմա զպատգամս Տեառն, յարեաւ ժողովուրդն հրամանաւ Յովասայ և քարկոծեաց զնա ի սրահի տան Տեառն:	Անդ. ժբ.	յԵրուսաղէմ	40
13. Ամասիա՝ որդի նորա, թագաւորէ Յուդայ: Արար ուղղութիւն առաջի Տեառն, և ապա ի բաց եկաց ի նմանէ. սպանին զնա զօրքն ի Ղաքիս և թաղեցին յԵրուսաղէմ:	Անդ. ժդ.	յԵրուսաղէմ	29

14. Ազարիա՝ որդի նորա, թագաւորէ Յուդայ: Ըստ օրինակի հօրն՝ գնաց առաջի Տեառն: Զսա պատմութիւնն ի ԻԶ. գլ. 2. հմր. Մնացորդաց՝ կոչէ Ոզիա:	Անդ. ժե.	յԵրուսաղէմ	52
15. Յովաթամ՝ որդի Ոզիայ, թագաւորէ Յուդայ: Արար ուղղութիւն առաջի Տեառն:	Դ. Թգ. ը. 32	յԵրուսաղէմ	16
16. Աքազ՝ որդի Յովաթամայ, թագաւորէ Յուդայ: Արար ուղղութիւն առաջի Տեառն:	Դ. Թգ. ժզ. 2	յԵրուսաղէմ	16
17. Եզեկիա՝ որդի նորա, թագաւորէ Յուդայ: Սա արար ուղղութիւն առաջի Տեառն, նման սորա չեղև ոք ի թագաւորս Յուդայ, զի յար և նման Դաւթի գործեաց, ի չորրորդում ամի թագաւորութեան սորա թագաւորանիստ քաղաքն Իսրայէլի՝ Սամարիայ, առաւ յարքայէն Ասորեստանեայց և գերեցաւ յԱսորեստան: Իսկ ի չորեքտասաներորդում ամի թագաւորութեան սորա ել Սենեքերիմ արքայն Ասորեստանեայց ի վերայ Յուդայ, և Եզեկիա ետ նմա հարկս, այլ զօրավարք նորա պաշարեն զԵրուսաղէմ, բայց ըստ պատգամաց Եսայեայ մարգարէի, յորժամ լսելի եղեն աղօթք Եզեկեայ առ Տէր, հարուածս ընկալաւ ի հրեշտակէն բանակն Սենեքերիմայ և փախեաւ ի Նինուէ, ուր և Ադրամելէք և Սարասար՝ որդիք նորա, հարին զնա սրով ի տան աստուածոց նորա Նեաքարայ և գերծան յերկիր Արարատ:	Անդ. ժը.	յԵրուսաղէմ	29
Հիւանդանայ Եզեկիա, և Եսայի պատգամէ նմա մեռանիլ ի նմին, այլ մինչ յաղօթսն լինի յապաստան, Եսայի մարգարէ աւետէ նմա բանիւ Տեառն ողջանալ նմա և յաւելուլ յաւուրս կենաց նորա և զհնգետասան ամս. և նշան տայ մարգարէն ուղղութեան նորա՝ դառնալ ստուերին զտասն աստիճանօք անդրէն յետս և զպաղատիտ թզոյ դնել տայ ի վերայ վիրին և ողջացուցանէ:	Անդ. ժը. 19		
18. Մանասէ՝ որդի նորա, թագաւորէ Յուդայ: Արար չար առաջի Տեառն, կանգնեաց զսեղան Բահաղու, զոր կործանեաց հայր նորա ի տան Տեառն, որով մոլորեցոյց զազգն, ոչ լուաւ Երեմիայ մարգարէի՝ ըստ բանի Տեառն առ նա:	Անդ. ի Անդ. իա.	յԵրուսաղէմ	59

Սա հեղու զարիւն անպարտ բազում յոյժ մինչև ելից զԵրուսաղէմ ի ծայրէ ի ծայր, յարուցանէ Տէր ի վերայ սորա զիշխան զօրուն Ասորեստանեայց, որ և կալաւ զՄանասէ և տարաւ կապանօք ի Բաբիլոն, յորում ժամանակի դարձաւ առ Տէր, և ծանուցեալ զնա միայն Տէր՝ արար զաղօթս իւր, որով և դարձաւ վերստին յԵրուսաղէմ և կործանեալ զկուռս ի տանէն Աստուծոյ՝ ուղղեաց զսեղան Տեառն: Ամք թագաւորութեան Մանասէի յԲ. Մնացորդաց գլ. ԼԳ. հմր. 1. դնին յիսուն և հինգ:	Երեմիա. ժե Բ. Մնաց. լգ. 11-17		
19. Ամմոն՝ որդի Մանասէի, թագաւորէ Երուսաղէմի: Սա ոչ արար ուղղութիւն առաջի Տեառն, վասն որոյ և ծառայք նորա հարին զնա ի տան իւրում: Այլ յԲ. Մնացորդ. ԼԳ. 21 դնին ամք երկուք թագաւորութեան նորա:	Դ. Թգ. իա. 19	յԵրուսաղէմ	12
20. Յոսիաս՝ որդի նորա, թագաւորէ ընդ նորա: Առնէ ուղղութիւն առաջի Տեառն և զամենայն սեղանս Բահաղու և զօրութեանց երկնից եհան ի սրահից տաճարին և այրեաց, և զամենայն տօնս Աստուծոյ վերստին նորոգեաց՝ զողջակէզս, զպասէքն և զսեղանս Աստուծոյ, զայս ամենայն արար յերեքտասաներորդ ամի թագաւորութեան իւրում: Տայ պատերազմ ընդ Փարաւոն Նեքաւով արքայի Եգիպտացւոց, այլ վտանգեալ անդէն յաղեղնաւորաց՝ դառնայ յԵրուսաղէմ և մեռանի: Ի վերայ սորա կարգեաց Երեմիա զողբ իւր:	Անդ. իբ.	յԵրուսաղէմ	31
21. Յովաքազ՝ որդի նորա, թագաւորէ զամիսս երիս յԵրուսաղէմ, արար չար առաջի Տեառն, զսա կապեաց Նեքաւով ոչ ևս թագաւորել նմա յԵրուսաղէմ և ած յԵգիպտոս, որ և փոխանակ սորա թագաւորեցոյց Երուսաղէմի զեղբայր նորա՝ զԵղիակիմ՝ որդի Յոսիայ, զորոյ և փոխեալ զանունն՝ կոչեաց Յովակիմ, ուստի սոյն:	Անդ. իգ. 30		
22. Եղիակիմ, որ և Յովակիմ, թագաւորեաց Երուսաղէմի, արար չար առաջի Տեառն, յաւուրս սորա էլ Նաբուգոդոնոսոր՝ արքայ Բաբելոնի, ի վերայ Երուսաղէմի, որում ծառայեաց Յովակիմ զամս երիս և վտարանջեաց դարձեալ և մեռաւ:	Անդ. 34	յԵրուսաղէմ	11

23. Յովակիմ կամ Յեքոնիա՝ որդի Նորա, թագաւորեաց ընդ Նորա զամիսս երիս և արար չար առաջի Տեառն: Արքայն Եգիպտացւոց ոչ ևս յաւել ելանել յաւուրս սորա ի վերայ Երուսաղէմի և Հրէաստանի, զի Նաբուգոդոնոսոր էառ ի հեղեղատէն Եգիպտացւոց մինչև ցգետն Եփրատ: *Ի սմին ժամանակի ել Նաբուգոդոնոսոր արքայ Բաբելոնի յերուսաղէմ, որում անձնատուր եղև արքայ Յովակիմ յութերորդ ամի թագաւորութեան իւրոյ, ընդ որում Նաբուգոդոնոսոր գերեաց ի Բաբելոն զմայր և զամենայն աղխ տանն արքունի, զամենայն գանձս տան Տեառն և տան արքային, և զարս՝ տասն հազար, և պատերազմողս՝ զեօթն հազար, դահիճս և հիւսանս՝ հազար, թողլով միայն զաղքատս երկրին, յորոց վերայ թագաւորեցոյց զՄեթթանիա՝ որդի Յովակիմայ, փոխելով զանունն Սեդեկիա, ուստի*	*Անդ. իդ. 6*	*յերուսաղէմ*	*8*
24. Սեդեկիա՝ որդի Յովակիմայ, թագաւորէ Երուսաղէմի, արար չար առաջի Տեառն, և զի սրտմտութիւն Տեառն էր ի վերայ Երուսաղէմի և Յուդայ, նչկահեաց սա զարքայն Բաբելացւոց, յորմէ թագաւորեացն: *Ապա յերրորդ ամի թագաւորութեան սորա եկն Նաբուգոդոնոսոր ի վերայ Երուսաղէմի ամենայն զօրօք և պաշարեաց զայն, այլ ի սաստկանալ սովու ի քաղաքին, խրամատեալ գիշերի զքաղաքն՝ ելանէ զօրօք ընդ ճանապարհ Արաբիոյ, բայց քաղդէացի զօրք հասեալ առ նա և ցրուեալ առ ի նմանէ զզօրսն՝ կալանաւորեն զնա և ածեն առ Նաբուգոդոնոսոր ի Դեբղաթայ, անդ առաջի Սեդեկիայ կոտորեալ զորդիս Նորա և կուրացուցեալ զնա ինքն՝ զՍեդեկիա, ածէ կապանօք ի Բաբելոն:* *Յետ հինգ ամսոց ի վերայ անցանելոյ գայ յԵրուսաղէմ յանդիմանակաց արքային Նաբուգոդոնոսորայ Նաբուզարդան դահճապետ, այրէ զտուն Տեառն և թագաւորին և զԵրուսաղէմ քաղաք ողջոյն, զպարիսպն շուրջանակի կործանէ և զմնացորդս ժողովրդեանն գերէ՝ թողեալ յաղքատաց այգեգործս և արդիւնարարս, գերէ և զամենայն սպաս տաճարին՝ զոսկեղէնսն և զարծաթեղէնս և զպղնձեղէնս, զսիւնսն պղնձիս և զմեքենովթսն, զքահանայս և զդպիրապետն իշխանի զօրուն:*	*Դ. Թգ. իդ. 17*	*յերուսաղէմ*	*11*

Եւ ի վերայ մնացորդաց ժողովրդեանն կարգեցաւ Գոդողիա հրամանաւ արքունի, բայց և նա հարաւ յիշխանաց զօրուն Նաբուգոդոնոսորայ յեօթներորդում ամսեան իշխանութեան իւրոյ, ըստ որոյ և մնացորդք ժողովրդեանն մտին յԵգիպտոս՝ փախուցեալ յերեսաց քաղդէացւոց:	Դ. Թգ. իե. ցվերջն		

Առաջին Մնացորդք

Առաջին Մնացորդքն ազգահամար առնէ զցեղս Իսրայէլի յԱդամայ մինչև ցմահ Սաւուղայ և անտի շարունակէ զպատմութիւնն ցմահ Դաւթի յարևնման պատմութեան ի գիրս Թագաւորացն, որովք ի մէջ առնու զպատմութիւն Առաջին Թագաւորաց յերեսներորդ միերորդ գլխոյն ցերկրորդ գլուխ ցմետասաներորդ համար Երրորդ Թագաւորութեանն:

Երկրորդ Մնացորդք

Երկրորդ Մնացորդն շարունակէ նոյնպէս զպատմութիւն Թագաւորացն ի բազմելոյ Սողոմոնի յԱթոռ Թագաւորութեան՝ մինչև ցգերութիւնն Բաբելոնի և անտի մինչև ցառաջին ամ Թագաւորութեան Կիւրոսի արքային Պարսից, կամ ցեօթանասներորդ ամ գերութեանն, յորում ժամանակի, ըստ մարգարէութեան Երեմիայ Իե. 13 և Իթ. 10, հրաման արար Կիւրոս գերելոցն դառնալ յԵրուսաղէմ և շինել զտաճար Տեառն՝ տալով նոցա ևզսպաս տաճարին:

Յերկրորդում յայսմ Մնացորդի պարունակի պատմութիւն ի Սողոմոնէ ցերեսներորդ եօթներորդ ամ գերութեանն, այն է՝ յերրորդ գլխոյ երրորդ Թագաւորութեան ցվերջն չորրորդ Թագաւորութեան, որ է երեսներորդ եօթներորդ ամ գերութեան Յովակիմայ արքայի Յուդայ, և ի Յովակիմայ մինչև ցՍաղմանասար և մինչև ցԶօրաբաբէլ՝ ցառաջին հիմնարկութիւն տաճարին հրամանաւ Կիւրոսի:

Առաջին և Երկրորդ Մնացորդք, թէև համառօտ, բայց զամենայն գործս Թագաւորաց Յուդայ և Իսրայէլի մի առ մի գրել ոչ զանց առնեն:

Առաջին Եզրաս

Եզրասայ առաջին գիրքն սկսանի ի գործոց անտի Յօսիայ արքայի Երուսաղեմի՝ յերեքտասաներորդ ամաց Թագաւորութեան նորա, յորում ժամանակի արար նա զզատիկ Տեառն յԵրուսաղէմ: Եւ ի մէջ առնու զգերութիւնն Երուսաղէմի ի Բաբելոն, զդարձ հրէից յԵրուսաղէմ ի շինութիւն տաճարին

հրամանաւ Կիւրոսի, որոց գլուխ էր Սաղմանասար, զխափանումն շինութեանն հրամանաւ Արտաշիսի, և վերստին սկզբնաւորութեան այնորիկ հրամանաւ Դարեհի ընդ ձեռն Զօրաբաբելի Սաղաթիէլեան, զազգահամար դարձելոցն ի գերութենէն, յորում ժամանակի և յԵրուսաղէմ մարգարէանային Անգէ և Զաքարիա: Եկն և Եզր քահանայ՝ որդի Ազարիայ ի Բաբելոնէ, և իշխանք՝ ըստ ցեղից իւրեանց ընդ նմա, յորմէ հետէ և ցվերջ ինքնին Եզր քահանայ պատմէ, թէ որպէ՞ս ելին, և որպէ՞ս զարծաթն ետ քահանայից տան Տեառն յԵրուսաղէմ՝ տուեալս յԱրտաշիսէ, և յամենայն Հրէաստան քարոզ կարդայ թողուլ ի բաց զկանայս, զորս ածեալ էին յայլազգեաց ի գերութեանն հակառակ Մովսիսական օրինաց:

Երկրորդ Եզրաս

Եզրասայ երկրորդ գիրքն սկսանի յառաջին դարձիցն հրէից ի Բաբելոնէ յաւուրս Կիւրոսի՝ յառաջնում ամի թագաւորութեան նորա և զմի և նոյն պատմութիւն առաջին Մնացորդացն ի Կիւրոսէ շարունակէ ցվերջն՝ ցքարոզութիւն Եզրի յաղագս արձակելոյ հրէից, զկանայս, զդստերս այլազգեաց, որով և թողուն՝ ըստ օրինացն Մովսիսի:

Երրորդ Եզրաս

Եզրասայ երրորդ գիրք, որ և Նէեմեայ, ի սկզբանէ ցվերջ պատմէ զշինութիւն պարսպին Երուսաղէմի, զի Նէեմի՝ որդի Աքազեայ, գոլով ի Շուշ քաղաքի մատռուակ Արտաշէս արքայի, հրամանաւ նորա և հրովարտակաւ գայ յԵրուսաղէմ և վերակացութեամբ իւրով կանգնէ զպարիսպ քաղաքին ի յիսուն և երկու աւուրս, գտանէ զգիրս Ազգահամարին, որք ելեալ էին յառաջնումն ի գերութենէն Բաբելոնի, ժողովէ յերուսաղէմ զամենայն ժողովուրդս հրէից, զմեղս և զանօրէնութիւնս նոցա եղեալ առաջի՝ դնեն ուխտ առաջի Աստուծոյ և առնել խոստանան զամենայն օրէնս նորա, և զգիրս ուխտին կնքեն քահանայք, ինքն Նէեմի և Սեղեկիա, և գլխաւորք ժողովրդեանն, և ըստ ամենայնի պատուիրէ նոցա խստիւ սուրբ առնել զշաբաթն»:

«ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ԳՐԵԱԼ Ի ՄՍԵՐԱՅ Մ. ՉՄԻՒՌՆԱՑԻՈՅ[1]

Ամբողջ տետրակը գրուած է երեսուն և հինգ յօդուածով, յորս կամփոփուի Եկեղեցական պատմութեան մանր ուսմունքը: Վեհափառ Հայրապետի կողմից ինձ յանձնեալ լինելով գննել այն տետրակը, ըստ որում կրօնական գիրք, որ տպուելէն յառաջ հոգևոր Իշխանութեան պիտի ներկայացուէր, մէջը նշմարուած պատմութեան ընդդէմ կտորները աստէն կնշանակենք:

Քսանևվեցերորդ յօդուածի մէջ կգրէ. «Հայոց եկեղեցին կամելով յայտնել Քրիստոսի Յարութեան համար ուրախութիւնը, կանոն դրած է, որ այն օրը (Քրիստոսի Յարութեան կիրակի օրը ի զատկին) Քահանայք և դպիրք եկեղեցումը սպիտակ զգեստներով զարդարուին»:

Այս կամոնը ո՞ւր դրուած է՝ չենք գիտեր. վասն զի Հայոց եկեղեցական կանոնների մէջ չենք գտել, թէ և հեղինակը կգրէ, թէ Հայոց եկեղեցին կանոն դրած է:

Իսկ Հայոց Եկեղեցին յօրինակ հրեշտակի ի հանդերձս սպիտակս երևելոյն Քրիստոսի գերեզմանում, արդարև սպիտակ զգեստ գործ կդնէ, չէ թէ բոլոր Քահանայք ու դպիրք, այլ միայն Իւղաբերից աւետարան կարդացողը և սարկաւագն և մոմ բռնող դպիրք, և այն՝ ոչ միայն զատկի օր, այլ և ամեն Յարութեան կիւրակէ օրերը, Իւղաբերից աւետարան կարդալու ժամանակ. եթէ կայ այնպիսի եկեղեցի մի, որ զատկի կիւրակէ օրը քահանայք և դպիրք եկեղեցումը սպիտակ զգեստներով կզարդարուին, այս եկամուտ է, գուցէ ուրիշ ազգերից առած: Եթէ արժանայիշատակ հեղինակի այս եկեղեցական պատմութիւնը տպագրող նորա որդին՝ Հայոց Եկեղեցւոյ դրած կանոնը ցոյց կտայ, մենք նախընթացաբար խոստանում ենք, որ այս մեր նշմարածը՝ կանոնին համաձայնացնենք:

Երեսուն և չորսերորդ յօդուածի մէջ՝ Հայոց ազգային եկեղեցական ժողովները քառասուն և եօթն միայն է թուել. սորա համար էլ կարճ ասենք: Հեղինակը արդեօք իւր ընդունա՞ծը միայն կթուէ՝ եթէ Հայոց Եկեղեցւոյն արած ժողովն ու ընդունածը. եթէ իւր ընդունածն է, պէտք էր մի առ մի թուել քառասուն և եօթն

1 ԱՐԱՐԱՏ, 1874, 127-128, 269 -271:

ժողովներն էլ, որ կարդացողը իմանար, թէ հեղինակը Հայոց Եկեղեցւոյ ո՞ր ժողովքն է ընդունել, և ո՞րը մերժել: Հայոց Եկեղեցին ի Սրբոյն Գրիգորէ և ցԳէորգ Զորրորդ կաթուղիկոս ազգիս վաթսուն և մի ազգային եկեղեցական ժողովք է գումարել. մի՞թէ հեղինակի ընդունածը միայն պիտի համարի օրինաւոր ժողով: Բաւական է, որ ազգը, գումարելով թէ շատ, թէ սակաւ, Եկեղեցական ժողով է կազմել, և Եկեղեցական ժողովքով ընդունել է կամ հերքել մի կրօնական խնդիր. ընտրել է կամ մերժել Հայրապետութեան մի յաջորդ թէ՛ վիճմամբ, տարաձայնութեամբ, թէ՛ խաղաղութեամբ ու սիրով. ժողովը ժողով է դարձեալ՝ Ազգային և Եկեղեցական:

Ուստի հեղինակը, որ Փիլիպպոս կաթուղիկոսի նախագահութեամբ եղած ժողովքէն ետքը յԵրուսաղէմ, «մինչև մեր օրերը, կգրէ թէ, այլ օրինաւոր եկեղեցական ժողով չէ գումարուած մեր ազգին մէջ»: Մենք էլ կասենք, որ իւր այս գրածը օրինաւոր չէ մեր ազգին համար, թողլով որ ընթերցողք յետ Փիլիպպոս կաթուղիկոսի եղած ժողովների օրինաւորութիւնը կարդան յետ այսորիկ Հայաստանեայց Եկեղեցւոյ Ժողովոց պատմութեանը մէջ, որ առանձին գրքով ևս կտպուի՝ Արարատի մէջ հրատարակուածին զուգընթաց:

Մենք հանգուցեալ արժանայիշատակ Մսեր Մսերեանցի քանքարը ճանաչելով, որ այս տետրակի հեղինակն է, կտարակուսինք նորա գրչէն ելնելուն այսպիսի կէտեր, որ քան զմեզ աւելի նշմարած կը լինէր այդ յօդուածը, հետևաբար և կարծիք կտանինք եթէ փոփոխութիւն կրած լինին. այս կարծիքն էլ կյուսանք, որ կը փարատէ տետրակի հրատարակող՝ հեղինակի որդին, որ խնդրած է թոյլտուութիւն վաճառելոյ տետրակին ի Հոգևոր իշխանութենէ:

Ի ՄՈՍԿՈՒԱՅԷ

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ

«Արարատ» ամսագրի ներկայ ամի Ապրիլ ամսեան տետրին մէջ կարդացի Սրբազան Աբէլ Արքեպիսկոպոսի՝ իմ հանգուցեալ հօրս «Մանր Ուսմունք ազգային Եկեղեցական պատմութեան» վերնագրով նորատիպ մատենիկի վերայ գրած ծանօթաբանութիւնը (՞) կամ քննութիւնը, զոր ես ևս յիմ կողմանէ կարող չեմ անցանել առանց ուշադրութեան, մանաւանդ զի նա պահանջում է ինձանից պատասխան:

Ծանօթաբանութեան Սրբազան հեղինակն քննելով յիշատակեալ մատենիկը, գտանում է նորա մէջ երկու անճշդութիւն, կամ լաւ ևս

ասել կարծեաց անհամաձայնութիւն: Առաջին անճշդութիւնն է այն, որ նա չէ հաւատում թէ մեր եկեղեցւոյ մէջ կանոն եղած լինի, որ Զատկի օր քահանայք և դպիրք սպիտակ զգեստներով զարդարուին, և երկրորդ այն, որ մեր ազգային եկեղեցական ժողովոց թիւն մինչև ցամն 1651 լինի միայն քառասուն և եօթն: Ուստի խնդրում է նա ինձանից, իբր հեղինակէն (?) նոյն մատենի, ապացոյց և բացատրութիւն: Աբէլ Սրբազանն համոզուած է նոյնպէս, իբր թէ իմ հայրս չէր կարող իւր երկասիրութեան մէջ այսպիսի անճշդութեանց տեղի տալ, և կարծում է, որ «փոփոխութեանց» պատճառ ես եմ միայն:

Ես շատ ուրախ կլինէի իմ վերայ առնուլ այդ, Սրբազանի կարծիքով, անզգուշութեանց սպրդումը իմ ծնողիս երկասիրութեան մէջ. բայց հարկադրուած եմ յայտնելու, որ յիշեալ մատենին մէջ, տպագրութեան ժամանակ, բաց ի Քաղկեդոնի ժողովոյն վերաբերեալ յօդուածոյն (այն ևս գրաքննիչի հրամանաւ) այլ ինչ փոփոխութիւն եղած չէ. ուստի ես յոյժ և յոյժ կասկածում եմ, որ այնպիսի զգոյշ մարդն, որպիսի էր իմ հայրս, որ առանց հիմնաւոր կերպիւ բանը իմանալոյ և քննելոյ ոչինչ չէր գրէր, թոյլ տուած լինի իւր երկասիրութեան մէջ որ և իցէ անճշդութիւն և կամ պատմութեան ընդդէմ բան: Անտարակոյս, եթէ նա՝ ծերունի Մսերն, այժմ կենդանի եղած լինէր, կուտար իւր սիրելի աշակերտին, ծանօթաբանութեան հեղինակին, զարժանի պատասխանը և կփարատէր նորա կասկածը: Իսկ ես, ցաւում եմ, որ առայժմս, յայսմ մասին, աւելի ինչ ասել կարող չեմ, բայց գուցէ գայ օր, որ ասեմ: Զայս միայն կարող չեմ չյաւելացնել, որ ես ևս Սրբազանի նման տարակուսիմ ի նմանէ ցուցած իբր «պատմութեան ընդդէմ երկու կտորների» վերայ, և աւելի չոյտ հաւանիմ կարծել, որ գայ նոյնպէս օր, երբ որ նա ինքն... քննաբանն համաձայնի հանգուցեալ Մագիստրոսի (..) կարծեաց հետ, և գտանէ առանց իմ օգնականութեան ինձանից խնդրած բացատրութիւնը և կամ վկայութիւնը: Իմ կարծիքով, օրինաւոր ազգային եկեղեցական ժողով համարուելու են այնոքիկ, զորս պատմութիւնն և գիտութիւնն այնպէս է համարում, և ոչ որպէս ես և կամ միւսն, ուստի Սրբազանի ասելն «ժողովն ժողով է դարձեալ» ապացոյց չէ: Նոյն մատենիկի նախընթաց 52-երորդ յօդուածէն յայտնապէս երևում է, թէ որպիսի ժողովքների համար է հօրս խօսքն: Նա ասում է. «կամ հերձուածները և ուղղափառ հաւատոյ դէմ մոլորութիւնքը մերժելոյ համար, և կամ անկարգութիւնքը վերացնելով, պէս պէս կանոններ հաստատելոյ բարեկարգութեանց համար»: Ուստի այս խնդրոյս մէջ, ըստ իս, տարակուսական բան չէ մնում: Բայց ես կարծում եմ

հաստատապէս, թէ յիշուած եկեղեցական ժողովները համարելու է այնպիսի ժողովներ, որպիսիք էին Տիեզերական ժողովներն, և ոչ այնպիսի, որպիսի կամի համարել Սրբազան քննաբանն: Նորա կարծիքով Հայրապետութեան յաջորդութեան ժողովներն ևս ժողով են դարձեալ: Այո՛, ժողով են, բայց այնպիսի ժողովներ չեն, որպիսի էին ժողովներն հաւատոյ դէմ եղած մոլորութիւնքը և այլն քննելոյ համար: Ուրեմն այս տեղ անճշդութիւն չկայ, այլ կայ միայն կարծեաց անհամաձայնութիւն: Աբէլ Սրբազանի նշանակած թիւն ևս կարող է ճիշտ լինել, որպէս ճիշտ է նաև իմ հօր բերած թիւն, այն է՝ իւրաքանչիւրն այն մտքով, որով առնուի: Կարող չեմ չվկայել և այն, որ հայրս ուսած լինելով իւր ազգային եկեղեցւոյ պատմութիւնը բուն ազգային աղբիւրներու վերայ, ծանր է ինձ համաձայնել... քննաբանի հետ, թէ նա յօժարած լինի մուծանել իւր եկեղեցւոյ մէջ «ուրիշ ազգերից առած» սովորութիւններ: Այսպիսի սովորութիւնք, ընդհակառակն, սովոր են մուծանել ըստ մեծի մասին մեր քահանայք: Օրինակ՝ ահա մայրաքաղաքումս կիւրակէական առաւօտեան ժամը, Ռուսաց նմանելու համար, սովորութիւն են առած շաբաթ երեկոներին ասել[1]: Այլ սովորութիւնքը յիշել չկամիմ:

Ծանօթաբանութեան Սրբազան հեղինակն իւր նոյն յօդուածոյ մէջ յայտնում է և այս, թէ ես որպէս թէ պարտական էի յառաջ քան զտպագրութիւնը յիշեալ մատենի ներկայացնել զայն ի քննութիւն Վեհափառ Հայրապետին, և թէ ես որպէս թէ խնդրած եմ այժմ ի Հոգևոր իշխանութենէ թոյլտուութիւն վաճառելոյ զայն դասատետրը:

Թէ որքան պարտաւորիչ էր ինձ համար պահել կամ չպահել զառաջին խրատը, ես քննել չկամիմ, ըստ որում անօգուտ է, իսկ երկրորդ կարծիքի համար պարտք եմ համարում յայտնել, թէ ես երբէք չեմ խնդրած ի Հոգևոր իշխանութենէ թոյլտուութիւն վաճառելոյ «զՄանր Ուսմունքը». ըստ որում այն առանց այս ևս վաճառւում է սակաւ առ սակաւ. իսկ իմ խնդիրքս առ Վեհափառ Կաթուղիկոսն բոլորովին այլ է եղած: Ես խնդրած էի, որ այդ մատենիկդ, եթէ արժանի համարուի, ընդունուի իբրև հրահանգ մեր հոգևոր և ծխական դպրոցներում. իսկ վաճառման համար խօսք մի ևս չկայ:

Ինձ այնպէս է երևում, որ Աբէլ Սրբազանն սխալ է հասկացած Վեհափառի հրամանը: Վեհափառ Հայրապետի յանձնարարութիւնն ըստ իմ կարծեաց պիտի լինէր ոչ միայն զննել «զՄանր

---

1 Յայսմ մասին Մոսկվայի Հայոց եկեղեցւոյ Աւագ քահանայն պարտաւոր է բացատրութիւն տալոյ կամ զայս հերքելոյ:

Պ. Նամակագիրն պետք չէ լռէ միւս պակասութեանց համար եւս եթէ կան: Ծ. Խ.

Ուսմունքը», այլ և վճռել, թէ կարելի՞ է թոյլ տալ զայն իբրև հրահանգ մեր հոգևոր և ծխական դպրոցներում, թէ ոչ: Իսկ Սրբազան քննիչն փոխանակ ուղղակի պատասխանելոյ՝ այո կամ ոչ, և վճռելոյ՝ կարելի է կամ չէ կարելի, սկսած է պատմական սխալների ետևէն ընկնել, իւր աշխատասիրած ժողովոց պատմութիւնը գովել և անոր տպագրութիւնը յայտնել, ինձանից, մատենի հրատարակչից՝ բացատրութիւնք և վկայութիւնք պահանջել, և այլն:

Վերջացնեմ խօսքս. եթէ Հոգևոր իշխանութիւնն չէ վստահանում թոյլ տալ իմ հօր այս դասատետրը իբրև հրահանգ մեր հոգևոր և ծխական դպրոցներում, ես յայսմ մասին նեղանալու և կամ վշտանալու իրաւունք չունիմ. ըստ որում ամենայն մարդ ունի իւր կարծիքը, որպէս և ես, զոր օրինակ, ունիմ բոլորովին հակառակ կարծիք Մադինեանցի էջմիածնատիպ «Նախաշաւղի» և «Եկեղեցական Պատմութեան» և կամ Պօլսոյ տիպ «Լուսաշաւղի» վերայ, թէև նոքա արժանացած են ի Հոգևոր իշխանութենէ ընդունելոյ իբրև հրահանգ մեր հոգևոր և ծխական դպրոցներում:

Յուսամ, որ «Արարատայ» խմբագրութիւնն տեղի կուտայ այս տողերիս իւր ամսագրի էջերում, որպէս պատասխան Աբէլ Սրբազանին:

ԶԱՐՄԱՅՐ ՄՍԵՐԵԱՆՑ:

Ի 22 Մայիսի 1874 ամի.

ի Մոսկուա:

Ա. Պ. Նամակագրին ինչ ինչ տատամսուկ խօսքերը թէ և հրատարակուեցան, բայց ո՛չ նշանակութեան և ո՛չ պատասխանոյ արժանի են:

Բ. Ժողովոց թիւը պատմութենէն առնուած է վաթսուն և մի, ուստի սրբազան քննչի ասածին «Ժողովը ժողով է դարձեալ»՝ ապացոյց է նոյն իսկ պատմութիւնն. բայց թէ «Պապա-ին-ը Ի Գիրա-ին-ը նոյնպէս է Համարա-մ՝», այս ինքն՝ հանգուցեալ Մսեր վարժապետի գրածին պէս քառասուն և եօթն, ժողովոց օրինաւորութեան կամ ապօրինաւորութեան քննութիւն չկայ. ուստի մի անհատի կարծիքով ևս կարելի և ներելի չէ Հայոց Եկեղեցւոյ Ժողովները՝ մէկը օրինաւոր և միւսը ապօրինաւոր համարել: Այս այլ խնդիր է. խօսքը եղած ժողովների վերայ է: Պ. Մսեր ո՞րը օրինաւոր, ո՞րը ապօրինի է համարել, որ համարձակած է Եկեղեցական Ժողովները համառօտել մինչև քառասունևեօթն: Անհատի կարծիքը ընդհանուրի կարծեաց չը համապատասխաներ: Հետևաբար Եկեղեցւոյ Ժողովոց օրինաւո-

րութիւն և ապօրինաւորութիւնն ևս Եկեղեցին գիտէ և պիտի վճռէ, եթէ կարևորութիւն լինի:

Գ. Այո՛, Հայրապետական յաջորդի ընտրութեան համար ժողովները ժողովք են և Եկեղեցական Ժողովք, ո՛չ լոկ Ս. Քննչի կարծիքով, այլ և պատմութեան փաստով: Եթէ Պատուելի Մսերի գրածի նման ի յօդ. 32, ուղղափառ հաւատոյ և բարեկարգութեան համար եղածները միայն համարուին եկեղեցական ժողովք, (Պ. Մսերի) մտացն հետևելոյ համար, այն ժամանակ Պ. Մսերէն շատ պիտի հեռանալ, նորա նշանակած Ժողովոց 47 թիւը աւելի և շատ աւելի համառօտելով: Եթէ այսպէս չէ, ապա ուրեմն Արարատի մէջ հրատարակուածին համաձայն՝ Պ. Մսերն դարձեալ իւր կարծիքով ժողովոց ո՞րը կամեցել է՝ օրինաւոր է համարել, որը ոչ՝ ապօրինաւոր, հետևաբար և իւր ասածը պիտի ապացուցանէր:

Դ. Սրբազան քննիչը չէ միայն, որ նամակագրի պարտականութիւնը կայտնէ, թէ պարտական էր յիշեալ մատեանը տպագրութենէն յառաջ ներկայացնել Հայոց Վ. Հայրապետին և Հոգևոր Իշխանութեան, այլ Օրինաց տրամադրութիւնն ևս կպահանջէ զայս, ըստ որում Եկեղեցական գիրք է: Միւս պատճառները թող մնան, զորս եթէ նամակագիրն ևս Հայաստանեայց Եկեղեցւոյ հարազատ որդի է՝ և եթէ կամի կասկածանաց ներքև չմնալ, քաջ պիտի իմանայ և ոչ այնպէս պիտի վարուէր և պիտի վարուի:

Ե. Իսկ եթէ նամակագիր Պ. Զարմայր Մսերեան երբէք չէ խնդրած ի Հոգևոր Իշխանութենէ թոյլտուութիւն վաճառելոյ ՂՄանր ո–ա–մո–նվը, այլ միայն խնդրած է, որ այդ մատենիկը եթէ արժանի համարուի, ընդունուի իբրև հրահանգ Հայոց Հոգևոր և Ծխական դպրոցներում, ընդունուի ու չի վաճառուի, ուրեմն ձրի պիտի տայ պարոն Զարմայր, ապա թէ ոչ՝ ընդունելոյ հետևանքն ի՞նչ է՝ երբ չպիտի վաճառէ հրատարակողն:

Զ. Ի՛նչ անուն պէտք է տալ և այն կարծեացն, թէ Աբէլ Արքեպիսկոպոս՝ Վ. Հայրապետի հրամանը սխալ հասկացած լինի:

- Պ. Զարմա՛յր, եթէ պարտաւոր կճանաչես զանձնդ և կարող ես՝ պատասխանէ կամ բացատրէ ա. հակառակ Հայաստանեայց Եկեղեցւոյ սովորութեանց՝ Զատկի օրերը սպիտակ զգեստով զարդարուելոյ նորադիր կարգը. և բ. հակառակ պատմութեան ևլն. քառասունևեօթն ժողովները փոխանակ վաթսունևմէկի՝ սխալները:

Է. Այլ վճռելը, թէ կարելի՞ է թոյլ տալ ՂՄանր ո–ամո–նվը իբրև հրահանգ մեր հոգևոր և ծխական դպրոցներում, Հայոց Վեհափառ Հայրապետի և Հոգևոր Իշխանութեան իրաւունքն է այդ, և ո՛չ այլ

ումեք: Ուստի Հայոց համար եղած հրատարակութեանց վերայ՝ թէ՛ եկեղեցական լինի, թէ՛ դասական և թէ՛ այլ նպատակով և բովանդակութեամբ, սոցա պարտք և իրաւունք է հսկել և Հայոց ազգը զգուշացնել ի կարևոր դէպս:

- Եթէ Պ. նամակագիրն միանգամ ակնարկէ ցարդ հրատարակեալ իւր հօր մի քանի գրեանց ճակատներուն, անշո՛ւշտ, ինքնին կհասկանայ իւր սխալը, որով Պ. Մսերի անուան վերայ աւելի նախատինք կբերէ և նոյն իսկ Պ. Մսեր իւր վերայ այնպիսի՛ յանդուգն համարում և համարձակութիւն ունեցած չէ՝ ինչ որ նամակագիր որդին կտքնի ունենալ տալ և ցուցանել, և ողջամիտ և ուսումնական անձինք քաջ գիտեն յաւէտ սանձարձակ չապաւինել միայն իւրեանց մտաց և կարծեաց վերայ:

- Լռութեան կյանձնուին Լ՝ռ-ռաշ-ղ՝ ևլն. համար մանկամիտ խօսքերը:

Ը. Նա և այն Մ՝անր ռ-ռմռ-նվը երբէք դասագիրք լինելոյ ո՛չ յարմարութիւն ունի և ո՛չ մեր դպրոցք այնպիսի դասագ ըքէ օգուտ կարեն քաղել:

- Գուցէ իբրև նոր հրատարակուած մի բան՝ հետաքրքիր անձանց ուշադրութիւնը շարժելոյ ծառայէ և միանգամ նոցա աչքի տակէն անցնի:

ՅԱՒԵԼՈՒԱԾ[1]

Հրամանաւ Վեհ. Կաթողիկոսի՝ Գեր. Աբէլ Աբք. Եպիսկոպոս Մխիթարեանց Մողնոյ Ս. Գէորգ Վանուց Վանահայր կարգեցաւ՝ միանգամայն հրահանգ ընդունելով ջանալ անդ Վանական դպրոց հաստատելոյ:

Ի սրտէ յաջողութիւն և կարողութիւն բարեմաղթելով նմին, կը յուսամք՝ զի իւր ուսումնասիրութեամբ և նպաստիւք մերազնէից՝ սուղ միջոցի մէջ կը կարողանայ հաստատել անդ Վանական դպրոց և ժողովել մերազնեայ մանկունքը ուսմամբք լուսաւորելոյ համար:

ՄԱՀԻ ԱՌԹԻ[2]

Ս. Էջմիածնի Միաբաններէն Աբէլ Եպիսկոպոս Մխիթարեանց ի 12-ն ամսոյս իւր մահկանացու կենաց ընթացքը կնքեց, և ի յաջորդ աւուրն եկեղեցական հաղիսիւ մարմինը Միաբանութեան գերեզմանատանում ի հող ամփոփեցաւ:

---

1 ԱՐԱՐԱՏ, 1870, Հոկտեմբեր, էջ 466:
2 ԱՐԱՐԱՏ, 1876, էջ 466

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱԲԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ (ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՓՈՐՁ)..... 5

ՀԱՒԱՏՔ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ

ՅԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՅ..... 19
ԱՐԿԱԾՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ..... 21
ՀԱՅ ԱԶԳՆ Ի ՀԱՒԱՏՍ ԵՒ Ի ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ..... 43
ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ..... 47

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ, ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ԵՐԵՒԵԼԻ ՎԱՆՕՐԷԻՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ ՆԱՀԱՆԳԻՆՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ի ՇՐՋԱՊԱՏՍ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ..... 57
ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԻՒԹԻՒՆՔ ՁՀԱՍՏԱՏՈՒԹԵՆԷ ՀՈՌՈՄՈՍԻՆ ՎԱՆԱՑ Ի ՇԻՐԱԿ..... 63
Ա. ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՐՄԱՐԱՇԻՆՈՅ [ԵՒ ԱՅԼ] ՎԱՆԱՅՆ Ի ՇԻՐԱԿ..... 89
ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԵԱՅ ԻՆՉ ՅՈՏՆ ԱՐԱԳԱԾՈՒ..... 99
ԵԿԵՂԵՑԻՔ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՔԱՂԱՔԻ..... 107
ԱՐՄԱՒԻՐ ՅԱՐԱԳԱԾՈՏՆ ԳԱՒԱՌԻ..... 143
ԱՐՇԱԿԱՒԱՆ ՅԱՐՇԱՐՈՒՆԻՍ..... 153
ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՅԵԳԻՊՏՈՍ..... 161

ՊԱՏՄԱԿԱՆ, ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ, ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎՈՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ՝ ՀԱՆԴԵՐՁ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՄԲՔ..... 185

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱԼԱԾՉԱՑ, ՈՒՐԱՑՈՂԱՑ, ՀԵՐՁՈՒԱԾՈՂԱՑ ԵՒ ԲԱԺԱՆԵԼՈՅ ՅԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՅՈՑ 291
ՏԻՐԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ 379
ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԱՔԱՐԻԱՅ ՊԱՏՄԱԳՐԻ՝ ՍԱՐԿԱՒԱԳԻ ՅՈՎՀԱՆՆԱՎԱՆԱՑ 383
ԱՐԺԱՆԱՅԻՇԱՏԱԿ ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ 389
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԹԱԳԱՒՈՐԱՑ ԻՍՐԱՅԷԼԻ ԵՒ ՏԱՆՆ ՅՈՒԴԱՅ 395
«ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ԳՐԵԱԼ Ի ՄՍԵՐԱՅ Մ. ՁՄԻՒՌՆԱՑԻՈՅ 403
ՅԱՒԵԼՈՒԱԾ 411

«ԱՐԱՐԱՏԻ»-Ի ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ - Ա

ԱԲԵԼ Արքեպիսկոպոս ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Էջադրումը՝ Հովհաննես սրկ. Ազնավուրյանի
Սրբագրիչ՝ Սիրանուշ Գրիգորյան

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2009

Չափսը՝ 70x100 1/16, ծավալը՝ 26 տպ. մամուլ,
տպաքանակը՝ 300: